ԴԱՌՆԱԼԻԿԻ ԴԱՌՆԱԼԻԿԻ

ԿՈՐԾԱՆԻ՛Ր ԱՅՆ,
ԻՆՉԸ ԽԼՈՒՄ Է ՔՈ ՈՒԺԸ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԸՆԴԳՐԿՈՒՄԸ *«ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ»*
DVD ՀԱՎԱՔԱԾՈՒ

Թանկագի՛ն Ընկեր,

Այս գիրքը նվեր է ձեզ, և ես աղոթում եմ, որ այս էջերում գրված ուղերձը հավիտյան փոխի ձեր կյանքը:

Ես հավատում եմ, որ մենք ապրում ենք վերջին օրերում՝ մի աշխարհում, որտեղ գոյություն ունի իրական հոգևոր կրիպտոնաքար, որն ամեն օր փորձում է խլել մեր՝ քրիստոնյաներիս ուժը:

Անթիվ քրիստոնյաներ հիասթափվում և ուժասպառ են լինում՝ կրկին ու կրկին փորձելով ազատվել այն ամենից, ինչը ետ է պահում իրենց: Աստված չի ծրագրել, որ կյանքն այդպիսին լինի: Նա նախատեսել է, որ դուք հաղթող լինեք ձեր կյանքի ամեն բնագավառում, և ավելին՝ Նա տալիս է ձեզ զորություն, որ հաղթահարեք այն ամենը, ինչը հակառակվում է ձեզ:

Ես կկիսվեմ ձեզ հետ իմ անձնական պատմությամբ այն ընթացքի մասին, որը ճեղքում բերեց իմ կյանքում, և ցույց կտամ որոշ բանալի աստվածաշնչյան ճշմարտություններ, որոնք հավիտյան փոխեցին իմ կյանքը: Դուք նույնպես կարող եք մտերիմ և սերտ հարաբերություններ ունենալ Աստծո հետ: Դուք կարող եք ունենալ կենդանի և հզոր հավատք, որն ազդեցություն է թողնում ձեզ շրջապատող մարդկանց վրա: Բայց առաջին հերթին պետք է հաղթահարեք ձեր հոգևոր կրիպտոնաքարը:

Դուք կարող եք ազատորեն կիսվել այս ուղերձով և CloudLibrary.org կայքում գտնվող այլ առցանց նյութերով նրանց հետ, ում ճանաչում եք:

Ձեր եղբայրը Քրիստոսում՝

Ջոն Բիվեր

JohnBevere@ymail.com

MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org

ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

«Զոն Բիվերը գործնական մոտեցում ունեցող մերօրյա մարգարե է: Նա սովորեցնում է հաղթահարել մեղքը մեզ զորացնող շնորհքով: Իր նոր գրքում, որը կոչվում է *«Կործանել կրիպտոնաքարը»*, նա ցույց է տալիս, որ բոլորիս կյանքում կա կրիպտոնաքար, որը կարելի է հաղթահարել միայն Աստծո սիրով: Գոհությո՛ւն Աստծուն՝ այս հայտնությունը Զոնին տալու համար»:

ՌՈԲԵՐՏ ՄՈՐԻՍ
«Գեյթվեյ Չրչ» եկեղեցու հիմնադիր, ավագ հովիվ (Դալլաս-Ֆորտ Վորտ, Տեխաս)
«Օրհնված կյանք», «Աստված, Ում ես չէի ճանաչում», «Ճշմարտապես ազատ» և *«Հաճախականություն»* գրքերի հանրաճանաչ հեղինակ

«Այս ուղերձը հրատապ կոչ է Քրիստոսի մարմնին՝ այլևս չբավարարվել քչով, այլ ձգտել այն ամենին, ինչ Աստված պատրաստել է իրենց համար: Ես հավատում եմ, որ Զոնի աստվածաշնչյան խորաթափանցությունը և նպատակը, որն է՝ օգնել հավատացյալներին ճշմարտապես ապրել Աստծո համար, կփոխեն այն մարդկանց, որոնք ի սրտե կընդունեն այս ուղերձը»:

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ
Աստվածաշնչի ուսուցիչ և հանրաճանաչ հեղինակ

«Կործանել կրիպտոնաքարը» գրքում Զոն Բիվերը պարզորեն ցույց է տալիս այն ամրությունները, որոնք կարող են խոչընդոտել Քրիստոսի մեջ մեր ներուժն ամբողջությամբ իրագործելուն: Այս գիրքն ազդեցիկ և անմիջական է և կօգնի ընթերցողներին երես առ երես բախվել իրենց կյանքի կրիպտոնաքարին»:

ՋԵՆԹԵԶԵՆ ՖՐԱՆԿԼԻՆ
«Ֆրի Չեյփլ» եկեղեցու ավագ հովիվ
Հանրաճանաչ հեղինակ՝ ըստ *«Նյու Յորք Թայմս»* ամսագրի

«Զոն Բիվերի հայտնություններն աստվածաշնչյան սկզբունքների մասին, նրա ուսմունքները և սերը մարդկանց հանդեպ տասնամյակներ շարունակ կառուցել են թե՛ առանձին անհատների կյանքերը, թե՛ Աստծո թագավորությունը: Նրա գրքերը հասնում են աշխարհի բոլոր ծայրերը, և նրա ազդեցությունը չափազանց մեծ է: Ես շնորհակալ եմ նրա ընկերության համար, նրա ծառայության համար և այն տևական հնազանդության համար, որով նա գրի է առնում իր ուղերձները»:

ԲՐԱՅԱՆ ՀՅՈՒՍԹՈՆ
«Հիլսոնգ Չրչ» համաշխարհային եկեղեցու հիմնադիր և ավագ հովիվ

«Համոզիչ: Հոգով լեցուն: Ազդեցիկ: *«Կործանել կրիպտոնաքարը»* գիրքը քանդում է արդեն սովորական դարձած մեղքի դանդաղորեն սեղմվող օղակը՝ շնորհքով և ճշմարտությամբ բորբոքված ավյունով: Համոզված եմ, որ այս գիրքը կօգնի առաջնորդել մի սերնդի, որի համար ճշմարտությունը հարաբերական է, իսկ հնազանդությունը չլսված բան է դեպի բերկրանքն այն Աստծով, Ով ձգտում է տալ մեզ միայն լավագույնը: Եվ Նրա լավագույնը մեզ համար Նրա մեջ ազատություն ունենալը և Նրան անձնատուր լինելն է»:

ԼՈՒԻ ԳԻԳԼԻՈ
«Փեշն Սիթի Չրչ» եկեղեցու հովիվ, «Փեշն» համաժողովների հիմնադիր
«Գողիաթը պետք է պարտվի» գրքի հեղինակ

Որքան էլ Զոն Բիվերի գրքերը հրաշալի են, այս գիրքն անակնկալի կբերի շատերին: Ոչ թե այն պատճառով, որ նա շեղվել է կարևորագույն խնդիրներին անդրադառնալու իր եզակի կարողությունից: Ընդհակառակը՝ այն շնորհքը, որով նա խորապես բացահայտում է ճշմարտությունը իր գրքերում, է՛լ ավելի արտահայտիչ է դարձել: Շատերն անակնկալի կգան, քանի որ նա բացահայտում է այնպիսի բան, ինչն անմիջապես մեր կողքին է, սակայն լիովին աննկատ է մեզ համար: Ասել, որ այս գիրքն անհրաժեշտ է մեզ, նշանակում է՝ ոչինչ չասել: *«Կործանել կրիպտոնաքարը»* գիրքը պետք է լինի այս օրերում ապրող հավատացյալների պարտադիր ընթերցանության ցանկի մեջ:

ԲԻԼԼ ԶՈՆՍՈՆ
«Բեթել Չրչ» եկեղեցի, Ռեդինգ, Կալիֆոռնիա
«Աստված բարի է» գրքի հեղինակ

ԶՈՆ ԲԻՎԵՐ

«ԿՈՐԾԱՆԻ՛Ր ԱՅՆ,
ԻՆՉԸ ԽԼՈՒՄ Է ՔՈ ՈՒԺԸ»

ԼԱՊՈՒՏԿԻՆ ԽՈՍՔԵՐԸ

Killing Kryptonite by John Bevere, Armenian
© 2018 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as Killing Kryptonite
Additional resources in Armenian by John Bevere are available for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: JohnBevere@ymail.com

«Կործանել կրիպտոնաքարը», Ջոն Բիվեր, հայերենով
© 2018 Messenger International
www.MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «Killing Kryptonite» վերնագրով:
Ջոն Բիվերի այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք անվճար ներբեռնել հետևյալ կայքէջում. www.CloudLibrary.org
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը նվիրում եմ
«Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի թիմի անդամներին:

Աստծո շնորհքով, միասին Հիսուս Քրիստոսի Ավետարանը հասցրել ենք միլիոնավոր մարդկանց: Սա անկարելի կլիներ առանց ձեր հավատքի, տաղանդների, անձնուրաց նվիրատվությունների և մեծ աշխատանքի: Լիզան և ես պատվում ենք ձեզ, հաճույքով ենք աշխատում ձեզ հետ և սպասում ենք այն Օրվան, երբ Հիսուսը հավիտյան կվարձատրի ձեր հավատարիմ ծառայությունը:

«Որովհետև ո՞վ է մեր հույսը կամ ուրախությունը կամ պարծանքի պսակը, եթե ոչ դուք Տիրոջ մեջ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի առջև, Նրա գալու ժամանակ: Որովհետև դուք եք մեր փառքը և ուրախությունը»:

– Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻ 2.19,20

Շնորհակալ եմ ձեզ, 2018 թվականի «Մեսինջեր»-ի Թիմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....13

ԲԱԺԻՆ 1. Մեկի զորությունը

1. Հարց, որից խուսափում են.....19
2. Ի՞նչ է կրիպտոնաքարը.....29
3. Մեկ.....39
4. Վարակիչ կրիպտոնաքար.....47
5. Փոփոխություն բերեք 57
6. Մեր դրդապատճառը.....67
7. Մեկի զորությունը.....77

ԲԱԺԻՆ 2. Գտնել կրիպտոնաքարը

8. Ամուսնական ուխտ.....89
9. Շնություն Աստծո դեմ.....97
10. Ի՞նչ է թաքնված կռապաշտության ետևում.....105
11. Հավատացյալի կռապաշտությունը.....117
12. Թեթևացնել ճնշումը.....127
13. Կրիպտոնաքարը.....137
14. Մեղք.....145

ԲԱԺԻՆ 3. Կրիպտոնաքարի ազդեցությունը

15. Մեղքի ուժը (Մաս 1).....157
16. Մեղքի ուժը (Մաս 2).....167
17. Մոլորված.....177
18. Կեղծված Հիսուս.....185
19. Սկզբնակետը.....195
20. Ապաշխարություն.....207
21. Երեք թագավորները.....219

ԲԱԺԻՆ 4. Կործանել կրիպտոնաքարը

22. Առերեսում.....231
23. Հանդուրժողականություն.....241
24. Սերը և ճշմարտությունը.....251
25. Կործանել կրիպտոնաքարը.....261
26. Մեղք, որը մեղք չէ.....271
27. Խնջույքի դուռը.....281
28. Բարձրացե՛ք.....291

Հարցեր քննարկման համար.....301
Հավելված 311

ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

«Կործանել կրիպտոնաքարը» գիրքը կարելի է կարդալ սկզբից մինչև վերջ, ինչպես ցանկացած գիրք: Այնուամենայնիվ, այն նույնպես բաժանել եմ կարճ գլուխների, որոնց ընթերցանության համար պահանջվում է ոչ ավելի, քան տասից տասնհինգ րոպե: Ամեն գլխում դուք կգտնեք «Գործնական քայլ» կոչվող բաժին, որը կօգնի ձեզ կիրառել դրանում ներկայացված ճշմարտությունները: Խնդրում եմ, բաց մի՛ թողեք գործնական քայլերը, քանի որ դրանք այս գրքի խիստ կարևոր մասն են: Սա է պատճառը, որ առաջարկում եմ ձեզ կարդալ օրական ընդամենը մեկ գլուխ: Այս կերպով դուք կարող եք անել անհրաժեշտ քայլը, մինչև հաջորդ գլխին անցնելը:

Գրքի վերջում նույնպես կգտնեք քննարկման հարցեր նրանց համար, ովքեր ուսումնասիրելու են *«Կործանել կրիպտոնաքարը»* գիրքը փոքր խմբերում: Ես նույնպես պատրաստել եմ մուլտիմեդիոն դասընթաց, որը կարելի է դիտել և լսել այս գրքին զուգահեռ: Սա շատ լավ տարբերակ է, եթե ուզում եք ավելի խորը ուսումնասիրել այս թեման (ավելին այս մասին՝ գրքի վերջում):

Եթե կարդում եք այս գիրքը որպես *«Կործանել կրիպտոնաքարը»* դասընթացի մաս, ես առաջարկում եմ ձեր փոքր խմբում դիտել կամ լսել այն վիդեո կամ աուդիո դասերը, որոնք կարող եք գտնել գրքի վերջում կցված DVD սկավառակում կամ CloudLibrary.org կայքում, նաև պատասխանել գրքի վերջում գտնվող քննարկման հարցերին: Այնուհետև խնդրեք ձեր փոքր խմբի յուրաքանչյուր անդամին կարդալ գրքի համապատասխան գլուխները մինչև ձեր հաջորդ հանդիպումը:

Այս ամենը ձե՛զ համար է:

Ջոն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միգուցե զարմանաք, բայց ես շատ անգամներ եմ ուզել անավարտ թողնել այս գիրքը, քան իմ հեղինակային գրքերից որևէ մեկը, և շուտով կբացատրեմ, թե ինչու: Իսկ մինչ այդ, ի՞նչ կապ ունի *«Կործանել կրիպտոնաքարը»* վերնագրով գիրքը Քրիստոսի հետևորդների հետ: Թույլ տվեք կարճ բացատրել:

Շատերս ծանոթ ենք «կրիպտոնաքար» բառին Սուպերհերոսի մասին հորինված պատմությունից: Այս պատմությունը, որը փաստորեն դարձավ Ամերիկայի ժողովրդական հեքիաթը, գրվել էր դպրոցական ընկերներ Ձերի Սիգելի և Ջո Շուստերի կողմից, և առաջին անգամ հրատարակվել էր կոմիքսի տեսքով 1938 թվականի հունիսին: Պատմությունների շարքը, գերուժեր ունեցող բարեգործ սուպերհերոսի մասին, կատարյալ հակամիջոց էր նացիստական բռնապետության ժամանակաշրջանում: Սուպերհերոսի պատմությունն արագորեն մեծ համբավ ձեռք բերեց, և ի վերջո պատմվեց ոչ միայն տպագիր հրատարակությունների միջոցով, այլև ռադիոյով, հեռուստատեսությամբ և ֆիլմերի միջոցով, որոնք մեծ հաջողություն ունեցան:

Կարճ ժամանակ անց այդ պատմությունները մի փոքր ձանձրալի դարձան. պատճառն այն էր, որ Սուպերհերոսն անխոցելի էր: Այնպես որ, 1940-ական թվականներին հեղինակները հորինեցին հայտնի դարձած կրիպտոնաքարը՝ մի նյութ Սուպերհերոսի մոլորակից, որը կարող էր չեզոքացնել նրա գերուժերը: Կրիպտոնաքարի ազդեցության ներքո Սուպերհերոսը տկարանում էր՝ դառնալով սովորական մարդու պես:

Մեր՝ քրիստոնյաներիս կյանքում գոյություն ունի «կրիպտոնաքար», որը չեզոքացնում է այն զորությունը և բնավորությունը, որոնք Աստված տվել է մեզ: Ի՞նչ է այն: Ինչպե՞ս բացահայտել այն: Ինչպե՞ս է այն ազդում մեզ վրա՝ թե՛ անհատապես, թե՛ հավաքականորեն: Որքանո՞վ է այն խոչընդոտում մեր արդյունավետությանը և կորսվածներին հասնելու կարողությանը: Ինչի՞ց ենք մենք զրկվում դրա պատճառով: Ինչո՞ւ է այն այդքան հեշտորեն քողարկվում: Ահա մի քանիսը այն հարցերից, որոնց պատասխանում է այս գիրքը:

Սա քսաներորդ գիրքն է, որը գրել եմ Սուրբ Հոգու օգնությամբ և առաջնորդությամբ: Ինչպես արդեն նշեցի, հինգ կամ վեց անգամ ուզել եմ անավարտ թողնել այս գիրքը: Պատճառն այն էր, որ այն գրելու

ընթացքում դեմ առ դեմ բախվում էի իմ կյանքում առկա այնպիսի խնդիրների, որոնք չէի կարող անտեսել: Ես պետք է հարցնեի ինձ. *«Արդյո՞ք բավարարվում եմ ավելի ցածր կյանքով, քան այն, ինչի համար ստեղծված եմ: Արդյո՞ք մենք՝ որպես եկեղեցի, ճշմարտապես վերապրում ենք Աստծո ներկայությունը և զորությունը, որով կարող ենք փոխել մեր բնակավայրերը»*: Իրականում, մի քանի անգամ ես նույնիսկ արթնացել եմ այսպիսի բառերով. «Հա՛յր, համոզված չեմ, որ այս գիրքն ինձ դուր է գալիս: Ես չեմ ուզում շարունակել այն»:

Եվ ամեն անգամ ես խիստ «ոչ» էի զգում Սուրբ Հոգուց: Երբ տեղի ունեցավ վերջին նման դեպքը, Նա հավաստիացրեց ինձ, որ այս ուղերձն անչափ կարևոր հայտնություններ կտա, որոնց շնորհիվ կկառուցվեն առանձին մարդիկ, ընտանիքներ և եկեղեցիներ աշխարհով մեկ, և որ այս գրքի սկզբունքները կարող են ամբողջ քաղաքներ փոխել:

Այդ խոստումից հետո ես հավատքով շարունակեցի գրել: Հասնելով գրքի եզրափակիչ բաժնին՝ վերջին յոթ գլուխներին, ինձ համար պարզ դարձավ, թե որքան օգտավետ է այն: Ես ոչ միայն հասկացա, թե որքան իմաստություն կա այս ուղերձի մեջ, այլև տեսա, թե որքան հրատապ է այն: Այսօր ես համարում եմ, որ սա ամենակարևոր ուղերձներից մեկն է, որը լույս է տեսել իմ հեղինակությամբ:

Այժմ, իմանալով, որ այս ուղերձի օգտավետության մասին գրված է գրքի վերջում, միգուցե դուք գայթակղություն ունենաք ընթերցել անմիջապես վերջին բաժնից: Թույլ տվեք զգուշացնել ձեզ, որ չանեք դա: Եթե դուք բաց թողնեք առաջին երեք բաժինները, չորրորդ բաժնի ազդեցությունը զգալիորեն թույլ կլինի: Պատկերացրեք, որ կինոսրահ եք մտնում, երբ ֆիլմի ավարտին մնացել է ընդամենը քսան րոպե: Եզրափակիչ տեսարանների ազդեցությունը ձեզ համար կլինի շատ ավելի թույլ, քան՝ եթե դիտեիք ֆիլմը սկզբից: Նրանք, ովքեր նստած էին կինոսրահում ֆիլմի սկզբից, լաց են լինում, գոչում կամ ուրախանում են: Իսկ ձեզ մոտ հարց է ծագում՝ արժե՞ր ընդհանրապես դիտել այդ ֆիլմը:

Այս գիրքը բաղկացած է քսանութ գլուխներից՝ զետեղված չորս բաժիններում, որոնցից ամեն մեկը պարունակում է յոթ գլուխ: Այս կերպ բաժանելով՝ ցանկացել եմ օգնել զբաղված ընթերցողներին: Դուք կարող եք տրամադրել տասից տասնհինգ րոպե ամեն օր և կարդալ մեկական գլուխ չորս շաբաթվա ընթացքում, կամ՝ կարող եք կարդալ շաբաթական մեկ գլուխ և գիրքն ավարտել մոտավորապես վեց ամսում: Դուք կարող եք կարդալ նաև ձեր նախընտրած կերպով: Մեր նպատակն է՝ հարմարեցնել այս ուղերձը ձեր ընթերցանության ժամացանկին:

Ի վերջո, այս ուղերձը պետք է դիտարկել որպես ընթացք, որը

պաշտպանում է ձեզ կրիպտոնաքարից և սովորեցնում է ազդեցություն թողնել ձեզ շրջապատող մարդկանց վրա: Մինչ սկսելը, աղոթենք և խնդրենք Սուրբ Հոգուն բացել մեր աչքերը, որպեսզի տեսնենք երկնային իմաստությունը, որը զորություն է տալիս մեզ՝ այս երկրի վրա մեր կոչումը կատարելու համար:

«Հա՛յր, Հիսուսի անունով, բացի՛ր իմ աչքերը, ականջները և սիրտը, որպեսզի տեսնեմ, լսեմ և հասկանամ Քո կամքն իմ կյանքում: Սո՛ւրբ Հոգի, սովորեցրո՛ւ ինձ Հիսուս Քրիստոսի ճանապարհները այս ուղերձը կարդալու ընթացքում: Ես նայում եմ Քեզ՝ որպես իմ Ուսուցչի: Խոսի՛ր ինձ հետ այս գրքի ամեն մի նախադասությունից: Եվ թող իմ կյանքը հավիտյան փոխվի: Ամե՛ն»:

ՍԱՀՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ԲԱԺԻՆ 1

1

ՀԱՐՑ, ՈՐԻՑ ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՆ

Հատուկ նշում հեղինակից.

Սիրելի՛ ընթերցող, եթե դեռ չեք ընթերցել «Ներածություն» բաժինը, առաջարկում եմ ձեզ անպայման անել դա: Այն կօգնի նախապատրաստվել այս ուղերձին: Հաճելի ընթացք եմ մաղթում:

«Կործանել կրիպտոնաքա՞րը»: Այս գիրքը Սուպերհերոսի մասի՞ն է: Ո՛չ, բայց նրա պատմության և մեր հավատքի կյանքի միջև ապշեցուցիչ զուգահեռներ կան:

Սուպերհերոսն այս աշխարհից չէ. Աստծո զավակներն այս աշխարհից չեն:

Նա ունի գերբնական ուժ, որը հատուկ չէ հասարակ մարդկանց. մենք ունենք գերբնական զորություն, որից զուրկ են այս աշխարհի մարդիկ:

Նա պայքարում է չարի դեմ. մենք պայքարում ենք չարի դեմ:

Նա պաշտպանում է ճնշվածներին և ազատում է չարագործներից. մենք հոգում ենք տկարների մասին և ազատ ենք արձակում կապյալներին:

Նա ուժ է ստանում արևից. մենք ուժ ենք ստանում Աստծո Որդուց:

Գոյություն ունի միայն մեկ բան, որը կարող է կանգնեցնել Սուպերհերոսին. կրիպտոնաքարը՝ հորինված ռադիոակտիվ նյութ, որը Սուպերհերոսի մոլորակից է: Նմանապես, գոյություն ունի «կրիպտոնաքար», որն առաջացել է մեր հեռավոր բնակավայրում և կարող է

անզոր դարձնել Աստծո զավակներին: Այո՛, այն չի առաջացել այս երկրում, այլ կազմվել է այնտեղ, որտեղ մեր երկնային տունն է: Կրիպտոնաքարը ոչ միայն չեզոքացնում էր Սուպերհերոսի գերուժերը, այլև հասարակ մարդուց ավելի թույլ էր դարձնում նրան: Մեր կրիպտոնաքարն անում է նույնը:

Ո՞րն է մեր կրիպտոնաքարը: Մինչև այն բացահայտելը, ես պետք է նախապատրաստեմ ձեզ: Կրիպտոնաքարի մեծ առավելությունը Սուպերհերոսի հանդեպ այն էր, որ այդ նյութը հեշտորեն ճանաչելի չէր: Սա նշանակում է, որ նա կարող էր ենթարկվել կրիպտոնաքարի ազդեցությանը՝ նախքան այն հայտնաբերելը: Նույն կերպով, հավատացյալի կրիպտոնաքարը տկարացնում է թե՛ անհատների, թե՛ Քրիստոսի մարմինը, և շատերի համար այն դեռ ճանաչելի չէ: Այս գրքի նպատակն է՝ հայտնաբերել կրիպտոնաքարը, ցույց տալ, թե ինչպես կարելի է կործանել կրիպտոնաքարը և հեռացնել դրա ազդեցությունը մեզնից՝ թե՛ անհատական, թե՛ հավաքական առումով: Այնպես որ, սկսենք հետևյալ հարցից:

Մեծագույն ցանկությունը

Ո՞րն է մեր մեծագույն ցանկությունը: Ես ասում եմ «մեր», քանի որ, եթե անկեղծ լինենք, յուրաքանչյուրս ձգտում է միևնույն բաներին: Մենք ցանկանում ենք լինել հաջողակ, լինել լավագույնը մեր բնագավառում, լինել հայտնի, ունենալ երջանիկ ամուսնություն և հրաշալի ընկերներ, ապրել ծաղկուն բնակավայրում, լինել քաջառողջ և ունենալ բավականաչափ միջոցներ՝ անելու համար այն, ինչ մեր մտքով անցնում է:

Բոլոր նշված նպատակները գրավիչ են, և դրանց մեծ մասը նույնիսկ անհրաժեշտ է, բայց արդյո՞ք մենք ամենից շատ ցանկանում ենք հենց այդ բաները: Մի՞թե մենք չգիտենք այնպիսի մարդկանց, ովքեր ունեն այդ ամենը, սակայն դատարկություն են զգում: Մի՞թե մենք չենք լսում պատմություններ հոլիվուդյան դերասանների, խոշոր ընկերությունների գործադիր տնօրենների, պրոֆեսիոնալ մարզիկների, պետական պաշտոնյաների և այլ մարդկանց մասին, որոնք հասել են այն բանին, ինչը հասարակությունը համարում է հաջողության գագաթնակետն այս կյանքում, սակայն նրանց թվում է, թե իրենք զուրկ են ինչ-որ բանից: Իրենց դատարկության պատճառով, ոմանք սկսում են թմրանյութեր կամ խմիչք օգտագործել, զբաղվում են էկզոտիկ հանգստով կամ սիրավեպեր են սկսում: Մյուսները դիմում են կրոնին, նոր դարի հավատալիքներին կամ օկուլտիզիմին՝ հուսալով լրացնել այն դատարկությունը, որը կրծոտում է իրենց ներսը:

Եթե անկեղծ լինենք, մեր սրտի խորքում բոլորս էլ գիտենք, որ կա ավելին: Ճշմարիտ բավականությունը, որին ձգտում է յուրաքանչյուրը՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, կարելի է գտնել՝ միայն ունենալով մտերիմ հարաբերություններ մեր Արարչի հետ: Անկախ այն բանից, թե ինչ կարծիք ունեք Աստծո մասին՝ ձեր սիրտը խորապես ձգտում է Նրան: Այն գոհունակությունը և բավականությունը, որին ձգտում են մարդիկ, հնարավոր է գտնել միայն կրկին միանալով մեր Արարչին:

Ճշմարտությունն այն է, որ Աստված «դրել է հավիտենությունը մարդու սրտում» (Ժողովող 3.11, NLT): Եթե խաբեությունը չի իշխում մեր սրտերում, մենք բնազդորեն ձգտում ենք «հավիտենության Թագավորին» (տե՛ս Ա Տիմոթ. 1.17): Աստծո Խոսքն ասում է յուրաքանչյուր մարդու մասին.

> «Նրանք գիտեն Ճշմարտությունն Աստծո մասին, քանի որ Նա ակնհայտ է դարձրել այն նրանց համար... Այն ամենի միջոցով, ինչ Աստված ստեղծել է, նրանք կարող են պարզորեն տեսնել Նրա անտեսանելի հատկանիշները՝ Նրա հավիտենական զորությունը և աստվածային բնությունը» (Հռոմեացիների 1.19,20, NLT):

Աստված անհայտ չէ ոչ ոքի համար: Եթե մարդիկ լիովին անկեղծ լինեն, կխոստովանեն, որ իրենց կյանքի ինչ-որ պահի նրանք Աստծուն ճանաչելու խորը ձգտում են ունեցել: Բոլորս էլ բնազդորեն գիտենք, որ Նա ամենագետ է, ամենակարող է և ամենագո է:

Ովքեր հաղորդակցվում են Նրա հետ, հասկանում են, որ Նրա ներկայությունը, զորությունը, փառքը և մեծությունն անիմանալի և անզուգական են: Նա այնքա՜ն հզոր է, որ տիեզերքի ամենազորեղ էակներից մի քանիսը, որոնք սերովբեներ են կոչվում, մշտապես գտնվում են Նրա ներկայության մեջ Երկնքում և երկյուղածությամբ ու բարձր ձայնով կանչում են իրար՝ ազդարարելով Նրա զարմանալի մեծությունը: Այդ հսկա արարածներն անում են դա այնպիսի՜ եռանդով և ուժով, որ նրանց ձայները երերացնում են Երկնքում գտնվող ահռելի սրահի դռների սյուները, որը, հավանաբար, կարող է տեղավորել մեկ միլիարդից ավելի էակների:

Աստծո իմաստությունը, հասկացողությունը, ստեղծարարությունը, հանճարը և գիտելիքն այնքա՜ն լայն են, որ դրանք անիմանալի են: Դարեր շարունակ ամենախելացի գիտնականները որոնել և ուսումնասիրել են Նրա արարչագործության գաղտնիքները, սակայն այդպես էլ լիովին չեն ըմբռնել դրա բարդությունը և սքանչելիությունը:

Ոչ մի մարդ դեռ լիովին խորամուխ չի եղել Նրա սիրուն, բարությանը և գթասրտությանը և լիարժեք կերպով չի վերապրել դրանք: Նրա սերն անսահման է:

Արդեն քառասուն տարի է՝ վայելում եմ Նրա հետ հարաբերություններ ունենալու արտոնությունը, սակայն վերջերս ես լիովին համակվել էի զգացմունքներով՝ մտածելով այն մասին, որ մեր Արարիչը փրկել է մեզ այն դատապարտությունից, որը ինքներս էինք բերել մեզ վրա: Նա տվեց մարդկությանը ամբողջ իշխանությունը այս երկրի վրա, սակայն մենք տվեցինք այն Նրա ոխերիմ թշնամուն՝ սատանային, և նրա դիվային զորքերին: Նախապես իմանալով մեր դավաճանության մասին՝ Աստված պատրաստակամորեն որոշեց վճարել այն անասելի գինը, որն անհրաժեշտ էր մեզ ստրկությունից և բանտարկությունից ազատ արձակելու համար: Մենք դատապարտեցինք ինքներս մեզ, բայց Նա զոհեց Իրեն՝ մեզ ազատ արձակելու համար: Նա արեց դա՝ առանց խախտելու Իր Խոսքը, ինչը հնարավոր էր միայն մի դեպքում՝ եթե Նա մարդ դառնար:

Քանի որ Աստված տվել էր երկիրը մարդուն, Նա չէր կարող ետ ստանալ այն՝ որպես Աստված. անհրաժեշտ էր, որ մարդու Որդի՛ն ետ պահանջեր այն: Ահա թե որն էր Հիսուսի կուսական ծննդի իմաստությունը: Նա դարձավ հարյուր տոկոսանոց մարդ, բայց քանի որ Նրա Հայրը Աստծո Հոգին էր, Նա ազատ էր այն ստրկացնող բնությունից, որի մեջ հայտնվել էր ամբողջ մարդկությունը: Հիսուսը մարմնով հայտնված Աստված էր: Նա գիտեր այն սարսափելի չարչարանքների մասին, որոնք պետք է կրեր՝ մեզ փրկելու համար, սակայն Նրա սերը մեր հանդեպ այնքա՜ն մեծ և կատարյալ էր, որ Նա հոժարությամբ որոշեց վճարել մեր ազատության գինը:

Այս գիրքն ամբողջությամբ և անթիվ այլ գրքեր կարելի էր նվիրել միմիայն նկարագրելու համար Նրա բարությունը, զարմանալի սերը, զորությունը և մեծությունը: Այնուամենայնիվ, գոյություն ունի մի հարց, որը դարձել է այս գիրքը գրելու պատճառը:

Հարց, որից խուսափում են

Քանի որ մենք նման զարմանալի Աստծո ենք ծառայում, պարզ տրամաբանությունը ենթադրում է, որ մենք պետք է գերբնական կյանք ունենանք: Բացի տրամաբանությունից՝ Աստվածաշունչը նույնպես սատարում է այս գաղափարը: Մեզ խոստացվել է այս ամենը.

- Նրա աստվածային բնությունը,

- անձնուրաց բնավորություն,
- անպայմանական սեր և ներում,
- աննկարագրելի ուրախություն և խաղաղություն,
- գերբնական զորություն,
- բարեկեցություն,
- կենսունակություն,
- առողջություն,
- ապահովություն և կայունություն:

Եվ սա դեռ ամենը չէ. կա ավելին: Աստվածաշունչը նաև խոստանում է մեզ.

- աստվածային իմաստություն,
- գիտելիք,
- հասկացողություն,
- հանճար:

Այս ամենի նպատակն է՝ պտղաբեր և հաջողակ դարձնել մեզ: Կարճ ասած՝ մեզ խոստացվել են երկնային հատկանիշներ: Հիշեք, որ Հիսուսն ազդարարեց, որ Իր թագավորությունը մեր ներսում է, և նպատակն այն է, որ Նրա կամքը կատարվի երկրի վրա այնպես, ինչպես որ Երկնքում է:

Այնուամենայնիվ, թվում է՝ այս հատկանիշները չեն դրսևորվում ո՛չ համընդհանուր, ո՛չ էլ անհատական մակարդակի վրա: Եթե անկեղծորեն գնահատենք ներկա իրավիճակը, կարո՞ղ ենք ասել, որ զգալի տարբերություն ենք տեսնում Աստծո ժողովրդի և այս աշխարհի մարդկանց միջև: Արդյո՞ք մենք՝ Հիսուսի հետևորդներս, ակնառու մարդիկ ենք: Արդյո՞ք մենք լույս ենք տալիս այս խավար սերնդի մեջ: Մտածե՛ք ամուսնալուծությունների վիճակագրության մասին. կա՞ արդյոք աչքի ընկնող տարբերություն եկեղեցու և այս աշխարհի միջև: Թե՞ մենք նույնպես տառապում ենք նախանձից, բամբասանքից, չարախոսությունից և երկպառակություններից, որոնց արդյունքը խաթարված հարաբերություններն են: Արդյո՞ք մենք դրսևորում ենք այնպիսի բնավորություն, անկեղծություն և բարոյական չափանիշներ, որոնք բևեռային կերպով տարբերվում են մեր երկրի ապականությունից: Կա՞ արդյոք տարբերություն հավատացյալների և անհավատների միջև առողջության և բարեկեցության առումով: Մենք կարողանո՞ւմ ենք հոգալ մարդկանց կարիքները և ազդարարել Քրիստոսի Ավետարանը ամբողջ աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդու:

Այս ամենը չափազանց վե՞հ է թվում: Մտածեք այն մասին, որ Հին ուխտի ներքո կար ժամանակ, երբ արծաթը քարի պես հասա-

րակ էր և արժեք չուներ՝ խիստ բարձր կենսամակարդակի պատճառով (տե՛ս Գ Թագ. 10.21,27): Այժմ՝ Նոր ուխտի ներքո, հաճախ եմ հանդիպում առաջնորդների, որոնք դժվարություններ են կրում սահմանափակ միջոցների պատճառով, և հովիվների, որոնք կամենում են օգնություն ցուցաբերել այն բնակավայրերին, որտեղ ապրում են, սակայն չեն կարողանում՝ մարդկային ուժի, ֆինանսների և այլ միջոցների բացակայության պատճառով: Արդյո՞ք երկու դեպքում էլ դա կարելի է անվանել «երկրի վրա այնպես, ինչպես որ Երկնքում է»:

Հիսուսը խոստացավ մեզ, որ երբ փնտրենք Իր թագավորությունը և արդարությունը, այն ամենը, ինչի կարիքը ունենք, կտրվի մեզ: Չէր եղել նույնիսկ մեկ դեպք, որ միջոցների պակասը խանգարեր Հիսուսին անել այն, ինչ պետք է աներ: Դժբախտաբար, եկեղեցում եղել են ծայրահեղ ուսմունքներ հարստության և բարգավաճման մասին: Ոչ հավասարակշռված ուսմունքների պատճառով մարդիկ սկսել են հավատալ, որ առատությունը վատ բան է: Սակայն ի՞նչ մենք կարող ենք տալ, եթե ոչինչ չունենք:

Երբ թույլ ենք տալիս, որ ձգտումն Աստծո թագավորության հանդեպ կլանի մեզ, Նա վստահում է անհրաժեշտ միջոցներ՝ Իր կամքն այս երկրի վրա տարածելու համար: Աստված վատ առաջնորդ չէ. Նա չի խնդրում Իր հետևորդներին կատարել Իր կամքը՝ առանց տալու նրանց անհրաժեշտ գործիքներ: Եվ ավելի կարևոր մի փաստ՝ Աստված բարի Հայր է: Նա ցանկանում է օրհնել Իր զավակներին, սակայն չի կամենում, որ ունեցվածքը տիրի մեզ: Ամեն տեսակի չարիքի արմատը ոչ թե փողն է, այլ՝ սերը փողի հանդեպ:

Հին Իսրայելում կար ժամանակ, երբ ամբողջ երկրում չկար նույնիսկ մեկ աղքատ մարդ: Գրված է. «Եվ Հուդան ու Իսրայելը ապահով բնակվում էին՝ ամեն մարդ իր որթի և իր թզենու տակ, Դանից մինչև Բերսաբե, Սողոմոնի բոլոր օրերում» (Գ Թագավորաց 4.25): Դանը Իսրայելի ամենահյուսիսային քաղաքն էր, իսկ Բերսաբեն՝ ամենահարավայինը, և Աստվածաշունչը հայտնում է, որ ամբողջ ազգի մեջ չկար նույնիսկ մեկ մարդ, որը խնամքի կարիք ունենար. ոչ մի անհատ կամ խումբ չուներ պետական աջակցության կարիք: Ի՞նչն այդ երկրում նման առատության պատճառ դարձավ:

Իրականում, սա առանձին դեպք չէ: Եթե ուսումնասիրենք Աստծո ժողովրդի պատմությունը Հին կտակարանում, բազմաթիվ սերունդներ ապշեցուցիչ կերպով բարգավաճում էին՝ տնտեսական, սոցիալական և ռազմական առումներով: Նրանք ունեին ռեսուրսների, սննդի և ունեցվածքի առատություն: Նրանք պարտություն չէին կրում թշնամիների

հարձակման ժամանակ, ընդհակառակը, ամեն անգամ հաղթում էին: Նրանց կենսամակարդակը զարմացնում էր հարևան երկրներին: Եվ մտապահեք, որ դա տեղի էր ունենում Հին ուխտի ժամանակ, որն ավելի ցածր է Նոր ուխտից:

Հիսուսն ավելի լավ ուխտի Միջնորդ է, որը հաստատվել է ավելի լավ խոստումների հիման վրա (տե՛ս Եբր. 8.6): Նայելով Նրա կյանքին՝ տեսնում ենք, որ կառավարիչները, պետական պաշտոնյաները (հարկահավաքները), ազնվականները, մարմնավաճառները, գողերը, հարուստները և աղքատները, պարզ ասած՝ բոլոր տեսակի մարդիկ ձգտում էին Նրան: Հիսուսը փոփոխություն էր բերում այնտեղ, որտեղ լինում էր: Նա երբեք պակասություն չուներ և կարող էր լրացնել ցանկացած կարիք: Երբ Նրա թիմը հարձակումների էր ենթարկվում, ոչ ոք վնաս չէր կրում, և հաճախ վատ իրավիճակները վերածվում էին զարմանալի հաջողությունների:

Առաջին եկեղեցու անդամներին անվանում էին «աշխարհը շուռ տվողներ» (Գործք 17.6, NKJV): Նրանք նույնպես կարիքներ չունեին, քանի որ գրված է. «Աստծո օրհնությունը բոլորի վրա էր: Նրանց միջև չկային կարիքավոր մարդիկ» (Գործք 4.33,34, NLT): Նրանք այն աստիճան յուրահատուկ էին, որ հաճախ պետք է համոզեին զինվորական սպաներին կամ բնակավայրերի ղեկավարներին, որ իրենք աստվածներ չէին և իրենց պետք չէր երկրպագել: Նրանց շրջապատող մարդիկ իրենց սերնդի գերմարդիկ էին համարում նրանց: Նրանք հեռացնում էին հիվանդությունները և տկարությունները տառապյալների կյանքից: Նրանք պայծառ լույս էին խավար սերնդի մեջ:

Թույլ տվեք կրկին հարցնել՝ արդյո՞ք մեր կյանքը զգալիորեն տարբերվում է մեր հասարակությունից: Արդյո՞ք մեր լույսն այնքան վառ է, որ մարդիկ Աստծո առանձնահատուկ ժողովուրդ են համարում մեզ: Թե՞ մենք արդարացումներ ենք ներկայացրել և փոփոխել ենք մեր աստվածաբանությունը՝ հեռանալով Սուրբ գրքի պարզ ուսմունքից, որպեսզի բացատրենք, թե ինչու այն խոստումները, որոնք նախատեսված են Նոր կտակարանի ժամանակաշրջանի համար, այլևս չեն կատարվում: Նոր կտակարանի հեղինակներն ունեն պատասխաններ, բայց մենք խուսափում ենք այս բարդ հարցերին պատասխանելուց:

Ի՞նչ կկատարվի, եթե մենք իսկապես լսենք, թե ինչ է ասում Աստվածաշունչը:

Իմ նպատակը հանդիմանությունը չէ. ես ընդամենը խնդրում եմ, որ հարցնեք ձեզ հետևյալը. արդյո՞ք այն, ինչ կատարվում է այսօր, հետևյալ խոսքերի իրականացումն է. «Գա Քո արքայությունը, լինի Քո կամ-

քը, ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա»: Մենք չենք կարող անտեսել Հիսուսի խոսքերը. «Աստծո արքայությունը հենց ձեր ներսում է» (Ղուկաս 17.21): Նրա թագավորությունն այստեղ է՝ Քրիստոսի մարմնում: Արդյո՞ք մենք ապրում ենք մեր սերնդի մեջ այնպես, ինչպես Հիսուսը՝ Իր սերնդի մեջ: Մի՞թե Խոսքը չի սովորեցնում մեզ. «Նրանք, ովքեր ասում են, որ ապրում են Աստծո մեջ, պետք է ապրեն այնպես, ինչպես Հիսուսը» (Ա Հովհաննես 2.6, NLT):

Արդյո՞ք մենք նույնքան արդյունավետ ենք Ավետարանը տարածելու հարցում, որքան Առաջին եկեղեցին: Արդյո՞ք մենք ականատես ենք լինում այն բանին, որ ամբողջ տարածաշրջաններ լսում են Ավետարանի լուրը ընդամենը երկու տարում (տե՛ս Գործք 19.10): Հիշեք, որ նրանք չունեին ինտերնետ, Ֆեյսբուք կամ այլ սոցիալական ցանցեր, հեռուստատեսություն, և նույնիսկ՝ ռադիո: Սակայն ամեն մեկը, ոչ թե պարզապես մի քաղաքում կամ երկրում, այլ ամբողջ տարածաշրջանում լսեց Ավետարանը:

Արդյո՞ք այսօր կատարվում է նույնը: Եկեք անկեղծորեն գնահատենք իրավիճակը:

Մենք անտեսում ենք ակնհայտ խնդիրը՝ ասելով. «Աստված այլևս այդպես չի գործում»: Մենք այնպես ենք ներկայացնում Ավետարանը, որ այն համապատասխանի մեր վիճակին: Թվում է՝ մենք ընկրկում ենք, իսկ երբեմն, նույնիսկ, արհամարհում ցանկացած բան, ինչն առնչություն ունի իշխանության, ուժի, հաջողության, առատության, պտղաբերության և առողջության հետ: Մենք ասում ենք, որ նման ուղերձը ծայրահեղ, անհավասարակշռված և շահադիտական է: Այսպես վարվելով՝ մենք, փաստորեն, պաշտպանում ենք մեզ, որպեսզի ստիպված չլինենք պատասխանել մի շարք ծանր հարցերի, և արդարացնում ենք մեզ այն բանի համար, որ ազդեցություն չենք թողնում մեզ շրջապատող մարդկանց վրա Ավետարանի միջոցով:

Այնպես որ, իմ առաջադրած հարցը մեր անարդյունավետության մասին այն է, ինչի շուրջ մտորում են շատերը, եթե ոչ՝ բոլորը: Սակայն ինչո՞ւ մենք չենք տալիս այս հարցը: Ինչո՞ւ մենք չենք փնտրում պատասխանը: Հնարավո՞ր է, որ մենք վարանում ենք, քանի որ այս հարցը բարձրացնելը կարող է ի հայտ բերել այնպիսի խնդիրներ, որոնցով չենք կամենում զբաղվել: Այնուամենայնիվ, եթե չտանք այս հարցը և չվարվենք դրա պատասխանների հիման վրա, մենք կմնանք շատ ավելի ցածր մակարդակի վրա, քան այն, ինչը խոստացվել է մեզ, և ինչի համար կանչված ենք:

Ավելի քան երեսունհինգ տարի ծառայության մեջ լինելուց հետո և

մոտենալով իմ վաթսունամյակին՝ ես պատրաստ եմ և կամենում եմ խոսել այս հարցի վերաբերյալ: Իրականում այս խնդիրը հրատապ է: Ես հավատում եմ, որ եթե անկեղծորեն որոնենք այս հարցի պատասխանը Նրա Խոսքում, այն կյանքի լիությունը, որի համար մենք կանչված ենք, ի հայտ կգա:

Եթե դուք, ինչպես և ես, ուզում եք պատասխաններ ստանալ, եկեք միասին անցնենք այս աստվածաշնչյան ընթացքը: Այն արագ չի լինի և երբեմն ցավոտ կլինի՝ նման այն բանին, ինչ տեղի է ունենում, երբ հմուտ վիրաբույժը բարդ վիրահատություն է կատարում: Բժիշկը հոգ է տանում իր հիվանդի մասին և կատարում է անհրաժեշտ գործողությունները՝ նրա կյանքը փրկելու համար:

Սուրբ Հոգին ավելի շատ է հոգում մեր մասին, քան ցանկացած վիրաբույժ՝ թե՛ անհատական, թե՛ հավաքական առումով: Մտապահե՛ք սա, երբ հասնենք ավելի ծանր գլուխների: Արդյունքում դուք կստանաք ուժ, առողջություն, կյանք, սեր և կենսունակություն: Ես հավատում եմ, որ այս պատասխանները կարող են փոխել մեր կյանքի, բնակավայրերի և այս սերնդի ընթացքը:

Եթե դուք ինձ հետ եք, գնացի՛նք:

գործնական քայլ

Աստված զգուշացնում է մեզ Հակոբոս 2.12-ում. «Խոսքը անո՛ղ եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով»: Սա նշանակում է, որ եթե մենք խոսք ենք լսում Աստծուց (Աստվածաշնչից, Սուրբ Հոգուց կամ ինչ-որ մարդուց, ով ողջամիտ ուսմունք է քարոզում), բայց չենք կատարում, մենք արդեն խաբել ենք մեզ:

Մեր հավատքի ապացույցը ոչ թե սովորեցրածին համաձայնելն է, այլ՝ կատարելը: Այնպես որ, ամեն գլխի վերջում գտնվող այս գործնական քայլերն անչափ կարևոր են: Դրանցից ամեն մեկը խթան է, որն օգնում է անմիջապես գործի դնել այն ճշմարտությունները, որոնք դուք սովորում եք հերթական գլուխն ընթերցելիս: Ներկայացված առաջադրանքները ծավալուն չեն, և կատարելու համար երկար ժամանակ չի պահանջվի:

Եթե ժամանակ հատկացնեք՝ յուրաքանչյուրը կատարելու համար, դուք շատ ավելին կստանաք այս գրքից, և ձեր կյանքը խորապես կփոխվի:

III

Կան հարցեր, որոնցից բոլորը խուսափում են, և դրանք տալը նման է ատամնաբույժի մոտ գնալուն՝ ատամի բաց խոռոչը փակելու համար: Այնուամենայնիվ, մենք պետք է որոշում կայացնենք խիզախ լինել և բախվել այդ հարցերին՝ տևական օգուտ ստանալու համար:

Ինչո՞վ է ձեր կյանքն աչքի ընկնում այս աշխարհի համեմատ: Մարդիկ կարո՞ղ են ասել, որ դուք ապրում եք Հիսուսի նման: Մի՛ խուսափեք այս հարցից. անպայման պատասխանեք: Որքանո՞վ ձեր կյանքը կփոխվեր, եթե ապրեիք Հիսուսի նման: Ի՞նչ սովորություններ դուք կթողնեիք: Ինչպե՞ս դա կփոխեր ձեր հարաբերությունները այն մարդկանց հետ, որոնց հետ մշտապես հաղորդակցվում եք: Ինչպե՞ս կփոխվեր ձեր վարքը ձեր ընտանիքում:

Ժամանակ հատկացրե՛ք, որ գրի առնեք ձեր մտքերն այս հարցերի վերաբերյալ: Օգտագործե՛ք Աստծո Խոսքը՝ որպես ուղեցույց: Այն ցույց կտա, թե ինչին պետք է ձգտեք: Հենց որ գրի առնեք որոշ մտքեր, աղոթե՛ք դրանց հիման վրա: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն ցույց տալ մեկ բան ձեր պատասխաններից, որի ուղղությամբ Նա հենց հիմա աշխատանք է տանում ձեր կյանքում: Խնդրե՛ք Նրան կյանքի կոչել դա այնպես, որ փոխվելու զորություն ստանաք:

2

Ի՞ՆՉ է ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Առաջին գլխում *փորձեցինք* խոսել Աստծո մեծության մասին: Ես օգտագործում եմ «փորձել» բառը, քանի որ որքան էլ վսեմ կամ ճարտար բառեր օգտագործենք, մենք նույնիսկ չենք մոտենա Նրա վեհությունը նկարագրելուն: Նա անգերազանցելի է: Ոչ ոք չի կարող նույնիսկ համեմատվել Նրա հետ. Աստված անզուգական է և իշխում է հավիտենական անցյալից մինչև հավիտենական ապագան: Նա զարմանալի՜ է:

Լինելով Նրա զավակները՝ լիովին տրամաբանական է, որ մեր կյանքը պետք է արտացոլի Նրան, և Աստվածաշունչը պարզ խոսում է այս մասին: Աստծո Խոսքը հայտնում է Նրա որդիների և դուստրերի մասին. «Ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում» (Ա Հովհաննես 4.17): Հովհաննես առաքյալը չասաց. «Ինչպես Նա է, այնպես էլ մենք կլինենք հավիտենության մեջ»: Ո՛չ, նա պնդում է, որ ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք *հենց հիմա այս աշխարհում:* Սա պարզապես մտքից վեր է: Կրկին, գրված է.

> «Նրա փառքի և գերազանցության շնորհիվ Նա տվել է մեզ մեծ և թանկ խոստումներ: Սրանք այն խոստումներն են, որոնք կարողություն են տալիս մեզ բաժնեկցելու *Նրա աստվածային բնությանը»* (Բ Պետրոս 1.4, NLT):

Մտածե՛ք այս մասին: Մեզ տրվել է *Նրա աստվածային բնությունը:* Ոչ թե երկրի վրա երբևէ ապրած ամենաականառու մարդու բնությունը, այլ՝ *Աստծո* բնությունը: Պետրոսը որևէ թյուրըմբռնումից խուսափելու համար ավելացնում է «աստվածային» բառը: Հունարենում այն

«թեիոս» բառն է, որը սահմանվում է որպես «այն, ինչ եզակի է Աստծո համար և բխում է Նրանից» *(«Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան»):* «Բնություն» բառը հունարենում *«ֆուսիս»* բառն է, որը սահմանվում է որպես «ծնել, առաջացնել, էություն, էությանը հատուկ բնավորություն և հատկանիշներ» *(«Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան»):* Միացնելով այս երկու բառերը՝ կստանանք հետևյալը. «Սրանք այն խոստումներն են, որոնք կարողություն են տալիս ձեզ բաժնեկցելու *այն ամենին, ինչը հատուկ է միմիայն Աստծուն:*

Մենք ճշմարտապես ծնված ենք Աստծուց:

Ես մտահոգվում եմ, երբ ծառայողները հետևյալ բանն են ասում. «Իրականում, չկա ոչ մի տարբերություն քրիստոնյայի և մեղավորի միջև. պարզապես քրիստոնյաները ներված են»: Սա հերձվածություն է, որը երկու զարհուրելի հետևանք ունի: Առաջինը՝ այն արժեզրկում է Աստծո աշխատանքը, որը Նա կատարեց մեզ համար Հիսուսի միջոցով, և երկրորդը՝ այն անարդյունավետ է դարձնում Աստծո խոստումը, և Նրա զավակները շարունակում են ստրկացված մնալ այս աշխարհի մեղսալի ցանկություններից առաջացած ապականությանը:

Նույնիսկ բնությունն է հակառակ նման հերձվածությանը: Դուք երբևէ լսե՞լ եք, որ առյուծից սկյուռ ծնվի, կամ, որ զտարյուն արշավաձիուց անձրևորդ ծնվի: Գրված է. «Սիրելինե՛ր, հիմա [ոչ թե *հետո,* երբ Երկինք գնանք] Աստծո որդիներ ենք» (Ա Հովհաննես 3.2):

Որպես Նրա սիրելիներ՝ մենք պետք է դրսևորենք անձնուրաց բնավորություն, անպայմանական սեր, անասելի ուրախություն, խաղաղություն, որը մտքից վեր է, գերբնական զորություն, բարեկեցություն, կենսունակություն, ստեղծարարություն, աստվածային իմաստություն, խորաթափանցություն, բարձր գիտելիքներ և մեծ ըմբռնողություն, և այս ցուցակը դեռ կարելի է շարունակել: Աստվածաշունչը խոստանում է նմանատիպ հատկանիշներ տարբեր բնագավառներում: Այնպես որ, կրկին, իմ հարցը հետևյալն է. «Ինչո՞ւ մենք չենք տեսնում սա ո՛չ անհատական, ո՛չ էլ ընդհանուր եկեղեցական մակարդակի վրա»:

Մինչև անդրադառնալը այս և նմանատիպ հարցերին, ուզում եմ պատմել ձեզ այս գրքի կառուցվածքի մասին: Հնարավոր է, որ հաջորդ մի քանի գլուխները բացասական և կոպիտ թվան ձեզ, սակայն խոստանում եմ, որ դրանց հետևելու են գոհացուցիչ պատասխաններ:

Պատկերացրեք, որ բժիշկը ճշտորեն մելանոմա է ախտորոշում վաղ շրջանում և առաջարկում է լուծում՝ կարճատև ամբուլատոր վիրահատության տեսքով, քանի որ այդ գոյացությունը հենց սկզբից չարորակ

է թվում: Հիվանդը կարող է մտածել. «Որքա՜ն սարսափելի է: Ես քաղցկեղով հիվանդ եմ: Ես չեմ ուզում լսել այս մասին, ո՛չ էլ ինչ-որ միջոցների դիմել՝ այս հիվանդությունից ազատվելու համար: Բայց ես կանեմ դա, որպեսզի փրկեմ իմ կյանքը»: Այնուամենայնիվ, պատկերացրեք մեկ այլ տարբերակ. եթե բժիշկն անտեսի հիվանդի խնդիրը և ընդամենը ցուցումներ տա նրան առողջ ապրելակերպի մասին՝ սովորեցնելով պատշաճ կերպով սնվել, կանոնավոր մարզվել, դրական վերաբերմունք ունենալ և խուսափել սթրեսներից, մելանոման կշարունակի աճել, մինչև որ անկարելի կլինի այն վիրահատել, և հիվանդը կմահանա:

Աստված չափազանց շատ է սիրում մեզ և այդ պատճառով էլ ախտորոշում է այն, ինչը ետ է պահում մեզ և նույնիսկ կարող է դառնալ մեր մահվան պատճառը: Նա գիտի, որ այն, ինչը սահմանափակում է մեզ, չի հեռանա դրական ապրելակերպի միջոցով: Փոխարենը, մենք պետք է հակառակվենք դրան և հեռացնենք մեր կյանքից: Նա Հայր է, Ով խորապես մտահոգված է մեր առողջությամբ և բարեկեցությամբ:

Այնպես որ, կարդալով հաջորդ գլուխները, մտապահեք, որ ախտորոշումն անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի վիրահատական գործողություններ կատարել: Վերջնական արդյունքը լինելու է այն անզուգական իրականությունը, որը պատկերված է Աստծո Խոսքում:

Անդրադարձ իմ հարցին

Եթե Նրա թագավորությունը մեր մեջ է, ինչո՞ւ Նրա կամքը չի կատարվում երկրի վրա այնպես, ինչպես Երկնքում: Ինչո՞ւ որոշ հինկտակարանյան հավատացյալներ, որոնք գտնվում էին «պակաս գերազանց» ուխտի մեջ՝ հիմնված ավելի «ցածր» խոստումների վրա, ապրում էին շատ ավելի գերազանց կյանքով, քան այն, ինչը մենք տեսնում ենք այսօր: Աստվածաշունչը շարունակ պատասխանում է այս հարցին: Այդ պատասխաններից մեկը գրված է կորնթացիներին ուղղված Պողոսի նամակում.

> «Ահա թե ինչու դուք պետք է քննեք ձեզ մինչև այս հացն ուտելը և այս բաժակը խմելը: Որովհետև եթե դուք ուտում եք այս հացը և խմում եք այս բաժակը՝ առանց պատվելու Քրիստոսի մարմինը, դուք ուտում եք և խմում եք Աստծո դատաստանը ձեզ վրա: *Ահա թե ինչու են ձեզնից շատերը տկար և հիվանդ, և ոմանք նույնիսկ մահացել են:* Բայց եթե մենք քննեինք ինքներս մեզ, այս կերպով չէինք դատ-

> վի Աստծո կողմից: Սակայն երբ դատվում ենք Տիրոջ կողմից, մենք խրատվում ենք, որպեսզի չդատապարտվենք այս աշխարհի հետ» (Ա Կորնթացիների 11.28-32, NLT):

Մենք տեսնում ենք կորնթացիների աներկյուղ վերաբերմունքը Տիրոջ ընթրիքի ժամանակ, ինչի հետևանքները շատ ավելի խորն էին, քան նրանցից շատերը գիտակցում էին: Իրականում, նրանք կատարում էին Տիրոջ ընթրիքը լիարժեք ճաշկերույթի տեսքով՝ սեղանի շուրջ, ինչը շատ էր տարբերվում մեր ժամանակակից ծիսական մոտեցումից: Մեր ուսումնասիրության ընթացքում կտեսնենք, որ հիմնական խնդիրը, որի պատճառով նրանց կյանքում դատաստան էր եկել, հետևյալն էր. նրանք գիտակցում էին, որ անհնազանդ էին Աստծուն, սակայն շարունակում էին այդպես վարվել:

Այս հատվածում թվարկված է նրանց վարքի երեք հետևանք՝ տկարություն, հիվանդություն և ֆիզիկական մահ: Վերջին երկուսի իմաստը պարզ է, իսկ ի՞նչ կարող ենք ասել առաջինի մասին: «Տկարություն» բառի սահմանումներից են «ուժի կամ առույգության բացակայությունը» և «անկարող կամ անզոր լինելը»: Այս բառը կարող է վերաբերել կյանքի բազմաթիվ բնագավառների: Ընդհանուր առմամբ, այն նշանակում է, որ մենք անկարող ենք լինել այնպիսին, ինչպիսին ստեղծված ենք:

Վերադառնանք Սուպերհերոսին: Կրիպտոնաքարը վտանգ էր ներկայացնում նրա համար. այն խլում էր նրա ուժերը և անզոր էր դարձնում նրան: Սուպերհերոսի կարողություններն այս աշխարհից չէին: Նա կարող էր գերբնական սխրանքներ գործել և ուներ գերմարդկային գիտելիքներ, գերզարգացած զգայարաններ, արտասովոր ուժ և հաստատակամ բնավորություն: Այնուամենայնիվ, կրիպտոնաքարի ազդեցության ներքո Սուպերհերոսը տկարանում էր՝ դառնալով ավելի թույլ, քան սովորական մարդը: Եթե դրա ազդեցությունը երկար ժամանակ մնար նրա կյանքում, նա կարող էր նույնիսկ մահանալ:

Ըստ էության, Պողոս առաքյալը բացահայտում է եկեղեցու կրիպտոնաքարը: Այն տկարացնում է մեզ՝ թույլ չտալով ապրել այն զորությամբ, որը հատուկ է աստվածային բնությանը:

Դավիթ թագավորը հառաչելով խոստովանեց մի դեպք իր կյանքից, երբ չէր ապաշխարել և չէր խոստովանել իր մեղքը. «Իմ զորությունը գոլորշիացավ՝ ինչպես ջուրը ամառվա շոգին» (Սաղմոս 32.4, NLT): «Ուղերձ» թարգմանությունը, որը շրջասության է ենթարկում աստվածաշնչյան տեքստը, այսպես է ներկայացնում նրա խոսքերը. «Իմ կյանքի բոլոր հյութերը չորացան»: Մեկ այլ խոսքում գրված է. «Մեղքը չորացրեց

իմ ուժը. ես վատնվում եմ ներսից» (Սաղմոս 31.10, NLT):

Հակոբոսն այսպես է գրում. «Մեղքը, երբ որ կատարվում է, մահ է ծնում: Մի՛ խաբվեք, սիրելի՛ եղբայրներ» (Հակոբոս 1.15,16): Հակոբոսը պարզորեն խոսում է հավատացյալների հետ և զգուշացնում է նրանց չխաբվել մեղքով: Եթե մեղքը չհեռացվի, այն կանի հավատացյալի հետ նույնը, ինչ կրիպտոնաքարը՝ Սուպերհերոսի հետ, ընդհուպ մինչև մահվան հասցնելը: Նույն կերպով Պողոսը, որպես սիրող հոգևոր հայր, հոգևոր կրիպտոնաքարի ազդեցության մասին զգուշացնում է ինչպես Կորնթոսի եկեղեցուն, այնպես էլ մեզ:

Խիստ զգուշացում

Առաջին բանը, ինչը պետք է շեշտադրել այս սուրբգրային հատվածների վերաբերյալ, հետևյալ զգուշացումն է: Պողոսը չի ասում. «Սա *միակ* պատճառն է, որ ձեզնից շատերը տկար և հիվանդ են, և ոմանք նույնիսկ մահացել են»: Այլ կերպ ասած՝ նա չի ասում, որ բոլոր նեղությունները, հիվանդությունները և մահերը մեղքի պատճառով են: Հաճախ մենք՝ հավատացյալներս, պայքարում ենք դժվարին իրավիճակների հետ, քանի որ ապրում ենք անկում ապրած աշխարհում, և գոյություն ունեն բնական և դիվային ուժեր, որոնց պետք է հակառակվենք:

Օրինակ, մեկ անգամ Հիսուսը և աշակերտները տեսան մի մարդու, որը ծնված օրից կույր էր: Աշակերտները հարցրին. «Ո՞վ է մեղանչել, սա՞, թե՞ իր ծնողները, որ կույր է ծնվել» (Հովհաննես 9.2): Ըստ նրանց՝ այդ մարդը կարող էր լինել նման վիճակում միայն մեղքի պատճառով:

Հիսուսն անմիջապես պատասխանեց. «Ո՛չ նա է մեղանչել, ո՛չ էլ նրա ծնողները»: Հիսուսն արագորեն և վճռականորեն վերջ դրեց այս սխալ և զարհուրելի մտածելակերպին: Բոլոր հիվանդությունները, տկարությունները և վաղաժամ մահերը չէ, որ մեղքի հետևանք են:

Հենց այս մտածելակերպի պատճառով էր, որ Եղիփազը, Բաղդատը և Սոփարը քննադատում էին Հոբին: Ըստ նրանց մեղադրանքների՝ Հոբի տառապանքների պատճառը նրա մեղքերն էին (տե՛ս Հոբ 5.17, 8.4-6, 11.13-15, 22.1-11): Սակայն անմիջապես Հոբի նեղություններից առաջ Աստված պարծեցավ. «Նրա նմանը չկա երկրի վրա՝ կատարյալ և ուղիղ մարդ, աստվածավախ և չարությունից հեռացող» (Հոբ 1.8): Հոբի տառապանքները որևէ կապ չունեին մեղքի կամ կեղծավորության հետ: Աստված որոշ ժամանակ լուռ մնաց, բայց ի վեր-

ջո Եղիփազին ասաց. «Ես բարկացած եմ քեզ վրա և քո երկու ընկերների վրա, որովհետև դուք ճշտորեն չխոսեցիք Իմ մասին» (Հոբ 42.7, NLT): Երբ Աստծուն այնպես են ներկայացնում, ասես Նա պատժում է ինչ-որ մեկին մեղքի համար (այնինչ իրականում այդպես չէ), դա լուրջ մեղադրանք է Նրա բնավորության դեմ:

Տարիներ առաջ, երբ նորահավատ էի, բազմաթիվ եկեղեցական շրջանակներում մարդկանց մեղավոր էին համարում, եթե նրանք նեղություններ էին կրում: Այս մտածելակերպը դեռևս գոյություն ունի, սակայն, բարեբախտաբար, այնքան տարածված չէ, որքան անցյալում: Սուրբգրային ուսուցումը և հրաշալի առաջնորդները մեծ մասամբ հեռացրել են այս սխալմունքը եկեղեցուց: Նման մտածելակերպի պատճառով, որոշ մարդկանց հետ շփվում էին խիստ վիրավորական ձևով՝ դատապարտությամբ և ատելությամբ լցված: Ցավոք, այս ուսմունքը նույնիսկ հեռացրեց ոմանց հավատքից:

Մյուս կողմից, մենք նույնպես պետք է հիշենք Հիսուսի խոսքերն այն մարդուն, ով բժշկվեց երեսունութ տարի տևող տկարությունից. «Ահա առողջացար. այլևս չմեղանչես, որ էլ ավելի չար բան չլինի քեզ» (Հովհաննես 5.14): Մենք չենք մերժում այն փաստը, որ Հիսուսի խոսքերով՝ մեղքը դուռ է բացում ծանր հետևանքների և նեղությունների համար: Հիսուսն այնքան սիրեց այդ մարդուն, որ տվեց կյանքը նրա համար: Եվ Նա զգուշացրեց նրան՝ Իր ջերմեռանդ սիրուց դրդված:

Մենք չունենք ճշմարիտ սեր, եթե խուսափում ենք զգուշացումներից: Բացառելով ցանկացած բան, որը սխալմամբ կարող է չար, մեղադրական կամ դատապարտող համարվել, մենք հաճախ հայտնվում ենք մյուս ծայրահեղության մեջ, այսինքն՝ ընդհանրապես չենք զգուշացնում մարդկանց: Այնուամենայնիվ, մենք դեռ գտնվում ենք այնպիսի վիճակում, որը նկարագրեց Պողոսը. շատերը անզոր են, հիվանդ են և ժամանակից շուտ են մահանում: Մի՞թե սա է սերը: Մի՞թե սա է ճշմարիտ հոգատարությունը:

Մենք ունենք պատասխաններ մարդկանց համար, սակայն չենք արտահայտում դրանք, քանի որ չենք ուզում սխալ հասկացված լինել: Եկեք անկեղծ լինենք: Ինչի՞ն է ուղղված մեր սերը: Արդյո՞ք մեր սերն ուղղված է եկեղեցուն: Արդյո՞ք մենք քարոզում ենք մարդկանց ճշմարտությունը, ինչպես Հիսուսը և Պողոսը, թե՞ կենտրոնացած ենք մեր անձի և համբավի վրա և վախենում ենք կորցնել մեր համակիրներին կամ սխալ հասկացված լինել:

Իմ ընթացքը

Իմ ծառայության առաջին տարիներին մշտապես խրախուսում էի բոլորին: Չափից ավելի դրական վերաբերմունք էի ցուցաբերում ինձ շրջապատող մարդկանց հանդեպ: Ես խուսափում էի առերեսումից՝ ինչպես ժանտախտից: Երբեմն, նույնիսկ ստում էի դրա համար, և փոխարենը ոգևորում էի մարդկանց: Բոլորն ասում էին Ջոն Բիվերի մասին. «Նա այնքա՜ն բարի է: Նա ամենասիրող անձնավորությունն է ամբողջ եկեղեցում»: Նրանց խոսքերը հասնում էին ինձ և սրտանց ուրախություն էին պատճառում:

Մեկ անգամ աղոթքի ժամանակ Աստված խոսեց ինձ հետ. «Մարդիկ ասում են, որ դու ամենասիրող անձնավորությունն ես եկեղեցում, ճի՞շտ է»:

«Այո՛», - պատասխանեցի ես: Ես մտածում էի, որ դա հաճելի էր Աստծուն, բայց այն, թե ինչպես Սուրբ Հոգին տվեց այդ հարցը, ցույց էր տալիս, որ Նա այլ բան էր ասելու ինձ:

Այն, ինչ ես լսեցի, հաստատեց իմ մտահոգությունը: Նա ասաց. «Որդի՛ս, դու չես սիրում այս եկեղեցու մարդկանց»:

Ես ցնցված պատասխանեցի. «Ի՞նչ: Ես սիրում եմ նրանց, և հենց նրանք են խոսում այդ մասին»:

Նա շարունակեց. «Գիտե՞ս, թե ինչու ես դու միայն դրական և ոգեշնչող խոսքեր ասում մարդկանց»:

«Ինչո՞ւ», - զգուշորեն հարցրի ես:

«Քանի որ վախենում ես, որ նրանք կմերժեն քեզ», - պատասխանեց Նա:

Ես հանկարծակիի եկա: Շփոթվեցի և խոսքեր չունեի:

«Եթե դու իրականում սիրեիր մարդկանց, - շարունակեց Նա, - կասեիր նրանց ճշմարտությունը, նույնիսկ եթե իմանայիր, որ հնարավոր է՝ նրանք մերժեն քո ասածը կամ՝ հենց քեզ»:

Ինձ համար դա շրջադարձային պահ էր: Ես անմիջապես փոխվեցի, սակայն անցա մյուս ծայրահեղությանը: Այժմ խոսում էի ճշմարտությունը, սակայն՝ առանց նրբազգացության և գթասրտության, քանի որ իմ ներսում դեռ չկար ամենակարևոր բաղադրիչը՝ *ճշմարիտ սերը:* Այդ ժամանակ ես շրջիկ քարոզիչ էի: Ծառայում էի փոքր եկեղեցիներում և, ցավոք, ծեծում էի գառներին: Ետ նայելով՝ ես ցավում եմ այն մարդկանց համար, որոնց միայն հանդիմանում էի՝ առանց որևէ կերպով խրախուսելու, և նրանց հովիվների համար, որոնք ստիպված էին շտկել իմ անկարգությունները:

2001 թվականին ես ծառայեցի մի խոշոր համաժողովում, որն անցկացվում էր Եվրոպայում գտնվող մի մեծ եկեղեցում: Մի քանի ամիս անց երեք տարբեր աշխարհամասերում գտնվող մարդկանցից իմացա, որ այդ եկեղեցու հովիվն ասել էր ազդեցիկ առաջնորդների, որ ես խիստ էի և ծեծում էի գառներին: Եվ նա ճիշտ էր:

Այդ լուրը հուսահատության հասցրեց և ծնկի բերեց ինձ: Ես աղոթում էի, ավելի շուտ՝ աղաղակում էի, ինչպես երբեք չէի աղաղակել, որ Աստված լցներ իմ սիրտն Իր սիրով և գթասրտությամբ Իր ժողովրդի հանդեպ: Եվ Նա պատասխանեց ինձ: Առաջին անգամ կյանքում ես հասկացա, թե ինչ էր նշանակում ճշմարտապես սիրել այն մարդկանց, որոնց ծառայում էի:

Ոչ թե ոմանք, այլ շատերը

Հիշե՛ք հետևյալը. Պողոսը սիրում էր Կորնթոսի եկեղեցին: Այս մասին վկայում են նրա խոսքերը. «Ինչո՞ւ... Որովհետև ձեզ չե՞մ սիրում: Աստված գիտի [որ սիրում եմ]» (Բ Կորնթացիների 11.11):

Նույն նամակի մեկ այլ հատվածում նա գրում է. «Որովհետև շատ նեղությունից, սրտիս տագնապից գրեցի ձեզ շատ արտասուքով, ոչ թե որ տրտմեք, այլ որ իմ սերը գիտենաք, որը ես առատորեն ունեմ ձեզ վրա» (Բ Կորնթացիների 2.4): Այս եկեղեցին ճիշտ չէր հասկանում նրան: Նրանց կարծիքով, նրա շտկումները և զգուշացումները սիրո բացակայության նշան էին և, անկասկած, հնարավոր է, որ թե՛ եկեղեցում, թե՛ այլ միջավայրում նման դեպքեր լինեն: Շատերն են ինձ պես՝ խիստ, կոպիտ և կտրուկ, առանց սիրո, հոգատարության և գթասրտության: Միգուցե այդպիսի մարդիկ ազդեցիկ են և համարձակ հայտարարություններ են անում, բայց դա բխում է ճիշտ լինելու ցանկությունից: Շատերն են իշխանության այդպիսի չարաշահման զոհ դարձել: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ ցանկացած շտկում և զգուշացում այսպիսին է: Պողոսի խոսքերը երբեմն ազդեցիկ, շտկող և հանդիմանական էին, սակայն դրանք բխում էին ջերմեռանդ սիրով լի սրտից:

Ավելի ուշ նույն նամակում Պողոսը գրում է. «Ես ուրախությամբ կծախսեմ ինձ և իմ ամբողջ ունեցվածքը ձեզ համար, թեև թվում է, թե որքան շատ եմ ես սիրում ձեզ, այնքան քիչ եք դուք սիրում ինձ» (Բ Կորնթացիների 12.15, NLT): Նրա հիասթափությունն ակնհայտ էր: Նրա սերը և խորը մտահոգությունը նրանց բարեկեցությամբ սխալ էր ընկալվում, և նրան սկսել էին վերաբերվել որպես խիստ

առաջնորդի, ով, այսպես ասած, ուզում էր պահել նրանց կանոնների ներքո:

Այնպես որ, խնդրո՛ւմ եմ, հասկացե՛ք, որ թեև Պողոսի խոսքերն այդ թանկ հավատացյալներից շատերի տկարության, նեղությունների, առողջական խնդիրների և նույնիսկ վաղաժամ մահերի պատճառի մասին խիստ էին, դրանք բխում էին այդ մարդկանց հանդեպ ջերմեռանդ սիրուց:

Նրա խոսքերը շատ ավելի հեշտ կլիներ ընդունել, եթե նա գրեր «ոմանք», բայց նա հատուկ շեշտեց՝ «շատերը»: Ինչպե՞ս կարող ենք անտեսել այն ճշմարտությունը, որը նա հայտնում է մեզ: Եթե դա վերաբերում էր նրանց, մի՞թե դա չի վերաբերում նաև մեզ: Մի՞թե Աստծո Հոգին կգրեր այդ մասին Սուրբ գրքում, եթե դա պարզապես առանձին իրադարձություն լիներ: Այդ խոսքերը վերաբերո՞ւմ են մեզ այսօր: Պատասխանն է՝ անկասկած, այո՛:

Եվ վերջինը՝ այս հատվածում Պողոսը պարզապես չի խոսում եկեղեցում հաղորդություն ընդունելու մասին: Այս հատվածում կա շատ ավելին, և շատերը (նաև ես՝ տարիներ շարունակ) լիովին չեն հասկացել այն: Մենք ավելի խորը կուսումնասիրենք նրա խոսքերի իմաստը հաջորդ գլխում:

գործնական քայլ

Կրկին կարդացե՛ք այս գլխի սկիզբը, որպեսզի վերհիշեք ձեր ներուժը: Հիշե՛ք այն հայտարարությունը, որն ամփոփում է ձեր կոչումը. «Ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում» (Ա Հովհաննես 4.17): Դուք կանչված եք Աստծուց, որ ապրեք Հիսուսի պես այսօր, ոչ թե հանդերձյալ կյանքում:

Ինչպե՞ս է այս իրողությունը փոխում ձեր մտածելակերպը ձեր առօրյա կյանքի մասին: Միգուցե նախկինում, երբ դեռ չէիք գիտակցում ձեր ներուժն Աստծո մեջ, դուք չէիք մտածի, որ տկար եք: Այնուամենայնիվ, հիմա, երբ հասկանում եք դա, դուք համարում եք, որ տկա՞ր եք, թե՞ զորավոր: Եթե ձեր պատասխանն է՝ «տկար», դուք իմաստուն գնահատական տվեցիք ձեզ: Որովհետև Աստված ասում է, որ Իր զորությունը գործում է մեր տկարության մեջ (տե՛ս Բ Կորնթ. 12.9):

Աստված կվերածի մեր տկարությունները զորության, միայն եթե խոնարհվենք Նրա առջև (տե՛ս Ա Պետր. 5.5): Խնդրե՛ք Աստծուն խո-

սել ձեզ հետ ձեր տկարության պատճառների մասին: Գրի՛ առեք այդ պատճառները և խնդրե՛ք Նրան ցույց տալ, թե ինչպես ազատվեք դրանցից: Ժամանակ հատկացրե՛ք և գրի՛ առեք Աստծո ցուցումները ամեն տկարությունը զորության վերածելու մասին:

3

ՄԵԿ

Կրկին կարդանք Պողոսի խոսքերը՝ ուղղված իր սիրելի եկեղեցուն.

> «Ահա թե ինչու դուք պետք է քննեք ձեզ մինչև այս հացն ուտելը և այս բաժակը խմելը: Որովհետև եթե դուք ուտում եք այս հացը և խմում եք այս բաժակը՝ *առանց պատվելու Քրիստոսի մարմինը,* դուք ուտում եք և խմում եք Աստծո դատաստանը ձեզ վրա: Ահա թե ինչու են ձեզնից շատերը տկար և հիվանդ, և ոմանք նույնիսկ մահացել են: Բայց եթե մենք քննեինք ինքներս մեզ, այս կերպով չէինք դատվի Աստծո կողմից» (Ա Կորնթացիների 11.28-32, NLT):

Այս գլխում կկենտրոնանանք Պողոսի՝ «առանց պատվելու Քրիստոսի մարմինը» խոսքերի վրա: Այս հատվածում կա անմիջական հետաքրքրություն ներկայացնող երկու հանգամանք, որոնք ուզում եմ մատնանշել: Առաջինը՝ նրա խոսքերն ուղղված չէին առանձին մարդկանց: Նա դիմում էր բոլորին այդ եկեղեցում, այսինքն՝ ուղղում էր իր խոսքը Կորնթոս քաղաքի բոլոր հավատացյալներին:

Անցած մի քանի տասնամյակների ընթացքում մենք մեծ շեշտ ենք դրել Հիսուս Քրիստոսի հետ անձնական հարաբերությունների վրա: Անկասկած, սա քրիստոնեության անչափ կարևոր և իրական կողմերից է: Այնուամենայնիվ, մենք նույն չափով չենք շեշտադրել մեկ մարմին լինելու հավաքական իրողությունը՝ այն, որ բոլորս մեկ ենք Քրիստոսում: Կարևոր է հաշվի առնել երկու ճշմարտություններն էլ՝ առանց անտեսելու մեկը կամ մյուսը:

Երկրորդը՝ Աստվածաշնչի «Նոր Քինգ Ջեյմս» թարգմանության մեջ այս խոսքը մի փոքր այլ կերպով է գրված: Շատերի տկար ու հիվանդ լինելու և վաղաժամ մահվան պատճառն այն է, որ նրանք չեն «որոշում (կամ՝ զանազանում) Տիրոջ մարմինը» (խս. 29, NKJV): Երկու թարգմանությունները միասին դիտարկելը ավելի պարզ է դարձնում Պողոսի ասելիքը:

Այս հատվածը հասկանալու համար մենք պետք է մեկ գլուխ ետ շրջենք Ա Կորնթացիների գրքում և կարդանք Պողոսի նկարագրությունը Իսրայելի՝ Եգիպտոսից ազատվելու և անապատում լինելու մասին: Իր պատմության կեսից նա գրում է, թե ինչու է հիշեցնում այս մասին կորնթացիներին. «Այդ բաները կատարվեցին նրանց հետ՝ որպես օրինակներ մեզ համար: Դրանք գրվեցին, որ *զգուշացնեն մեզ*՝ դարերի վերջում ապրողներիս» (Ա Կորնթացիների 10.11, NLT): Պողոսը պարզապես պատմության դաս չի տալիս. նա արդիական զգուշացում է անում՝ մեզ վերահաս դատաստանից պաշտպանելու համար:

Առաքյալը պատմում է անապատում Իսրայելի փորձառության մասին, նախ՝ նկարագրելով այն ամենը, ինչ Աստված անում էր նրանց համար Իր ուխտի հիման վրա: Նա պնդում է, որ *բոլորն* էին առաջնորդվում Աստծո Հոգով (ամպով), *բոլորը* փրկվեցին Եգիպտոսից (որն աշխարհի խորհրդապատկերն է), *բոլորը* մկրտվեցին (մենք մկրտվեցինք մեկ մարմնի մեջ), *բոլորը* կերան նույն հոգևոր կերակուրը, և *բոլորը* խմեցին նույն հոգևոր ջուրը (Աստծո Խոսքը). այս հատվածում ակնհայտորեն շեշտադրվում է «բոլորը» բառը: Դրանից հետո նա ամփոփում է՝ ասելով, որ այն վեմը, որը գնում էր նրանց հետ, Քրիստոսն էր: Նրա ասելիքն ակնհայտ է. նրանք մեկ մարմին էին և պատկանում էին մեկ Աստծո, Ով ուխտ էր կնքել նրանց հետ և պահում էր այդ ուխտը: Մենք տեսնում ենք ակնհայտ զուգահեռներ մեր՝ Քրիստոսի մարմնի հետ:

Այնուհետև Պողոսը տրտմությամբ գրում է. «Աստված չհավանեց նրանցից շատերին, և նրանց մարմինները ցրված ընկան անապատում» (10.5, NLT): Աստված խորապես սիրում է մեզ՝ շատ ավելի, քան հնարավոր է պատկերացնել: Ճշմարտությունն այն է, որ մենք երբեք չենք կարողանա ինչ-որ բան անել, որ ստիպենք Նրան ավելի շատ կամ ավելի քիչ սիրել մեզ: Սա իմանալով հանդերձ՝ կարևոր է նշել նաև, որ մենք պատասխանատու ենք այն բանի համար, թե որքանով է Նա հավանում մեզ, կամ որքանով ենք մենք հաճեցնում Նրան: Ահա թե ինչու է Պողոսը մեկ այլ խոսքում պնդում, որ «մեր նպատակը Նրան հաճեցնելն է» (Բ Կորնթացիների 5.9, NLT): Սա պետք է լինի ձեր, իմ և յուրաքանչյուր հավատացյալի գերագույն նպատակը:

Ինչո՞ւ այդ մարդիկ, որոնք ապրում էին Հին կտակարանի ժամանակաշրջանում, մահացան՝ չմտնելով այն խոստումների մեջ, որոնք Աստված տվել էր նրանց: Պողոսը մատնանշում է հինգ մեղք, որոնք դարձան նրանց անկման պատճառը՝ չար բաներ ցանկանալը (համառորեն կամենալ այն, ինչն Աստծուց չէ կամ չի մտնում Նրա մատակարարման մեջ), կռապաշտությունը, սեռական անբարոյությունը, Աստծուն փորձելը և տրտունջը: Մի քանի խոսք հետո Պողոսը գրում է.

> «Դուք ողջամիտ մարդիկ եք: Ինքներդ որոշեք, թե արդյո՞ք այն, ինչ ես ասում եմ, ճիշտ է: Երբ օրհնում ենք Տիրոջ սեղանի բաժակը, մի՞թե մենք չենք բաժնեկցում Քրիստոսի արյանը: Եվ երբ կոտրում ենք հացը, մի՞թե մենք չենք բաժնեկցում Քրիստոսի մարմնին: Ու *թեև մենք շատ ենք,* բոլորս ուտում ենք մեկ հացից՝ ցույց տալով, որ *մենք մեկ մարմին ենք:* Մտածե՛ք Իսրայելի ժողովրդի մասին: Չէ՞ որ նրանք *մեկ* էին, երբ ուտում էին զոհերը զոհասեղանի մոտ» (Ա Կորնթացիների 10.15-18, NLT):

Այս հատվածում Պողոսը կրկին խոսում է Տիրոջ Ընթրիքի կամ հաղորդության մասին, և ավելի ամբողջական ձևով ցույց տալիս այն խնդիրը, որի մասին խոսում է Ա Կորնթացիների 11-րդ գլխում՝ *Տիրոջ մարմինը չորոշելը:* Նա ընդունում է, որ եկեղեցին բաղկացած է բազմաթիվ անհատներից, և որ յուրաքանչյուրս ունի անձնական հարաբերություն Աստծո հետ Հիսուս Քրիստոսի միջոցով: Այնուամենայնիվ, այլ առումով, Աստծո համար մենք *մեկ* ենք: Սա Պողոսի առանցքային փաստարկն է: Մենք Քրիստոսի *մարմինն* ենք. մենք *մեկ* ենք, ինչպես Իսրայելը:

Այնպես որ, այժմ պետք է հարցնենք. «Արդյո՞ք տկար, հիվանդ և վաղաժամ մահվան դատաստանը վերագրվում էր ամեն մի հավատացյալի, ով մեղք էր գործել, թե՞ Կորնթոսում գտնվող Քրիստոսի ամբողջ մարմինն էր կրում այդ հետևանքները՝ իր անդամներից մի քանիսի արարքների պատճառով: Սխալ մի՛ հասկացեք ինձ. ես ուզում եմ հստակ շեշտել, որ գիտակցաբար գործած մեղքի համար գոյություն ունեն ծանր անձնական հետևանքներ: Այնուամենայնիվ, այժմ մենք պետք է կենտրոնանանք այն ճշմարտության վրա, որը Պողոսը հայտնում է: Նա դիմում է հավատացյալներին՝ որպես մարմնի, որպես եկեղեցու, որպես մեկ ժողովրդի:

Այս դեպքում, խոսքը Կորնթոս քաղաքում գտնվող Քրիստոսի մարմնի մասին էր:

Մեկ մարդու ագահությունից դրդված արարքը

Վերադառնանք իսրայելցիներին, որոնք օրինակ են մեզ համար: Սակայն մեկ սերունդ առաջ գնանք և խոսենք Հեսուի կողմից առաջնորդվող ժողովրդի մասին: Հավատացյալների այս մարմինը խիզախորեն անցավ Հորդանան գետը և գնաց դեպի իրենց խոստացված երկիրը: Նրանց սկզբնական առաջադրանքն էր կործանել վիթխարի Երիքով քաղաքը: Թվում էր՝ դա անհնար էր, սակայն Աստված ևս մեկ անգամ ցույց տվեց Իր մեծ զորությունը: Աստված հստակ ցուցումներ տվեց Հեսուին, որոնցից մեկը հետևյալն էր.

> «Երիքովը և ամեն ինչ դրանում պետք է ամբողջությամբ կործանվի՝ որպես զոհաբերություն Տիրոջը... Մի՛ վերցրեք որևիցե բան այն ամենից, ինչն առանձնացված է կործանման համար... Այն ամենը, ինչ պատրաստված է արծաթից, ոսկուց, պղնձից և երկաթից, պետք է սուրբ լինի Տիրոջ համար, պետք է տարվի Նրա գանձարանը» (Հեսու 6.17-19, NLT):

Երիքովի ավարն ամբողջությամբ պետք է նվիրաբերվեր Տիրոջ գանձարանին: Այն բացարձակապես պատկանում էր Նրան, և դրա ոչ մի մասը չպետք է ծառայեր ինչ-որ մեկի շահերին:

Հարձակումը սկսվեց, և իսրայելցիներն անպարտելի էին: Նրանք սրով անցկացրին ամեն ինչ այդ քաղաքում՝ տղամարդկանց և կանանց, երիտասարդներին և ծերերին, խոշոր եղջերավոր անասուններին, ոչխարներին, այծերին և ավանակներին: Ապա այրեցին ամբողջ քաղաքը և ամեն ինչ դրանում՝ բացի ոսկե, արծաթե, բրոնզե և երկաթե իրերից, որոնք պահվեցին Տիրոջ գանձարանի համար: Զարմանալի է, որ Իսրայելցիներից ոչ ոք չսպանվեց և չվիրավորվեց:

Մենք պետք է հիշենք, որ Երիքովն այն քաղաքներից էր, որը լրտեսել էր նախորդ սերունդը, և որի մասին նրանք զեկուցել էին Մովսեսին. «Այն երկրի մեջ բնակվող ժողովուրդը զորավոր է, և քաղաքները պարսպավոր և խիստ մեծ են» (Թվոց 13.29): Այդ սերնդի երեխաները, որոնք մեծացել էին, հարձակվեցին այս պարսպավոր քաղաքի վրա և լիովին կործանեցին այն, նույնիսկ մեկ մարդ Իսրայելի բանակից չսպանվեց: Իսրայելն օժտված էր գերբնական զորությամբ: Այդուհանդերձ, գրված է.

> «Բայց *Իսրայելը* խախտեց հրահանգները Տիրոջ համար առանձնացված իրերի վերաբերյալ: Աքար անունով մի

> մարդ գողացավ այդ ընծայված իրերից մի քանիսը, և Տերը շատ բարկացավ *իսրայելցիների* վրա» (Հեսու 7.1, NLT):

Ուշադրություն դարձրեք, որ գրված չէ. «Բայց *Աքար անունով մի մարդ* խախտեց հրահանգները»: Ո՛չ, այլ գրված է. *«Իսրայելը* խախտեց հրահանգները»: Եվ հետաքրքիր է, որ կրկին գրված է. «Տերը շատ բարկացավ *իսրայելցիների* վրա»: Գրված չէ. «Տերը շատ բարկացավ *Աքարի* վրա»: Իսրայելը մեկ էր, և երբ անդամներից մեկը մեղանչեց՝ ագահության պատճառով խախտելով Աստծո հրահանգները, պատասխանատվությունը դրվեց ամբողջ Իսրայելի վրա:

Այդ արարքի ողբերգական հետևանքը շուտով հստակ երևաց: Հաջորդ քաղաքը, որը պետք էր գրավել, Գային էր: Այն շատ ավելի փոքր էր, և առաջնորդներն ասացին. ««Ամբողջ ժողովուրդը վեր չգնա. միայն երկու կամ երեք հազար մարդու չափ վեր գնան և Գային կզարկեն. ամբողջ ժողովրդին մի աշխատեցրու այնտեղ տանելով, որովհետև նրանք քիչ են»: Եվ ժողովրդից երեք հազարի չափ մարդ վեր գնացին այնտեղ» (Հեսու 7.3,4):

Երիքովի պատերազմում ներգրավված էր մոտավորապես վեց հարյուր հազար զինվոր: Սա ցույց է տալիս, թե որքան աննշան էր Գայի քաղաքը Երիքովի համեմատ: Այնուամենայնիվ, գրված է.

> «Բայց Գայիի մարդկանց առջևից փախան: Եվ Գայիի մարդիկ նրանցից երեսունվեց մարդու չափ զարկեցին և նրանց հալածեցին դռան առջևից մինչև Սեբարիմ և զառիվայրի վրա նրանց զարկեցին» (Հեսու 7.4,5):

Մի՞թե սա նույն ժողովուրդը չէր, որը կարճ ժամանակ առաջ կործանեց շատ ավելի կարևոր և ազդեցիկ Երիքովը, և նույնիսկ մեկ զոհ չունեցավ: Այնուամենայնիվ, իսրայելցի զինվորները տկարացան, նահանջեցին և պարտվեցին: Նրանք ենթարկվել էին կրիպտոնաքարի ազդեցությանը:

Ցավոք, սպանվեց երեսունվեց մարդ, այնինչ Երիքովում նրանք տկար չէին. ոչ ոք չէր նահանջում, և ոչ ոք չվիրավորվեց և չսպանվեց:

Եկեք մտածենք այս մասին: Աքարը մեղանչեց, բայց նրան և նրա ընտանիքին ոչինչ չպատահեց: Սակայն Գայի քաղաքի մարտից հետո յոթանասուներկու ծնողների որդիները տուն չվերադարձան, երեսունվեց կանայք մնացին առանց ամուսինների, և բազմաթիվ երեխաներ՝ առանց հայրերի: Եվ դա տեղի չունեցավ նրանց որդիների, ամուսինների և հայրերի արարքի պատճառով. նրանք չէին մեղանչել: Դա տեղի ունեցավ

մեկ այլ ընտանիքի պատկանող տղամարդու արարքի պատճառով:

Իսրայելը վախից կաթվածահար էր եղել: Հեսուն և բոլոր առաջնորդները երեսնիվայր ընկան Աստծո առջև: Կարո՞ղ եք պատկերացնել: Նրանք շփոթված էին, տարակուսանքի մեջ էին և աղաղակում էին. «Ինչո՞ւ համար այս ժողովրդին Հորդանանի այս կողմն անցկացրիր, որ մեզ Ամորհացիների ձեռքը մատնես և մեզ կորցնե՞ս» (Հեսու 7.7):

Լսե՛ք Աստծո պատասխանը. «Վե՛ր կաց: Ինչի՞ համար այսպես երեսիդ վրա ես ընկել: Իսրայելը մեղք գործեց, և զանց արին Իմ ուխտը» (Հեսու 7.10,11):

Աստված չի ասում. «Ձեր մեջ կա մի մարդ, որը մեղանչել է»: Ո՛չ, Նա կրկին հայտարարում է. «Իսրայելը մեղք գործեց»: Ոչ ոք չգիտեր, որ մեղք էր գործել Աքարը: Ոչ ոք հանցակից չէր եղել նրա ագահությանը: Այնուամենայնիվ, ամբողջ ժողովուրդը՝ որպես մեկ մարմին, վնաս կրեց Աքարի հոգևոր կրիպտոնաքարից: Հեսուն հայտնաբերեց մեղանչողին և ընդդիմացավ նրան: Աքարը պատասխանեց.

> «Իրավ, ես Իսրայելի Տեր Աստծո դեմ մեղք գործեցի, և այսպես ու այսպես արի, այսինքն, ավարի մեջ մեկ լավ Սենաարի վերարկու և երկու հարյուր սիկղ արծաթ և հիսուն սիկղի ծանրությամբ մեկ ոսկի լեզու տեսա և նրանց ցանկանալով առա» (Հեսու 7.20,21):

Հեսուն և առաջնորդներն արագորեն պատժեցին Աքարի հանցանքը, և անմիջապես հետո գրված է. «Եվ Տերն Իր սաստիկ բարկությունից դադարեց» (Հեսու 7.26):

Մեկ օրինակ

Այս հինկտակարանյան միջադեպը նկարագրում է Պողոսի ուղերձը Կորնթոսի եկեղեցուն: Նա գրում է. «Ահա թե ինչու են ձեզնից շատերը տկար և հիվանդ, և ոմանք նույնիսկ մահացել են»: Հաջորդ գլխում մենք կտեսնենք, որ մի քանիսի կողմից գործած մեղքն ազդում էր ընդհանուր եկեղեցու վրա, ոչ միայն՝ մեղանչողների:

Երբևէ ծագե՞լ է հարց այն մասին, թե ինչու են բազմաթիվ հավատացյալներ մեր եկեղեցիներում տկար և ինչու են մշտապես տառապում հիվանդություններից ու տկարություններից: Այդ թանկ մարդիկ չեն կարողանում բժշկվել իրենց ախտերից, իսկ ոմանք նույնիսկ ժամանակից շուտ մահանում են: Ի՞նչն է պատճառը, որ մեր եկեղեցական

համայնքներում կան այդքան շատ միայնակ մայրեր, որոնք ապրում են սննդի կտրոններով և հազիվ են կարողանում հոգալ իրենց կարիքները: Ինչո՞ւ են այդքան շատ հավատացյալներ գործազուրկ, ինչո՞ւ են նրանք ապրում խիստ սակավ միջոցներով, և ինչո՞ւ են կախվածության մեջ կառավարության օժանդակությունից:

Այս նեղությունների ցուցակն անկարելի է ամբողջացնել, քանի որ դրանք գրեթե անթիվ են:

Սողոմոնի օրերում չկար նույնիսկ մեկ մարդ, ով անապահովության նպաստ էր ստանում կամ գործազուրկ էր: Գործք առաքելոց գրքում չկար ոչ մի կարիք, և մարդիկ արագորեն բժշկվում էին ախտերից, հիվանդություններից և տկարություններից: Ինչո՞ւ նույնը տեղի չի ունենում այսօր: Հնարավո՞ր է, որ մի քանիսի մեղքերն ազդում են շատերի վրա: Հնարավո՞ր է, որ տեղի է ունենում նույնը, ինչ կատարվեց Իսրայելի հետ Գայի քաղաքում:

Կրկին, կարևոր է շեշտել, որ գիտակցաբար գործած մեղքն ունի հետևանքներ: Ի վերջո, Աքարը ենթարկվեց դատաստանի, սակայն նրա մեղքի պատճառով հոգևոր կրիպտոնաքարի բախվեց ամբողջ Իսրայելը: Հուսով եմ, որ մինչ մենք շարունակում ենք բացահայտել այս իրողությունը, գիտակցումն այն մասին, որ դուք մարմնի անդամ եք, կավելանա և կդառնա նույնքան ուժգին, որքան գիտակցումն այն մասին, որ դուք ունեք անձնական հարաբերություններ Հիսուսի հետ, և կհասկանաք, որ ձեր գործողությունները՝ որպես մարմնի անդամի, կարող են բերել կա՛մ օրհնություններ, կա՛մ բացասական հետևանքներ մարմնի մյուս անդամների համար:

Մինչև ավարտելը, կրկին ուզում եմ շեշտել, որ ազատագրող ճշմարտությունները հաճախ կարող են բացասական թվալ, և մի հարց կարող է հեշտորեն սողոսկել մեր միտքը. «Արժե՞ արդյոք անդրադառնալ այս թեմային»: Սակայն, ի վերջո, երբ ճշմարտությունը հայտնվում է, այն ազատ է արձակում և ազատություն է բերում այնտեղ, որտեղ նախկինում խոչընդոտներ կային:

Ինչպես Հիսուսն ասաց. «Եվ ճշմարտությունը կճանաչեք, և ճշմարտությունը կազատի ձեզ» (Հովհաննես 8.32):

գործնական քայլ

Հավանաբար, դուք դիտել եք «Գլադիատոր» ֆիլմը և հիշում եք, թե ինչպես գեներալ Մաքսիմուսը բղավեց՝ «միասի՛ն մնացեք, մեկ մարդու պես», և տեսաք այդ ռազմավարության հաղթանակները: Գաղտնիք չէ, որ ամենաարդյունավետ զինվորական ռազմավարությունը «պառակտելը և տիրելն» է:

Հիսուսը շատ լավ գիտեր սա. Նա սովորեցնում էր, որ բաժանված տունը կանգուն չի մնա (տե՛ս Մատթ. 12.25): Երբ Քրիստոսի մարմինը պառակտված է նվիրման բացակայության պատճառով, այն տկարանում է՝ որպես մեկ ամբողջություն: Նշանակում է՝ մեծագույն բաներից մեկը, որ դուք կարող եք անել համաշխարհային մասշտաբով եկեղեցու վրա ազդելու համար, ձեր կյանքը լիովին Հիսուսի գործին նվիրելն է, ինչը նշանակում է՝ նվիրել ձեր առօրյա գործերը Աստծուն՝ որպես երկրպագություն:

Աստված ցանկանում է ձեր ամբողջ կյանքը, ոչ թե միայն ձեր կիրակի առավոտները: Եթե դուք չեք ապրում ձեր ամբողջ կյանքը (աշխատանքը, ընտանիքը, նախասիրությունները և այլն)՝ որպես երկրպագություն Աստծուն, ապաշխարե՛ք այսօր: Խնդրե՛ք Հիսուսին ցույց տալ, թե ինչպիսին կարող է լինել երկրպագուի կենսառճը ձեզ համար: Գրի՛ առեք այն, ինչ Նա ցույց է տալիս կամ ասում է ձեզ: Խնդրե՛ք Աստծո Հոգուն նորովի լցնել ձեզ և լիովին նվիրեք ձեր կյանքը Նրան:

4

ՎԱՐԱԿԻՉ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐ

«Այն, թե ինչպես է Աստված կազմել մեր մարմինները, օրինակ է, որով մենք կարող ենք հասկանալ մեր միասնական կյանքը՝ որպես եկեղեցի» (Ա Կորնթացիների 12.25, MSG):

Մտածեք ձեր մարմնի մասին. բոլոր մասերը կապակցված են իրար, նույնիսկ եթե դրանք անմիջապես իրար կողքի չեն: Ձեր ոտքի ճկույթը կապակցված է ձեր քթի հետ, ձեր լյարդը կապակցված է ձեր ողնաշարի հետ և այլն: Գոյություն չունի մարմնի այնպիսի մաս, որը կարող է գոյատևել առանց մյուսների: Այլապես դա ձեր մարմնի մասը չէր լինի:

Երբ ձեր մարմնի մասերից մեկը ցավում է, մի՞թե մյուս անդամները չեն տառապում դրա հետ: Եթե մարդը վարակվում է հարբուխով կամ ինչ-որ վիրուսով, ի վերջո հիվանդությունն ազդում է նրա ամբողջ մարմնի վրա՝ ախորժակի կորստի, ուժերի պակասի, մշուշոտ մտքի և ցավերի տեսքով: Իսկ եթե մարմնի մի մասը պատիվ է ստանում, ուրախանում են բոլոր մասերը: Մեջքի կամ գլխի մաշկի մերսման արդյունքում մարմինն ամբողջությամբ թեթևություն և հաճույք է զգում. դա դուր է գալիս ամբողջ մարմնին:

Որպես եկեղեցի՝ մենք մեկ ենք: Իսրայելը, որն օրինակ է մեզ համար, մեկ էր, և Աքարի միտումնավոր գործած մեղքն ազդեց ոչ միայն նրա վրա, այլև ամբողջ ազգի: Իսրայելի բանակն անպարտելի էր Երիքովի դեմ պատերազմելիս, սակայն ընդամենը մի քանի օր անց նույն բանակը տկարացավ, ջախջախիչ պարտություն կրեց, նահանջեց իր թշնամուց և ցավալի կորուստներ ունեցավ: Փոխաբերական

իմաստով, ազգը հայտնվեց հոգևոր կրիպտոնաքարի ազդեցության ներքո: Մի՞թե նույնը չէր կատարվում Կորնթոսի եկեղեցում: Ավելի մանրամասն ուսումնասիրությունը հայտնում է մեզ պատասխանը:

Ինչպես արդեն հպանցիկ կերպով նշեցի, առաջին եկեղեցում Տիրոջ ընթրիքը տեղի էր ունենում բոլորովին այլ կերպ, քան այսօր: Նրանց ժամանակ այն ավելի շատ նման էր ճաշկերույթի, իսկ այսօր՝ արարողության: Այնպես որ, այն վարվելակերպը, որի մասին խոսում է Պողոսը, խիստ տարբերվում էր մեր ներկա սովորույթներից: Այդուհանդերձ, կարևորը այդ վարվելակերպի արմատն էր:

Խնդիրը հետևյալն էր. որոշ մարդիկ Կորնթոսի եկեղեցում չէին սպասում բոլոր անդամների գալուն: Ավելի շուտ եկածները կերուխում էին անում և հարբում էին՝ հավանաբար, օգտվելով լավագույն սննդից և գինուց, իսկ ուշ եկածներին հասնում էին մնացորդները: Աստվածաշնչի ուսուցիչներից և աստվածաբաններից շատերը համոզված են, որ անտեսվում էին ավելի աղքատ և ցածր խավի մարդիկ: Իսկ հիմա, կարդացե՛ք Պողոսի խոսքերը.

> «Որովհետև ձեզնից *ոմանք* շտապում են ուտել իրենց կերակուրը՝ առանց կիսվելու մյուսների հետ: Արդյունքում, ոմանք քաղցած են մնում, մինչդեռ մյուսները հարբում են... Որովհետև եթե դուք ուտում եք այս հացը և խմում եք այս բաժակը՝ առանց պատվելու Քրիստոսի մարմինը, դուք ուտում եք և խմում եք Աստծո դատաստանը ձեզ վրա: Ահա թե ինչու են ձեզնից *շատերը* տկար և հիվանդ, և ոմանք նույնիսկ մահացել են» (Ա Կորնթացիների 11.21,29,30, NLT):

Վերևում բերված խոսքում ընդգծել եմ երկու բառ՝ *ոմանք և շատերը:* Ակնհայտ է, որ Պողոսը խոսում է *ոմանց* մեղքի մասին (խոսք 21), որի հետևանքը, սակայն, այն էր, որ *շատերը* տկար էին, հիվանդ էին և վաղաժամ մահանում էին (խոսք 30): Այս իրավիճակը նույնն էր, ինչ Աքարի դեպքում. մարդիկ, ովքեր միտումնավոր անհնազանդ չէին աստվածային հրահանգներին, կրեցին այն դատաստանը, որը եկավ մեկ մարդու գիտակցված անհնազանդության պատճառով:

«Այուն» Նոր կտակարանի մեկնությունը նշում է.

> «Պետք չէ ենթադրել, որ հիվանդները և մահացողներն անձամբ ինչ-որ մեղք էին գործել, այլ հնարավոր է, որ, հինկտակարանյան շատ պատուհասների պես, որոնք

գալիս էին աստվածային դատաստանի արդյունքում, այս պատուհասը նույնպես եկել էր ամբողջ համայնքի վրա՝ առանց խտրության»:

Նմանատիպ իրադարձություն

Ավելի վաղ կորնթացիներին ուղղված նամակում Պողոսը խոսում է մեկ այլ մեղքի մասին, որը նույնպես ազդում էր ամբողջ եկեղեցական համայնքի վրա: Նա սկսում է՝ ասելով. «Հավատս չի գալիս այն լուրին, որ ձեր միջև սեռական անբարոյություն կա» (Ա Կորնթացիների 5.1, NLT): Իրավիճակը հետևյալն էր. մի մարդ, ով դավանում էր, որ Հիսուս Քրիստոսի հետևորդ էր, այսինքն՝ Աստծո զավակ, եղբայր Քրիստոսում և Քրիստոսի մարմնի անդամ, ապրում էր սեռական մեղքի մեջ:

Պողոսի հանդիմանությունն ուղղված չէր միայն այդ մեղքը գործող մարդուն: Ամբողջ եկեղեցական համայնքը եղբայր և եկեղեցու անդամ էր համարում նրան, սակայն առաջնորդները չէին հանդիմանում նրան մեղքի մեջ, այլ անտեսում էին դա:

Ինչո՞ւ էին նրանք անտեսում այդ մարդու վարքը: Ամենայն հավանականությամբ, չէին ուզում վիրավորել նրան՝ հանդիմանելով նրա մեղքը: Միգուցե այդ մարդն ազդեցիկ անձնավորություն էր, պետական պաշտոնյա, հանրահայտ մարզիկ կամ խոշոր ֆինանսական նվիրատվություններ էր անում: Կորնթոսը մեծ և ազդեցիկ քաղաք էր և արվեստի խոշոր կենտրոն: Հնարավոր է, որ նա սիրված դերասան էր իրենց «Հոլիվուդում», հանրահայտ երգիչ էր, որի երգերը զբաղեցնում էին առաջին հորիզոնականները, կամ մեներգիչ էր՝ եկեղեցու փառաբանության խմբի գլխավոր անդամներից մեկը: Այս խոսքում նման բան գրված չէ, բայց կարող ենք ենթադրել, որ նրա հեռանալը բացասաբար կազդեր եկեղեցու վրա:

Միգուցե կային այլ պատճառներ: Հնարավոր է՝ նրանք մտածում էին, որ եթե նա հեռանար, այլևս չէր լսի Աստծո Խոսքը: Նրանց փաստարկը կարող էր լինել հետևյալը. «Ավելի լավ է՝ նա մնա մեզ հետ և լսի Ավետարանը, քան աշխարհ գնա և ընդհանրապես ոչինչ չլսի»: Միգուցե նրանց գլխավոր նպատակը եկեղեցի հաճախողների թիվը չպակասեցնելն էր, և այդ մարդուն հանդիմանելը կխանգարեր այդ նպատակին: Նրանք կարող էին ունենալ ևս մեկ փաստարկ. «Նա մանուկ քրիստոնյա է: Եկեք ժամանակ տանք նրան»: Համոզված եմ՝ նրանք հույս ունեին, որ ի վերջո նա «կհասկանար» ամեն ինչ և կթողներ մեղքը:

Պողոսն անտարակույս պատվիրում է Կորնթոսի եկեղեցու առաջնորդներին՝ հեռացնել այդ մարդուն: Թույլ տվեք թվարկել նրա պնդումները.

- Դուք պետք է հեռացնեք նրան ձեր միջից (Ա Կորնթացիների 5.2, NLT):
- Դուք պետք է վտարեք նրան (Ա Կորնթացիների 5.5, NLT):
- Դե՛ն գցեք հին խմորը՝ հեռացնելով այդ չար մարդուն ձեր միջից (Ա Կորնթացիների 5.7, NLT):
- Դուք պետք է հեռացնեք այդ չար մարդուն ձեր միջից (Ա Կորնթացիների 5.13, NLT):

Պողոսը չորս անգամ խիստ արգելք է դնում այս հարցի վերաբերյալ մեկ փոքրիկ գլխում: Մտածե՛ք այս մասին. Ա Կորնթացիների 5-րդ գլխում միայն չորս անգամ առաքյալը պատվիրում է այս հավատացյալներին՝ հեռացնել եկեղեցուց այդ մարդուն, և մեկ անգամ նա խստորեն ասում է. «Վտարե՛ք նրան»: Ինչպիսի՜ խիստ խոսք: Հիշեք, որ Պողոսը սիրում էր այդ եկեղեցին, և նույնպես՝ այդ մարդուն:

Միգուցե վիճարկեք. «Մի՞թե նա սիրում էր այդ մարդուն: Չեմ կարծում»: Բայց մենք գիտենք, որ նա սիրում էր այդ մարդուն, քանի որ Աստվածաշնչում ոչինչ չի կարող գրվել՝ առանց սիրո դրդապատճառի: Աստված է ոգեշնչել ամբողջ Սուրբ գիրքը, և Աստված սեր է (տե՛ս Բ Տիմոթ. 3.16 և Ա Հովհ. 4.8):

Խնդրում եմ հիշել, որ այս պատվերն ուղղված չէր միայն Կորնթոսի եկեղեցու առաջնորդներին, այլ՝ ամբողջ եկեղեցուն: Պողոսը հետևողականորեն պատվիրում էր, որ իր նամակներն ընթերցվեին ամբողջ եկեղեցու համար: Ինչո՞ւ էր նա այդքան անդրդվելի և խիստ այս հարցում: Պատասխանը հետևյալ պնդման մեջ է. «Չե՞ք հասկանում, որ այս մեղքը նման է փոքրիկ թթխմորի, որը տարածվում է ամբողջ խմորի մեջ» (Ա Կորնթացիների 5.6, NLT): Եվս մեկ անգամ տեսնում ենք, որ այդ մեղքի հետևանքը կրելու էր ամբողջ համայնքը, ոչ թե միայն այդ մարդը: Կարդացե՛ք դրան հաջորդող խոսքերը.

> «Ազատվե՛ք հին «թթխմորից»՝ հեռացնելով այս չար մարդուն ձեր միջից: Այդ դեպքում դուք կլինեք թարմ խմորի պես՝ պատրաստված առանց թթխմորի, ինչպիսին որ իրականում եք: Քրիստոսը՝ մեր *Զատկի Գառը*, զոհաբերվել է մեզ համար: Այնպես որ, եկեք նշենք այս տոնը ոչ թե անօրինության և չարի հին հացով, այլ՝ անկեղծության և ճշմարտության նոր հացով» (Ա Կորնթացիների 5.7,8, NLT):

Պողոսը կրկին խոսում է հաղորդության մասին, որը նրա գլխավոր

թեման էր: Իսրայելի Զատկի տոնը կառուցվում էր զոհաբերվող գառան շուրջ, իսկ մեր անբիծ զոհաբերվող Գառը Հիսուսն է: Ինչպես որ առաջին Զատիկը մատնանշում էր Իսրայելի ազատությունը Եգիպտոսի ստրկությունից, այնպես էլ Քրիստոսի անձնազոհ մահը, որը Տիրոջ Ընթրիքի իմաստն է, մատնանշում է մեր ազատությունը մեղքի ստրկությունից:

Կային նաև այլ տոներ՝ Երախայրիների տոնը, Պենտեկոստեն, Փողերի տոնը, Քավության օրը և Տաղավարների տոնը: Այնուամենայնիվ, այս տոները քրիստոնեական կյանքի ավելի հասուն ոլորտների խորհրդապատկերներ են: Պարզ ասած՝ Զատիկը փրկության տոնն է: Այնպես որ, գրելով այդ մասին՝ Պողոսը նկատի ունի Աստծո թագավորության մեջ մուտք գործելը: Նա նշում է, որ Զատիկը չէր կարելի տոնել «անօրինության և չարի հին հացով»: Նշանակում է՝ «մանուկ քրիստոնյա» լինելը սխալ փաստարկ էր թե՛ նրա, թե՛ մեզ համար: Հաճախ այս տրամաբանությամբ է, որ մենք անտեսում ենք «մեղքին տրված» մարդուն: Այս պատճառաբանությունը խաբուսիկ և մոլորեցնող է, քանի որ եկեղեցում տեղ չկա գիտակցաբար գործվող մեղքի համար (հաջորդ գլուխներից մեկում ես կբացատրեմ «գիտակցաբար գործվող մեղքի» և «մեղքի մեջ ընկնելու» տարբերությունը):

Երկրորդը՝ ուշադրություն դարձրեք հետևյալի վրա. Պողոսն ասում է, որ այդ մարդու մեղքը նման է թթխմորի (կամ խմորիչի): Թթխմորը մի զանգված է, որը տարածվում է ամբողջ խմորով, և այն բարձրանում և ուռչում է: Զատկի տոնի վերաբերյալ Իսրայելին խիստ զգուշացում էր տրված. «Տոնի առաջին օրը հեռացրե՛ք թթխմորի ամեն մի հետք ձեր տներից: Ցանկացած մարդ, ով թթխմորով պատրաստած հաց է ուտում այս տոնի յոթ օրերի ընթացքում, *կկտրվի* Իսրայելի հասարակությունից» (Ելից 12.15, NLT): «Կտրվել» բառը հստակ է, ինչպես և Պողոսի հրահանգը: Աստված արեց սա՝ ցույց տալու համար թե՛ Իսրայելին, թե՛ մեզ, որ երբ մենք ուխտի մեջ ենք մտնում Նրա հետ, ոչ ոք մեր համայնքում չի կարող լինել «մեղքին տրված»: Այն մարդիկ, ում կյանքում կա գիտակցված և շարունակական անհնազանդություն Աստծո Խոսքին, պետք է ապաշխարեն: Հակառակ դեպքում, նրանք կբերեն մեղքի թթխմորը և դրա հետևանքներն իրենց եկեղեցական համայնքներ:

«Սյուն» Նոր կտակարանի մեկնությունը նշում է.

> «Պողոսը շեշտում է (հունարեն բառերի իմաստային հաջորդականության միջոցով), որ եթե չարը չկանգնեցվի, այն անխուսափելիորեն՝ դանդաղ, բայց հաստատուն կերպով, եկե-

> ղեցու միայն մի «փոքր» մասի, և նույնիսկ մեկ մարդու միջոցով կտարածվի ամբողջ եկեղեցական համայնքում: Եկեղեցում գիտակցաբար գործվող մեղքի օրինակը կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Հացի մեջ գտնվող թթխմորի պես՝ մեղքը, որը չի կանգնեցվել, տարածվում է ամբողջ եկեղեցում և անդառնալիորեն փոխում է այն»:

Այս մեկնության մեջ ես չէի համաձայնի միայն մեկ բանի հետ: Ուսումնասիրելով թթխմորը՝ հայտնաբերեցի, որ այն *դանդաղ* չի տարածվում. այն տարածվում է *արագ:* Սակայն, անկասկած, այս մեկնությունը ճշտորեն նշում է, որ այն *հաստատուն կերպով* տարածվում է ամբողջ եկեղեցական համայնքում:

Մի՞թե սա նշանակում է, որ ցանկացած մարդու, ով գիտակցաբար մեղք է գործում, մենք պետք է արգելենք մասնակցել մեր հավաքույթներին: Իհարկե՝ ո՛չ: Մեր հավաքույթներին պետք է ներկա լինեն բազմաթիվ անհավատ մարդիկ, սակայն նրանք չպետք է եկեղեցու *անդամներ* լինեն, և ո՛չ էլ պետք է *մտածեն, որ իրենք անդամներ են,* քանի դեռ չեն ապաշխարել իրենց գիտակցաբար գործած մեղքերից և լիովին չեն հանձնել իրենց կյանքը Հիսուս Քրիստոսին: Պողոսը հստակ գրում է այս մասին.

> «Երբ նախկինում գրեցի ձեզ, ես պատվիրեցի չհաղորդակցվել այն մարդկանց հետ, ովքեր տրվում են սեռական մեղքին: Բայց ես չէի խոսում *անհավատների* մասին, որոնք տրվում են սեռական մեղքին, կամ ագահ են, կամ խաբում են մարդկանց, կամ երկրպագում են կուռքերին: Դուք ստիպված կլինեիք հեռանալ այս աշխարհից՝ այդպիսի մարդկանցից խուսափելու համար» (Ա Կորնթացիների 5.9,10, NLT):

Մեզ՝ Քրիստոսի հետևորդներիս, պատվիրված է գնալ աշխարհով մեկ, հասնել այս աշխարհի մարդկանց և հրավիրել նրանց մեր հավաքույթներին, որպեսզի լսեն Աստծո Խոսքը, ոչ թե փոխզիջման ենթարկված կամ ոչ լիարժեք ճշմարտությունը իրենց հոգևոր վիճակի մասին: Մենք պետք է շարունակ հասնենք անհավատներին, ընկերանանք և հաց կիսենք նրանց հետ, սիրենք և ծառայենք նրանց, ինչպես Հիսուսը:

Այնուամենայնիվ, Պողոսը լիովին այլ պատվեր է տալիս այն մարդու վերաբերյալ, ով դավանում է, որ հավատացյալ է.

> «Ես նկատի ունեի, որ դուք չպետք է հաղորդակցվեք այն

> մարդու հետ, *ով պնդում է, թե հավատացյալ է,* սակայն տրվում է սեռական մեղքին, կամ ագահ է, կամ երկրպագում է կուռքերին, կամ կռվարար է, կամ հարբեցող, կամ խաբում է մարդկանց: Նույնիսկ հա՛ց մի կիսեք նման մարդկանց հետ» (Ա Կորնթացիների 5.11, NLT):

Ակնհայտ է, որ Պողոսը չի խոսում այն հավատացյալի մասին, ով «ընկել է մեղքի մեջ», այլ՝ ով հավատացյալ է համարում իրեն, բայց «տրված է մեղքին»: Ինչո՞ւ է այս եկեղեցու հայրն այսքան խստորեն շեշտում սա: Պատճառն այն է, որ նա ճշմարտապես սիրում է եկեղեցին: Նա չի ուզում, որ ամբողջ եկեղեցին վնաս կրի՝ *համարելով, որ պաշտպանում է* այն «հավատացյալին», ով շարունակում է մնալ մեղքի մեջ:

Մտածե՛ք այս կերպով. եթե ինչ-որ մեկը տառապում է վարակիչ հիվանդությամբ՝ այնպիսին, որը կարող է փոխանցվել օդի միջոցով, ինչպե՞ս են վարվում այդ բնակավայրում ապրող մարդիկ: Նրանք մեկուսացնում են այդ հիվանդին՝ այդկերպ պաշտպանելով ամբողջ բնակչությանը համաճարակից: Հակառակ դեպքում, վարակը կտարածվի անտառային հրդեհի պես. ամբողջ բնակչությունը կտառապի այդ հիվանդությունից և կկրի դրա հետևանքները: Իսկ ինչպիսի՞ն կլինեն համաճարակի լայն հետևանքները. թափուր աշխատատեղեր, արդյունավետության կորուստ, համայնքին մատուցվող ծառայությունների ընդհատում և տնտեսական խնդիրներ՝ ահա այդ հետևանքներից ընդամենը մի քանիսը:

Պողոսը շարունակում է խոսել մեղքին տրված մարդու մասին.

> «Եվ դուք պետք է վտարեք այս մարդուն և հանձնեք սատանային, որպեսզի նրա մեղավոր բնությունը կործանվի, իսկ նա փրկվի այն օրը, երբ Տերը վերադառնա» (Ա Կորնթացիների 5.5, NLT):

Այդ եղբորը սպառնում էր հավիտյան կորչելու զարհուրելի վտանգ, եթե չփոխվեր: Սա է պատճառը, որ քիչ առաջ ես օգտագործեցի «համարելով, որ պաշտպանում է» արտահայտությունը: Ճշմարտությունն այն է, որ ինքնակամ մեղանչող մարդն ավելի մեծ վտանգի մեջ է, եթե նրան թույլ տրվի մնալ եկեղեցական համայնքում, քանի որ նա կենթադրի, որ ճիշտ դիրք ունի Աստծո առջև, և կբացահայտի իր կորսված վիճակը միայն դատաստանի օրը, բայց արդեն ուշ կլինի:

Այն նեղությունները, որոնք նա կկրի, երբ զրկվի Աստծո պաշտպա-

նությունից, հավանաբար կդրդեն նրան ուշքի գալ և վերադառնալ Հիսուսին ամբողջ սրտով և անձով, ինչը և կատարվեց այդ մարդու հետ (այդ մասին գրված է կորնթացիներին ուղղված երկրորդ նամակում): Նեղություններն ասես արթնացնում են մեզ: Մենք տեսնում ենք սա անառակ որդու պատմության մեջ: Նա տուն վերադարձավ, երբ տեսավ իր մեղսալի ճանապարհի արդյունքը: Եթե հայրը հավանություն տար նրան և շարունակեր միջոցներ ուղարկել, որդին երբեք չէր գիտակցի իր ապստամբությունը:

Ինչպես որ Երկնքում...

Վերադառնանք մեր հիմնական թեմային: Վերջին երկու գլուխներում հստակ տեսանք, որ մենք միասնաբար Քրիստոսի մարմինն ենք, և որպես մարմին՝ բոլորս էլ օգուտ ենք ստանում ամեն մի անդամի ներդրումից և վնաս ենք կրում ամեն մի անդամի գիտակցաբար գործած մեղքից:

Մենք չենք կարող անտեսել այս ճշմարտությունը: Ցավոք, այն անտեսելու հետևանքներն արդեն չափազանց երկար ժամանակ է՝ դրսևորվում են Քրիստոսի մարմնում: Եվ այդ հետևանքները չեն հեռանա, եթե ոչինչ չձեռնարկենք:

Եկեք խիզախ լինենք և երես առ երես հակառակվենք դրանց: Ամբողջ Երկինքը խրախուսում է մեզ, որ քայլ անենք: Մենք կանչված ենք որպես հաղթական եկեղեցի՝ Քրիստոսի մարմինը, որին, ինչպես և Հիսուսին, անկարելի է կանգնեցնել: Հիվանդությունը, տկարությունը, աղքատությունը, նյութական միջոցների պակասը և թշնամու մնացած բոլոր գործերը պետք է խոնարհվեն Տիրոջ եկեղեցու առջև:

Մեր կոչումն է՝ թագավորել և լցված լինել գերբնական զորությամբ, որպեսզի երկնային թշնամիներին դնենք մեր ոտքերի տակ: Եվ սա հնարավոր կդառնա միայն, եթե չվախենանք հակառակվել այն բարդ խնդիրներին, որոնք արդեն իսկ մեծ վնաս են հասցրել մեզ:

Մենք պետք է համարձակվենք հավատալ, որ կարող ենք անել դա երկրի վրա՝ ինչպես Երկնքում:

գործնական քայլ

Այս խնդիրը խիստ կարևոր է, սակայն, դժբախտաբար, հազվադեպ կարելի է գտնել այնպիսի ժամանակակից եկեղեցի, որը շեշտադրում է այս ճշմարտությունները: Մտածե՛ք հետևյալի մասին. առաջին հերթին Աստված կանչում է ձեզ, որ ապրեք առանց մեղքի և լիովին նվիրվեք Իրեն: Երկրորդը՝ երբ հավատացյալներն այդպես չեն վարվում, վնաս են հասցնում ոչ միայն իրենց, այլև Քրիստոսի ամբողջ մարմնին:

Ժամանակ տրամադրեք, որ մտորեք այս ամենի շուրջ: Թույլ մի՛ տվեք, որ այս ճշմարտությունները պարզապես մնան որպես լավ գաղափարներ, իսկ դուք շարունակեք ձեր սովորական կյանքը: Խորհրդածե՛ք այս ճշմարտությունների շուրջ: Աղոթե՛ք այս ճշմարտությունների հիման վրա և ինքներդ հարցրեք Աստծուն այս մասին: Թույլ տվեք, որ այս ճշմարտություններն իսկապես թափանցեն ձեր սրտի մեջ և կարևոր դառնան ձեզ համար, ինչպես որ Պողոսի համար էին կարևոր:

5

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԵՔ

Ես մի սերնդի ներկայացուցիչ եմ, որին ավելի շատ սովորեցրել են Հիսուսի հետ մեր անձնական ընթացքի մասին, քան, որ մենք՝ հավատացյալներս, մեկ մարմին ենք: Միայն վերջերս այս իրողությունն ավելի պարզ դարձավ ինձ համար: Ես չեմ ուզում, որ սխալ պատկերացում կազմեք այս մասին: Անկասկած, անցյալում ինչ-որ չափով հասկանում էի այս ճշմարտությունը, բայց ոչ այն չափով, որով հասկանում եմ հիմա:

Այն ընթացքում, երբ Սուրբ Հոգին բացահայտում էր այս իրողությունն ինձ համար, ես հաճախ էի մտածում ռազմածովային նավատորմի այն ջոկատների մասին, որոնք սովորաբար հայտնի են «ծովային փոկեր»* անվանումով:

Ես մի ընկեր ունեմ, ով արդեն տասնհինգ տարի է՝ ծառայում է այդ հատուկ զորքերում, և ներկայումս աշխատում է որպես հրահանգիչ: Որոշ ժամանակ մտածելով այս ճշմարտությունների և Քրիստոսի մարմնի մասին՝ որոշեցի զրուցել նրա հետ: Ես գիտեի, որ ծովային փոկերը սերտ եղբայրական հարաբերություններ ունեն և որոշեցի ավելին իմանալ այդ մասին: Զանգահարեցի նրան և սկսեցի հարցեր տալ. «Ինչպե՞ս են ծովային փոկերը հաղորդակցվում միմյանց հետ: Ինչպե՞ս են նրանք այդպիսի սերտ և միաբան թիմեր ձևավորում: Եվ ի՞նչ է ընդգրկում նրանց ուսուցումը»:

Առաջին հերթին նա ասաց.

---

* *հատուկ նշանակության զորքեր ամերիկյան ռազմածովային նավատորմում, որոնց անվան հապավումը (SEAL) նման է անգլերեն «փոկ» բառին:*

Վերջին մարդը, որի մասին ծովային փոկը մտածում է, ինքն է:

Ինձ դուր եկավ նրա պարզ և սեղմ ձևակերպումը: Ես գիտեի, որ շատ բաներ էի հասկանալու այդ հեռախոսազանգի արդյունքում. այնպես որ, լուռ մնացի և թույլ տվեցի նրան շարունակել:

Մենք գնահատում ենք մեր կողքին գտնվող եղբորը ավելի, քան ինքներս մեզ: Մենք կարիք չունենք մտածելու՝ արդյո՞ք մեր թիկունքը պաշտպանված է, քանի որ մեր եղբայրները պաշտպանում են մեզ:

Այդ պահին նա սկսեց «քարոզել» ինձ.

Եթե կարդաս Եփեսացիների վեցերորդ գլուխը, կտեսնես, որ Աստծո սպառազինությունն ամբողջությամբ մարմնի առջևի մասի համար է, և ոչինչ չի ծածկում մեր թիկունքը: Պատճառն այն է, որ Աստված ամեն մեկիս համար նախատեսել է այն, ինչ անում են ծովային փոկերը, որ մենք ծածկենք մեկս մյուսի թիկունքը և մտածենք որպես մեկ միավոր, մեկ մարմին: Եթե այդպիսին չլինենք, իմ թիկունքը պաշտպանելու է միայն մեկ մարդ՝ ես: Իսկ եթե բոլորս գործենք մեկ թիմի պես, իմ թիկունքը պաշտպանելու է ամբողջ դասակը:

Նա շարունակեց.

Որպես ծովային փոկ՝ ես անում եմ ամեն ինչ իմ կողքին գտնվող եղբոր համար: Մենք հավատում ենք սրան մեր էության խորքից: Մեզ սովորեցրել են չմտածել մեկս մյուսի մասին՝ որպես անհատների, այլ՝ որպես մեկ միավորի: Թեև մենք մասնագիտացված ենք տարբեր բնագավառներում՝ սակրավորներ, կապավորներ, դիպուկահարներ, բժիշկներ, օդաչուներ, կոտրանք կատարողներ, տարբեր զինատեսակների մասնագետներ, սակայն գործում ենք որպես մեկ միավոր: Մենք երբեք չենք գնում որևէ առաքելության այսպիսի մտածելակերպով. *«Գուցե մեզնից ոմանք չվերադառնան»,* կամ *«Միայն քառասուն տոկոսը կվերադառնա»:* Ո՛չ, մենք մտածում ենք. *«Մենք գնում ենք հարյուր տոկոսով և վերադառնալու ենք հարյուր տոկոսով»:*

Ես կլանված լսում էի նրան: Ի վերջո, հարցրի.

Ինչպե՞ս եք ձևավորում այս վերաբերմունքը նորակոչիկների մեջ:

Այն անհնար է ձևավորել, - պատասխանեց նա: - Ծովային փոկերի մարզումն ամենածանր և ամենադժվար զինվորական մարզումն է համարվում: Ծովային փոկերին հավաքագրվողների մոտավորապես իննսուն տոկոսը կա՛մ թողնում է մարզումը, կա՛մ նրանց հեռացնում են: Մնում է միայն ուժեղ և բարձր պատրաստվածություն ունեցող մարդկանցից բաղկացած մի խումբ: Նրանցից ամեն մեկն արժևորում է իր կողքինին իրենից ավելի և պատրաստ է մահանալ մի գործի համար, որն ավելին է, քան ինքը:

Այնուհետև նա ասաց.

Ձո՛ն, երանի՜ եկեղեցին այսպիսին լիներ: Ի՞նչ կկատարվեր այդ դեպքում:

Ցավոք, ես միայն կարող էի համաձայնել: Սակայն, իրականում, մենք ունենք ներուժ՝ այսպիսին լինելու համար: Այս դիրքորոշումն այն *աստվածային բնության* մասն է, որը տրվեց մեզ, երբ վերստին ծնվեցինք: Այն քարոզները և ուսուցումները, որոնք ստանում ենք, այսինքն՝ *մեր* մարզումը, պետք է բացահայտեն այս դիրքորոշումը և ընդլայնեն: Սակայն եթե մենք լսենք միայն Ավետարանի սպառողական տարբերակը, մեր մեջ կզարգանա այն, ինչը չպետք է զարգանա՝ մեր չփրկագնված մարմնական բնությունը: Ահա թե ինչու է ժամանակակից եկեղեցին նման վիճակում: Մեզնից շատերը միայն ցանկանում են խրախուսվել, ոչ թե մարտահրավերներ ընդունել: Մենք այնքա՜ն շատ բան ենք բաց թողնում:

Իմ ընկերը զինվոր է, սակայն նա նույնպես գիտակցում է ժամանակակից եկեղեցու տկարությունը: Նա գիտի, որ եթե ծովային փոկերի դասակի զինվորներից մեկը թուլանա, փոխզիջման գնա կամ թողնի իր դիրքը, թիմի բոլոր անդամները վնաս կկրեն կամ կմահանան՝ մեկ մարդու ծուլության կամ անձեռնահասության պատճառով: Որպես Քրիստոսի մարմնի անդամներ՝ մեր գիտակցության մեջ պետք է ավելացնենք այս իրողությունը, որն արմատացած է նրա ներսում:

Փոփոխություն բերեք

Արդյո՞ք այս ամենում դրական կողմ կա: Իհա՛րկե. Աստծո հետ միշտ դրական կողմ կա:

Ես հասկանում եմ, որ դուք կարող եք բացասաբար դիտարկել նախորդ գլխում ներկայացված ճշմարտությունները և հուսահատվել: Միտքն այն մասին, որ այլ մարդկանց արարքները կարող են անբարենպաստ ազդեցություն թողնել ձեր կյանքի վրա, կարող է վհատեցնող լինել: Այնուամենայնիվ, ես խոսում եմ այս ճշմարտության մասին, որպեսզի մենք միասնաբար առաջ շարժվենք և տեսնենք Նրա մեծությունն ու զորությունն այն չափով, որով դրանք երբեք չեն հայտնվել մեր սերնդի մեջ: Ոչ մի փոփոխություն տեղի չի ունենա, քանի դեռ մենք այլ կերպ չենք հավատում և այլ կերպ չենք վարվում: Իմաստը հետևյալն է. *այդ փոփոխությունը կարող եք բերել դո՛ւք:* Եթե այն չսկսվի ձեզնից և ինձնից, ապա ինչպե՞ս այն կսկսվի: Աստված կանչել է մեզ փոփոխություն բերելու համար:

Դուք երբևէ տեսե՞լ եք, թե ինչ է տեղի ունենում, երբ զգայուն խիղճ ունեցող անձնավորությունը, որի վարքն արտաքուստ մի փոքր անվերահսկելի է, հանկարծ պատասխանատվություն է ստանձնում այլ մարդկանց համար: Հաճախ ի հայտ են գալիս նրա լավագույն հատկանիշները: Օրինակ, պատկերացրեք մի երիտասարդ աղջկա, որը մայր է դարձել: Նա մի փոքր անզուսպ էր, թեթևամիտ, նույնիսկ մի փոքր անմիտ էր, երբ դեռ ամուսնացած չէր: Նրա արարքներն ազդում էին միայն նրա կյանքի վրա, և ուրիշ ոչ ոքի: Սակայն նա սիրահարվում է, ամուսնանում է և երեխա է ունենում: Եվ այս աղջիկը, որը մի ժամանակ անվերահսկելի էր, կարգավորում է կյանքը: Նա գիտի, որ եթե ինքը շարունակի վարվել անմիտ, անվերահսկելի և վտանգավոր կերպով, դա կազդի ոչ միայն իր կյանքի վրա, այլև իր սիրելի ամուսնու և երեխայի:

Ահա թե ինչպես պետք է յուրաքանչյուրս վերաբերվի եկեղեցուն: Մենք պետք է խորապես սիրենք մեկս մյուսին: Պետք է գիտակցենք, որ, ամենայն հավանականությամբ, միայն մենք չէ, որ վնաս կկրենք, եթե անհնազանդ լինենք Աստծո Խոսքին: Մենք մեկ մարմնի մաս ենք: Միգուցե սա է պատճառը, որ Պողոսը, քննարկելով Տիրոջ ընթրիքը Կորնթոսի եկեղեցու հետ, գրում է հետևյալ պատվերը.

> «Դուք կասեք. «Ամեն ինչ կարելի է ինձ», բայց ամեն ինչ չէ, որ օգտակար է ինձ: Մի՛ մտածեք ձեր շահի մասին, այլ՝ մյուսների շահի» (Ա Կորնթացիների 10.23,24, NLT):

Կրկին, Պողոսը գրում է Փիլիպեի եկեղեցուն.

> «Թող ամեն մեկը համարի մյուսներին իրենից ավելի լավը և ավելի գերազանց [մտածե՛ք ավելի բարձր մեկդ մյուսի մասին, քան՝ ձեր մասին]... Թող նույն վերաբերմունքը և մտադրությունը և [խոնարհ] միտքը լինի ձեզանում, որը Քրիստոս Հիսուսում էր» (Փիլիպեցիների 2.3,5, AMPC):

Սա այն մտածելակերպն էր, որն ուներ Հիսուսը, այն սրտի վերաբերմունքը, որը դրդեց Նրան գալ այս աշխարհ և զոհաբերել կյանքը մեզ համար: Նա կարող էր փրկել Իր անձը: Նա կարող էր հրեշտակների լեգեոն կանչել, որոնք կփրկեին Իրեն Իր դահիճներից, սակայն Նա մտածում էր մեր մասին: Նա ավելի շատ հոգ էր տանում մեր, քան Իր բարեկեցության մասին:

Ահա բարի լուրը: Եթե մենք հնազանդ ենք Աստծո Խոսքին, ի վերջո օրհնված կլինենք: Միգուցե մեր կյանքում լինեն անհարմարավետ

և նույնիսկ դժվարին ժամանակահատվածներ՝ մարմնում գտնվող այլ հավատացյալների անհնազանդության պատճառով, սակայն, ի վերջո, մենք կբարգավաճենք:

Եղիան այլ մարդկանց արարքների պատճառով նեղություններ կրող մարդու օրինակ է: Աքաբի և Հեզաբելի շարունակական մեղքի, ինչպես նաև Իսրայելի անտարբերության պատճառով երեք տարի երկրի վրա անձրև չէր տեղում: Եղիան առատորեն չէր սնվում, ինչպես Դավիթ և Սողոմոն թագավորների օրերում ապրող մարդիկ: Մի քանի տարի շարունակ նա ագռավների կողմից բերվող հաց և միս էր ուտում, ինչն այնքան էլ հաճելի չէր: Դա միապաղաղ սննդակարգ էր՝ առանց բանջարեղենի, մեղրի, հյութերի և շատ այլ համեղ կերակուրների, որոնք հասանելի են առատության ժամանակ: Նա նեղություն էր կրում այլ մարդկանց արարքների պատճառով: Բայց Եղիան մեկ ազգի, մեկ ժողովրդի և մեկ մարմնի մաս էր: Նրա հնազանդությունն ի վերջո բերեց փոփոխություն և... անձրև: Նրա հնազանդությունն ի վերջո օրհնեց իր ազգը, և անձամբ ինքը նույնպես օրհնված եղավ:

Խաղաղության ուխտ

Դիտարկենք մեկ այլ իրադարձություն, որը տեղի էր ունեցել Եղիայի օրերից շատ առաջ, երբ *շատերը* վնաս կրեցին *մի քանիսի* արարքների պատճառով: Իսրայելն անապատում էր և կանգ էր առել Սատիմում: Գրված է.

> «Նրանց տղամարդկանցից *մի քանիսը* պղծեցին իրենց՝ սեռական հարաբերություններ ունենալով տեղացի մովաբացի կանանց հետ: Այդ կանայք հրավիրեցին նրանց մասնակցելու իրենց աստվածների զոհերին, և իսրայելցիները խնջույքների մասնակցեցին նրանց հետ և երկրպագեցին Մովաբի աստվածներին: Այս կերպով Իսրայելը միացավ Փեովրի Բահաղի երկրպագությանը, և Տիրոջ բարկությունը բռնկվեց Իր ժողովրդի դեմ» (Թվոց 25.1-3, NLT):

Կրկին, ուշադրություն դարձրեք «մի քանիսը» բառին: Աստված պատվիրեց Իր ժողովրդին չերկրպագել այլ աստվածների, չմոտենալ օտարազգի կանանց և սեռական անբարոյություն չգործել: Այնուամենայնիվ, *մի քանիսի* անհնազանդությունը դատաստան բերեց ամբողջ ժողովրդի վրա, և մենք կրկին տեսնում ենք, որ դատաստանի պատճառով վնաս կրեցին ոչ թե *մի քանիսը*, այլ *շատերը:*

> «Տերը տվեց Մովսեսին հետևյալ պատվերը. «Բռնի՛ր բոլոր այդ բանը հրահրողներին և մահապատժի ենթարկիր նրանց Տիրոջ առջև օրը ցերեկով, որպեսզի Նրա խիստ բարկությունը հեռանա Իսրայելի ժողովրդից»» (Թվոց 25.4, NLT):

Կրկին, մենք տեսնում ենք, որ այդ ամենը հրահրողները (մի քանիսը) առաջացրին Տիրոջ նախանձոտ բարկությունը ամբողջ Իսրայելի դեմ: Նրանք մեկ ազգ, մեկ ժողովուրդ և մեկ մարմին էին:

Մոտավորապես նույն ժամանակ, երբ Մովսեսը հրամայեց մահապատժի ենթարկել այդ ամենը հրահրողներին, Զամբրի անունով մի իսրայելցի Քազբի անունով մի մադիանացի կին բերեց իր վրանը Մովսեսի և ամբողջ ժողովրդի աչքի առջև: Սա գիտակցված և անընդունելի անհնազանդություն էր Աստծո Խոսքին: Փենեհեսը՝ Եղիազարի որդին և Ահարոնի թոռը, անմիջապես նիզակ վերցրեց, շտապեց դեպի այդ մարդու վրանը և նիզակով հարվածեց ոչ միայն նրան, այլև Քազբիին՝ սպանելով երկուսին էլ մեկ հարվածով: Գրված է. «Եվ հարվածը Իսրայելցիների դեմ դադարեց, բայց միայն 24.000 մարդ մահանալուց հետո» (Թվոց 25.8,9, NLT): Կրկին, շատերը մահացան. շատերը վնաս կրեցին. շատերը տուժեցին *մի քանիսի* արարքների պատճառով: Աստծո համար ամբողջ ազգը *մեկ* էր:

Դրանից հետո Աստված հայտարարեց. «Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդի Փենեհեսը ետ դարձրեց Իմ զայրույթն Իսրայելի զավակներից, որովհետև նրանց հանդեպ նա նախանձավոր էր Իմ նախանձավորությամբ, որ Ես Իմ նախանձավորությամբ չկործանեի Իսրայելի զավակներին» (Թվոց 25.10,11, NKJV): Փենեհեսը ցանկանում էր նույնը, ինչ Աստված՝ ամբողջ ազգի բարօրությունը: Փենեհեսը փոփոխություն բերեց ամբողջ ազգի մեջ: Դրա համար պետք չէին շատերը, այլ միայն մեկ մարդ:

Պողոսը ցանկանում էր նույնը Կորնթոսի եկեղեցու համար, ինչ Աստված: Նա փոփոխություն բերեց այդ եկեղեցում՝ խիզախորեն հակառակվելով նրանց ճշմարտությամբ: Նա վերցրեց Աստծո Խոսքը՝ Հոգու սուրը, և «խոցեց» մի մարդու գործերը, ով ապրում էր սեռական անբարոյության մեջ: Հին կտակարանում օգտագործվեց նյութական նիզակ. Նոր կտակարանում և այսօր այդ «նիզակը» ի հայտ է գալիս, երբ մենք ոտքի ենք ելնում և խոսում ենք ճշմարտությունը, նույնիսկ այն դեպքում, երբ մյուսները փակում են իրենց ականջները և աչքերը, երբ մեկը կամ մի քանիսը եկեղեցում գիտակցաբար մեղանչում են:

Վերջին մարդը, որի մասին Պողոսը մտածում էր, ինքն էր: Նա վար-

վում էր իմ ընկերոջ պես, ով ծովային փոկ է: Նա վեր էր դասում մյուսների բարօրությունը իր հարմարավետությունից և համբավից: Նա մեծ վտանգի էր ենթարկում իրեն, քանի որ Կորնթոսի եկեղեցին կարող էր նույնիսկ լիովին մերժել իրեն: Նա նախանձավոր էր նրանց հանդեպ, նույնիսկ երբ պարզվում էր, որ Պողոսն ավելի շատ էր սիրում նրանց, քան նրանք՝ Պողոսին:

Փենեհեսը չէր հոգում իր մասին. նա գիտեր, որ իրեն կարող էին մեղադրել խիստ, դաժան, անկարեկից, հետամնաց կամ հնաոճ լինելու և ծայրահեղ համոզմունքներ ունենալու մեջ: Նա միակն էր, ով քայլ արեց. ուրիշ ոչ ոք ոչինչ չէր անում: Ի՞նչ կմտածեին, կասեին կամ կանեին մարդիկ: Այդ ամենը կարևոր չէր: Սաղմոսերգուն գրում է. «Փենեհեսը միջամտելու համարձակություն ուներ» (Սաղմոս 106.30, NLT): Նա նախանձավոր էր Աստծո հանդեպ և այն բանի հանդեպ, ինչը Աստված կարևորում էր՝ Նրա ժողովրդի: Նա սիրում էր իր համայնքը և նախաձեռնեց փոփոխությունը:

Կարդանք, թե ինչ է ասում Աստված նրա մասին.

> «Սրա համար ասա, որ՝ ահա Ես նրան տալիս եմ Իմ *խաղաղության ուխտը,* և նրա համար և նրանից հետո նրա սերնդի համար հավիտենական քահանայության ուխտ կլինի, որովհետև իր Աստծո նախանձը ունեցավ և Իսրայելի որդիների համար քավություն արեց» (Թվոց 25.12,13):

Այս պնդումը տարիներ շարունակ գրավել էր իմ ուշադրությունը աստվածաշնչյան ուսումնասիրությանս ընթացքում: Այս մասին գրեց ոչ միայն Մովսեսը. հետագայում գրեց նաև սաղմոսերգուն՝ շեշտադրելով նրա վարձատրությունը.

> «Ապա Փենեհեսը վեր կացավ և դատաստան արեց, և մահն արգելվեց: Եվ սա համարվեց նրան արդարություն՝ ազգից մինչև ազգ, հավիտյան» (Սաղմոս 106.30,31):

Ես հիշում եմ, թե ինչպիսի երկյուղածություն զգացի, երբ տեսա այս երիտասարդի մեծ վարձատրությունը, որը ռիսկի դիմեց՝ ոտքի ելնելով և պաշտպանելով այն, ինչը հաճելի էր Աստծուն: Նա ստացավ ոչ թե ժամանակավոր, այլ հավիտենական վարձատրություն, որը կնքվեց ուխտով: Հիշե՛ք, որ Աստված երբեք չի խախտում Իր ուխտերը: Այդ վարձատրությունն այնքա՜ն մեծ էր, որ ազդեցություն թողեց ոչ միայն նրա վրա, այլև նրա զավակների, նրանց զավակների և բոլոր ապագա

սերունդների վրա, *նույնիսկ՝ մինչև օրս:* Նրա բոլոր սերունդները վարձատրություն էին ստանալու, քանի որ նա պատրաստ էր պաշտպանել այն, ինչը Աստված ճիշտ էր համարում:

Տեսնելով Փենեհեսի օրինակը՝ ես որոշում կայացրի, որ մշտապես խոսելու եմ ճշմարտությունը, նույնիսկ եթե արդյունքում կորցնեմ մարդկանց սերը, ինչպես Պողոսը: Ես տեսնում էի դրա մեծ վարձատրությունը ոչ միայն իմ, Լիզայի և մեր որդիների համար, այլև մեր բոլոր գալիք սերունդների: Ես ստանալու էի խաղաղության ուխտ, որը երբեք չէր դադարի, և օրհնություն, որը մնալու էր սերնդեսերունդ:

Այսօր ես ցնցված եմ՝ տեսնելով, թե ինչպիսի ջերմեռանդությամբ են մեր որդիները ծառայում Աստծուն: Երբ նրանք մեծանում էին, ես ճանապարհորդում էի՝ տարվա մեծ մասը քարոզելով Ավետարանը, սակայն թվում է՝ Աստծո խաղաղության ուխտը, որը տրվում է փոփոխություն բերողներին, պահված է նաև մեր երեխաների համար: Ես ակնկալում եմ նույն օրհնությունը նաև մեր թոռների համար:

Արդյո՞ք կա այնպիսի օրհնություն ճշմարտությունը պահելու համար, որը մենք դեռ չենք բացահայտել: Այո՛: Այդ օրհնությունը *խաղաղության ուխտն* է, որը խոստացվել է ոչ միայն ձեզ, այլև ձեր սերունդներին, եթե դուք ձայն եք բարձրացնում՝ փոփոխություն բերելու համար, և եթե դուք նախանձավոր եք Աստծո ճանապարհների համար, նույնիսկ եթե մյուսներն այդպիսին չեն:

Արդյո՞ք մենք սկսում ենք հասկանալ, որ ավելի լավ է ձայն բարձրացնել՝ լինելով սիրուց դրդված և օգտագործելով Հոգու սուրը, քան լուռ նայել, թե ինչպես է մեղքը շատանում և տարածվում մեր եկեղեցական համայնքում:

Ինձ համար պատասխանն ակնհայտ է, բայց թույլ կտամ, որ ինքներդ որոշում կայացնեք:

գործնական քայլ

Ահա այն բարի լուրը, որին սպասում էիք: Եթե դուք անվարան կանգնեք ճշմարտության համար և անեք դա Աստծուն և Նրա ժողովրդին սիրելու պատճառով, դուք կմիանաք այն մարդկանց, ովքեր օրհնության խոստում ստացան Աստծուց՝ հիմնված հավիտենական ուխտի վրա, որը որոշեց ոչ միայն նրանց, այլև նրանց սերունդների ապագան:

Մի՞թե դուք կարող եք ավելի մեծ բան անել ձեր ժառանգների համար: Ոչ մի աշխարհիկ և նյութական ժառանգություն չունի նման խոս-

տում: Փողը կարող է վատնվել մեկ կամ երկու սերնդի ընթացքում: Ոչ մի գիտելիք կամ իմաստություն չի կարող փոխանցվել այդքան շատ սերունդների: Այդպիսի տևական ազդեցություն կարող է թողնել միայն Աստծո խոստման վրա հիմնված ժառանգությունը, քանի որ Աստված հավատարիմ է:

Ի՞նչ ժառանգություն եք ցանկանում փոխանցել ապագա սերունդներին: Ինչպե՞ս եք ցանկանում, որ ձեզ հիշեն այս երկրի վրա և ճանաչեն Երկնքում: Մեծագույն բանալին այս ցանկություններն իրականացնելու համար այն է, թե որքան հաստատ եք դուք կանգնած սիրո և ճշմարտության համար ձեր կարճ երկրային տարիների ընթացքում:

6

ՄԵՐ ԴՐԴԱՊԱՏՃԱՌԸ

Վերջերս ինձ հետ մի դեպք տեղի ունեցավ: Ես չէի կարողանում տեքստեր ուղարկել իմ «iPhone»-ով: Փորձում էի ամեն ինչ՝ այդ խնդիրը լուծելու համար. փակում էի ծրագրերը, վերագործարկում էի հեռախոսս և նույնիսկ հարկադրաբար անջատում էի այն ծրագրերը, որոնք դադարում էին աշխատել: Ապա անցնում էի ավելի բարդ քայլերի, բայց չէի կարողանում ազատվել այդ վրդովեցնող խնդրից:

Այդ դեպքը հաստատեց, թե որքան ենք մենք կախված մեր սմարթֆոններից, և որքան կարևոր են դրանք մեզ համար այսօր: Մեր կրտսեր որդին քարոզում էր Հնդկաստանում անցկացվող մի համաժողովում և գրքեր էր բաժանում հովիվներին ու ավագներին: Նա որոշ դժվարությունների էր բախվել և հաղորդագրություն էր ուղարկել ինձ այդ մասին, սակայն ես ժամեր շարունակ չէի կարողանում պատասխանել նրա հարցերին իմ հեռախոսի հանկարծակի անսարքության պատճառով: Ինձնից պահանջվում էր ավելի քան տասնհինգ րոպե՝ մեկ-երկու նախադասություն գրելու համար, իսկ հետո իմ հեռախոսը հանկարծակի անջատում էր ծրագիրը՝ չպահպանելով գրածս, և ես ստիպված էի կրկին սկսել: Չորս ժամվա ընթացքում կարողացա միայն շատ կարճ հաղորդագրություն ուղարկել: Ես ուզում էի ավելին ասել նրան, բայց չէի կարողանում: Հասկանալի է, որ խիստ վիատված էի:

Ի վերջո, հեռախոսս տարա մասնագետների մոտ, որոնք շատ ավելի լավ գիտեին, թե ինչպես էր այն աշխատում: Մի քանի օր փորձում էի լուծել այդ խնդիրը, բայց չանցավ նույնիսկ տասնհինգ րոպե, և նրանք գտան անսարքության պատճառը: Մի քանի ժամ անց ես արդեն հաղորդագրություններ էի ուղարկում՝ առանց որևէ խնդրի: Պարզվեց, որ

ես պատահաբար այնպիսի բան էի արել, ինչը ծանրաբեռնել էր հեռախոսի օպերացիոն համակարգը:

Ի՞նչ կլիներ, եթե ես չփնտրեի այդ խնդրի լուծումը: Ի՞նչ կլիներ, եթե ժամանակ չհատկացնեի՝ մասնագետներին դիմելու համար: Ես կօգտագործեի իմ հեռախոսն իր հնարավորություններից շատ ավելի ցածր մակարդակով և, ցավոք, շատ ժամանակ կվատնեի ու չէի կարողանա հաղորդակցվել իմ ընտանիքի, թիմի անդամների և ընկերների հետ:

Մեկ քայլ առաջ գնանք: Ի՞նչ կլիներ, եթե ոչինչ չիմանայի տեքստային հաղորդագրությունների մասին: Երեսուն տարի առաջ ես ոչինչ չգիտեի նման հաղորդագրությունների մասին, առավել ևս՝ սմարթֆոնների: Ընդամենը հարյուր տարի առաջ նույնիսկ միջմայրցամաքային հեռախոսակապ չկար. այն պարզապես գոյություն չուներ: Այդ ժամանակ ես ուրախ կլինեի չորս ժամ անցկացնել՝ Հնդկաստանում գտնվող իմ որդուն պարզապես մեկ ակնթարթային հաղորդագրություն ուղարկելու համար: Ցանկացած տեսակի կապը շատ ավելի լավ տարբերակ կլիներ, քան կապի բացակայությունը:

Առանց իմանալու, թե ինչ ունեմ՝ ես այդքան ջանասիրաբար լուծում չէի փնտրի և չէի անցնի բոլոր դժվարություններով, որոնք առաջացան իմ ճանապարհին: Բայց ես գիտեմ իմ «iPhone»-ի առավելությունները, և հենց այդ գիտելիքն էր, որ մեծ վհատություն առաջացրեց իմ մեջ:

Երբ մենք չգիտենք մեր ներուժը, մեր մեջ չի լինի ինչ-որ բանի հասնելու ցանկություն և ձգտում: Մեզնից շատերը չգիտեն, թե ինչ ուժ ունի միաբան զինվորական դասակը, ինչպես որ գիտի իմ ընկերը, ով ծովային փոկ է: Պատկերացրեք, որ նրա դասակում ինչ-որ խնդիր առաջանար, որը կարող էր պարտության պատճառ դառնալ: Դա պարզապես չէր վրդովեցնի նրան. հավանաբար, նա կզրկվեր իր կյանքից:

Վերհիշելով մեր հինկտակարանյան պատմությունը՝ կարո՞ղ եք պատկերացնել, թե որքա՛ն բարկացած էր ամբողջ Իսրայելն Աքարի դեմ: Նրանք մեծ հաջողություն ունեցան Երիքովի դեմ պատերազմելիս, բայց Գայիից հետո թաղեցին իրենց երեսունվեց մտերիմ ընկերներին և պետք է մխիթարեին այդ մահացած զինվորների ընտանիքներին:

Պատկերացնո՞ւմ եք Պողոսի վհատությունը, երբ տեսնում էր, որ իր սիրելի կորնթացիները կրում էին հոգևոր կրիպտոնաքարի սարսափելի հետևանքները՝ տկարություն, անբուժելի հիվանդություններ և վաղաժամ մահեր: Նա քաջատեղյակ էր այդ մարդկանց ներուժին, բայց նրանք չէին գիտակցում դա: Նրանց անձնական նախընտրություններն ավելի կարևոր էի, քան եկեղեցական համայնքի բարօրությունը:

Իսկ ի՞նչ կասեք ձեր մասին: Ի՞նչ կասեք ձեր քրիստոնեական հա-

մայնքի մասին: Կարծում եմ՝ դուք կարդում եք այս մարտահրավեր նետող ուղերձը, քանի որ ձեր սրտի խորքում գիտեք, որ քրիստոնեական կյանքն *ավելին* է: Աստված է դրել այս ցանկությունը ձեր ներսում: Դուք ավելի շահագրգռված եք, որ ունենաք լիարժեք կյանք Նրա ներկայության մեջ և ձեր համայնքում ականատես լինեք գործուն հոգևոր վերափոխման, քան խուսափեք ժամանակավոր անհարմարությունից, որը կառաջանա ճշմարտությանը հետևելու պատճառով:

Ձեր լույսը եկել է

Ուսումնասիրելով այս գիրքը՝ դուք կստանաք երկու մեծ առավելություն: Առաջինը՝ ձեր եկեղեցական համայնքն արդյունավետ կգործի, և երկրորդը՝ ձեր անձնական կյանքը կընդլայնվի. դուք կդառնաք ավելի պտղաբեր, ավելի կայացած և ավելի մտերիմ Աստծո հետ (մինչև այս պահը կենտրոնացած ենք եղել եկեղեցական համայնքի վրա, բայց մենք կանդրադառնանք նաև ձեզ՝ որպես անհատի):

Ինչպիսի՞ն պետք է լինի մեր տեսիլքը մեր համայնքի վերաբերյալ: Ինչպես և իմ «iPhone»-ի օրինակի դեպքում, այս հարցի պատասխանը կբորբոքի մեր ցանկությունը և կդրդի, որ շարունակենք բացահայտել ու շտկել այն ամենը, ինչը թույլ չի տալիս գործել մեր ամբողջական ներուժով:

Եսային մարգարեանում է.

> «Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա: Որովհետև ահա խավարը ծածկել է երկիրը, և մառախուղը՝ ազգերը. բայց քեզ վրա ծագում է Տերը, և Նրա փառքը երևում է քեզ վրա» (Եսայի 60.1,2):

Առաջին բանը, ինչը ուզում եմ մատնանշել այն է, որ Եսային չի խոսում Երկնքի մասին: Եվ նա նույնպես չի խոսում Քրիստոսի հազարամյա թագավորության մասին՝ այն ժամանակաշրջանի, երբ Հիսուսը հազար տարի թագավորելու է այս երկրի վրա, ինչպես գրված է Հայտնություն գրքում: Մարգարեն չի խոսում նաև նոր երկնքի և նոր երկրի մասին, որոնց գալը կանխասվել է Պետրոսի և Նոր կտակարանի այլ հեղինակների կողմից: Ո՛չ, նա նկարագրում է այն ժամանակաշրջանը, երբ խավարը կծածկի ամբողջ երկիրը: Անշուշտ, այս մարգարեությունը կարող է վերաբերել մեր օրերին, և ես հավատում եմ, որ այդպես է:

Մարգարեի խոսքերով՝ խավարը ծածկելու է ազգերը ոչ թե ինչ-որ

աշխարհագրական հատվածներում, այլ ամբողջ աշխարհում: Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ խավարն ավելի է թանձրանում: Մենք ավելի ու ավելի ենք հեռանում մեր Արարչի սրտից: Ես չեմ խոսում միայն աթեիստների, ագնոստիկների և աղանդավորների մասին, այլև շատերի, որոնք դավանում են, որ քրիստոնյա են: Սա այն ժամանակն է, որի մասին Պողոսը գրում է. «Մարդիկ այլևս չեն լսի առողջ և ողջամիտ ուսմունքը: Նրանք կհետևեն իրենց ցանկություններին և կփնտրեն այնպիսի ուսուցիչների, ովքեր կասեն այն, ինչ իրենց մարմաջող ականջներն ուզում են լսել» (Բ Տիմոթեոս 4.3, NLT): Այնուհետև նա հառաչանքով գրում է. «Եվ իրենց լսելիքը ճշմարտությունից ետ կդարձնեն» (խոսք 4):

Եսային գրում է, որ այս ժամանակաշրջանում ճշմարիտ հավատացյալները լուսավորելու են կամ աչքի են ընկնելու: Պատկերացրեք դա հետևյալ կերպով. եթե մտնեք մի մութ սենյակ և միացնեք լույսը, խավարն անմիջապես կցրվի: Խավարը չի կարող հաղթել լույսին. դուք երբևէ լսե՞լ եք խավար արձակող լապտերի մասին: Ո՛չ, լապտերը միայն լույս է արձակում, քանի որ, որքան էլ խավար լինի, լույսը հաղթում է և ցրում է խավարը:

Հիսուսն ասաց, որ մենք այս աշխարհի լույսն ենք: Մենք պետք է լուսավորենք, մենք պետք է լինենք ավելի ուժեղ, քան խավարը, բայց ինչպե՞ս սա պետք է տեղի ունենա: Եսայու խոսքերով՝ մենք պետք է այնպես լուսավորենք, որ անհավատները տեսնեն Նրա *փառքը:*

«Փառք» բառը եբրայերենում «կավոդ»-ն է, որը նշանակում է «շքեղություն, մեծություն, հարստություն, կարողություն, առատություն, պատիվ, վեհություն և ծանրություն»: Մի պահ մտածեք այս բառերի վերաբերյալ: Երբ Աստվածաշունչը խոսում է Աստծո փառքի մասին, նկատի ունի Աստծո շքեղությունը, Աստծո մեծությունը, Աստծո հարստությունը, Աստծո կարողությունը, Աստծո առատությունը, Աստծո պատիվը, Աստծո վեհությունը: Այս սահմանման վերջին բառը՝ «ծանրությունը» կամ «կշիռը» ցույց է տալիս, որ մնացած հատկանիշները ոչ թե սահմանափակ են, այլ առկա են առավելագույն չափով: Պարզ ասած՝ խոսքը Նրա մեծության կշռի մասին է:

Պողոսը գրում է, որ գիտելիքն այս մասին Աստված դրել է «մեր սրտերում, որ մենք ճանաչենք Աստծո փառքը» (Բ Կորնթացիների 4.6, NLT): Նա շարունակում է.

> «Այս լույսը շողում է մեր սրտերում, բայց ինքներս նման ենք փխրուն կավե անոթների, որոնք կրում են այս մեծ գան-

ծը: Այս կերպով պարզ է դառնում, որ *մեր մեծ զորությունն* Աստծուց է, ոչ թե մեզնից» (Բ Կորնթացիների 4.7, NLT):

Ուշադրություն դարձրեք «մեր մեծ զորությունը» բառերին: Աստծո շքեղությունը, մեծությունը, հարստությունը, կարողությունը, առատությունը, պատիվը և վեհությունը շողում են մեր սրտերում ամբողջ ուժով: Ահա թե ինչու է նա պնդում. *«Մեր մեծ զորությունն* Աստծուց է, ոչ թե մեզնից»: Այն զորությունը, որի մասին մենք խոսում ենք, կարող է թափանցել ցանկացած խավարի մեջ, որը կփորձի կանգնել մեր առաքելության ճանապարհին:

Երբ ծովային փոկերի դասակն առաքելության է գնում, նրանք չեն ծրագրում, որ պարտությամբ են վերադառնալու, և սովորաբար դա տեղի չի ունենում: Մենք ունենք ավելի հաստատ խոստում, քան նրանք: Եվ այդ խոստումն ապահովված է շատ ավելի մեծ զորությամբ, որը թույլ կտա մեզ հաջողության հասնել:

Մինչև այս գրքի ավարտը ես հաճախ եմ օգտագործելու «Նրա փառքը» արտահայտությունը՝ «Նրա մեծությունը» իմաստով (բայց մտապահե՛ք նաև վերևում բերված սահմանման մնացած բառերը):

Եսային պնդում է, որ Նրա մեծությունը *կծագի* մեզ վրա, ոչ թե *կիջնի* մեզ վրա: Որտեղի՞ց այն կծագի: Մեր սրտերի՛ց: Հիշե՛ք՝ «այս գանձն ունենք հողե անոթներում» (խոսք 7):

Այսպիսով, հարցս հետևյալն է. «Ինչո՞ւ Նրա մեծ զորությունը մեզանով չի հայտնվում մեր հասարակությանը: Ո՞րն է պատճառը, որ մեզնից շատերը տկար են, հիվանդ են և նույնիսկ վաղաժամ մահանում են: Արդյո՞ք պատճառն այն է, որ մենք հանդուրժում ենք հոգևոր կրիպտոնաքարը»:

Համայնքի ներուժը

Ինչպիսի՞ն կարող է լինել համայնքի ներուժը: Մտածե՛ք այն ժամանակվա մասին, երբ եկեղեցին սկիզբ առավ: Պենտեկոստեի օրը աշակերտները, որոնց թիվը մոտավորապես 120 էր, թաքնված էին մի վայրում: Գրված է, որ նրանք միաբան էին: Ո՞րն էր նրանց միաբանության պատճառը: Երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից, պատվիրեց առնվազն հինգ հարյուր հավատացյալների գնալ վերնատուն և սպասել Հոր խոստմանը (տե՛ս Ա Կորնթ. 15.6 և Ղուկ. 24.33-53): Ինչո՞ւ ընդամենը տասն օր անց այնտեղ 120 մարդ մնաց: Ինչո՞ւ բոլորը չսպասեցին, և ի՞նչ եղավ մնացած 380 մարդկանց: Նրանց մասին այլևս

ոչինչ չի հիշատակվում՝ բացի այն բանից, որ նրանցից մի քանիսը դեռ ողջ էին մ.թ. 56 թվականին, երբ Պողոսը գրում էր Կորնթացիներին ուղղված իր նամակը: Մեկ բան մենք հաստատ գիտենք. նրանք չէին սպասում Հոր խոստմանը Երուսաղեմում՝ Հիսուսի պատվերի համաձայն (տե՛ս Գործք 1.1-15):

Հնարավո՞ր է, որ այդ 380 մարդիկ համարեցին, որ պարտադիր չէր կատարել Նրա հանձնարարությունը, կամ՝ որ այն պարզապես լավ առաջարկ էր: Թե՞ այդ մարդիկ մտածեցին, որ Նրա խնդրանքը կատարելը շատ դժվար էր: Միգուցե նրանք հավատում էին, որ կարող էին ծառայել Նրան իրենց ուզած կերպով: Համոզված եմ, որ վերնատնից գնալուց հետո նրանցից ոմանք նույնիսկ քարոզում էին Նրա հարության մասին:

Այնուամենայնիվ, Աստծո Հոգին, Ով նույնպես կոչվում է *Փառքի* Հոգի (տե՛ս Ա Պետր. 4.14), չլցրեց նրանց: Աստծո մեծության Հոգով մկրտվեցին այն 120 մարդիկ, ովքեր մնացել էին: Ի՞նչը մեկ դարձրեց նրանց: Նրանք չվարվեցին ըստ իրենց կարծիքների, ինչպես մյուս 380 մարդիկ: Ես հավատում եմ, որ պատճառը նրանց վճռական հնազանդությունն էր Աստծո Խոսքին, որը, իրենց կարծիքով, պետք էր ճշտորեն կատարել:

Աստծո փառքը (որն ընդգրկում է նաև Նրա զորությունը) լցրեց նրանց, և այդ օրը ավելի քան երեք հազար մարդ վերստին ծնվեց: Նրանք թռուցիկներ չէին բաժանում, գովազդներ չէին տեղադրում հրեական ամսագրերում, չէին կիրառում զանգվածային ռազմավարություն սոցիալական ցանցերում և չէին գրոհում ռադիոեթերները գովազդներով: Նրանք նույնիսկ չէին ծրագրել իրենց հավաքույթը: Այնուամենայնիվ, Աստծո մեծությունը հայտնվեց ամբողջ քաղաքին:

Կարճ ժամանակ անց ևս հինգ հազար մարդ՝ չհաշված կանանց և երեխաներին, վերստին ծնվեց այն բանից հետո, երբ կաղ ծնված մի մարդ վեր ցատկեց տեղից և վազելով մտավ տաճարը: Այս բազմության դարձի գալը զարմանալի էր այն բանով, որ Պետրոսը և Հովհաննեսը նույնիսկ չհասցրին փրկության կոչ անել, քանի որ նրանց ծերբակալեցին:

Ամբողջ Երուսաղեմ քաղաքն իրարանցման մեջ էր տեղի ունեցող իրադարձությունների պատճառով: Բոլորը լսում էին ուժգին քամու ձայնը: Քաղաքի բնակիչները լսում էին, թե ինչպես էին աշակերտները հրաշալի կերպով ազդարարում Աստծո գործերը օտար լեզուներով և բարբառներով, որոնք նրանք չէին սովորել: Բոլորը տեսան ակնառու հրաշքներ, որոնք արվեցին Հիսուսի անունով:

Մի քանի օր անց բոլորը միաբան աղոթում էին, և այն շենքը, որտեղ

նրանք հավաքվել էին, ցնցվեց: Աստվածաշունչը չի չափազանցնում: Եթե գրված է, որ շենքը ցնցվեց, վստահ եղեք, որ այն դղրդացել էր: Այս հավատացյալներից ճառագում էր զորություն, առատություն և բժշկություն:

Գրված է. «Նրանց մեջ ոչ մեկը կարոտություն չուներ» (Գործք 4.34): Գրված է, որ Պետրոսը քայլում էր փողոցներով, ոչ թե մեկ փողոցով, այլ՝ փողոցներով, և բոլոր հիվանդներն ու տկարները, որոնց պառկեցնում էին փողոցներում, ընդամենը պետք է գտնվեին նրանից մի շողքի հեռավորության վրա, և գրված է. «Ամենն էլ բժշկվում էին» (Գործք 5.16): Սա է Աստծո մեծությունը: Պատկերացրեք, որ մի հավատացյալ քայլում է ինչ-որ հիվանդանոցի միջանցքով և բժշկում է բոլոր հիվանդներին:

Աստվածաշունչը նույնպես հայտնում է, որ մի մարդ իր կնոջ հետ, հավաքույթներից մեկի ժամանակ աներկյուղ ստեցին հովվին և մահացած ընկան: Այդ մահերի մասին լուրը տարածվեց ամբողջ քաղաքով և «մեծ ահ» առաջացրեց բոլոր լսողների մեջ, սակայն մարդիկ բարձր կարծիք ունեին հավատացյալների մասին (տե՛ս Գործք 5.1-13): Այս առողջ երկյուղը չհեռացրեց մարդկանց. ընդհակառակը, ավելի շատ մարդիկ էին միանում նրանց. «Եվ առավել ևս շատանում էին Տիրոջ հավատացյալները, և եղավ մի բազմություն մարդկանց և կանանց» (Գործք 5.14):

Այս երևույթը չէր սահմանափակվում Երուսաղեմով: Հիսուսի հետևորդները համարձակ վկայում էին, և ամբողջ քաղաքներ էին փրկվում ու բժշկվում: Փիլիպոսը, ով սպասարկում էր այրիների սեղանները ճաշարանում, գնաց Սամարիա քաղաքը: Գրված է. «Պիղծ ոգիներ ունեցողներից շատերից մեծաձայն աղաղակելով դուրս էին գալիս: Եվ շատ անդամալույծներ ու կաղեր բժշկվում էին: Եվ մեծ ուրախություն եղավ այն քաղաքում» (Գործք 8.7-9): Մի շատ հայտնի կախարդ «զարմացած էր այն նշաններով և մեծ հրաշքներով, որոնք Փիլիպոսը գործում էր» (խոսք 13, NLT): Ամբողջ քաղաքը կա՛մ իմացավ Հիսուսի մասին, կա՛մ ընդունեց Նրան և փրկվեց:

Մենք կարդում ենք ևս մեկ դեպք այն մասին, որ Պետրոսն ակնթարթորեն բժշկեց անդամալույծ մարդու, ով ութ տարի գամված էր անկողնուն: Աստվածաշունչն ասում է, որ «Լիդիայի և Սարոնի ամբողջ բնակչությունը տեսավ, որ Էնեան քայլում էր, և նրանք դարձան Տիրոջը» (Գործք 9.35, NLT): Ոչ թե մեկ քաղաք, այլ՝ երկու, և հատկապես գրված է, որ փրկվեց «ամբողջ բնակչությունը»:

Հոպպեում Այծեմնիկ անունով մի կին հարություն առավ մեռելներից, և այդ մասին լուրը տարածվեց ամբողջ քաղաքով. ևս մեկ բնակավայր ամբողջովին կրեց Ավետարանի ազդեցությունը:

Պետրոսը ձերբակալվեց, բայց կեսգիշերին մի հրեշտակ եկավ խստորեն հսկվող բանտը և ազատեց նրան:

Մի իշխան մահացած ընկավ, և որդերը սկսեցին ուտել նրան՝ Աստծուն փառք չտալու համար: Աստծո մեծությունը բացահայտում էր ամբողջ ազգի խավարը: Այդ լույսից պարզապես անկարելի էր փախչել:

Հրաշքները, մեծ զորությունը և փրկված մարդիկ տարածվում էին հեթանոս համայնքներում և քաղաքներում: Նույնիսկ գրված է մի դեպքի մասին, երբ «Ասիայի բոլոր բնակիչները՝ հրեաները և հույները, Տիրոջ Խոսքը լսեցին» (Գործք 19.10): Խոսքն այստեղ մի քանի գյուղերի կամ քաղաքների մասին չէ, այլ՝ ամբողջ տարածաշրջանի: Եվ լսեցին *բոլո՛ր:* Նրանք չունեին սոցիալական ցանցեր՝ «Ֆեյսբուք», «Ինստագրամ» և «Թվիթեր»: Չկային ինտերնետային կայքեր, արբանյակային կապ, հեռուստատեսություն և ռադիո: Չկային ավտոմեքենաներ և նույնիսկ հեծանիվներ, որ մարդիկ կարողանային հեշտորեն հավաքվել: Այնուամենայնիվ, բոլորը ամբողջ տարածաշրջանում լսեցին Տիրոջ Խոսքը: Ահա թե ինչ է տեղի ունենում, երբ ամբողջ եկեղեցին մեկ է դառնում, և երբ Աստծո Խոսքը նախապատվություն է ստանում մեր քրիստոնեական համայնքներում:

Աստվածային մեծությունը հայտնվեց առաջին եկեղեցում: Այնուամենայնիվ, հաջորդ գլխում կտեսնենք, որ Աստծո ծրագիրը մեր սերնդի համար նույնիսկ ավելին է: Այն, ինչ վերապրեց Առաջին եկեղեցին, նույնիսկ մոտ չէ այն աստվածային մեծությանը և զորությանը, որը կհայտնվի մեր Տեր և Թագավոր Հիսուս Քրիստոսի վերադարձից առաջ:

գործնական քայլ

Տեսնելով անհավատալի հրաշքներ Նոր կտակարանում՝ մենք կարող ենք հեշտորեն մտածել. *«Հրաշալի էր, որ նրանք անում էին դա, բայց ինձ նման մարդը երբեք չի կարող նման բաներ անել»:* Ահա թե ինչու է այս գլուխը կարևոր. հրաշքները և նշանները տեղի չէին ունենում այն պատճառով, որ այդ մարդիկ յուրահատուկ էին: Դրանք տեղի էին ունենում, քանի որ այդ հասարակ մարդիկ պարզապես հավատում և հնազանդվում էին, ինչի արդյունքում Աստծո մեծությունը ծագում էր նրանց ներսից:

Եթե Աստծո մեծությունը կարող է բարձրանալ նրանց մեջ՝ աղմկոտ, անկիրթ, երիտասարդ, անփորձ և կանխակալ մարդկանց կողմից, որոնք ձանձրալի, սովորական աշխատանքներ ունեին, ապա մենք կարող ենք

վստահ լինել, որ չկա ոչ մի չափանիշ, որը որակավորում է մեզ՝ երկնային մեծությունը կրելու համար: Պարզապես հարցն այն է, թե արդյո՞ք մենք հավատարմորեն կհավատանք և կհետևենք Աստծո Խոսքին:

Դուք հավատո՞ւմ եք, որ հնարավոր է կրկին տեսնել այդ հրաշքները, նույնիսկ՝ ավելին: Եթե ձեր եկեղեցին սկսի նման բաներ վերապրել, դուք անմիջապես կմիանա՞ք դրան: Ցանկանո՞ւմ եք ստանալ այն, ինչ Աստված կամենում է տալ ձեզ: Արտահայտե՛ք այս պատասխանները Աստծուն ուղղված աղոթքով: Իսկ հետո ապաշխարե՛ք, որ անհամապատասխան կամ որակազրկված եք համարել ձեզ այդպիսի կյանքի համար: Հանձնե՛ք ձեր մտահոգություններն Աստծուն և նվիրե՛ք ձեր անձը Նրան, որպեսզի Նա կատարի ձեր կյանքում այն ամենը, ինչ որոշել է:

7

ՄԵԿԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաչվելուց առաջ Հիսուսը հնարավորություն ուներ վերջին անգամ աղոթելու ոչ միայն Իր թիմի, այլև բոլորիս համար: Նա սկսում է Իր խնդրանքը հետևյալ խոսքերով. «Ես աղոթում եմ ոչ միայն այս աշակերտների համար, այլև նրանց, ովքեր երբևէ կհավատան Ինձ նրանց ուղերձի միջոցով» (Հովհաննես 17.20, NLT): Անժխտելի է, որ Նա խոսում էր ձեր և իմ մասին: Մենք ճանաչեցինք Հիսուսին նրանց ուղերձների միջոցով՝ կա՛մ կարդալով դրանք, կա՛մ լսելով ինչ-որ մեկից:

Հիսուսը մարդու Որդին է. նշանակում է՝ Նա իշխանություն ունի խնդրելու, որ Հոր կամքը կատարվի այս երկրի վրա այնպես, ինչպես որ Երկնքում է: Ահա թե ինչ է Նա աղոթում.

> «[Ես աղոթում եմ...] Որ ամենը *մեկ* լինեն, ինչպես Դու, Հա՛յր, Ինձանում, և Ես՝ Քեզանում, որ նրանք էլ Մեզանում *մեկ* լինեն, որ աշխարհը հավատա, թե Դու ուղարկեցիր Ինձ: Եվ Ես այն *փառքը*, որ Ինձ տվեցիր, նրանց տվեցի, որ *մեկ* լինեն, ինչպես Մենք էլ *մեկ* ենք» (Հովհաննես 17.21,22):

Նա աղոթում էր, որ մենք *մեկ* լինենք, որպեսզի աշխարհը հավատա, որ Հիսուս Քրիստոսը ամբողջ մարդկության Փրկիչն է: Ի՞նչը կհասցնի այս ուղերձը մեզ շրջապատող մարդկանց: Գոյություն ունի միայն մեկ պատասխան՝ Նրա *փառքը:* Այս ճշմարտությունը վճռորոշ է մեր առաքելության համար: Նա պահել է Իր փառքը (Իր հայտնված մեծությունը) նրանց համար, ովքեր *մեկ* են, բայց ահա թե ինչպես. *մեկ՝ են*

նրանում, ինչպես որ Նա մեկ է Հոր հետ:

Իսկ ինչպե՞ս էր արտահայտվում Նրա մեկությունը Հոր հետ: Նա շարունակ այսպիսի պնդումներ էր անում. «Ես... Իմ կամքը չեմ որոնում, այլ՝ Ինձ ուղարկող Հոր կամքը» (Հովհաննես 5.30), «Ես իջա Երկնքից, որ ոչ թե Իմ կամքն անեմ, այլ Ինձ Ուղարկողի կամքը» (Հովհաննես 6.38), և կրկին՝ «Ես այստեղ եմ, որ կատարեմ ամեն ինչ Քո ձևով, ո՛վ Աստված, այնպես, ինչպես նկարագրված է Քո Գրքում» (Եբրայեցիների 10.7, MSG): Նա մեկ էր Հոր հետ, քանի որ փնտրում և կատարում էր այն, ինչ ցանկանում էր Իր Հայրը, նույնիսկ երբ դա ընդունված և հարմարավետ չէր:

Նույնը կարելի է ասել առաջին աշակերտների մասին: Բոլորը *միաբան* էին այն օրը, երբ Աստված նրանց միջոցով հայտնեց Իր մեծությունը ամբողջ հայտնի աշխարհին: Խոսքը Նրա 120 հետևորդների մասին է, ոչ թե այն տասնյակ հազարավորների, ովքեր լսում էին Հիսուսին Իր ծառայության երեք տարվա ընթացքում: Խոսքը նաև այն 380 աշակերտների մասին չէ, ովքեր տեսան Նրան հարություն առած մարմնով, սակայն համարեցին, որ պարտադիր չէր հետևել Նրա պատվերին. խոսքը հավատքով միաբանված մարդկանց մասին է:

Պողոսը խնդրում է և նույնիսկ աղաչում բոլորիս. «Ամեն ջանք արե՛ք, որ միաբան մնաք Հոգու մեջ» (Եփեսացիների 4.3, NLT): Այնուհետև նա նկարագրում է այն պարգևները, որոնք Հիսուսն անձամբ տվել է եկեղեցուն՝ առաքյալներ, մարգարեներ, ավետարանիչներ, հովիվներ և ուսուցիչներ: Նրանց պարտականությունն է՝ կառուցել եկեղեցին հստակ առաքելությամբ.

> «Սա կշարունակվի, մինչև որ բոլորս հասնենք այնպիսի միաբանության մեր հավատքի և Աստծո Որդու ճանաչողության մեջ, որ հասուն լինենք Տիրոջ մեջ և համապատասխանենք Քրիստոսի լիարժեք և կատարյալ չափանիշին» (Եփեսացիների 4.13, NLT):

Մեր առաքելությունը կամ նպատակը նույնն է, ինչպես առաջին եկեղեցում էր. լինել մեկ և դրա արդյունքում դառնալ Աստծո մեծությունը (փառքը) հայտնողը: Չկա այլ միջոց: Մեր սերունդը պետք է մեկ դառնա՝ միաբան՝ հավատքով և գիտելիքով: Միակ ուղին դեպի ճշմարիտ միաբանությունը նույնն է, ինչպես Հիսուսի և աշակերտների դեպքում էր. հնազանդությունը՝ Աստծո Խոսքին:

Մտածե՛ք այս մասին. երբ Իսրայելը մեկ էր, լիակատար պարտության մատնեց Երիքով քաղաքը: Երբ Իսրայելը մեկ էր Սողոմոնի թագա-

վորության ներքո, այն անպարտելի էր՝ որպես ազգ, և յուրաքանչյուրը հաջողակ և գոհունակ կյանք ուներ՝ այնպիսին, որը տեսել էին ընդամենը մի քանի սերունդներ: Կան նաև այլ օրինակներ, սակայն իմաստը հասկանալի է:

Դիտարկենք հակառակը: Անդրադառնալով Կորնթոսում գտնվող հոգևոր կրիպտոնաքարին՝ Պողոսը սկսեց իր ուղերձը հետևյալ խոսքերով. «Առաջինը՝ ես լսում եմ, որ ձեր միջև հակառակություններ կան, երբ դուք հավաքվում եք որպես եկեղեցի» (Ա Կորնթացիների 11.18, NLT): Ակնհայտ է, որ նրանք *մեկ* չէին: Հարց է ծագում. ի՞նչը թույլ չէր տալիս նրանց մեկ լինել: Պատճառը նրանց սիրախաղերն էին կրիպտոնաքարի հետ՝ նրանց անհնազանդությունն Աստծո Խոսքին: Նույն կերպով, Աքարի անհնազանդության պատճառով Իսրայելն այլևս մեկ չէր և անպարտելի չէր, երբ հարձակվեց Գայիի վրա:

Հանկարծ Պողոսը մոտենում է իրավիճակին այլ կողմից և մի պնդում է անում, որն անտրամաբանական է թվում.

> «...և ինչ-որ չափով ես հավատում եմ դրան: Բայց, իհարկե, ձեր միջև պետք է բաժանություններ լինեն, որպեսզի դուք, որ ունեք Աստծո հավանությունը, ճանաչվեք» (Ա Կորնթացիների 11.18,19, NLT):

Ինչո՞ւ է կարևոր, որ ճանաչվեն Աստծո հավանությունն ունեցող մարդիկ: Քանի որ այս կերպով է բացվում ճանապարհը դեպի միասնությունը հավատքի և Աստծո Որդուն ճանաչելու մեջ: Սա նույնքան կարևոր է, որքան մեծամասնության հնազանդության և Աքարի անհնազանդության բացահայտումը՝ հանուն Իսրայելի ժողովրդի և նրա առաքելության: Անչափ կարևոր էր, որ 120 անսասան և հնազանդ աշակերտներն առանձնացվեին այն 380-ից, որոնք վարվեցին իրենց ուզածով: Նույնը պետք է տեղի ունենար Կորնթոսի եկեղեցում: Հնազանդ *մեծամասնությունը* և *մի քանի* անհնազանդ մարդիկ պետք է առանձնացվեին. հակառակ դեպքում, ճանապարհը դեպի միաբանությունը կփակվեր, և Աստծո փառքը (մեծությունը) չէր հայտնվի Կորնթոսում: Դա նույնպես կարևոր էր՝ բժշկություն բերելու համար այն անմեղ մարդկանց, ովքեր աներկյուղ չէին Տիրոջ Ընթրիքի հանդեպ, սակայն տառապանքներ էին կրում (նրանք տկար էին, հիվանդ էին և վաղաժամ մահանում էին) մի քանիսի պատճառով, որոնց վերաբերմունքն անհարգալից էր:

Պողոսը լավ գիտեր, թե որքան կարևոր է միաբանությունն առաջնահերթ դարձնելը: Նա գիտեր, թե ինչ կատարվեց Երուսաղեմում, Սամարիայում, Անտիոքում և այլ քաղաքներում, որոնք ամբողջովին կրեցին

Աստծո մեծության ազդեցությունը: Այդ պատճառով, միաբանության մասին նա խնդրում էր ոչ միայն Կորնթոսի եկեղեցուն, այլև Եփեսոսում, Փիլիպեում և Կողոսիայում գտնվող հավատացյալներին, ինչպես նաև՝ բոլորիս այսօր: Հիսուսի օրինակով մենք գիտենք, որ միաբանության միակ ճանապարհը հնազանդությունն է Աստծո Խոսքին:

Ավելի մեծ

Իսկ ի՞նչ կարելի է ասել մեր օրերի մասին: Արդյո՞ք միաբանությունը հավատքի մեջ՝ մեր նպատակն է: Թույլ տվեք սկսել՝ կիսվելով աղոթքի ժամանակ ստացած մի փորձառությամբ, որը երբեք չեմ մոռանա: Ես այնքա՛ն պարզ լսեցի. «Որդի՛ս, Գործք առաքելոց գիրքը մանկական խաղ կթվա այն բանի համեմատ, ինչ Ես պատրաստվում եմ անել եկեղեցում և եկեղեցու միջոցով՝ մինչև Իմ Որդու վերադարձը»:

Ես ցնցված էի: Իրականում, չհավատացի իմ լսածին: Ես ընդդիմացա՝ ասելով. «Հա՛յր, ինձ պետք է երեք տարբեր հղում Աստվածաշնչից՝ այս խոսքին հավատալու համար»: Հետաքրքիր է, որ ես չզգացի տհաճություն, երբ խնդրեցի այս մասին: Մենք պետք է *ամեն բան փորձենք* (տե՛ս Ա Թեսաղ. 5.21): Բացի այդ՝ գրված է. «Երկու և երեք վկաների բերանով ամեն բան կհաստատվի» (Բ Կորնթացիների 13.1):

Ահա այն հղումներից մեկը, որ Նա ցույց տվեց ինձ.

> «Որովհետև այսպես է ասում Զորքերի Տերը. «Եվս մեկ անգամ (մի քիչ ժամանակ անց) Ես կշարժեմ երկինքը և երկիրը, ծովը և ցամաքը, և Ես կշարժեմ բոլոր ազգերը, և նրանք կգան Բոլոր Ազգերի Փափագի մոտ, և Ես կլցնեմ այս տաճարը փառքով», - ասում է Զորքերի Տերը: - «Այս վերջին տաճարի փառքն ավելի մեծ կլինի, քան նախորդինը», - ասում է Զորքերի Տերը» (Անգե 2.6,7,9, NKJV):

Մի փոքր պատմական տեղեկություն. տարիներ շարունակ Իսրայելը գերության մեջ էր, սկզբում՝ բաբելացիների տիրապետության ներքո, իսկ հետո՝ պարսիկների: Աստված դրեց Պարսից Կյուրոս թագավորի սրտում ազատ արձակել այն հրեաներին, որոնք ուզում էին վերադառնալ իրենց հայրենիքը և վերակառուցել այն տաճարը, որը կործանեց Նաբուգոդոնոսորը իր բաբելական բանակի հետ: Շատերը վերադարձան և խանդավառությամբ սկսեցին կառուցել, սակայն որոշ ժամանակ անց կորցրին իրենց հետաքրքրությունը՝ անձնական շահերի և տեղա-

ցիների կողմից խիստ հակառակության պատճառով: Անգե և Զաքարիա մարգարեների և այլ առաջնորդների մարգարեությունները կրկին բորբոքեցին Աստծո տունը միաբան կառուցելու ցանկությունը ժողովրդի մեջ:

Այնուամենայնիվ, ամենակարևոր հարցը հետևյալն է. արդյո՞ք մարգարեն խոսում էր այն տաճարի մասին, որը նրանք, ի վերջո, ավարտեցին, թե՞ նա խոսում էր այլ տաճարի մասին: Հետագայում Հիսուսն ասաց. «Քանդե՛ք այդ տաճարը, և երեք օրում կկանգնեցնեմ այն» (Հովհաննես 2.19): Թեև այդ պահին Նա կանգնած էր տաճարի մեջ, բայց դրա մասին չէր խոսում, այլ՝ Իր մարմնի տաճարի: Կարելի՞ է արդյոք նույնը ասել նաև Անգեի մարգարեության մասին:

Աստվածաշնչի մեկնիչները և պատմաբանները տեղեկացնում են, որ Իսրայելի յոթանասունամյա գերությունից հետո վերակառուցված տաճարը չէր գերազանցում Սողոմոնի տաճարի մեծությունը՝ թե՛ իր տեսքով, թե՛ Աստծո հայտնված ներկայությամբ: Ինչ վերաբերում է տաճարի արտաքին տեսքին, նույնիսկ հարյուրավոր տարիներ անց, երբ Հերովդեսը գեղեցկացրեց տաճարը, այն, միևնույն է, Սողոմոնի կառուցած տաճարից ավելի փառավոր չէր համարվում: Եվ ինչ վերաբերում է Աստծո ներկայությանը, երբ Սողոմոնն ընծայեց իր կառուցած տաճարը, Աստծո փառքն այնքա՜ն մեծ էր, որ մի թավ ամպ լցրեց ամբողջ շինությունը, և քահանաները չկարողացան շարունակել իրենց ծառայությունը: Պատմությունը ոչինչ չի ասում մեզ Աստծո ներկայության այդպիսի ուշագրավ դրսևորման մասին վերակառուցված տաճարում:

Փարիսեցիները սխալ հասկացան Հիսուսի խոսքերը տաճարը կործանելու և երեք օրում վերականգնելու մասին, քանի որ նրանք ենթադրում էին, որ խոսքը կառուցված տաճարի մասին է: Նույն կերպով, եթե մենք սահմանափակենք Անգեի խոսքերը՝ վերագրելով դրանք կառուցված տաճարին, սխալ կհասկանանք դրանց իմաստը:

Ի՞նչ տաճարի մասին է նա խոսում, և ո՞ր ժամանակահատվածի: Պողոսը հայտարարում է. «Մի՞թե դուք չեք հասկանում, որ *բոլորդ միասին* Աստծո տաճարն եք, և որ Աստծո Հոգին ապրում է ձեզանում» (Ա Կորնթացիների 3.16, NLT): Նույն Հոգին, որը լցրեց Սողոմոնի տաճարը, ապրում է մեզանում Իր լիությամբ՝ հավաքական առումով: Ես համոզված եմ, որ Անգեն գրում է հենց այս տաճարի մասին, և որ վերջին տաճարը եկեղեցին է: Դրա փառքը (Աստծո ներկայության և զորության մեծությունը) ավելին է անցյալում կառուցված տաճարի փառքից: Պողոսը գրում է. «Եթե այն օրենքը, որն անհայտացավ, եկել էր փառքով, ապա այս նոր ճանապարհը... շատ ավելի մեծ փառք ունի» (Բ Կորնթացիների 3.11, NCV):

Մտածե՛ք այն փառքի (մեծության, զորության) մասին, որը հայտնվեց Հին կտակարանում: Մովսեսի երեսն այնպես էր փայլում Աստծո մեծ փառքի շնորհիվ, որ նա պետք է քող կրեր՝ այդ փայլը ծածկելու համար: Երբ կառուցվեց խորանը, Աստծո ներկայությունը հայտնվեց այնքան զորավոր կերպով, որ ոչ ոք չէր կարողանում մոտենալ: Երբ Սողոմոնը կառուցեց և ընծայեց տաճարը, Աստծո հայտնված ներկայությունը կրկին այնքան մեծ էր, որ քահանաները չկարողացան շարունակել իրենց ծառայությունը: Նրա փառավոր ներկայությունը զարմանալի և ակնածալի էր: Այնուամենայնիվ, Պողոսի խոսքերով՝ «այդ առաջին փառքն ընդհանրապես փառավոր չէր՝ նոր ճանապարհի փառքի մեծության համեմատ» (Բ Կորնթացիների 3.10, NLT):

Իսկ ո՞ր ժամանակաշրջանի մասին է խոսքը: Արդյո՞ք Անգեն խոսում է եկեղեցու ամբողջ ընթացքի մասին՝ սկզբից մինչև վերջ, այսինքն՝ Հիսուսի համբարձումից մինչև երկրորդ գալուստը:

Կրկի՛ն կարդացեք Աստծո այն խոսքերը, որոնք գրի է առել Անգե մարգարեն.

> «Եվս մեկ անգամ (մի քիչ ժամանակ անց) Ես կշարժեմ երկինքը և երկիրը, ծովը և ցամաքը, և Ես կշարժեմ բոլոր ազգերը, և նրանք կգան Բոլոր Ազգերի Փափագի մոտ, և Ես կլցնեմ այս տաճարը փառքով» (Անգե 2.6,7,9, NKJV):

Այն փառքը, որի մասին Նա խոսում է, կհայտնվի նույն ժամանակ, երբ Նա շարժի ամեն ինչ: Եբրայեցիների թղթի հեղինակը հաստատում է սա. «Նա ևս մեկ խոստում է տալիս. «Եվս մեկ անգամ Ես կշարժեմ ոչ միայն երկիրը, այլև երկինքը»: Սա նշանակում է, որ արարչագործությունն ամբողջությամբ կշարժվի և կհեռացվի, որպեսզի մնան միայն անշարժ բաները» (Եբրայեցիների 12.26,27, NLT):

Եբրայեցիների թուղթը գրվել էր մ.թ. 68 թվականին՝ շատ ավելի ուշ այն իրադարձություններից, որոնք ես նկարագրեցի նախորդ գլխում, այսինքն՝ այն, որ հիվանդներին դնում էին Երուսաղեմի փողոցներում, ամբողջ քաղաքներ դառնում էին Տիրոջը, ամբողջ տարածաշրջաններ լսում էին Աստծո Խոսքը և այլն: Նշանակում է՝ Եբրայեցիների թղթում գրված խոստումը չի վերաբերում Գործք առաքելոց գրքի ժամանակահատվածին. այն վերաբերում է ապագային՝ ավարտին մոտ ժամանակահատվածին, երբ արարչագործությունն ամբողջությամբ շարժվելու է: Խոսքը վերջին սերնդի մասին է, որը տեսնելու է Տեր Հիսուս Քրիստոսի վերադարձը:

Գոյություն ունի մի հաստատված օրինաչափություն, որը կարելի է

տեսնել ամբողջ Աստվածաշնչում. *Աստված միշտ պահում է լավագույնը վերջի համար: Գրված է. «Մի բանի վախճանը լավ է նրա սկզբից» (Ժողովող 7.8):* Հիսուսը ցույց է տալիս այս օրինաչափությունը Կանայի հարսանիքի ժամանակ՝ պահելով լավագույն գինին վերջի համար: Ավելի ուշ Նա հայտարարում է. «Ինձ հավատացողը, այն գործերը, որ Ես գործում եմ, նա էլ կգործի, և նրանցից է՛լ ավելի մեծ բաներ կգործի» (Հովհաննես 14.12): Ինչո՞ւ «ավելի մեծ»-ը պետք է տեղի ունենար այն բանից հետո, երբ Հիսուսը Երկինք համբարձվեր: Որովհետև Նա միշտ պահում է լավագույնը վերջի համար:

Նույնը ճշմարիտ է եկեղեցու դեպքում. վերջը լինելու է ավելի լավը, քան սկիզբը: Գործք առաքելոց գիրքը ցույց է տալիս ակնառու սկիզբ. մի՞թե մենք պետք է հավատանք, որ եկեղեցու ժամանակաշրջանի ավարտը երկրի վրա լինելու է պակաս փառավոր, պակաս զորավոր և պակաս ազդեցիկ, քան սկիզբը: Հիշեք, որ Պողոսը վճռորոշ կերպով պնդում է. «Որ ձեր հավատքը մարդկանց իմաստությամբ չլինի, այլ՝ Աստծո զորությամբ», և կրկին՝ «Որովհետև Աստծո արքայությունը ոչ թե խոսքով է, այլ՝ զորությամբ» (Ա Կորնթացիների 2.5 և 4.20): Զորությունը՝ այս երկրի վրա հայտնված Աստծո թագավորության կարևորագույն հատկանիշներից է:

Վերականգնում

Սուրբ Հոգին ավելի շատ աստվածաշնչյան հատվածներ ցույց տվեց ինձ, բայց նույնիսկ համաձայն այն մի քանի հատվածների, որոնցով կիսվեցի ձեզ հետ, ակնհայտ է, որ մեր՝ հավատացյալներիս տեսիլքը պետք է ընդլայնվի, և նույնիսկ՝ գերազանցի այն, ինչ մենք կարդում ենք Գործք առաքելոց գրքում: Հետաքրքիր է նշել, որ Պետրոս առաքյալը, լցված Սուրբ Հոգով, ազդարարեց.

> «Նա կրկին կուղարկի ձեզ Հիսուսին՝ ձեր նշանակված Մեսիային: Որովհետև Նա պետք է մնա Երկնքում, մինչև ամեն ինչի վերջնական վերականգնման ժամանակը, ինչպես որ Աստված շատ վաղուց խոստացել է Իր սուրբ մարգարեների միջոցով» (Գործք 3.20,21, NLT):

Ավելի ուշադրությամբ դիտարկենք այս խոսքերը: Առաջինը՝ Հիսուսը պետք է մնա Երկնքում, մինչև որ ինչ-որ բան տեղի ունենա: Նշանակում է՝ Նա չի կարող վերադառնալ, քանի դեռ չի կատարվել Հոր խոստումը: Ո՞րն է այդ խոստումը, որի մասին խոսում էին նաև մար-

գարեները: Դա տաճարի վերականգնումն է: Այլ կերպ ասած՝ Աստծո շքեղությունը, մեծությունը, հարստությունը, կարողությունը, առատությունը, պատիվը և վեհությունը այլևս սակավ չեն լինի այս երկրի վրա, այլ կհայտնվեն ամբողջական կերպով՝ Իր տաճարում և Իր տաճարի միջոցով:

Արդյո՞ք սա տեղի է ունենում մեր օրերում: Արդյո՞ք եկեղեցին այնքան զորավոր է, որ մենք ականատես ենք լինում ամբողջ քաղաքների և տարածաշրջանների փրկությանը: Արդյո՞ք հիվանդանոցները դատարկվում են: Արդյո՞ք կույր աչքերը բացվում են, կաղ ծնվածները ցատկոտում և փառաբանում են Աստծուն: Արդյո՞ք շենքերը ցնցվում են մեր աղոթքների ուժից: Արդյո՞ք մենք ունենք այնպիսի առատություն, որ ծառայությունները և եկեղեցիներն անարգել կարող են հասնել կորսվածներին ցանկացած երկրում: Արդյո՞ք եկեղեցու մարդիկ չունեն կարիքներ: Միգուցե հենց սա է պատճառը, որ Անգե մարգարեն հարցնում է.

> «Ինչ-որ մեկը հիշո՞ւմ է այս տունը՝ Տաճարը՝ նախկին շուքով: Ինչպիսի՞ն է այն ձեզ համար հիմա՝ նախկինի համեմատ: Երևի թե այն *ոչնչի* պես է թվում» (Անգե 2.3, NLT):

Անգեն տալիս է այս հարցն իր առջև կանգնած մարդկանց, սակայն այսօր Աստված տալիս է նույն հարցը մեզ: Եկեք անկեղծ լինենք. Գործք առաքելոց գրքի համեմատ, Նրա հայտնված ներկայությունը, որը վերապրում ենք այսօր, *ոչնչի* պես է թվում: Եթե մենք չհասկանանք այս ճշմարտությունը, ջերմեռանդորեն չենք ձգտի, որ Նրա մեծ զորությունը վերականգնվի եկեղեցում: Փոխարենը, կբավարարվենք անզոր եկեղեցի լինելով:

Մի՞թե կարող ենք թույլ տալ մեզ հանդուրժել միասնության բացակայությունը, որի պատճառը մեզ տանջող կրիպտոնաքարն է: Խնդրո՛ւմ եմ, խնդրո՛ւմ եմ, լսե՛ք ինձ. մենք պետք է ձգտենք մեկ լինել Նրանում, և դա կարող է տեղի ունենալ միայն՝ եթե հավատանք և հնազանդվենք Նրա Խոսքին:

Այժմ, երբ հստակ տեսանք մեր նպատակը, վերադառնանք կրիպտոնաքարի բացահայտմանը, որը խոչընդոտում է մեր առաջընթացին՝ թե՛ անհատապես, թե՛ որպես հավատացյալների համայնքի:

գործնական քայլ

Քանի դեռ չգիտենք, թե ինչ է հնարավոր մեզ համար, մենք չենք դժգոհի այն քչի պատճառով, որը սովորական ենք համարում: Բայց այժմ՝ այս գլուխը կարդալուց հետո, դուք գիտեք, թե ինչ կարող եք ունենալ: Այնպես որ, պետք է հստակ որոշում կայացնեք. կա՛մ ընդունել այն թույլ, անզոր և ազդեցությունից զուրկ կյանքը, որը ծանոթ է եկեղեցու մեծամասնությանը, կա՛մ շարունակ ձգտել այն զորավոր կյանքին, որը հայտնում է Հիսուս Քրիստոսի ամբողջական և անսքող մեծությունը:

Քանի դեռ վստահ չեք, որ այս ամենը հնարավոր է, դուք ոչինչ չեք ձեռնարկի: Սակայն եթե ոչինչ չանեք, դուք կապրեք հարաբերական անզորության մեջ: Նշանակում է՝ առաջին քայլը դեպի գործողությունը այն է, որ դուք որոշում կայացնեք վստահել Աստծո Խոսքին և այն տեսիլքին, որը Նա տվել է ձեզ:

Եփեսացիների թղթում գրված է, որ Հիսուսը մաքրում է մեզ Իր Խոսքով: Մենք կարող ենք օգտագործել մեր խոսքերը, որպեսզի համագործակցենք Նրա հետ մեր մաքրման ընթացքի մեջ: Գրե՛ք հռչակումներ այն զորավոր կյանքի մասին, որի համար դուք կանչված եք, օրինակ՝ «Հիսուսը լցրեց ինձ Իր զորության Հոգով՝ ինձ շրջապատող մարդկանց փոխելու համար», կամ՝ «Աստված բարձրացնում է Իր մեծությունը իմ ներսից՝ կորսվածներին հասնելու համար», կամ՝ «Ես օծված եմ, որ ազդեցություն թողնեմ իմ աշխատակիցների վրա և փոխեմ իմ աշխատավայրը»: Սկսեք հռչակել այս ճշմարտությունները ձեր կյանքում ամեն օր: Դուք կտեսնեք, որ գործելու վստահությունն օր օրի կավելանա ձեր մեջ:

ԳՈՒՄԱՐԱԿԱՆ ԳՈՒՅՆԵՐ

ԲԱԺԻՆ 2

8

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՈՒԽՏ

Հաջորդ մի քանի գլուխներում կարող է թվալ, թե մենք մի փոքր շեղվում ենք մեր ընթացքից, բայց հավաստիացնում եմ՝ այն բանից հետո, երբ հաստատենք մի քանի կարևոր ճշմարտություն, մենք կշարունակենք խոսել այն հոգևոր կրիպտոնաքարի մասին, որը կեղեքում է եկեղեցին:

Սովորական ամուսնությո՞ւն

Դիտարկենք մի պատմություն, որը, համոզված եմ, մեր սուրբ և բացառիկ հարաբերություններն Աստծո հետ պատկերում է ավելի լավ, քան ցանկացած այլ օրինակ, որը կարող եմ մտաբերել:

Զասթին անունով մի երիտասարդ արդեն մեկ տարի է հանդիպում է Անջելա անունով մի աղջկա հետ: Զասթինի կարծիքով, այդ աղջիկը գեղեցիկ և հրաշալի անձնավորություն է: Նա լրջորեն սիրահարված է նրան և ցանկանում է ամբողջ կյանքն անցկացնել նրա հետ:

Զասթինը հատուկ երեկո է կազմակերպում: Երբ գալիս է որոշիչ պահը, նա ծնկի է իջնում և բացում շքեղ ադամանդով մատանու փոքրիկ տուփը:

Անջելան համակվում է զգացմունքներով: Հուզված՝ նա ծածկում է երեսը, և ուրախության արցունքները հոսում են նրա այտերով: Չկարողանալով զսպել զգացմունքները՝ նա լուռ, բայց ոգևորությամբ գլխով է անում: Մի փոքր հանդարտվելով՝ ուրախությամբ ասում է. «Այո՛, այո՛, այո՛, ես կամուսնանա՛մ քեզ հետ»:

Հեքիաթային հարսանիքը տեղի է ունենում մի քանի ամիս անց: Դրան հետևում է մեղրամիսը՝ լի սիրով, ծիծաղով, արկածներով և ապագայի մասին երազանքներով: Նրանք ունեն այն ամենը, ինչ կարող է երազել երիտասարդ զույգը, և նույնիսկ՝ ավելին:

Ժամանակն անցնում է, և Զասթինը հայտնաբերում է, որ Անջելան շատ ավելի զարմանալի անձնավորություն է, քան ինքը կարծում էր: Նրան դուր են գալիս արկածներ, նա սիրում է զվարճանալ, ունի արտակարգ հումորի զգացում: Նա հրաշալի հարաբերություններ ունի Զասթինի ընտանիքի հետ և հաշտ է գրեթե բոլորի հետ: Նա խելացի է, սրամիտ, և թվում է՝ միշտ մեկ քայլ առաջ է Զասթինից: Նա ստեղծարար է, արվեստասեր է և վառ երևակայություն ունի: Զասթինը ցնցված է այն գեղեցիկ փոփոխություններով, որոնք շարունակ անում է իրենց տանը: Անջելան շատ ավելի լավ խոհարար է, քան ինքը: Եվ մեկ հրաշալի առավելություն ունի՝ նա կոկիկ է և կազմակերպված: Ավելորդ է ասել, որ Զասթինը հաճույքով է ընդունում նրա ներդրումն իրենց նորաստեղծ միության մեջ: Նրանց ապագան շատ պայծառ է թվում:

Անցնում են ամիսներ: Նրանց ամուսնական կյանքն արդեն կայուն ռիթմի մեջ է ընկնում: Մի օր երեկոյան Զասթինը աշխատանքից տուն է վերադառնում և սպասում է, որ կիանդիպի Անջելային ու կստանա նրա՝ արդեն ավանդական դարձած գրկախառնությունը և համբույրը: Նա որոնում է Անջելային, սկզբում՝ հյուրասենյակում, հետո՝ խոհանոցում, տան ետնամասի բակում, և վերջապես՝ ննջասենյակում, որտեղ էլ գտնում է նրան:

Այնպիսի տպավորություն է, որ նա պատրաստվում է դուրս գնալ տանից: Սենյակով մեկ տարածվել է ռոմանտիկ երաժշտությունը և արդեն ծանոթ դարձած օծանելիքի բուրմունքը: Ի զարման Զասթինի, Անջելան շպարված է և հագնում է մի գեղեցիկ զգեստ, որը նա կրել է մեկ անգամ, երբ Զասթինը հրավիրել է նրան իրենց սիրելի ռեստորաններից մեկը:

Անջելան մեջքով կանգնած է ամուսնուն և դեռ չի տեսել, որ նա սենյակ է մտել: Զասթինը խուճապի մեջ է. *«Մի՞թե մենք ծրագրել էինք ընթրել այս երեկո, իսկ ես մոռացել եմ: Ես պետք է ծաղկի խանութ գնայի և վարդերի փունջ գնեի նրա համար»:*

Նա խախտում է լռությունը:

- Ողջո՛ւյն, թանկագի՛նս:

Մի փոքր հանկարծակիի եկած՝ Անջելան պատասխանում է.

- Ողջո՛ւյն, սիրելի՛ս:

Նա սկսում է խոստովանությամբ.

- Միգուցե ես ինչ-որ բան եմ մոռացել: Մենք ծրագրե՞ր ունեինք այս երեկո:

- Ո՛չ, սիրելի՛ս, - անմիջապես պատասխանում է նա:

Մի փոքր շփոթված՝ Զասթինն արագորեն փորձում է գնահատել իրավիճակը: Նա եզրակացնում է, որ Անջելան անակնկալ է պատրաստել իր համար և մտածում է. *«Միգուցե մենք հատուկ ընթրիք ենք ունենալու տանը, կամ անակնկալ երեկո՝ քաղաքից դուրս»:* Մինչ այդ Անջելան արդեն լիովին ավարտում է հագնվելը և մյուս պատրաստությունները:

- Սքանչելի տեսք ունես այս երեկո, - հաճոյախոսում է Զասթինը:

- Շնորհակալություն, սիրելի՛ս, - պատասխանում է նա:

Զասթինը, դեռ չհասկանալով, թե ինչ է տեղի ունենում, հարցնում է.

- Ուզում ես, որ ես նո՞ւյնպես հագնվեմ:

Անջելան, արդեն մի փոքր շփոթված, պատասխանում է.

- Կարող ես, եթե ուզում ես:

Զասթինը, դեռ փորձելով հասկանալ, թե ինչ է տեղի ունենում, ասում է.

- Ես պետք է նույնքան լավ տեսք ունենամ, որքան դու: Ես չեմ ուզում լինել իմ աշխատանքային հագուստով, երբ դու այդքան գեղեցիկ հագնված ես:

Ի վերջո, Անջելան, փարատելու համար այդ անհարմար խոսակցությունը, ասում է.

- Սիրելի՛ս, ես պայմանավորված եմ այս երեկո:

- Ես գիտեմ և այդ պատճառով էլ ուզում եմ հագնվել քեզ համար, - Զասթինն արդեն լիովին շփոթված է:

Փորձելով պարզաբանել իրավիճակը՝ Անջելան ասում է.

- Ո՛չ, սիրելի՛ս, ես պայմանավորված եմ Թոնիի հետ: Մենք ընթրելու ենք, կինոթատրոն ենք գնալու և գիշերելու ենք հյուրանոցում: Ես կվերադառնամ մինչև վաղը կեսօրը:

- Ո՞վ է Թոնին, - բացականչում է Զասթինը:

- Նա իմ զուգընկերն է եղել բարձր դասարաններում, - գործնական ոճով պատասխանում է նա:

- Ի՞նչ: Դու չե՛ս կարող հանդիպման գնալ նրա հետ:

- Ինչո՞ւ չեմ կարող:

- Որովհետև մենք ամուսնացած ենք. մենք նվիրվել ենք մեկս մյուսին և չենք ժամադրվում այլ մարդկանց հետ:

- Դու լո՞ւրջ ես խոսում, - առարկում է Անջելան, - կան շատ տղա-

ներ, որոնց հետ ես դեռ մտերիմ եմ: Քո կարծիքով, ես պետք է թողնեմ իմ հարաբերությունները նրանց հետ, միայն որովհետև մենք ամուսնացա՞ծ ենք:

- Այո՛, ամուսնացած մարդիկ հենց այդպես են վարվում: Նրանք նվիրվում են միայն այն մարդուն, ում հետ ամուսնացած են, - պատասխանում է Ձասթինը վիրավորված և բարկացած ձայնով:

- Սպասի՛ր, սիրելի՛ս, - ասում է Անջելան՝ փորձելով և՛ պարզաբանել, և՛ հանդարտեցնել իրենց առաջին լուրջ անհամաձայնությունը: - Դու առաջինն ես իմ կյանքում: Ես անցկացնում եմ իմ ժամանակի մեծ մասը քեզ հետ: Ես սիրում եմ քեզ շատ ավելի, քան իմ բոլոր հին զուգընկերներին: Բայց դու չես կարող ակնկալել, որ այլևս չեմ հանդիպելու նրանց: Ես տարիներ շարունակ մտերիմ եմ եղել նրանց հետ: Ես դեռ սիրում եմ նրանց և ուզում եմ ժամանակ անցկացնել նրանց հետ: Մի՞թե դա սխալ է:

Հավանաբար, դուք հասկացաք, որ այս պատմությունը լավ ավարտ չունեցավ:

Համեմատություն

Ես գիտեմ, որ այս պատմությունն անհեթեթ է թվում, բայց, ի պաշտպանություն Անջելայի փաստարկի՝ թույլ տվեք մի քանի հարց տալ: Չէ՞ որ Ձասթինը առաջինն է նրա կյանքում: Չէ՞ որ նա սիրում է Ձասթինին ավելի, քան իր մյուս զուգընկերներին: Մի՞թե նա բարձր չի գնահատում իրենց հարաբերությունները: Մի՞թե նա չի անցկացնում իր ժամանակի մեծ մասը նրա հետ: Մի՞թե նա հրաշալի կին չէ՝ շատ առումներով:

Մտածե՛ք այս կերպով. Ձասթինը կարող էր ամուսնանալ մի անփույթ աղջկա հետ, ով հոգ չէր տանի իրենց տան մասին և կերակուր պատրաստել չէր իմանա: Մի աղջկա հետ, ով կյանքում չէր ունենա ոչ մի շարժառիթ և ոչ մի ավանդ՝ իրենց միության մեջ: Մի՞թե նա ակնկալում էր, որ Անջելան պետք է կատարյալ լիներ ամեն ինչում: Նա պարզապես պետք է ժամանակ առ ժամանակ կիսեր նրան այլ տղամարդկանց հետ: Նա կստանար Անջելայի ժամանակի ինն սուն տոկոսը: Ինչո՞ւ էր նա այդքան բարկանում:

Իհարկե, մեծամասնության համար այս հարցերն անհեթեթ են:

Այնպիսի տպավորություն է, որ Անջելային ոչ ոք չէր պատմել ամուսնության հիմնարար սկզբունքների մասին: Նա չգիտեր, որ ամուսնությունը ուխտ է տղամարդու և կնոջ միջև, որի էությունն է՝ նվիրվել միմիայն մեկը մյուսին: Նա ամուսնացավ՝ ունենալով այնպիսի պատկե-

րացումներ, որոնք տարբերվում էին Ձասթինի պատկերացումներից: Անջելային թվում էր, թե իր դիրքորոշումը հաճելի, օգտակար և գործնական էր: Նա հրաշալի կյանք կունենար իր տանը և կպահպաներ իր մյուս հարաբերությունները՝ որպես առավելություն: Սակայն նրա դիրքորոշումը խախտում էր ամուսնության սուրբ ուխտը:

Ավելի պարզեցնենք այս ճշմարտությունը: Երբ կինը գեղեցիկ հարսանեկան զգեստ է հագնում և քայլում է նստարանների շարքով՝ եկեղեցում կամ այլ վայրում, որտեղ տեղի է ունենում ամուսնական արարողությունը, մի կարևոր բան է ասում դրանով. նա հրաժեշտ է տալիս մտերիմ հարաբերություններին այս երկրի վրա ապրող ցանկացած տղամարդու հետ: Նա վերջ է դնում բոլոր նախկին հարաբերություններին այլ զուգընկերների հետ, ինչպես նաև հայտարարում է, որ այդ օրվանից ի վեր չի ունենալու նոր հարաբերություն: Նույնը ասում է այն տղամարդը, ով սպասում է նրան:

Օգտագործենք միևնույն օրինակը մեր կյանքում: Ինչպե՞ս դուք կվարվեիք, եթե լինեիք նման իրավիճակում, որ հայտնվել էր Ձասթինը: Կամ եթե այն անձնավորությունը, ում հետ պատրաստվում եք ամուսնանալ, ասեր ձեզ նախօրոք՝ երբ դուք դեռ նշանադրված եք, որ այդպես է վարվելու ձեզ հետ միաբանվելուց հետո: Դուք կամուսնանայի՞ք նրա հետ:

Չեմ կարծում: Դուք կասեիք. «Ո՛չ մի դեպքում»:

Ո՞րն է ձեր միանշանակ պատասխանի պատճառը: Այն, որ դուք չէիք ցանկանա ուխտի մեջ մտնել այլ պայմաններով: Դուք չէիք կամենա ձեր կյանքն ամբողջությամբ նվիրել այնպիսի հարաբերության, որում ձեր կողակիցը լիովին նվիրված չի լինելու ձեզ:

Այսպիսով, դուք ոչ մի դեպքում չէիք ամուսնանա այդպիսի պայմաններով, և չէիք անտեսի այդ անընդունելի վարքն ամուսնանալուց հետո: Եկեք անկեղծ լինենք և տանք հետևյալ հարցը. «Կարո՞ղ ենք արդյոք հավատալ, որ Հիսուսը վերադառնալու է Անջելայի պես հարսի համար»: Մի պահ կա՛նգ առեք և մտածե՛ք այս մասին. Հիսուսի և մեր հարաբերությունները համեմատվում են ամուսնու և կնոջ հարաբերությունների հետ:

«Ինչպես որ Սուրբ գիրքն է ասում. «Տղամարդը թողնում է իր հորը և մորը և միանում է իր կնոջը, և երկուսը միանում են՝ մեկ դառնալով»: Դա մեծ առեղծված է, բայց օրինակ է, որը ցույց է տալիս, որ Քրիստոսը և եկեղեցին մեկ են» (Եփեսացիների 5.31,32, NLT):

Աստված հենց սկզբից հաստատեց ամուսնական ուխտը, որպեսզի պատկերեր մեր հարաբերություններն Իր հետ: Նոր կտակարանում Հի-

սուսը պատկերված է որպես փեսա, իսկ եկեղեցին՝ որպես Քրիստոսի հարս: Այդ դեպքում, ո՞րն է պատճառը, որ մենք ոչ միայն արդարացնում ենք Անջելայի վարքը հիշեցնող վերաբերմունքը մեր Փեսայի հանդեպ, այլև երբեմն խրախուսում ենք այն: Հակոբոս առաքյալը գրում է այս մասին: Հետևյալ մի քանի խոսքերում նա դիմում է միայն նրանց, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են:

> «Ձեր շարժառիթները լիովին սխալ են. դուք ուզում եք միայն այնպիսի բաներ, որոնք հաճույք են պատճառում ձեզ: *Շնացողնե՛ր:* Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ Աստծո թշնամին է դարձնում ձեզ: Ես կրկնում եմ. եթե ուզում եք ընկեր լինել այս աշխարհին, դուք Աստծո թշնամին եք դարձնում ձեզ: Կարծում եք՝ Սուրբ գրքերն անիմա՞ստ են: Դրանցում գրված է, որ Աստված նախանձավոր է, որ այն Հոգին, որը Նա դրել է մեր մեջ, հավատարիմ լինի Իրեն: Մոտեցե՛ք Աստծուն, և Աստված կմոտենա ձեզ: Լվացե՛ք ձեր ձեռքերը, մեղավորնե՛ր. մաքրե՛ք ձեր սրտերը, որովհետև ձեր նվիրվածությունը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև: Թող արցունքներ լինեն ձեր արածի համար: Թող տրտմություն և խորը վիշտ լինի» (Հակոբոս 4.3-5,8,9, NLT):

Այս խոսքերը խիստ են: Մեր ժամանակներում, երբ անհավատարմությունը փոխհարաբերությունների մեջ լայնորեն տարածված է, թվում է՝ դրանք շատ կտրուկ են, և նույնիսկ՝ չափազանցված: Երբ դեռահաս էի, ես *չափազանցնելու* վատ սովորություն ունեի: Չափազանցնում էի գրեթե ամեն ինչ: Արդյունքում, իմ ընտանիքի անդամները և ընկերներն այլևս լուրջ չէին վերաբերվում ինձ:

Կարծում եմ՝ բոլորս ենք մեղավոր եղել՝ այս կամ այն չափով: Ծնողները հաճախ են ասում իրենց փոքրիկ երեխաներին. «Եթե կրկին այսպես վարվես, կպատժվես»: Միգուցե դա ազդում է առաջին կամ երկրորդ անգամ, բայց, ի վերջո, երեխան շարունակում է չհնազանդվել և պարզում է, որ այդ խոսքերին ոչինչ չի հետևում: Արդյունքում, երեխան դադարում է լրջորեն վերաբերվել իր ծնողների ասածին: Նույնը տեղի է ունենում դպրոցում, աշխատավայրում, կառավարության մեջ, ընկերական շրջապատում և ընտանիքում: Չափազանց հաճախ մենք թեթևորեն ենք վերաբերվում այն զգուշացումներին, որոնց նպատակը մեզ պաշտպանելն է:

Ցավոք, Աստվածաշնչի զգուշացումներին ցուցաբերում ենք միևնույն

վերաբերմունքը: Մենք պետք է հիշենք, որ Աստված ասում է այն, ինչ նկատի ունի, և Նա նկատի ունի այն, ինչ ասում է: Կարևոր է հիշել, որ Սուրբ գիրքն ամբողջությամբ ոգեշնչված է Աստծուց (տե՛ս Բ Տիմոթ. 3.16): Կարդալով Հակոբոսի գրածը՝ մենք պետք է հաշվի առնենք, որ դա Աստծո Խոսքն է:

Եթե իսկապես լրջորեն վերաբերվենք այս հատվածին, այն առողջ երկյուղ կառաջացնի մեր մեջ: Այն քրիստոնյան, որի նվիրումը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև, *շնացող* է: Սա խիստ բառ է: Գոյություն ունեն շատ մեղքեր, որ կողակիցներից մեկը կարող է գործել մյուսի հանդեպ՝ բամբասելը, ստելը, գողանալը, բղավելը, կոպիտ վերաբերվելը և այլն: Դրանցից ամեն մեկը կործանարար ազդեցություն է թողնում փոխհարաբերությունների վրա, և դրանց չի կարելի թեթևորեն վերաբերվել, սակայն չկա ավելի ծանր մեղք, քան շնությունը: Ահա թե ինչու էր Ձասթինն այդքան ցնցված և բարկացած իր կնոջ վրա: Անջելան գործել էր ամենածանր մեղքը նրա դեմ, սակայն իր վարքը բոլորովին սխալ չէր համարում:

Հակոբոս առաքյալը շարունակում է՝ ասելով, որ հոգևոր շնություն գործելիս մեզ դարձնում ենք Աստծո թշնամին: Սա սարսափելիորեն լուրջ իրավիճակ է, և հենց մենք ենք առաջացնում այն: Աստված չի կամենում, որ մենք Իր թշնամիները լինենք, քանի որ Նա խորապես սիրում է մեզ: Այնուամենայնիվ, երբ մեր սերն ու նվիրումը ուղղում ենք այս աշխարհի իրողություններին և ճանապարհներին, մենք հոժարաբար կանգնում ենք Նրա թշնամիների շարքում:

Կարելի՞ է արդյոք թեթևորեն վերաբերվել այս խոսքերին: Կարելի՞ է արդյոք ձևացնել, որ Հակոբոսի թղթի այս հատվածը Նոր կտակարանում չէ, և անտեսել այն: Հակոբոսը միակ հեղինակը չէր, ով գրում էր այս մասին: Մենք կտեսնենք, որ այս մասին գրում էր Պողոսը, որի հայտնությունը շնորհքի մասին ավելին էր, քան Նոր կտակարանի մյուս հեղինակներինը: Այս մասին գրում էր նաև սիրո առաքյալ Հովհաննեսը: Պետրոսը և Հուդան նույնպես գրում էին այս մասին: Բայց ամենակարևորը՝ հարությունից հետո Հիսուսն ասում էր նույնը Ասիայի եկեղեցիներին:

Հաջորդ գլուխներում մանրամասնորեն ցույց կտանք, թե ինչպես է հոգևոր շնությունը դարձնում մեզ Աստծո թշնամին: Մենք կտեսնենք, որ այս վերաբերմունքը և վարքագիծը հենց այն կրիպտոնաքարն է, որի մասին խոսում ենք:

գործնական քայլ

Աստված նախանձավոր է: Մեզնից շատերը վաղուց գիտեն, որ Աստվածաշունչը սովորեցնում է այս մասին: Այնուամենայնիվ, շատ քրիստոնյաներ ժամանակ չեն հատկացրել, որ մտածեն այս մասին, կամ էլ հավատում են, որ այս ճշմարտությունը վերաբերում է միայն Հին կտակարանին: Դա բացահայտ սուտ է: Ընդհակառակը՝ Հիսուսի զոհը լավագույնս ցույց է տալիս, որ Նրա սերը մեր հանդեպ նման է հավատարիմ փեսայի սիրուն:

Անկասկած, ինքներս ենք ցանկանում, որ Աստված սիրի մեզ նախանձավոր կերպով, ոչ թե անտարբերությամբ, և մենք պետք է խնդրենք Նրան շնորհք տալ մեզ, որ սիրենք Նրան նույն եռանդով և ընծայմամբ: Միայն այս դեպքում է հնարավոր մտերմություն ունենալ:

Քննե՛ք ձեր սիրտն այսօր: Արդյո՞ք ջերմեռանդորեն սիրում եք Հիսուսին: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն ցույց տալ ցանկացած ձգտում ձեր կյանքում, որը սպառնում է վերածվել Աստծո դեմ շնության: Եթե Նա ինչ-որ բան է հայտնում ձեզ, անհրաժեշտ փոփոխություններ արեք: Նորովի՛ մտորեք ձեր և Հիսուսի բացառիկ հարաբերությունների շուրջ և կրկի՛ն նվիրեք ձեր անձը Նրան՝ ասես նորոգում եք ձեր ամուսնական երդումները:

9

ՇՆՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ԴԵՄ

Հակոբոս առաքյալի խոսքերը *(«Շնացողնե՛ր: Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ՝ Աստծո թշնամին է դարձնում ձեզ»)* խիստ են այն աստիճան, որ դուք հազվադեպ եք լսում դրանք եկեղեցական հավաքույթների և համաժողովների ընթացքում, ինչպես նաև հավատացյալների հետ շփվելիս: Սակայն ինչպե՞ս մենք կարող ենք անտեսել դրանք: Այնպես չէ, որ այս պնդումը մեկուսի է Սուրբ գրքում. ընդհակառակը, այս թեման հաճախ է հանդիպում Աստվածաշնչում:

Եթե ուսումնասիրենք Հակոբոսի խոսքերը և ականջ դնենք դրանցում գտնվող զգուշացմանը, մենք կհեռացնենք ցանկացած շփոթմունք և վախ՝ կապված դրանց հետ: Եկեք կրկին կարդանք այս հատվածը.

> *«Շնացողնե՛ր:* Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ՝ Աստծո թշնամին է դարձնում ձեզ: Ես կրկնում եմ. եթե ուզում եք ընկեր լինել այս աշխարհին, դուք Աստծո թշնամին եք դարձնում ձեզ» (Հակոբոս 4.4, NLT):

Առաջինը՝ Աստված չէ, որ դառնում է մեր թշնամին. մենք ենք թշնամանում Նրա հետ: Երկու տարբերակներն էլ, մեղմ ասած, մտահոգիչ են, սակայն դրանցում կա տարբերություն:

Բոլորս ենք տեսել կոնֆլիկտներ, որոնք առաջացել են մեկ կողմի պատճառով: Այլ կերպ ասած՝ կողմերից մեկը սկսում է կոնֆլիկտը, և մյուսը ակամա ներքաշվում է դրա մեջ, թեև կգերադասեր չլինել դրանում: Օրինակ՝ 1941 թվականին ճապոնացիները որոշեցին ռմբակոծել Փիրլ Հարբորը և դրանով իսկ իրենց դարձրին Միացյալ Նահանգների

թշնամին: Ամերիկան չէր որոշել և չէր կամենում ներքաշվել այդ կոնֆլիկտի մեջ: Այնուամենայնիվ, իր սադրանքի պատճառով Ճապոնիան կրեց ավելի մեծ պետության զայրույթը:

Հակոբոսը խոսում է հենց այս մասին: Աստված չի կամենում դուրս գալ մարդկանց դեմ, առավել ևս՝ Իր զավակների, բայց Նա չի խուսափի կոնֆլիկտից, եթե մենք համառորեն նույնանանք այս աշխարհի հետ: Այս հատվածում երկու անգամ օգտագործվում է «թշնամի» բառը: Հունարենում այդ բառերը համապատասխանաբար «էխտրա»-ն և «էխտրոս»-ն են: Դրանք ունեն միևնույն իմաստը. միակ տարբերությունն այն է, որ առաջին բառը գոյական է, իսկ երկրորդը՝ ածական:

Հնարավո՞ր է, որ անգլերենի թարգմանիչները չափազանց խիստ բառ են օգտագործել: Միգուցե բնագրում «թշնամի» բառն ավելի մե՞ղմ իմաստ ունի: Իրականում, ո՛չ: Մի հունարեն բառարան այս բառերը սահմանում է որպես «թշնամի, թշնամանք և ոխերիմություն» *(«Աստվածաշնչյան բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան»):* Մեկ այլ բառարանում գրված է՝ «ապրել թշնամանքով ինչ-որ մեկի հետ» *(«Հին հունարենի աստվածաշնչյան բառարան»),* և մեկ այլ սահմանում՝ «ինչ-որ մեկի հետ թշնամության վիճակ» *(«Լուվ-Նայդայի հունարեն-անգլերեն բառարան»):* Ես ցույց եմ տալիս սահմանումներ երեք հեղինակավոր բառարաններից, որպեսզի հաստատեմ այն փաստը, որ «թշնամի» բառն այս աստվածաշնչյան խոսքում չարժե փոխարինել այլ բառով: Անչափ կարևոր է, որ մենք հասկանանք այս խոսքի լրջությունը:

Այնուամենայնիվ, կա ևս մեկ փաստ, որն է՛լ ավելի լրջություն է հաղորդում այս հատվածին: Այն, որ Հակոբոսը գրի է առնում այս զգուշացումը, իսկ հետո կրկնում է, նշանակում է, որ նրա ասածը խիստ կարևոր է: Նրա կողմից իր պնդումը կրկնելը հին հրեաների մոտ ընդունված գրական ձև էր: Թեև մենք թարգմանել ենք Նոր կտակարանի ձեռագրերի մեծ մասը հունարենից, առաքյալները, որոնք գրել էին դրանք, հրեա էին:

Ժամանակակից լեզուներում գոյություն ունեն մի քանի միջոցներ՝ բառը կամ արտահայտությունը շեշտադրելու համար: Մենք կարող ենք գրել տեքստը թավատառով, շեղագրով կամ ընդգծել այն, օգտագործել միայն գլխատառեր, նաև բացականչական նշան կամ շեշտ ավելացնել: Մենք օգտագործում ենք բոլոր այս միջոցները, որպեսզի ուղղենք մարդկանց ուշադրությունը կարևոր բառերին կամ արտահայտություններին: Հրեա հեղինակները կրկնակի էին գրում շեշտադրվող բառը կամ արտահայտությունը, և նրանք մշտապես զգուշությամբ էին օգտագործում իրենց բառերը՝ որևէ բան չչափազանցնելու համար:

Այսպիսով, բացի այն, որ Հակոբոսի զգուշացումը լուրջ և խիստ է՝ նաև շեշտադրված է, որպեսզի մենք կարևոր համարենք այն: Այլ կերպ ասած՝ մենք չենք կարող անտեսել նրա զգուշացումը:

Շնացող կանայք

Այսպիսով, ի՞նչ նկատի ունի Հակոբոսը՝ օգտագործելով «շնացողներ» բառը: Առաջինը՝ այս հատվածում նա չի խոսում ամբողջ մարդկության մասին, այլ՝ միայն հավատացյալների: Մենք գիտենք սա, քանի որ նա շարունակաբար նշում էր իր նամակում. «Իմ սիրելի՛ եղբայրներ (և քույրեր)»: Երկրորդը՝ անհավատը ոչ մի դեպքում չի կարող շնություն գործել Աստծո դեմ, քանի որ նա ուխտի մեջ չէ Աստծո հետ:

Օրինակ՝ ես ամուսնացած եմ Լիզա Բիվերի հետ և չեմ կարող անհավատարիմ լինել Ձեյն Սմիթին, քանի որ ամուսնական ուխտ չեմ կնքել նրա հետ:

Աստծո դեմ կարող են շնություն գործել միայն նրանք, ովքեր ընդունել են Հիսուս Քրիստոսին՝ որպես իրենց Տիրոջ և Փրկչի: Մնացած բոլորն օտար են Աստծո համար, հեռու են Նրանից և չունեն ուխտ Նրա հետ:

«Շնացող» բառը հունարենում «մոյխոս»-ն է: Հունարենում այս բառն օգտագործված է իգական սեռով, սակայն, որպես կանոն, թարգմանվում է արական սեռով: Ավելի ճիշտ կլիներ թարգմանել այն որպես «շնացող կանայք»: Աստվածաշնչի որոշ թարգմանություններում («KJV», «NKJV») փորձ է արվել մեղմել այս անհամապատասխանությունը՝ թարգմանելով այն որպես «շնացող տղամարդիկ և կանայք»: «Նոր կենդանի թարգմանության» («NLT») և մյուս հայտնի թարգմանությունների թարգմանիչները, թվում է, դժվարացել են այս բառի իգական սեռի առումով. միգուցե նրանք չեն ցանկացել, որ ընթերցողները մտածեն, որ Հակոբոսը խոսում էր միայն կանանց մասին: Այնուամենայնիվ, կարդալով նրա նամակի համատեքստն ամբողջությամբ, ակնհայտ է դառնում, որ Հակոբոսը դիմում է բոլոր հավատացյալներին: Աստվածաշնչի մեկնիչները համաձայն են, որ Հակոբոսը չի խոսում միայն կանանց մասին, սակայն թե ինչու այս բառը չի թարգմանվել իգական սեռով, առեղծված է ոչ միայն ինձ համար, այլև՝ Աստվածաշնչի մեկնիչների:

Սա է՛լ ավելի առեղծվածային է այն պատճառով, որ «շնացող կանայք» ձևակերպումը ավելի շատ է համապատասխանում Աստվածաշնչի ընդհանուր համատեքստին: Աստված հաճախ է խոսում Իր

ժողովրդի հետ՝ օգտագործելով ամուսնության փոխաբերությունը և անվանելով Իրեն մեր ամուսինը, իսկ մեզ՝ Իր կինը:

Հին կտակարանի մարգարեները հաճախ էին դիմում այս փոխաբերությանը: Եսային գրում է. «Որովհետև քո Արարիչը քո ամուսինն է. Երկնքի զորքերի Տեր է Նրա անունը» (Եսայի 54.5, NLT): Հետևաբար, երբ Իսրայելի հավատարմությունն Աստծո հանդեպ ի չիք էր դառնում կռապաշտության պատճառով, նա մեղադրվում էր շնության մեջ: Եզեկիելը գրում է. «Ես կպատժեմ քեզ քո... շնության համար» (Եզեկիել 16.38, NLT): Աստված խոսում է Երեմիայի միջոցով. «Դու անհավատարիմ ես եղել Իմ հանդեպ, ո՛վ Իսրայելի ժողովուրդ: Դու նման ես եղել անհավատարիմ կնոջ, որը լքում է իր ամուսնուն: Ես՝ Տերս, խոսեցի» (Երեմիա 3.20):

Ովսե մարգարեի ծառայությունն ամբողջությամբ պատկերում է կնոջ անհավատարմությունն իր ամուսնու հանդեպ: Նա պատվեր ստացավ ամուսնանալ մարմնավաճառի հետ: Այն ուղերձում, որն Ովսեն քարոզեց իր կյանքով, նա խորհրդանշում էր Տիրոջը, իսկ նրա կին Գոմերը՝ Աստծո ժողովրդին: Նպատակն այն էր, որ Իսրայելը տեսներ, որ իրենց շնությունը ոչնչով չէր տարբերվում այն կնոջ արարքից, ով անհավատարիմ է իր ամուսնուն, այն էլ ոչ թե մեկ, այլ՝ մի քանի սիրեկանների հետ: Իսրայելը *«շնացող կին»* էր:

Հովհաննես Մկրտիչը նույնպես օգտագործում է ամուսնության փոխաբերությունը՝ ասելով. «Հարսն ունեցողն է փեսա, բայց փեսայի բարեկամը, որ կանգնած է և լսում է նրան, ուրախությամբ ուրախանում է փեսայի ձայնի համար» (Հովհաննես 3.29): Կրկին, Հիսուսը Փեսան է, իսկ Աստծո ժողովուրդը՝ հարսը:

Հիսուսն անում է նույնը, երբ անվանում է Աստծո ժողովրդին «չար և շնացող ազգ» (տե՛ս Մատթ. 12.39, 16.4): «Շնացող» բառը, որը Նա օգտագործում է, կրկին իգական սեռով է, ոչ թե՝ արական:

Պողոս առաքյալը շարունակում է օգտագործել այս փոխաբերությունը՝ ասելով, որ մենք հարսն ենք, իսկ Հիսուսը՝ Փեսան (Եփեսացիների 5.31,32): Այսպիսով, Աստվածաշնչում շարունակաբար տեսնում ենք, որ թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններում մենք՝ Աստծո ժողովուրդս, պատկերվում ենք որպես կին՝ Աստծո հետ մեր հարաբերություններում: Սա է պատճառը, որ Հակոբոսն օգտագործում է «շնացողներ» բառն իգական սեռով, ինչը համապատասխանում է հաստատված աստվածաշնչյան օրինաչափությանը:

Կռապաշտությունը շնություն է

Հին կտակարանի հիշատակումներն այն մասին, որ Հուդան և Իսրայելը շնություն էին գործում Աստծո դեմ, մշտապես վերաբերում էին կռապաշտությանը: Պարզ ասած՝ մարդիկ անհավատարիմ էին Աստծուն: Մտածելով կռապաշտության մասին՝ մենք պատկերացնում ենք տարբեր աստվածների համար արձաններ, զոհասեղաններ և տաճարներ կառուցելը: Այնուամենայնիվ, երբ Հիսուսը շնացող անվանեց մարդկանց, նկատի չուներ, որ նրանք երկրպագում էին այլ աստծո քանդակած պատկերի: Նա ասաց դա, երբ մարդիկ խնդրեցին, որպեսզի իրենց նշան ցույց տա՝ ապացուցելով, որ Ինքը Մեսիան է:

Թեև Հակոբոսը Աստծո ժողովրդին անվանեց շնացող կանայք, միևնույն է, մենք չենք տեսնում, որ նրանք արձաններ, զոհասեղաններ և տաճարներ կառուցեին: Հետաքրքիր է, որ Հակոբոսը խոսում էր գրեթե նույն բանի մասին, ինչի մասին Պողոսը գրում էր Կորնթոսի եկեղեցուն՝ խտրականություն եղբայրների և քույրերի հանդեպ (Հակոբոս 2.1-13), չարախոսություն կամ մարդկանց մասին բացասաբար խոսելը (Հակոբոս 3.1-12), նախանձի, խանդի և եսասիրական դրդապատճառների դրսևորում (Հակոբոս 3.13-18) և սեփական հաճույքներին ձգտելը (Հակոբոս 4.1-3): Բոլոր այս արարքները հոգևոր շնության նշաններ են:

Մի՞թե Աստվածաշնչի հաջորդականությունը խախտվում է: Մի՞թե Աստծո ժողովուրդը մեղադրվում է շնություն գործելու մեջ, այնպիսի բանի պատճառով, ինչը կռապաշտություն չէ: Պարզ պատասխանն է՝ «Ո՛չ»: Այս ամենը փոխկապակցված է:

Հենց այս պատճառով է, որ ժամանակակից եկեղեցին ասես անտեսում է Հիսուսի, Պողոսի, Հակոբոսի և Նոր կտակարանի այլ հեղինակների զգուշացումները: Մենք սահմանափակում ենք կռապաշտությունը՝ վերագրելով այն միայն օտար աստվածներին նվիրված արձաններին, զոհասեղաններին և տաճարներին: Ճշմարտությունն այն է, որ կռապաշտությունը վերաբերում է նաև ժամանակակից Արևմուտքի քրիստոնեությանը: Եվ հավանական է, որ կռապաշտությունը շատ ավելի տարածված է մեզ մոտ, քան այն երկրներում, որտեղ արձաններ, զոհասեղաններ և տաճարներ են կառուցվում:

Իմ նպատակն է ցույց տալ ձեզ, որ կռապաշտությունը ոչ միայն լայնորեն տարածված է մերօրյա մշակույթում, այլև նույն կրիպտոնաքարն է, որը թույլ չէր տալիս Հուդային և Իսրայելին հաջողության հասնել. նույն կրիպտոնաքարն է, որի մասին Պողոսը գրում էր Կորնթոսի եկեղեցուն. նույն կրիպտոնաքարն է, որի մասին խոսում էին Հակոբոսը և

Նոր կտակարանի մյուս հեղինակները: Այսօր նույն կրիպտոնաքարը թույլ չի տալիս, որ առանձին հավատացյալները և եկեղեցին հաջողություն ունենան՝ հայտնելով Աստծո մեծությունը մեր կորսված և մահացող աշխարհին:

Այս աշխարհի շարժառիթը

Մինչև կռապաշտության մասին խոսելը, շարունակենք ուսումնասիրել Հակոբոսի համարձակ հայտարարությունը: Նա վճռականորեն պնդում է. «Դուք ուզում եք միայն այնպիսի բաներ, որոնք հաճույք են պատճառում ձեզ», իսկ հետո կապակցում է այդ շարժառիթն «այս աշխարհի» հետ: Նա ցույց է տալիս մի սկզբունք, որը հետևողականորեն ներկայացված է Նոր կտակարանում. այս աշխարհի շարժառիթը եսակենտրոն ցանկություններն են: Հովհաննես առաքյալը ձևակերպում է սա հետևյալ կերպով.

> «Որովհետև այս աշխարհը առաջարկում է միայն ձգտում մարմնական հաճույքներին, ձգտում այն ամենին, ինչ մենք տեսնում ենք, և հպարտություն՝ մեր ձեռքբերումների և ունեցվածքի պատճառով: Այս բաները Հորից չեն, այլ՝ այս աշխարհից» (Ա Հովհաննես 2.16, NLT):

Այս հատվածում Հովհաննեսի խոսքերը համընդգրկուն են, այսինքն՝ վերաբերում են *ամեն ինչին* այս աշխարհում: Գոյություն ունեն բազմաթիվ կուռքեր, սակայն բոլորն էլ վերաբերում են այս խոսքում նշված կարգերից մեկին: Այս աշխարհի հետ շնություն գործելը նշանակում է *առաջնորդվել սաստիկ ցանկությամբ* այնպիսի բաների հանդեպ, որոնք հաճույք են պատճառում ձեր մարմնի հինգ զգայարաններին կամ կառուցում են ձեր ինքնագնահատականը՝ առանց Աստծո, այսինքն՝ *ձեր հպարտությունը:*

Աստվածաշնչի «Ուղերձ» շրջասության մեջ գրված է. «Ցանկանում եք ամեն ինչ ձեր ուզած կերպով, ցանկանում եք ամեն ինչ ձեզ համար և ցանկանում եք կարևոր թվալ»: Ահա և այս աշխարհի շարժիչ ուժը: Այն արտահայտվում է հետևյալ դիրքորոշմամբ. «Ես գիտեմ, թե ինչն է լավագույնը ինձ համար, և ես ուզում եմ դա»:

Զավեշտական է, որ Աստված Ինքն է ցանկանում, փափագում և ձգտում տալ ձեզ լավագույնը: Յուրաքանչյուրս պետք է ի սրտե հավատա այս ճշմարտությանը: Սա անչափ կարևոր է, քանի որ այս աշ-

խարիը նման է ուժգնորեն գայթակղեցնող սիրեկանի, որի նպատակն է՝ հեռացնել մեզ Աստծուց: Այս աշխարիը հրապուրում է մեզ՝ համոզելով, որ իր առաջարկած տարբերակը շատ ավելի լավն է, քան Աստծունը: Ահա թե ինչու է Հակոբոսը համարձակ պնդում.

> «Ուրեմն, մի՛ խաբվեք, իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր: Այն ամենը, ինչը բարի և կատարյալ է, պարգև է, որն իջնում է մեզ մոտ մեր Հայր Աստծուց» (Հակոբոս 1.16,17, NLT):

Հակոբոսը սկսում է՝ պատվիրելով մեզ չխաբվել, չմոլորվել կամ չտարվել այս աշխարիի հրապուրանքով: Նրա ասելիքը հետևյալն է. *«Ձեզ համար չկա ոչ մի բարի բան՝ առանց Աստծո»:* Եթե ի սրտե հավատաք այս ճշմարտությանը, ձեզ անկարելի կլինի հեռացնել Աստծուց: Կարևոր չէ, թե որքան լավ է թվում ինչ-որ բան, որքան օգտակար դուք կարող եք համարել դա, որքան է դա ուրախացնում ձեզ, որքան ծիծաղելի, զվարճալի կամ ընդունելի է դա մեր հասարակության համար, որքան ողջամիտ տեսք ունի կամ որքան հայտնի կամ հարուստ կդարձնի ձեզ: Եթե դա հակառակ է Աստծո գրված Խոսքին, դա բարի չէ ձեզ համար: Ի վերջո, դա կտանի ձեզ այնտեղ, որտեղ չեք ցանկանա լինել. դուք կպարզեք, որ հայտնվել եք մահվան ճանապարհին: «Կա ճանապարհ, որը ճիշտ է *թվում* մարդուն և ուղիղ է *երևում* նրա առջև, բայց դրա վերջը մահվան ճանապարհն է» (Առակաց 14.12, AMPC):

Ամեն մարդու առջև կարող են լինել տարբեր ճանապարհներ, որոնք տանում են այս աշխարիի հետ շնության, բայց բոլորն էլ մեկ ընդհանրություն ունեն: Դրանք *ճիշտ* են թվում, այսինքն՝ *բարի*, օգտակար, շահավետ, ընդունելի և իմաստուն: Այնուամենայնիվ, եթե այդ ճանապարհները հակառակ են Աստծո Խոսքին, դրանք ավարտվելու են մահվամբ:

Ես համոզված եմ, որ հենց այս պատճառով է Աստված զգուշացնում մեզ.

> «Եվ հիմա, որդինե՛ր, լսե՛ք Ինձ, և ուշադրություն արեք Իմ բերանի խոսքերին: Թող սիրտդ չխոտորվի դեպի *այս աշխարհի* ճանապարհները, և մի՛ մոլորվիր *այս աշխարհի* շավիղներում: Որովհետև *այս աշխարհը* շատերին է խոցոտել ու վայր գցել, և բոլոր *այս աշխարհի* սպանածները զորավոր էին: Դժոխքի ճանապարհներն է *այս աշխարհի* տունը, որ իջնում է մահվան սենյակները» (Առակաց 7.24-27, ես փոխարինել եմ «նա» և «նրա» բառերը «այս աշխարհը» բառակապակցությամբ):

Սողոմոնը գրում է այս խոսքերը՝ որպես զգուշացում սեռական անբարոյությունից, սակայն այս հատվածում ավելի խորը մարգարեական ուղերձ կա. զգուշացե՛ք այս աշխարհի գայթակղեցնող հնարներից, որոնք խիստ հրապուրիչ են: Ինչպե՞ս է, որ այդքան ազգեր՝ Իսրայելի և Հուդայի հետ մեկտեղ, հեշտորեն իջնում են այս աշխարհի մահվան սենյակները: Մի՞թե կարող ենք այնքան միամիտ լինել, որ մտածենք, որ այդ ուժերն այլևս գոյություն չունեն: Սկսած հաջորդ գլխից՝ մենք կբացահայտենք, թե որքան իրական և ազդեցիկ են դրանք:

գործնական քայլ

Ոչ ոք չի ամուսնանում՝ ծրագրելով, որ շնություն է գործելու: Թեև ամուսնական երդումները կարող են մի փոքր վախեցնող լինել, ամուսնական զույգերը ջանք չեն խնայում՝ դրանք պահելու համար: Այդ դեպքում, ինչո՞ւ են այդքան շատ ամուսնություններ ձախողվում, ի թիվս այլոց՝ նաև անհավատարմության պատճառով: Պատասխանները բազմաբնույթ են, բայց բոլորի հիմքում այն է, որ մարդիկ դադարում են պաշտպանվել իրենց հարաբերությունները կործանող ուժերից:

Ձեր փոխհարաբերությունն Աստծո հետ բառացիորեն ձեր կյանքն է: Առանց Աստծո՝ կյանք գոյություն չունի: Այնուամենայնիվ, այս աշխարհը փորձում է գայթակղեցնել ձեզ, որ շնություն գործեք Նրա դեմ: Ձեր կյանքը հսկելու լավագույն միջոցը ամբողջ սրտով Աստծուն ձգտելն է:

Ի՞նչ կարող եք անել՝ համոզվելու համար, որ լիովին ընծայված եք Աստծուն:

Ինչպե՞ս եք ծրագրում ձեր կյանքը: Դուք պաշտպանո՞ւմ եք ձեր ժամանակն Աստծո հետ՝ Խոսքը կարդալու, աղոթելու և ծոմեր պահելու ձեր ժամանակը: Դուք փնտրո՞ւմ եք Աստծուն ծառայելու հնարավորություններ ձեր եկեղեցում, աշխատավայրում կամ բնակավայրում: Դուք կատարո՞ւմ եք ձեր աշխատանքը՝ ինչպես երկրպագություն Աստծուն: Որոշե՛ք, թե ինչպես եք շնությունից պաշտպանելու ձեր հարաբերություններն Աստծո հետ: Կազմե՛ք ձեր ծրագիրը, գրի՛ առեք այն և սկսե՛ք կատարել:

10

Ի՞ՆՉ Է ԹԱՔՆՎԱԾ ԿՌԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՏԵՎՈՒՄ

Մենք պետք է բացահայտենք առեղծվածը կռապաշտության մասին: Դա ո՛չ արագ, ո՛չ էլ հեշտ կլինի, սակայն կռապաշտությունը քողազերծելը բազմաթիվ հայտնություններ կտա և օգտակար կլինի մեզ տարբեր բնագավառներում: Մեծագույն առավելությունն այն է, որ մենք կսովորենք բացահայտել այն մեր կյանքում, ինչը թույլ կտա հեշտորեն ճանաչել հոգևոր կրիպտոնաքարը: Եկեք սկսենք՝ խոսելով կռապաշտության արմատների մասին:

Այս գրքի առաջին գլխում նշեցինք, որ Աստված «դրել է հավիտենությունը մարդու սրտում» (Ժողովող 3.11, NLT): Ամեն մարդ այս մոլորակում ծնվել է այս ներհատուկ հատկանիշով: Պողոսը հաստատում է այս ճշմարտությունը՝ գրելով. «Նույնիսկ հեթանոսները (անհավատները), որոնք չունեն Աստծո գրված օրենքը, ցույց են տալիս, որ գիտեն Նրա օրենքը, երբ բնազդորեն հնազանդվում են օրենքին՝ նույնիսկ առանց այն լսելու: Նրանք ցույց են տալիս, որ Աստծո օրենքը գրված է իրենց սրտերում, որովհետև իրենց խիղճը և մտքերը կա՛մ մեղադրում են իրենց, կա՛մ ասում են, որ իրենք ճիշտ են վարվում» (Հռոմեացիների 2.14,15, NLT):

Սա ճշմարտություն է. ամեն մարդ բնազդորեն գիտի Աստծո ճանապարհները, քանի որ դրանք գրված են մեր խղճի վրա՝ մեր ծնվելու պահից: Լիզան և ես հասկացանք սա, երբ դաստիարակում էինք մեր չորս որդիներին: Մանուկ հասակում, երբ նրանք հարվածում էին իրենց եղբայրներից մեկին, շպրտում էին ուտելիքը, բարկանում էին իրենց ծնողների վրա կամ այլ վատ բաներ էին անում, նրանց հայացքը մեղքի զգացում էր արտահայտում, թեև նրանց դեռ չէին սովորեցրել, որ այդպես վարվելը սխալ է:

Բացի այն, որ գիտելիքն Աստծո մասին գտնվում է ամեն մարդու սրտում՝ այն նաև ակնհայտորեն երևում է արարչագործության միջոցով.

> «Նրանք գիտեն ճշմարտությունն Աստծո մասին, որովհետև Նա *ակնհայտ* է դարձրել այն նրանց համար... Այն ամենի միջոցով, ինչ Աստված ստեղծել է, նրանք կարող են *պարզորեն տեսնել* Նրա անտեսանելի հատկանիշները՝ Նրա հավիտենական զորությունը և աստվածային բնությունը: Այնպես որ, նրանք *արդարացում չունեն*՝ Աստծուն չճանաչելու համար» (Հռոմեացիների 1.19,20, NLT):

Մտածե՛ք այս հատվածում ընդգծված բառերի վերաբերյալ. *ակնհայտ* լինելու և *պարզորեն տեսնելու* արդյունքում մարդիկ *արդարացում չունեն:* Իրականությունը հետևյալն է. այն մարդը, ով անտեղյակ է Աստծո մասին, չունի ոչ մի արդարացում: Իսկ Աստված հայտնել է Իրեն յուրաքանչյուրին, ով անկեղծ է և ցանկանում է իմանալ ճշմարտությունը:

Երբևէ լսե՞լ եք նման հարցեր. «Ի՞նչ կլինի Աֆրիկայի անհասանելի տարածքներում ապրող մարդու հետ, ով երբեք չի լսել Աստծո մասին: Ինչպե՞ս նա կարող է փրկվել: Եվ ինչպե՞ս Աստված կարող է դատապարտել նրան»:

Այսպիսի հարցերը, որոնք հաճախ նման են բողոքի, արդարացումներ են՝ հիմնված այն իրողությունների վրա, որոնք մարդիկ արդեն գիտեն, կամ՝ որոնք չեն ուզում իմանալ: Քանի որ նրանք խիղճ ունեն, գիտեն, որ Աստված իրական է, բայց մերժում են այդ ճշմարտությունը: Նրանք չեն ուզում խոստովանել հետևյալը՝ գիտելիքն Աստծո մասին՝ հասանելի է յուրաքանչյուրին, ով փնտրում է ճշմարտությունը: Եթե լիովին անկեղծ լինենք, նման հարցեր տվող մարդիկ պետք է խոստովանեն, որ մերժում են Նրան: Սաղմոսերգուն կրկին հաստատում է, որ արարչագործության անդադար ձայնն ազդարարում է Աստծո մասին.

> «Երկինքներն ազդարարում են Աստծո փառքը:
> Երկինքը ցուցադրում է Նրա վարպետությունը:
> Օր օրի նրանք շարունակում են խոսել, գիշեր գիշերից
> հետո նրանք հայտնի են դարձնում Նրան:
> Նրանք խոսում են առանց ձայնի և բառերի,
> Նրանց ձայնը բնավ չի լսվում:
> Սակայն նրանց ուղերձը տարածվել է երկրով մեկ,
> և նրանց բառերը՝ ամբողջ աշխարհով» (Սաղմոս 19.1-4, NLT):

Գիտելիքն Աստծո անսահման մեծության մասին շարունակաբար տարածվում է ամբողջ աշխարհով՝ ամեն տարի, ամեն օր, ամեն ժամ և ամեն վայրկյան: Մի՞թե այն չի ընդգրկում նաև Աֆրիկայի անհասանելի տարածքներում ապրող «անտեղյակ» մարդուն: Մարդը կարող է այնպիսի կեցվածք ընդունել, ասես ինքն անտեղյակ է Աստծո գոյությունից, բայց ճշմարտությունը ոչ միայն դրված է նրա սրտում՝ ծնվելու պահից, այլև շարունակ խոսում է նրա հետ՝ ամեն օր և ամեն գիշեր: Քանի դեռ մարդը չի հերքել դա տարբեր պատճառաբանություններով, չի համոզել իրեն հակառակը և, ի վերջո, չի այրել իր խիղճը՝ անմտության հասնելով, նա չի կարող ժխտել այն իրողությունը, որ Աստված գոյություն ունի:

Շրջադարձային պահը

Շրջադարձային պահը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդը կա՛մ որոշում է փնտրել կենդանի Աստծուն, կա՛մ «բավարարում» է այս ցանկությունը՝ դիմելով որևէ *աստծո* կամ *աստվածների,* որպեսզի թեթևացնի իր խիղճը: Միգուցե մտածեք. *«Ես ապրում եմ Արևմուտքում, և մեր մշակույթում աստվածներ չկան: Մենք չունենք արձաններ, սրբապատկերներ, տաճարներ և նմանատիպ բաներ»:* Խնդրո՛ւմ եմ, համբերատար եղեք, և ես ցույց կտամ, որ Արևմուտքում, ինչպես և ցանկացած այլ մշակույթում, կան բազմաթիվ աստվածներ:

Ինչպե՞ս են առաջանում այս *աստվածները:* Մենք պետք է մտապահենք, որ բոլոր *աստվածներին* կամ *կուռքերին* ստեղծել է մարդկությունը: Մարդը ձգտում է բավարարել իր բնածին գիտակցումն Աստծո գոյության մասին, նաև՝ ունենալ ճիշտ դիրք Նրա առջև: Երբ ստեղծվում է աստվածության այլ տարբերակ, այն պատրաստողն է որոշում, թե ինչ է անհրաժեշտ այդ աստծուն հաճեցնելու համար: Բացի այդ՝ նրա պատրաստած աստվածը տրամադրում է կամ թույլ է տալիս այն, ինչ ցանկանում է իրեն հորինողը՝ միևնույն ժամանակ բավարարելով այդ մարդու միջի երկրպագության ներքին ցանկությունը: Իսկ հիմա կարդացե՛ք Պողոսի խոսքերի շարունակությունը.

> «Այո՛, նրանք ճանաչեցին Աստծուն, բայց չցանկացան երկրպագել Նրան որպես Աստծո, կամ նույնիսկ՝ գոհանալ Նրանից: Եվ սկսեցին հորինել անմիտ գաղափարներ այն մասին, թե ինչպիսին է Աստված: Արդյունքում, նրանց մտքերը խավարեցին և շփոթվեցին: Պնդելով, որ իմաս-

տուն են, փոխարենը՝ բացարձակ անմիտներ դարձան: Եվ փառավոր, հավիտյան ապրող Աստծուն երկրպագելու փոխարեն, նրանք երկրպագեցին կուռքերի» (Հռոմեացիների 1.21-23, NLT):

Պատկերներ (կուռքեր) պատրաստելը այս հատվածում ներկայացված գլխավոր խնդիրը չէ. այն ընդամենը ավելի մեծ խնդրի հետևանք է, որը՝ *Նրան որպես Աստծո չերկրպագելն է:* Այս պահին անչափ կարևոր է ցույց տալ, թե ինչ է ճշմարիտ «երկրպագությունը»: Եթե պատկերացնենք այն որպես *դանդաղ երգ,* որը երգում է եկեղեցու փառաբանության թիմը, մենք լիովին սխալ կհասկանանք այս հատվածի ասելիքը: Ճշմարիտ երկրպագության սահմանումը երաժշտությունը և երգը չէ, այլ՝ *հնազանդությունը:*

Որպես մի շարք գրքերի հեղինակ՝ ես սովորել եմ, որ երբ ոչ շատ ծանոթ բառ կամ հասկացություն եմ ներկայացնում որևէ գրքում, պետք է տամ դրա հիմնական սահմանումն առաջին իսկ անգամից՝ կա՛մ անմիջապես սահմանելով այն, կա՛մ այնպես օգտագործելով այդ բառը, որ դրա իմաստը հասկանալի դառնա: Այսպես են վարվում բոլոր հեղինակները, և Աստված բացառություն չէ:

Աստվածաշնչի լայնորեն տարածված թարգմանություններում «երկրպագություն» բառն առաջին անգամ հանդիպում է Ծննդոց 22.5-ում: Աբրահամը դիմում էր իր ծառաներին՝ ասելով, թե ինչ էին պատրաստվում անել Իսահակն ու ինքը սարի վրա: Ահա նրա խոսքերը. «Ես և տղան մինչև այնտեղ գնանք և *երկրպագություն* անենք»: Ի՞նչ էր նա անելու այնտեղ: Նա դանդաղ ե՞րգ էր երգելու Աստծուն, թե՞ եկեղեցում երկրպագող երաժիշտների և երգիչների էր տանելու իր հետ: Բոլորովի՛ն: Նա գնում էր այնտեղ՝ հնազանդվելու այն խոսքին, որն Աստված ասել էր իրեն երեք օր առաջ, այսինքն՝ զոհաբերելու իր միակ որդուն:

Հռոմեացիների 1.21-ում տարբեր թարգմանություններ օգտագործում են «երկրպագել», «փառավորել» և «պատվել» բառերը: Այս բառերը կապակցված են: Մենք փառավորում և պատվում ենք Աստծուն կամ ցանկացած այլ իշխանություն ունեցողի, երբ հնազանդվում ենք: Եվ մենք արհամարհում և անպատվում ենք, երբ չենք հնազանդվում: Մենք կարող ենք շուրթերի ծառայություն մատուցել Աստծուն, պարծենալ և գովաբանել Նրան, երգեր գրել Նրա մասին և այլն, բայց եթե չենք կատարում այն, ինչ Աստված ցանկանում է, մենք անարգում ենք Նրան, ինչը երկրպագության կամ պատվի հակառակն է:

Մեկ անգամ Աստված ասաց Իր ժողովրդին. «Ես ատում եմ ձեր ամ-

բողջ ցուցադրանքը և կեղծավորությունը... հեռացրե՛ք ձեր աղմկոտ փառաբանության երգերը: Ես չեմ լսի ձեր տավիղների երաժշտությունը: Փոխարենը՝ ուզում եմ տեսնել արդարադատության մեծ հեղեղ, արդար կյանքի անվերջ գետ» (Ամովս 5.21,23,24, NLT): Արդար կյանքը Նրա իշխանությանը հնազանդվելն է, ոչ թե այն, ինչ մենք աստվածապաշտություն ենք անվանում:

Հին ուխտի ներքո Աստված հրահանգներ տվեց Մովսեսին Իր համար ընդունելի զոհերի վերաբերյալ: Կային տարբեր զոհեր, որոնք Իր ժողովուրդը կարող էր մատուցել Իրեն՝ որպես երկրպագություն. գառան զոհաբերություն (տե՛ս Ելից 29.39-41), ցլի զոհաբերություն (տե՛ս Ելից 29.10-14), հացի ընծա (տե՛ս Ելից 29.41) և շատ այլ բաներ: Նույնպես, նրանք կարող էին սուրբ խունկ այրել խորանում կամ տաճարում՝ որպես երկրպագության տեսակ (տե՛ս Ղևտ. 2.2): Սակայն մեկ օր Աստված ասաց.

> «Ես կօրհնեմ նրանց, ովքեր խոնարհ և կոտրված սրտեր ունեն, ովքեր դողում են Իմ Խոսքից: Բայց իրենց ճանապարհներն ընտրողների... զոհաբերությունները չեն ընդունվի: Երբ նման մարդիկ *ցուլ* են զոհաբերում, դա նույնքան անընդունելի է, որքան մարդկային զոհաբերությունը: Երբ նրանք գառ են զոհաբերում, այնպես է, ասես շուն են զոհաբերել: Երբ նրանք հացի ընծա են մատուցում, նույն կերպով կարող էին խոզի արյուն մատուցել: Երբ կնդրուկ են այրում, այնպես է, ասես կուռք են օրհնում» (Եսայի 66.2,3, NLT):

Նա սկսում է՝ ցույց տալով, թե ովքեր են ստանում Իր օրհնությունները. նրանք, ովքեր *դողում են Իր Խոսքից:* Այդպիսի մարդկանց համար հնազանդությունը խիստ կարևոր է: Նման մարդիկ Աստծո ուշադրության կենտրոնում են:

Դրանից հետո Նա խոսում է այն մարդկանց մասին, ովքեր իրենց ուզած կերպով են երկրպագում (հնազանդվում) Իրեն: Նրանց երկրպագությունը ոչ միայն անընդունելի է, այլև հավասարազոր է մարդկային զոհաբերությանը (սառնասրտորեն կատարած սպանությանը), շուն զոհաբերելուն, խոզի արյուն մատուցելուն և կուռք օրհնելուն: Այս արարքները գարշելի են Աստծո համար: Եթե ինչ-որ մեկն իրականում այդպիսի գարշելի զոհեր մատուցեր կամ սպանություն գործեր, նրան կհեռացնեին Իսրայելի ժողովրդից կամ մահապատժի կենթարկեին: Այս հայտարարությունը խիստ և վճռական է: Ակնհայտ է, որ նրանց երկրպագությունը բնավ երկրպագություն չէր, թեև այն համապատասխանում էր Ելից և Ղևտացիների գրքերի ցուցումներին:

Աստվածաշնչի «Ուղերձ» շրջասության մեջ գրված է հետևյալը. «Ձեր երկրպագության գործերը մեղսալի արարքներ են»:

Հիշե՛ք, որ խոսքն այն ժողովրդի մասին էր, որն ուխտի մեջ էր Աստծո հետ և ստացել էր Նրա խոստումները: Ինչո՞ւ էին նրանք այդպիսի զգուշացումներ լսում: Որովհետև նրանք երկրպագում էին Աստծուն իրենց ուզած կերպով և չէին հնազանդվում Նրան: Նույնը վերաբերում է մեզ: Մենք կարող ենք երգեր երգել Աստծուն, հաճախել երկրպագության հավաքույթների, դավանել, որ հավատարիմ ենք Նրան, նույնիսկ՝ համաձայն Նոր կտակարանում սահմանված միջոցների: Բայց եթե մեր հիմքը հնազանդությունը չէ, մեր երկրպագությունն անօգուտ է: Չէ՞ որ գրված է. «Դուք պետք է ապրեք՝ որպես Աստծո հնազանդ զավակներ» (Ա Պետրոս 1.14, NLT):

Մյուս հիմքային խնդիրը, որի մասին խոսում է Պողոս առաքյալը, Աստծուց չգոհանալն է կամ անշնորհակալ լինելը: Եթե մենք համոզված ենք, որ պետք է որոշակի կենսամակարդակ ունենանք, որ արժանի ենք որոշ նյութական իրերի, կամ եթե ձգտում ենք որոշակի կարգավիճակի, մենք կդառնանք եսակենտրոն և, հետևաբար, անշնորհակալ: Չէ՞ որ մենք շատ ենք աշխատել, ծրագրել ենք մեր կյանքը, նպատակներ ենք որոշել և երազել ենք այն ամենի մասին, ինչն իրականացրել կամ ստեղծել ենք, և մենք հպարտանում ենք մեր գործերով:

Հետևանքային վարքագիծ

Երբ հնազանդվելու, պատվելու և գոհանալու ցանկությունն ուղղվում է այլ բաների՝ Աստծուց բացի, առաջանում է կռապաշտություն առանձին անհատի, ամբողջ համայնքի կամ ազգի մեջ: Պողոսը շարունակում է.

> «Այնպես որ, Աստված թողեց նրանց այն բոլոր ամոթալի բաներին, որոնք ցանկացան նրանց սրտերը: Արդյունքում նրանք գարշելի և նվաստացուցիչ վարվեցին միմյանց մարմինների հետ: *Աստծո մասին ճշմարտությունը փոխեցին ստի հետ:* Նրանք երկրպագեցին և ծառայեցին Աստծո ստեղծածներին, փոխարենը ծառայեին անձամբ Ստեղծողին, Ով արժանի է հավիտենական փառքի: Ամե՛ն» (Հռոմեացիների 1.24,25, NLT):

Հիշեք, որ այս ամենի հիմքում Աստծուն չհնազանդվելն ու Նրանից

շնորհակալ չլինելն է: Այժմ մենք երկրպագում (հնազանդվում) ենք մեր անկում ապրած բնության ցանկություններին: Մենք հպատակվում ենք ստեղծված բաներին, որոնք այժմ ապականված են և անեծքի տակ են: Մեր բարոյական կողմնացույցը շեղվել է, և *ճշմարտությունը փոխարինվել է ստով:* Այսօրվա թվացյալ իմաստությունն իրականում հիմարություն է: Այն, ինչը բնական է համարվում այս աշխարհի կողմից, իրականում անբնական է: Արդյունքում այն, ինչն իրականում *բարի* է, ներկայումս պիտակվում է որպես *չար*, և այն, ինչն իրականում *չար* է, *բարի* է կոչվում: Մենք շարունակում ենք կարդալ.

> «Ահա թե ինչու Աստված թողեց նրանց իրենց ամոթալի ցանկություններին...» (Հռոմեացիների 1.26, NLT):

Այս պնդմանը հետևող մի քանի խոսքերում (137 բառ անգլերեն «NLT» թարգմանության մեջ) Պողոսը թվարկում է քսաներկու հանցանք Աստծո դեմ: Որպես ամփոփում՝ դրանց թվում են սպանությունը, քննադատությունը, ատելությունը, ագահությունը, ծնողների հանդեպ անհնազանդությունը և համասեռամոլությունը: Ակնառու է, որ Պողոսն օգտագործում է այս 137 բառերից հիսունինը (մոտավորապես քառասուներեք տոկոսը)՝ խոսելով համասեռամոլության մասին, սակայն մեկ-երկու բառով անդրադառնում է մնացած քսանմեկ հանցանքներից ամեն մեկին: Ո՞րն է դրա պատճառը: Մի՞թե Աստված առանձնացնում է համասեռամոլությունը և թույլ է տալիս վերաբերվել համասեռամոլներին որպես ավելի մեծ մեղավորների, քան մնացած քսանմեկ հանցանքները գործողներին: Իհարկե՝ ո՛չ: Փոխարենը, Նա պարզորեն ցույց է տալիս, որ համասեռամոլության նկատմամբ հակվածությունը ամենաճշգրիտ ցուցանիշներից է, որ հասարակությունը սրընթաց ընկնում է կռապաշտության մեջ: Վերադառնանք Պողոսի խոսքերին.

> «Ահա թե ինչու Աստված թողեց նրանց իրենց ամոթալի ցանկություններին: Նույնիսկ կանայք շրջվեցին սեռական հարաբերություններ ունենալու բնական ճանապարհից և փոխարենը տրվեցին սեռական հարաբերությունների մեկը մյուսի հետ: Եվ տղամարդիկ, փոխարենը կանանց հետ բնական սեռական հարաբերություններ ունենային, կրքով բորբոքվեցին մեկը մյուսի հանդեպ: Տղամարդիկ ամոթալի բաներ արեցին այլ տղամարդկանց հետ և իրենց մեղքի արդյունքում իրենց ներսում կրեցին այն պատիժը, որին արժանի էին» (Հռոմեացիների 1.26,27, NLT):

Այն հասարակությունը, որը դադարում է ընդունել Աստծո գոյությունը, գոհանալ Նրանից և հնազանդվել Նրան, հակված կլինի ընդունելու, հաստատելու (հավանություն տալու) և, ի վերջո, ծափահարելու (կամ՝ խրախուսելու) սեռական այլասերվածությանը, հատկապես՝ համասեռամոլությանը: Պողոսն այս վարքն անվանում է ամոթալի և անբնական:

Ճշմարտությունը փոխվում է ստի հետ, ինչն, ի վերջո, հանգեցնում է գենդերային խառնաշփոթի:

2017 թվականի հունվարին *«Նեշնլ Ջեոգրաֆիկ»* ամսագիրն իր ամսական համարը նվիրեց մի թեմայի, որն անվանեց «Գենդերային հեղափոխություն»: Խմբագիրները հավաքել էին մարդկանց մի խմբի, որը ներկայացնում էր տարբեր սեռական կամ գենդերային կողմնորոշումներ, որոնք մահկանացուն է ստեղծել: Այդ ամսագիրը խորհրդատվություն էր ստացել մարդկային սեռական կյանքն ուսումնասիրող առաջատար մասնագետներից, որոնք տարբեր համալսարանների ներկայացուցիչներ էին: Ահա որոշ տերմիններ, որ օգտագործվել էին՝ նկարագրելու համար սեռական և գենդերային նախընտրությունները. անսեռ, համասեռական, երկսեռ, տրանսգենդեր, ինքնասեռ, համագենդերային, միջսեռային, հետերոսեքսուալ, միջսեռային անզույգ, տրանստղա, տրանսաղջիկ և այլն: Թեև սա կարող է տպավորիչ թվալ, այս ամենը պարզապես հիմարություն և խաբեություն է:

Նման տերմիններ օգտագործող մարդկանց համարում են խելացի, կրթված և արդիական փորձագետներ: Ի՞նչ կկատարվի մեր հասարակության հետ, եթե այն առաջնորդվի այս մտածելակերպով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը ծախսել է ավելի քան երկու հարյուր միլիարդ դոլար սեռային ինքնության և համասեռամոլության հետ կապված խնդիրների համար*: Կարո՞ղ եք պատկերացնել, թե որքան հնարավորություններ կարող էին ստեղծվել այդ միջոցներով: Դրանք կարելի էր ուղղորդել՝ բարելավելու համար դպրոցական շինությունները, ամրապնդելու ոստիկանության ուժերը, վերանորոգելու օդանավակայանները և այլ հանրային շինություններ, և ամենակարևորը՝ օգնելու անտուն մարդկանց, միայնակ մայրերին և հաշմանդամներին: Այնուամենայնիվ, այս անասելի գումարը ծախսվել է՝ ընտրելու համար այնպիսի սեռական կողմնորոշում, որը հակառակ է այն բանին, թե ինչպես է Աստված ստեղծել մարդուն: Հենց

---

* Մեթ Սթեյվեր. «Համասեռամոլությունը տասնյակ միլիարդավոր դոլարներ է խլում կառավարությունից», Բրայան Թեշման, (ապրիլի 16, 2015թ., ժ. 00:40, http://www.rightwingwatch.org/post/mat-staver-homosexuality-costs-the-government-tens-of-billions-of-dollars/):

սկզբից Աստվածաշունչն ազդարարում է. «Աստված ստեղծեց մարդուն... արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդոց 1.27): Նա է որոշում մեր սեռը. Նա գիտի, թե ինչն է լավագույնը, քանի որ սիրում է մեզ:

Այս ամենն արվում է իմաստուն լինելու քողի ներքո, այնինչ, իրականում մարդիկ հիմարաբար միջոցներ են վատնում: Ամենավատն այն է, որ դա խրախուսում է սխալ վարքը և պահում է մարդկանց այնպիսի կենսաոճի գերության ներքո, որի համար նրանք ստեղծված չեն:

Որպես հասարակություն՝ մենք խաբվել ենք այն ստին, որ սա «մարդու իրավունքների» խնդիր է, և դրանով իսկ թույլ ենք տվել մարդկանց մի շատ փոքր տոկոսի՝ վերագրել այս հարցը ռասայական կամ գենդերային խտրականության: Մենք պետք է պայքարենք մարդու իրավունքների համար, սակայն դա չի վերաբերում այն մարդկանց, ովքեր հակառակ են այն էությանը, որով իրենք ստեղծվել են:

Սա անհեթեթ վարքագիծ է, որը, ըստ Պողոսի մարգարեության, կտարածվի, եթե դադարենք ճշմարտապես երկրպագել (հնազանդվել) Աստծուն և գոհանալ Նրանից: Այնպես որ, ինչո՞ւ հավատացյալները չեն բարձրաձայնում և չեն բացահայտում այս մոլորված համոզմունքները և ջանքերը: Մենք սկսել ենք վախենալ ճշմարտությունից և ընդունել ենք ստերը և խաբեությունը: Մենք ընկել ենք կռապաշտության մեջ, և այն հաստատվել է մեր երկրում:

Միգուցե հասարակությունն առաջընթաց անվանի սա, բայց իրականում սա ետընթաց է դեպի հիմարություն: Պողոսի վաղուց գրված խոսքերը բացահայտում են, որ սեռային և գենդերային այլասերվածության հիմքը կռապաշտությունն է: Նա շարունակում է՝ թվարկելով այլ հետևանքներ.

> «Քանի որ նրանք անմտություն համարեցին ընդունել Աստծո գոյությունը, Նա թողեց նրանց իրենց անմիտ մտածողությանը և թույլ տվեց անել այնպիսի բաներ, որոնք երբեք չպետք է արվեին: Նրանց կյանքերը լցվեցին ամեն տեսակի չարությամբ, մեղքով, ագահությամբ, ատելությամբ, նախանձով, սպանությամբ, վեճերով, խաբեությամբ, չարամիտ վարքով և բամբասանքով: Նրանք քննադատողներ են, Աստծուն ատողներ, ամբարտավան, հպարտ և պարծենկոտ: Նրանք հորինում են մեղանչելու նոր ձևեր և անհնազանդ են իրենց ծնողներին: Նրանք հրաժարվում են հասկանալ, խախտում են իրենց խոստումները, անսիրտ են և ողորմած չեն» (Հռոմեացիների 1.28-31, NLT):

Կարիք չկա շատ ուշադիր նայել, թեմատիկ ուսումնասիրություն կազմակերպել կամ սոցիոլոգիական հետազոտություն անցկացնել՝ այս վարքագծերը մեր հասարակության մեջ բացահայտելու համար: Դրանք լայնորեն և անվերահսկելիորեն տարածված են և կործանում են անհատների, ընտանիքներ և ազգեր: Այս այլասերված վարքագծերը և դրանք ընդունելը հասարակական ճգնաժամերի, փոխհարաբերությունների խզման և բոլոր տեսակի պատերազմների պատճառն է:

Եթե այս ամենը դեռ բավականաչափ ողբերգական չի թվում, կարդացե՛ք Պողոսի ամփոփումը.

> «Նրանք գիտեն, որ համաձայն Աստծո արդարադատության՝ այդ բաներն անող մարդիկ արժանի են մահվան, սակայն նրանք, միևնույն է, անում են դրանք: Ավելի վատն այն է, որ նրանք նաև խրախուսում են այլ մարդկանց անել այդ բաները» (Հռոմեացիների 1.32, NLT):

Կառավարությունը, զանգվածային լրատվամիջոցները, հեռուստատեսությունը, ֆիլմերի պրոդյուսերները, սոցիալական աշխատողները, պաշտոնյաները, ազդեցիկ մարդիկ և ամբողջ հասարակությունը քաջատեղյակ է, որ նման վարքը հակառակ է մեր Արարչին, սակայն նրանք անտեսում են այն, ինչ ասում է իրենց խիղճը և ազդարարում է ամբողջ արարչագործությունը: Եվ իրենց խիղճը թեթևացնելու համար նրանք խրախուսում են այլ մարդկանց անել նույնը՝ հուսալով, որ դա կլռեցնի ճշմարտությունն իրենց սրտերում:

Վերևում թվարկված բոլոր վարքագծերը կռապաշտություն կոչվող հիմքային խնդրի արդյունքն են. մարդիկ չեն տալիս Աստծուն այն երկրպագությունը (պատիվը և հնազանդությունը) և գոհությունը, որոնց Նա արժանի է: Մենք պետք է ընդունենք Աստծո գոյությունը մեր վարքով, ոչ թե պարզապես մեր շուրթերի ծառայությամբ: Սա վերաբերում է ամբողջ մարդկությանը. այնուամենայնիվ, ուղղենք մեր ուշադրությունն այն բանին, թե ինչպես է կռապաշտությունն արտահայտվում այն մարդու կյանքում, ով արդեն ունի հարաբերություններ Աստծո հետ:

գործնական քայլ

Երկրպագությունը՝ Աստծուն հնազանդվելու, պատվելու և Նրանից գոհանալու որոշում է: Երբ անտեսում ենք ճշմարիտ երկրպագության տարրերից որևէ մեկը, մենք խոցելի ենք դառնում այն խաբեության հա-

մար, որը կռապաշտության է տանում մեզ: Սա ճշմարիտ է թե՛ անհատական, թե՛ մշակութային առումով:

Առաջին երկրպագության դեպքն Աստվածաշնչում այն էր, երբ Աբրահամը հնազանդվեց Աստծուն և գնաց՝ զոհաբերելու Իսահակին: Ի՞նչ է Աստված պատվիրել ձեզ: Միգուցե Սուրբ Հոգին ինչ-որ բան է պատվիրել ձեզ, երբ դուք Աստվածաշունչ եք կարդացել կամ, միգուցե, Նա հատուկ առաջադրանք է տվել ձեզ:

Ինչպե՞ս այս գլուխը փոխեց ձեր կարծիքն այդ առաջադրանքի մասին: Մի պահ հարցրեք Աստծուն, թե ի՞նչ քայլեր կարող եք ձեռնարկել այսօր, որպեսզի կատարեք այն, և անպայման գոհացեք Նրանից, որ ընտրեց ձեզ՝ այդ առաջադրանքը կատարելու համար, որ Նա խոսեց ձեզ հետ, և որ Նա ձեզ հետ է լինելու, երբ անեք ձեր երկրպագության քայլը՝ հնազանդվելով Նրան:

11

ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ԿՌԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Այս աշխարհի մարդկանց կյանքում կռապաշտությունը խիստ վատ է, սակայն կենդանի Աստծո հետ ուխտ ունեցող մարդկանց կյանքում այն զարհուրելի է:

Հակոբոսը շնություն է անվանում կռապաշտությունը: Պատճառն այն է, որ մենք ուխտ ունենք Աստծո հետ, ուստի, երբ մենք տրվում ենք կռապաշտությանը, անհավատարիմ ենք լինում մեր «Ամուսնուն»՝ Տեր Հիսուս Քրիստոսին, ինչպես անհավատարիմ կողակիցը:

Սավուղ թագավորը և ամաղեկացիները

Սկսենք Հին կտակարանից, ապա անցնենք Նոր-ին: Իսրայելի ժողովուրդն ուխտ ուներ Աստծո հետ, որը սկիզբ էր առել իրենց հայր Աբրահամից: Սամուել մարգարեի միջոցով Աստված տվել էր Իսրայելի Սավուղ թագավորին հետևյալ հանձնարարությունը. «Եվ հիմա Տիրոջ Խոսքերի ձայնը լսի՛ր» (Ա Թագավորաց 15.1): Անկասկած՝ դա Աստծո կամքն էր: Դա հստակ և որոշակի էր: Թագավորը հրաման ստացավ լիովին ոչնչացնել ամաղեկացիներին՝ յուրաքանչյուր տղամարդու, կնոջ, երեխայի և կենդանու: Դա Աստծո վրեժն էր, քանի որ Ամաղեկը հարձակվել էր Իսրայելի վրա, երբ ժողովուրդը փախչում էր Եգիպտոսից և անպաշտպան էր: Սավուղ թագավորն անմիջապես զորահավաք կատարեց՝ Ամաղեկի վրա հարձակվելու համար: Այնուամենայնիվ, գրված է.

> «Եվ Սավուղը զարկեց Ամաղեկին Եվիլայից մինչև Եգիպտոսի դիմացի Սարը: Եվ Ամաղեկի թագավոր Ագագին ողջ բռնեց և ամբողջ ժողովրդին սրի բերանով բնաջինջ արեց: Բայց Սավուղը և ժողովուրդը խնայեցին Ագագին և ոչխարներին և արջառներից լավերին և գերերին և գառներին և ամեն պատվական բաներին և չուզեցին նրանց բնաջինջ անել, այլ բնաջինջ արեցին բոլոր անարգ և անպիտան անասուններին» (Ա Թագավորաց 15.7-9):

Շատերը Իսրայելում կմտածեին, որ Սավուղը հնազանդվել էր Տիրոջ Խոսքին, սակայն անմիջապես դրանից հետո գրված է. «Եվ Տիրոջ Խոսքը Սամուելին եղավ՝ ասելով. «Զղջացի, որ Սավուղին թագավոր եմ արել, որովհետև Ինձնից ետ դարձավ, և Իմ խոսքերը չկատարեց»» (Ա Թագավորաց 15.10,11): Սավուղը չտվեց Տիրոջը այն երկրպագությունը՝ այն հնազանդությունը, որին Նա արժանի էր: Նա հավատարիմ չէր Աստծուն:

Ես հիշում եմ մի շփոթված անձնավորության, ով վստահեցնում էր ինձ, որ իր ամենամեծ դժվարությունը դեռահաս որդու հետ այն էր, որ նա մասնակի էր անում իրեն տրված բոլոր հանձնարարությունները, իսկ հետո գնում էր իր ուզածն անելու, ինչը, որպես կանոն, իր ընկերների հետ շփվելն էր: Երբ հայրը կշտամբում էր նրան, որդին սովորաբար բարկացած պատասխանում էր. «Հայրի՛կ, հերի՛ք է խիստ լինես ինձ հետ: Ես արեցի քո ասածի հիննսուն տոկոսը: Ինչո՞ւ ես այդքան պահանջկոտ: Ինչո՞ւ չես նայում իմ արած հիննսուն տոկոսին, այլ տեսնում ես միայն այն տասը տոկոսը, որը *չեմ արել»*: Այդ մարդը սրտնեղած էր:

Ես ասացի նրան. «Աստված նույնպես պահանջկոտ է»: Հիշեցրի այս պատմությունն ամաղեկացիների մասին: Ես ասացի, որ Սավուղը, հավանաբար, սպանել էր առնվազն հարյուր հազար տղամարդկանց, կանանց և երեխաների: Համոզված եմ, որ նա սպանել էր ավելի շատ ոչխարների, այծերի և խոշոր եղջերավոր անասունների, քան խնայել էր: Այնպես որ, մենք կարող ենք համոզվածությամբ ասել, որ Սավուղը կատարել էր Աստծո պատվերի ավելի քան հիննսուն տոկոսը, սակայն Աստված ասաց, որ Սավուղը չէր հնազանդվել Իրեն, իսկ հետագայում, խոսելով Սավուղի վարքի մասին, օգտագործեց «ապստամբություն» բառը (խոսք 23):

Այս աստվածաշնչյան օրինակն օգնեց այդ մարդուն հասկանալ, որ նա ճշտորեն զգում էր, որ իր որդու վարքը սխալ էր:

Իրականում, ես համոզված եմ, որ Սավուղ Թագավորը մոտ էր Աստծո պատվերի հիննսունհինը տոկոսը կատարելուն: Ինչո՞ւ Աստված չնայեց Սավուղի բոլոր գործերին, այլ տեսավ այն մեկ տոկոսը, որը նա

չէր կատարել: Շատերի կարծիքով սա խիստ պահանջկոտություն է, սակայն Աստծո համար մասնակի հնազանդությունը և, նույնիսկ, գրեթե ամբողջական հնազանդությունը բնավ հնազանդություն չէ, այլ՝ ապստամբություն: Այն նշանակում է՝ չտալ Աստծուն այն պատվի և երկրպագության դիրքը, որին Նա արժանի է:

Սամուելը հանդիմանեց Սավուղին, ով իր խաբեության պատճառով բացարձակապես մերժեց նրա մեղադրանքը, սակայն Սամուելը մատնացույց արեց զոհաբերվող կենդանիներին: Սավուղը փորձեց մեղավորությունը բարդել ժողովրդի վրա, բայց Սամուելը շտկեց նրան. «Ո՛չ, դո՛ւ ես նրանց առաջնորդը, և դո՛ւ ես անհնազանդ եղել Աստծուն» (շրջասություն): Երբ Սավուղը հարկադրված ընդունեց մարգարեի հանդիմանությունը, Սամուելը հայտնեց մի զարմանալի ճշմարտություն կռապաշտության վերաբերյալ.

> «Որովհետև ապստամբությունը՝ կախարդության մեղքի *պես*, և անհնազանդությունը (կամ՝ համառությունը) կռապաշտության *պես է:* Որովհետև դու Տիրոջ Խոսքը մերժեցիր, Նա էլ քեզ մերժեց, որ թագավոր չլինես» (Ա Թագավորաց 15.23):

Այս պահին կխոսեմ երկրորդ պնդման մասին. «Համառությունը... կռապաշտության *պես է»:* «Համառել» բառն այս խոսքում նշանակում է «հրել» կամ «ճնշել»: Սավուղը հրում էր իրենից ճշմարտությունը և լիակատար հնազանդությունը:

> «Պես» բառը այս խոսքում շեղագրով է գրված, ինչը նշանակում է, որ այն բացակայում է բնագրում: Այդպիսի բառ չկա եբրայերենում, և թարգմանիչներն ավելացրել են այն՝ տեքստն ընթեռնելի դարձնելու համար: Ավելի ճիշտ կլինի այս հատվածը թարգմանել այսպես. «Համառությունը... կռապաշտություն է»:

Իրականում, երբ ինչ-որ մեկը գիտի ճշմարտությունը, գիտի Աստծո կամքը, գիտի, թե ինչ է Աստված ասել, սակայն հրում է դա իրենից և չի հնազանդվում, դա կռապաշտություն է: Ինչո՞ւ են մարդիկ այդպես վարվում: Քանի որ նրանց կամքը, երազանքները և ցանկություններն ավելի կարևոր են իրենց համար, քան Աստծունը: Այդ ամենը իրենց կյանքում ավելի մեծ առաջնահերթություն է, քան Նա, իսկ կուռքն այն է, ինչը մենք Աստծուց ավելի կարևոր ենք համարում:

Սավուղը հավատում էր և նույնիսկ դավանում. «Ես հնազանդվեցի Աստծուն», բայց քանի որ նա լիովին չէր հնազանդվել Աստծուն, այլ որոշել էր կարևորել ժողովրդի ցանկությունները (ավելի ճիշտ՝ իր ցանկությունները) ավելի, քան Տիրոջ Խոսքը, դա կռապաշտություն էր: Այն կուրացրեց նրան՝ թույլ չտալով տեսնել իր արհամարհանքը Տիրոջ հանդեպ:

Այն, ինչը վերաբերում էր ամբողջ մարդկությանը Հռոմեացիների թղթում, ճշմարիտ է նաև Սավուղի դեպքում: Սավուղի կռապաշտության հիմքում արձաններ, արձանիկներ, զոհասեղաններ և տաճարներ չէին: Խնդիրն այն էր, որ նա պատշաճ երկրպագություն չէր տալիս Աստծուն, այսինքն՝ չէր հնազանդվում այն բանին, ինչ Աստված հայտնել էր: Այս վարքագծի պատճառով մարդն անգիտակցաբար փոխում է ճշմարտությունը ստի հետ: Արդյունքում Սավուղը տրվեց խաբեությանը: Խաբեությունը դրդեց նրան «անմիտ մտածողության», և նա սկսեց անել «այնպիսի բաներ, որոնք երբեք չպետք է արվեին»: Սավուղի կռապաշտությունը ողբերգական արդյունք ունեցավ. նրա կյանքն ավելի ու ավելի լցվեց չարությամբ: Նա դարձավ նախանձ, պահանջկոտ և անխոհեմ. նա լցվեց բարկությամբ, սկսեց հարձակվել Աստծո ծառաների վրա՝ ատելությամբ լցված, սպանեց անմեղ մարդկանց և նույնիսկ դիմեց վհուկի՝ Աստծուն դիմելու փոխարեն: Ահա Սավուղի բնավորության գծերից մի քանիսը, որոնք ձևավորվեցին կռապաշտության պատճառով:

Հաճախ մարդիկ, ովքեր հարաբերություններ ունեն Աստծո հետ, սակայն իրենց ցանկությունները գերադասում են այն բանից, ինչ Նա պարզորեն հայտնել է Աստվածաշնչում, չեն նկատում իրենց անհնազանդությունը: Ինչպես որ Սավուղի դեպքում, կռապաշտությունը կուրացնում է մեզ՝ ճշմարտությունը տեսնելու համար: Մենք փոխում ենք ճշմարտությունը խաբեությամբ և հավատում ենք, որ Աստված մեր կողմն է: Մենք կարծում ենք, որ Նա հասկանում է մեր սիրտը, և այդ պատճառով հաշտվում է մեր վարքի հետ ու հավանություն տալիս մեր կյանքին, այնինչ, փաստորեն մենք հակառակ ենք Աստծուն և դարձել ենք Նրա թշնամին:

Գոհունակություն

Ես կներկայացնեմ կռապաշտության հաջորդ կողմը՝ սահմանելով երկու բանալի բառ: Առաջինը «գոհունակ» («գոհունակություն») բառն է: «Մերիամ-Վեբսթեր» բառարանը սահմանում է այն որպես «զգալ կամ ցուցաբերել բավականություն՝ սեփական ունեցվածքով, կարգավիճակով կամ իրավիճակով»: Նոր կտակարանում այս իմաստով ամենից հաճախ օգտագործվող հունարեն բառը *«արկեո»*-ն է, որի սահմա-

նումն է. «բավարարել, բավական լինել, գոհացնել և փոխաբերական իմաստով՝ լինել ուժեղ և ի վիճակի՝ ինչ-որ մեկին օգնելու» *(«Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան»):*

Մենք չենք կարող պատշաճ կերպով ծառայել, եթե գոհունակ չենք: Եթե մեզնից բացակայում է այս առաքինությունը, մենք կդիտարկենք իրավիճակները *մեր անձնական շահի* տեսանկյունից: Մեր գործողությունները և խոսքերն արտաքուստ կարող են անեսասեր և նույնիսկ անձնազոհ թվալ, սակայն եթե դրանք հիմնված չեն գոհունակության վրա, ապա բխելու են շահամոլությունից:

Պողոսը մի եկեղեցու գրում է. «Ոչ թե, որ ես խոսում եմ կարիքի մասին, որովհետև ես սովորել եմ, ինչ վիճակում էլ լինեմ, գոհ լինել» (Փիլիպեցիների 4.11, NKJV): Իհարկե, նա ուներ կարիքներ. այնուամենայնիվ, այս խոսքերից առաջ նա ասաց այն մարդկանց, որոնց ինքը ծառայում էր, որ չէր ուզում նրանց նվերը իր օգտի համար, այլ՝ նրանց օգտի: Նա չէր կարող ստել կամ չափազանցնել՝ գրելով Սուրբ գիրքը. այնպես որ, մենք գիտենք, որ հենց դա էր նրա իրական շարժառիթը, և որ դա «քաղաքականապես ճիշտ» արտահայտություն չէր: Նրա շարժառիթները կարող էին այդ աստիճան անձնուրաց լինել միայն մի դեպքում. եթե նա լիովին գոհունակ լիներ, նույնիսկ լուրջ կարիքներ ունենալու դեպքում:

Սա է պատճառը, որ Աստվածաշունչն ասում է մեզ՝ հավատացյալներիս. «Աստվածապաշտությունը *գոհունակության* հետ՝ մեծ շահ է: Եվ ունենալով կերակուր և հագուստ՝ սրանցով պետք է *գոհ* լինենք» (Ա Տիմոթեոս 6.6,8, NKJV): Գոհունակության մեջ «մեծ շահ» կա, սակայն այդ շահը միշտ չէ, որ արտահայտվում է մեր կյանքում: Գոհունակությունն օգնում է մեզ հաստատուն լինել և չհանձնվել՝ մինչև մեր աղոթքի պատասխանը ստանալը:

Մեկ անգամ աղոթքի մեջ ես հարցրի Տիրոջը, թե ինչպես է *Նա* սահմանում գոհունակությունը: Եվ իմ սրտում լսեցի. *«Լիարժեք բավականություն Իմ կամքի մեջ»:* Մեր Տեր Հիսուսի կյանքը գոհունակության լավագույն օրինակն է: Մենք շարունակաբար լսում ենք Նրա խոսքերում. «Իմ կերակուրն այն է, որ Ինձ Ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ» (Հովհաննես 4.34): Նրա գոհունակությունն Աստծո կամքով և նվիրումն Աստծո կամքին ակնհայտ է մեսիական սաղմոսներից մեկում. «Ես բերկրանք եմ զգում՝ Քո կամքը կատարելով, ո՛վ Իմ Աստված, և Քո օրենքն Իմ սրտում է» (Սաղմոս 40.8, NKJV): Նրա համար գոյություն չուներ ոչ մի ցանկություն կամ ձգտում՝ Աստծո կամքից դուրս: Նա ձգտում էր կատարել Իր Հոր ցանկությունները:

Գոհունակությունը չպետք է շփոթել ինքնագոհության հետ, քանի որ

իմաստային առումով դրանք տարբերվում են: Դուք կտեսնեք, որ Հիսուսը մատուցում էր «աղոթք և աղաչանք՝ սաստիկ աղաղակով և արտասուքով» (Եբրայեցիների 5.7): Նա շուռ տվեց դրամ փոխողների սեղանները և Իր չարչարանքներին նախորդող գիշերը մեծապես փափագում էր ընթրել առաքյալների հետ: Նա գոհ չէր՝ տեսնելով կապված, հիվանդ և կորսված մարդկանց: Նա պայքարում էր ճնշվածների համար: Այնուամենայնիվ, երբ հերթը հասնում էր Իր կարիքներին ու ցանկություններին, Նա գոհունակ էր: Նա ուղղում էր խնդրանքներն Իր Հորը և հավատում էր, որ Նա կմատակարարի:

Նրա գոհունակությունից ծնվեցին հետևյալ խոսքերը. «Ես կենդանի եմ Հոր համար»: Այս համոզմունքն առաջացրեց այնպիսի արտասովոր ապահովություն և կայունություն, որ Նա համարձակ հայտարարեց. «Ես գիտեմ, թե որտեղից եմ գալիս, և թե ուր եմ գնում» (Հովհաննես 6.57 և 8.14, NLT): Սա է պատճառը, որ Նրան անկարելի էր կանգնեցնել կամ մոլորեցնել, և որ Նա Աստծո կատարյալ Ծառան էր:

Ագահություն

Երկրորդ բանալի բառը, որն առնչվում է կռապաշտությունը սահմանելու հետ, «ագահ» («ագահություն») բառն է, որը «գոհունակ» բառի լիովին հակառակ իմաստն ունի: Սահմանենք այս բառը, որպեսզի ավելի լավ հասկանանք այն Աստծո Խոսքում:

Սկսենք բացատրական բառարանի սահմանումից: *«Վեբսթերի բառարանի»* սահմանումներից մեկն է. «որոշակի ենթադրյալ բարիք ձեռք բերելու և ունենալու ուժգին ցանկություն»: Այս բառի հունարեն համարժեքի սահմանումը շատ ավելի նկարագրական է: Բայց մինչև այն ներկայացնելը, կարդանք Պողոսի խոսքերը Կողոսացիների թղթում: Այս խոսքերը նախորդում են մի հատվածի, որում նա նույնպես հիշատակում է *ագահությունը:*

> «Ուրեմն, եթե դուք հարություն եք առել Քրիստոսի հետ, *փնտրե՛ք* այն բաները, որոնք վերևում են, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմը: *Ուղղե՛ք* ձեր միտքը վերևում գտնվող բաների վրա, ոչ թե՝ այս երկրում եղածների: Որովհետև դուք մահացաք, և ձեր կյանքը թաքնված է Քրիստոսի հետ Աստծո մեջ: Երբ Քրիստոսը, *Ով* մեր կյանքն է, հայտնվի, դուք նույնպես կհայտնվեք Նրա հետ փառքով» (Կողոսացիների 3.1-4, NKJV):

Պողոսը տալիս է մեզ *գոհունակ* վիճակում մնալու բանալին: Երբ լիովին գիտակցում ենք, որ ուխտի մեջ ենք Ամենակարող Աստծո հետ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, մենք հասկանում ենք, որ չունենք ոչնչի պակաս՝ բացարձակապես ոչնչի: Հիսուսն ասում է, որ «Թագավորությունը մերն է», և եթե մենք փնտրում ենք Նրա թագավորությունը առաջին, ոչ թե՝ երկրորդ կամ երրորդ հերթին, այն ամենը, ինչի կարիքը ունենք, կտրվի մեզ:

Հենց սրան էր ուղղված թշնամու առաջին մեծ հարձակումը Հիսուսի դեմ: Անապատում փորձվելու ժամանակ սատանան փորձեց այնպես անել, որ Հիսուսը մատակարարում փնտրեր՝ Իր Հորից առանձին: Պայմանները վիատեցնող էին. քառասնօրյա ծոմից հետո Հիսուսը խիստ քաղցած էր: Թշնամին հույս ուներ, որ կհամոզեր Հիսուսին անցում կատարել գոհունակությունից դեպի ագահությունը, բայց Հիսուսը հրաժարվեց: Կարճ ժամանակ անց հրեշտակները եկան և կերակրեցին Նրան երկնային կերակուրով: Թշնամու ծրագիրը ձախողվեց Հիսուսի դեպքում, բայց դա չի նշանակում, որ նա չի օգտագործելու նույն ռազմավարությունը մեր դեմ: Նրա նպատակն է՝ համոզել մեզ, որ դադարենք գոհունակ լինել Աստծո թագավորության մատակարարմամբ և ինքներս մատակարարում փնտրենք:

Պողոսն ասում է, որ նրանք, ովքեր *փնտրում* են Աստծուն, ոչ թե պարզապես օգտագործում են Աստծուն, որ ստանան Նրանից իրենց ուզածը, այլ ամբողջ էությամբ փափագում են ճանաչել Նրա սիրտը և հաճելի լինել Նրան, հասնում են այնպիսի վիճակի, որում իրենց միտքն *ուղղված* է վերին իրողություններին: Այս վիճակում մենք դառնում ենք Հիսուսի նման. մեր փափագն է՝ կատարել Նրա կամքը, Ով ուղարկում է մեզ: Այս վիճակի անհավատալի արդյունքն այն է, որ այժմ մեզ, ինչպես և Հիսուսին, անկարելի է կանգնեցնել կամ մոլորեցնել. մենք իրավամբ կարող ենք կոչվել Աստծո թագավորության ճշմարիտ ծառաներ: Պողոսը շարունակում է.

> «Ուրեմն, սպանե՛ք ձեր անդամները, որ երկրի վրա են՝ պոռնկությունը, պղծությունը, կիրքը, չար ցանկությունը և ագահությունը, որ կռապաշտություն է: Որոնց համար Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա» (Կողոսացիների 3.5,6):

Կարդացե՛ք Պողոսի խոսքերը՝ «ագահությունը, որ կռապաշտություն է»: Ահա մեր հաջորդ բանալին՝ հասկանալու համար, թե իրականում ինչ է կռապաշտությունը: Այն կարելի է հեշտորեն տեսնել հեթա-

նոս երկրներում, որտեղ կառուցված են արձաններ, զոհասեղաններ և տաճարներ, բայց անհրաժեշտ է հասկացողություն և զանազանություն՝ այն «քաղաքակիրթ մշակույթում» նկատելու համար: Պողոսն ասում է, որ երբ անցում ենք կատարում գոհունակությունից դեպի ագահությունը, մենք թողնում ենք մտերիմ հարաբերություններն Աստծո հետ և ընդունում ենք կռապաշտությունն ու շնությունը:

Այժմ դիտարկենք հունարեն *«պլեոնեքսիա»* բառը, որը թարգմանված է այս խոսքում «ագահություն» բառով: Թույլ տվեք առաջարկել երեք սահմանում հեղինակավոր աղբյուրներից.

> «Սյուն» Նոր կտակարանի մեկնություն. «Անպատշաճ ցանկություն՝ ավելին ունենալու համար»:
> «Հին հունարենի աստվածաշնչյան բառարան». «Այնպիսի վիճակ, երբ մարդը ցանկանում է ավելի, քան հասանելի է իրեն»:
> «Քրիստոսակենտրոն մեկնություն». «Սեփական անձը կուռքի վերածող, ագահ մտածելակերպ»:

Ուշադրություն դարձնենք վերջին սահմանմանը. «սեփական անձը կուռքի վերածող, ագահ մտածելակերպ»: Երբ մեր զգացմունքներն ուղղված չեն Երկնքի թագավորությանը, քանի որ մենք առաջին հերթին չենք փնտրել այն, ապա կհայտնվենք «գոյատևման ռեժիմում»: Կսկսենք կառչել այն ամենից, ինչը, մեր համոզմամբ, պետք է մեզ՝ բավականություն ունենալու համար: Մենք կփնտրենք հաճույք, հարստություն և նյութական շահ, հռչակ, կարգավիճակ, դիրք, համբավ, ընկերակցություն, բավականություն, իշխանություն, հեղինակություն, կիրք և շատ այլ բաներ, որոնք մարդը ցանկանում է սեփական անձը կուռքի վերածելու դեպքում: Մենք հայտնվում ենք այս վիճակում, երբ գոհունակ չենք: Մենք ձգտում ենք այդ ամենին, քանի որ չունենք խաղաղություն և անդորր այն ամենով, ինչ Աստված տվել է մեզ: Մենք լարվածություն ենք զգում այն ծրագրի կամ ընթացքի հանդեպ, որն Աստված որոշել է մեզ համար:

Անկասկած՝ գոհունակությունը և ագահությունը հակադիր ուժեր են: Գոհունակությունը հեռացնում է մեզ կռապաշտությունից և մոտեցնում է Աստծո սրտին, իսկ ագահությունը հեռացնում է մեզ Աստծուց և ուղղորդում է դեպի կռապաշտության զոհասեղանները: Դրանք հակառակ իմաստներ ունեցող բառեր են, ինչն է՛լ ավելի է ցույց տալիս դրանց տարբերությունը: Այժմ կարող ենք հեշտորեն հասկանալ, թե ինչու է Եբրայեցիների թղթի հեղինակը համարձակ գրում հետևյալը.

> «Վարքն առանց արծաթասիրության լինի. բավական հա-

> մարեք այն, որ ձեռքներումդ ունեք, որովհետև Ինքն ասաց, թե. «Չե՛մ թողնի քեզ և երեսից չե՛մ զցի»: Այնպես որ, համարձակ ենք ասելու. «Տերն է իմ օգնականը, և ես չեմ վախենա. ի՞նչ կանի ինձ մարդը»» (Եբրայեցիների 13.5,6):

Հաջորդ գլխում կբացահայտենք, որ աստվածային գոհունակությունը վստահություն է հաղորդում մեզ ցանկացած նեղության մեջ: Գոհունակությունը թույլ չի տալիս մեզ ընկնել այն որոգայթների մեջ, որոնք այս աշխարհը լարում է հավատացյալների դեմ: Գոհունակության մեջ կա մեծ շահ և խաղաղություն, որը վեր է մարդկային մտքից:

Ի հակադրություն սրա՝ ագահությունն անհանգստություն է առաջացնում մեր մեջ, որը բորբոքվում է անդադար ցանկություններով և կրքերով: Նման վիճակում և՛ խաբեությունը, և՛ կործանումն անխուսափելի են:

գործնական քայլ

Անչափ կարևոր է, որ մենք հստակ հասկանանք Աստծո Խոսքի ճշմարտությունը: Այն գրված է մեզ համար, և այդ պատճառով մենք արդարացում չունենք: Ոչ ոք չի կարող կանգնել Աստծո առջև և ասել. «Տե՛ր, ես չգիտեի»: Նա հայտնում է Իրեն բոլոր ազգերին՝ արարչագործության միջոցով, և այդ պատճառով նրանք արդարացում չունեն: Նույն կերպով, Նա հայտնում է Իր կամքը մեզ՝ Սուրբ գրքի միջոցով, և մենք նույնպես արդարացում չունենք:

Որքան էլ դժվար լինի լսելը, որ մասնակի հնազանդությունը նույնն է, ինչ կռապաշտությունը, մենք պետք է շնորհակալ լինենք, որ իմացանք այս մասին: Եթե գիտենք, թե ինչ է լինելու քննության ժամանակ, մենք կարող ենք հանձնել այն ամեն անգամ: Սա է Աստծո բարությունն ու ողորմությունը:

Քանի որ անչափ հեշտ է չնկատել այն բնագավառները, որոնցում մենք մասնակիորեն ենք հնազանդվել Աստծուն կամ համառ և ագահ ենք եղել, խնդրե՛ք Սուրբ Հոգուն հայտնել դրանք ձեր կյանքում: Ապաշխարե՛ք ամեն մի բնագավառի համար, որը Նա ցույց է տալիս ձեզ, և խնդրե՛ք Նրան մաքրել ձեզ: Եվ, ի վերջո, խնդրե՛ք Նրան՝ լցնի ձեր կյանքը թարմությամբ և զորացնի ձեզ, որ ի սրտե հնազանդվեք Նրան:

12

ԹԵԹԵՎԱՑՆԵԼ ՃՆՇՈՒՄԸ

Նախորդ գլխում ես ներկայացրի կռապաշտության երկու կողմ՝ համառությունը և ագահությունը: Այժմ ի մի բերենք այդ երկուսը, քանի որ դրանք միասնաբար են գործում, և դրանց գործելակերպը բացահայտելը կօգնի մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչու է հավատացյալն ընկալունակ կրիպտոնաքարի հանդեպ:

Բարդ սցենար

Կրկին անդրադառնանք Սավուղ թագավորին: Նա գոհ չէր Աստծո կամքի մեջ մնալուց: Իր համառության պատճառով նա բաց էր ագահության համար: Նրա առաջին սխալը ամաղեկացիների հետ կապված դեպքը չէր. այն տեղի էր ունեցել նրա թագավորության սկզբում՝ փղշտացիների հետ բախման ժամանակ: Իսրայելի թշնամիներն ահռելի բանակ հավաքեցին: Այն բաղկացած էր երեք հազար կառքից, որոնք այդ օրերում տանկերի նման էին, և բավականին շատ հետևակային զորքից, որ թվում էր՝ զինվորները ծովափի ավազահատիկների պես շատ էին: Նրանք բանակ տվեցին Մաքմասում և պատրաստ էին հարձակման:

Սավուղի բանակը ոչ մի կերպ չէր կարող համեմատվել նրանց հետ. այն նորաստեղծ էր և դեռևս կազմավորման փուլում էր: Գրված է.

> «Եվ Իսրայելի որդիները տեսան, որ նեղության մեջ էին, և որ ժողովուրդը տագնապած է, և թաք կացան այրերում, թփե-

> րում, ժայռերում, աշտարակներում և փոսերում: Եվ եբրայեցիները Հորդանանով անցան Գադի ու Գաղաադի երկիրը, բայց Սավուղը դեռ Գաղգաղայի մեջ էր, և ամբողջ ժողովուրդը դողալով նրան հետևում էր» (Ա Թագավորաց 13.6,7):

Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսի ճնշման ներքո էր գտնվում Սավուղը: Դուք առաջնորդն եք, հրամանատարը և թագավորը, և ձեր երիտասարդ բանակի առջև կանգնած է ավելի փորձառու, հզոր և մեծաքանակ ռազմական ուժ: Սավուղը տեսնում էր իր վատագույն մղձավանջը. իր բանակի մեջ դասալքություն էր սկսվում: Այնուամենայնիվ, օգնությունը ճանապարհին էր. ավագ մարգարե Սամուելը պետք է գար այդ օրը և զոհ մատուցեր Տիրոջը: Արդյունքում մարդկանց վստահությունը Սավուղի հանդեպ կվերականգնվեր, և նրանք խիզախություն կստանային մարտին մասնակցելու համար: Այնուամենայնիվ, մի խնդիր առաջացավ.

> «Եվ նա Սամուելի որոշած ժամանակի չափ յոթ օր սպասեց, բայց Սամուելը Գաղգաղա չեկավ, և ժողովուրդը նրա մոտից ցրվեց: Եվ Սավուղն ասաց. «Ողջակեզը և խաղաղության զոհը ինձ մոտ բերեք»: Եվ ինքը մատուցեց ողջակեզը» (Ա Թագավորաց 13.8,9):

Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Սավուղն Աստծո կողմից լիազորված չէր զոհ մատուցելու համար: Այդ գործառույթը վերապահված էր քահանային (Սամուելը և՛ մարգարե էր, և՛ քահանա): Իհարկե, նման լարված իրավիճակում Սավուղը և նրա օգնականները կարող էին մտածել. *«Հուսահատ պահերը հուսահատ քայլեր են պահանջում»:* Այնուամենայնիվ, շուտով Սամուելը փարատելու էր ցանկացած կասկած այդ հարցի վերաբերյալ:

> «Եվ երբ որ նա ավարտեց ողջակեզ մատուցելը, այն ժամանակ Սամուելը եկավ: Եվ Սավուղը դուրս եկավ նրան դիմավորելու, որ նրան բարևի: Եվ Սամուելն ասաց. «Ի՞նչ ես արել»: Եվ Սավուղն ասաց. «Տեսա, որ ժողովուրդն իմ մոտից ցրվում է, և դու քո որոշած օրերին չեկար, և փղշտացիները ժողովված են Մաքմասի մեջ: Այն ժամանակ ասացի. «Փղշտացիները հիմա ինձ վրա կիջնեն Գաղգաղա, և ես տակավին Տիրոջ առջև աղոթք չեմ արել»: Եվ ես ինձ ստիպելով ողջակեզը մատուցեցի»: Եվ Սամուելն ասաց Սավու-

> ղին. «Դու հիմարություն արեցիր, չպահեցիր քո Տեր Աստծո պատվիրանը, որ Նա քեզ պատվիրել է: Որովհետև հիմա Տերը քո թագավորությունը Իսրայելի վրա մինչև հավիտյան կհաստատեր: Բայց հիմա քո թագավորությունը հաստատ չի լինելու: Տերն Իր համար Իր սրտի համեմատ մի մարդ է ուզում»» (Ա Թագավորաց 13.10-14):

Մարգարեները փարատում են ցանկացած կասկած՝ վերադարձնելով մեզ Տիրոջ հանձնարարություններին: Դժվար պահերին մարդիկ հեշտորեն կարող են մոռանալ, թե ինչ է Աստված կամենում: Սավուղի անվստահությունից և դժգոհությունից բխող քայլերն ասում էին Իսրայելին, որ դժվար պահերին մենք ինքներս կարող ենք որոշել՝ հնազանդվե՞լ Աստծուն, թե՞ ոչ: Սակայն դա ճիշտ չէ: Տիրոջը հնազանդվելը մշտապես ամենակարևոր բանն է՝ անկախ հանգամանքներից:

Սավուղի անվստահությունը պարզապես ցույց տվեց, որ նա գոհունակ չէր: Նա ուզում էր վերահսկել իր շուրջը կատարվող ամեն բան, սակայն հանգամանքներն այլ էին: Այդ ճնշումն անտանելի էր նրա համար, և նա որոշեց թեթևացնել այն: Իր դժգոհության պատճառով նա սկսեց ձգտել իր ցանկալի հանգստությանը:

Գոյություն ունի մի ճշմարտություն, որը մենք պետք է ընդունենք. Աստծուն ծառայելիս հաճախ ենք բախվելու նեղությունների, դժվարությունների և փորձությունների: Հիսուսը երաշխավորում է սա. «Աշխարհում նեղություն կունենաք» (Հովհաննես 16.33): Նեղությունը ցույց է տալիս մեր հավատքի չափը: Եթե տեսնում ենք, որ մեր հավատքը թույլ է, եթե չունենք հավատքի անհրաժեշտ չափը, ժամանակն է աղաղակել Աստծուն, ուսումնասիրել Նրա Խոսքը և սպասել Նրա Հոգուն: Եթե այսպես վարվենք, մենք դուրս կգանք նեղությունից ավելի մեծ հավատքով, քան ունեինք նախկինում:

Մեր հավատքը թանկ է՝ ավելի թանկ, քան ցանկացած բան, որը կա այս աշխարհում: Մտածե՛ք այսպես. եթե ինչ-որ մեկն առաջարկեր ձեզ հարյուրտոկոսանոց գործարար ծրագիր և միջոցներ՝ այդ ծրագրի մեջ ներդրում կատարելու համար, ի՞նչ կանեիք: Մի՞թե դուք կտրտնջայիք և կասեիք. «Դա շատ բարդ և աշխատատար է»: Թե՞ անմիջապես կօգտվեիք այդ հնարավորությունից և անշեղորեն կիրագործեիք այդ ծրագիրը: Իհարկե, մենք անմիջապես գործի կանցնեինք և կսպասեինք մեծ շահույթների:

Նույնը տեղի է ունենում ամեն անգամ, երբ դուք բախվում եք դժվարությունների, որոնք ավելի մեծ են, քան դուք, և հավատացեք ինձ՝

Աստված այնպես կանի, որ դուք ունենաք նման հնարավորություններ: Նա չի կամենում հուսահատության հասցնել ձեզ. Նրա նպատակն է, որ դուք ստանաք *ավելի մեծ հավատք՝ որպես վարձատրություն:*

Եվս մեկ բարդ սցենար

Այժմ խոսենք Դավթի մասին, ով Սավուղի հակապատկերն էր: Նա բախվեց շատ ավելի վհատեցնող իրավիճակի:

Նա և այն վեց հարյուր մարդիկ, ովքեր դեռ հավատարիմ էին իրեն, մերժվեցին: Այդ օրը լավ օր չէր, բայց վատագույնը դեռ առջևում էր: Նրանք վերադարձան իրենց տուն՝ Սիկելակ, և հայտնաբերեցին, որ մինչ իրենք տանը չէին, ամաղեկացիները հարձակվել էին և հափշտակել այն, ինչ արժեքավոր էր իրենց համար՝ իրենց կանանց, երեխաներին և ունեցվածքը, իսկ մնացածն այրել էին: Ոչինչ չէր մնացել:

Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ էր զգում Դավիթը: Նա տասներկու տարուց ավելի թաքնված էր Իսրայելի անապատներում և տափաստաններում: Ամբողջ այդ ընթացքում նա չէր հանդիպել իր ընտանիքի անդամներին և մանկության ընկերներին, չէր գնացել երկրպագության հավաքույթների նրանց հետ և չէր մասնակցել հասարակական կամ համազգային որևէ իրադարձության: Նա ստիպված էր թաքնվել, իսկ երբեմն՝ փախչել Իսրայելի լավագույն զինվորներից, որոնք հետևում և հետապնդում էին իրեն:

Ի վերջո, իրավիճակն այնքան վտանգավոր դարձավ, որ նա, նրա զինվորները և նրանց ընտանիքները հարկադրված էին հեռանալ իրենց երկրից: Արդեն երկու տարի է, ինչ նրանք ապաստան էին գտել օտար երկրում: Որքա՞ն ժամանակ էր դա տևելու: Որտե՞ղ էր նրանց վարձատրությունը Աստծուն ծառայելու համար: Մի քանի անգամ Դավիթը կարող էր ինքնակամ վարվել և սպանել Իսրայելի առաջնորդին, որին Աստված իր ղեկավարն էր նշանակել: Դա կթեթևացներ Դավթի ճնշումը և նեղությունը: Բայց նա հավատարիմ մնաց, հարատևեց և պահպանեց գոհունակության վիճակը տասնչորս տարի շարունակ:

Մի պահ կանգ առեք և մտածեք: Պատահե՞լ է, որ ուզեիք հանձնվել երեք շաբաթ տևող նեղությունից հետո: Իսկ ի՞նչ կասեիք երեք ամսվա կամ երեք տարվա մասին:

Երեք տարին երկար ժամանակ է՝ մշտապես նեղություններ կրելու համար, սակայն դա ոչինչ է այն բանի համեմատ, ինչ կրեց Դավիթը: Սավուղը պետք է դիմանար գրեթե մեկ շաբաթ, սակայն տեղի տվեց: Նա որոշեց անհնազանդ լինել Աստծուն, որպեսզի արժանանար իր են-

թակաների հարգանքին և ամրապնդեր իր դիրքը: Նա ընտրեց այնպիսի վարք, որը և՛ կթեթևացներ իր վիճակը, և՛ կբարձրացներ իր հեղինակությունը: Նա չսպասեց այն առաջխաղացմանը, որը գալիս է միայն Աստծուց:

Վերադառնալով Դավթի պատմությանը՝ նա և նրա զինվորները վերադարձան Սիկելակ և պարզեցին, որ այն ամենը, ինչը թանկ և արժեքավոր էր իրենց համար, այլևս չկար: Տեսնելով դա՝ Դավիթը և նրա զինվորներն այնքան լաց եղան, մինչև որ ուժասպառ եղան: Դավիթը կարող էր մտածել, որ ավելի վատ բան այլևս չէր կարող լինել, բայց դրանով ամեն ինչ չավարտվեց: Նրան ավելի մեծ նեղություն էր սպասվում: Նրա զինվորները՝ նրա վերջին վեց հարյուր ընկերներն այնքա՛ն բարկացան նրա վրա, որ ուզում էին սպանել:

> «Դավիթը մեծ տագնապի մեջ էր, որովհետև ժողովուրդն ուզում էր քարկոծել նրան, նրա համար որ բոլոր ժողովրդից ամեն մեկի սիրտը կսկծում էր իր տղաների և աղջիկների համար» (Ա Թագավորաց 30.6):

Սավուղի ճգնաժամային իրավիճակում նրա զինվորները դիմեցին դասալքության: Նա միայնակ զգաց իրեն և սկսեց հուսահատորեն ձգտել հավանության, հարգանքի և պատվի: Նա հասավ իր նպատակին՝ փոխզիջման ենթարկելով Աստծո պատվերը:

Ի հակադրություն դրան՝ Դավթի մարդիկ չէին փախչում, այլ ուզում էին սպանել նրան: Դավթի իրավիճակը ավելի բարդ էր, քան Սավուղինը: Սավուղի դժգոհությունը դրդեց նրան թուլացնել լարվածությունը՝ Աստծուն վստահելու և Սամուելին սպասելու փոխարեն: Դավթի արձագանքը միանգամայն այլ էր.

> «Բայց Դավիթը զորացավ իր Տեր Աստծով: Եվ Դավիթը Աքիմելեքի որդի Աբիաթար քահանային ասաց. «Եփուդ մոտեցրու ինձ», և Աբիաթարը եփուդը Դավթին մոտեցրեց: Եվ Դավիթը Տիրոջը հարցրեց ու ասաց. «Այս գնդի ետևից հալածե՞մ: Նրանց կհասնե՞մ»: Եվ Նա նրան ասաց. «Հալածի՛ր, որովհետև անպատճառ կհասնես և բոլորովին կազատես»» (Ա Թագավորաց 30.6-8):

Դավիթը չփորձեց համոզել նրանց՝ իր կյանքը փրկելու համար, և ո՛չ էլ որևէ արկածախնդիր ծրագիր առաջարկեց: Նա չասաց. «Հերի՛ք է: Ի՞նչ օգուտ, որ ես հավատարմորեն ծառայեցի Աստծուն: Ես տվեցի

Նրան իմ լավագույն տարիները: Նա էր, որ դրեց ինձ նման բռնակալի ենթակայության ներքո: Եվ Նա է իմ դժոխային կյանքի պատճառը»:

Դավիթը երբեք չմեղադրեց Աստծուն: Նույնպես, նա չէր ձգտում հայտնվել պալատում: Իր նեղության ընթացքում Դավիթը կարող էր վրեժ լուծել՝ սպանելով Սավուղին, և հասնել այն գահին, որն Աստված խոստացել էր իրեն: Սակայն նա սպասեց Աստծուն, իսկ Սավուղը՝ ոչ: Դավիթը պահպանեց իր գոհունակությունը և որոշում կայացրեց հարցնել Աստծուն նախքան ինչ-որ բան ձեռնարկելը:

Աստծո փրկությունը և մատակարարումը մշտապես գալիս են, սակայն ոչ մինչև այն պահը, երբ Նրա Խոսքին անհնազանդ լինելու հնարավորություն է ընձեռվում: Սա նման է Հիսուսի փորձությանը անապատում, որտեղ սատանան առաջարկեց Նրան ազատվել Իր նեղությունից նախքան հրեշտակների գալը և Նրան ծառայելը: Գրեթե միշտ հենց այսպես էլ լինում է: Գոհունակ վիճակում մնալն օգնում է, որ ինքներս մեզ համար մատակարարում և առաջխաղացում չփնտրենք:

Վերադարձ ամաղեկացիներին

Շարունակելով ուսումնասիրել Սավուղի կյանքը՝ անդրադառնանք ամաղեկացիների հետ կապված դեպքին, որը, իհարկե, տեղի էր ունեցել փղշտացիների հետ պատերազմելուց հետո:

Ինչո՞ւ այս անգամ Սավուղը չհնազանդվեց: Ինչո՞ւ նա խնայեց Ամաղեկացիների թագավորի կյանքը և պահպանեց լավագույն կենդանիներին, թեև Աստծո հանձնարարությունը շատ պարզ էր: Կրկին, պատճառը պարզապես Սավուղի ագահությունն էր, որը բխում էր նրա անվստահությունից և Աստծո կամքից դժգոհ լինելուց:

Առաջինը՝ ինչո՞ւ խնայել թագավորի կյանքը: Որևէ երկիր գրավելը մեծ ձեռքբերում էր, և այդ ժամանակներում, երբ թագավորները հաղթանակ էին տանում պատերազմում, նրանք սովորաբար պարտված թագավորներին բերում էին իրենց պալատը: Պարտված երկրի թագավորը կենդանի հաղթանշան էր: Ամեն անգամ, նայելով նրան, կարելի էր հիշել նրա երկիրն ամբողջությամբ պարտության մատնելու մասին: Ամեն անգամ, նայելով նրան, թագավորի ծառաները հիշում էին, թե որքան հզոր առաջնորդի էին ծառայում: Դա եսասիրության, ինքնավստահության աղբյուր էր և մեծ ձեռքբերում էր, հատկապես՝ անվստահ առաջնորդի համար:

Երկրորդը՝ ինչո՞ւ պահպանել լավագույն ոչխարներին, այծերին, խոշոր եղջերավոր անասուններին, գեր հորթերին և գառներին: Կրկին, պատճառը նույնն էր. Սավուղն ուզում էր հարգանք և պատիվ ստանալ իր զինվորներից և ժողովրդից: Եթե նա տար մարդկանց ամաղեկացիների լավագույն կենդանիները, նրանք կհիշեին, թե որքան լավ առաջնորդ էր ինքը: Հետագայում նրանք կպարծենային նրա ուժով, ռազմավարությամբ և իմաստությամբ, որոնցով նա հարձակվեց այդ երկրի վրա և պարտության մատնեց: Ժողովուրդը կտեսներ, որ Աստված նրա հետ է, և ոչ մի դեպքում չէր վիճարկի նրա իշխանությունը:

Իր անվստահության պատճառով Սավուղը մշտապես ձգտում էր ամրապնդել դիրքը: Նա նույնիսկ արձան կանգնեցրեց իր համար այդ հաղթանակից հետո: Երբ մարգարեն հանդիմանեց նրան անհնազանդության համար, նա ավելի մտահոգված էր այն բանով, թե ինչ կմտածեին իր մասին իր ենթակաները և քաղաքացիները, քան՝ որ ինքը չէր հնազանդվել Աստծուն (տե՛ս Ա Թագ. 15.30): Սավուղի կարծիքով, եթե Իսրայելի ամենապատվելի մարգարեն՝ Սամուելը, նրա հետ չվերադառնար ժողովրդի մոտ, դա կվնասեր իր հեղինակությանը, հատկապես այն պատճառով, որ քիչ առաջ Սամուելը հանդիմանել էր նրան: Նա կարիք ուներ հաստատելու իր իշխանությունը և հեղինակությունը, թեև հետաքրքրական է, որ Աստված էր տվել նրան այդ իշխանությունը: Նա ձգտում էր հարգանքի, պատվի, մեծության և իշխանության ավելի, քան ցանկացած այլ բանի, ինչի պատճառով էլ համառորեն չէր հնազանդվում Աստծո առաջնորդությանը:

Պարզ ասած՝ Սավուղը գոհունակ չէր Աստծո կամքի մեջ:

Աղբյուր

Այժմ հասկանալի է, որ կուռքն ինչ-որ բանի աղբյուր է դառնում մեզ համար՝ կատարելով մեր անհագ ցանկությունները: Սա կարող է տեղի ունենալ մեր կյանքի ամեն մի բնագավառում: Կուռքը գրավում է այն տեղը, որին արժանի է Աստված: Այն կարող է լինել միջոց, որով մենք ստանում ենք երջանկություն, մխիթարություն, խաղաղություն, մատակարարում, իշխանություն, հարգանք և այլն: Աստված ասում է. «Դուք ձեզ համար... կուռքեր չշինեք» (Ղևտացիների 26.1): Մենք ենք կուռք շինողները, և կուռքը միշտ չէ, որ շինվում է քարով, փայտով կամ թանկարժեք մետաղներով: Կուռքը ուժ է ստանում մեր սրտից:

Կուռքը կարող է լինել ցանկացած բան, ինչը մենք կարևորում ենք ավելի, քան Աստծուն: Կուռքն այն է, ինչը սիրում ենք, և ինչը հաճելի է մեզ, ինչին մենք վստահում ենք, ինչը ցանկանում ենք, և ինչին ավելի շատ ենք ուշադրություն դարձնում, քան Տիրոջը: Տերը հայտնեց իմ կնոջը՝ Լիզային, որ կուռքն այն է, ինչից դուք ուժ եք ստանում կամ ինչին տալիս եք ձեր ուժերը: Հավատացյալը հայտնվում է կռապաշտության մեջ, երբ թույլ է տալիս, որ իր սիրտը դժգոհություն զգա և բավականություն փնտրի Աստծո կամքից դուրս: Այդ բավականությունը կարող է լինել որևէ անձնավորության, առարկայի կամ գործունեության մեջ:

Հուսով եմ՝ այժմ ձեզ համար պարզ է, որ կռապաշտությունը շատ ավելին է, քան արձանիկները, արձանները, զոհասեղանները և տաճարները: Քանի որ հասկացությունը կռապաշտության մասին հաճախ սահմանափակվել է նման բաներով, շատերը ուշադրություն չեն դարձնում Աստվածաշնչի կարևորագույն զգուշացումներին: Հաջորդ գլուխներում կշարունակենք բացահայտել կռապաշտության ճշմարիտ էությունը և ցույց կտամ, թե որքան տարածված և կործանարար է այն մեր քսանմեկերորդ դարի Արևմուտքի մշակույթում:

գործնական քայլ

Կռապաշտությունը, ըստ էության, այն է, որ գոյություն ունի ինչ-որ առարկա, երևույթ կամ անձնավորություն՝ Աստծուց բացի, որից դուք ուժ եք ստանում, և որին տալիս եք ձեր ուժերը: Կուռքն ինչ-որ բանի աղբյուր է դառնում մեզ համար: Մենք չենք ընկնում ծայրահեղության մեջ՝ ասելով, որ մարդիկ պետք է թողնեն իրենց աշխատանքը, քանի որ նրանք պետք է վստահեն, որ իրենց կարիքները կլրացնի Աստված, ոչ թե իրենց գործատուն: Այնուամենայնիվ, մենք պետք է հասկանանք, որ Աստված լրացնում է մեր կարիքները՝ մեր աշխատանքի միջոցով:

Մենք հասկանում ենք, որ Աստված սեր է տալիս մեզ մեր ընտանիքի անդամների միջոցով, և մենք սիրում ենք նրանց ի պատասխան, բայց գիտակցում ենք, որ Աստված է մեր Աղբյուրը, և պատվում ենք Նրան՝ որպես այդպիսին: Ամենակարևորն այն է, որ մենք պատվենք Աստծուն որպես մեր կյանքի Աղբյուրի, և մերժենք ցանկացած բան, ինչը հեռացնում է մեզ Նրանից:

Հուսով եմ՝ արդեն սկսում եք հասկանալ, որ կռապաշտությու-

նը ավելին է, քան արձանների առջև խոնարհվելը: Խնդրե՛ք Աստծուց ցույց տալ ձեզ, թե ինչպիսի ազդեցություն ունի կռապաշտությունը ձեր քաղաքի կամ բնակավայրի վրա, և բարեխոսե՛ք այդ բնագավառների համար: Աղոթե՛ք, որ Աստված ուղարկի Իր ճշմարտության լույսն այդ բնագավառներում, ուղարկի Իր զավակներին՝ որպես լույս, և հայտնի Իրեն՝ որպես ամենի Տեր:

13

ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Եկեք արագ ամփոփենք այն, ինչ սովորեցինք վերջին մի քանի գլուխներում:

Կռապաշտության էությունը արձանները, արձանիկները, զոհասեղանները և տաճարները չեն: Կռապաշտությունն այն է, երբ մարդկությունն անտեսում է Աստծո ուզածը, որպեսզի բավարարի սեփական կրքերը և ցանկությունները, որոնք հակառակ են Նրա կամքին:

Ցանկասիրության պատճառով մարդկանց կարծիքն Աստծո մասին խեղաթյուրվում է: Հետևաբար, երբ մարդը կռապաշտ է դառնում, Աստված հեռանում է և այդ մարդուն հանձնում է նրա անարգ կրքերին, որ նա ամոթալի բաներ գործի՝ ըստ իր ապականված բնական ցանկությունների: Բավականությունը, հաճույքները և ձգտումներն ի վերջո տանում են այնպիսի բաների, որոնց արդյունքը մահն է, ոչ թե կյանքը:

Նույնը կարող է տեղի ունենալ հավատացյալի կյանքում: Քրիստոնյան հայտնվում է կռապաշտության մեջ, երբ անարգում է այն, ինչ Աստված հստակ հայտնել է, որպեսզի ձեռք բերի այն, ինչ սաստիկ կերպով ցանկանում է: Այնպես որ, ըստ էության, կռապաշտությունը *գիտակցված անհնազանդություն* է Աստծո կամքին: Բոլորովին այլ բան է, երբ հավատացյալը *մեղքի մեջ է ընկնում* և ապաշխարում է: Կռապաշտությունն այն է, երբ հավատացյալը *տրվում է մեղքին:* Այդ անձնավորությունը բարձրացրել է իր ցանկությունն Աստծո կամքից վեր. նա կուռք է շինել:

Կռապաշտությունը *հոգևոր կրիպտոնաքարն* է:

Եթե ետ նայենք և հիշենք այն բազմաթիվ օրինակները, որոնք բերեցինք նախորդ գլուխներում, կարելի է եզրակացնել, որ դրանցում

նկարագրված բոլոր հանցանքների մեջ կար մեկ ընդհանրություն: Աքարը պարզորեն լսել էր, որ ամբողջ ավարը, որը մարդիկ վերցնելու էին Երիքովից, պետք է նվիրաբերվեր Տիրոջը: Սակայն նրա հանցանքը բացահայտելուց հետո նա խոստովանեց. «Ավարի մեջ... տեսա, և նրանց *ցանկանալով* առա» (Հեսու 7.21): «NLT» թարգմանության մեջ գրված է. «Ես խիստ ցանկացա դրանք»:

Աքարի համար շատ ավելի կարևոր էր իր ցանկությունը, քան Աստծո պահանջը: Նա չուներ աստվածային երկյուղ և գիտակցաբար անհնազանդ գտնվեց: Նրա միտումնավոր գործած մեղքը ոչ այլ ինչ էր, քան *կռապաշտություն,* կամ այն, ինչը մենք սահմանեցինք որպես *հոգևոր կրիպտոնաքար:* Նրա կռապաշտությունը ոչ միայն դատաստան բերեց իր և իր ընտանիքի վրա, այլև թուլացրեց ամբողջ ժողովրդին: Իսրայելը տկարացավ և այլևս չէր կարողանում պարտության մատնել այլ ազգերի:

Կորնթացիների եկեղեցին հաճախ էր գոհացնում սեփական մարմնական ցանկությունները՝ անտեսելով այն, ինչ Աստված հայտնել էր նրանց: Պողոսը նույնիսկ գրում է նրանց. «Դուք դեռ վերահսկվում եք ձեր մեղավոր բնությամբ» (Ա Կորնթացիների 3.3, NLT): Նրանք նախանձում էին, պառակտված էին, վիճում էին իրար հետ, շնություն էին գործում և անտեսում էին այդ մեղքը, դատի էին տալիս մեկը մյուսին, և երբ հավաքվում էին Տիրոջ ընթրիքի համար, նրանք իրականում չէին հիշում Հիսուսին, այլ գոհացնում էին իրենց մարմնական ախորժակը: Այս կերպով նրանք գիտակցաբար անհնազանդ էին աստվածային պատվերներին: Սա է պատճառը, որ Պողոսն ի վերջո գրում է. «Այսպիսով, իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, երբ դուք հավաքվում եք Տիրոջ ընթրիքի համար, սպասե՛ք իրար: Եթե իսկապես քաղցած եք, ճաշեք տանը, որ դատաստան չբերեք մեկդ մյուսի վրա, երբ միասին հավաքվում եք» (Ա Կորնթացիների 11.33,34, NLT): Նրանց ագահության (կռապաշտության) պատճառով շատերը տկար ու հիվանդ էին և ժամանակից շուտ մահանում էին: Նրանք չէին ապրում որպես Երկնքի դեսպաններ:

Նույնը վերաբերում էր այն հավատացյալներին, որոնց գրում էր Հակոբոսը: Նրանք դառնորեն նախանձում էին իրար, վարվում էին եսասիրական շարժառիթներով, նաև վիճում ու կռվում էին իրար հետ: Հակոբոսը մատնանշում է. «Ցանկանում եք և չունեք» (Հակոբոս 4.2): Կրկին, մենք տեսնում ենք, որ հավատացյալները մեղանչում էին՝ իրենց եսասիրական ցանկությունները կատարելու համար: Նրանք կոչվեցին «շնացող կանայք», քանի որ կռապաշտության մեջ էին ընկել: Այնպես

չէ, որ նրանք արձաններ, արձանիկներ, զոհասեղաններ և տաճարներ էին կառուցում: Թեև այս մասին գրված չէ, այնուամենայնիվ, այն հոգևոր կրիպտոնաքարը, որը նրանք հանդուրժում էին, ամենայն հավանականությամբ, թույլ չէր տալիս նրանց ապրել գերբնական կյանքով:

Կռապաշտությունը հասարակ մեղք չէ. այն *միտումնավոր* կամ *գիտակցված* մեղք է: Ըստ էության, մենք պահելու և կատարելու ենք այն, ինչը կարևոր ենք համարում՝ անկախ այն բանից, թե ինչ է Աստված ասել այդ մասին:

Ահա թե ինչպես ամեն ինչ սկսվեց Եդեմի պարտեզում: Ադամը և Եվան ցանկացան այն, ինչը բարի, շահավետ, օգտակար և հաճելի էր թվում, և ինչն իմաստուն էր դարձնելու իրենց: Նրանք միտումնավոր չհնազանդվեցին այն բանին, ինչ Աստված հստակ ասել էր:

Այն պահից, երբ մենք ընտրում ենք այս ճանապարհը, մեր ներսում խաբեություն է ձևավորվում: Մենք սրտանց հավատում ենք, որ դեռ արդար դիրք ունենք Աստծո առջև, այնինչ, իրականում այդպես չէ: Այդ ժամանակ Աստված ստիպված է լինում ուղարկել ինչ-որ մեկին՝ առաքյալի, մարգարեի, հովվի կամ ընկերոջ, որը սիրում է մեզ և այնքան է հոգում մեր մասին, որ պատրաստ է ասել ճշմարտությունը: Այնուամենայնիվ, մինչև այդ պահը խաբեությունը մեր ներսում արդեն վերածվում է ամրության, ու թեև այդ ամրությունը կարելի է քանդել, սակայն դրանից ազատվելը դժվար է: Հռոմեացիների 1-ին գլուխը պնդում է, որ նման վարքագիծ ձեռք բերող մարդիկ «ճնշում են ճշմարտությունն իրենց անօրինությամբ» (խոսք 18): Մարդիկ իրենցից հեռացնում են ճշմարտությունն Աստծո մասին և Նրա ճանապարհները, ինչի պատճառով դրանք զգալը և հասկանալն ավելի ու ավելի դժվար է դառնում: Հետևաբար, խաբեության մեջ գտնվող մարդիկ սկսում են «հորինել անմիտ գաղափարներ այն մասին, թե ինչպիսին է Աստված: Արդյունքում նրանց մտքերը խավարեցին և շփոթվեցին: Պնդելով, որ իմաստուն են՝ նրանք բացարձակ անմիտներ դարձան» (Հռոմեացիների 1.21,22): Ճշմարտությունը հեռանում է այդ մարդկանցից, և նրանք կազմում են խեղաթյուրված ուսմունքներ Աստծո բնության մասին, որոնք հավանություն են տալիս մեղքին և աղավաղում են կյանքի ճանապարհը:

Նույն կերպով կռապաշտության մեջ է ընկնում հավատացյալը: Ահա թե ինչ է գրում Հակոբոսը. «Բայց խոսքը անող եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբոս 1.22):

Երբ մենք պարզորեն լսում ենք Աստծո Խոսքը և չենք հնազանդվում, մեզ հետ ինչ-որ բան է կատարվում. «խաբեություն» կոչվող քո-

ղը ծածկում է մեր սրտերը: Այժմ մենք լիովին համոզված ենք, որ ճիշտ պատկերացում ունենք Աստծո, Հիսուսի և Աստծո թագավորության մասին, սակայն իրականում կապ չունենք Աստծո հետ: «Խաբել» բառի սահմանումն է՝ «դրդել ինչ-որ մեկին ընդունել որպես ճշմարիտ և վավերական այն, ինչը կեղծ կամ անվավեր է» *(Մերիամ-Վեբսթեր)*: Չգիտեմ՝ արդյո՞ք սա ողջամիտ երկյուղ է առաջացնում ձեր սրտում այնպես, ինչպես իմ սրտում, բայց հուսով եմ, որ այդպես է: Միտումնավոր անհնազանդությանը չպետք է թեթևորեն վերաբերվել:

Մենք խաբում եք մեզ, երբ մտածում ենք, որ կարող ենք անտեսել Նոր կտակարանի այս զգուշացումները, քանի որ ամեն բան ծածկված է Աստծո շնորհքով, ներմամբ և սիրով: Հիշեք՝ նույն Աստված, Ով հայտնում է Իր շնորհքը, ներումը և սերը Նոր կտակարանում, նաև զգուշացնում է միտումնավոր անհնազանդության վտանգների մասին:

Մենք չենք կարող պարզապես ընտրել այն սուրբգրային հատվածները, որոնք մեզ դուր են գալիս, և անտեսել կամ նույնիսկ դեն նետել այլ հատվածներ, որոնք դուր չեն գալիս: Այս մտածելակերպն ինքնին խաբեություն է: Մենք պետք է ընդունենք Աստծո Խոսքի ամբողջական խորհուրդը: Ցավոք, ժամանակակից եկեղեցում ճշմարտությունն անտեսելու համաճարակ է տարածված: Եվ պատճառն այն չէ, որ Աստված ետ է պահում ճշմարտությունը. պատճառը շարունակական կռապաշտությունն է եկեղեցում:

Հակոբոսը շարունակում է.

> «Որովհետև եթե դուք լսում եք Խոսքը և չեք հնազանդվում, նման է ձեր դեմքին հայելու մեջ նայելուն: Դուք տեսնում եք ձեզ, հեռանում եք և մոռանում, թե ինչպիսին եք» (Հակոբոս 1.23,24, NLT):

Այն մարդիկ, ովքեր լսում են Աստծո Խոսքը և չեն հնազանդվում, կմոռանան, թե ով են իրենք Քրիստոսում: Նրանք կունենան այլ վարք եկեղեցում, փոքր խմբում և համաժողովներին, որոնցում քարոզվում է Աստծո Խոսքը, սակայն այդ միջավայրից հեռու նրանց վարքը ոչնչով չի տարբերվի այս աշխարհի մարդկանց վարքից: Աստծո Խոսքը հայելի է. այնպես որ, երբ նրանք դրա առջև են, մենք վարվում ենք դրան համապատասխան: Հետևաբար, մենք պետք է խեղաթյուրված ուսմունքներ հորինենք, որպեսզի բացատրենք, թե ինչու ենք վարվում այնպես, ինչպես այս աշխարհը: Միգուցե ասենք. «Իրականում, քրիստոնյաները ոչնչով չեն տարբերվում անհավատներից. մենք պարզապես ներված ենք», կամ «Աստված գիտի, որ ես անկում ապրած բնութ-

յուն ունեմ, և այս կյանքում մենք երբեք չենք կարող ապրել սրբությամբ: Ահա թե ինչու է Նա ծածկել մեզ շնորհքով»:

Նոր կտակարանում մենք կարող ենք գտնել առանձին խոսքեր, որոնք, առաջին հայացքից, աջակցում են այս պնդումներին, սակայն ստիպված ենք հրաժարվել բազմաթիվ այլ հատվածներից՝ այս սխալական աստվածաբանությանը հավատալու համար:

Մենք պետք է որոշում կայացնենք.

- Մենք իսկապե՞ս ցանկանում ենք ապրել մեղքի ճահճի մեջ:
- Մենք ցանկանո՞ւմ ենք, որ կրիպտոնաքարի ազդեցությունը սահմանափակի այն զորությունը, որը տրված է մեզ՝ որպես Աստծո գերբնական դեսպանների:
- Մենք ցանկանո՞ւմ ենք ապրել շատ ավելի ցածր այն մակարդակից, որի համար ստեղծված ենք՝ սուտ ուսմունքների պատճառով:
- Մի՞թե մենք ցանկանում ենք, որ մեր կյանքը ոչնչով չտարբերվի այս աշխարհից, և մեկ օր պարզապես ազատվենք այս կյանքից և Երկինք գնանք:
- Թե՞ ցանկանում ենք, որ Աստծո թագավորությունը տարածվի և կատարվի տեսիլքը վերջին փառավոր տաճարի (եկեղեցու) մասին, որի մասին խոսեցինք մի քանի գլուխ առաջ:

Ընտրելով կրիպտոնաքարը՝ մենք զրկվում ենք մեր առույգությունից, կենսունակությունից, գերբնական ուժերից և ամբողջ աշխարհը գլխիվայր շրջելու կարողությունից: Մենք, ըստ էության, ճնշում ենք ճշմարտությունը: Մենք ետ ենք պահում այն և թաքցնում Հիսուսին ամբողջ աշխարհից: Ահա թե ինչու է Պողոսն ի վերջո բացականչում՝ դիմելով կորնթացիներին.

> «Ուղի՛ղ մտածեք: Արթնացե՛ք սրբության համար: Հերի՛ք է խաղ անենք հարության փաստերի հետ: Անիրազեկությունն Աստծո մասին ճոխություն է, որը չեք կարող թույլ տալ ձեզ նման ժամանակներում: Մի՞թե դուք չեք ամաչում, որ թույլ եք տվել, որ այս տեսակի բանն այսքան ժամանակ շարունակվի ձեր միջև» (Ա Կորնթացիների 15.34, MSG):

Նա ասում է Կորնթոսի եկեղեցուն, որ նրանք Հիսուսի նման ապրելու կարողություն ունեն, սակայն դեռ կռապաշտության մեջ են: Նրանք դեռ հավատում են, որ արժե անտեսել Աստծո Խոսքի հայտնված ճշմարտությունը՝ պահպանելու համար այն, ինչն իրենք կարևոր են համարում: Նրանք լրջորեն չեն վերաբերվել Աստծո Խոսքին, ճնշել

են ճշմարտությունն իրենց կյանքում և արդյունքում սահմանափակ են, անզոր են և անկարող են փոխել իրենց հասարակությունը:

Սա ողբերգական է շատ առումներով, բայց ամենավատն այն է, որ կորսվածները, որոնք ապրում են նման կռապաշտների կողքին, չեն տեսնում Հիսուսին ներկայացնող մարդկանց: Ահա այս խոսքը մեկ այլ թարգմանությամբ. «Արթո՛ւն կացեք արդարությամբ և մեղք մի՛ գործեք, որովհետև մի քանիսն Աստծո մասին տգետ են. սա ձեզ ամաչեցնելու համար եմ ասում»: Պողոսն ասում է այս եկեղեցուն. «Դուք միակ Հիսուսն եք, Ում տեսնելու են Կորնթոսի կորսված մարդիկ: Եթե նրանք չտեսնեն Նրա հարության զորության ապացույցը և Նրա բնությունը ձեր միջոցով, նշանակում է՝ նրանք չեն տեսնի դա: Ինչո՞ւ եք ճնշել ճշմարտությունը ոչ միայն ձեզ և եկեղեցու, այլև ձեր բնակավայրում ապրող կորսված մարդկանց համար»:

Երբ մենք միաբան ենք Աստծո հետ, մեր կյանքը ներդաշնակ է:

Դուք երբևէ մտածե՞լ եք, թե ինչու մեր շուրջը գտնվող կորսված մարդիկ չեն ձգտում դեպի մեզ, և նույնիսկ եթե ձգտում են, նրանց գրավում են սխալ բաները: Արդյո՞ք նրանց գրավում են մեր հումորը, խելացի գործելակերպը, մեր հետաքրքիր զբաղմունքները, ժամանցային ծրագրերը և երաժշտությունը: Թե՞ նրանք առաջին հերթին մեր մեջ և մեր միջև տեսնում են կենդանի և հզոր Թագավորին: Մտածե՛ք Առաջին եկեղեցու մասին. հավատացյալներին շարունակ «աստվածներ» էին անվանում, և նրանք հարկադրված էին ընկնել և աղաղակել. «Ո՛չ, մենք աստվածներ չե՛նք: Մենք Բարձրյալ Աստծո զավակնե՛րն ենք»:

Պետրոսը հարկադրված էր խստորեն ասել հռոմեացի սպային. «Վե՛ր կաց, ես ինքս էլ մարդ եմ» (Գործք 10.26):

Պողոսը հարկադրված էր բացականչել՝ դիմելով Լյուստրայի քաղաքացիներին. «Ի՜նչ եք անում: Մենք աստվածներ չե՛նք» (Գործք 14.14,15, MSG):

Մալթայում քաղաքացիները «եզրակացրին, որ նա [Պողոսը] աստված էր» (Գործք 28.6, MSG):

Թեսաղոնիկեի երեկոյան լուրերը տեղեկացնում էին. «Այս աշխարհը շփոթեցնողներն այստեղ էլ հասան» (Գործք 17.6):

Երուսաղեմի քաղաքացիների մասին գրված է. «Բոլոր մարդիկ բարձր կարծիք ունեին նրանց մասին» (Գործք 5.13, NLT):

Նման լուրեր չկային Կորնթոսում, ինչպես նաև չկան մեր Արևմտյան հասարակության մեջ: Մի՞թե պատճառն այն է, որ մենք բավարարվել ենք կրիպտոնաքարով: Համոզված եմ՝ մենք բավարարվել ենք անսարք «iPhone»-ի համարժեքով, որով անկարելի է հաղորդագրություն-

ներ ուղարկել: Մենք կգերադասեինք լսել, որ այդ հեռախոսը մշտապես անսարք է լինելու, որպեսզի հաշտվեինք այն մտքի հետ, որ ապրելու ենք առանց դրա:

Ես չեմ պատրաստվում բավարարվել այդ վիճակով: Ես չեմ պատրաստվում կորցնել Աստծուց մեզ տրված աշխուժությունը, կյանքը, ուժը, առողջությունը և կենդանի Փրկչին ու Թագավորին կորսված աշխարհին հայտնելու կարողությունը: Համոզված եմ, որ շատերն են հոգնել սովորական կյանքից, այսինքն՝ մի կերպ գոյատևելուց:

Ես զգում եմ աստվածային հրատապություն, հանձնարարական Աստծուց՝ ձեզ այս մասին գրելու համար: Այս ուղերձը ձեզ համար չէ, եթե ձեզ գոհացնում է այս աշխարհի կեղտոտ, դատարկ և անտեղի վատնվող կյանքը: Այն ձեզ համար է, եթե ցանկանում եք ավելի վեհ կյանք՝ հարության կյանք:

Ձեր Հայր Աստված ցանկանում է, որ դուք ապրեք գերբնական կյանքով. ո՛չ, Նա *ի սրտե փափագո՛ւմ է* դա: Նա կամենում է, որ դուք վերապրեք Նրա աստվածային բնությունը և զորությունը ավելի, քան դուք եք կամենում:

Աստված չէ, որ սահմանափակում է մեզ: Եթե մենք սահմանափակ ենք, պատճառը մեր կռապաշտությունն է:

III

Շարունակելով՝ ավելի խորը կդիտարկենք այն խաբեությունը, որը կուրացրել է բազմաթիվ մարդկանց ժամանակակից եկեղեցում: Մենք կտեսնենք, որ այն, ինչը ընդունել ենք որպես բնականոն քրիստոնեություն, բնականոն չէ՝ ըստ երկնային չափանիշների:

Մենք ունենք կոչում, ճակատագիր և հանդիպում գերբնականի հետ, որը սպասում է մեզ: Ժամանակն է թոթափել մեր անհնազանդությունը և անտարբերությունը, հագնել մեծություն, փառք, վեհություն և զորություն՝ հագնել Հիսուս Քրիստոսին:

գործնական քայլ

Կռապաշտությունը սկսվում է, երբ խստացնում ենք մեր սրտերն Աստծո Խոսքի հանդեպ: Սա ամեն տեսակի կռապաշտության արմատն է: Ահա թե ինչու Աստված պատվիրեց Իսրայելին պատռել իրենց սրտերը, ոչ թե հանդերձները: Նա չէր ուզում մակերեսային ապաշխարություն, որը չէր անդրադառնալու խնդրի արմատին՝ նրանց խստացած սրտերին, որոնք այլևս չէին լսում Նրա ձայնը կամ ուշադրություն չէին դարձնում դրան:

Երկրորդ Օրինաց 8-րդ գլխում գրված է, որ Աստված խրատեց Իսրայելին, որպեսզի նրանք իմանային, որ մարդը չի ապրում միայն հացով, այլև՝ ամեն խոսքով, որը դուրս է գալիս Աստծո բերանից: Աստծո խոսքերով ապրելը և Նրա ձայնը մեր կյանքի աղբյուրը դարձնելը այն է, ինչը պահպանում է մեզ կռապաշտությունից և բարձրացնում է դեպի այն հզոր կյանքը, որի համար Նա կանչում է մեզ:

Ի՞նչ դեր ունի Աստծո ձայնը ձեր կյանքում: Վերջին անգամ ե՞րբ եք փնտրել Նրա խորհուրդը ձեր որոշումների վերաբերյալ: Ձեր աղոթքը մենախոսությո՞ւն է, թե՞ երկխոսություն: Ժամանակ հատկացրեք հենց հիմա և խնդրե՛ք Աստծուն զրուցել ձեզ հետ: Լո՛ւռ եղեք և լսե՛ք Նրա ձայնը: Հաղորդակցվե՛ք Նրա հետ, և երբ ավարտեք, գրի՛ առեք, թե ինչ է Նա ասում ձեզ:

14

ՄԵՂՔ

Մեղք: Մենք համարձակվո՞ւմ ենք խոսել մեղքի մասին: Այն չափազանց հակասակա՞ն է համարվում: Ինչո՞ւ չպետք է ցանկանանք տեղյակ լինել մեր թշնամուց: Չէ՞ որ այդ դեպքում մենք կկարողանանք պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ մեղքի վրա իշխելու համար:

Հաճախ մարդիկ կա՛մ թեթևորեն են օգտագործում «մեղք» բառը, կա՛մ խուսափում են դրանից զրույցների և քարոզների մեջ՝ մտածելով այն մարդկանց մասին, որոնց ցավ են պատճառել օրինապաշտական մեղադրանքները, ուսուցումները կամ քարոզները: Այսպիսով, դիտարկենք մեղքն Աստվածաշնչի լույսի ներքո:

«Ձեր մեղքերն են, որ կտրեցին ձեզ Աստծուց» (Եսայի 59.2, NLT):

«Մեղք» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն *«ավոն»* բառից: Այն Հին կտակարանում «մեղք» իմաստը կրող չորս հիմնական բառերից մեկն է: Համաձայն *«Հին կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարանի»*՝ այս բառը «մատնանշում է մեղքի խիստ չարությունը, քանի որ այն ընդգծում է դիտավորյալ կերպով խեղաթյուրման կամ այլասերման գաղափարը»: Խոսքը *միտումնավոր* մեղքի մասին է, կամ, մեր ձևակերպմամբ, *հոգևոր կրիպտոնաքարի,* որը բաժանում է մեզ Աստծուց: Այն օտարացնում է մեզ աստվածային առաքինություններից, որոնք անհրաժեշտ են աստվածապաշտ կյանքի համար: Երբ մեղանչում ենք և չունենք տրտմություն այդ պատճառով, նշանակում է՝ մենք հայտնվել ենք կռապաշտության

մեջ և շնացող կին ենք դարձել: Մենք թշնամացել ենք Աստծո դեմ:

Նոր կտակարանում «մեղք» բառը «համարտիա»-ն է (դրանից առաջացող բայը «համարտանո»-ն է): Այս երկու բառերն ամենից հաճախ են օգտագործվում Նոր կտակարանում՝ «մեղք» իմաստով: *«Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարանը»* պնդում է, որ «համարտիա» գործողը «բաց է թողնում կյանքի ճշմարիտ նպատակը և լիությունը, այսինքն՝ Աստծուն»:

Մի պահ դադարեք կարդալ և մտածեք այս մասին: Երբ մեղանչում ենք, մենք, ըստ էության, հեռանում ենք այն ընթացքից, որից (առողջ դատելու դեպքում) ոչ մի դեպքում չէինք ուզի շեղվել: Մենք հեռանում ենք կյանքի Աղբյուրից և կորցնում ենք ուրախությունը, խաղաղությունը, իմաստությունը, բավականությունը, գոհունակությունը, մատակարարումը և ավելին... այս ցուցակը գրեթե անվերջ է:

Աստվածաշնչի բազմաթիվ ուսուցիչներ սահմանում են մեղքը որպես «նշանակետից վրիպել»: Այս սահմանումը ճիշտ է, սակայն, հաշվի առնելով այն հիմնական սահմանումը, որը ներկայացրի ձեզ, կարծում եք՝ «նշանակետից վրիպելը» լիարժեք կերպով բացատրո՞ւմ է մեղքի լրջությունը:

Կան այլ բառեր, որոնք օգտագործվում են Նոր կտակարանում որպես «մեղք» բառի տարբերակներ, օրինակ՝ անօրինություն, հանցանք, անարդարություն և օրինազանցություն: Սակայն իմ նպատակը բառային ուսումնասիրություն կատարելը չէ, այլ՝ ներկայացնել մեղքի գլխավոր հատկանիշները և այն կարողությունը, որով մեղքը հրապուրում է մարդկանց՝ հեռացնելով ճշմարիտ կյանքի աղբյուրից:

Մեղքը հարձակում է գործում մեր կենսունակության, սիրո, ուժերի, ողջամտության, ձգտումների և նպատակների վրա: Նույնիսկ չկասկածեք, որ մեղքը վնասակար և կործանարար է: Այն կարող է իրապես հաճելի լինել, բայց միայն որոշ ժամանակով: Ըստ էության, մեղք գործելը նշանակում է ընտրել կարճատև հաճույք՝ երկարատև տառապանքի հաշվին, քանի որ, երբ ամեն ինչ ավարտվում է, մեղքը խայթում է մեզ մահացու տևական հետևանքներով: Մեղքը գրավիչ է մեր մարմնական բնության համար, սակայն, որպես նոր արարած Քրիստոսում, որն ունի Աստծո բնությունը, մենք ներքուստ չենք կամենում մեղանչել և կարող ենք ընդդիմանալ մեղքի գրավչությանը:

Աստված ասաց Կայենին. «Մեղքը դռան մոտ պառկած է: Նա քեզ է փափագում, բայց դու իշխի՛ր նրա վրա» (Ծննդոց 4.7): Ուշադրություն դարձրեք, որ գոյություն ունի դուռ, որով մեղքը մուտք է գործում մար-

դու կյանք: Այդ դուռը կոչվում է «ցանկություն», և Հակոբոսը գրում է. «Ցանկությունները ծնունդ են տալիս մեղսալի արարքների» (Հակոբոս 1.15, NLT): Այս դուռը կա՛մ փակ է, կա՛մ բաց՝ կախված այն բանից, թե ինչպես ենք որոշում վարվել մեր ցանկությունների հետ: Մեղքը պատրաստ է վերահսկել մեզ: Մեղքը նույնպես ցանկություն ունի. այն ստրկացնում է մեզ: Հիսուսը զգուշացնում է. «Ես հավաստիացնում եմ ձեզ. նա, ով մեղանչում է, մեղքի ստրուկ է» (Հովհաննես 8.34, NKJV):

Պողոսը բացատրում է Հիսուսի խոսքերը մեզ՝ հավատացյալներիս. «Մի՞թե չեք գիտակցում, որ դուք դառնում եք այն բանի ստրուկը, ինչին որոշում եք հնազանդվել: Դուք կարող եք մեղքի ստրուկ լինել, ինչի հետևանքը մահն է, կամ որոշել, որ հնազանդվելու եք Աստծուն, ինչի արդյունքն արդար կյանքն է» (Հռոմեացիների 6.16, NLT): Եվ եթե սա բավական չէ, Պետրոսը գրում է շարունակական մեղքի վերաբերյալ. «Որովհետև դուք այն բանի ստրուկն եք, ինչը վերահսկում է ձեզ» (Բ Պետրոս 2.19, NLT): Ստրկությունը հաճելի չէ, իսկ մեղքն անողորմ ստրկատեր է: Դուք չեք կարող պարզապես զվարճանալ մեղքով, քանի որ այն մահացու է: Այն է՛լ ավելի ուժգին ցանկություններ է առաջացնում մեր մեջ և դրդում է այնպիսի քայլերի, որոնք արդյունքում վնասում են մեզ:

Այն, որ մեղքի մտադրությունը մեզ ստրկացնելն է, ակնհայտորեն չի երևում: Մեղքը խաբուսիկ է. այն վերահսկում է մեզ և խստացնում մեր սրտերը (տե՛ս Եբր. 3.13), և մեզ համար ավելի դժվար է դառնում զգալ, գիտակցել և լսել Հոգու առաջնորդությունը: Մեղքը մոլորեցնում է մեզ՝ տանելով կործանարար կռապաշտության: Հիշեք, որ Աստված երկու անգամ հայտնվեց Սողոմոնին: Կարո՞ղ եք պատկերացնել: Չնայած դրան՝ հետագայում նա երկրպագեց կեղծ աստվածների: Միգուցե մտածեք. *«Ինչպե՞ս այն մարդը, ով երկու անգամ տեսել էր Աստծուն, դարձավ կեղծ աստվածների»:* Պատասխանն է՝ խաբեության միջոցով: Եթե դա տեղի ունեցավ Սողոմոնի հետ, ով տեսել էր Աստծուն, որքա՛ն ավելի հեշտորեն դա կարող է տեղի ունենալ նրանց հետ, ովքեր չեն տեսել Նրան:

Մեղքն այնպիսի բան չէ, ինչի հետ մենք կարող ենք խաղալ: Այն շատ ազդեցիկ է և արագորեն կարող է փոխել մարդու սիրտը: Ամենասարսափելին այն է, որ նման խստացած վիճակում մեր սրտերը խաբված են, և մենք սկսում ենք հավատալ, որ ճիշտ ենք, այնինչ իրականում սխալ ենք: Մենք չենք տեսնում մեր մեղավորությունը: Եր-

բեք մի՛ հավատացեք այս ստին. «Ես ծածկված եմ շնորհքով. եթե մեղանչեմ, ինձ, ընդհանուր առմամբ, ոչ մի վտանգ չի սպառնում»: Նման դիրքորոշում ունենալը նշանակում է խաղալ կրակի հետ: Թույլ տվեք բացատրել:

Միտումնավոր մեղքը տանում է շարունակական մեղքի

Միտումնավոր մեղքն ի վերջո վերածվում է *շարունակական* մեղքի: Ահա թե ինչպես է դա տեղի ունենում: Երբ մենք անհնազանդ ենք առաջին անգամ, մեր խիղճը խոսում է մեզ հետ: Սովորաբար մենք ոչ թե ձայն ենք լսում, այլ անհարմար զգացում ենք ունենում: Մեր սիրտը բացականչում է անխոս ձայնով. «Դու վրիպե՛լ ես նշանակետից, դու շեղվե՛լ ես կյանքի ճանապարհից և պետք է շտկես քո ընթացքը՝ ապաշխարելով ու ներում խնդրելով»: Եթե այդ պահին թողնենք մեր մեղքը՝ անկեղծորեն ապաշխարելով, մեր սիրտը կմաքրվի, և մենք զգայուն կմնանք Հոգու ձայնին: Աստծո Խոսքում գրված է. «Իր հանցանքը ծածկողը չի հաջողվի, բայց խոստովանողը և թողնողը ողորմություն կգտնի» (Առակաց 28.13):

Այնուամենայնիվ, եթե մենք անտեսենք մեր խղճի ձայնը, մեր սիրտը կծածկվի քողով (այս մասին խոսեցինք նախորդ գլխում): Եթե կրկին անհնազանդ լինենք, անհարմարավետ զգացումն արդեն ուժգին չի լինի: Այն ավելի կթուլանա՝ նմանվելով «ներքին կսմթոցի»: Մենք ավելի դժվարությամբ կլսենք, քանի որ մեր սրտի զգայունությունը կնվազի: Այնուամենայնիվ, մենք դեռ կարող ենք ներում խնդրել և վերականգնվել, եթե փոխենք մեր վերաբերմունքը մեր գործած մեղքի հանդեպ մեր սրտում և մտքում:

Սակայն եթե շարունակենք անտեսել մեր խղճի հանդիմանության ձայնը, մեր սիրտը կծածկվի ևս մեկ քողով, և մեր զգայունությունն ավելի կթուլանա: Եթե մենք չհնազանդվենք Աստծո Խոսքին, անհարմարավետության շատ թույլ ազդակ կզգանք: Լսելը շատ ավելի դժվար կդառնա, քանի որ մեր խիղճը մոտ է ամբողջական անզգայացմանը: Մենք դեռ կարող ենք ներում խնդրել և վերականգնվել, եթե ճշմարտապես փոխվենք մեր մտքում և սրտում, բայց մեր սխալը զգալը շատ ավելի դժվար կլինի:

Եթե մենք ևս մեկ անգամ անտեսենք հանդիմանության այս թույլ ձայնը, մեր սիրտը կծածկվի ևս մեկ քողով: Եթե այսպես շարունակ-

վի, մեր խիղճն ի վերջո կվառվի կամ կկուրանա մեր կռապաշտության պատճառով: Մեր հոգևոր զգայարանները կբթանան, և մենք բացարձակապես անզգա կդառնանք Հոգու հանդեպ: Մենք կկարողանանք մեղք գործել՝ առանց հանդիմանություն զգալու, և կհայտնվենք *շարունակական* մեղքի վիճակում: Մենք դեռ կարող ենք ներում ստանալ և վերականգնվել, սակայն, գրեթե չենք ցանկանա անել դա, քանի որ այլևս չենք դիտարկի մեր մեղքը՝ որպես մեղք:

Հաջորդ քայլն այն է, որ Աստված կուղարկի մեզ մարգարեի, հովվի կամ ընկերոջ՝ մեզ հասնելու համար: Եթե մենք չլսենք այդ ավետաբերին, հաջորդ քայլը, որն Աստված կձեռնարկի՝ մեզ հասնելու և մեր ուշադրությունը գրավելու համար, կլինեն դժվարությունները, նեղությունները և նույնիսկ տառապանքները: Դավիթը պնդում է. «Մինչև տառապանք կրելը ես շեղվում էի, բայց հիմա պահում եմ Քո Խոսքը» (Սաղմոս 119.67, NKJV):

Եկեք հասկանանք հետևյալը. Աստծուց սովորելու լավագույն ձևն այն է, որ հնազանդ մնանք այն ամենին, ինչ Նա հայտնում է մեզ, և հեռու մնանք մեղքից: Բայց եթե այդպես չվարվենք, Նա այնքան է սիրում մեզ, որ կօգտագործի նեղություններ, որպեսզի սովորեցնի մեզ և վերադարձնի կյանքի ուղուն: *«Նոր Կենդանի թարգմանության»* մեջ Դավթի խոսքերն այսպես են հնչում. «Ես շեղվում էի, մինչև որ Դու խրատեցիր ինձ. բայց հիմա ուշի-ուշով հետևում եմ Քո Խոսքին» (NLT):

Եթե կրկին կարդանք Պողոսի խոսքերը կորնթացիներին, կտեսնենք դրանցում նույն նկարագրությունն այն մասին, թե ինչպես է Աստված փորձում ետ բերել մեզ: Նա ասում է Կորնթոսի եկեղեցուն. «Սակայն երբ մենք դատվում ենք Տիրոջ կողմից, մենք խրատվում ենք, որպեսզի չդատապարտվենք այս աշխարհի հետ» (Ա Կորնթացիների 11.32, NLT): Աստված հույս ունի, որ այն նեղությունները, տառապանքները և փորձանքները, որոնք Նա թույլ է տալիս մեզ կրել, կգրավեն մեր ուշադրությունը և կդրդեն վերադառնալ մահվան ճանապարհից դեպի կյանքի ուղին:

Մենք տեսնում ենք միևնույն սկզբունքը, երբ Պողոս առաքյալը խոսում է այն մարդու մասին, որը սեռական հարաբերություններ ուներ իր խորթ մոր հետ: Նա պնդում է. «Դուք պետք է հանձնեք այս մարդուն սատանային՝ մարմինը պատժելու համար [կործանելու համար մարմնական կրքերը, որոնք արյունապղծության դրդեցին նրան], որ [նրա] հոգին [դեռ] կարողանա փրկվել Տեր Հիսուսի օրը» (Ա Կորնթացիների 5.5, AMPC): Երբ այս եկեղեցու հայրն ասաց՝ դուք պետք է վտարեք այս մարդուն, նրա նպատակն էր ոչ միայն պաշտպանել Կորնթոսի

եկեղեցին այդ արագորեն տարածվող մեղքի ապականությունից, այլև օգնել այն մարդուն, ով մեղքի մեջ էր:

Աստված խորապես և ջերմորեն սիրում է Իր զավակներին: Ահա թե ինչու է Նա փորձում հասնել մեզ բազմաթիվ ձևերով՝ կախված այն բանից, թե մեղքի ստրկության որ փուլում ենք: Ըստ էության, Նա առաջնահերթ է համարում այն, ինչը լավագույնն է մեզ համար՝ գերադասելով դա մեր ներկա հարմարավետությունից:

Եբրայեցիների թղթում կա մի պնդում, որը բացահայտում է մեղքի գործունեությունը.

> «Եկեք դե՛ն գցենք մեր վրայից ամեն ծանրություն, որը դանդաղեցնում է մեր ընթացքը, հատկապես՝ այն մեղքը, որն այնքան հեշտորեն սայթաքել է տալիս մեզ» (Եբրայեցիների 12.1, NLT):

Ուշադրություն դարձրեք նրա խոսքերին. «... որն այնքան հեշտորեն սայթաքել է տալիս մեզ»: Ինձ հեշտորեն սայթաքել տվող մեղքը հարբեցողությունը, ագահությունը, թմրանյութերից կախվածություն ունենալը, բամբասանքը և մյուս ակնհայտ մեղքերը չէին: Իմ դեպքում դա պոռնոգրաֆիան էր: Դա իմ կյանքի մեծագույն պայքարն էր, և հաջորդ գլուխներից մեկում կպատմեմ, թե ինչպես 1985 թվականին ես վերջապես ազատվեցի այդ դաժան ստրկատիրոջից: Այս խոսքի գլխավոր ասելիքը հետևյալն է. մենք պետք է իմանանք, թե ո՛ր մեղքերի հանդեպ ենք առավել խոցելի, և անենք անհրաժեշտ ամեն ինչ, որ հեռու մնանք դրանցից: Հիսուսն այսպես է ասում.

> «Եթե քո ձեռքը քեզ գայթակղեցնի, կտրի՛ր այն, որովհետև լավ է քեզ, որ խեղ մտնես հավիտենական կյանքը, քան երկու ձեռք ունենաս և գեհենը գնաս՝ անանցանելի կրակի մեջ... Եվ եթե քո ոտքը քեզ գայթակղեցնի, կտրի՛ր այն... Եվ եթե քո աչքը քեզ գայթակղեցնի, դո՛ւրս հանիր այն» (Մարկոս 9.42,44,46):

Հիսուսը չի խոսում բառացիորեն ձեր ձեռքը կամ ոտքը կտրելու կամ աչքը դուրս հանելու մասին: Նա նկատի ունի, որ մենք պետք է հեռու մնանք այն մեղքերից, որոնք մեզ հեշտորեն սայթաքել են տալիս:

Ես բազմաթիվ ընկերներ ունեմ, որոնք նախկին հարբեցողներ են եղել, և ես արտոնված եմ եղել օգնելու նրանցից մեկին ազատվել իր

կախվածությունից: Այսօր այդ մարդը հրաժարվում է նույնիսկ մեկ ումպ գինի խմել և մեծ զգուշավորությամբ հեռու է մնում ցանկացած միջավայրից, որտեղ ալկոհոլային խմիչքներ կան: Իմ ընկերը գիտի, որ դա մեղքի այն բնագավառն է, որը կարող է հեշտորեն ստրկացնել իրեն: Նա իմաստությամբ հնազանդվում է Քրիստոսի խոսքերին և հեռացնում է իրենից ստրկության մեջ հայտնվելու ցանկացած հնարավորություն:

Այնուամենայնիվ, իմ ուսանողական տարիներին՝ նախքան քրիստոնյա դառնալը, ես խմիչք էի օգտագործում և հարբում էի մյուս ուսանողների և իմ ընկերների հետ: Մեկ անգամ՝ Սուրբ Ծննդյան արձակուրդի ընթացքում, ես մի բարում էի ընկերներիս հետ, և նրանք խիստ հարբեցին: Այդ օրը տուն հասա գիշերվա 00:30-ին՝ ընկերներիս տուն տանելուց հետո, և տեսա, որ մայրս սպասում էր ինձ: Ես պատմեցի նրան ընկերներիս մասին և խոսքի մեջ լուրջ տոնով ասացի.

– Մայրի՜կ, ճիշտն ասած՝ ինձ դուր չի գալիս խմիչքը:

Նա ծիծաղեց և ասաց.

– Դու իսկական Բիվեր ես:

Այդ պահին ես հասկացա, որ երբեք չեմ տեսել իմ հորը հարբած վիճակում: Նրա ընտանիքում հարբեցողություն չկար, և դա այն մեղքը չէր, որը հեշտորեն սայթաքել էր տալիս Բիվերներին, թեև կային այլ մեղքեր: Այն մեղքերը, որոնք հեշտորեն պարտության են մատնում մեզ, չպետք է թույլ տանք որևէ կերպով մուտք գործել մեր կյանք:

Եբրայեցիների թղթի հեղինակն ավելացնում է.

> «Եվ մի՞թե դուք մոռացել եք այն խրախուսական խոսքերը, որոնք Աստված ասաց ձեզ՝ որպես Իր զավակների: Նա ասաց. «Իմ զավա՛կ, թեթևորեն մի՛ վերաբերվիր Տիրոջ խրատին, և մի՛ վհատվիր, երբ Նա շտկում է քեզ: Որովհետև Տերը խրատում է նրանց, որոնց սիրում է, և պատժում է յուրաքանչյուրին, որին ընդունում է՝ որպես Իր զավակի» (Եբրայեցիների 12.5,6, NLT):

Տերը խրատում է մեզ, երբ մեղանչում ենք: Եկեք արագորեն վերանայենք այդ գործընթացը: Առաջին քայլն է՝ շտկել մեզ Իր Խոսքով, երբ Նա հանդիմանում է մեզ մեր սրտում: Եթե մենք չլսենք և թույլ տանք, որ մեր խիղճը ծածկվի քողերով, հանդիմանությունը կհասնի մեզ ընկերոջ, հովվի կամ մարգարեի միջոցով: Եթե մենք շարունակենք չլսել, Նա կօգտագործի դժվարություններ, նեղություն կամ տառապանք:

Մտածե՛ք այս մասին. ինչո՞ւ է հեղինակը գրում. «Մի՛ վհատվեք», երբ Աստված խրատում է: Նշանակում է՝ այդ խրատը խիստ է: Ահա թե ինչ է գրված դրանից հետո.

> «Սակայն Աստծո խրատը մշտապես օգտակար է մեզ համար, որպեսզի բաժնեկից լինենք Նրա սրբությանը: Ոչ մի խրատ հաճելի չէ, քանի դեռ այն ընթացքի մեջ է. այն ցավո՛տ է: Բայց հետագայում լինելու է արդար կյանքի խաղաղարար արդյունք նրանց համար, ովքեր այս կերպով վարժված են» (Եբրայեցիների 12.10,11, NLT):

Ուշադրություն դարձրեք, որ խրատը ցավոտ է: Անկարելի է ավելի պարզ ասել սա. Աստված չի վախենում շտկել Իր զավակներին «խրատի գավազանով»: Մտածե՛ք այն մասին, թե որքան անմիտ ենք մենք, երբ որոշում ենք հետևել այնպիսի ցանկությունների, որոնք հակառակ են Աստծուն: Մտածե՛ք այս մասին. մենք կարող ենք շատ ավելի քիչ ցավ ապրել կյանքում, եթե հեռու մնանք մեղքից՝ դրա հաճույքները կարճ ժամանակով վայելելու փոխարեն:

Աստծո Հոգին ձգտում էր օգնել կորնթացիներին Պողոս առաքյալի միջոցով, նույնիսկ այն մարդուն, ով շնություն էր գործում իր հոր կնոջ հետ: Աստված շարունակում է անել սա՝ հուսալով վերադարձնել մեզ կյանքի ճանապարհին, որպեսզի բաժնեկցենք Նրա սրբությանը: Այս երկու ճանապարհներն անհամատեղելի են: Մենք կա՛մ վայելում ենք կյանքի լիությունը՝ հնազանդվելով Աստծո Խոսքին, կա՛մ որոշում ենք կայացնում խոտորվել դեպի կռապաշտությունը՝ միտումնավոր մեղքը (հոգևոր կրիպտոնաքարը), որն ի վերջո շատ նեղություններ և տառապանքներ է պատճառում մեզ:

գործնական քայլ

Մեղքն իր բնույթով խաբուսիկ է: Խաբեությունն այն է, որ մեղքը կարող է բավականություն պատճառել մեզ: Խաբեությունն այն է, որ մենք վերահսկում ենք մեղքը, այնինչ չենք հասկանում, որ եթե շարունակենք մնալ մեղքի մեջ, այն լիովին կվերահսկի մեզ: Մեղքի խաբեության վատագույն հետևանքն այն է, որ այն հեռացնում է մեզ այն ճշմարիտ փառքից, որի համար կանչված ենք, և թույլ չի տալիս ունենալ կենդանի շփում Քրիստոսի հետ:

Բայց եթե մենք տեսիլք ունենք այն մասին, թե ինչ կարող է անել Աստված մեր կյանքում՝ զորության, գերբնական արդյունավետության, ազատության, Նրա հետ մտերմության և շատ այլ բնագավառներում, մենք կհասկանանք, որ մեղքն ընդամենը կեղծիք և խաբեություն է:

Խնդրե՛ք Աստծուն ցույց տալ ցանկացած բնագավառ ձեր կյանքում, որտեղ դուք սկսել եք կորցնել տեսիլքն այն կյանքի մասին, որը Նա ցանկանում է տալ ձեզ՝ այն բնագավառները, որոնցում միգուցե մեղքը և փոխզիջումը սկսել են ավելի գրավիչ թվալ: Թույլ տվեք Նրան նոր տեսիլք տալ ձեր կյանքի այդ բնագավառների համար: Գրի՛ առեք այն, ինչ Նա ցույց է տալիս:

ԲԱԺԻՆ 3

15

ՄԵՂՔԻ ՈՒԺԸ (ՄԱՍ 1)

Հին կտակարանում Կայենը զգուշացում ստացավ. «Զգո՛ւյշ եղիր: Մեղքը կռացել է դռան մոտ և ուզում է վերահսկել քեզ: Բայց դու պետք է պարտության մատնես և իշխես դրան» (Ծննդոց 4.7, NLT): Սա վերաբերում է ցանկացած մարդու: Մեղքը ձգտում է մեզ. այն ուզում է ստրկացնել և վերահսկել մեզ, որպեսզի կարողանա դրսևորվել մեր կյանքում: Մեղքը խաբուսիկ, գայթակղեցնող և զորավոր ախոյան է:

Ինչպե՞ս իշխել մեղքին: Պատասխանն է՝ հնազանդվելով Աստծո կամքին, Խոսքին և ճանապարհներին: Կարդանք, թե ինչ ասաց Աստված Կայենին անմիջապես Ծննդոց 4.7-ից առաջ. «Դու ընդունված կլինես, եթե ճիշտ վարվես: Բայց եթե հրաժարվես ճիշտ վարվել, զգո՛ւյշ եղիր: Մեղքը կռացել է դռան մոտ»: Ի սրտե հնազանդությունը *շրխկացնում է դուռը մեղքի ցանկության առջև:*

Հիշե՛ք Պողոսի խոսքերը հավատացյալներին (մտապահե՛ք, որ Պողոսն այն մարդն էր, ով ստացել էր մեծագույն հայտնությունը Աստծո շնորհքի մասին).

> «Մի՞թե չեք գիտակցում, որ դուք դառնում եք այն բանի ստրուկը, ինչին որոշում եք հնազանդվել: Դուք կարող եք ստրուկ լինել մեղքին, ինչի հետևանքը մահն է, կամ որոշել, որ հնազանդվելու եք Աստծուն, ինչի արդյունքն արդար կյանքն է» (Հռոմեացիների 6.16, NLT):

Պողոսի խոսքերը նման են Կայենին տրված ցուցմանը: Այնուամենայնիվ, գոյություն ունի մի մեծ տարբերություն: Հին կտակարա-

նում մարդկանց հոգին մահացած էր: Նրանց ներսի մարդուց կյանք չէր բխում: Նոր կտակարանում և այսօր Հիսուսին հավատացող մարդու հոգին կենդանի է. նա մեկ է Աստծո հետ և ունի Նրա աստվածային բնությունը: Այդ իսկ պատճառով, մենք կարող ենք որոշել, որ հնազանդվելու ենք մեր ներսի մարդուն՝ մեր հոգուն, կամ մեր դրսի մարդուն՝ մեր մարմնին:

Բացի այդ՝ այժմ գործում է Աստծո շնորհքը. այն ոչ միայն փրկում և ներում է, այլև զորացնում է, որ հնազանդվենք ճշմարտությանը: Աստծո Խոսքը հորդորում է մեզ. «Պինդ բռնենք այն շնորհքը, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն» (Եբրայեցիների 12.28): Շնորհքը տալիս է մեզ Աստծուն հնազանդվելու կարողություն:

Պետրոսը գրում է. «Թող Աստված ավելի ու ավելի *շնորհք* տա ձեզ... Իր աստվածային զորությամբ (շնորհքով) Աստված տվել է մեզ այն, ինչի կարիքը մենք ունենք՝ աստվածապաշտ կյանք վարելու համար» (Բ Պետրոս 1.2,3, NLT): Այս երկու խոսքերում, ինչպես նաև Նոր կտակարանի այլ խոսքերում, շնորհքը նկարագրվում է որպես զորացնող ուժ: Մենք ունենք նոր բնություն՝ զորացված Նրա շնորհքի պարգևով, որը հասանելի չէր Կայենին, և ո՛չ էլ որևէ մեկին Հին կտակարանում:

Այդ դեպքում, ինչո՞ւ բազմաթիվ հավատացյալների չի հաջողվում իշխել մեղքին: Կարևոր է հիշել, որ մենք կարող ենք զորություն ունենալ, բայց չգործածելու դեպքում այն ոչ մի օգուտ չի տա մեզ: Աստված ընտրելու հնարավորություն է տալիս մեզնից ամեն մեկին, և ոչինչ չի հարկադրում: Այնպես որ, երբ որևէ քրիստոնյա անհնազանդ է գտնվում Աստծուն, մեղքը սկսում է վերահսկել նրա կյանքը: Ինչո՞ւ հավատացյալը պետք է թույլ տա նման բան: Դա կարող է տեղի ունենալ, միայն եթե մեղքը համոզի հավատացյալին, որ նրա ցանկությունն ավելի շահավետ է նրա համար, քան Աստծուն հնազանդվելը: Սա է պատճառը, որ Պողոսը գրում է.

«Մեղքի զորությունը օրենքն է» (Ա Կորնթացիների 15.56):

Այս պնդումը դժվարըմբռնելի է և միգուցե նաև՝ զարմացնող: Մեղքն ազդում է մարդու վրա՝ ստանալով իր ուժն *օրենքից:* Առաջին հայացքից դուք կարող եք մտածել. *«Ես Մովսեսի օրենքի տակ չեմ»:* Դա ճիշտ է, սակայն կարևոր է նշել, որ «օրենք» բառն Աստվածաշնչում ամեն անգամ չէ, որ վերաբերում է Մովսեսի օրենքին: Հակոբոսը խոսում է «թագավորական օրենքի» մասին (տե՛ս Հակոբ. 2.8), որը մերձավորին սիրելն է: Գոյություն ունի «Աստծո օրենքը» (տե՛ս Հռոմ. 8.7), որը գրված է հավատացյալների սրտերին, «Քրիստոսի օրենքը» (տե՛ս

Գաղատ. 6.2), որը կատարվում է՝ մեկը մյուսի բեռը կրելով, և «ազատության օրենքը» (տե՛ս Հակոբ. 2.12), որով մենք դատվելու ենք: Կան նաև ավելի շատ «օրենքներ»: Առաջին Կորնթացիների 15.56-ում Պողոսը չի խոսում այս օրենքներից որևէ մեկի մասին:

Այդ դեպքում, ի՞նչ օրենքի մասին է խոսում Պողոսը, որով մեղքն ուժ է ստանում՝ հավատացյալների վրա ազդելու համար: Մինչև պատասխանելը, թույլ տվեք բացատրել: Ահա որոշ մտքեր կամ խոսքեր, որոնք հատուկ են այս օրենքի ներքո գտնվող մարդկանց. «Ես չպետք է դիտեմ այդ ֆիլմը, որովհետև դրանում մերկություն և հայհոյանքներ կան», «Ես պետք է տասանորդ տամ», կամ «Ես չպետք է նայեմ սրահի *մյուս կողմում գտնվող կնոջը, որը ճչացող հագուստ է կրում»:

Ինչպիսի՞ օրենքի են վերաբերում այս արտահայտությունները: Նման բաներ խոսող մարդու համար Աստծո Խոսքը սահմանափակող գործոն է, ոչ թե նրա բերկրանքը: Աստծո Խոսքը նրա համար հարկադրող և զսպող է, ինչը սաղմոսերգուի խոսքերի ճիշտ հակառակն է. «Ես ուրախություն եմ ապրում՝ կատարելով Քո կամքը, իմ Աստվա՛ծ, որովհետև Քո հրահանգները գրված են իմ սրտի վրա» (Սաղմոս 40.8, NLT): «Օրենքի ներքո» գտնվող մարդը սրտանց չի *«կամենում Նրա կամքն անել»* (տե՛ս Հովհ. 7.17):

Ըստ էության, այս ձևակերպումն ամեն ինչ ասում է. «Ես կուզեի անել դա... բայց Աստծո Խոսքն այլ բան է պատվիրում»: Եվ Հին կտակարանում գոյություն ունի նման վերաբերմունքի դիպուկ օրինակ:

Անհամաձայնություն ունեցող մարգարեն

Բաղաամը մարգարե էր: Նա ճանաչում էր Աստծո ձայնը, և Տիրոջ ճանապարհներն անհայտ չէին Նրա համար: Բաղակը Մովաբի թագավորն էր, և բացի այդ՝ իշխում էր նաև մադիանացիների վրա: Նրա ամբողջ պետության բնակիչները սարսափել էին, քանի որ Իսրայելի ժողովուրդը մոտենում էր իրենց: Իսրայելցիները թալանել էին Եգիպտոսը՝ ամենաազդեցիկ երկիրն ամբողջ աշխարհում, և անցել էին Կարմիր ծովը: Եգիպտոսի զինվորական ուժը, գյուղատնտեսությունը և տնտեսությունը կործանման եզրին էին, և ամեն ընտանիքի անդրանիկ որդին գերբնականորեն մահվան էր մատնվել:

Եգիպտոսից դուրս գալուց հետո Իսրայելցիները հարձակման ենթարկվեցին ամորհացիների կողմից, սակայն իսրայելցիները լիովին ջախջախեցին նրանց: Այժմ Իսրայելը բանակ էր տվել Մովաբի հարթավայրերում, և Մովաբի ժողովուրդը, առաջնորդներն ու թագավորը սար-

սափել էին՝ մտածելով, որ Իսրայելն անելու էր իրենց հետ նույնը, ինչ եգիպտացիների և ամորհացիների հետ:

Բաղակ թագավորին պատմեցին մի ակնառու և ազդեցիկ մարգարեի մասին, որի անունը Բաղաամ էր: Երբ նա օրհնում էր մարդկանց, նրանց հետ բարի բաներ էին կատարվում, իսկ երբ անիծում էր մարդկանց, նրանք անպատճառ անեծք էին կրում: Բաղակ թագավորն ուղարկեց իր պաշտոնյաներին Բաղաամ մարգարեի մոտ՝ նվերներով և հետևյալ առաջարկով. «Աղաչում եմ, ե՛կ, ինձ համար անիծի՛ր այս ժողովրդին [Իսրայելին], որովհետև նա ինձնից զորավոր է: Գուցե կարող լինեմ նրան զարկել և իմ երեսից դուրս քշել» (Թվոց 22.6):

Բաղաամը պատասխանեց ուղարկված մարդկանց.

> «Եվ նա ասաց նրանց. «Այս գիշեր այստեղ մնացեք, և ես պատասխան կտամ ձեզ, ինչպես որ Տերը ինձ հետ խոսելու լինի»: Եվ Մովաբի իշխանները Բաղաամի մոտ մնացին» (Թվոց 22.8):

Ուշադրություն դարձրեք, որ Բաղաամը «Տեր» է անվանում Նրան: Նա չէր խորհրդակցում ինչ-որ օտար աստծո հետ, քանի որ նա միակ ճշմարիտ Աստծո մարգարեն էր: «Տեր» բառի փոխարեն նա օգտագործում էր *«Յահվեհ»* անունը: Սա Աստծո անունն է. Հին կտակարանի հեղինակները երբեք չէին օգտագործում այս անունը՝ խոսելով կեղծ Աստծո մասին:

Որքա՞ն հաճախ ենք մենք օգտագործում *«Տեր»* բառը՝ նկատի ունենալով Հիսուսին և մեր Հայր Աստծուն: Մենք չենք խոսում օտար աստվածների մասին, այլ՝ մեր Արարչի, Գերագույն Տիրոջ և մեզ համար Իր կյանքը Տվողի մասին: Այսպես էր վարվում նաև Բաղաամը:

Ուշադրությամբ կարդանք, թե ինչ ասաց Աստված Բաղաամին այդ գիշեր: Հետաքրքիր է նշել, որ Նա նույնիսկ չսպասեց, որ Բաղաամը փնտրի Իրեն:

> «Աստված Բաղաամի մոտ եկավ և ասաց. «Ովքե՞ր են այդ մարդիկ քեզ մոտ»» (Թվոց 22.9):

Տերը, ըստ էության, Բաղաամին ասում էր. «Ովքե՞ր են այս մարդիկ Ինձ համար: Նրանք ուխտի մեջ չեն Ինձ հետ: Դու իսկապե՞ս ուզում ես հարցնել Ինձ Իմ ուխտի ժողովրդին անիծելու մասին: Ինչո՞ւ ես ուզում աղոթել սրա համար: Մի՞թե պատասխանն ակնհայտ չէ»:

Կան բաներ, որոնց համար պետք չէ աղոթել: Մենք արդեն գիտենք,

թե որն է Աստծո կամքը՝ կարդալով այն, ինչ հայտնված է Նրա գրավոր ուխտում: Կարիք չկա աղոթել և հարցնել Աստծուն, թե արդյո՞ք պետք է հավաքվել այլ քրիստոնյաների հետ: Աստված արդեն ասել է. «Եվ չթողնե՛ք իրար հետ ժողովվելը՝ ինչպես ոմանց սովորությունն է» (Եբրայեցիների 10.25):

Կարիք չկա աղոթել և հարցնել Աստծուն, թե արդյո՞ք պետք է զոհաբերություններ հավաքել այն մարդկանց համար, որոնք ծառայում են ձեզ, որովհետև Սուրբ գիրքն ասում է. «Տերը հրաման տվեց Ավետարանը քարոզողներին՝ Ավետարանից ապրել» (Ա Կորնթացիների 9.14):

Կարիք չկա հարցնել, թե արդյո՞ք կարող եք միասեռ հարաբերություններ ունենալ կամ խրախուսել նման հարաբերությունները: Աստված արդեն հստակ խոսել է այս մասին.

> «Չե՞ք հասկանում, որ մեղք գործողները չեն ժառանգի Աստծո թագավորությունը: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ: Նրանք, ովքեր տրվում են սեռական մեղքերին, կամ երկրպագում են կուռքերին, կամ շնություն են գործում, կամ տղամարդ մարմնավաճառներ են, կամ միասեռական են, կամ գողեր են, կամ ագահ մարդիկ են, կամ հարբեցողներ են, կամ կռվարար են, կամ խաբում են մարդկանց. սրանցից ոչ մեկը չի ժառանգի Աստծո թագավորությունը» (Ա Կորնթացիների 6.9,10, NLT):

Կարիք չկա հարցնել Աստծուն, թե կարո՞ղ եք կեղծել ձեր հարկային հայտարարագիրը. դա գողություն է: Կամ տեղափոխվել ձեր զուգընկերուհու կամ զուգընկերոջ տուն և սեռական կյանքով ապրել նրա հետ մինչև ամուսնանալը. դա սեռական մեղք է: Կամ հարաբերություններ սկսել այլ մարդու կնոջ հետ. դա շնություն է, և այլն: Նոր կտակարանում կան բազմաթիվ պատվիրաններ, որոնք արդեն հստակ ցույց են տալիս Աստծո կամքը:

Ըստ էության, Աստված շարունակեց. «Լա՛վ, Բաղաամ, քանի որ դու չես հասկանում, կամ, ավելի ճիշտ, չես ուզում հասկանալ, ես պարզորեն կհայտնեմ Իմ կամքը քեզ համար»: «Նրանց հետ չգնաս, ժողովրդին չանիծես, որովհետև նա *օրհնված* է» (Թվոց 22.12):

Այս խոսքերը մեկնության կարիք չունեն:

Իսկ այժմ, ուշադրություն դարձրեք, թե ինչպես Բաղաամն արձագանքեց աստվածային ցուցմանը.

> «Եվ Բաղաամն առավոտը վեր կացավ և ասաց Բաղակի

> իշխաններին. «Գնացե՛ք ձեր երկիրը, որովհետև Տերն ինձ *արգելում* է ձեզ հետ գնալու» (Թվոց 22.13):

Շատերը կգովեին Բաղաամին: Մենք կծափահարեինք նրա հնազանդությանը և կասեինք. «Նա աստվածապաշտ եղբայր է»: Այնուամենայնիվ, նրա խոսքի մեջ կա մի բան, ինչը դրդում է մեզ այլ կերպ մտածել: Ուշադրություն դարձրեք, որ նա ասաց. «Տերն ինձ *արգելում* է»: Նա չասաց. «Տերը պարզորեն ցույց տվեց Իր կամքը, և այդ պատճառով ես չեմ գա»: Նա օգտագործեց *«արգելել»* բառը:

Մի օրինակ բերենք: Ավագ դպրոցի մի խումբ աշակերտներ որոշում են գնալ գնումների, իսկ հետո՝ կինոթատրոն: Էմին, ով նրանցից մեկն է, թույլտվություն է խնդրում իր ծնողներից՝ գնալու համար: Նրանք պատասխանում են.

Էմի՛, մենք ընտանեկան ընթրիք ենք ունենալու այս երեկո, ավելի լավ է, որ մնաս մեզ հետ:

Էմիի ընկերները մեքենայով գալիս են նրա տան մոտ՝ նրան իրենց հետ վերցնելու համար: Երբ նա բացում է դուռը, ընկերները հարցնում են.

Պատրա՞ստ ես:

Էմին մռայլված պատասխանում է.

Ես չեմ կարող գալ:

Սա նշանակում է՝ *«Ես կուզեի գալ ձեզ հետ, երեխանե՛ր, բայց պետք է տանը մնամ՝ ընտանեկան ընթրիքի»:* Նրա ծնողների ցանկությունը թույլ չի տալիս նրան անել այն, ինչ նա իրականում ուզում է: Նրա ծնողների խոսքերն *օրենք* են նրա համար: Բաղաամի ասածը ճիշտ նույնն էր:

Ավելի շահավետ գործարք

Մովաբի իշխանները վերադարձան թագավորի մոտ և փոխանցեցին Բաղաամի պատասխանը: Սակայն դա չգոհացրեց թագավորին. մերժումը պատասխան չէր նրա համար: Այնպես որ, նա ուղարկեց ավելի պատվավոր իշխանների և ավելի մեծ նվերներ՝ Բաղաամին հրավիրելու համար: Ահա թագավորի խոսքերը նրան. «Քեզ շատ պատիվ կանեմ և ինչ որ ասես ինձ, կանեմ, և աղաչում եմ՝ ե՛կ, անիծի՛ր այս ժողովրդին ինձ համար» (Թվոց 22.16,17):

Եթե ձեր հարևանն ասեր ձեզ. «Ես կանեմ քեզ համար այն, ինչ ասես», դա մեծ բան չէր լինի, բայց երբ մի մեծ պետության թագավորն

է նման առաջարկ անում, դա շատ բան է նշանակում:

Երբ ես սովորում էի ավագ դպրոցում, կար Ֆլիպ Վիլսոն անունով մի հայտնի կատակերգակ: Նրա թևավոր խոսքերից մեկն էր. «Սատանան ստիպեց, որ անեմ դա»:

Դա ծիծաղելի էր, և մարդիկ հաճախ էին կրկնում նրա խոսքերը, բայց դրանք ճիշտ չեն: Սատանան չի կարող ստիպել հավատացյալին որևէ բան անել: Աստծո Խոսքը հստակ ասում է. «Բայց ամեն մեկը փորձվում է (կամ՝ գայթակղվում է) բուն իր ցանկությունից *հրապուրված* և խաբված» (Հակոբոս 1.14): Բանալին այս խոսքում «հրապուրված» բառն է: Ահա այն ամենը, ինչ սատանան կարող է անել հավատացյալին: Սակայն դուք չեք կարող հրապուրվել այնպիսի բանով, որը չեք ցանկանում: Եթե իմ առջև կոկաինի մեկանգամյա չափաբաժին դնեին, ես կասեի. «Հեռացրե՛ք դա ինձնից»: Ինձ անկարելի կլիներ հրապուրել դրանով, քանի որ ես չունեմ ցանկություն թմրամիջոցների հանդեպ:

Սակայն սատանան խելացի է և ծույլ չէ: Նա հանձնարարում է դևերին ուսումնասիրել ոչ միայն ձեր կյանքը, այլև ձեր հոր և մոր, նաև նրանց հայրերի ու մայրերի կյանքերը: Նա գիտի ձեր ընտանեկան տկարությունները և հակումները:

Նա ուսումնասիրել էր Բաղաամի կյանքը և գիտեր, որ այդ մարգարեն անառողջ ցանկություն ուներ հարստության, նվերների և կարգավիճակի հանդեպ: Համոզված եմ՝ սա էր պատճառը, որ սատանան դրդեց անաստված Բաղակ թագավորին ավելի գայթակղիչ առաջարկ անել: Բայց սպասե՛ք. որքան մեծ էր առաջարկը, այնքան ուշագրավ էր Բաղաամի պատասխանը.

> «Եթե Բաղակը իր տունը լիքը արծաթ ու ոսկի տա ինձ, իմ Տեր Աստծո Խոսքից *չեմ կարող* անց կենալ՝ մի փոքր կամ մի մեծ բան անելու» (Թվոց 22.18):

Մենք կրկին կծափահարեինք Բաղաամ մարգարեի համարձակ դիրքորոշմանը, քանի որ նա անհնազանդ չէր Աստծո Խոսքին՝ նույնիսկ ավելի մեծ առաջարկի դեպքում: Այնուամենայնիվ, մենք կրկին տեսնում ենք այն բանալի բառերը, որոնք ցույց են տալիս, որ մարգարեն սահմանափակված էր զգում իրեն: Նա ասաց՝ «Ես չեմ կարող», ոչ թե՝ «Ես չեմ ուզում»: Ոչինչ չէր փոխվել: Նա դեռ զսպված էր Աստծո Խոսքով, որն օրենք էր նրա համար: Նրա հաջորդ խոսքերը հաստատում են սա.

> «Եվ հիմա աղաչո՛ւմ եմ՝ այս գիշեր դուք էլ այստեղ մնացեք, որ գիտենամ, թե Տերն ուրիշ ինչ պիտի ասի ինձ» (Թվոց 22.19):

Ի՞նչ: Մի՞թե ավելի գայթակղիչ առաջարկը կփոխեր Աստծո միտքը: Մի՞թե ինչ-որ մեկը կարող է հավատալ, որ Աստված պատվիրեց Բաղաամին «ոչ» ասել առաջին անգամ, որովհետև Նա գիտեր, որ թագավորը ավելի շահավետ առաջարկ էր անելու նրան հաջորդ դեսպանների հետ: Ինչպիսի՜ անհեթեթ մտածելակերպ: Աստված չէր առաջարկում Բաղաամին սպասել՝ ավելի լավ առաջարկի համար: Այնպես որ, եթե կարիք չկար, որ Բաղաամն աղոթեր առաջին անգամ, առավել ևս չարժեր աղոթել երկրորդ անգամ: Իսկ Աստված պարզորեն հայտնեց Իր կամքն առաջին անգամ եկած մարդկանց վերաբերյալ. «Նրանց հետ չգնա՛ս»:

Չնայած այդ ամենին, Բաղաամը որոշեց աղոթել այդ գիշեր: Այնուամենայնիվ, լսե՛ք Տիրոջ պատասխանը.

> «Եթե մարդիկ քեզ կանչելու գան, վե՛ր կաց, նրանց հետ գնա, բայց ինչ որ քեզ հետ խոսեմ, միայն այն անես» (Թվոց 22.20):

Սպասե՛ք: Այժմ Աստված ասում է. «Գնա՛ նրանց հետ»: Մի՞թե մենք ճիշտ կարդացինք: Ի՞նչ է կատարվում: Ինչպիսի՜ շրջադարձ: Այժմ Բաղաամը Տիրոջից խոսք ուներ, որ գնար Մովաբի իշխանների հետ: Եվ նա արեց ճիշտ այն, ինչ Տերը պատվիրեց իրեն: Նա թամբեց իր ավանակին և գնաց Մովաբի իշխանների հետ: Նա հնազանդվեց Աստծո պատվերին: Այնուամենայնիվ, կատարվեց հետևյալը.

> «Եվ գնալու համար Աստծո բարկությունը բորբոքվեց» (Թվոց 22.22):

Ի՞նչ է կատարվում: Մի՞թե Աստված շիզոֆրենիայով է տառապում: Բաղաամն արեց ճիշտ այն, ինչ Աստված պատվիրել էր իրեն նախորդ գիշեր, իսկ Աստված բարկացավ նրա վրա: Ինչպե՞ս կարելի է բացատրել սա:

Աստվածաշնչում կա մի տրամաբանական պատասխան, որը շատ բաներ կարող է հայտնել մեզ: Այդ պատասխանը վերաբերում է այն ճշմարտությանը, որ *մեղքը ստանում է իր ուժն օրենքից:* Մենք կբացահայտենք այն հաջորդ գլխում:

գործնական քայլ

Շատ հավատացյալներ կարիք ունեն լսելու այս հույսի ուղերձը. դուք կարող եք լիովին ազատ լինել մեղքի իշխանությունից:

Այո՛, դուք ճիշտ կարդացիք: Քրիստոնյաները կարող են վեր լինել մեղքից: Հիսուսը չմահացավ միայն ձեզ «Երկնքի տոմս» տալու համար. Նա ազատ արձակեց ձեզ մեղքի և մահվան իշխանությունից: Մեղքն իշխանություն չունի ձեզ վրա, ընդհակառակը՝ դո՛ւք ունեք իշխանություն մեղքի վրա:

Սա հնարավոր է միայն Աստծո շնորհքով՝ Նրա աստվածային զորությամբ, որը կարող է այն, ինչ անկարելի է մարդու համար: Շնորհքը տրվել է մեզ, և շնորհքի զորությունը պատկանում է մեզ: Այնուամենայնիվ, մենք չենք ստանա շնորհքի առավելությունները, եթե չօգտագործենք այն: Որպես կանոն, հավատացյալները չեն օգտագործում Աստծո շնորհքը, քանի որ չեն գիտակցում, որ այն պատկանում է իրենց:

Զորացե՛ք մեղքի դեմ այսօր՝ մտորելով այն աստվածաշնչյան հատվածների շուրջ, որոնք հայտնում են, որ դուք իրական իշխանություն ունեք մեղքի վրա: Խոսե՛ք Աստծո հետ այս մասին և ապաշխարե՛ք այն բնագավառների համար, որոնցում թույլ եք տվել մեղքին իշխել ձեզ կյանքում: Գոհացե՛ք Աստծուց՝ այսօր ձեզ ազատություն տալու համար: Ներե՛ք ինքներդ ձեզ նախկին ձախողումների համար և խնդրե՛ք Աստծուն ցույց տալ, թե ինչպես է Նա դիտարկում ձեր ձախողումները: Գրի՛ առեք այն, ինչ Նա ցույց է տալիս կամ հայտնում է ձեզ:

16

ՄԵՂՔԻ ՈՒԺԸ (ՄԱՍ 2)

Շարունակենք նախորդ գլխում սկսված պատմությունը Բաղաամ մարգարեի մասին:

Աստված պատվիրել էր Բաղաամին չգնալ Մովաբից և Մադիամից եկած մարդկանց առաջին խմբի հետ: Այնուամենայնիվ, երբ եկավ երկրորդ խումբը՝ բաղկացած ավելի ակնառու պաշտոնյաներից, Բաղաամը ևս մեկ անգամ գնաց Տիրոջ մոտ: Նա հույս ուներ, որ այլ պատասխան կստանար:

Դուք երբևէ եղե՞լ եք նման իրավիճակում, երբ իմացել եք ձեր սրտում, թե որն է Աստծո կամքը, սակայն, միևնույն է, աղոթքով դիմել եք Նրան՝ հույս ունենալով, որ Նա այլ պատասխան կտա: Միգուցե դուք քողարկել եք ձեր սխալ ցանկությունը՝ ասելով. «Ես կաղոթեմ դրա համար», կամ «Ես մեկ անգամ էլ կաղոթեմ դրա համար»:

Չգիտեմ՝ դուք ինչպես, բայց ես մեղավոր եմ այս հարցում, և քիչ անց այս գլխում կպատմեմ իմ երկու բացասական փորձառությունների մասին այս ոլորտում:

Բաղաամը սաստիկ ցանկանում էր ստանալ թե՛ նվերներ, թե՛ պատիվ այդ ազդեցիկ թագավորից, սակայն չէր համարձակվում դուրս գալ Աստծո պատվերի «սահմանափակումներից»: Նա հասկանում էր, որ օրհնված չէր լինի, եթե գիտակցաբար անհնազանդ լիներ Աստծուն: Երբեմն նման դիրքորոշումը դուռ է բացում ավելի մեծ խաբեության համար:

Այնպես որ, փորձեք պատկերացնել Բաղաամի զարմանքը, երբ Աստված ասաց. «Վե՛ր կաց, գնա՛ նրանց հետ»: Միգուցե Բաղաամը

մտածեց. *«Զարմանալի՜ է: Որքա՜ն լավ է, որ մեկ անգամ էլ աղոթեցի սրա համար»:*

Հաջորդ առավոտյան Բաղաամն արթնացավ և արեց ճիշտ այն, ինչ Աստված պատվիրել էր իրեն նախորդ գիշեր և, ի զարմանս մեզ, մենք կարդում ենք. «Եվ գնալու համար Աստծո բարկությունը բորբոքվեց» (Թվոց 22.22):

Ի՞նչ, մի՞թե Աստված շիզոֆրենիայով է տառապում: Իհարկե, սա հռետորական հարց է, քանի որ բոլորս գիտենք պատասխանը՝ *իհարկե՝ ո՛չ*: Այդ դեպքում, ինչո՞ւ Աստված բարկացավ: Բաղաամն անում էր ճիշտ այն, ինչ Աստված ասել էր նրան. նա գնում էր: Եվ հանկարծ Աստված բարկացավ նրա գնալու համար: Ի՞նչ էր կատարվում:

Այս հատվածում հայտնված է մի ճշմարտություն, որը շատերը չգիտեն և չեն հասկանում, և ինձնից պահանջվեցին դժվարություններով լի տարիներ, մինչև որ բացահայտեցի այն:

Եթե մենք ուժգնորեն (ագահաբար) ինչ-որ բան ենք ցանկանում, իսկ Աստված հայտնել է մեզ Իր կամքն այդ մասին (թե՛ Իր Խոսքով, թե՛ աղոթքի ժամանակ), սակայն մենք դեռ ցանկանում ենք դա, Աստված հաճախ կտա դա մեզ, թեև Նա գիտի, որ դա լավագույնը չէ մեզ համար, և որ ի վերջո մենք կանգնելու ենք դատաստանի առջև դրա համար:

Միգուցե այս պնդումը զարմացնի ձեզ, բայց այն ճշմարիտ է: Թույլ տվեք ապացուցել այն աստվածաշնչյան օրինակներով:

Պատասխանված խնդրանքներ

Իսրայելը ցանկանում էր թագավոր ունենալ: Ժողովրդի առաջնորդները դիմեցին Սամուել մարգարեին և հայտնեցին իրենց խնդրանքը: Նրանք ասացին. «Մեզ վրա թագավոր դիր, որ մեզ դատի, ինչպես որ բոլոր ազգերը» (Ա Թագավորաց 8.5):

Սամուելը հարցրեց Տիրոջը նրանց խնդրանքի մասին, և Աստված պատասխանեց առաջնորդներին մարգարեի միջոցով՝ բացատրելով, թե ինչու թագավոր ունենալը լավ չէր լինի նրանց համար: Նա զգուշացրեց, որ թագավորն իր բանակն էր զորակոչելու նրանց որդիներին: Թագավորը նույնպես վերցնելու էր նրանց որդիներին՝ իր դաշտերը վարելու, իր հունձքը հավաքելու և իր համար զենք և սպառազինություն պատրաստելու համար: Նա վերցնելու էր նրանց աղջիկներին և հարկադրաբար դարձնելու էր խոհարարներ, մաքրուհիներ, օծանելիք պատրաստողներ և նշանակելու էր շատ այլ գործերի: Այդ ամենից բացի՝ թագավորը պահանջելու էր լավագույն դաշտերը, խաղողի այ-

գիները, ձիթենիների պուրակները, երինջները և ոչխարները, և տալու էր դրանք իր պաշտոնյաներին: Աստված շարունակեց՝ ասելով, որ ժողովուրդն ի վերջո աղաչելու էր, որ ազատվեր այն թագավորից, որին իրենք ցանկացել էին, բայց Ինքը չէր օգնելու նրանց:

Այնուամենայնիվ, գրված է. «Սակայն ժողովուրդը Սամուելի խոսքը լսել չուզեց, և ասացին. «Ո՛չ, անպատճառ մեզ վրա թագավոր լինի, և մենք էլ բոլոր ազգերի պես լինենք»» (Ա Թագավորաց 8.19,20):

Սամուելը կրկնեց Աստծո ժողովրդի սաստիկ ցանկությունը: Տիրոջ պատասխանը Սամուելին՝ հակառակ էր Նրա կամքին: Նա ասաց. «Նրանց ձայնը լսիր և նրանց վրա թագավոր դիր» (Ա Թագավորաց 8.22): Աստված նրանց տվեց իրենց ուզածը, թեև դա լավագույնը չէր նրանց համար: Նրանք ստացան իրենց թագավորին. թե՛ նա, թե՛ նրա հաջորդներն արեցին այն ամենը, ինչի մասին Աստված զգուշացրել էր ժողովրդին:

Եվս մեկ օրինակ: Երբ Իսրայելը դուրս եկավ Եգիպտոսից, Աստված կերակրում էր ժողովրդին գերբնական կերակուրով: Այն կոչվում էր մանանա՝ երկնային հաց, որն Աստվածաշունչն անվանում է նաև «հրեշտակների հաց» (տե՛ս Սաղմ. 78.25): Այդ կերակուրն այնքան սննդարար էր, որ հետագայում Եղիան կերավ մանանայից պատրաստված ընդամենը երկու շոթ, և քառասուն օր շարունակ առանց կանգնելու վազեց դրանցից ստացած ուժով: Ես կուզեի ժամանակ առ ժամանակ նման կերակուր ուտել:

Սակայն Իսրայելը հոգնեց այդ հացից ու միս ցանկացավ: Եվ նրանք խնդրեցին դրա համար: Սաղմոսերգուն գրում է. «Խնդրեցին, և Նա լորամարգիներ բերեց» (Սաղմոս 105.40): Աստված զարմանալի կերպով պատասխանեց նրանց խնդրանքին: Գրված է. «Նա երկնքում վեր կացրեց արևելյան քամին և *Իր զորությամբ* մոտ քշեց հարավային քամին: Եվ միս թափեց նրանց վրա՝ ինչպես փոշի, և թևավոր թռչուններ՝ ինչպես ծովի ավազ, և նրա բանակի մեջ գցեց՝ նրա բնակարանների չորս կողմով» (Սաղմոս 78.26-28):

Աստված ոչ միայն պատասխանեց նրանց խնդրանքին, այլև արեց դա հրաշքով: *Իր զորությամբ* Նա հարյուր հազարավոր թռչուններ բերեց Իսրայելի բանակատեղի: Կարիք չկար, որ իսրայելցիները որսային այդ թռչուններին. նրանց պետք չէին շներ, զենքեր, վանդակներ և ոչ էլ սարք՝ նրանց բռնելու համար: Լորամարգիները պարզապես թափվեցին նրանց վրա, և նրանք հավաքում էին այդ թռչուններին օդից կամ գետնից: Եթե դա տեղի ունենար այսօր, այդ պատմությունը կտարածվեր բոլոր սոցիալական ցանցերում և կդառնար գլխավոր լուրերից մեկը:

Աստված ազդեցիկ կերպով միջամտեց, սակայն կարդացե՛ք այս Սաղմոսի շարունակությունը:

> «Եվ կերան ու խիստ կշտացան, և իրենց ցանկությունը տվեց նրանց: Իրենց ցանկությունից չէին դադարել, դեռ իրենց կերակուրը բերաններում էր, Աստծո բարկությունը դուրս եկավ նրանց վրա և սպանեց նրանց պարարտներից և գետնով զարկեց Իսրայելի երիտասարդներին» (Սաղմոս 78.29-31):

Աստված՝ ոչ թե կեղծ աստված կամ որևէ դև, տվեց նրանց այն, ինչ ցանկանում էին, և այն էլ՝ հրաշքով: Սակայն մինչև նրանք ավարտեցին ուտելը, Նրա դատաստանը վրա հասավ:

Մենք պետք է մտապահենք, որ մինչև մարդուն ստեղծելը, Աստված որոշեց ազատ կամք տալ նրան, թեև Նա գիտակցում էր, որ մենք կարող էինք ընտրել այն, ինչը հակառակ է Իր ցանկությանը և նույնիսկ կործանարար է մեզ համար:

Հիշե՛ք անառակ որդու օրինակը: Նա խնդրեց տալ իր ժառանգությունը: Նրա հայրը գիտեր, որ նա այնքան հասուն չէր, որ պատշաճ կերպով տնօրիներ այն: Այնուամենայնիվ, քանի որ որդին խիստ ցանկանում էր դա, հայրը զիջեց և տվեց նրա ժառանգությունը: Արդյունքում որդին հայտնվեց խոզանոցում և համակվեց խորը ափսոսանքով:

Աստվածաշնչում կան նաև այլ օրինակներ, բայց կարծում եմ՝ հասկացաք այս ճշմարտությունը: *Մենք գտնվում ենք անբարենպաստ և վտանգավոր վիճակում, երբ եռանդուն կերպով խնդրում ենք այնպիսի բան, ինչը չի համապատասխանում Աստծո կամքին:*

Խելացի ավանակը

Հաշվի առնելով այս ամենը՝ վերադառնանք Բաղաամի պատմությանը:

Նա արդեն գնում էր Մովաբի թագավորին հանդիպելու: Թագավորի օգնականներն ուղեկցում էին նրան, բայց Աստված բարկացած էր նրա ընտրության պատճառով: Հանկարծ մի հրեշտակ կանգնեց Բաղաամի առջև: Խնդրում եմ մտապահել, որ հրեշտակները փոքրիկ գեր մանուկներ չեն՝ աղեղներով և նետերով, այլ՝ հսկայամարմին և զորավոր էակներ: Ես կենթադրեմ, որ այդ հրեշտակը 2,5-3 մետր հասակ ուներ:

Հրեշտակը կանգնեց ճանապարհի վրա՝ Բաղաամի առջև, դուրս հանած թրով, և Աստված հրաշքով բացեց *ավանակի* աչքերը: Հենց որ ավանակը տեսավ այդ հսկայամարմին էակին, որը պատրաստ էր թրով զարկել, նա դուրս գնաց ճանապարհից դեպի դաշտը՝ նրանից խուսափելու համար: Բաղաամը սկսեց բարկացած հարվածել իր ավանակին և վերադարձրեց նրան ճանապարհի վրա:

Հրեշտակը կանգնեց ճանապարհի այն հատվածում, որտեղ երկու կողմից պատ էր կառուցված: Տեսնելով հրեշտակին՝ ավանակը կրկին փորձեց հնարավորինս հեռանալ նրանից և սեղմեց Բաղաամի ոտքը իր մարմնի և պատի միջև: Բաղաամն է՛լ ավելի բարկացավ ավանակի վրա և կրկին սկսեց հարվածել նրան:

Հաջորդը՝ հրեշտակը կանգնեց ճանապարհի այն հատվածում, որտեղ անցումն այնքան նեղ էր, որ այլևս շրջվելու տեղ չկար: Այս անգամ, տեսնելով թուրը մերկացրած հրեշտակին, ավանակը պառկեց Բաղաամի տակ: Բաղաամը կատաղության չափ բարկացավ և կրկին սկսեց հարվածել ավանակին:

Աստված բացեց ավանակի բերանը, և նա ասաց Բաղաամին. «Ես ի՞նչ եմ արել քեզ, որ այսպես երեք անգամ ինձ ծեծեցիր» (Թվոց 22.28):

Բաղաամը և ավանակը բարկացած մի քանի խոսք փոխանակեցին և, ի վերջո, Աստված բացեց Բաղաամի աչքերը, որպեսզի նա նույնպես տեսնի հրեշտակին: Նա անմիջապես երեսնիվայր ընկավ:

Մինչև այս պահը ես խոսել եմ այդ հրեշտակի մասին՝ որպես Աստծուն ծառայող մի երկնային էակի: Այնուամենայնիվ, Աստվածաշնչի «Նյու Քինգ Ջեյմս» թարգմանության թարգմանիչները (ինչպես նաև ես) հավատում են, որ այդ հրեշտակն Ինքը Տերն էր: Ինչևէ, ես թույլ կտամ, որ ինքներդ որոշեք դա, քանի որ իմ նպատակը ձեզ համոզելը չէ ո՛չ դրանում, ո՛չ էլ հակառակը:

Հրեշտակը հանդիմանեց Բաղաամին՝ ասելով. «Տե՛ս, Ես դուրս եկա՝ քեզ դեմ կանգնելու համար, որովհետև քո ճանապարհը ծուռ է Իմ առջև: Ավանակը տեսավ Ինձ և շրջվեց Ինձնից արդեն երեք անգամ: Եթե նա չշրջվեր Իմ առջևից, անշուշտ, Ես արդեն սպանած կլինեի քեզ և կխնայեի նրա կյանքը» (Թվոց 22.32,33, NKJV):

Ավանակը փրկեց Բաղաամի կյանքը: Նա մահացած կլիներ, եթե ավանակը չշրջվեր Տիրոջ առջևից: Միգուցե մտածեք, որ Բաղաամն ասաց Մովաբի և Մադիամի առաջնորդներին. «Վե՛րջ, ես գնում եմ: Ասե՛ք ձեր թագավորին՝ թող իր փողն իրեն մնա»: Բայց նա այլ բան ասաց: Փոխարենը՝ Բաղաամը խոստովանեց Տիրոջը.

> «Ես մեղանչել եմ, որովհետև չգիտեի, որ Դու կանգնեցիր ճանապարհին՝ իմ դեմ: Եվ ուրեմն, եթե դա հաճելի չէ Քեզ, ես ետ կդառնամ» (Թվոց 22.34, NKJV):

Բաղաամն ընդունեց իր մեղքը, սակայն ավելացրեց. «Եթե դա հաճելի չէ Քեզ»:

Բաղաա՛մ, իսկապե՞ս: Ուրիշ ի՞նչ է պետք քեզ: Թեև Ինքը՝ Տերը եկավ և խիստ տպավորիչ կերպով կանգնեց նրա առջև, Բաղաամը դեռ փորձում էր ստանալ իր ուզածը: Նա այնքա՛ն էր ցանկանում թագավորի առաջարկած փողը և պատիվը, որ անտեսում էր աստվածային խրատը: Իր կռապաշտության պատճառով նա այլևս չէր զգում, թե ինչ կար Աստծո սրտում:

Ահա թե ինչ է կատարվում, երբ մեր ցանկություններն ավելի ուժգին են, քան Աստծուն հնազանդվելու ձգտումը, երբ մեզ թվում է, թե Նրա պատվիրանները սահմանափակում են մեզ: Մեղքի զորությունն ավելանում է խաբեության միջոցով: Մարդը դադարում է տեսնել այն, ինչն ակնհայտորեն հակառակ է Աստծո կամքին: Հնազանդ մարդկանց համար ամեն ինչ պարզ է. այնուամենայնիվ, կռապաշտության ազդեցությանը ենթարկվելու դեպքում, նույնիսկ նրանք շարունակ կփորձեն ստանալ Աստծո հավանությունը իրենց սաստիկ ցանկությունների համար:

Իմ ձախողումները

Երբ ես երեսունն անց էի, Աստված հստակ ցույց տվեց Լիզային և ինձ, որ Նրա կամքը չէր, որ մենք պայմանագիր ստորագրեինք մի հայտնի հրատարակչական ընկերության հետ: Ես մերժեցի, երբ այդ ընկերության նոր նախագծերով զբաղվող խմբագիրն առաջին անգամ դիմեց ինձ, բայց ոչ այնպես, ինչպես Բաղաամը, երբ նա առաջին անգամ հանդիպեց Բաղակի առաջնորդներին:

Այդ խմբագիրը շարունակում էր զանգահարել ինձ գրեթե ամեն օր: Նա ասում էր, որ իմ ուղերձը կարևոր էր Քրիստոսի մարմնի համար, և պատմում էր, թե ինչպես էին հարաբերականորեն անհայտ հեղինակները հայտնի դարձել՝ հրատարակելով իրենց գրքերն այդ հրատարակչությունում: Ես կուլ տվեցի նրա շողոքորթության կարթի կեռիկը, կարթաթելը և բեռնիկը: Ինքս էի հրատարակել մինչև այդ գրված իմ երկու գրքերը, և դրանք հասել էին շատ քիչ ընթերցողների: Ես ցանկանում էի օգտվել այդ հրատարակչության համազգային ազդեցությունից: Աստված նույնպես կամենում էր, որ իմ ուղերձները տարածվեին, սա-

կայն դեռ չէր եկել Նրա կողմից որոշված ժամանակը, Նա չէր ցանկանում սկսել հենց այդ ուղերձից և չէր պատրաստվում օգտագործել այդ հրատարակչությունը: Բացի այդ՝ իմ դրդապատճառները սխալ էին. ես ուզում էի ճանաչված դառնալ, ինչն Աստծո Խոսքն անվանում է *այս կյանքի ամբարտավանությունը*՝ ձգտում կարգավիճակի կամ համբավի:

Հայտնի ընկերության միջոցով իմ գրքերը հրատարակելու ցանկությունն այնքան ուժգին էր, որ ես անտեսեցի Տիրոջ ակնհայտ առաջնորդությունը, կնոջս խորհուրդները և այն բազմաթիվ խնդիրները, որոնք այդ ընթացքում առաջացան մեր կյանքում: Սուրբ Հոգու ներքին առաջնորդությունը՝ Նրա զգուշացնող ձայնը, մարել էր և փոխարինվել ուժգնացող ցանկությունից առաջացած խաբեությամբ:

Այդ հրատարակչությունը գտնվում էր այլ նահանգում: Մենք որոշեցինք, որ Լիզան թռչելու էր և պայմանագիր էր ստորագրելու մեր ծառայության կողմից, քանի որ ես չէի կարող գնալ՝ իմ զբաղվածության պատճառով: Առավոտյան, երբ նա պիտի մեկներ, մեր որդիներից մեկն այնպես փսխեց, որ կեղտոտեց առաջինից մինչև երկրորդ հարկի աստիճանները: Մինչ մենք մաքրում էինք նրա փսխածը, կինս սրտնեղած ասաց.

«Ձո՛ն, չե՞ս հասկանում, որ Աստված չի ուզում, որ անենք դա»:

Ես համարձակ ընդդիմացա.

«Ո՛չ, թշնամին է փորձում հիասթափեցնել և կանգնեցնել մեզ»:

Եթե միակ խնդիրը դա լիներ, միգուցե ես ճիշտ կլինեի: Մեզ հետ բազմաթիվ չարաբաստիկ անախորժություններ էին տեղի ունենում, սակայն չէի նկատում այդ ամենը. ես խաբված էի իմ մեղքի զորությամբ:

Այդ օրը Լիզան թռչեց և ստորագրեց պայմանագիրը: Հաջորդ երեք ամիսների ընթացքում քաոսը ներխուժեց իմ կյանք: Խաղաղությունը հեռացավ ինձնից. սկսվեց պայքարը: Երեք ամիս շարունակ ես հիվանդ էի: Վարակվում էի տարբեր վիրուսներով, մրսածությունն ու հիվանդությունները կրկնվում էին: Մեր հարաբերություններն այդ հրատարակչության հետ պարզապես սարսափելի էին. մենք չէինք կարողանում համաձայնել որևէ բանի վերաբերյալ: Բացի այդ՝ մեր ծառայությունը հազարավոր դոլարների կորուստ ունեցավ:

Ես տարբերվում էի Բաղաամից մեկ բանով. ի վերջո, հասկացա, որ իմ ուժգին ցանկությունը կուրացրել էր ինձ, և ես չէի տեսնում Աստծո կամքը: Ես գտնվում էի Աստծո դատաստանի (խրատի) ներքո: Հիշե՛ք Պողոսի խոսքերը. «Ահա թե ինչու են ձեզնից շատերը տկար և հիվանդ, և ոմանք նույնիսկ մահացել են: Բայց եթե մենք քննեինք ինքներս մեզ, այս կերպով չէինք դատվի Աստծո կողմից: Սակայն երբ դատվում ենք

Տիրոջ կողմից, մենք խրատվում ենք, որպեսզի չդատապարտվենք այս աշխարհի հետ» (Ա Կորնթացիների 11.30-32): Ես կրեցի բազմաթիվ անտեղի դժվարություններ, մինչև որ տեսա այն կուռքը, որը ստեղծել էի: Ես ապաշխարեցի իմ համառությունից, և գրեթե անմիջապես ամեն ինչ փոխվեց: Կարճ ժամանակ անց այդ հրատարակչությունը տեղեկացրեց ինձ, որ ցանկանում է ավարտել մեր աշխատանքային հարաբերությունները:

Մոտավորապես մեկ տարի անց մի հայտնի ընկերություն ևս առաջարկեց հրատարակել մեկ այլ ուղերձ, որը ես գրել էի վիրավորանքից ազատ լինելու մասին: Աստված խոսեց ինձ հետ. «Նախորդ հրատարակիչը քո գաղափարն էր. այս հրատարակիչը՝ Իմն է»: Իմ դրդապատճառները նույնպես փոխվել էին այն խրատի շնորհիվ, որը ստացել էի մեկ տարի առաջ: Այժմ ես ցանկանում էի հնազանդվել Աստծուն, որպեսզի մարդիկ իրականում ազատագրվեին: Աստված ցանկանում էր, որ հրատարակվեր հենց այդ ուղերձը: Եվ այժմ այդ գիրքը՝ *«Սատանայի խայծը»,* արդեն վաճառվել է շուրջ երկու միլիոն օրինակով:

Ես կցանկանամ ասել, որ սովորեցի իմ դասը և երբեք չեմ կրկնել այդ հիմարությունը: Սակայն, երբ քառասունն անց էի, ևս մեկ անգամ անտեսեցի Աստծո հստակ հայտնված կամքը, ինչպես նաև՝ իմ կնոջ և մեր ծառայության խորհրդի անդամներից մեկի համոզիչ խորհուրդը: Այդ անգամ խաբեությունն ավելի ուժգին էր, և խրատը, որը բաղկացած էր նեղություններից, դժվարություններից և տառապանքներից, ավելի խիստ էր: Դա տևեց գրեթե տասնութ ամիս: Եվս մեկ անգամ ես տեսա այն կուռքը, որը ստեղծել էի իմ ներսում, և ապաշխարեցի, սակայն այդ ամենը տեղի ունեցավ շատ ծանր գնով:

Ես լիովին համոզված եմ՝ եթե Բաղաամն ընդուներ այն, ինչ կար Աստծո սրտում, նրա կյանքը հետագայում կբարելավվեր: Այնուամենայնիվ, նա այդպես էլ չթողեց իր կռապաշտությունը և մահացավ՝ ենթարկվելով Աստծո դատաստանին (տե՛ս Հեսու 13.22):

Սիրելի՛ ընթերցող, չեմ ուզում, որ դուք սովորեք նեղությունների միջոցով, ինչպես ես: Հուսով եմ՝ այս խիստ ուղերձը կդրդի ձեզ խուսափել այնպիսի անտեղի դժվարություններից և տառապանքներից, ինչպիսիք ես կրեցի:

գործնական քայլ

Եթե մեր ցանկությունները չհնազանդեցնենք Աստծուն, դրանք կհեռացնեն մեզ Նրանից, և միգուցե Աստված նույնիսկ թողնի մեզ մեր ցանկություններին: Աստվածաշնչում հաճախ ենք տեսնում, որ Աստված հստակ հայտնում էր Իր կամքը, սակայն երբ Նրա ժողովուրդը դրան հակառակ ինչ-որ բան էր ցանկանում, Նա տալիս էր նրանց ուզածը նույնիսկ այն դեպքում, երբ դա նեղություն էր պատճառում նրանց:

Այսօր Աստված նույն կերպով է վարվում մեզ հետ: Նա կտա մեզ այն, ինչ մենք ուզում ենք, նույնիսկ եթե մեր ուզածը հակառակ է Նրա կամքին: Այնուամենայնիվ, այդպես մենք չենք ստանա այն օրհնությունը, որին ձգտում էինք. մենք կստանանք խրատ, որը ցավոտ և տհաճ կլինի:

Կարիք չկա, որ դա տեղի ունենա մեր կյանքում: Փոխարենը՝ մենք կարող ենք հավատալ, որ Աստված բարիք կանի մեզ: Հաճախ Նա արդեն որոշել է, թե ինչ ճանապարհով է տալու մեզ ճիշտ այն, ինչ մենք ցանկանում ենք, բայց՝ արդար կերպով: Եթե մենք հետևենք Նրան, Նա կառաջնորդի մեզ օրհնված ճանապարհով, բայց մեր ցանկալի արդյունքը կգա Նրա որոշած ժամանակին: Հանձնե՛ք ձեր ընթացքը Տիրոջն այսօր: Խնդրե՛ք Նրան առաջնորդել ձեզ՝ ըստ Իր ցանկությունների, այլ ոչ թե՝ ձեր: Հարցրե՛ք Նրան, թե ի՞նչ քայլեր կարող եք անել այսօր, որպեսզի ավելի սերտորեն հետևեք Նրան: Գրի՛ առեք այդ քայլերը և կատարե՛ք:

17

ՄՈԼՈՐՎԱԾ

Մեր հիմնական թեմային անդրադառնալու համար ամփոփենք կռապաշտությունը: Կռապաշտությունն այն է, երբ՝ թե՛ հավատացյալները, թե՛ անհավատները անտեսում են Աստծո ուզածը, որպեսզի բավարարեն սեփական կրքերը և ցանկությունները, որոնք հակառակ են Նրա կամքին: Ահա թե ինչու է Պողոսը գրում.

> «Որովհետև սա գիտեք, որ ոչ մի պոռնիկ, կամ պիղծ, *կամ ագահ, որ կռապաշտ է,* ժառանգություն չունի Քրիստոսի և Աստծո արքայության մեջ: Ոչ ոք թող չխաբի ձեզ դատարկ խոսքերով, որովհետև այս պատճառով էլ Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա: Ուրեմն, մասնակից մի՛ եղեք նրանց» (Եփեսացիների 5.5-7):

Աստծո զայրույթը կգա անհավատների վրա, բայց Աստված նաև խրատում է այն հավատացյալին, ով ներգրավված է կռապաշտության (ագահության) մեջ, որպեսզի վերադարձնի նրան Իր մոտ: Այնուամենայնիվ, եթե հավատացյալը համառորեն շարունակի անհնազանդ մնալ, ինչպես Բաղաամը, դա կարող է ծանր հետևանքներ ունենալ, մինչև իսկ նրա մահը: Պողոսը զգուշացնում է հավատացյալներին. «Որովհետև եթե մարմնավորապես ապրեք, կմեռնեք» (Հռոմեացիների 8.13): Հակոբոս առաքյալը զգուշացնում է մեզ. «Այնուհետև, որ ցանկությունը հղացած է, ծնվում է մեղք: Եվ մեղքն էլ, երբ որ կատարվում է, մահ է ծնում: Մի՛ խաբվեք, սիրելի՛ եղբայրներ» (Հակոբոս 1.15,16):

Կռապաշտությունը նման է դանդաղորեն սպանող թույնի: Այն հոգ-

ևոր կրիպտոնաքարն է: Մենք չենք կարող թույլ տալ մեզ սիրախաղեր անել դրա հետ: Կռապաշտության ոստայնը և՛ աննկատ է, և՛ ամուր: Մենք որոշ չափով տեսանք դրա ազդեցությունը՝ ուսումնասիրելով Բաղաամի կյանքը, բայց եկեք մեկ քայլ առաջ գնանք: Ուշադիր կարդացե՛ք Աստծո զգուշացումն Իսրայելի առաջնորդներին.

> «Տիրոջ Խոսքը եղավ ինձ՝ ասելով. «Մարդո՛ւ որդի, այս մարդիկ *կանգնեցրել են իրենց կուռքերն իրենց սրտերում* և դրել են իրենց առջև այն, ինչը դրդում է սայթաքել անօրինության մեջ: Մի՞թե Ես պետք է թույլ տամ, որ նրանք հարցնեն Ինձ»» (Եզեկիել 14.2,3, NKJV):

Եվս մեկ անգամ տեսնում ենք, որ կռապաշտությունը չի սահմանափակվում արձաններով, զոհասեղաններով և տաճարներով: Աստված նույնիսկ կասկածի նշույլ չի թողնում այս մասին՝ պնդելով, որ նրանք «կանգնեցրել են իրենց կուռքերն իրենց սրտերում», ոչ թե արձանիկներ՝ ծառերի տակ, քաղաքների կենտրոններում կամ տաճարներում: Ո՛չ, այդ կուռքերը կանգնեցվել էին նրանց սրտերում: Նրանց սրտերում կային ցանկություններ, որոնք հակառակ էին Աստծո կամքին: Աստված շարունակում է.

> «Ուստի, խոսի՛ր նրանց հետ և ասա՝ այսպես է ասում Տեր Աստված. «Յուրաքանչյուրը Իսրայելի տնից, ով կուռքեր է կանգնեցնում իր սրտում և իր առջև դնում է այն, ինչը դրդում է իրեն սայթաքել անօրինության մեջ, և գալիս է մարգարեի մոտ, Ես՝ Տերս, կպատասխանեմ այդ եկողին՝ նրա կուռքերի շատության համեմատ»» (Եզեկիել 14.4, NKJV):

Երբ կռապաշտության մեջ գտնվող մարդը (ով հարում է Աստծո կամքին հակառակ ցանկությունների) գալիս է ինչ-որ ծառայողի մոտ՝ խնդրելով առաջնորդություն, խորհուրդ կամ որևէ տեսակի աստվածաշնչյան ուսուցում, միգուցե նա պատասխան ստանա, բայց այն չի լինի ըստ Աստծո կամքի: Այդ պատասխանը նման կլինի Բաղաամի ստացած պատասխանին: *«Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը»* հետևյալ կերպով է թարգմանել այս խոսքը Եզեկիելի գրքից. «Ես՝ Տերս, հարկադրված կլինեմ պատասխանել նրա հարցին՝ հաշվի առնելով նրա կուռքերի շատությունը» (NASB):

Իսկ այժմ լսե՛ք զգուշացումը՝ ուղղված այն ծառայողին, որը խուսափում է հանդիմանել մարդկանց կռապաշտությունը, և այնպես է խոսում

նրանց հետ, ասես ամեն ինչ լավ է (Հին կտակարանում ծառայողները, մարգարեները և քահանաներն էին. այս տեսանկյունից ես համեմատում եմ նրանց մերօրյա ծառայողների հետ).

> «Բայց եթե մարգարեն տալիս է մարդուն այն պատասխանը, որը նա ցանկանում է [դրանով իսկ թույլ տալով իրեն լինել հարցնողի մեղքի (կռապաշտության) մասնակիցը], Ես՝ Տերս, այնպես կանեմ, որ այդ մարգարեն խաբված լինի իր պատասխանի մեջ» (Եզեկիել 14.9, AMPC):

Ես լաց էի լինում և մեծ տրտմություն էի ապրում աղոթքի մեջ՝ մտորելով այն ուսմունքների շուրջ, որոնք քարոզում են ժամանակակից ծառայությունները, հատկապես՝ Արևմուտքում: Ես աղաղակում էի, որ պատասխան ստանայի այն մասին, թե որն է այսօրվա գրվող և քարոզվող ավետարանական ուղերձների անզորության պատճառը: Ի պատասխան, Աստծո Հոգին առաջնորդեց ինձ դեպի Եզեկիելի գրքի 13-րդ և 14-րդ գլուխները: Այս գլուխները ցույց են տալիս, թե ինչ է գտնվում այսօրվա ջրիկացված ուսմունքների ետևում, որոնք չեն հանդիմանում շարունակական մեղքը. խոսքը *կռապաշտության* մասին է: Եթե ծառայողը ոչ լիարժեք Ավետարան է քարոզում, քանի որ չի ցանկանում կորցնել իր հետևորդներին կամ իր համբավը, դա ոչ այլ ինչ է, քան քողարկված ագահություն: Ահա թե ինչու այն ժամանակ, երբ կեղծավորությամբ լի ծառայությունն աճում էր, Երեմիան բացականչում էր.

> «Որովհետև նրանց ամենափոքրից մինչև ամենամեծը՝ բոլորը տրված են ագահությանը: Մարգարեները, քահանաները և նրանց միջև գտնվող յուրաքանչյուր մարդ աղավաղում են բառերը և կեղծում ճշմարտությունը» (Երեմիա 6.13, առաջին նախադասությունը՝ NKJV, երկրորդ նախադասությունը՝ MSG):

Ես սկսեցի նկատել ակնհայտ հոգևոր անզորության կամ կրիպտոնաքարի ավելի խորը ազդեցությունը գրեթե ամբողջ ժամանակակից եկեղեցում: Ես տեսա դժգոհություն շատերի կյանքում, ովքեր դավանում են, որ հավատացյալ են, և այդպիսի սրտի վիճակից առաջանում է պահանջ այն ամենի հանդեպ, ինչը «չկա իրենց կյանքում» (հիմնականում խոսքը ոչ թե հանապազօրյա կարիքների մասին է, այլ՝ ցանկությունների և ձգտումների):

Մոլորված առաջնորդները, որոնք նույնպես շեղվել են ցանկասի-

ությամբ, քարոզել են այնպիսի հատվածներ Աստծո Խոսքից, որոնք, թվում է, անտեսում են մեղավոր կենսառճը և հավանություն են տալիս դրան: Միևնույն ժամանակ, նրանք հարմարավետ կերպով շրջանցում են այն սուրբգրային հատվածները, որոնք հանդիմանում են անբարո վարքը: Այս կռապաշտության պատճառով, թե՛ ծառայողները, թե՛ հավատացյալները լսում են այնպիսի ուղերձներ և խորհուրդներ, որոնք անմիջապես ուղղված են իրենց ձգտումներին և կրքերին: Դրանք ավելի ուժգին են դարձնում իրենց ցանկությունները կամ զորացնում են իրենց կուռքերին:

Նոր կտակարանում Պողոսը, Երեմիայի և Եզեկիելի պես մարգարեանում է ապագայի մասին.

> «Որովհետև ժամանակ է գալիս, երբ մարդիկ այլևս չեն լսի առողջ և ողջամիտ ուսմունքը: Նրանք կհետևեն *իրենց ցանկություններին* և կփնտրեն այնպիսի ուսուցիչների, որոնք կասեն նրանց այն, ինչ իրենց ցանկասիրությանը սովոր ականջներն ուզում են լսել» (Բ Տիմոթեոս 4.3, NLT):

Բարի գալո՛ւստ այդ ժամանակաշրջան: Այսօր, իրենց ուզածը լսելու համար, մարդիկ ընդամենը պետք է գտնեն այնպիսի «ծառայողների», որոնք նույնպես տարված են ցանկասիրությամբ:

Այնուամենայնիվ, աստվածապաշտ և աստվածավախ առաջնորդը ոչ մի դեպքում չի խոտորվի Աստծո Խոսքի խորհրդից: Նա հավատարիմ է Աստվածաշնչի ամբողջ ուղերձին, ոչ թե առանձին հատվածների: Նա չի վախենում շտկելուց և հանդիմանելուց, ինչպես նաև՝ խրախուսելուց:

Այն ծառայողները, որոնց մասին խոսում է Պողոսը, մտահոգված են իրենց համբավով, արտաքինով, իրենց ծառայության աճով և ծրագրերով: Նրանց կարելի է համոզել մեծ նպատակներով կամ վարձատրությամբ, և նրանք կքարոզեն ու կսովորեցնեն՝ համաձայն իրենց ունկնդիրների ցանկությունների, փոխարենը՝ ազդարարեն Աստծո Խոսքը, անկախ այն բանից՝ կընդունվի՞, թե՞ ոչ:

Միայն մեկ ծառայող ազդարարեց ճշմարտությունը

Հուդայի թագավոր Հովսափատը դաշինք կնքեց Իսրայելի Աքաբ թագավորի հետ՝ իրենց երեխաների ամուսնության միջոցով: Սա ճիշտ քայլ չէր Հովսափատի կողմից, քանի որ նա աստվածավախ մարդ էր,

իսկ Աքաբը կռապաշտ էր: Որոշ ժամանակ անց Հովսափատը գնաց Սամարիա՝ Իսրայելի թագավորին տեսակցելու:

Աքաբը խնդրեց Հովսափատին ժողովել Հուդան և Իսրայելի հետ պատերազմի գնալ Ասորեստանի դեմ: Հովսափատը պատասխանեց. «Այո՛, իհա՛րկե: Դու և ես եղբայրներ ենք, և իմ զորքերը քո հրամանատարության ներքո են: Մենք անպայման կմիանանք քեզ կռվի մեջ»: Սակայն Հովսափատն ավելացրեց. «Բայց, նախ, ե՛կ պարզենք, թե ինչ է Տերն ասում» (տե՛ս Բ Մնաց. 18 գլուխ):

Աքաբ թագավորը ժողովեց Իսրայելի չորս հարյուր ամենաակնառու ծառայողներին և հոգևոր առաջնորդներին: Այդ մարդիկ Բահաղի, Աստարովթի, Քամովսի կամ այլ կեղծ աստվածների ծառայողները չէին, այլ՝ Տեր Աստծո (նրանք խոսում էին *Յահվեհի* անունով): Աքաբը հարցրեց նրանց՝ արդյո՞ք նա պետք է պատերազմի գնար, թե՞ ետ մնար այդ մտադրությունից:

Բոլոր ծառայողները միաձայն ասացին. «Այո՛, գնա՛ և մի՛ վարանիր: Աստված հաղթանակ կտա թագավորին» (Բ Մնացորդաց 18.5, NLT): Այդ առաջնորդներին սովորեցրել էին խոսել միայն դրական և խրախուսող ուղերձներ իրենց ունկնդիրներին, հատկապես՝ ազդեցիկ մարդկանց: Թեև նրանք Յահվեհի ծառայողներ էին, սակայն տրված էին ագահությանը. նրանք կռապաշտ էին:

Թեև այդ ծառայողները բարձր հեղինակություն ունեին Իսրայելում, և նրանց ուղերձները տպավորիչ էին, Հովսափատը գոհ չմնաց նրանց խորհրդից: Շնորհիվ Աստծո երկյուղի՝ նա տարբերում էր ճշմարտությունը: Նա հարցրեց. «Այստեղ չկա՞ Տիրոջ մեկ այլ մարգարե, որ մենք հարցնենք Նրան» (խոսք 6, NKJV): Նա գիտեր, որ խոսողները *Յահվեհի* մարգարեներն էին, բայց ինչ-որ բան սխալ էր:

Աքաբը պատասխանեց. «Կա ևս մեկ մարդ, որը կարող է հարցնել Տիրոջ խորհուրդը մեզ համար, բայց ես ատում եմ նրան: Նա երբեք ոչինչ չի մարգարեանում ինձ համար՝ չարիքից բացի: Նրա անունը Միքիա է» (խոսք 7, NLT): Կռապաշտ մարդը կամ շողոքորթությանը ընտելացած հավատացյալների համայնքը հաճախ բացասական և վիատեցնող է համարում Ավետարանի ճշմարիտ ծառայողին:

Միքիան տարբերվում էր մյուսներից, քանի որ նա չէր ցանկանում բազմաթիվ հետևորդներ ունենալ կամ որևէ բան ստանալ Աքաբից: Նա վախենում էր Տիրոջից ավելի, քան մարդկանցից, և ձգտում էր Աստծո հավանությանն ավելի, քան հաջողությանը: Նա գիտեր, որ իր աղբյուրը *Յահվեհն* էր, և որ ավելի լավ է ինքը հաճեցներ Նրան, քան մի թագավորի, որը գտնվում էր կրիպտոնաքարի ազդեցության ներքո: Այդ դիր-

քորոշման շնորհիվ նա զերծ և ազատ էր մնացել այն խաբեությունից, որի ներքո գտնվում էին մյուս ծառայողները:

Աքաբը հանձնարարեց բերել Միքիային: Մինչ նրանք սպասում էին Աստծո Ճշմարիտ ծառայողին, մյուս ծառայողները շարունակում էին մարգարեանալ երկու թագավորների առջև: Նրանցից մեկը՝ Սեդեկիա անունով, ով Բենիամինի ցեղից էր, երկաթից եղջյուրներ էր պատրաստել իր համար և ասում էր. «Այսպես է ասում Տերը *(Յահվեհը)*. սրանցով կիրես Ասորիներին, մինչև որ նրանց բնաջինջ անես» (խոսք 10):

Դրանից հետո բոլոր ծառայողները միասնաբար ասացին թագավորին. «Գնա՛ Ռամովթ-Գաղաադ և կհաջողվես, և Տերը *(Յահվեհը)* կտա [հաղթանակ] թագավորի ձեռքը» (խոսք 11): Առաջնորդների բազմության մեջ ապահովություն կա, այնպես չէ՞: Այն փաստը, որ բոլոր ուղերձները միանման էին և հաստատում էին մեկը մյուսին, իրականում խրախուսելի էր և ապահովություն էր ներշնչում: Այո՛, դրանք հաստատում էին Աքաբի սրտի ցանկությունները և անմիջապես ուղղված էին նրա շահամոլությանը կամ կռապաշտությանը:

Մինչ բոլոր ծառայողները միաձայն խորհուրդ էին տալիս թագավորին, սուրհանդակը գտավ Միքիային և ասաց. «Ահա՛ մարգարեները միաբերան բարի են խոսում թագավորի համար, ուրեմն թող քո խոսքն էլ նրանցից մեկի պես լինի, և բարի՛ խոսիր» (Բ Մնացորդաց 18.12):

Ես լսել եմ նման խոսքեր, երբ ինձ հրավիրել են մի քանի հայտնի եկեղեցիներ. «Ձո՛ն, խրախուսի՛ր մարդկանց: Քարոզիր դրակա՛ն ուղերձներ: Կառուցի՛ր նրանց անձը և մխիթարի՛ր նրանց: Մենք կավարտենք հավաքույթը ռիթմիկ երգով, այնպես որ, կարո՞ղ ես բարձր նոտայով ավարտել քո ուղերձը: Մենք ուզում ենք, որ նրանք տուն գնան դրական զգացողությամբ»: Ասես թե հասարակ սուրհանդակն իրավունք ունի փոխելու Թագավորի ուղերձը: Եթե մենք փոխենք այն, այլևս Աստծո խոսքերն ազդարարող դեսպաններ չենք լինի, այլ՝ հասարակ մարդիկ, որոնք օգտագործում են Նոր կտակարանում գտնվող Նրա դրական խոսքերը՝ մեր ցանկալի արդյունքը ստանալու համար:

Միքիայի պատասխանը խիստ էր, քանի որ նրան անկարելի էր շահել կեղծավորությամբ. «Կենդանի է Տերը, որ իմ Աստվածն ինչ որ ինձ ասի, այն եմ խոսելու» (խոսք 13):

Հա՛յր, ուղարկի՛ր մեզ առաջնորդներ, որոնք այսօր կվարվեն նույն կերպով:

Երբ Միքիան կանգնեց Աքաբի առջև, նրան տրվեց միևնույն հարցը, որին արդեն պատասխանել էին բազմաթիվ այլ ծառայողներ: «Միքիան հեգնանքով պատասխանեց. «Այո՛, գնա և կհաղթես, որովհետև դու

պարտության կմատնես նրանց» (խոսք 14, NLT):

Միքիայի ծաղրը բարկացրեց Աքաբին: Դրանից հետո Միքիան ասաց Աստծո Խոսքն այդ իրավիճակի համար. «Ես տեսա ամբողջ Իսրայելը՝ ցրված սարերի վրա իբրև ոչխարներ, որ հովիվ չունեն, և Տերն ասաց. «Սրանք տեր չունեն. ամեն մարդ իր տունը դառնա խաղաղությամբ»» (խոսք 16):

Աքաբը նայեց Հովսափատին՝ ասելով. «Քեզ չասացի՞, որ ինձ համար բարի բան չի մարգարեանա, այլ՝ չար» (խոսք 17):

Միքիան շարունակեց՝ ասելով Աքաբին, թե ինչ էր իրականում տեղի ունենում, և թե ինչ էր կատարվելու.

«Ուրեմն, լսե՛ք Տիրոջ Խոսքը. ես տեսա Տիրոջը՝ նստած Իր աթոռի վրա, և Երկնքի բոլոր զորքերը՝ կանգնած Նրա աջ և ձախ կողմերը: Եվ Տերն ասաց. «Ո՞վ կխաբի Իսրայելի Աքաբ թագավորին, որ վեր գնա Ռամովթ-Գաղաադի վրա և կորչի»: Եվ մեկն այսպես էր ասում, և մյուսն այնպես էր ասում: Եվ մի ոգի դուրս եկավ, կանգնեց Տիրոջ առջև և ասաց. «Ես նրան կխաբեմ»: Եվ Տերը նրան ասաց. «Ինչո՞վ»: Նա էլ ասաց. «Ես դուրս կգնամ և նրա բոլոր մարգարեների բերանում սուտ ոգի կլինեմ»: Եվ Տերն ասաց. «Դու կխաբես և կարող էլ ես. գնա՛ և այդպե՛ս արա»: Եվ արդ, Տերը սուտ ոգի է դրել քո այդ մարգարեների բերանում, բայց Տերը քեզ համար չարիք է խոսել» (խոսքեր 18-22):

Աստված պատասխանեց Աքաբին՝ ըստ նրա սրտի կռապաշտության (ագահության): Այս հատվածը պատկերում է այն ճշմարտությունը, որի մասին գրում է Եզեկիելը: Աստված խոսեց՝ համաձայն Բաղաամի սրտի կռապաշտության, ինչպես մենք կարդացինք նախորդ գլխում, և համաձայն Աքաբի սրտի կռապաշտության՝ այս գլխում: Դրա հետ մեկտեղ, Նա վարվեց նույն կերպով այն մարդկանց հետ, որոնք փոխանցում էին այդ ուղերձը:

Աքաբն ընդունեց այն ուղերձը, որն ուզում էր լսել, սակայն մերժեց Աստծո ճշմարիտ խոսքերը, որոնք կպաշտպանեին և կփրկեին իրեն: Աքաբը կռվի գնաց: Թեև նա որոշեց ապահովել իր անվտանգությունը և ծպտված գնաց, որպեսզի ասորիները չճանաչեին իրեն, նրան պատահական մի նետ դիպավ, և նա մահացավ մինչև օրվա ավարտը: Կարելի է թաքնվել մարդուց, սակայն անհնար է թաքնվել Աստծուց:

Իսկ ի՞նչ է կատարվում այսօր: Մենք ուզո՞ւմ ենք ստանալ Աստծո խոստացած պաշտպանությունը, մատակարարումը և փրկությունը, թե՞ ուզում ենք, որ մեզ շողոքորթեն: Մենք ուզո՞ւմ ենք լսել «խաղաղությո՛ւն», այն դեպքում, երբ մեր խաբեությունը կարող է մեծ խնդիրներ առաջացնել մեր կյանքում:

Մտածենք այս մասին Աստվածաշնչի լույսի ներքո: Ի՞նչն է գերադասելի՝ տևական պաշտպանությո՞ւնը՝ Աստծո Խոսքի ամբողջական խորհրդին հնազանդվելու դեպքում, թե՞ կարճատև մակերեսային օրինությունը՝ մոտալուտ խրատի կամ դատաստանի հետ:

գործնական քայլ

Ովքեր դավանում են, որ քրիստոնյա են, ուզում են լսել միայն դրական քարոզներ: Ագահության և մարդուց երկյուղ ունենալու պատճառով շատ ծառայողներ պատրաստ են քարոզել այնպիսի ուղերձներ, որոնք միայն խրախուսում են իրենց հետևորդներին: Նրանց բոլոր ուղերձները հրաշալի են թվում, սակայն թերի են: Ի վերջո, դրանք անցանկալի արդյունք կունենան թե՛ այդ ուսուցիչների, թե՛ նրանց հետևորդների համար:

Մենք պետք է լսենք ճշմարտությունը, նույնիսկ եթե սկզբում այն ցավ պատճառի մեզ: Որքան էլ ցավոտ լինի ճշմարտությունը լսելը, դա անհամեմատ ավելի լավ է այն նեղությունից, որում կհայտնվենք, եթե ապրենք խաբեության մեջ:

Դուք կարող եք ճշմարտությանը ձգտող մարդ լինել:

Խնդրե՛ք Աստծուն հայտնել Իր ճշմարտությունը ձեր կյանքի մասին. խնդրե՛ք Նրան հայտնել այն բնագավառները, որոնցում դուք անգիտակցաբար խաբված եք: Գրի՛ առեք այն ճշմարտությունները, որոնք Նա հայտնում է ձեզ, որպեսզի կարողանաք մտորել դրանց շուրջ հաջորդ օրերի կամ շաբաթների ընթացքում: Դրանից հետո, խնդրե՛ք Աստծուն զորացնել ձեզ, որ կարողանաք ասել ճշմարտությունը, նույնիսկ եթե այն ընդունված կամ «քաղաքականապես ճիշտ» չէ: Կարիք չկա, որ կռվի բռնվեք մարդկանց հետ, բայց դուք կարող եք ասել Միքիայի պես. «Կենդանի է Տերը, որ իմ Աստված ինչ որ ինձ ասի, այն եմ խոսելու»:

ՄԵՆՔ ԿԱՆՉՎԱԾ ԵՆՔ՝
ԼԻՆԵԼՈՒ ԱՅՍ
ՍԵՐՆԴԻ ԻՐԱԿԱՆ
ՍՈՒՊԵՐՀԵՐՈՍՆԵՐԸ:

ԱՍՏՑՈ ԾՆՈՐՀՔԸ
ՍՏԱՆԱԼՈՒ ԱՊԱՑՈՒՅՑԸ
ՄԵՐ ՆԵՐՔԻՆ
ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է:

ՄԵՆՔ ԿԱՆՉՎԱԾ ԵՆՔ, ՈՐ *ԱՀԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԹՈՂՆԵՆՔ* ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ... ՈՉ ԹԵ *ԿՐԵՆՔ* ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ *ԱՀԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ:*



ԱՍՏՎԱԾ ՍԻՐՈՒՄ Է ՄԵՁ ԱՅՆՊԻՍԻՆ, ԻՆՉՊԻՍԻՆ ՈՐ ՄԵՆՔ ԿԱՆՔ, ԲԱՅՑ ԴԱ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ, ՈՐ ՆԱ ԹՈՂՆԵԼՈՒ Է ՄԵՁ ԱՅԴ ՎԻՃԱԿՈՒՄ:

ՃԻՇՏ ՀԱԿԱՌԱԿԸ...

ՆԱ ՁՈՐԱՑՆՈՒՄ Է ՄԵԶ ԻՐ ՇՆՈՐՀՔՈՎ՝ ՍՈՒՐԲ ԿՅԱՆՔՈՎ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՄԵՐ ԱՐՏԱՍՈՎՈՐ
ԱՍՏԾՈ ՁԱՎԱԿՆԵՐԸ
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՉԵՆ:

Իմացե՛ք ավելին CloudLibrary.org կայքում:

18

ԿԵՂԾՎԱԾ ՀԻՍՈՒՍ

Միգուցե մտածեք. *«Կեղծված Հիսո՞ւս... ի՞նչ է սա նշանակում»:* Այս գլուխը նկարագրում է այն աննկատ երևույթը, որը կռապաշտության է տանում հավատացյալներին: Մենք կբացահայտենք առեղծվածն այն մասին, թե ինչու են շատերը ժամանակակից քրիստոնեության մեջ հեշտորեն զոհ դառնում հոգևոր կրիպտոնաքարին, որը խլում է մեր ուժերը՝ որպես եկեղեցի և որպես անհատներ:

Ինձ մոտ բերեցի

Ինչպես արդեն նշեցի, Իսրայելի ելքը Եգիպտոսից խորհրդանշում է մեր փրկությունը՝ մեր ելքն այս աշխարհից: Մովսեսն առաջնորդեց իսրայելցիներին Սինա սարը, որտեղ նա հանդիպել էր Աստծուն՝ վառվող մորենու մոտ: Մովսեսն ուզում էր, որ իր ժողովուրդն էլ նմանատիպ հանդիպում ունենար: Ինչո՞ւ նա պետք է ուզեր անմիջապես առաջնորդել նրանց Խոստման երկիր, նախքան Խոստումը տվողի հետ ծանոթացնելը: Գրված է, որ Սինա հասնելուն պես՝

> «Մովսեսը վեր գնաց Աստծո մոտ: Եվ Տերը կանչեց նրան սարից և ասաց՝ այսպես ասա Հակոբի տանը և իմացրու Իսրայելի որդիներին. «Դուք տեսաք՝ ինչ որ արեցի եգիպտացիներին, և ձեզ արծվի թևերի վրա տարա և *Ինձ մոտ բերեցի»»* (Ելից 19.3,4):

Կարդացե՛ք Նրա խոսքերը. «Ինձ մոտ բերեցի»: Այս պնդումը ցույց

է տալիս, թե որն էր մեզ այս աշխարհից փրկելու Աստծո դրդապատճառը: Նա ձգտում է ձեզ, Նա փափագում է հաղորդակցվել ձեզ հետ, և Նա ցանկանում է շփվել ձեզ հետ, ինչպես հայրը՝ զավակի:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե որքա՜ն ոգեշնչված էր Աստված, երբ պատրաստվում էր հանդիպել այդ ժողովրդին, որը չորս հարյուր տարի գերության մեջ էր: Հիշում եմ, երբ Լիզան հղի էր մեր չորս որդիներից ամեն մեկով, ես անհամբեր սպասում էի նրանց ծննդյանը: Սպասում էի ինը երկար ամիսներ: Ես ուզում էի գրկել նրանց, տեսնել, թե ինչպես են մեծանում, լսել նրանց ձայնը, ճանաչել նրանց որպես անհատի և շփվել նրանց հետ, ինչպես հայրը՝ զավակի: Այլ կերպ ասած՝ ես փափագում էի նրանց:

Աստծո վերաբերմունքը ճիշտ այդպիսին էր. միակ բացառությունն այն է, որ Նա ինը ամսից ավելի երկար էր սպասել:

Ժողովուրդը պետք է որոշ պատրաստություններ տեսներ, որպեսզի այդ հանդիպումը տեղի ունենար: Աստված ասաց. «Գնա՛ ժողովրդի մոտ և սրբի՛ր նրանց այսօր և վաղը, և թող իրենց հանդերձները լվանան: Եվ երրորդ օրվա համար պատրաստ լինեն, որովհետև երրորդ օրը Տերը ամբողջ ժողովրդի աչքի առջև Սինա սարի վրա պիտի իջնի» (Ելից 19.10,11):

Տերն ասում էր Իր ժողովրդին. «Ես փափագում եմ ձեզ, բայց իրական հանդիպման համար դուք պետք է մաքրեք Եգիպտոսի պղծությունը ձեր հանդերձներից: Ես ձեր Հայրն եմ, բայց նույնպես սուրբ Աստված եմ, և չեմ ցանկանում մակերեսային հարաբերություններ ունենալ ձեզ հետ»:

Անկարելի է ունենալ խորը և իմաստալից հարաբերություններ եսասեր մարդկանց հետ: Աստված լիովին տվել է մեզ Իր Անձը. Նա չի հանդուրժի, որ մենք վարվենք այս աշխարհի պես, այսինքն՝ օգտագործենք մարդկանց, որպեսզի բավարարենք մեր ցանկությունները կամ գոհացնենք մեր անձը:

Անցավ երկու օր, և երրորդ օրն առավոտյան Տերը իջավ Սինա սարի վրա՝ ժողովրդի մոտ: Երբ դա տեղի ունեցավ, մարդիկ ընկրկեցին և սկսեցին դողալ սարսափից: Նրանք ասացին Մովսեսին. «Դո՛ւ խոսիր մեզ հետ, և մենք կլսենք: Բայց Աստված թող չխոսի մեզ հետ, որ չմեռնենք» (Ելից 20.19):

Մովսեսը ցնցված էր. ինչպե՞ս նրանք կարող էին հեռանալ Նրանից, Ով փրկել էր իրենց և ազատել ստրկությունից: Մի՞թե նրանք չէին ուզում լսել իրենց Արարչի ձայնը: Իսկ կարո՞ղ եք պատկերացնել Աստծո հիասթափությունը: Նա փափագում էր այդ պահին: Նա ցանկանում էր ճանաչել նրանց այնպես, ինչպես Մովսեսին: Բայց նրանք մերժեցին Նրա ներկայությունը:

Չեմ պատկերացնում, թե ինչպես կզգայի ինձ, եթե իմ որդիներից մեկն ասեր. «Հայրի՛կ, չեմ ուզում, որ խոսես անմիջապես ինձ հետ: Ես միայն ուզում եմ լսել քո ասածն իմ եղբայրներից մեկի միջոցով»: Որքա՜ն հուսահատեցնող դա կլիներ:

Քահանայության հիմնադրումը

Աստված որոշեց քահանայություն հիմնադրել, քանի որ ժողովուրդը չէր ցանկանում հաղորդակցվել անմիջապես Իր հետ: Քահանան այն մարդն է, ով խոսում է Աստծո հետ ժողովրդի անունից: Հրեաներն արդեն ունեին Մովսես մարգարեին, ով խոսում էր ժողովրդի հետ Աստծո անունից: Այնուամենայնիվ, Աստված ստիպված էր նաև քահանայություն հիմնադրել՝ որպես ժողովրդի հետ շարունակական հաղորդակցման տարբերակ:

«Դրանից հետո Աստված ասաց. «Գնա՛, վա՛յր իջիր և Ահարոնի հետ մեկտեղ ելիր»» (Ելից 19.24): Ահարոնը դառնալու էր Նրա քահանայապետը, սակայն Աստծո սկզբնական ծրագիրն այդպիսին չէր: Սկզբում Նա ուզում էր, որ բոլորը քահանաներ լինեին: Երբ ժողովուրդը հասավ Սինա սարը, Նա ասաց. ««Եվ դուք Ինձ համար քահանաների թագավորություն և սուրբ ազգ կլինեք»: Սրանք են այն խոսքերը, որ Իսրայելի որդիներին պետք է ասես» (Ելից 19.6): Նա կամենում էր, որ յուրաքանչյուրը Իսրայելում կարողանար հաղորդակցվել Իր հետ:

Աստված կարգադրեց Մովսեսին սարը բարձրանալ Ահարոնի հետ, սակայն մենք չենք տեսնում որևէ հիշատակում այն մասին, որ Ահարոնը հետևեց այդ կանչին: Ինչ-ինչ պատճառներով, նա կրկին վերադարձավ բանակատեղին՝ ժողովրդի մոտ, իսկ Մովսեսը մնաց սարի վրա քառասուն օր ու գիշեր: Ինչո՞ւ Ահարոնը չգնաց: Մի՞թե նա ավելի մեծ մխիթարություն էր գտնում մարդկանց ներկայության մեջ, քան՝ Աստծո: Մի՞թե նա վախենում էր Աստծո հետ մենակ լինելուց: Մենք չգիտենք պատասխանը, բայց գիտենք, որ այն, ինչ Ահարոնն անելու էր, պարզապես անհեթեթություն էր:

Կեղծված Յահվեհ

> «Եվ ժողովուրդը տեսավ, որ Մովսեսն ուշացավ սարից իջնելուց, և Ահարոնի մոտ ժողովվեց ժողովուրդը» (Ելից 32.1):

Ի՞նչ էր տեղի ունենում: Առաջին հերթին, մարդիկ ուզում էին կատա-

րել իրենց ցանկությունները, և նրանք փնտրում էին Աստծո ծառայողի, որը կտար իրենց այդ հնարավորությունը: Երկրորդը՝ Ահարոնն առաջնորդի պարգև ուներ, իսկ այդ պարգևը գրավում է մարդկանց: Սա կարևոր դիտարկում է, քանի որ մարդկանց հրապուրում է ուժեղ առաջնորդը, անկախ այն բանից՝ նա հնազա՞նդ է Տիրոջը, թե՞ ոչ: Այն, որ առաջնորդը մեծ թվով հետևորդներ ունի, միշտ չէ, որ նշանակում է, որ նա հետևում է Աստծուն: Լսե՛ք, թե ինչ ասաց ժողովուրդը Ահարոնին.

> «Վե՛ր կաց, մեզ համար աստվածներ շինի՛ր, որ մեր առջև գնան, որովհետև այդ Մովսես մարդը, որ մեզ Եգիպտոսի երկրից հանեց, չգիտենք, թե ինչ եղավ նրան» (Ելից 32.1):

Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ ժողովուրդը չասաց. «Որովհետև չգիտենք, թե ինչ եղավ Աստծո հետ»: Սա շատ կարևոր է, և քիչ անց ես կանդրադառնամ այս մտքին:

Երկրորդը՝ ուշադրություն դարձրեք, որ նրանք ասացին. «Մեզ համար աստվածներ շինի՛ր»: Եբրայերենում *«աստվածներ»* բառը *«էլոհիմ»*-ն է: Հին կտակարանում այս բառն օգտագործվում է ավելի քան 2.600 անգամ և ավելի քան 2.250 անգամ այն վերաբերում է Ամենակարող Աստծուն: Օրինակ՝ միայն Ծննդոց գրքի առաջին գլխում այն գրված է 32 անգամ: Աստվածաշնչի առաջին խոսքում գրված է. «Սկզբում էլոհիմը ստեղծեց երկինքը և երկիրը»:

Եվս մեկ օրինակ է Երկրորդ Օրինաց 13.4-ը. «Ձեր Տեր *(Յահվեհ)* Աստծուն *(էլոհիմ)* հետևե՛ք և Նրանից վախեցե՛ք, Նրա պատվիրանները պահե՛ք և Նրա ձայնը լսե՛ք, Նրան պաշտե՛ք և Նրան հարե՛ք»: Դուք կարող եք տեսնել, որ այս հատվածում գրված է Տիրոջ անունը՝ *«Յահվեհ»,* իսկ հետո Նա կոչվում է մեր *(էլոհիմը):* Նա Աստված է՝ բացարձակ իշխանությունը և ամեն ինչի սկզբնաղբյուրը:

Այնուամենայնիվ, Հին կտակարանում էլոհիմ բառն օգտագործվում է մոտավորապես 250 անգամ՝ կեղծ աստվածների նկարագրելու համար, օրինակ՝ Դագոնին (Ա Թագավորաց 5.7) և Բահաղին (Գ Թագավորաց 18.21): Այնպես որ, կարդալով այս բառը՝ մշտապես պետք է դիտարկենք այն համատեքստով, որպեսզի հասկանանք, թե ում է այն վերաբերում:

Ահարոնն արձագանքեց մարդկանց խնդրանքին՝ պահանջելով նրանց ոսկե ականջօղերը: Նա հալեցրեց ամբողջ ոսկին և ձուլեց տխրահռչակ հորթը: Հենց որ այն պատրաստ էր, մարդիկ ասացին. «Սրանք են քո աստվածները, ո՛վ Իսրայել, որ քեզ Եգիպտոսի երկրից

հանեցին» (Ելից 32.4): Եբրայերենում կրկին օգտագործված է *«էլոհիմ»* բառը: Այնուամենայնիվ, նրանց բառերից սկսում ենք հասկանալ, թե ում մասին են նրանք խոսում. «Որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցին»: Նրանք գիտեին, թե ո՛վ հանեց իրենց Եգիպտոսի երկրից. նրանք հիմար չէին: Մեր կանխազգացումը հաստատվում է անմիջապես հաջորդ խոսքում.

> «Եվ Ահարոնը, տեսնելով, նրա առջև սեղան շինեց: Եվ Ահարոնը կանչել տվեց՝ ասելով. «Վաղը տոն է Տիրոջ համար»» (Ելից 32.5):

«Տեր» բառն այս խոսքում *«Յահվեհ»* բառն է: *«Աստվածաշնչյան բառերի ուսումնասիրության ամբողջական բառարանն»* այսպես է սահմանում այն.

«Այս բառը նշանակում է Իսրայելի Աստծո ճշգրիտ անունը՝ այն անունը, որով Նա հայտնեց Իրեն Մովսեսին (Ելից 6.2,3): Այս աստվածային անունն ավանդաբար չէր արտասանվում, հիմնականում՝ ելնելով հարգանքից դրա սրբության հանդեպ: Մինչև Վերածննդի ժամանակաշրջանը, այն գրվում էր Հին կտակարանի եբրայերեն տեքստում առանց ձայնավորների՝ որպես *«ՅՀՎՀ»*»:

Ոչ մի տեղ ամբողջ Աստվածաշնչում այս բառը չի օգտագործվել որևէ կեղծ աստծո անվանելու համար՝ այս խոսքից բացի: Ինքնին հասկանալի է, թե ինչ էր կատարվում: Գրեթե կասկած չկա, որ Ահարոնը և ժողովուրդը կանգնեցին անմիջապես այդ հորթի առջև և անվանեցին այն *Յահվեհ:* Նրանք չանվանեցին այն Բահաղ, Դագոն, Աստարովթ, Ռա, Նեփթիս և չտվեցին այլ եգիպտական աստծո անուն: Նրանք չասացին. «Ահա՛ Ռան, որն ազատեց մեզ Եգիպտոսից»:

Հիշեք, թե ինչ ասացին. «Մենք չգիտենք, թե ինչ եղավ Մովսեսի հետ»: Նրանք չասացին. «Մենք չգիտենք, թե ինչ եղավ Աստծո հետ»: Նրանք չէին ժխտում, որ *Յահվեհը* գոյություն ուներ, և որ Նա ներգրավված էր իրենց կյանքում: Նրանք ընդունում էին, որ *Եհովան* կամ *Յահվեհն* էր փրկել իրենց, ազատել իրենց, բժշկել իրենց և մատակարարել իրենց: Նրանք պարզապես փոխել էին *Յահվեհի* ճշմարիտ պատկերը վերահսկելի պատկերի հետ, որը կտար իրենց այն, ինչ իրենք ցանկանում էին:

Ահա այս երևույթի մի ժամանակակից օրինակ: Լիզան և ես շատ ենք ճանապարհորդում: Մեր ծառայությունը՝ «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ը, բաղկացած է հրաշալի թիմից: Այն, ինչ գրելու եմ ձեզ, ենթադրական

է, քանի որ մեր թիմի անդամները երբեք նման բան չէին անի: Որպես ծառայության ղեկավարներ՝ Լիզան և ես մշտապես շեշտադրում ենք մի շարք աշխատանքային և մշակութային սկզբունքներ, քանի որ դրանք կարևոր են մեզ համար: Դրանցից մի քանիսը հետևյալն է: Մենք խնդրում ենք մեր թիմի անդամներից ինը ժամյա արդյունավետություն՝ ութ ժամվա ընթացքում: Մենք ցանկանում ենք ունենալ ուրախ աշխատանքային մթնոլորտ, կատարել ամեն ինչ գերազանց, սիրել և ծառայել յուրաքանչյուր մարդու, գործընկերոջ կամ եկեղեցական առաջնորդի, որը կապ է հաստատում մեզ հետ, կատարել որոշակի ծավալի աշխատանք՝ ամեն օրվա և շաբաթվա ընթացքում, և շատ այլ բաներ: Մեր գլխավոր գործառնական տնօրենը, որին կկոչեմ Տիմ հորինված անունով, պատասխանատու է մեր կողմից պահանջվող աշխատանքային և մշակութային չափանիշների պահպանման համար:

Պատկերացրեք, որ Լիզան և ես ճանապարհորդում ենք, և բացի այդ՝ մեր գլխավոր գործառնական տնօրենը նույնպես ճանապարհորդում է: Հաջորդ պատասխանատու անձը մեր գլխավոր ֆինանսական տնօրենն է՝ Զորդանը (անունը նույնպես հորինված է): Տիմի հեռանալուց անմիջապես հետո Զորդանը հայտարարում է ամբողջ թիմին. «Լսե՛ք, Զոնը և Լիզան ուզում են, որ մենք ուրախ մթնոլորտ ունենանք: Եկե՛ք երաժշտավար վարձենք և վերածենք աշխատավայրը պարասրահի՝ ծխով և լույսերով, և մի քանի օր շարունակ երեկույթներ անցկացնենք:

Այդ երեկույթների ամբողջ ընթացքում մեր թիմը «դավանում» է, որ անում է ճիշտ այն, ինչ մենք խնդրել ենք իրենցից: Նրանք շարունակ վկայակոչում են մեզ՝ ասելով. «Սա Զոնի և Լիզայի ցանկությունն է: Նրանք ուզում են, որ մենք ուրախ մթնոլորտ ունենանք»: Իսկ թիմի անդամներից մեկը բացականչում է. «Լսե՛ք, ես հենց հիմա խոսում եմ Զոնի հետ հեռախոսով: Ես պատմեցի նրան մեր երեկույթի մասին, և նա գովեց մեզ»: Հավանաբար, նա ստում է, քանի որ, եթե ես զանգահարեի և իմանայի, որ նման բան էր տեղի ունենում, շատ կբարկանայի իմ թիմի վրա:

Պատկերացրեք, որ մեր գլխավոր գործառնական տնօրենը վերադառնում է գրասենյակ ավելի շուտ, քան Լիզան և ես: Եթե այդպես լիներ, նա նույնպես շատ կբարկանար: Նա կանջատեր երաժշտությունը, ետ կուղարկեր լույսերը և ծխի մեքենան ու մի լավ կնախատեր նրանց. «Սա այն չէ, ինչ ուզում են Զոնը և Լիզան: Դուք սխա՛լ եք ներկայացրել նրանց խոսքերը»: Դրանից հետո նա աշխատանքից կհեռացներ այն մարդկանց, ովքեր ձևավորել էին այդ կեղծված մշակույթը:

Իսկ այժմ տեսեք, թե ինչպես վարվեց Իսրայելը՝ ստեղծելով վերահսկելի *«Յահվեհի»*.

> «Եվ հետևյալ օրը, առավոտ կանուխ վեր կացան և ողջակեզներ մատուցեցին և խաղաղության զոհեր բերեցին: Եվ ժողովուրդը նստեց ուտելու և խմելու և վեր կացան խաղալու» (Ելից 32.6):

Դա *Յահվեհին* նվիրված տոնական օր էր: Առաջնորդները և ժողովուրդը զոհեր մատուցեցին նրան, իսկ հետո կորցրին բոլոր սահմանները: Նրանք համոզել էին իրենց, որ իրենց վարքը հաճելի էր իրենց *«Յահվեհին»:* Նրանք հավատում էին, որ Նա չէր առարկում իրենց որկրամոլության, խնջույքների և անզուսպ խրախճանքի դեմ (ինչը, կարելի է ենթադրել, ընդգրկում էր նաև սեռական անբարոյությունը): Նրանք ներկայացնում էին իրենց վարքագիծը՝ որպես հաճելի բան Աստծուն *(Յահվեհին),* այնինչ այդ ամենը բոլորովին հաճելի չէ Նրան:

Նրանք անցում էին կատարել կռապաշտության ավելի խաբուսիկ ձևի: Ստեղծել էին կեղծված *Յահվեհի,* որը նման չէր իրական Աստծուն: Դա թույլ էր տալիս նրանց ապրել այնպես, ինչպես ցանկանում էին՝ ունենալով Նրա հավանությունը: Նրանց արարքները բոլորովին չէին տարբերվում այն հեթանոս ազգերի արարքներից, որոնք հրաժարվում էին երկրպագել (ծառայել) Աստծուն: Կրկին, Պողոսը գրում է. «Նրանք սկսեցին հորինել անմիտ գաղափարներ այն մասին, թե ինչպիսին է Աստված» (Հռոմեացիների 1.21, NLT): Միակ տարբերությունն այն է, որ հեթանոս ազգերն անվանում են իրենց աստվածներին այլ անուններով, օրինակ՝ Դագոն, Բահաղ, Հափի, Ամմիթ, Սոփդու և այլն, իսկ Իսրայելն անվանում է իր աստվածությանը *Յահվեհ:*

Այդ ժամանակ Աստված ասաց գլխավոր գործառնական տնօրեն Մովսեսին. «Գնա՛, իջի՛ր, որովհետև ապականվեց քո ժողովուրդը, որ Եգիպտոսի երկրից հանեցիր: Շուտով խոտորեցին այն ճանապարհից, որ իրենց պատվիրեցի» (Ելից 32.7,8):

Մովսեսը վերադարձավ և սկսեց հաշիվ պահանջել մարդկանցից: Առաջինը Ահարոնն էր, որին նա թողել էր՝ որպես պատասխանատու, հաջորդը՝ առաջնորդները, և վերջապես՝ ժողովուրդը: Գրված է. «Եվ Մովսեսը տեսավ ժողովրդին, որ անզուսպ է, (որովհետև Ահարոնը անզուսպ էր արել նրանց՝ իրենց թշնամիների մեջ խայտառակ լինելու համար): Եվ Մովսեսը բանակի դռանը կանգնեց ու ասաց. «Ով որ Տիրոջն է, ինձ մո՛տ գա»» (Ելից 32.25,26): Այդ մարդիկ, ինչպես և մենք, չկանգնեցին Տիրոջ կողքին՝ պարզապես դավանելով Նրա անունը կամ Նրան երգեր երգելով: Մենք որոշում ենք, որ Նրա կողքին ենք, երբ ապրում ենք համաձայն Նրա Խոսքի:

Այս պատմությունը մի քանի կարևոր հարցեր է առաջացնում.

Հնարավո՞ր է, որ մենք ստեղծել ենք այնպիսի «Հիսուսի», որը տալիս է մեզ այն ամենը, ինչին ձգտում են մեր մոլորված կրքերը:

Արդյո՞ք գիտակցում ենք, որ Հիսուսը թափել է Իր արյունը մեզ համար, փրկել է մեզ և ազատել է այս աշխարհից:

Հնարավո՞ր է, որ, թեև մենք գովերգում ենք Նրան, որ Նա բացել է Երկինքը մեզ համար, իրականում «մեր Հիսուսը» այն Հիսուսը չէ, որը նստած է Հոր աջ կողմում:

Հնարավո՞ր է, որ մենք ստեղծել ենք կեղծված Հիսուսի:

Հնարավո՞ր է, որ անթիվ մարդիկ եկեղեցում խաբված են՝ նման Եգիպտոսից դուրս եկած իսրայելցիներին:

Եվս մեկ հարց. ովքե՞ր են այն գլխավոր գործառնական տնօրենները՝ Մովսեսի պես, որոնք իջնելու են Աստծո սարից՝ կրակով և սիրով լի սրտերով, և հանդիմանելու են խաբվածներին:

Եթե նրանք չհայտնվեն, մեր խաբեությունն է՛լ ավելի կխստանա: Եվ կրիպտոնաքարը կշարունակի շահագործել մեր տկարությունները, նույնիսկ՝ մինչև մահվան աստիճան:

գործնական քայլ

Արևմուտքում հեշտ է ասելը, որ դուք հավատում եք Հիսուսին: Այնուամենայնիվ, Արևմուտքի մեծ մասը հոգնել է քրիստոնեությունից, քանի որ քրիստոնյաների և այս աշխարհի միջև շատ քիչ տարբերություն կա: Քրիստոնյաները քարոզում են Հիսուսի անունը և պնդում են, որ պատվում են Աստծուն, սակայն ապրում են մեղավոր կյանքով, որին Նա ակնհայտորեն հավանություն չի տալիս: Ինչպես որ ասաց Մովսեսը՝ պատասխանատվության կանչելով Իսրայելին. «Ով որ Տիրոջն է, ինձ մո՛տ գա»: Ժամանակն է, որ ճշմարիտ քրիստոնյաները ոտքի ելնեն և կանչեն իրենց եղբայրներին և քույրերին դեպի ճշմարտությունը:

Մենք հրաժարվում ենք ամեն ինչից՝ Հիսուսին հետևելու համար: Մեր կյանքերը մերը չեն: Մեր կամքը հնազանդ է Աստծուն. հակառակ դեպքում, Նա մեր Տերը չէ: Մենք հավատում ենք, որ Նա կտա այն, ինչի կարիքը մենք ունենք: Սա է քրիստոնեության կանչը. այո՛, եկե՛ք և փրկությո՛ւն ստացեք, բայց նույնպես՝ դուք պետք է մահանաք ձեր հին անձի համար և նորը դառնաք:

Մտորե՛ք քրիստոնեության ճշմարիտ կանչի շուրջ: Գրի՛ առեք ձեր մտքերն այն մասին, թե որքանով է այդ կանչը համապատասխանում այն ամենին, ինչ ձեզ սովորեցրել են, կամ՝ որքանով է տարբերվում դրանից: Գտե՛ք ինչ-որ մեկին ձեր ընտանիքում կամ եկեղեցում, որի հետ կարող եք խոսել այս մասին: Փոխանցե՛ք նրանց այս ճշմարտությունը:

19

ՍԿԶԲՆԱԿԵՏԸ

Ակնհայտ է, որ երբ Մովսեսն իջավ Աստծո սարից, Իսրայելը լիովին կռապաշտության մեջ էր, թեև նրանք դեռ ընդունում էին, որ *Յահվեհն* էր փրկել իրենց և ազատել Եգիպտոսից: Ինչպես տեսանք, կռապաշտության հիմքում անհնազանդությունն է՝ Աստծո հայտնված կամքին: Եթե մենք դավանում ենք, որ Հիսուս Քրիստոսը մեր Տերը և Փրկիչն է, սակայն ակնհայտորեն անհնազանդ ենք Նրա իշխանությանը, դա դառնում է կռապաշտության ամենախաբուսիկ տեսակը:

Վերադառնանք մեր «Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի թիմի ենթադրական օրինակին: Հենց որ մեր գլխավոր գործառնական տնօրենը՝ Տիմը, գրասենյակ վերադառնա և տեսնի այդ անսանձ խնջույքը, նա խիստ կբարկանա մեր գլխավոր ֆինանսական տնօրենի՝ Զորդանի վրա: Սակայն Զորդանը կարող է պատասխանել Տիմին. «Մենք անում ենք ճիշտ այն, ինչ Զոնը և Լիզան պահանջում են: Մենք ուրախ մթնոլորտ ենք ստեղծել»:

Ինչպե՞ս կպատասխանի Տիմը: «Այո՛, իհա՛րկե, Զոնը և Լիզան ցանկանում են ուրախ մթնոլորտ, բայց ի՞նչ կասես մնացած բոլոր ցուցումների մասին, որոնք նրանք տվել են մեզ. ինը ժամյա արդյունավետություն՝ ութ ժամվա ընթացքում, հասանելիություն յուրաքանչյուրի համար, ով կապ է հաստատում մեզ հետ, աշխատանքի օրական ծավալների կատարում և այլն: Դուք առանձնացրել եք նրանց պահանջներից մեկը և կենտրոնացել եք դրա վրա՝ անտեսելով մնացածը»:

Հնարավո՞ր է, որ մենք այսպես ենք վարվել ժամանակակից եկեղեցում: Կարծում եմ՝ մենք գտել ենք որոշ դրույթներ Նոր կտակարանում, որոնք մեզ դուր են գալիս: Մենք հռչակել ենք, որ փրկված ենք շնորհ-

քով՝ հավատքի միջոցով, և չենք կարող վաստակել այդ շնորհքը, քանի որ այն Աստծո բարեհաճությունն է: Մենք շեշտադրել ենք, որ անհրաժեշտ է սիրել և ծառայել միմյանց, փառաբանության և երկրպագության նոր երգեր երգել, վստահելի լինել, կազմակերպված ղեկավարություն ունենալ և առողջ եկեղեցական համայնքներ ստեղծել: Մենք քարոզում ենք այս ամենը մեծ եռանդով: Բոլոր այդ ցուցումները ճիշտ են, և Նոր կտակարանը խոսում է դրանց մասին:

Այնուամենայնիվ, մենք անտեսում ենք խոնարհության, սրբության և սեռական մաքրության կարևորությունը, ինչպես նաև՝ այլ մեղքերից հեռու մնալը, օրինակ՝ պոռնոգրաֆիայից:

Արդյո՞ք մենք զգուշացրել ենք այն մարդկանց, որոնց սիրում ենք, որ փախչեն համասեռամոլությունից, պոռնկությունից, հարբեցողությունից, անբարո կատակներից, դատարկախոսությունից, չներումից, դառնությունից և բամբասանքից: Արդյո՞ք մենք քարոզել ենք այլ կարևոր պատվիրաններ, ցուցումներ և զգուշացումներ, որոնք գրված են Նոր կտակարանում:

Մի՞թե մենք կարող ենք շեշտադրել միայն Հիսուսի այն ուսուցումները, որոնք չեն ընդհարվում մեր հասարակության մեջ հաստատված չափանիշների և անբարոյության հետ:

Մի՞թե մենք կարող ենք ստեղծել այնպիսի Հիսուսի, որը չի ընդդիմանում մեր մշակույթի անաստված ճանապարհներին:

Մի՞թե մենք կարող ենք չխոսել այն մասին, թե ինչն է Նա ատում, և միայն քարոզել Նրա խոսքերի այն մասը, որոնք ընդունելի են մեր հասարակության համար:

Մի՞թե մենք կարող ենք լայնացնել այն ճանապարհը և դուռը, որը տանում է դեպի կյանք:

Մի՞թե մենք կարող ենք հավատալ, որ եթե մարդը պարզապես մի քանի մոգական բառ է կրկնում, նա ինքնաբերաբար փրկված է:

Հնարավո՞ր է, որ մենք ստեղծել ենք կեղծված Հիսուսի, որը տարբերվում է այն Հիսուսից, որի մասին գրված է ամբողջ Սուրբ գրքում: Վերադառնանք Կորնթոսի եկեղեցուն, որը վնաս էր կրել հոգևոր կրիպտոնաքարից: Պողոսն ամփոփում է՝ գրելով նրանց.

> «Վախենում եմ, որ ինչ-որ կերպով ձեր մաքուր և լիակատար նվիրումը Քրիստոսին՝ ապականվի, ինչպես որ Եվան խաբվեց օձի խորամանկ ճանապարհներով: Դուք ուրախությամբ հանդուրժում եք ցանկացած բան, որ ինչ որ մեկն ասում է ձեզ, նույնիսկ եթե նրանք

> քարոզում են *ուրիշ* Հիսուսի, ոչ՝ Նրան, որին մենք ենք քարոզում» (Բ Կորնթացիների 11.3,4, NLT):

Այս հավատացյալների խումբը հեշտորեն մոլորվել էր, ոչ թե որևէ կեղծ Աստծո կամ Հիսուսի գոյությունը ժխտող կրոնի միջոցով, այլ հավատալով ուրիշ Հիսուսի՝ կեղծված Հիսուսի: Մի՛ մոռացեք, որ Իսրայելի զավակներն իրենց փրկությունը, ազատությունը և մատակարարումը վերագրեցին կեղծված Յահվեհին՝ ոսկե հորթին... բայց այն նաև թույլ էր տալիս և նույնիսկ խրախուսում էր այնպիսի վարքագիծ, որը հակառակ է Աստծո բնությանը, որի մասին գրված է Իր Խոսքում: Հնարավո՞ր է, որ մենք ստեղծել ենք կեղծված Հիսուսի, որը խրախուսում և թույլ է տալիս նույն բաները: Արդյո՞ք մենք միտումնավոր անտեսում ենք այն կոչերը, որ Նոր կտակարանն ուղղում է մեզ:

Պողոսն այնպիսի պնդում է անում, որը մեզնից ոչ ոք չի կարող անտեսել.

> «Այսօր ես հայտարարում եմ, որ հավատարիմ եմ եղել: Եթե ինչ-որ մեկը հավիտենական մահ կրի, դա իմ մեղավորությունը չէ, որովհետև ես չվարանեցի *ազդարարելուց այն*, ինչ Աստված ուզում է, որ դուք իմանաք» (Գործք 20.26,27, NLT):

Պողոսը չէր քարոզում միայն Ավետարանի հաճելի ուղերձները: Նա համոզվածությամբ ազդարարում էր այն, ինչ Աստված ուզում էր, որ մենք իմանայինք: Նա նման չէր մեր գլխավոր ֆինանսական տնօրենին, որը մեր թիմին միայն փոխանցում էր Լիզայի և իմ հաճելի ցանկությունները: Պողոսի խոսքերը, «Նյու Քինգ Ջեյմս» թարգմանությամբ, այսպիսին են. «Ես չխուսափեցի Աստծո *խորհուրդն ամբողջությամբ* ձեզ ազդարարելուց» (NKJV): «Էմփլիֆայդ Կլասիկ» թարգմանության մեջ գրված է. «Ես երբեք չեմ վարանել, ետ չեմ կանգնել և չեմ թերացել Աստծո ամբողջական նպատակը, ծրագիրը և խորհուրդը ձեզ հայտնելուց» (AMPC):

Եթե մենք խուսափենք Նոր կտակարանի ոչ հաճելի ուսմունքները քարոզելուց, չենք կարողանա Պողոսի պես ասել. «Եթե ինչ-որ մեկը հավիտենական մահ կրի, դա իմ մեղավորությունը չէ»: Իրականում, եթե թերանանք Նոր կտակարանի բանալի հատվածները քարոզելու մեջ, կստացվի ճիշտ հակառակը: Արդյո՞ք մենք մտահոգված ենք, որ առաջին անգամ եկած մարդիկ չեն գա մեր հաջորդ ծառայությանը կամ փոքր խմբի հավաքույթին:

Մեր քրիստոնեական մշակույթում տարիներ շարունակ խուսափել ենք շեշտադրելուց այն կարևոր բնավորության գծերը, որոնց մասին գրված է Աստծո Խոսքում, և այսօր մենք հնձում ենք մեր անփութության հետևանքները: Ցավոք, շատերն այսօր սխալ ուղու վրա են: Այս մասին կարելի է անթիվ օրինակներ բերել: Ես մտապահում եմ մի շատ ազդեցիկ կին ծառայողի, որը հանրաճանաչ հեղինակ և համաժողովների հայտնի քարոզիչ էր: 2016 թվականին նա հայտարարություն տարածեց, որ իր ամուսնությունն ավարտված է (ինչ էլ, որ դա նշանակեր): Նա ամուսնալուծվեց, և այս գիրքը գրելու պահին նշանված է ու ապրում է մեկ այլ կնոջ հետ:

Նա իր հետևորդներին պարբերաբար պատմում է իրենց միացյալ կյանքի մասին: Գրառումներից մեկում նա կիսվել է մի լուսանկարով, որտեղ իր կին զուգընկերուհին կրքոտ համբուրում է իրեն, և մեկնաբանում է այն՝ գրելով, որ իր կյանքի ընթացքը բերել է իրեն այդ կնոջ մոտ, և որ ամեն ինչ իրենց հարաբերություններում «սուրբ» է: Աստվածաշունչն այդպես չի նկարագրում նրանց հարաբերությունները: Իմ սիրտը ցավում է նրա համար: Ահա մի «Ավետարանի ծառայող», որը սրտանց հավատում է, որ արդար դիրք ունի Աստծո առջև, և ցանկանում է օգնել, ծառայել ու սիրել մարդկանց, այնինչ իրականում նա խաբված է:

Ավելի անհանգստացնող են նրա հարյուր հազարավոր հետևորդների անթիվ աջակցող և դրական մեկնաբանությունները: Նրա գրառումները ենթադրում են, որ նա ներկայացնում է Աստծուն, և նրա հետևորդները համաձայն են դրան: Եվ ամբողջ այդ ընթացքում նա ավելի հայտնի դարձավ: Այս իրավիճակը վշտալի, ցավալի և ողբերգական է, միևնույն ժամանակ վախ է առաջացնում:

Եվս մեկ ողբերգական իրավիճակ. Ամերիկայի ամենահայտնի ավետարանական առաջնորդներից մեկը վերջերս հայտարարեց իր բոլոր հետևորդներին և իր եկեղեցուն, որ մենք պետք է լիարժեք ընդունենք համասեռամոլ զույգերին՝ որպես Հիսուսի ճշմարիտ հետևորդների: Նա ասաց, որ կայացրել է այդ որոշումը՝ համասեռամոլ զույգերի հետ երկար ժամանակ անցկացնելուց հետո, և հայտնաբերել է, որ նրանց հարաբերությունները գրեթե նույնն են, ինչ տղամարդու և կնոջ հարաբերությունները: Նա կարող էր նման եզրակացության գալ միայն՝ միտումնավոր անտեսելով մի շարք հատվածներ Նոր կտակարանից, նաև՝ Աստվածաշնչի ընդհանուր ուսմունքը: Ինչպես Ահարոնի և ոսկե հորթի դեպքում, այս առաջնորդի հայտարարության պատճառով բազմաթիվ մարդիկ հեռանալու են ճշմարտությունից:

Սա ողբերգական խաբեություն է: Քանի որ Արևմուտքի ծառայո-

ղական փիլիսոփայությունը ձևավորել է կեղծված Հիսուսի, մարդկանց համար ավելի ու ավելի դժվար է դառնում գտնել իրական Փրկչին: Մենք պետք է հարցնենք. «Արդյո՞ք իրական Հիսուսն այդպիսին է: Արդյո՞ք Աստծո սերն այդպիսին է: Արդյո՞ք ճշմարիտ սերը բնութագրվում է միայն բարությամբ, համբերությամբ և մարդկանց օգնելով: Այս հատկանիշները ճշմարիտ են և ընդունված մեր հասարակության կողմից: Այնուամենայնիվ, հնարավո՞ր է, որ մենք պարզապես անտեսել ենք այն, թե ինչպես է սերը նկարագրվում Աստվածաշնչում. «Որովհետև սա է Աստծո սերը, որ նրա պատվիրանները պահենք» (Ա Հովհաննես 5.3):

Արդյո՞ք մենք բավարարվել ենք միայն Նոր կտակարանի որոշ հատվածներով՝ սիրո մեր սահմանումը գտնելու համար:

Ապաշխարելու անհրաժեշտությունը

Հնարավո՞ր է, որ այս աղավաղված Ավետարանն ի հայտ է եկել ապաշխարության բացակայության պատճառով: Արդյո՞ք այն կնոջը, որը հովիվ և հեղինակ էր, մյուս ավետարանական առաջնորդին, ինչպես նաև շատ այլ մարդկանց երբևէ ասել էին, որ անհրաժեշտ է թողնել մեղքը՝ Հիսուսին հետևելու համար: Թե՞ նրանց պարզապես սովորեցրել էին այն, ինչը դարձել է մեր սովորական աղոթքը. «Հիսո՛ւս, ե՛կ իմ կյանքի մեջ և դարձրո՛ւ ինձ քրիստոնյա»:

Լսե՛ք Պողոսի խոսքերը.

> «Ես երբեք չեմ վարանել՝ ասելու այն, ինչ դուք պետք է լսեիք՝ թե՛ հրապարակավ, թե՛ ձեր տներում: Ես ունեի մեկ ուղերձ հրեաների և հույների համար՝ մեղքից ապաշխարելու, Աստծուն դառնալու և մեր Տեր Հիսուսի հանդեպ հավատք ունենալու *անհրաժեշտությունը»* (Գործք 20.20,21, NLT):

Միայն մեկ ուղերձ: Առաջին քայլը մեղքից ապաշխարելու *անհրաժեշտությունն* է: Աստծո զավակ դառնալու համար ապաշխարությունը *պարտադիր* է, ոչ թե՝ ընտրովի: Այնուամենայնիվ, հաճախ այն չի էլ հիշատակվում, երբ մենք բացատրում ենք Ավետարանը և առաջարկում ենք մարդկանց փրկվել:

Մի քանի տարի առաջ՝ իմ ծոմերից մեկի առաջին օրը, ես լսեցի Սուրբ Հոգու ձայնը. «Կարդա՛ Մարկոսի առաջին գլուխը»: Ես պատրաստակամորեն կարդացի ամբողջ գլուխը և չբացահայտեցի ոչ մի նոր բան: Սուրբ Հոգին ասաց. «Կրկի՛ն կարդա այն»: Ես կարդացի, և

կրկին, նոր բան չկար: Նա ասաց նույնը երրորդ, չորրորդ և հինգերորդ անգամ: Ես ևս մի քանի անգամ կարդացի այն... և ոչինչ: Դա կրկնվեց մոտավորապես յոթ անգամ: Ի վերջո, ես որոշեցի շատ դանդաղ կարդալ այն, և այս անգամ առաջին իսկ արտահայտությունն ասես դուրս թռավ էջից.

> «... Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկիզբը» (Մարկոս 1.1):

Բանալին հաջորդ խոսքերում էր. «Ահա Ես Իմ հրեշտակին (կամ՝ ավետաբերին) ուղարկում եմ Քո երեսի առջևից, որ պատրաստի Քո ճանապարհը Քո առջև»: Այդ ավետաբերը Հովհաննես Մկրտիչն էր: Նա «ապաշխարության մկրտության» ծառայություն ուներ: Մկրտությունը նշանակում է ամբողջական ընկղմում, ոչ թե մասնակի: Հովհաննեսի ուղերձն ամբողջական ապաշխարության մասին՝ Ավետարանի սկիզբն է կամ սկզբնակետը: Ոչ ոք չի կարող ունենալ ճշմարիտ հարաբերություններ Հիսուսի հետ, եթե չսկսի ճշմարիտ ապաշխարությունից:

Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ. «Հովհաննեսի ծառայությունը հիշատակվում է ամեն մի Ավետարանի սկզբում: Հովհաննեսի պատմությունը գրված չէ Հին կտակարանի գրքերից մեկում, քանի որ նրա ուղերձը նորկտակարանյան Ավետարանի հույժ կարևոր մասն է»:

Հաջորդը՝ Հոգին առաջնորդեց ինձ դեպի Հիսուսի խոսքերը.

> «Որովհետև բոլոր մարգարեները և օրենքը մինչև Հովհաննեսը մարգարեացան» (Մատթեոս 11.13):

Ես վեր ցատկեցի իմ աթոռից և բացականչեցի. «Իսկապե՜ս որ, ճի՛շտ է»: Հիսուսը չասաց. «Որովհետև բոլոր մարգարեները և օրենքը մինչև Ինձ (Հիսուս Քրիստոսը) մարգարեացան»: Ո՛չ, քանի որ Հովհաննեսի ուղերձը լիարժեք ապաշխարության մասին՝ նորկտակարանյան Ավետարանի սկզբնակետն է: Դուք չեք սկսել ձեր հարաբերությունները Հիսուսի հետ, քանի դեռ լիովին չեք ապաշխարել ձեր մեղքերից:

Ապաշխարությունը մուտքի դուռն է:

Հիշե՛ք մեր պատմությունը Զասթինի, Անջելայի և ամուսնության վերաբերյալ նրա տարօրինակ պատկերացման մասին: Նա այդպես էլ չթողեց իր հին զուգընկերներին: Նա խորապես սիրում էր իր ամուսնուն. Զասթինը առաջինն էր նրա համար, և նա ցանկանում էր անցկացնել իր ժամանակի մեծ մասը նրա հետ: Սակայն նրան ոչ մի անգամ չէին ասել, որ Զասթինի հետ ամուսնական ուխտ կնքելու համար

անհրաժեշտ էր, որ նա խզեր բոլոր կապերը (մտավոր, զգացմունքային և ֆիզիկական) իր հին զուգընկերների հետ: Այս որոշումը կդառնար Զասթինի հետ ուխտի մեջ մտնելու սկիզբը կամ սկզբնակետը:

Նա ցնցված էր, որ Զասթինը բարկացել էր Թոնիի հետ հանդիպելու իր որոշման պատճառով: Նա շարունակ մտածում էր. *«Ինչո՞ւ է նա այդպես զայրացել: Ի՞նչ է, նա խանդո՞ւմ է»:* Այո՛, նա շատ է խանդում, և հենց այդպես էլ պետք է լինի: Աստված խանդում է մեզ կամ նախանձավոր է մեզ համար, և հենց այդպես էլ պետք է լինի: Մենք Նրա հետ ուխտի մեջ ենք. ինչպե՞ս կարող ենք այլ սիրեկաններ ունենալ:

Մի՞թե զուգադիպություն է, որ Աստվածաշնչում Հովհաննեսի առաջին խոսքերն են. «Ապաշխարե՛ք, որ մոտեցել է Երկնքի թագավորությունը» (Մատթեոս 3.2):

Մի՞թե միայն Հովհաննեսն է ասում սա: Արդյո՞ք նրա ուղերձը մեկուսի է և չի կրկնվում Նոր կտակարանի մյուս ավետաբերների կողմից: Իհարկե՝ ո՛չ: Հիսուսի առաջին պատվերը հետևյալն է.

> «Ապաշխարե՛ք, որովհետև մոտեցել է Երկնքի թագավորությունը» (Մատթեոս 4.17):

Մեր Տերը և Թագավորը գիտեր, որ ապաշխարությունն անհրաժեշտ և առանցքային քայլ է՝ Աստծո հետ տևական հարաբերություններ ունենալու համար: Զարմանալի չէ, որ սա այն չափանիշն է, որը Նա օգտագործեց, որպեսզի որոշի՝ արդյո՞ք մարդիկ պատկանում էին Աստծուն:

Հիսուսը նախատեց այն քաղաքները, որոնցում Նա բազմաթիվ հրաշքներ էր գործել, որովհետև նրանք *չապաշխարեցին իրենց մեղքերից* և չդարձան Աստծուն (տե՛ս Մատթ. 11.20):

Եթե փրկվելու համար անհրաժեշտ լիներ միայն «դառնալ Աստծուն», Հիսուսը կխոսեր միայն այդ մասին: Այնուամենայնիվ, ինչպես որ Անջելան պետք է թողներ իր հին զուգընկերներին, որպեսզի լիովին նվիրվեր Զասթինին, նույնպես էլ մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից, որպեսզի լիովին նվիրվենք Հիսուսին:

Մենք շարունակաբար տեսնում ենք այս ուղերձը, քանի որ այն Հիսուսի ծառայության առանցքային ուղերձն է: Նա հայտարարում է. «Ես եկել եմ կանչելու... նրանց, ովքեր գիտեն, որ մեղավոր են և *պետք է ապաշխարեն»* (Ղուկաս 5.32, NLT): Մտածե՛ք «պետք է» բառի վերաբերյալ: Ապաշխարությունն ընտրովի չէ: Հիսուսն ասաց հետևյալը մի խումբ մարդկանց. «Դուք նույնպես կկորչեք, եթե չապաշխարեք ձեր մեղքերից և չդառնաք Աստծուն» (Ղուկաս 13.3, NLT):

Ճշմարտությունը հետևյալն է. *անկարելի է դառնալ Աստծուն՝ առանց ապաշխարության:*

Եկեք առաջ գնանք՝ տեսնելու համար, թե ինչպես էին Հիսուսի աշակերտները քարոզում Ավետարանը: Ահա թե ինչ ազդարարեցին նրանք առաջին միսիոներական առաքելության ժամանակ, որ Հիսուսն ուղարկեց նրանց. «Եվ աշակերտները դուրս գնացին, և ամեն մեկին, ում հանդիպում էին, պատվիրում էին *ապաշխարել իրենց մեղքերից* և դառնալ Աստծուն» (Մարկոս 6.12, NLT):

Մտածե՛ք այս բառերի վերաբերյալ. *«Ամեն մեկին, ում հանդիպում էին»:* Քանի որ առանց ապաշխարության չկա փրկություն, անհրաժեշտ է, որ ասեք այդ մասին յուրաքանչյուրին: Նույնիսկ դժոխքում վառվող հարուստ մարդը գիտեր մեղքերից ապաշխարելու կարևորության մասին.

> «Հարուստ մարդը պատասխանեց. «Ո՛չ, Հա՛յր Աբրահամ: Բայց եթե մահացածներից ինչ-որ մեկն ուղարկվի նրանց մոտ, այդ ժամանակ նրանք կապաշխարեն իրենց մեղքերից և կդառնան Աստծուն»» (Ղուկաս 16.30, NLT):

Իսկ Հիսուսի հարությունից հետո՞: Արդյո՞ք նրանց ուղերձը փոխվեց: Ղուկասը գրում է այն մասին, որ Հիսուսը հայտնվեց Իր աշակերտներին, հանդիմանեց նրանց խստասրտության մեջ, իսկ հետո բացեց նրանց միտքը: Ապա Նա կրկնեց այն, ինչ մարգարեներն ասացին Իր մասին.

> «Գրված է նաև, որ այս ուղերձն ազդարարվելու է Նրա անվան իշխանությամբ բոլոր ազգերին՝ սկսած Երուսաղեմից. «Կա մեղքերի ներում *նրանց համար, ովքեր ապաշխարում են»»* (Ղուկաս 24.47, NLT):

Մարգարեները կանխասեցին, որ մարդիկ կարող էին ներում գտնել Փրկչի մեջ միայն ապաշխարության միջոցով, և Պետրոս առաքյալը հետևեց նրանց օրինակին: Լսե՛ք Նրա առաջին հորդորը փրկության մասին, որը նա Պենտեկոստեի օրը ուղղեց այն մարդկանց, ովքեր պատրաստակամորեն փնտրում էին Աստծուն.

> «Ձեզնից յուրաքանչյուրը պետք է *ապաշխարի իր մեղքերից* և դառնա Աստծուն և մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի ներման համար» (Գործք 2.38, NLT):

Կրկին, անկարելի է դառնալ Աստծուն՝ առանց ապաշխարելու: Իսկ Պողո՞սը: Արդյո՞ք նա փոխեց իր ուղերձը հեթանոսների համար: Բոլորովի՛ն.

> «Ես հնազանդվեցի այդ երկնային տեսիլքին: Ես քարոզեցի, առաջինը՝ Դամասկոսում եղողներին, իսկ հետո՝ Երուսաղեմում և Հրեաստանով մեկ գտնվողներին և նույնպես՝ *հեթանոսներին,* որ բոլորը *պետք է ապաշխարեն իրենց մեղքերից* և դառնան Աստծուն և ապացուցեն, որ իրենք փոխվել են՝ այն բարի գործերով, որ անում են» (Գործք 26.19,20, NLT):

Գրված է. «Բոլորը պետք է», ոչ թե՝ «բոլորը կարող են» կամ «լավ գաղափար է, որ...»: Ո՛չ մի դեպքում: Նա ասում է. «Բոլորը պետք է ապաշխարեն իրենց մեղքերից»:

Պողոսը բացատրեց, որ հենց Աստված էր տվել փրկության այս պահանջը յուրաքանչյուրի համար՝ թե՛ հրեայի, թե՛ հեթանոսի.

> «Անցյալ ժամանակներում Աստված անտեսեց մարդկանց անտեղյակությունն այս բաների մասին, բայց այժմ Նա պատվիրում է բոլորին ամեն տեղ *ապաշխարել մեղքերից* և դառնալ Իրեն» (Գործք 17.30, NLT):

Ինչ վերաբերում է Հիսուս Քրիստոսի հիմնարար ուսմունքներին, բոլորովին զարմանալի չէ տեսնել, թե որն է առաջինն այդ ցուցակում. կռահե՛ք այն:

> «Այնպես որ, դադարենք նորից ու նորից կրկնել Քրիստոսի մասին *հիմնական ուսմունքները:* Փոխարենը, առաջ գնանք և մտքով հասունանանք: Անկասկած, կարիք չկա կրկին սկսել հիմքային կարևորություն ունեցող ուսմունքներից, որոնք են *չար գործերից ապաշխարելը* և Աստծուն հավատալը» (Եբրայեցիների 6.1, NLT):

Ես չեմ անդրադարձել Նոր կտակարանի բոլոր հատվածներին, որոնցում տրվում է այս պատվերը: Այնուամենայնիվ, թվարկել եմ բավականաչափ հատվածներ, որպեսզի ցույց տամ մեղքերից ապաշխարելու կարևորությունը: Անկարելի է հավատալ Տեր Հիսուս Քրիստոսին, եթե դրան չի նախորդում ապաշխարությունը Աստծուն գի-

տակցաբար անհնազանդ լինելուց:

Այսպիսով, մենք չենք կարող քրիստոնյա դառնալ, եթե գիտակցաբար պոռնոգրաֆիկ նյութեր ենք օգտագործում:

Մենք չենք կարող հավատացյալ դառնալ, եթե հրաժարվում ենք դադարեցնել սեռական հարաբերությունները մեր զուգընկերուհու կամ զուգընկերոջ հետ:

Մենք չենք կարող քրիստոնյա դառնալ, եթե հրաժարվում ենք թողնել համասեռամոլությունը:

Մենք չենք կարող հավատացյալ դառնալ, եթե շարունակում ենք կեղծել մեր հարկային տվյալները:

Մենք չենք կարող Հիսուսի հետևորդ դառնալ, եթե հարում ենք գենդերային այլասերվածությանը:

Մենք չենք կարող քրիստոնյա դառնալ, եթե հրաժարվում ենք ներել: Այս ցուցակը կարող է շատ երկար լինել:

Եթե մենք համառորեն ընդունում ենք Նոր կտակարանի միայն առանձին հատվածներ, նշանակում է՝ մենք ստեղծել ենք «կեղծված Հիսուսի»: Մենք խաբված ենք մեր սրտում, և մեր հավատքը սոսկ երևակայական է: Եվ Աստծո Խոսքը զգուշացնում է. «Աստծո Խոսքը միայն մի՛ լսեք: Դուք պետք է կատարե՛ք այն: Հակառակ դեպքում, դուք պարզապես խաբում եք ձեզ» (Հակոբոս 1.22, NLT):

Ինչպե՞ս Աստծուն փնտրող մարդիկ պետք է իմանան այս մասին, եթե մենք չհռչակենք սա: Մի՞թե մենք՝ առաջնորդներս, ենթադրում ենք, որ նրանք ինքնուրույն կհասկանան այս բաները: Եթե պարզապես ասենք նրանց. «Դուք հեռո՞ւ եք Աստծուց: Նա սպասում է, որ դուք տուն գաք: Պարզապես աղոթե՛ք այս աղոթքն ինձ հետ», մի՞թե մենք ճշմարտապես սիրում ենք նրանց:

Եթե մեր մոտեցումն այսպիսին է, մենք անում ենք նույնը, ինչ արել էին Անջելայի ընտանիքի անդամները կամ այլ մարդիկ, որոնք սովորեցրել էին նրան ամուսնության մասին: Նրանք չէին տեղեկացրել Անջելային, որ Զասթինի հետ ամուսնանալու համար նա պետք է հրաժարվեր իր հին զուգընկերներից: Հնարավո՞ր է, որ նրանք ենթադրել էին, որ նա ինքը կհասկանար դա: Այժմ Անջելան շփոթված և այլայլված է: Իսկ Զասթինը, ով սիրում է նրան և ճշմարտապես նվիրված է իրենց ուխտին, խիստ բարկացած է:

Ինչպիսի ունկնդիրներ էլ ունենանք, գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ Ավետարան, որը պետք է քարոզվի հետևյալ կերպով. առաջին հերթին՝ *ապաշխարություն* ցանկացած գիտակցաբար գործվող մեղքից, իսկ հետո՝ Աստծուն դառնալը: Գոյություն չունի ճշմա-

րիտ հավատք, եթե դրան չի նախորդում *ապաշխարությունը:*

Ավետարանը քարոզելու ժամանակակից մեթոդը հետևյալն է. առաջնորդել մարդկանց դեպի հավատքը և աղոթել նրանց հետ և միայն դրանից հետո հեռացնել նրանց գիտակցաբար գործած մեղքերից՝ մի քանի շաբաթվա, ամիսների կամ նույնիսկ՝ տարիների ընթացքում: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ այդ մարդիկ այլևս չուզեն ապաշխարել, քանի որ նրանք հավատում են, որ արդեն փրկված են:

Անջելան զղջում էր, որ չէր լսել ճշմարտությունը մինչև Զասթինի հետ ամուսնանալը: Մենք նույնպես ընդամենը ձևավորում ենք ներքին կոնֆլիկտ ունեցող եկեղեցի հաճախողների, երբ չենք ասում նրանց ճշմարտությունը փրկության պահանջների մասին:

գործնական քայլ

Նոր կտակարանի ուղերձը պարզ է. չկա փրկություն՝ առանց մեղքերից ապաշխարելու: Դուք չեք կարող ամուսնանալ Հիսուսի հետ՝ պահպանելով ձեր հարաբերություններն այս աշխարհի հետ: Դուք պետք է մահանաք ձեր հին կյանքի համար, որպեսզի նոր կյանք սկսեք:

Եթե երբևէ եղել եք խոսնակի դերում, դուք հասկանում եք, որ պետք է շատ պարզ ներկայացնեք մարդկանց ձեր հիմնական ասելիքը: Հակառակ դեպքում, հավանական է, որ ձեր լսարանը չհասկանա ձեզ, և ձեր հաղորդակցության նպատակը չիրականանա: Աստված գիտի այս մասին: Ահա թե ինչու Նա շատ պարզ ասաց. «Ապաշխարե՛ք»:

Մինչև այս պահը դուք, հավանաբար, արդեն մի քանի անգամ ապաշխարել եք այս գիրքն ընթերցելիս: Այնուամենայնիվ, ինչպե՞ս այս գլուխը ձեր մեջ ամրապնդեց համոզմունքն այն մասին, որ ապաշխարությունը կարևոր է: Ի՞նչ կերպով ձեր կյանքը փոխվեց, երբ իմացաք այս մասին: Ինչպե՞ս է դա փոխելու ձեր հարաբերություններն այս աշխարհի, ձեր սիրելիների և կորսված մարդկանց հետ: Խնդրե՛ք Աստծուն ցույց տալ ձեզ, թե ինչ կարող եք անել՝ ապաշխարելու կարևորությունը ձեր մեջ ամրապնդելու համար: Ինչպես միշտ, գրի՛ առեք այն, ինչ Նա ասում է ձեզ՝ ներառյալ ձեր ծրագիրն այն մասին, թե ինչպես եք կատարելու Նրա ցուցումները:

20

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախորդ գլխում Աստծո Խոսքից մենք շարունակ կարդում էինք. «Ապաշխարե՛ք ձեր մեղքերից և դարձե՛ք Աստծուն»: Քանի որ ապաշխարությունն ընտրովի չէ, այլ *անհրաժեշտ* է՝ հավիտենական կյանքը ստանալու համար, եկեք ավելի մանրամասն դիտարկենք այն: Բացահայտելով այս ճշմարտությունը՝ մենք նույնպես կբացահայտենք (հետագա գլուխներից մեկում), որ քրիստոնյայի համար ապաշխարությունն անհրաժեշտ է՝ Աստծո հետ մտերիմ հարաբերությունները պահպանելու համար:

Առաջինը՝ անչափ կարևոր է հասկանալ, որ ապաշխարությունը Նոր կտակարանում այնպիսին չէ, ինչպիսին Հին կտակարանում: Երբ Հին կտակարանում Աստծո ժողովուրդն ապաշխարում էր, քուրձ ու մոխիր էին կրում: Նրանք ողբում էին, ընկնում և հաճախ շատ արցունքներ էին թափում՝ իրենց ապաշխարությունը ցույց տալու համար: Ապաշխարությունը զղջման արտաքին դրսևորում էր և վերադարձ դեպի աստվածահաճո հնազանդությունը: Մենք կտեսնենք, որ Նոր կտակարանում շեշտադրումն արտաքին դրսևորման վրա չէ, այլ՝ սրտի:

Ապաշխարությունը Նոր կտակարանում

Նոր կտակարանում «ապաշխարություն» գոյականը («մետանոյա») և «ապաշխարել» բայը («մետանոեո՛») կարելի է գտնել համապատասխանաբար քսանչորս և երեսունչորս անգամ: Այս բառի ամենից հայտնի և լայնորեն ընդունված սահմանումը «մտափոխությունն» է: Այնուա-

մենայնիվ, այսքանով սահմանափակվելու դեպքում մենք չենք հասկանա դրա ամբողջական իմաստը:

Համաձայն *«Բեյքերի աստվածաշնչյան հանրագիտարանի»*՝ ապաշխարությունը «բառացիորեն մտափոխություն է, ոչ թե անձնական ծրագրերի կամ համոզմունքների, այլ *ամբողջ անհատականության* փոփոխություն՝ մեղսալի գործերի ընթացքից դեպի Աստված» (շեղագիրն ավելացրած է):

Ինձ դուր է գալիս *«ամբողջ անհատականություն»* արտահայտությունը: Ես կարող եմ մտափոխվել, սակայն լիովին համոզված չլինել: Այս արտահայտությամբ աստվածաբանները ցույց են տալիս, որ կա ավելին, քան պարզապես միտքը փոխելը: «Լեքսիեմի աստվածաբանական բառագիրքն» ավելի խորն է սահմանում այս բառը՝ նշելով, որ ապաշխարությունը «ընթացք է, որում անհատը վերակողմնորոշում է իր միտքը և կամքը՝ հեռացնելով դրանք մեղքից և ուղղելով Աստծուն»:

Անկասկած, ապաշխարությունը վերաբերում է մտքին, սակայն դրա ազդեցությունն ավելի խորն է. այն ազդում է մեր կամքի և զգացմունքների վրա: Այն թափանցում է մեր սրտի խորքը, որտեղ գտնվում են մեր հիմքային համոզմունքները: Հիսուսն ասում է.

> «Որովհետև *սրտից* դուրս են գալիս չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայհոյություններ: Սրանք են մարդուն պղծողը» (Մատթեոս 15.19,20):

Վարքը՝ թե՛ հանպատրաստի, թե՛ սովորական, առաջանում է մեր ներսից: Եթե ճշմարիտ ապաշխարության համար անհրաժեշտ լիներ միայն փոխել միտքը, Հիսուսը կասեր, որ բոլոր այդ վարքագծերը բխում են մեր մտքից: Աստվածաշնչում գրված է. «Որովհետև, ինչպես որ նա մտածում է իր սրտում, այնպիսին է» (Առակաց 23.7, NKJV): Այն, թե ինչպես ենք ընկալում կյանքը խորը մեր ներսում, թելադրում է մեր գործողությունները կամ արձագանքն իրավիճակներին, իսկ վերջիններս բնութագրում են մեզ:

> Միգուցե մտածեք. *«Ես չեմ ուզում բնութագրվել իմ վարքով»:* Համաձայն եմ՝ դա հաճելի ճշմարտություն չէ, բայց մենք չենք կարող անտեսել Հիսուսի խոսքերը. «Դուք կարող եք որոշել նրանց իրենց պտղով, այսինքն՝ այն բանով, թե ինչպես են վարվում» (Մատթեոս 7.16, NLT): Ճշմարտությունն այն է, որ մենք բնութագրվում ենք մեր վարքով, ոչ թե մտադրություններով»:

Այս ճշմարտությունն ինքնին ցույց է տալիս Ավետարանի զորությունը, քանի որ Ավետարանը կարող է փոխել մեր սրտի մտքերը, դրանով իսկ փոխելով մեր վարքը: Ավետարանի ազդեցությունն իրապես կրելը չի նշանակում՝ ունենալ նոր մտածելակերպ կամ զգացմունքային արձագանք, այլ՝ կրել ընկալումների և համոզմունքների խորը փոփոխություն, որն ուղեկցվում է ճշմարտապես նորոգված վարքով:

Ապաշխարությունը տեղի է ունենում, երբ մենք արթնանում ենք ճշմարտության համար և մինչև մեր էության խորքը լիովին համոզվում ենք, որ մեր փիլիսոփայությունը և վարքը հակառակ են մեր Արարչին: Այս ի սրտե գիտակցումը տեղի է ունենում, երբ փոխվում է ոչ միայն մեր կարծիքը, այլև ցանկությունները և կամքը: Մենք հստակ որոշում ենք կայացնում՝ փոխել մեր ցանկությունները և ձգտումները, որոնք հակառակ են Աստծո կամքին, թողնել դրանք և նույնիսկ՝ ատել: Ապաշխարությունը ճշմարիտ խոնարհություն է, իսկ խոնարհությունը դուռ է բացում Աստծո անարժանաբար տրվող շնորհքի համար, որն աստվածապաշտ կյանքով ապրելու կարողություն է տալիս մեզ:

Անհավատները

Ապաշխարությունը վերաբերում է թե՛ անհավատներին, թե՛ հավատացյալներին, սակայն մի փոքր տարբեր ձևերով: Եկեք առաջին հերթին խոսենք անհավատների մասին:

Նախորդ գլխում հետևողականորեն լսեցինք Հովհաննես Մկրտչից, Հիսուսից և Նրա աշակերտներից. «Ապաշխարե՛ք մեղքից և դարձե՛ք Աստծուն»: Իրականում, այս երկու պատվերները սերտորեն կապակցված են և անկախ չեն իրարից: Այլ կերպ ասած՝ մեկը առանց մյուսի չի կարող լինել, քանի որ դրանք նման են նույն մետաղադրամի երկու կողմերին: Աստվածաշնչյան ապաշխարությունը նշանակում է դառնալ Աստծուն՝ բոլոր առումներով: Այն մարդը, ով ճշմարտապես ընդունում է Քրիստոսին, հայտարարում է.

> «Ես մշտապես ձգտել եմ այն ամենին, ինչը լավագույնն էր ինձ համար, բայց հիմա գիտեմ, որ լիովին սխալ եմ եղել: Այս պահից ի վեր, լավագույնն այն է, ինչ Աստված է ասում, ինչ էլ որ դա լինի. ես կհավատամ և կընդունեմ դա իմ ամբողջ սրտով, մտքով և վարքով»:

Նա ի սրտե որոշում է (ինչն ընդգրկում է նրա միտքը, զգացմունք-

ները և կամքը), որ կատարելու է Աստծո կամքը: Կայացնելով այս որոշումը՝ նա օրհնություն է ստանում. նա շարունակում է լսել Աստծո ձայնը: Կրկին, որպես հիշեցում՝ Հիսուսն ասաց. «Ամեն մեկը, ով ուզում է (կամենում է) կատարել Աստծո կամքը, կիմանա, թե արդյո՞ք Իմ ուսմունքն Աստծուց է» (Հովհաննես 7.17, NLT): Ապաշխարելով՝ անհավատը թողնում է ինքնակառավարումը և ընտրում է բացարձակ հպատակությունն Աստծուն: Այս որոշումը բացում է նրա սիրտը՝ Աստծո ձայնը լսելու համար:

Երբ անհավատները ճշմարտապես ապաշխարում են, նրանք թողնում են կռապաշտությունը և ընտրում են լիակատար հպատակությունը և հնազանդությունը Աստծո իշխանությանը: Ըստ էության, նրանք հայտարարում են. «Ես այլևս չեմ ընդունի այնպիսի մտքեր, համոզմունքներ, դատողություններ կամ փաստարկներ, որոնք Աստծո Խոսքից վեր են դասում իրենց»: Պողոսը համարձակ հռչակում է.

> «Մարդկային դատողության բերդերը *քանդելու* և կեղծ փաստարկները *կործանելու* համար մենք գործածում ենք ոչ թե աշխարհիկ զենքեր, այլ Աստծո հզոր զենքերը: Մենք *կործանում ենք* ամեն մի ամբարտավան խոչընդոտ, որը թույլ չի տալիս մարդկանց ճանաչել Աստծուն: Մենք գերում ենք նրանց ապստամբ մտքերը և սովորեցնում ենք հնազանդվել Քրիստոսին» (Բ Կորնթացիների 10.4,5, NLT):

Աստծո զենքերն են՝ Նրա Խոսքը, իմաստությունը և խորհուրդը: Այս աշխարհի զենքերն են՝ հասարակության փիլիսոփայությունը, մշակույթը, սովորույթները, օրենքները և կենսառճը, որոնք հակառակ են Աստծո Խոսքին: Միգուցե հարցնեք. «Այս աշխարհը զենքե՞ր ունի»: Իհա՛ր-կե. դժոխքը շարունակաբար հարձակում է գործում այս աշխարհի համակարգի միջոցով՝ դրդելով թե՛ քրիստոնյաներին, թե՛ անհավատներին փոխզիջման գնալ:

Ուշադրություն դարձրեք վերևում բերված աստվածաշնչյան հատվածի «քանդել» և «կործանել» բառերին: Նույն բառերը հաճախ են օգտագործվում Հին կտակարանում, երբ մարդիկ շրջվում էին կռապաշտությունից: Իսրայելը քանդում էր, կոտրատում էր, վայր էր գցում և կործանում էր կանգնեցված կուռքերը (մտապահե՛ք նրանց մեղսալի գործերը. կռապաշտության արմատը գիտակցված և շարունակական մեղքն է: Նրանք կործանում էին հենց դա, ոչ թե պարզապես արձանները):

Այն սկզբունքները, որոնց մասին խոսում է Պողոսը, նույնն են: Մենք օգտագործում ենք Աստծո Խոսքը՝ հանդիմանելու համար կռապաշտ

մտածելակերպեր ունեցող մարդկանց, որոնք օտարացած են Քրիստոսից: Այս կերպով մեր ունկնդիրներն ապաշխարում են (քանդում և կործանում են) բոլոր մարդկային դատողություններից, փաստարկներից և Աստծո իշխանությանը չհնազանդվելուց: Ըստ էության, հենց սա է շարունակաբար գործվող մեղքից ապաշխարելը: Երբ մարդն այդպես է վարվում, նա ճշմարտապես դառնում է Աստծուն և ազատություն է ստանում:

Փիլիսոփայական տարբերություն

Հենց այստեղ մենք հանգում ենք լուրջ փիլիսոփայական տարբերությունների՝ մերօրյա քրիստոնեական ծառայության մեջ, հատկապես՝ Արևմուտքում: Առաջնորդների մի մեծ խումբ ընդունել է այնպիսի մտածելակերպ, որ կորսվածներին հասնելու համար պետք է կենտրոնացնենք մեր ուղերձներն Ավետարանի հակառակություն չառաջացնող կողմերի վրա: Այլ կերպ ասած՝ լինենք դրական և չհիշատակենք այն մեղքերը, որոնցից պետք է ապաշխարել: Նման մոտեցմամբ մենք, գիտակցաբար, թե անգիտակցաբար, նմանվում ենք վաճառողի, որը փորձում է համոզել գնորդին՝ ներկայացնելով միայն իր ապրանքի առավելությունները և թաքցնելով բացասական կողմերը: Ցավոք, այս մտածելակերպը գրեթե կորսվածներին հասնելու մեթոդների չափանիշ է դարձել:

Ծառայության մեջ այս սխալական փիլիսոփայությունն ունի երկու ակնհայտ առավելություն: Առաջինը՝ մենք բացառում ենք մարդկանց խոցելու և ցավ պատճառելու ցանկացած հնարավորություն: Օրինապաշտությունն իսկապես որ զուրկ է կարեկցանքից և կենտրոնացած է օրենքի տառի վրա: Օրինապաշտ մարդիկ ձգտում են ճիշտ լինել, վերահսկել սեփական վարքը և ընդունված հեղինակություն լինել: Խիստ լինելու պատճառով, օրինապաշտությունը թողնում է իր ետևից խոցված մարդկանց, որոնք այլևս չեն կարողանում փնտրել Աստծուն, քանի որ այն անհատը կամ հաստատությունը, որը ներկայացնում է Հիսուսին, վնաս է հասցրել նրանց: Հավանաբար, օրինապաշտությունը, քան ցանկացած այլ բան, Աստծուց հեռացրել է ավելի շատ մարդկանց:

Հիսուսը ցույց տվեց կրոնական «ծառայության» հետևանքները.

> «Որովհետև դուք փակում եք Երկնքի թագավորության դուռը մարդկանց երեսին: Դուք ինքներդ չեք մտնում և ուրիշներին էլ թույլ չեք տալիս մտնել» (Մատթեոս 23.13, NLT):

Այնպես որ, օրինապաշտությունից ազատվելու ցանկությունը ճիշտ է, սակայն մենք չենք կարող թեքվել դեպի մյուս ծայրահեղությունը: Մի՞թե մենք պետք է խուսափենք Նոր կտակարանի ծառայությունից, քանի որ վախենում ենք, որ կարող ենք ընկնել այդ ծուղակը և վնաս հասցնել մարդկանց: Մի՞թե մենք պետք է հրաժարվենք հանդիմանել մեղքը և ապաշխարության կոչ անել, որպեսզի բացառենք օրինապաշտության ցանկացած դրսևորում: Մի՞թե սրանով հոնքի հետ աչքն էլ չենք հանի:

Մենք պետք է անդրադառնանք այս հարցերին, քանի որ այն, ինչ այսօր չափանիշ է դարձել ավետարանչության մեջ, չի համապատասխանում Աստվածաշնչին: Ինչպե՞ս կարող ենք առաջարկել փրկություն՝ առանց ապաշխարության, եթե Աստվածաշունչը հստակ սովորեցնում է, որ ապաշխարությունն անհրաժեշտ է: Եվ արդյո՞ք այն մարդիկ, որոնց մենք շահում ենք նման սահմանափակ Ավետարանով, ճշմարտապես փրկվում են:

Ապաշխարությունը շրջանցելու երկրորդ «առավելությունն» այն է, որ մենք կարող ենք ավելի հեշտությամբ նորադարձների շահել և դրանով իսկ կառուցել ավելի մեծ ծառայություն, եկեղեցի կամ փոքր խումբ: Սակայն մի՞թե մոռանում ենք, որ հենց մեծամասնությունը հետևեց Ահարոնի սխալմունքին: Մեր հետևորդների մեծ կամ փոքր թվաքանակը չէ, որ որոշում է՝ արդյո՞ք մենք վարվում ենք Աստծո սրտի համեմատ: Որոշիչ գործոնը ճշմարտությունն է, ոչ թե մարդկանց թիվը:

Մի՞թե մոռացել ենք Հիսուսին հետևելու գնի մասին: Մի՞թե անտեսել ենք մեղքը թողնելու (սեփական անձն ուրանալու) և մեր խաչը վերցնելու (Նրան պատրաստակամորեն հնազանդվելու) Նրա կրկնվող հրահանգները:

Եթե մենք չհանդիմանենք շարունակական մեղքը, այն մարդիկ, որոնք կընդունեն Հիսուսին, կշարունակեն ապրել համաձայն այս աշխարհի չափանիշների, ոչ թե՝ համաձայն Աստծո Խոսքի: Մեր հասարակության մեջ լիովին ընդունելի է ապրել և սեռական կյանք ունենալ սիրեկանի հետ՝ առանց ամուսնանալու, լինել համասեռամոլ՝ նույնիսկ այնպիսի միության պայմաններում, որը, սխալմամբ, «ամուսնություն» է կոչվում, տարվել հարբեցողությամբ, ընդունել մարիխուանա կամ այլ թմրանյութեր, դիտել անվայել, անպարկեշտ կամ պիղծ հաղորդումներ, տեսանյութեր և ֆիլմեր և շատ ավելին: Սակայն այս ամենը ուղղակիորեն հակասում է Նոր կտակարանի պատվիրաններին:

Երկնքի չափանիշները

Իսկ մի՞թե Նոր կտակարանում պատվիրաններ կան: Այո՛, իրականում, Նոր կտակարանում կա ավելի քան հինգ հարյուր պատվիրան՝ տարբեր մտածելակերպերից և վարքագծերից ազատվելու վերաբերյալ: Պողոս առաքյալը՝ այն մարդը, ով ստացավ մեծագույն հայտնությունն Աստծո շնորհքի մասին, գրում է. «Թլփատությունը ոչինչ է, և անթլփատությունը՝ ոչինչ, այլ՝ Աստծո պատվիրանները պահելը» (Ա Կորնթացիների 7.19):

Օրինակ՝ Աստված հստակ ասում է, որ արտամուսնական սեռական հարաբերությունները ոչ միայն արգելվում են, այլև ենթարկվելու են դատաստանի: Հետևյալ հատվածները դատարկ խոսքեր չեն.

> «Որովհետև համոզվա՛ծ եղեք սրանում, որ այն մարդը, ով սեռական անառակություն և պղծություն է գործում իր մտքում կամ կյանքում... չունի ժառանգություն Քրիստոսի և Աստծո թագավորության մեջ: Թույլ մի՛ տվեք ոչ ոքի մոլորեցնել ձեզ դատարկ արդարացումներով և անհիմն փաստարկներով [այս մեղքերի վերաբերյալ], որովհետև այս բաների պատճառով Աստծո զայրույթը գալիս է ապստամբության և անհնազանդության որդիների վրա» (Եփեսացիների 5.5,6, AMPC):

Եվ կրկին.

> «Աստված անպատճառ կդատի այն մարդկանց, ովքեր անբարո են, և նրանց, ովքեր շնություն են գործում» (Եբրայեցիների 13.4, NLT):

Այն, ինչ քիչ առաջ կարդացինք, վերաբերում է ոչ միայն արտամուսնական սեռական հարաբերություններին, այլև պոռնոգրաֆիային և ցանկացած սեռական պղծության: Եվ ինչպե՞ս են մարդիկ իմանալու այս ամենը, եթե չքարոզենք այս մասին: Մի՞թե մենք իսկապես սեր ենք ցուցաբերում մարդկանց հանդեպ, եթե նրանցից թաքցնում ենք այս ճշմարտությունները:

Աստված հստակ ասում է, որ այն մարդիկ, որոնց կյանքում կա շնություն, համասեռամոլություն, գողություն, հարբեցողություն (որն ընդգրկում է նաև թմրանյութերի օգտագործումը) և այլ վարքագծեր, որոնք այսօր մեր հասարակության մեջ ընդունելի են շատերի համար, չեն ժառանգի Աստծո թագավորությունը.

> «Չե՞ք հասկանում, որ մեղք գործողները չեն ժառանգի Աստծո թագավորությունը: Մի՛ խաբեք ձեզ: Նրանք, ովքեր տրվում են սեռական մեղքերին, կամ կուռքերի են երկրպագում, կամ շնություն են գործում, կամ տղամարդ մարմնավաճառներ են, կամ միասեռությամբ են զբաղվում, կամ գողեր են, կամ ագահ մարդիկ են, կամ հարբեցողներ են, կամ կռվարար են, կամ խաբում են մարդկանց, սրանցից ոչ մեկ չի ժառանգի Աստծո թագավորությունը» (Ա Կորնթացիների 6.9,10, NLT):

Օրինապաշտ մարդիկ մեծ վնաս են հասցրել՝ իրական սեր և գթասրտություն չունենալու պատճառով: Նրանք Նոր կտակարանի խոսքերին ավելացրել են իրենց համոզմունքները և կանոնները, որպեսզի դրդեն մարդկանց վարվել իրենց համար ընդունելի կերպով: Այնուամենայնիվ, միգուցե մենք ծայրահեղ կերպո՞վ ենք հակազդել այս երևույթին՝ այն աստիճան, որ այլևս չենք քարոզում Հիսուսի պատվիրանները, որոնք փոխանցվել են կա՛մ անմիջապես Նրա կողմից, կա՛մ Նրա առաքյալների գրքերի միջոցով:

Վերջերս, մի մեծ հայտնի եկեղեցում քարոզում էի Ա Կորնթացիների թղթի այս խոսքը: Առաջին մի քանի ծառայություններին քարոզելուց հետո այդ եկեղեցու հովիվն ասաց, որ մյուս ծառայություններին այլևս չհիշատակեմ համասեռամոլության թեման: Զավեշտական է, որ հենց այդ պահին մի կին ոստիկան, որն ավելի քան քսան տարի լեսբուհի էր, արցունքն աչքերին մոտեցավ մեր գրասեղանին և ասաց. «Ինձ պետք է այն գիրքը, որի մասին նա քարոզում էր այսօր երեկոյան՝ «Բարի՞, թե՞ Աստված»: Այսօր Զոնն իսկապես խոսեց իմ սրտի հետ»:

Ինչպե՞ս են մարդիկ ճանաչելու Երկնքի չափանիշները, եթե մենք շարունակենք պահպանել մեր ներկա ծառայողական փիլիսոփայությունը: Մտածե՛ք Հովհաննես Մկրտչի ուղերձի մասին: Նրա ուսմունքը հանդիմանում էր այն մեղքերը, որոնք գերիշխում էին նրա օրերի հասարակության մեջ: Նա պատվիրում էր հարստություն կուտակած մարդկանց կիսվել աղքատների հետ, գողացողներին՝ դադարել գողանալուց, մարդկանց վախեցնողներին՝ դադարել վախեցնելուց, և աշխատավորներին՝ բավարարվել իրենց աշխատավարձով (տե՛ս Ղուկ. 3.10-14): Մարդիկ գնում էին անապատ, որտեղ խիստ պայմաններ էին, որպեսզի լսեին նրան, քանի որ նրանք ճշմարտությունը լսելու փափագ ունեին: Հովհաննեսին լսելուց հետո մարդիկ արձագանքում էին նրա ուղերձին և ապաշխարում էին իրենց մեղքերից: Նրանք

վարվում էին ճիշտ նույն կերպով, ինչպես վարվեց այդ եկեղեցական հավաքույթին ներկա կին ոստիկանը, ով գաղափար չուներ իր կենսառճի լուրջ հետևանքների մասին:

Հովհաննես Մկրտիչը հրապարակավ ասաց Հերովդեսին՝ Հուդայի թագավորին, որ նա խախտում էր Աստծո օրենքը՝ սեռական հարաբերություններ ունենալով իր եղբոր կնոջ հետ, և որոշ ժամանակ անց նրան գլխատեցին ճշմարտությունը քարոզելու համար: Հովհաննեսը չէր փորձում հաճեցնել այդ ազդեցիկ իշխանավորին, սակայն նա հարգանք ձեռք բերեց: Եթե Հովհաննեսը հրապարակավ չհանդիմաներ Հերովդեսի մեղքը, նրա կյանքն ավելի երկար կլիներ: Այնուամենայնիվ, մտածե՛ք երկարաժամկետ հետևանքների մասին: Որոշ ժամանակ անց Հիսուսը պատվեց Հովհաննեսին մեծ բազմության առջև (տե՛ս Մատթ. 11.7-15), և մենք միայն կարող ենք պատկերացնել, թե ինչպիսի հավիտենական վարձատրություն նա կստանա Դատաստանի օրը: Հովհաննեսը հավատարմորեն պահեց Երկնքի չափանիշը՝ հանուն կորսված մարդկանց:

Պողոսը հետևեց այս օրինակին՝ գրելով և քարոզելով միևնույն բաները: Նա ուներ պարզ ուղերձ կորսվածների համար. «Բոլորը պետք է ապաշխարեն իրենց մեղքերից և դառնան Աստծուն և ապացուցեն, որ իրենք փոխվել են՝ այն բարի գործերով, որ անում են» (Գործք 26.20, NLT): Նա պատվիրեց Տիմոթեոսին. «Դու՝ որպես Խոսքի քարոզիչ, պետք է ցույց տաս մարդկանց, թե ինչ կերպով է նրանց կյանքը սխալ» (Բ Տիմոթեոս 4.2, AMPC): Նա պատվիրեց մեկ այլ ծառայողի. «Հանդիմանի՛ր ամբողջ իշխանությամբ» (Տիտոս 2.15, NLT):

Պողոսը բացառում էր ցանկացած փոխզիջում: Մեկ անգամ նրան հրաշալի հնարավորություն ընձեռվեց՝ քարոզել Ավետարանը Ֆելիքս անունով մի շատ հարուստ և ազդեցիկ պետական պաշտոնյայի և նրա կին Դրուսիլային: Այս մեծ առաքյալը չքարոզեց նրանց խրախուսական և ոչ հանդիմանական ուղերձ: Փոխարենը՝ գրված է.

> «Բերելով Պողոսին՝ նրանք լսում էին, մինչ նա պատմում էր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի մասին: Երբ նա համոզում էր նրանց՝ խոսելով արդարության, ինքնատիրապետման և գալիք դատաստանի օրվա մասին, Ֆելիքսը վախեցավ: «Այժմ գնա՛, - պատասխանեց նա, - երբ ավելի հարմար լինի, ես կրկին կկանչեմ քեզ»» (Գործք 24.24,25, NLT):
>
> «AMPC» թարգմանությունն ավելի պարզ է. «Բայց երբ նա շարունակեց փաստարկներ բերել արդարության, կյանքի

մաքրության (կրքերը վերահսկելու) և գալիք դատաստանի մասին, Ֆելիքսը տագնապեց *և* սարսափեց, նա ասաց՝ գնա՛»:

Կարդալով պատմությունն ամբողջությամբ՝ մենք պարզում ենք, որ Ֆելիքսը կանչել էր Պողոսին, քանի որ կամենում էր լսել Աստծո և հանդերձյալ կյանքի մասին: Անկասկած՝ այդ իշխանը ցանկանում էր հարաբերություններ ունենալ իր Արարչի հետ: Նրան կարելի է համեմատել մերօրյա Աստծուն փնտրող մարդու հետ՝ հետաքրքրված, չփրկված և եկեղեցի այցելող անձնավորության հետ: Ակնհայտ է, որ Պողոսի քարոզը հանդիմանում էր այն մեղքերը, որոնք Ֆելիքսը չէր կամենում թողնել, քանի որ նա *սարսափեց* և ետ ուղարկեց Պողոսին:

Այսօր այդ իրավիճակը կարող էր այսպիսին լինել. պատկերացրեք, որ մի ազդեցիկ անհավատ դուրս է գալիս հավաքույթից՝ ասելով. «Ես չեմ վերադառնա այնտեղ. այդ ուղերձը վախեցրեց ինձ»: Ինչո՞ւ նա պետք է վախենար: Միգուցե պատճառն այն է, որ նա չի՞ կամենում թողնել այն մեղքը, որն այդ ուղերձը հանդիմանում է:

Եթե Պողոսը քարոզեր համաձայն այսօրվա Արևմուտքի փիլիսոփայության, նրա ուղերձն այսպիսին կլիներ. «Ֆելի՛քս, Աստված սիրում է քեզ: Նա ուղարկեց Հիսուսին՝ մահանալու քեզ համար, որ դու փրկված լինես: Կուզե՞ս ընդունել Նրան քո սրտում: Եթե այո, կրկնի՛ր ինձ հետ այս աղոթքը. «Հիսո՛ւս, ե՛կ իմ սրտի մեջ և դարձրո՛ւ ինձ Աստծո զավակ»»: Եվ այդքանով ամեն ինչ կավարտվեր:

Այնուամենայնիվ, Պողոսի խոսքերը վախեցրին Ֆելիքսին: Պողոսը գիտեր, որ Ֆելիքսը կարող էր քրիստոնյա դառնալ, միայն եթե ապաշխարեր այն մեղքերից, որոնք գիտակցաբար գործում էր: Եթե Պողոսն աղոթեր *մեղավորի աղոթքը* Ֆելիքսի հետ՝ նրան խրախուսական և ոչ հանդիմանական ուղերձ քարոզելուց հետո, Ֆելիքսը *խաբված* կլիներ: Նա ի սրտե կհավատար, որ *վերստին ծնված* էր, բայց իրականում *չփրկված կռապաշտ* կմնար: Ըստ էության, Պողոսը թույլ կտար, որ կրիպտոնաքարը ներթափանցեր եկեղեցի: Բայց նա՝ որպես Հիսուս Քրիստոսի հավատարիմ ծառայող, ոչ մի դեպքում այդպես չէր վարվի:

Ես գիտեմ, որ այս ամենը սթափեցնող է, բայց այսօր մենք՝ որպես Ավետարանի դեսպաններ, չպետք է տարբերվենք նրանից:

գործնական քայլ

Ժամանակակից եկեղեցիների մեծ մասը կառուցվել է՝ առաջարկելով մարդկանց կրկնել «մեղավորի աղոթքը», ինչը պարզապես նշանակում է ընդունել Հիսուսի զոհը մեր մեղքերի համար և հրավիրել Նրան մեր սրտի մեջ: Պատկերացրեք, թե ինչպիսին կլիներ ձեր եկեղեցին, եթե առաջնորդների թիմը հրավիրեր մարդկանց ապաշխարելու իրենց մեղքերից և դառնալու Աստծուն: Ձեր կարծիքով, քանի՞սը կմնային:

Միգուցե սա բարկացնի շատերին, հատկապես՝ եկեղեցական առաջնորդներին: Սակայն պատկերացրեք, թե ինչպիսին կլինեին մնացողները: Առաջին Մեծ Արթնությունն առանձնահատուկ էր այն բանով, որ արթնության քարոզիչները եկեղեցուց եկեղեցի էին գնում, որպեսզի ապաշխարություն քարոզեին: Այն առանձնահատուկ էր նաև նրանով, որ այդ ուղերձը լսողները բռնվում էին իրենց աթոռներից կամ ընկնում ու ապաշխարում էին՝ գոչելով, լաց լինելով և աղաչելով Աստծուն՝ փրկել իրենց: Հենց այդ հազարավոր ապաշխարող մարդիկ էին, որ փոխեցին աշխարհը: Ամբողջ քաղաքներ թողեցին մեղքը և դարձան Աստծուն:

Միգուցե ապաշխարության մասին քարոզները դատարկեն մեր եկեղեցիները, սակայն նույնպես հավանական է, որ մեր եկեղեցիները լցվեն: Խնդրե՛ք Աստծուն հայտնել ձեզ ապաշխարության ներուժը, այնուհետև աղոթե՛ք, որ Նա իրական դարձնի այդ ներուժը ձեր կյանքում և ձեր եկեղեցում:

21

ԵՐԵՔ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Ես ոգեշնչվեցի այս գիրքը գրելու համար, երբ հերթական անգամ վերընթերցեցի վեց գիրք Հին կտակարանից:

Վերջին քառասուն տարիների ընթացքում բազմաթիվ անգամներ կարդացել և ուսումնասիրել եմ Թագավորաց և Մնացորդաց գրքերը: Բայց վերջերս հետևողաբար ու աղոթքով ուսումնասիրում էի դրանք, ինչպես երբևէ: Ես զարմացա, երբ Աստված բացեց իմ աչքերը մի բանի վրա, ինչը նախկինում չէի նկատել:

Հետևյալը կարող է մի փոքր ակադեմիական և նույնիսկ հոգնեցուցիչ թվալ, սակայն եթե ես պարզապես նշեմ այն, ինչ հայտնաբերեցի այս գրքերում՝ առանց համառոտ ամփոփելու Հին կտակարանի թագավորների կյանքը, իմ խոսքերի ազդեցությունը թույլ կլինի: Գոյություն ունի մի ազդեցիկ ճշմարտություն, որը հայտնվում է նրանց կյանքերն ամփոփելիս: Այն հեշտ չէ նկատել, երբ մենք պարզապես հերթականությամբ կարդում ենք այս վեց գրքերը՝ դրանցում գտնվող բազմաթիվ պատմությունների պատճառով:

Նախկինում, երբ կարդում էի այս գրքերը, ես մշտապես համարում էի, որ գոյություն ուներ թագավորների երկու տեսակ՝ նրանք, ովքեր «արդարություն էին գործում Տիրոջ առջև», և «կռապաշտները»: Այնուամենայնիվ, ես հասկացա, որ իրականում գոյություն ուներ թագավորների *երեք* տեսակ:

Ինչ վերաբերում է Իսրայելի թագավորներին, նրանցից ոչ մեկն արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև՝ բացառությամբ Հեուի, սակայն իր կյանքի ավարտին նա, ցավոք, նույնպես շեղվեց ճշմարտությունից:

Այնպես որ, եկեք խոսեք Հուդայի մասին: Սավուղից, Դավթից և Սողոմոնից հետո Հուդայում իշխեց 20 թագավոր: Կռապաշտ թագավորներն էին Ռոբովամը, Աբիամը (կամ՝ Աբիան), Հովրամը, Ոքոզիան, Գոթողիան (թագուհի), Աքազը, Մանասեն, Ամոնը, Հովաքազը, Հովակիմը, Հովաքինը և Սեդեկիան: Այս թագավորների իշխանության ընթացքում Հուդան կրեց մեծ դժվարություններ և ենթարկվեց հարձակումների իր թշնամիների կողմից: Այդ հարձակումները, որոնց Հուդան հաճախ անկարող էր դիմակայել, խիստ մեծ վնաս հասցրին երկրին:

Հուդայի մյուս թագավորներն արդարությամբ վարվեցին (Դավիթը և Սողոմոնը նույնպես արդարությամբ վարվեցին, թեև Սողոմոնը նահանջեց իր հետագա տարիներին): Թագավորության պառակտումից հետո արդար թագավորներն էին Ասան, Հովսափատը, Հովասը, Ամասիան, Ոզիան (կամ՝ Ազարիան), Հովաթամը, Եզեկիան և Հովսիան: Այնուամենայնիվ, այս ութ թագավորներին կարելի է բաժանել ևս երկու խմբի: Առաջինը այն թագավորներն էին, որոնք արդարությամբ էին վարվում Տիրոջ առջև իրենց անձնական կյանքում, սակայն չէին կործանում կռապաշտության համար նախատեսված բարձրավանդակներն այն ժողովրդի միջից, որին առաջնորդում էին:

Մյուս խմբում այն թագավորներն էին, որոնք ոչ միայն արդար էին Տիրոջ առջև իրենց անձնական կյանքում, այլև քանդում և կործանում էին կռապաշտության համար նախատեսված բարձրավանդակներն իրենց ժողովրդի միջից: Այս թագավորների իշխանության ժամանակ երկրի հաջողությունը զգալիորեն տարբերվում էր այն թագավորների ժամանակաշրջանից, որոնք չէին կործանում բարձրավանդակները: Դիտարկենք յուրաքանչյուրին.

1. Դավիթ. Նրա թագավորության ժամանակ երկրում կռապաշտություն չկար: Նա ջերմեռանդորեն խրախուսում էր ժողովրդին ծառայել Տիրոջը՝ ամբողջ սրտով, մտքով, անձով և մարմնով: Նա չէր պարտվում պատերազմների ժամանակ, և նրա թագավորությունը շատ հարուստ դարձավ: Նա փոխանցեց իր որդուն բարգավաճ թագավորություն:
2. Սողոմոն. Իր գահակալման գրեթե ամբողջ ընթացքում Սողոմոնը գնում էր իր հայր Դավթի հետքերով: Նրա հնազանդության արդյունքները ոչ միայն ուշագրավ էին իր կյանքում, այլև իր ենթակաների: Գրված է. «Սողոմոնի կենդանության օրոք ամբողջ Հուդան և Իսրայելն ապրում էին խաղաղությամբ և ապահովությամբ: Եվ Դանից՝ հյուսիսում, մինչև Բերսաբե՝ հարավում, ամեն ընտանիք ուներ իր սեփական տունը և պարտեզը» (Գ Թագա-

վորաց 4.25, NLT): Մտածե՛ք այս մասին. ոչ ոք չուներ կառավարական օժանդակության կարիք, քանի որ երկիրը մեծ առատության մեջ էր: Նրա կառավարումն այնքան ակնառու էր, որ «բոլոր երկրների թագավորներն ուղարկում էին իրենց դեսպաններին՝ Սողոմոնի իմաստությունը լսելու համար» (Գ Թագավորաց 4.34, NLT): Եվ «մարդիկ բոլոր ազգերից գալիս էին՝ նրանից խորհուրդ ստանալու և լսելու այն իմաստությունը, որ Աստված տվել էր նրան» (Գ Թագավորաց 10.24, NLT): Նույնպես գրված է. «Նա հաջողություն ուներ ամեն ինչում, և ամբողջ Իսրայելը հնազանդվում էր նրան» (Ա Մնացորդաց 29.23, NLT): Երկրի ժողովուրդը մեծ առատություն ուներ. «Թագավորը քարի պես շատացրեց արծաթը և ոսկին Երուսաղեմում: Եվ թանկարժեք մայրիի փայտանյութն այնքան տարածված էր, որքան մոլաթզենիները, որոնք աճում են Հուդայի հովիտներում» (Բ Մնացորդաց 1.15, NLT):

Այնուամենայնիվ, հետագայում Սողոմոնն անհնազանդ գտնվեց Աստծուն և ամուսնացավ բազմաթիվ օտարազգի կանանց հետ: Նրանք դարձրին նրա սիրտը դեպի օտար աստվածները (գիտակցված և շարունակական մեղքը) և, հետևաբար, Տերը բարձրացրեց թշնամիներ, որոնք խոչընդոտեցին Սողոմոնի առաջընթացը և խնդիրներ հարուցեցին թագավորության մեջ (տե՛ս Ա Թագ. 11.14,23): Գիտակցաբար անհնազանդ լինելու արդյունքում Սողոմոնի թագավորությունը պառակտվեց. նրա որդուն հասավ միայն երկու ցեղը, իսկ մյուս տասը ցեղերը կորսվեցին:

Այս պահից ես թվարկելու եմ միայն Հուդայի թագավորներին.

3. Ռոբովամ. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
4. Աբիամ (կամ՝ Աբիա). Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
5. Ասա. Նա ջերմեռանդորեն հետևեց Աստծուն: Նա ոչ միայն արդարությամբ վարվեց Աստծո առջև իր անձնական կյանքում, այլև համառորեն բացահայտեց և կործանեց կռապաշտությունը իր ժողովրդի մեջ: Նա վտարեց տղամարդ և կին տաճարային մարմնավաճառներին, հեռացրեց բոլոր կուռքերը և իր տատ Մաաքային զրկեց դիրքից, քանի որ նա Աստարովթի գարշելի արձան էր պատրաստել (տե՛ս Գ Թագ. 15.11-13): Նա նույնպես հեռացրեց բոլոր օտար զոհասեղանները և հեթանոսական բարձրավանդակները, կոտրատեց սրբազան արձանները, Աստարովթի կուռքերը և հեռացրեց հեթանոսական սրբատեղիներն ու խնկի սեղանները Հուդայի բոլոր քաղաքներից: Ըստ

էության, Ասան կոչ արեց Հուդայի ժողովրդին ապաշխարել իրենց շարունակական մեղքերից: Հրամայեց նրանց փնտրել Տիրոջը և հնազանդվել Նրա օրենքներին և պատվիրաններին (տե՛ս Բ Մնաց. 14.2-4):

Շարունակական մեղքը թողնելու նրա հրամանը դրական արդյունքներ ունեցավ. «Ասայի թագավորությունը որոշ ժամանակով խաղաղություն ունեցավ» (Բ Մնացորդաց 14.5): Այդ խաղաղ տարիներին նա կարողացավ պարսպապատ քաղաքներ կառուցել ամբողջ Հուդայում: Ոչ ոք չփորձեց պատերազմել նրա դեմ այդ ժամանակահատվածում: Ավելի ուշ Ասայի և Հուդայի վրա հարձակվեց մեկ միլիոն զինվորից բաղկացած մի բանակ, սակայն գրված է. «Նրանք կործանվեցին Տիրոջ և Նրա բանակի կողմից, և Հուդայի բանակն ահռելի քանակությամբ ավար տարավ» (Ա Մնացորդաց 14.13, NLT): Բացի այն, որ թշնամիները պարտվեցին, նրանց հարձակման արդյունքում Հուդան մեծ հարստություն ձեռք բերեց:

Մենք հստակ տեսնում ենք այն առաջնորդի օրինությունը, ով ոչ միայն անձամբ հնազանդվեց Աստծուն և թողեց գիտակցված ու շարունակական մեղքը, այլև կոչ արեց այն ժողովրդին, որին ինքն առաջնորդում էր, անել նույնը:

6. Հովսափատ. Նա նույնպես արդարությամբ վարվեց Աստծո առջև՝ թե՛ իր անձնական կյանքում, և թե՛ կառավարման մեջ: Նա կոչ արեց ժողովրդին ապաշխարել կռապաշտությունից (գիտակցված և շարունակական մեղքից): Նա երկրից արտաքսեց մնացած տղամարդ և կին մարմնավաճառներին (տե՛ս Գ Թագ. 22.47): Նա հեռացրեց հեթանոսական բարձրավանդակները և Աստարովթի արձանները Հուդայից (տե՛ս Բ Մնաց. 17.6): Իր թագավորության երրորդ տարում նա պաշտոնյաներ ուղարկեց՝ սովորեցնելու համար Հուդայի բոլոր քաղաքներում: Նրանք վերցրին Տիրոջ օրենքի օրինակները և գնացին Հուդայի բոլոր քաղաքները՝ սովորեցնելով ժողովրդին:

Ի՞նչ արդյունքներ ունեցավ Հովսափատի կառավարումը: «Այդ ժամանակ Տիրոջ վախն իջավ բոլոր շրջակա թագավորությունների վրա այնպես, որ նրանցից ոչ մեկը չէր ուզում պատերազմ հայտարարել Հովսափատի դեմ: Փղշտացիներից ոմանք պարգևներ բերեցին նրան... Եվ Հովսափատն ավելի ու ավելի զորավոր դարձավ» (Բ Մնացորդաց 17.10-12, NLT): Դրանից հետո գրված է. «Հովսափատը մեծ հարստություն

և համբավ ուներ» (Բ Մնացորդաց 18.1, NLT): Նրա և Հուդայի դեմ բանակներ հարձակվեցին, սակայն Աստված այնպես արեց, որ այդ բանակները ոչնչացրին իրար, և արդյունքում Հուդան հարուստ ավար վերցրեց:

Այդ ամենից հետո գրված է. «Եվ Տերը հաստատեց Հովսափատի իշխանությունը Հուդայի թագավորության վրա... Նա դարձավ շատ հարուստ և մեծ համբավ ունեցավ: Նա խորապես նվիրված էր Տիրոջ ճանապարհներին» (Բ Մնացորդաց 17.5,6, NLT):

Նա մեծ սխալ գործեց՝ դաշինք կնքելով կռապաշտ Աքաբ թագավորի ընտանիքի հետ: Քիչ էր մնում նա սպանվեր այդ պատճառով, և արդյունքում ապականվեց նրա որդու բնավորությունը: Հեու անունով մի մարգարե հանդիմանեց նրան. «Ինչո՞ւ ես օգնում անօրեններին և սիրում նրանց, ովքեր ատում են Տիրոջը» (Բ Մնացորդաց 19.1,2, NLT): Այնուամենայնիվ, Հովսափատը և Հուդան, ընդհանուր առմամբ, մեծապես բարգավաճեցին նրա հնազանդության արդյունքում, որն, անկասկած, ենթադրում էր պայքարը ժողովրդի շարունակական մեղքի (կռապաշտության) դեմ:

7. Հովրամ. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
8. Ոքոզիա. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
9. Գոթողիա (թագուհի). Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
10. Հովաս. Նրա մասին գրված է. «[Նա] վարվեց Տիրոջը հաճելի կերպով» (Բ Մնացորդաց 24.2, NLT): Այնուամենայնիվ, որպես երկրի ղեկավար՝ նա բոլորովին այլ կերպ վարվեց: Նա չկործանեց այն բարձրավանդակները, որոնցում մարդիկ կուռքերի էին պաշտում, այսինքն՝ կոչ չարեց այն ժողովրդին, որին ինքն առաջնորդում էր, ապաշխարել իրենց շարունակական մեղքից: Գրված է, որ որոշ ժամանակ անց «Հուդայի առաջնորդները... համոզեցին նրան լսել իրենց խորհրդին: Նրանք որոշեցին թողնել Տիրոջ տաճարը... և փոխարենը երկրպագեցին Աստարովթների արձաններին և կուռքերին (Բ Մնացորդաց 24.17,18, NLT):

Նա ենթարկվեց այն ժողովրդի ազդեցությանը, որի վրա ի՛նքը պետք է ազդեցություն թողներ: Գրված է, որ «այդ մեղքի պատճառով Հուդայի և Երուսաղեմի վրա աստվածային բարկություն եկավ» (խոսք 18, NLT): Նրա մոտ մի մարգարե եկավ և ասաց. «Ինչո՞ւ չեք հնազանդվում Տիրոջ պատվիրաններին և ինքներդ թույլ չեք տալիս ձեզ բարգավաճել» (խոսք 20, NLT): Եվ, ի վեր-

ջո, «այդ տարվա գարնանը... ասորիների բանակը եկավ Հովասի դեմ: Նրանք... սպանեցին երկրի բոլոր ղեկավարներին... [տարան] ավարը իրենց հետ՝ դեպի... Դամասկոս... Ասորիները հարձակվեցին փոքր բանակով: Տերը օգնեց նրանց պարտության մատնել Հուդայի շատ ավելի մեծ բանակը... Եվ Հովասի դեմ դատաստան արվեց» (խոսքեր 23,24, NLT): Նա վիրավորվեց ասորիների կողմից, իսկ հետո սպանվեց: Հովասի գահակալությունը պատկերում է ժողովրդի շարունակական մեղքին չհակառակվող առաջնորդի և նման դիրքորոշման զարհուրելի հետևանքները:

11. Ամասիա. Գրված է. «Ամասիան վարվեց Տիրոջը հաճելի կերպով, բայց ոչ՝ ամբողջ սրտով» (Բ Մնացորդաց 25.2, NLT): Նա «չկործանեց հեթանոսական սրբատեղիները, և ժողովուրդը դեռ զոհաբերություններ էր մատուցում ու խունկ էր ծխում դրանցում» (Դ Թագավորաց 14.4, NLT): Դրա հետևանքները բացասական էին նաև թագավորության համար: Ամասիան պարտության մատնեց Եդովմին և շատ հպարտացավ: Նրա հպարտությունը դրդեց նրան պատերազմ հայտարարել Իսրայելի թագավոր Հովասին: Հովասը զգուշացրեց նրան հեռու մնալ իր երկրից: Ամասիան չլսեց և մեծ պարտություն կրեց Իսրայելի բանակից: Նրան գերեցին: Իսրայելցիները քանդեցին 180 մետր Երուսաղեմի պարսպից և իրենց հետ տարան Տիրոջ տաճարի ամբողջ ոսկին, արծաթը և բոլոր անոթները: Իսրայելցիները վերցրին թագավորական պալատի գանձերը, ինչպես նաև՝ շատ գերիներ: Ամասիան սպանվեց (տե՛ս Բ Մնաց. 25.11-28): Կրկին, մենք տեսնում ենք, որ իրավիճակները բարենպաստ չէին այն առաջնորդի համար, որը արեց այն, ինչ հաճելի էր Տիրոջը, սակայն չընդդիմացավ իր հպատակների շարունակական մեղքին:

12. Ոզիա (կամ՝ Ազարիա). Նա վարվեց Տիրոջը հաճելի կերպով, և քանի դեռ նա փնտրում էր Տիրոջը, Աստված բարգավաճում էր տալիս նրան: Նա շատ ազդեցիկ և հաջողակ դարձավ: Թեև ոչինչ գրված չէ այն մասին, թե ինչ էր նա անում կռապաշտության վայրերի վերաբերյալ, մենք գիտենք, որ նա մահացավ որպես բորոտ՝ հպարտության պատճառով:

13. Հովաթամ. Այս թագավորի մասին շատ բան գրված չէ: Նա վարվում էր Տիրոջը հաճելի կերպով, սակայն ժողովուրդը շարունակում էր գնալ իր ապականված ճանապարհներով: Ցավոք, «Նա չկործանեց հեթանոսական սրբատեղիները, և ժողովուրդը դեռ զոհեր էր մատուցում ու խունկ էր ծխում դրանցում» (Դ Թագավորաց

15.35, NLT): Արդյունքում, «այդ օրերում Տերը ուղարկեց Ասորեստանի Ռասին թագավորին և Իսրայելի Փակեե թագավորին՝ Հուդայի վրա հարձակվելու համար» (Դ Թագավորաց 15.37, NLT):

14. Աքազ. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:

15. Եզեկիա. Եզեկիայի հայրը՝ Աքազը, շատ անօրեն թագավոր էր: Նա փակեց տաճարի դռները և լիովին վերջ տվեց ճշմարիտ երկրպագությանը: Եզեկիան առաջին հերթին բացեց Տիրոջ տաճարի դռները, մաքրեց բոլոր անմաքուր դարձած անոթները և վերանորոգեց տաճարի շենքը: Նրա մասին գրված է. «Նա վարվեց Տիրոջը հաճելի կերպով, ինչպես որ նրա նախահայր Դավիթը: Նա հեռացրեց հեթանոսական սրբատեղիները, կործանեց սրբազան սյուները և կոտրատեց Աստարովթի արձանները: Նա փշրեց այն պղնձե օձը, որը պատրաստել էր Մովսեսը, որովհետև Իսրայելի ժողովուրդը զոհեր էր մատուցում դրան» (Դ Թագավորաց 18.3,4, NLT): Դրանից հետո նա կրկին հաստատեց Տիրոջ Զատկի տոնակատարությունը: Դա խոշոր իրադարձություն էր, և երբ այն ավարտվեց, մարդիկ վերադարձան «Հուդայի, Բենիամինի, Եփրեմի և Մանասեի բոլոր քաղաքները, և նրանք կործանեցին բոլոր սրբազան սյուները, կոտրատեցին բոլոր Աստարովթի արձանները և հեռացրին հեթանոսական սրբատեղիներն ու զոհասեղանները» (Բ Մնացորդաց 31.1, NLT):

16. Եզեկիայի մասին գրված է. «Նա հավատարիմ մնաց Տիրոջն ամեն ինչում և զգուշորեն հնազանդվեց բոլոր պատվիրաններին, որոնք Տերը տվել էր Մովսեսին: Եվ Տերը Նրա հետ էր, և Եզեկիան հաջողակ էր իր բոլոր գործերում» (Դ Թագավորաց 18.6,7, NLT): Ասորիները հարձակվեցին նրա երկրի վրա, բայց ի վերջո Տիրոջ հրեշտակը գնաց ասորիների ճամբարը և 185.000 զինվոր սպանեց: Քանի որ Եզեկիան պայքարեց իր հպատակների գիտակցված և շարունակական մեղքի դեմ, թե՛ ինքը, թե՛ իր ժողովուրդը մեծ բարօրություն ունեցան:

17. Մանասե. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:

18. Ամոն. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:

19. Հովսիա. Նա սկզբունքայնորեն հնազանդ թագավոր էր՝ թե՛ անձնական կյանքում, թե՛ կառավարման մեջ: Նրա մասին գրված է. «Թագավորը կարդաց [Երուսաղեմի և Հուդայի ամբողջ ժողովրդին] ամբողջ Ուխտի Գիրքը, որը գտնվել էր Տիրոջ տաճարում» (Դ Թագավորաց 23.2, NLT): Դրանից հետո նա նորոգեց ուխտը

և կարգադրեց քահանաներին հեռացնել Տիրոջ տաճարից բոլոր առարկաները, որոնք օգտագործվում էին Բահաղին, Աստարովթին և երկնային բոլոր զորքերին երկրպագելու համար: Նա այրեց դրանք և ցրեց դրանց մոխիրը կռապաշտների գերեզմանների վրա:

Այս թագավորն այնքա՜ն բան արեց՝ գիտակցված և շարունակական անհնազանդությունից ազատվելու համար: Ես շրջանակով նշեցի բոլոր հատվածները, որոնցում գրված է, որ Հովսիան «դուրս հանեց, այրեց, դադարեցրեց, հանեց (կամ՝ հեռացրեց), փշրեց, մոխիր դարձրեց, քանդեց, պղծեց (կամ՝ կործանեց)», և մնացած բոլոր բառերը, որոնք օգտագործվում էին Հուդայում՝ գիտակցված մեղքի դեմ պայքարելու վերաբերյալ: Միայն Դ Թագավորաց 23-րդ գլխում քսանչորս այսպիսի դեպք է նշված: Այս թագավորի մասին գրված է. «Նախկինում երբեք չէր եղել Հովսիայի պես թագավոր, որը դարձավ Տիրոջը իր ամբողջ սրտով, անձով և զորությամբ՝ հնազանդվելով Մովսեսի բոլոր օրենքներին: Եվ նրանից հետո նրա նման թագավոր այլևս չեղավ» (Դ Թագավորաց 23.25, NLT): Թե՛ նա, թե՛ ժողովուրդը բարօրություն ունեին նրա կենդանության օրոք:

20. Հովաքազ. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
21. Հովակիմ. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
22. Հովաքին. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:
23. Սեդեկիա. Արդարությամբ չվարվեց Տիրոջ առջև:

Ամփոփենք այս թագավորների պատմությունները: Երկարատև բարօրություն ունեցան այն առաջնորդները, որոնք և՛ աստվածահաճո կյանք էին վարում, և՛ պայքարում էին իրենց հպատակների շարունակական մեղքերի (կռապաշտության) դեմ: Իրավիճակը նույնքան բարենպաստ չէր, երբ առաջնորդն աստվածապաշտ կյանք էր վարում, սակայն չէր հակառակվում ժողովրդի մեղքերին:

Այսօր եկեղեցին պետք է դաս քաղի այս օրինաչափությունից: Մենք դժվարությունների կբախվենք, եթե ընդամենը խնդրենք առաջին անգամ եկած մարդկանց՝ աղոթել մեղավորի աղոթքը՝ օգտագործելով այն որպես ծածկոց, և ճշմարիտ ապաշխարության կոչ չանենք նրանց: Ի՞նչ, եթե մեր «նորադարձները» չեն էլ պատրաստվում թողնել իրենց մեղքերը: Նշանակում է՝ մեր եկեղեցական համայնք ենք հրավիրում կռապաշտների:

Մենք՝ առաջնորդներս, կարող ենք աստվածապաշտ լինել մեր անձնական կյանքում, սակայն, եթե չհանդիմանենք «մեղքի բարձրավանդակները» մարդկանց կյանքերում, կլինեն հետևանքներ՝ նման այն բանին, ինչ կատարվեց վերևում թվարկված թագավորների հետ: Հնա-

րավոր է, որ մենք կարճատև հաջողության հասնենք, սակայն բարեհաջող ավարտ չենք ունենա: Մի քանիսը այն թագավորներից, որոնք չէին պայքարում իրենց ժողովրդի անհնազանդության դեմ, սկզբնական շրջանում հաջողակ էին, սակայն, ի վերջո, հարկադրված էին բախվել իրենց թերի առաջնորդության հետևանքներին:

Եթե մենք ընտրենք Ավետարանը տարածելու հակառակություններ չառաջացնող ուղին, մեզ կշրջապատենք կռապաշտ մարդկանցով, որոնք հավատում են, որ ճիշտ դիրք ունեն Աստծո առջև: Ըստ էության, մենք խոցելի կդարձնենք մեր եկեղեցական համայնքը հոգևոր կրիպտոնաքարի համար:

գործնական քայլ

Մարդիկ հեշտորեն կարող են կորցնել ընդհանուր պատկերը՝ մանրուքներով կլանվելու պատճառով: Կա մի ասացվածք. «Մենք կորցնում ենք անտառը՝ փորձելով փրկել ծառերը»: Սա կարող է տեղի ունենալ նաև Աստծո Խոսքն ուսումնասիրելիս, հատկապես եթե մենք դիտարկում ենք մեծ պատմական փուլեր: Այնուամենայնիվ, թեմատիկ և ժամանակագրական ուսումնասիրությունը, ինչպես այս գլխում, ցույց է տալիս մեզ այնպիսի բաներ, որոնք այլ կերպ չէինք նկատի: Մենք տեսնում ենք ընդհանուր պատկերը:

Իսրայելի և Հուդայի պատմության ընդհանուր պատկերն այն է, որ Աստված բարգավաճում էր տալիս առաջնորդներին, երբ նրանք անում էին ավելին, քան իրենց կյանքերը շտկելը, և իրական պատասխանատվություն էին ստանձնում բոլոր բնագավառներում, որոնցում Աստված իշխանություն էր տվել իրենց:

Միգուցե դուք թագավոր կամ թագուհի չեք: Միգուցե դուք նույնիսկ տնօրեն կամ ղեկավար չեք ձեր աշխատավայրում: Այնուամենայնիվ, ունեք ազդեցության շրջանակ, որում Աստված իշխանություն է տվել ձեզ: Այն, թե որքանով պատասխանատվություն կստանձնեք ոչ միայն ձեր անձնական կյանքում, այլև ձեր ազդեցության շրջանակում, կորոշի, թե ինչպես Աստված կգործի ձեզ համար: Խնդրե՛ք Աստծուն, որ ցույց տա ձեր ազդեցության շրջանակը, նաև իմաստություն տա ձեզ՝ սովորեցնելով, թե ինչպես պատասխանատվություն ստանձնեք և արդարություն հաստատեք դրանում: Գրի՛ առեք այն, ինչ Նա ասում է ձեզ, իսկ հետո ծրագրե՛ք, թե ինչպես եք անելու դա:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԲԱԺԻՆ 4

22

ԱՌԵՐԵՍՈՒՄ

Եկեք սկսենք կրիպտոնաքարը կործանելու ընթացքը՝ թե՛ անհատապես, թե՛ որպես եկեղեցական համայնք: Նախ և առաջ «առերեսվենք» այն հետևանքներին, որոնք առաջանում են, երբ անտեսում ենք այս մահացու երևույթը:

Երբ սովորում էի միջին դպրոցում, մենք մասնակցեցինք թմրանյութերի մասին պարտադիր երկօրյա դասընթացի, որի ժամանակ մեզ ներկայացնում էին թմրանյութերի օգտագործման զարհուրելի հետևանքները: Քրիստոսին հանդիպելուց առաջ, այն տարիների ընթացքում, երբ ես երեկույթների մշտական մասնակից էի, հեռու էի մնում ամեն տեսակի թմրանյութերից. պատճառը վախն էր դրանց հետևանքներից:

Անկասկած, գոյություն ունի անառողջ վախ, որից Հիսուսն ազատեց մեզ: Այնուամենայնիվ, գոյություն ունի նաև աստվածային երկյուղ՝ նման այն զգացումին, որը ես ունեցա դպրոցում, երբ իմացա թմրանյութերի մասին: Այս երկյուղը պահում է մեզ այն ամենից, ինչը կարող է խլել մեր կյանքը: Աստծո Խոսքում գրված է. «Քանի դեռ Նրա հանգստի մեջ մտնելու խոստումը մնում է, եկեք վախենանք, որ չլինի թե ձեզնից մեկը զրկվի դրանից» (Եբրայեցիների 4.1, NKJV), և «Տիրոջ վախով մարդը կհեռանա չարից» (Առակաց 16.6):

Այս գլխում կրկին կխոսեմ քրիստոնյա առաջնորդների մասին: Այնուամենայնիվ, այս ուղերձը պետք է զգոնություն հաղորդի բոլորիս, քանի որ հավատացյալը «գլուխ» է, «ոչ թե՝ պոչ» (Երկրորդ Օրինաց 28.13): Մենք կանչված ենք՝ լինելու Նրա թագավորության դեսպանները, ինչը կարևոր պաշտոն է:

Արդյո՞ք մենք մտածել ենք մեր ծառայության մարտավարության մասին՝ Սուրբ գրքի լույսի ներքո: Ինչո՞ւ ենք վարանում մեղքի բարձրավանդակներին հակառակվելու հարցում: Մարդիկ, ովքեր փափագում են ճանաչել Աստծուն, մեզ են նայում, որպեսզի լսեն ճշմարտություն: Սակայն մենք չենք խոսում այն մասին, ինչը խանգարում է նրանց անկեղծ հարաբերություններ ունենալ Աստծո հետ: Մի՞թե մենք պաշտպանում ենք նրանց: Իսկ չե՞նք մտածել այն մասին, որ ապագայի տեսանկյունից՝ մենք վնասում ենք Աստծուն փնտրողներին: Ինչո՞ւ մենք պետք է խաբենք այն մարդկանց, ովքեր գալիս են՝ լսելու հավիտենական կյանքի մասին:

Նրանց հետ կկատարվի նույնը, ինչ կատարվեց Անջելայի հետ: Քանի որ Անջելային չէին ասել ճշմարտությունը հենց սկզբից, նրա ամուսնությունը հայտնվեց անկայուն և դժվարին վիճակում: Ինչո՞ւ ենք մենք ուզում, որ մարդիկ մտածեն, որ կարող են բերել շարունակական մեղքն իրենց և Հիսուսի հարաբերությունների մեջ: Դա անհնար է: Հնարավո՞ր է, որ մենք առաջարկում ենք այնպիսի փոխհարաբերություն, որն իրականում գոյություն չունի: Հնարավո՞ր է, որ մենք կեղծ փրկություն ենք առաջարկում:

Եկեք նայենք այս հարցին բոլոր կողմերից: Մենք կտեսնենք, թե ինչ հետևանքներ դա կունենա Աստծուն փնտրող մարդկանց համար, այն առաջնորդների համար, որոնք չեն հիշատակում կրիպտոնաքարը, և, վերջապես, եկեղեցական համայնքի համար: Ապագայի տեսանկյունից, երեք խմբերի համար էլ հետևանքները կործանարար են:

Աստծուն փնտրողները

Մենք պետք է հիշենք, որ Դատաստանի օրը Հիսուսի մոտ կգան ոչ թե մի քանիսը, այլ՝ *շատերը*, ովքեր ի սրտե հավատալու են, որ կարող են մուտք գործել Աստծո թագավորություն, սակայն կլսեն հետևյալը. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթեոս 7.23):

Ովքե՞ր են այս մարդիկ: Նրանք ոգեկոչնե՞ր են, պատկանում են այլ կրոնների՞, թե՞ գտնվում են աղանդների թակարդում: Եթե ուսումնասիրենք Հիսուսի խոսքերը, կտեսնենք, որ նրանք անմիջապես մեր միջև են. նրանք հաճախում են մեր եկեղեցիներ և դավանում են, որ քրիստոնյա են: Նա ասում է. «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթեոս 7.21): Հիսուսը խոսում է այնպիսի մարդկանց մասին, ովքեր պնդում են, որ Հիսուսն է Տեր, ոչ թե Ջոզեֆ Սմիթը, Մու-

համմեդը, Բուդդան, Հարե Կրիշնան, Կոնֆուցիոսը, Ռան, Սիկխը կամ ցանկացած այլ կեղծ մարգարե կամ աստված: Ո՛չ, այս մարդիկ, որոնց թույլ չտրվեց մուտք գործել Երկինք, Հիսուս Քրիստոսին անվանում են իրենց «Տերը» և անում են դա մեծ ջերմեռանդությամբ:

Ինչո՞ւ է «Տեր» բառը կրկնակի օգտագործվում այս խոսքում: Կրկին, ինչպես արդեն նշվել է, որևէ բառի կամ արտահայտության կրկնությունն Աստվածաշնչում պատահական չէ: Այնուամենայնիվ, այս միջոցը նշանակում է ոչ միայն շեշտադրում, այլև ուժգին զգացմունքներ:

Օրինակ, երբ Դավիթ թագավորն իմացավ, որ Հովաբի բանակը սպանել էր իր որդուն, նա խիստ զգացմունքորեն արձագանքեց դրան: «Եվ թագավորը ծածկեց իր երեսը, և *մեծ ձայնով աղաղակեց* թագավորը. «Որդի՛ս, Աբիսողո՛մ, Աբիսողո՛մ, որդի՛ս, որդի՛ս» (Բ Թագավորաց 19.4): Ամենայն հավանականությամբ, Դավիթը չկրկնեց «որդիս» բառը. նրա աղաղակն այնքա՛ն վշտալի էր, որ հեղինակը երկու անգամ գրեց այդ բառը, որպեսզի ընթերցողը հասկանա նրա զգացմունքները:

Նույն կերպով, Տերը ցույց է տալիս, որ այդ մարդիկ ուժգին զգացմունքներ ունեին Իր հանդեպ: Նրանք ոչ միայն համաձայն էին այն վարդապետությանը, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, այլև զգացմունքորեն ներգրավված էին և ջերմեռանդ էին իրենց հավատքով: Խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր ոգևորությամբ են վերաբերվում քրիստոնյա լինելուն և, ամենայն հավանականությամբ, խանդավառությամբ խոսում են իրենց հավատքի մասին:

Նրանք ոչ միայն լիարժեք կերպով սատարում են Քրիստոսի ուսմունքները, այլև ներգրավված են Նրան ծառայելու մեջ.

> «Ես կարող եմ տեսնել դա. Վերջին դատաստանին հազարավորները վեհ կեցվածքով մոտենում են Ինձ և ասում. «Տե՛ր, մենք քարոզում էինք Ուղերձը. մենք հանում էինք դևերին. բոլորը խոսում էին այն նախագծերի մասին, որոնք մենք ստացել էինք Աստծուց»» (Մատթեոս 7.22, MSG):

«Ուղերձ» շրջասությունը ցույց է տալիս, որ այդ մարդիկ դիտորդներ չէին: Նրանք անմիջապես ներգրավված էին իրենց եկեղեցիների աշխատանքի մեջ կամ աջակցում էին այդ աշխատանքին: Նրանք նույնպես հայտնի էին որպես Ավետարանին հավատացող մարդիկ. «Մենք քարոզում էինք Ուղերձը»: Ըստ էության, նրանք փոխում էին մարդկանց կյանքերը:

Այս շրջասության ենթարկված թարգմանության մեջ գրված է «հազարավորները» բառը, սակայն գրեթե բոլոր թարգմանություններն օգտագործում են «շատերը» բառը: Հունարենում այս բառը «պոլյուս»-ն է, որի սահմանումն է՝ «մեծ թիվ, քանակ և չափ ունեցող»: Այս բառը հաճախ է օգտագործվում «մեծ մասամբ» իմաստով: Ամեն դեպքում, Հիսուսը չի խոսում մարդկանց փոքր խմբի մասին, այլ՝ ստվար զանգվածի, և հնարավոր է՝ մեծամասնության մասին:

Ամփոփենք սա. Հիսուսը խոսում է այն մարդկանց մասին, ովքեր հավատում են Ավետարանի ուսմունքներին. նրանք Տեր են անվանում Հիսուսին, զգացմունքորեն ներգրավված են, տարածում են Ավետարանի ուղերձը և քրիստոնեական ծառայության մեջ են: Մենք հեշտորեն կանվանենք նրանց ճշմարիտ քրիստոնյաներ: Ուրեմն, ինչո՞վ են նրանք տարբերվում ճշմարիտ հավատացյալներից: Հիսուսն ասում է մեզ. «Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց՝ երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթեոս 7.23):

Այս խոսքի բանալի արտահայտությունը «անօրինություն գործելն» է: Նախ, ի՞նչ է անօրինությունը: Հունարենում այն «անոմիա» բառն է: «Թայերի հունարեն բառարանը» սահմանում է այն որպես «առանց օրենքի [լինելու] վիճակ՝ օրենքին անտեղյակ լինելու կամ այն խախտելու պատճառով»: Պարզ ասած՝ անօրեն մարդը չի ենթարկվում Աստծո Խոսքի իշխանությանը: Նա շարունակաբար մեղանչում է՝ առանց ճշմարիտ ապաշխարության: Այսպիսի մարդը մերօրյա կռապաշտ է:

Այսպիսով, անօրինությունը *կրիպտոնաքարի* ձևերից մեկն է:

Այս տղամարդիկ և կանայք չեն սայթաքում *ժամանակ առ ժամանակ*. նրանք շարունակաբար շրջանցում, անտեսում և անարգում են Աստծո Խոսքը և չեն հնազանդվում դրան: Մեղսալի վարքը դառնում է նրանց կենսաոճը: Նրանցից ոմանք համոզված են, որ որոշ սուրբգրային հատվածներ այլ բան են նշանակում, մյուսները մտածում են, որ դրանք չեն վերաբերում մեր օրերին, և մեծամասնությունը հավատում է, որ ծածկված է ոչ սուրբգրային շնորհքով:

Ցավալի է, բայց ես համոզված եմ՝ նրանք ապրում են մեղքի մեջ մասամբ այն պատճառով, որ նրանց առաջնորդները երբեք չեն հանդիմանել նրանց կենսաոճը և ճշմարիտ ապաշխարության կոչ չեն արել: Ոչ ոք չի ասել նրանց, որ անկարելի է իրենց կուռք-սիրեկաններին մտցնել Հիսուս Քրիստոսի հետ ունեցած ուխտի հարաբերությունների մեջ: Եթե նրանք իսկապես շնորհքով փրկված լինեին, ոչ միայն կխորշեին մեղքի մասին մտքերից, այլև որոշում կկայացնեին թողնել գիտակցված և շարունակական մեղքը: Նրանք կխաչեին իրենց մարմինը՝ կրքերով

և ցանկություններով, և կիետևեին աստվածային բնավորությանն ու պտղաբերությանը: Ճշմարիտ հավատացյալն այսպիսին է:

Հետաքրքրական է նշել, որ Հիսուսը հայտարարեց. «Երբեք ձեզ չե՛մ ճանաչել»: *«Ճանաչել»* բառը հունարեն «գինոսկո»-ն է, որը նշանակում է «մտերմորեն ճանաչել»: Այդ մարդիկ երբեք չեն ունեցել իրական հարաբերություններ Նրա հետ: Թեև նրանք «Տեր» են անվանում Հիսուսին, նրանց համար դա պարզապես տիտղոս է, քանի որ չեն հնազանդվում Նրան: Աստծո հետ իրական շփում ունենալու ապացույցն այն է, որ մարդը պահում է Նրա Խոսքը.

> «Եվ սրանով գիտենք, որ ճանաչեցինք Նրան, եթե Նրա պատվիրանները պահենք: Ով որ ասում է, թե «Ճանաչեցի Նրան», և Նրա պատվիրանները չի պահում, ստախոս է, և ճշմարտությունը չկա նրանում» (Ա Հովհաննես 2.3,4):

Այս պնդումը լիովին համահունչ է այն բանին, թե ինչպես Հիսուսը սկսեց այս հատվածը. «Դուք կարող եք ճանաչել մարդկանց նրանց գործերով» (Մատթեոս 7.20, NLT): Գործեր ասելով՝ Հիսուսը նկատի չունի քրիստոնեական ծառայությունը, Ավետարանը քարոզելը կամ եկեղեցի հաճախելը, քանի որ նրանց, ում թույլ չի տրվելու Երկինք մտնել, ունենալու են այս հատկանիշները: Այսօր շատերն Աստծո զավակ են համարում այն մարդուն, ով Տեր է դավանում Հիսուսին, հավատում է Նրա ուսմունքներին, զգացմունքորեն ներգրավված է և գործուն մասնակցություն ունի քրիստոնեական ծառայության մեջ: Սակայն մենք հստակ տեսնում ենք Հիսուսի խոսքերից, որ գոյություն ունեն այլ հատկանիշներ, որոնցով կարելի է բնորոշել ճշմարիտ հավատացյալին:

Թույլ տվեք ասել հետևյալը. անկասկած, բոլոր այս հատկանիշները բնորոշ են ճշմարիտ հավատացյալներին: Ոչ ոք չի կարող ճշմարիտ հավատացյալ լինել՝ առանց սրանց: Այնուամենայնիվ, միայն այս հատկանիշներն ունենալը չի նշանակում, որ մարդն իրականում Աստծո զավակ է: Որոշիչ գործոնը հետևյալն է. արդյո՞ք նա ապաշխարել է իր գիտակցված և շարունակական մեղքերից, և արդյո՞ք նա ջերմեռանդորեն ձգտում է հնազանդվել Նրան: Գոյություն ունի մի անսխալական միջոց՝ սա որոշելու համար. *«Նրանք համարում են Հիսուսի «այլևս չմեղանչես» բառերը ընտրովի՞, թե՞ պարտադիր»* (տե՛ս Հովհ. 5.14):

Քարոզիչները

Այժմ դիտարկենք երկարաժամկետ հետևանքները առաջնորդների և Ավետարանի քարոզիչների համար: Սուրբ գիրքը զգաստացնող դատաստան է հռչակում այն մարդկանց դեմ, որոնց վստահվել է Ավետարանը, բայց որոնք չեն քարոզում ճշմարտության հակառակություն առաջացնող կողմերը: Ուշադրությա՛մբ կարդացեք այս զգուշացումը, որն Աստված տալիս է Իր ավետաբերներին.

> «Եթե Ես *զգուշացնեմ* անօրեններին՝ ասելով. «Դուք ենթակա եք մահապատժի», բայց դու չփոխանցես այդ *զգուշացումը*, նրանք կմահանան իրենց մեղքերի մեջ: Իսկ ես *պատասխանատվության կկանչեմ քեզ* նրանց մահվան համար: Եթե դու *զգուշացնես* նրանց, և նրանք հրաժարվեն ապաշխարել և շարունակեն մեղանչել, նրանք կմահանան իրենց մեղքերի մեջ: Բայց դու *կփրկես քեզ*, որովհետև դու հնազանդվեցիր Ինձ: Եթե արդարները հեռանան իրենց արդար վարքից և անտեսեն այն արգելքները, որոնք Ես դնում եմ նրանց ճանապարհին, նրանք կմահանան: Եվ եթե դու *չզգուշացնես* նրանց, նրանք կմահանան իրենց մեղքերի մեջ: Նրանց արդար գործերից ոչ մեկը չի հիշվի, և Ես *պատասխանատվության կկանչեմ քեզ* նրանց մահվան համար: Բայց եթե դու *զգուշացնես* արդարներին չմեղանչել, և նրանք լսեն քեզ և չմեղանչեն, նրանք կապրեն, և դու նույնպես *կփրկես քեզ»* (Եզեկիել 3.18-21, NLT):

Ուշադրություն դարձրեք, թե որքան հաճախ է վերը նշված խոսքերում օգտագործվում «զգուշացնել» բառը: Թույլ տվեք անկեղծորեն հարցնել հովիվներին, առաջնորդներին և բոլոր հավատացյալներին, քանի որ բոլորիս է հանձնարարված հասնել կորսվածներին և սիրով հանդիմանել մեղավորներին: Մի՞թե ուզում եք հաշվետու լինել այն մարդկանց համար, որոնց դուք համոզել եք, որ իրենք ունեն արդար դիրք Աստծո առջև, այնինչ, իրականում այդպես չէ, քանի որ դուք *չեք զգուշացրել* նրանց շարունակական մեղքը թողնելու մասին: Նրանք սխալմամբ համարում են, որ փրկված են, սակայն *զգուշացումներ* չստանալու պատճառով շարունակում են ապրել մեղքի մեջ, և Դատաստանի օրը կլսեն. «Ինձնից դե՛ն գնացեք»:

Միգուցե հենց սա՞ է պատճառը, որ Ավետարանը պետք է քարոզել՝ «զգուշացնելով ամեն մարդու և սովորեցնելով ամեն մարդու ամեն

իմաստությամբ, որ կարողանանք ամեն մարդու կատարյալ կանգնեցնել Քրիստոս Հիսուսում» (Կողոսացիների 1.28, NKJV): Մենք պետք է ոչ միայն սովորեցնենք, այլև՝ *զգուշացնենք:*

Մտածեք, թե ինչ ասաց Աստված վերևում բերված խոսքերում. «Ես *պատասխանատվության կկանչեմ քեզ* նրանց մահվան համար»: Դուք մտածե՞լ եք այն մասին, որ մեր անփութության հետևանքները հավիտյան մեր առջև են լինելու: Եսային գրում է, թե ինչ է լինելու նոր երկնքի և նոր երկրի ժամանակ.

> «Ամբողջ մարդկությունը կգա երկրպագելու Ինձ շաբաթ առ շաբաթ և ամիս առ ամիս: Եվ երբ նրանք դուրս գան, կտեսնեն նրանց մահացած մարմինները, որոնք ապստամբել են Իմ դեմ: Որովհետև որդերը, որոնք լափում են նրանց, երբեք չեն մահանա, և կրակը, որն այրում է նրանց, երբեք չի հանգչի: Բոլոր նրանց կողքով անցնողները կնայեն նրանց բացարձակ զարհուրանքով» (Եսայի 66.23,24, NLT):

Մի՞թե կարծում եք, որ «պատասխանատվության կանչվածները» պարզապես կմոռանան այն մասին, որ այդ մարդիկ վառվում են կրակի լճում, քանի որ իրենք չեն ցանկացել զգուշացնել նրանց:

Եթե մեր փիլիսոփայությունը պարզապես այնպիսին է, որ ընդունենք մարդկանց՝ ինչպիսին որ կան, առաջարկենք նրանց աղոթել փրկության աղոթքը՝ առանց ապաշխարության, և Երկինք գնալու կեղծ հույս տանք, ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն կլինի հետևանքը: Մենք կեղծ ապահովություն ենք տալիս մեր ունկնդիրներին և նրանց սրտից հեռացնում ենք ճշմարտապես ապաշխարելու ցանկությունը: Ինքնին հասկանալի է, որ մենք «բացարձակ զարհուրանքով» ենք նայելու նրանց, ում մոլորեցրել ենք:

Հիշե՛ք Պողոսի ուշագրավ խոսքերը. «Եթե ինչ-որ մեկը հավիտենական մահ կրի, *դա իմ մեղավորությունը չէ*, որովհետև ես չվարանեցի ազդարարելուց այն ամենը, ինչ Աստված ուզում է, որ դուք իմանաք» (Գործք 20.26,27, NLT): Պողոսը քաջատեղյակ էր այն մասին, ինչ Աստված ասաց Եզեկիելի միջոցով յուրաքանչյուրին, ով քարոզում է Իր Խոսքը: Եթե մենք չքարոզենք Նրա ճանապարհները, պատասխանատվության կկանչվենք. կատարվածը կլինի մեր մեղավորությունը: Միգուցե հենց սա է պատճառը, որ Հակոբոս առաքյալը գրում է մեզ.

> «Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, ձեզնից ոչ բոլորն են, որ պետք է ուսուցիչներ դառնան եկեղեցում, որովհետև

մենք՝ սովորեցնողներս, ավելի խստորեն կդատվենք» (Հակոբոս 3.1, NLT):

Այս խոսքերը գրված չեն Աստվածաշնչում, որ մենք անտեսենք կամ թեթևորեն վերաբերվենք դրանց: Աստված աղերսում է մեզ, որ չթաքցնենք Նրա խոսքերը և թեթևորեն չվերաբերվենք շարունակական մեղքից ապաշխարելու կոչին: Նա ասում է սա թե՛ հանուն առաջնորդի, թե՛ հանուն Աստծուն փնտրողի: Նա սիրում է մեզ, բայց Նա սուրբ Աստված է և չի կարող հանդուրժել մեղավոր բնությունն Իր ներկայության մեջ: Այնպես որ, Նա ելք է պատրաստել. Նա մեծ գին է վճարել, որպեսզի և՛ փրկի, և՛ զորություն տա մեզ, որ ազատ լինենք մեղքից: Ուրեմն, ինչպե՞ս կխուսափենք դատաստանից, եթե չսովորեցնենք այս մեծ փրկության մասին և չընդունենք այն:

Մի՞թե արժե անուշադրության մատնել այն ավետարանչական կոչը, որը Նոր կտակարանը հստակ պահանջում է: Նոր կտակարանի վերջին գրքի եզրափակիչ խոսքերում գրված է. «Եթե մեկն այս գրքի մարգարեության խոսքերից բան պակասեցնի, Աստված կպակասեցնի նրա բաժինը Կյանքի գրքից և Սուրբ քաղաքից և այս Գրքում գրվածներից» (Հայտնություն 22.19): Ինչպե՞ս կարող ենք անտեսել այս զգուշացումը: Ինչպե՞ս կարող ենք չասել այն մարդկանց (ովքեր ցանկանում են լսել ճշմարտությունը մեզնից), որ առաջին քայլը դեպի փրկությունը՝ մեղքերից ապաշխարելն է:

Մի՞թե մենք կարծում ենք, որ գիտենք ավելին, քան Աստված: Որ ավելի կարևոր է այնպես անել, որ նորեկները եկեղեցի հաճախեն, և միգուցե հետագայում նրանք համոզվեն, որ պետք է թողնեն մեղքը: Այնուամենայնիվ, եթե մարդուն արդեն ասել են, որ ինքը փրկված է, որովհետև ինքն աղոթել է ապաշխարության աղոթքը և ընդունվել է «ընտանիքի» մեջ, ինչո՞ւ նա պետք է ապաշխարելու անհրաժեշտություն զգա դրանից հետո: Չէ՞ որ նա արդեն «ընդունված է» և «ծածկված է շնորհքով»:

Չարլզ Գ. Ֆիննին մեծ ավետարանիչ էր: Նրա ծառայությունն այնքա՛ն հզոր էր, որ ավելի քան մեկ անգամ ամբողջ գյուղաքաղաքների (իսկ մեկ անգամ՝ Նյու Յորք նահանգի Ռոչեստեր քաղաքի) ամենօրյա գործունեությունը դադարում էր՝ նրա հավաքույթների ազդեցության պատճառով: Երբեմն նա մի քանի երեկո քարոզում էր մեղքերից ապաշխարելու մասին և հորդորում էր մարդկանց ընդունել փրկությունը այնպես, որ ներկաները հազիվ էին նստած մնում աթոռներին: Եվ ամբողջ այդ ընթացքում նա դեռ չէր աղոթում փրկության համար: Ի վերջո, մի քանի օր անց, նա նման մի բան ասաց. «Եթե դուք ցանկա-

նում եք քրիստոնյա դառնալ, մենք կունենանք «հարցման անկյուն» այսօրվա հավաքույթից հետո»:

Նրա հավաքույթներին փրկվում էին հազարավոր մարդիկ, և պատմությունը ցույց է տալիս, որ նրա միջոցով դարձի եկածների ավելի քան իննսուն տոկոսը հավատարիմ էր մնում հավատքին: Այսօր նմանատիպ վիճակագրությունները շատ ավելի ցածր ցուցանիշներ ունեն: Նա մեծ հաջողություն ուներ, քանի որ վարվում էր համաձայն Նոր կտակարանի ուսուցման. նա գիտեր, որ լավագույն մեթոդները գտնվում են Աստծո Խոսքում:

Եկեղեցական համայնքը

Այժմ հասկանալի է դառնում, թե որքան կարևոր է այն ամենը, ինչի մասին խոսում էինք այս գրքի սկզբում: Եթե մենք փրկություն առաջարկենք այն մարդկանց, ովքեր շարունակում են մեղանչել, մենք խոցելի կդարձնենք մեր եկեղեցական համայնքները մեղքի թթխմորի համար: Միտումնավոր գործվող մեղքն արագորեն տարածվում է և ազդում թե՛ անհատների, թե՛ եկեղեցական համայնքների վրա, ինչպես որ կրիպտոնաքարը՝ Սուպերհերոսի վրա:

Մեղքին չհակառակվելու պատճառով մենք տկարացրել ենք մեր եկեղեցիները և բնակավայրերը, և արդյունքում մեր գյուղերը, քաղաքները և պետությունները չեն տեսնում Աստծո փառքը: Առաջին եկեղեցին փոխում էր ամբողջ գյուղեր, քաղաքներ, նույնիսկ տարածաշրջաններ՝ շնորհիվ Աստծո փառքի զորության: Ինչո՞ւ մենք դեռ չենք փոխել մեր համայնքները քսանմեկերորդ դարում: Մեր տրամադրության տակ գտնվող տեխնոլոգիական միջոցները, որոնցով կարող ենք հասնել մարդկանց, շատ ավելի զարգացած են, քան Առաջին եկեղեցու օրերում:

Ինչո՞ւ արհեստական վիժեցումը, շնությունը, սեռական անբարոյությունը, համասեռամոլությունը և գենդերային խառնաշփոթը սկսեցին տարածվել Ամերիկայում և Արևմուտքի մյուս երկրներում: Պատճառն այն չէ, որ մեր հասարակություններն ավելի առաջադեմ են դառնում: Անօրինության ավելացման նույն միտումը նկատվում էր չորրորդ և հինգերորդ դարերում, երբ եկեղեցին կորցրեց ջերմեռանդությունը: Երբ քրիստոնեությունը սկսեց ճանաչում ստանալ հռոմեական հասարակության մեջ, եկեղեցին նմանվեց այդ հասարակությանը: Եկեղեցու զորությունը սկսեց մարել, մինչև որ այն չընկղմվեց մի ժամանակաշրջանի մեջ, որը ներկայումս հայտնի է որպես Խավար դարեր:

Ոչ մի դեպքում չեմ ցանկանում կրկին նման բան տեսնել և գիտեմ, որ շատերն են համամիտ ինձ հետ: Մենք չենք դադարի հռչակել ամբողջ ճշմարտությունը՝ սիրով և գթասրտությամբ:

Խնդրո՛ւմ եմ, միացե՛ք և որոշո՛ւմ կայացրեք, որ ազդարարելու եք ճշմարտությունը, անկախ նրանից՝ այն տարածված և ընդունվա՞ծ է, թե՞ ոչ: Խոսե՛ք Աստծո Խոսքը, որը կփոխի մարդկանց, բնակավայրերը, քաղաքները և երկրները: Այլ կերպ վարվելը նշանակում է, որ մենք հրաժարվում ենք սիրել մեր մերձավորին:

գործնական քայլ

Քրիստոսի մարմնում չկա այնպիսի դիրք, որում կարելի է թաքցնել մեղքի հետևանքները: Այնպես չէ, որ մեղքը մուտք է գործում եկեղեցի միայն առաջնորդների միջոցով. մեղքը կարող է տարածվել ընդամենը մեկ մարդու միջոցով, ով ընդունում է այն իր կյանքում: Մեր լռությունը մեղքի վերաբերյալ՝ կարող է կործանման մատնել մարդկանց և հաշվետու դարձնել մեզ նրանց մահվան համար:

Կրկի՛ն կարդացեք վերջին նախադասությունը, բայց՝ առաջին դեմքով. իմ լռությունը մեղքի վերաբերյալ՝ կարող է կործանման մատնել մարդկանց և հաշվետու դարձնել ինձ նրանց մահվան համար: Մի քանի անգամ բարձրաձայն կրկնե՛ք սա և թո՛ւյլ տվեք, որ այս խոսքերը թափանցեն ձեր սրտի խորքը: Թո՛ւյլ տվեք, որ այս ճշմարտությունը լիարժեք կերպով տպավորվի ձեր սրտում և մտքում:

Աստված հաշիվ կպահանջի ձեզնից այս բանի համար: Մենք չենք կարող թաքցնել մեղքը: Ձեր կարծիքով, ինչպե՞ս այս ճշմարտությունը կազդի ձեր կյանքի վրա: Ի՞նչ ազդեցություն այն կթողնի ձեր ամուսնության և ձեր երեխաների դաստիարակության վրա: Արդյո՞ք դուք կսկսեք այլ կերպով շփվել ձեր տնային եկեղեցու անդամների հետ: Խնդրե՛ք Աստծուն պատասխանել այս հարցերին, մինչև որ պարզորեն հասկանաք, թե ինչպես ապրեք համաձայն այս ճշմարտության: Այնուհետև, ձեր ընկերներից մեկի հետ, ում վստահում եք, քննարկեք, թե ինչպես եք պատրաստվում կյանքի կոչել այս ճշմարտությունը ձեր կյանքում:

23

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եկեք անցում կատարենք այն խոսքերին, որոնք ասել է մեր հարություն առած Թագավորը:

Աստվածաշնչի վերջին գրքում Հիսուսը յոթ ուղերձ է հղում Ասիայում գտնվող յոթ եկեղեցիներին: Եթե Նրա խոսքերը նախատեսված լինեին միայն այդ յոթ եկեղեցիների համար, չէին գրվի Աստվածաշնչում: Այն փաստը, որ դրանք ընդգրկվել են Սուրբ գրքում, խոսում է դրանց մարգարեական բնույթի մասին: Այլ կերպ ասած՝ դրանք կիրառելի են այսօր, ինչպես և այն ժամանակ, երբ ասվեցին առաջին անգամ:

Աստծո Խոսքը կենդանի է. այդ իսկ պատճառով կդիտարկենք Հիսուսի խոսքերն այնպես, ասես դրանք վերաբերում են մեզ ներկա ժամանակում: Այսպիսով, եթե այս ուղերձը մեզ համար է, եկեք ընդունենք այն. կա՛մ զորանանք Նրա փառքով, կա՛մ կրենք Նրա սիրով լի խրատը:

Ո՞վ է Հեզաբելը

Այն պատմական եկեղեցին, որի մասին կխոսենք, Թիվատիրն է: Հիսուսը սկսում է Իր խոսքը՝ անվանելով Իրեն «Աստծո Որդին, որի աչքերը կրակի բոցի պես են, և Նրա ոտքերը՝ կարմրած պղնձի նման» (Հայտնություն 2.18): Մենք կարող ենք մեկնել այս խոսքը հետևյալ կերպով. Նրա աչքերը նման են լազերային ճառագայթների, որոնք տեսնում են գործի բուն էությունը, և Նրա ոտքերը նման են հղկված պղնձի, ինչը նկարագրում է Նրա ամենակարող լինելը:

Հրաշալի է, որ Նա սկսում է՝ գովելով մեզ. «Գիտեմ քո գործերը և

սերը և քո ծառայությունը և հավատքը և քո համբերությունը և քո գործերը, և որ վերջիններն ավելի են, քան թե առաջինը» (Հայտնություն 2.19): Ակնհայտ է, որ Նա չի խոսում մահացած եկեղեցու հետ. այդ եկեղեցին կենդանի է և աճ ունի:

Նա սկսում է՝ գնահատելով և խրախուսելով մեր սերը: Երբ որևէ եկեղեցի կամ ծառայություն մահանում է, առաջին հերթին մարում և սառչում է սերը Աստծո և մարդկանց հանդեպ: Նման ողբերգական վիճակի պատճառով կորսվում են նաև արդարության այլ պտուղներ:

Զարմանալի չէ, որ Տերը հենց սա է շտկում յոթ եկեղեցիներից առաջինում՝ Եփեսոսում. այն թողել էր իր առաջին սերը: Սակայն Թիվատիրն այդպիսին չէր: Հիսուսը գովում է այդ եկեղեցու սերը: Նա խոսում է այնպիսի հավատացյալների համայնքի մասին, որը հոգատար է մարդկանց հանդեպ, ինչը շատ կարևոր է Աստծո համար: Անձամբ ես հավատում եմ, որ սա է պատճառը, որ Հիսուսը գովում է մեր սերը, մինչև ցանկացած այլ բանի մասին խոսելը, նույնիսկ՝ հավատքի, ծառայության կամ համբերության:

Մյուս զարմանալի իրողությունն այն է, որ այս եկեղեցին *աճում* էր սիրով, հավատքով, ծառայությամբ և համբերությամբ: Որքա՜ն ակնառու է: Այդ հավատացյալների համայնքը ընդամենը չէր պահպանում այն, ինչ ուներ. նրանք շարունակաբար առաջանում էին ծառայության կարևոր բնագավառներում: «Ուղերձ» շրջասությունը հրաշալի կերպով վերծանում է այս խոսքը. «Ես տեսնում եմ այն ամենը, ինչ դու անում ես Ինձ համար: Որքա՜ն տպավորիչ է: Քո սերը և հավատքը, ծառայությունը և հաստատակամությունը: Այո՛, շա՜տ տպավորիչ է: Քեզ մոտ ամեն օր ավելի լավ է ստացվում»: Ցանկացած առաջնորդ կամ եկեղեցու անդամ բերկրանքով կլսեր այդպիսի խոսքեր անձամբ Տիրոջից:

Այնուամենայնիվ, հանկարծ Նրա գովեստը փոխարինվում է հանդիմանությամբ.

> «Բայց Ես ունեմ հետևյալ գանգատը քո դեմ: Դու թույլ ես տալիս այդ կնոջը՝ այդ Հեզաբելին, որը մարգարեուհի է անվանում իրեն, մոլորեցնել Իմ ծառաներին: Նա սովորեցնում է նրանց սեռական մեղք գործել և կուռքերին զոհաբերված կերակուր ուտել» (Հայտնություն 2.20, NLT):

Այս խոսքերում այնքա՜ն բան կա, որ պետք է հասկանալ: Առաջինը՝ ուշադրություն դարձնենք *Հեզաբել* անվանը: Մի՞թե այս անունը պատկանում էր այս հատվածում նշված կնոջը: Աստվածաշնչի մեկնիչների մեծ մասը համաձայնում է, որ այդպես չէ: *«Նոր Ամերիկյան Մեկնութ-*

յուն. Հայտնություն» աշխատությունը պնդում է. «Այդ ժամանակաշրջանի հունա-հռոմեական գրականության մեջ չկա հիշատակում Հեզաբել անվան մասին... այն, որ որևէ հրեա իր դստերը կանվաներ Հեզաբել, նույնքան անհավանական է, որքան որևէ քրիստոնյա Հուդա կանվաներ իր որդուն, կամ՝ որևէ հրեա Հիսուս կանվաներ իր որդուն՝ առաջին դարից հետո»: *«Նոր կենդանի թարգմանության»* թարգմանիչներն ակնհայտորեն համաձայն են այս փաստարկներին, քանի որ նրանք թարգմանել են Հիսուսի խոսքերը որպես «այդ Հեզաբելը»:

Նման կերպով որևէ անուն հիշատակելը նույնն է, ինչ ուրիշներին մշտապես ծիծաղեցնող անձնավորությանը անվանել «այդ կատակերգակը»: Այդ բառը նրա անունը չէ, այլ նկարագրում է նրան բնորոշ վարքը:

Կարելի է ասել, որ խոսքը այդ ժամանակահատվածում ապրող մի ազդեցիկ կնոջ մասին է: Նա պիտակվեց «Հեզաբել» անվամբ, որը նրա իրական անունը չէր: Նա մեծ ազդեցություն ուներ, և մի խումբ առաջնորդներ տարածում էին նրա ուսմունքները: Մեր օրերում սա կարող է տեղի ունենալ հետևյալ կերպով. որևէ տղամարդ, կին կամ, ավելի հավանական է, որ մի խումբ առաջնորդներ միևնույն տեսակի ուսմունք են քարոզում: Ինչպես էլ դա տեղի ունենար, կարևոր գաղափարն այն է, որ այդ ծառայողական փիլիսոփայությունը վնասակար ազդեցություն էր թողնում ամբողջ եկեղեցու վրա:

Ինչո՞ւ Տերն այդպես անվանեց այդ կնոջը: Ամենայն հավանականությամբ, նրա պտուղը նման էր Հեզաբելի պտղին: Հեզաբելը, որի մասին գրված է Գ և Դ Թագավորաց գրքերում, Աքաբ թագավորի կինն էր: Այդ թագուհու մասին կարելի է շատ բան ասել, բայց դիտարկենք նրա ընդհանուր ազդեցությունն Իսրայելի վրա: Նա տարածեց կռապաշտությունը, ինչի արդյունքում Տիրոջ Խոսքի ձայնը լռեցվեց Իսրայելում: Ժողովրդի իշխանները դադարեցին ձայն բարձրացնել, իսկ ժողովուրդը հայտնվեց հոգևոր ծուլության մեջ՝ թմրության աստիճանի հասնելով: Կար միայն մեկ մարդ՝ Եղիան, ով համարձակվում էր խոսել այդ իրավիճակի դեմ:

Մենք կարող ենք ակնհայտորեն տեսնել Հեզաբելի ազդեցությունը, երբ Եղիան հանդիմանեց ամբողջ ազգին և առաջարկեց ընտրություն կատարել Աստծուն հնազանդվելու և շարունակական մեղքի միջև: Նա արեց դա Հեզաբելի կողմից վարձատրվող «ծառայողների»՝ Բահաղի և Աստարովթի մարգարեների ներկայությամբ, որոնք վերահսկում էին լրատվամիջոցները, ղեկավարում էին հատուկ շահեր ներկայացնող կազմակերպություններ, օրենսդիրներ և իրավաբաններ էին և այլն: Ամբողջ ազգը հավաքվել էր, և Եղիան մարտահրավեր նետեց ժողովրդին՝

այդ «էլիտայի ներկայացուցիչների» առջև.

> «Որքա՞ն ժամանակ եք նստելու ցանկապատի վրա: Եթե Աստված է իրական Աստված, հետևեք Նրա՛ն. եթե Բահաղն [շարունակական մեղքն] է, հետևեք նրա՛ն: Որոշո՛ւմ կայացրեք» (Գ Թագավորաց 18.21, MSG):

Աստծուն հետևելու համար պահանջվում է ավելին, քան լուռ հավատքը: Մենք պետք է քարոզենք Նրա Խոսքը: Մենք կանչված ենք՝ որպես դեսպաններ: Ինչպե՞ս անել դա: Պողոսը հստակ ցույց է տալիս.

> «Ազդարարի՛ր և քարոզի՛ր Խոսքը: Պահի՛ր քո հրատապության զգացումը [եղի՛ր հասանելի, մոտ և պատրաստ], անկախ այն բանից՝ հնարավորությունը բարենպա՞ստ է թվում, թե՞ ոչ: [Անկախ այն բանից՝ դա հարմա՞ր է, թե՞ անհարմար, ցանկալի՞ է, թե՞ անցանկալի, դու՝ որպես Խոսքի քարոզիչ, պետք է ցույց տաս մարդկանց, թե ինչ կերպով են նրանց կյանքերը սխալ]» (Բ Տիմոթեոս 4.2, AMPC):

Եղիան միակն էր Իսրայելում, ով այնքան էր սիրում մարդկանց, որ պատրաստ էր ցույց տալ, թե ինչ կերպով էին նրանց կյանքերը սխալ:

Հեզաբելի ազդեցությունը վախ էր առաջացրել թե՛ իշխանների, թե՛ ժողովրդի ներսում: Նրանք լուռ էին, թմրած էին, երկչոտ էին և այլևս բացահայտ կերպով չէին խոսում՝ ի աջակցություն *Յահվեհի:* Շարունակական մեղքը հաղթել էր, և Աստծո Խոսքն անտեսվում էր: Նման մի բան սկսեց տեղի ունենալ նաև այդ նորկտակարանյան եկեղեցում: Հիսուսը չէր կամենում թույլ տալ դա, և Նա գտավ Իր ծառաներից մեկին՝ Հովհաննես առաքյալին, ով, ինչպես և Եղիան, պատրաստ էր խոսել:

Իրական խնդիրը

Մենք պետք է մի հարց տանք. արդյո՞ք Հիսուսը նկատի ուներ, որ Թիվատիրի եկեղեցու անդամները ֆիզիկապես էին ներգրավված սեռական անբարոյության մեջ և կուռքերին զոհաբերված միս էին ուտում: Հնարավոր է, սակայն ես չեմ համաձայնի այդ մեկնությանը, քանի որ Պողոսը երկու տարբեր եկեղեցիներին ուղղված իր նամակներում չդատապարտեց կուռքերին զոհաբերված կերակուր ուտելը (տե՛ս Հռոմ. 14 և Ա Կորնթ. 10): Ինչո՞ւ Հիսուսը պետք է չար անվաներ այն, ինչը Պողոսը թույլատրում էր Սուրբ Հոգու ոգեշնչման ներքո: Մի հեղինակավոր մեկնություն

պնդում է. «Ինչ վերաբերում է մարդկանց սեռական անբարոյության մեջ գայթակղեցնելուն, բազմաթիվ մեկնիչներ ենթադրում են, որ փաստացի սեռական խառնակությունն անհավանական էր, քանի որ եկեղեցին միանշանակ չէր հանդուրժի դա: Փոխարենը՝ խոսքը հոգևոր և/կամ վարդապետական անհավատարմության մասին է» *(«Նոր Ամերիկյան Մեկնություն. Հայտնություն»):*

Անկախ այն բանից, թե ինչի մասին է խոսքը՝ Հիսուսի հանդիմանությունը չէր վերաբերում դրան: Մենք պետք է ուշադրություն դարձնենք այն գործունեության կամ անգործության վրա, որին անդրադարձավ Հիսուսը: Խոսքը *հանդուրժողականության* մասին է: Նա ասաց. *«Դու թույլ ես տալիս»:* Հունարենում օգտագործվում է «էաո» բառը: *«Հովհաննեսի Հայտնություն գրքի ձեռնարկը»* սպառիչ կերպով սահմանում է այս բառը. «Այս բառի իմաստը կարող է լինել դրական. «դու թույլատրում ես», «դու իրավունք ես տալիս», կամ՝ բացասական. «դու չես արգելում», «դու չես դադարեցնում», «դու չես խոչընդոտում»»:

Սա պարզապես ապշեցուցիչ է: Հիսուսը չի անդրադառնում այդ հանցավոր անձնավորությանը, ով էլ նա լինի, կամ, մեր դեպքում՝ այն ժամանակակից հանցավորներին, որոնց կողմից տարածվող ուսմունքները գայթակղեցնում են Իր ժողովրդին դեպի կռապաշտությունը (շարունակական մեղքը): Նա պարզ ասում է. «Եվ նրան ժամանակ տվեցի, որ ապաշխարեր... բայց նա չապաշխարեց» (Հայտնություն 2.21): Ակնհայտ է, որ նախկինում նույնպես զգուշացումներ եղել էին, սակայն, ցավոք, անտեսվել էին:

Փոխարենը՝ Նա խստորեն հանդիմանում է յուրաքանչյուրին, ով թույլ է տալիս, որ այդ երևույթը շարունակվի. այլ կերպ ասած՝ մենք չենք ընդդիմանում այդ խնդրին: Փոխարենը՝ շարունակում ենք սովորեցնել միայն Նոր կտակարանի հաճելի, խրախուսական և ոգևորիչ հատվածները: Ըստ էության, մենք լուռ ենք և ոչնչով չենք տարբերվում Հեզաբելի օրերում ապրող Իսրայելի ժողովրդից: Դա կարելի է համեմատել հետևյալ իրավիճակի հետ. բոլորս գտնվում ենք այրվող շենքում, բայց մեզնից ոչ ոք ոչինչ չի անում փախչելու համար, և ո՛չ էլ փորձում է օգնել մեկ այլ մարդու փախչել այդտեղից: Մենք պարզապես շարունակում ենք խրախուսել իրար՝ ասելով, թե որքան օրհնված ենք, և սեր ենք ցուցաբերում միմյանց հանդեպ, մինչդեռ տանիքը և պատերը փուլ են գալիս:

Նմանատիպ երկընտրանք

Հուդա առաքյալը բախվել էր նմանատիպ երկընտրանքի: Նա ուզում էր գրել իր հավատակիցներին և խրախուսել նրանց մեր փրկության առավելություններով, սակայն չէր կարող: Տունը այրվում էր: Նա պետք է հակառակվեր այն կրիպտոնաքարին, որը ներթափանցել էր եկեղեցիները: Կարդացե՛ք նրա խոսքերը.

> «Թանկագի՛ն ընկերներ, ես մեծ ցանկություն ունեի գրելու ձեզ այն փրկության մասին, որին բոլորս բաժնեկից ենք: Բայց այժմ համարում եմ, որ պետք է գրեմ մեկ այլ բանի մասին՝ հորդորելով ձեզ պաշտպանել այն հավատքը, որն Աստված մեկընդմիշտ վստահեց Իր սուրբ ժողովրդին: Ես ասում եմ սա, որովհետև մի քանի անաստված մարդիկ սողոսկել են ձեր եկեղեցիները՝ ասելով, որ Աստծո զարմանալի շնորհքը թույլ է տալիս իրենց անբարո կյանք վարել» (Հուդա 3,4, NLT):

Այս ծառայողը ջերմեռանդորեն ցանկանում էր գրել այն մարդկանց, որոնց ինքը սիրում էր, այն առավելությունների, օրհնությունների և խոստումների մասին, որոնք մենք ունենք Քրիստոսի մեջ: Շատերի պես նա ուզում էր ոգեշնչել և խրախուսել մարդկանց:

Ես հասկանում եմ նրա դժվարին կացությունը: Ամենամեծ զգացմունքային պայքարներից մեկը, որոնց ես բախվում եմ թե՛ գրելիս, թե՛ սովորեցնելիս, միայն խրախուսելու ցանկությունն է: Ես սիրում եմ ոգեշնչել. ո՞վ չի սիրում դա: Այնուամենայնիվ, Հոգին մղում է մեզ խոսել այն իրողությունների մասին, որոնք ձգտում են կործանել Աստծո թանկ զավակներին:

Այսպիսով, Հուդայի անկեղծ սերը դրդում էր նրան զգուշացնել հավատացյալներին՝ նրանց պաշտպանելու համար: Ի՞նչ էր տեղի ունենում: Իրավիճակը մի փոքր այլ էր, քան Թիվատիրում: Այդ անաստված մարդիկ, որոնք թաքնված էին հովիվների, առաջնորդների կամ հավատացյալների դիմակների ներքո, սովորեցնում էին կամ, ավելի հավանական է, մարմնավորում էին «թույլատրող շնորհքը», ոչ թե ճշմարիտ «զորացնող շնորհքը»: Այն «թույլատրող շնորհքը», որը նրանք սովորեցնում էին, չի պաշտպանում կրիպտոնաքարից, և ո՛չ էլ դրանից հեռանալու կարողություն է տալիս, այլ թույլ է տալիս ապրել միայն սակավաթիվ սուրբգրային սահմանափակումներով կամ, ընդհանրապես, առանց դրանց: Նման պայմաններում հասարակությունն է սկսում թե-

լադրել մեր կենսառՃը, քանի որ շնորհքը փոքրացվել է՝ վերածվելով ընդամենը ծածկոցի, ոչ թե կարողություն տվող ուժի: Այնպես որ, ըստ էության, հավատացյալները խոցելի են դառնում, քանի որ նրանք ազատորեն հետևում են իրենց անկում ապրած բնության ցանկություններին՝ համաձայն իրենց շրջապատող մշակույթի, և կրում են կրիպտոնաքարի ազդեցությունը: Աստծո շնորհքի նպատակն այլ է:

Հուդան չէր պատրաստվում *հանդուրժել* այն թթխմորը, որը տարածվում էր եկեղեցիների մեջ: Նա ճշմարիտ հոգևոր հայր էր և պաշտպանում էր իր զավակներին խեղաթյուրված կենսառՃից, որի նպատակն էր՝ հեռացնել նրանց Աստծո կյանքից: Հիսուսը ստիպված չէր լինի շտկել նրան, ինչպես Թիվատիրի առաջնորդներին. փոխարենը՝ Նա կգովեր Հուդային:

Պողոսը, ով նույնպես հոգատար հայր էր, լուռ չէր մնում, երբ եկեղեցու հավատացյալների միջև բաժանություններ, կռիվներ, անբարոյություն, դատավարություններ, ագահություն և մեղսալի վարքի այլ դրսևորումներ կային: Նա այնքա՜ն էր սիրում նրանց, որ չէր կարող քայլեր չձեռնարկել այն թթխմորի դեմ, որն արագորեն տարածվելու էր ամբողջ մարմնով: Հակոբոսը և Պետրոսը նույն կերպ էին վարվում:

Եթե կարդաք Առաջին եկեղեցու հայրերի ուղերձները, նրանք հետևում էին առաքյալների օրինակին՝ որպես զենք օգտագործելով Աստծո գրված և քարոզվող Խոսքը, որպեսզի հակառակվեին շարունակական մեղքին Աստծո ժողովրդի մեջ: Նրանք խոսում էին՝ քանդելով այն գաղափարները և արդարացումները, որոնք ձևավորվել էին մշակույթի կողմից և հակառակ էին ողջամիտ վարդապետությանը: Նրանք կործանում էին մշակութային կուռքերը, և Հեզաբելի գործակատարները չէին վախեցնում նրանց:

Լռությունը՝ համաձայնության նշան

Երբ խոսքն առաջնորդների մասին է, լռությունը՝ ոչ խոսքային հաղորդակցություն է: Այն նշանակում է համաձայնություն և թույլտվություն, և կարծես ասում է. «Այն, ինչ դուք անում եք, լավ է»: Կա մի հին լատինական ասացվածք. «Լռությունը համաձայնության նշան է. անհրաժեշտ էր խոսել, երբ դեռ հնարավոր էր»: Առաջին եկեղեցու հայրերից և առաջնորդներից ոչ մեկը չէր լռում, երբ կրիպտոնաքարը սողոսկում էր այն մարդկանց միջև, որոնց նրանք սիրում էին և որոնց համար հաշվետու էին: Նրանք խոսում էին, քանի որ համարում էին, որ կրիպտոնաքարը կործանարար, թունավոր և մահացու էր և կարող էր տարածվել թթխմորի պես:

Հովհաննես առաքյալը պնդում է. «Ամբողջ աշխարհը չարության մեջ է» (Ա Հովհաննես 5.19): Հասարակության մեջ գոյություն ունի չարիքի մշտական հոսք, որի ամենակործանարար տեսակը *ծածուկ չարիքն* է: Այո՛, այն թաքնված է *բարու* դիմակի ներքո: Այս խաբուսիկ հոսանքը կոչվում է «այս աշխարհի ընթացքը» (Եփեսացիների 2.2, NKJV):

Պատկերացրե՛ք սա հետևյալ կերպով. գետի մեջ դուք պետք է թիավարեք ջրի հոսքին հակառակ, որպեսզի գնաք հոսանքն ի վեր: Այս աշխարհը հոսանք ունի, որն ուղղակիորեն հակառակ է Աստծո թագավորությանը, սակայն ամենավտանգավորն այն է, որ այդ հոսանքը խորամանկ է. այն *բարության* դիմակ է կրում: Մեր կողմից ձայն չբարձրացնելը նույնն է, ինչ վեր բարձրացնենք մեր թիերը և գնանք հոսանքի ուղղությամբ: Մեր նավակը դեռ կարող է ուղղված լինել հոսանքն ի վեր. մենք դեռ կարող ենք քրիստոնյայի տեսք ունենալ և խոսել քրիստոնյայի պես, սակայն կվարվենք համաձայն մեր օրերի հասարակության չափանիշների և կկորցնենք մեր արդյունավետությունը:

Վեր բարձրացնելով մեր թիերը՝ խուսափում ենք վախ պատճառող հակառակությունից, բայց այն, ինչին մենք չենք հակառակվում, չի փոխվի: Էդմունդ Բուրկեն գրել է. «Որպեսզի չարը հաղթի, բավական է, որ բարի մարդիկ ոչինչ չանեն»: Հավատացյալների սրտերում և մտքերում գտնվող մշակութային կուռքերն ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում, երբ առաջնորդները լռում են:

Որքան խաբեությունը շատանում է, այնքան այն երևույթները, որոնք հանդուրժում ենք, թմրություն են առաջացնում մեր մեջ: Մենք սկսում ենք համակրել և նույնիսկ նմանվել այն բանին, ինչը սպառում է մեր գերբնական ուժերը: Մենք այլևս հակամշակույթ չենք, այլ՝ ենթամշակույթ: Մենք կրում ենք «քրիստոնեության» պիտակը, սակայն ոչ թե *զորության դեսպան* ենք, այլ՝ *շփոթմունքի գործոն:* Մեզ շրջապատող աշխարհը հարցնում է. «Մենք տեսնում ենք ձեր եկեղեցիները, լսում ենք ձեր երաժշտությունը և ուսմունքները սիրո և շնորհքի մասին, բայց որտե՞ղ է ապացույցն այն մասին, որ ձեր Ամենակարող Աստված ձեզ հետ է»:

Պողոսը համարձակ հայտարարում է, որ նրանք, որոնք դավանում են, որ քրիստոնյա են, բայց գնում են այս աշխարհի հոսանքի հետ, իրականում խաչի թշնամիներ են: Այո՛, թշնամինե՛ր:

> «Որովհետև շատերն են գնում, որոնց համար շատ անգամներ ասում էի ձեզ, և հիմա էլ լալով ասում եմ, որ Քրիստոսի խաչի թշնամիներ են: Որոնց վերջը կորուստն է, որոնց Աստված իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթն

> է, որոնք երկրավոր բաներն են մտածում: Բայց մեր քաղաքականությունը Երկնքում է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին» (Փիլիպեցիների 3.18-20):

Ուշադի՛ր կարդացեք առաջին խոսքը: Առաջին հերթին գրված է՝ «շատերը»: Երկրորդը՝ նրանց խոսքերը չէ, որ ցույց են տալիս, որ նրանք թշնամիներ են, քանի որ նրանք բերանացի ընդունում են Հիսուսին: «Խոստովանում են, որ Աստծուն գիտեն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան» (Տիտոս 1.16): Նրանք քողարկված են աստվածապաշտ կերպարանքով, սակայն նրանց վարքը ցույց է տալիս, որ նրանք թշնամի են: Նրանք առաջնորդվում են մարմնավոր ձգտումներով՝ կրքով, ցանկություններով, կարգավիճակով, համբավով, սեռական այլասերվածությամբ, բամբասանքներով և այլ բաներով:

Պողոսը խոսում է. նա ընդդիմանում է և չի հանդուրժում: Կարդացե՛ք նրա նամակները և կտեսնեք, թե որքան հաճախ է նա զգուշացնում մեզ մեղսալի և աշխարհիկ վարքի մասին և հանդիմանում դրա մեջ: Բայց հիշե՛ք, որ իրականում մեզ է դիմում Աստծո Խոսքը՝ Պողոսի գրչի միջոցով:

Անմիջական առերեսումը՝ Աստծո Խոսքը հռչակելու միջոցով, այդ ամրությունները քանդելու միակ միջոցն է: Եթե ուղղակիորեն չհակառակվենք դրանց Աստծո Խոսքով, մենք թույլ կտանք, որ այդ փիլիսոփայական ամրություններն է՛լ ավելի ազդեցիկ դառնան թե՛ հավատացյալների, թե՛ կորսված մարդկանց սրտերում և մտքերում: Հրաժարվելով խոսել՝ մենք դուռ ենք բացում կրիպտոնաքարի ազդեցության համար:

Հակասական հետևանքներ

Ինչպե՞ս Հիսուսն ամփոփեց այդ եկեղեցուն ուղղված Իր ուղերձը: Նրա խոսքերը թուլասիրտների համար չեն: Նա պարզորեն ասում է, որ կեղծ ուսմունքներն ընդունող մարդիկ «մեծ նեղությունների մեջ» կհայտնվեն, եթե չապաշխարեն: Սա նշան կլինի, և բոլոր եկեղեցիները կիմանան, որ Նա քննում է մեր մտքերը և սրտերը, և որ Նա յուրաքանչյուրիս կտա այն, ինչին արժանի ենք (տե՛ս Հայտն. 2.22,23):

Բայց ահա մի հրաշալի լուր. այն մարդկանց, որոնք չեն ընդունել կրիպտոնաքարը, որոնք հաստատ կերպով հարել են Նրա Հոգուն և Նրա Խոսքին, Հիսուսն ասում է, որ նրանց իշխանություն կտրվի ազգերի վրա... նույն իշխանությունը, որը տրվեց Հիսուսին մեր Հորից:

Հետևանքները խիստ հակասական են. ոմանց սպասվում է խիստ

պատիժ, իսկ մյուսներին՝ անասելի վարձատրություն: Կարո՞ղ ենք թույլ տալ մեզ ուշադրություն չդարձնել այս հրահանգներին, հատկապես որ դրանք անմիջապես մեր հարություն առած Թագավորի խոսքերն են:

գործնական քայլ

Հեզաբելը ճնշում էր Աստծո մարգարեներին՝ լռեցնելով նրանց, և նույնիսկ սպանում էր շատերին: Միայն մեկ մարգարե էր պատրաստ խոսել Տիրոջ համար, բայց տեսեք, թե ինչ էր Աստված պատրաստ անել այդ մեկ մարգարեի միջոցով: Նա պաշտպանեց նրան, մատակարարեց նրան և հաստատեց նրա ծառայությունը գերբնական նշաններով և հրաշքներով, որոնցով մենք մինչև օրս զմայլվում ենք:

Աստված մինչև օրս փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր կկանգնեն և կխոսեն ճշմարտությունը: Սա չի նշանակում՝ պարզապես քննադատել մարդկանց: Մենք չենք հաշվում ուրիշների մեղքերը: Սակայն, միևնույն ժամանակ, չենք կարող թույլ տալ մեզ երկչոտել և լռել՝ վախենալով, որ մարդիկ մեզ կանվանեն հետամնաց, անհանդուրժողական, կամ այլ կերպով կպիտակեն մեզ:

Առաջին քայլն է՝ ականջ դնել այս զգուշացմանը ձեր կյանքում: Ինչ էլ պահանջվի դրա համար, ազատվե՛ք այն մեղքերից, որոնց դուք տրվել եք անցյալում: Հենց որ անեք դա, գործի անցեք և ազատ արձակեք այլ մարդկանց՝ ջանասիրաբար զգուշացնելով մեղքի վտանգների մասին: Պողոսը գրում է. «Պատրաստ ենք վրեժ առնելու ամեն անհնազանդության համար, երբ որ ձեր հնազանդությունը կատարյալ լինի» (Բ Կորնթացիների 10.6):

Եթե դուք չեք սիրում առերեսում, խնդրե՛ք Աստծուն տալ ձեզ սեր մարդկանց հանդեպ, որը կդրդի ձեզ առերեսվել նրանց: Դարձրե՛ք սա ձեր հաջորդ նպատակը, որին պետք է հասնեք: Եվ երբ սա տեղի ունենա, Աստծո շնորհքով դուք կկարողանաք օգնել նաև այլ մարդկանց հասնել այս նպատակին:

24

ՍԵՐ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Այժմ հասնում ենք կրիպտոնաքարը կործանելու ամենավճռական կողմին՝ այն շարժառիթին կամ ուժին, որով հնարավոր է անել դա: Ամենայն հավանականությամբ, կրիպտոնաքարը կործանող այս մեծ ուժի բացակայության պատճառով է, որ մենք հայտնվել ենք Ավետարանը քարոզելու և ծառայողական փիլիսոփայության ներկա ծայրահեղության մեջ: Այն ուժը, որի մասին ես խոսում եմ, ոչ այլ ինչ է, քան *Աստծո սերը:* Պողոսն ազդեցիկ կերպով ասում է մեզ հետևյալը.

> «Մենք չենք տատանվի, երբ մարդիկ փորձեն խաբել մեզ ճշմարտություն թվացող հմտորեն կազմված ստերով: Փոխարենը՝ *կխոսենք ճշմարտությունը սիրով*՝ ամեն կերպ ավելի ու ավելի աճելով Քրիստոսին նմանվելու մեջ» (Եփեսացիների 4.14,15, NLT):

Կեղծ ուսմունքները՝ նման Թիվատիրում եղած ուսմունքներին, որոնց մասին խոսում է Հիսուսը, և այն ուսմունքներին, որոնց մասին Պետրոսը, Հովհաննեսը և Պողոսը գրում են իրենց նամակներում, այնքան հմտորեն են կազմված, որ հեշտորեն կարելի է շփոթել ճշմարտության հետ: Թշնամին շատ ավելի խելացի է, քան մենք կարծում ենք: Եթե նա կարողացավ մոլորեցնել Եվային Աստծո ներկայությամբ լցված և կատարյալ միջավայրում, որքա՜ն ավելի հեշտորեն կարող է խաբել մարդկանց ներկա աշխարհի ապականված միջավայրում: Եվ ի՞նչը կարող է պաշտպանել մեզ կեղծ ուսմունքների խաբեությունից:

Պատասխանն է՝ ճշմարտությունը, սակայն ոչ թե պարզապես

ճշմարտությունը, այլ՝ *սիրով ասված* ճշմարտությունը: Ճշմարտությունն առանց սիրո տանում է «օրենքի տառի» ճանապարհով, որը սպանում է. այն կոչվում է *օրինապաշտություն:* Այն ավելացնում է խաբեությունը և օժանդակում է դրան: Հենց օրինապաշտությունն է պատճառը, որ մարդիկ սկսեցին անտեսել և նույնիսկ բացառել սուրբգրային զգուշացումները, որոնք առանցքային նշանակություն ունեն եկեղեցու առողջ վիճակի համար:

Օրինապաշտությունը վնասում է մեզ, քանի որ այն անողորմ է, դաժան է և լցված է ատելությամբ: Դրա դաժանությանը հակառակվելու համար մենք շեշտադրում ենք սերը: Այնուամենայնիվ, սերը՝ առանց ճշմարտության, ընդհանրապես սեր չէ: Այն կեղծիք է՝ բաղկացած բարությունից, կարեկցանքից, քնքշությունից և համբերությունից, որն աստվածային սիրո կերպարանք ունի: Եթե այս առաքինությունները չեն համապատասխանում ճշմարտությանը, որպես արդյունք՝ մենք անխուսափելիորեն կհայտնվենք խաբեության ճանապարհին:

Եկեք անկեղծ լինենք. մենք չենք խոսում որոշ սուրբգրային ճշմարտությունների մասին, քանի որ համարում ենք, որ դրանք որևէ առնչություն չունեն այն սիրո հետ, որին մենք ի սրտե ձգտում ենք: Ճշմարտությունն այն է, որ մենք խուսափում ենք կոչ անել մարդկանց չմնալ տեղում, այլ փոփոխություններ բերել կյանքում: Մենք համարում ենք, որ մարդկանց ապաշխարության կանչելը գթասրտության, մեղմության, բարության և սիրո բացակայություն է: Սակայն, պատկերացրեք, ես տեսնում եմ մի կույր մարդու, ով քայլում է ուղիղ դեպի ժայռի եզրը, որ կարող է ընկնել ու մահանալ: Ես կարող եմ թույլ տալ, որ այդ դժբախտ պատահարը տեղի ունենա, քանի որ իմ միջամտությունը բացասական կամ անհանդուրժողական կհամարվի այդ մարդու ընտրած ճանապարհի հանդեպ: Սակայն եթե ես չկանգնեցնեմ և չփոխեմ նրա ընթացքը, նա կմահանա: Եթե ես խրախուսեմ նրան դրական և ոգեշնչող խոսքերով, բայց ընթացքը փոխելու կոչ չանեմ, ես ավելի հաճելի կդարձնեմ նրա վերջին քայլերը, բայց, միևնույն է, նա կընկնի ձորը և կմահանա: Մի՞թե նման դիրքորոշումը կարելի է ճշմարիտ սեր համարել:

Մեր հասարակության մեջ և բազմաթիվ հավատացյալների համար նման ճշմարիտ սերն ընկալվում է որպես մոլեռանդություն և ատելություն: Այս մտավոր ամրությունն առաջացել է բազմաթիվ հավատացյալների կյանքում, քանի որ նրանք դիտարկում են կյանքը յոթանասուն կամ ութսուն տարվա տեսանկյունից, ոչ թե հավիտենության: Ահա մեկ օրինակ այդ մասին. եթե իմ պատկերացումը երջանկության մասին սահմանափակվում է մեկ օրով, ես կգնամ հարսանեկան երեկոյի և կու-

տեմ այն ամենը, ինչ դրված է աղանդերի սեղանի վրա: Ես հաճելի, երջանիկ օր կանցկացնեմ: Այնուամենայնիվ, եթե իմ պատկերացումը երջանկության մասին ընդլայնվի մինչև վեց ամիսը, այլ կերպ կվարվեմ: Ես կուտեմ միայն մեկ թխվածք, կամ, միգուցե, ոչ մի հատ էլ չեմ ուտի: Պատճառն այն է, որ ես չեմ ուզի փորացավ ունենալ հաջորդ օրը, չեմ ուզի, որ մի քանի օրվա ընթացքում իմ քաշն այդ աղանդերից ավելանա մոտավորապես չորս կիլոգրամով, և չեմ ուզի երկարատև առողջական խնդիրներ ձեռք բերել:

Ճշմարիտ սերը հասկանալու համար մենք պետք է դիտարկենք կյանքը հավիտենական տեսանկյունից: Սերը՝ միայն երկրային կյանքի տեսանկյունից, ընդունում է մարդկանց այնպիսին, ինչպիսին կան, և կոչ չի անում փոխել իրենց կյանքը: Այն պարզապես ցանկանում է, որ մարդիկ վայելեն իրենց մնացած քայլերը՝ մինչև հավիտենական փոսն ընկնելը: Այնուամենայնիվ, ճշմարիտ սերը, որը հավիտենական հեռանկար ունի, ասում է. «Ես այնքան եմ հոգում քո մասին, որ պատրաստ եմ անհարմարություն պատճառել կարճ ժամանակով, որպեսզի փրկեմ քեզ աննկարագրելի հավիտենական տանջանքից, ցավից և տառապանքից»:

Գոյություն ունի իրական դժոխք: Այն այլաբանություն, պատկերավոր արտահայտություն կամ պատժի ժամանակավոր վայր չէ: Նրանք, ովքեր դժոխք գնան, «կչարչարվեն գիշեր և ցերեկ՝ հավիտյանս հավիտենից» (Հայտնություն 20.10): Մի՞թե մենք կարող ենք անտեսել Հիսուսի խոսքերը. «Եվ սրանք կգնան հավիտենական տանջանքը» (Մատթեոս 25.46), և Պողոսի խոսքերը. «Որոնք պատիժ կկրեն՝ հավիտենական կորուստ Տիրոջ երեսից և Նրա փառավոր զորությունից» (Բ Թեսաղոնիկեցիների 1.9):

Հավիտենական բառը նշանակում է *հավերժական*. այս բառը չունի այլ սահմանում: Տառապանքը, ցավը և պատիժը դժոխքում աննկարագրելի են և երբեք չեն վերջանա: Դժոխքը հատկապես զարհուրելի է այն պատճառով, որ մարդը հավիտյան բաժանված է Տիրոջ ներկայությունից: Այս բաժանումը, սակայն, չի վերաբերում միայն հանդերձյալ կյանքին, այլև՝ այս կյանքին: Քիչ անց կխոսեմ այս մասին:

Աստված չի ստեղծել դժոխքը մարդկանց համար, այլ՝ «սատանայի և նրա հրեշտակների» (Մատթեոս 25.41): Սատանան խաբեց մարդկությանը՝ դարձնելով իր պատժի մասնակիցները: Հիսուսը, սիրուց դրդված, եկավ, որպեսզի փրկեր մեզ այն ճակատագրից, որին ինքներս դատապարտեցինք մեզ: Եթե Նա նման զարմանալի փրկություն շնորհեց, ինչպե՞ս մենք կարող ենք թեթևորեն վերաբերվել այն ճանա-

պարհին, որը Նա պատրաստեց՝ այդ զարհուրելի կործանումից ազատվելու համար:

Վերադառնանք հարսանեկան երեկոյի օրինակին: Իմ որոշումը միայն մեկ թխվածք ուտելու մասին՝ կարող է հալածանք առաջացնել: Մյուսները կարող են ասել. «Դե՛, Զո՛ն, այս աղանդերը շատ լավն է: Դրանք համեղ են և կուրախացնեն քեզ: Ե՛կ վայելենք կյանքը»:

Այնուամենայնիվ, այդ պնդումները հեռու են ճշմարտությունից և կմոլորեցնեն ինձ: Իրականում, նրանք չեն ասում՝ «ե՛կ վայելենք կյանքը», այլ՝ «ե՛կ վայելենք այս օրը»: Ճշմարտությունն այն է, որ ես կվայելեմ շատ ավելին, եթե երկարաժամկետ հեռանկար ունենամ: Այս սկզբունքը վերաբերում է նաև Աստծո թագավորությանը:

Ձեր կարծիքով, ինչո՞ւ Պողոս առաքյալը դիմացավ, երբ քարկոծվեց, հինգ անգամ երեսունինը մտրակի հարված ստացավ, երեք անգամ փայտով ծեծվեց, կրեց տանջալի օրեր ու գիշերներ և շատ այլ նեղություններ: Մի՞թե կարծում եք, որ նա արեց դա, որպեսզի դառնար անվանի անձնավորություն և համաժողովների հայտնի խոսնակ, բազմություններ գրավեր կամ հանրահայտ գրող դառնար: Ո՛չ, այլ Աստծո սերն էր ստիպում նրան. սերն էր, որ առաջ էր մղում նրան: Նա նայում էր հավիտենական տեսանկյունից և սիրում էր՝ առանց վախի: Նա չէր համաձայնի հանրահայտ լինել՝ ճշմարտությունն անտեսելու հաշվին, քանի որ սիրում էր այն մարդկանց, որոնց մոտ ուղարկվել էր՝ նրանց Քրիստոսին առաջնորդելու համար:

Ի՞նչ է ճշմարիտ սերը

> «Աստված սեր է» (Ա Հովհաննես 4.8): Այնպես չէ, որ Նա պարզապես սեր *ունի*. Նա Իր էությամբ սեր է: Այսպիսով, ինչպե՞ս մենք պետք է սահմանենք սերը:

Վերջերս ես աղոթում էի, և Տերը խոսեց սրտիս. «Որդի՛ս, Իմ ժողովուրդը կենտրոնացած է սիրո արտաքին դրսևորումների վրա, փոխարենը անդրադառնա դրա առանցքային սահմանմանը»:

Ես մտածեցի այն մասին, որ սերը համբերատար է, սերը բարի է, սերը հպարտ չէ, սերը կոպիտ չէ, սերն իրենը չի որոնում, և շատ այլ բաներ, որոնք գրված են Ա Կորնթացիների թղթում և Աստվածաշնչի այլ հատվածներում: Դրանից հետո Սուրբ Հոգին ցույց տվեց ինձ հետևյալը. եթե մենք փոքրիկ երեխաներին սովորեցնեինք տարբերությունը տղամարդու և կնոջ միջև, ինչպե՞ս կանեինք դա: Եթե մենք միայն

ասեինք. «Կինը ունի երկու ոտք, երկու աչք, քիթ, բերան, երկու ձեռք, երկու դաստակ և երկու ոտնաթաթ», արդյո՞ք մեր նկարագրությունը ճիշտ կլիներ:

Նման ընդհանուր նկարագիր ստանալով՝ երեխան կարող է նայել որևէ տղամարդու և ասել. «Նա կին է»: Պատճառն այն է, որ դուք հստակորեն չեք բացատրել տարբերությունը տղամարդու և կնոջ միջև: Դուք չեք ասել. «Ահա թե ինչով է կինը տարբերվում տղամարդուց...»:

Այս աշխարհում նույնպես սեր կա: Այն նույնպես համբերատար է, բարի է, կոպիտ չէ, և շատ այլ առումներով նման է Աստծո սիրուն: Այնուամենայնիվ, հետևյալ խոսքում գրված է այն սահմանումը, որը ցույց է տալիս գլխավոր տարբերությունը Աստծո սիրո և այս աշխարհի սիրո միջև. «Սա է Աստծո սերը, որ Նրա պատվիրանները պահենք» (Ա Հովհաննես 5.3):

Այն դեպքում, եթե մենք ինչ-ինչ պատճառներով չենք նկատել այս անչափ կարևոր սահմանումը նրա առաջին նամակում, Հովհաննեսը, որը հայտնի է որպես սիրո առաքյալ, կրկնում է այն իր երկրորդ նամակում.

> «Սա է սերը, որ Նրա պատվիրանների համեմատ գնանք» (Բ Հովհաննես 6):

Այս սահմանումը նման չէ Պողոս առաքյալի սիրո նկարագրությանը Ա Կորնթացիների թղթում: Հովհաննեսը չի նկարագրում սիրո առանձնահատկությունները, այլ անմիջապես ներկայացնում է դրա առանցքային սահմանումը՝ այն, ինչը Աստծո սերը տարբերում է ցանկացած տեսակի սիրուց: Սերը՝ Հիսուսի պատվիրանները պահելն է: Տերը հստակ խոսեց այս մասին Վերջին ընթրիքի ժամանակ.

> «Նրանք, ովքեր ընդունում են Իմ պատվիրանները և հնազանդվում են դրանց, սիրում են Ինձ» (Հովհաննես 14.21, NLT):

Այնպես որ, եթե ես բարի եմ, համբերատար եմ, մեղմաբարո եմ, կոպիտ չեմ, պարծենկոտ ու բարկացկոտ չեմ, սակայն մշտապես դավաճանում եմ իմ կնոջը կամ կեղծում եմ իմ հարկային հայտարարագիրը, ես չեմ վարվում Աստծո սիրով:

Եթե ես բարի եմ, համբերատար եմ, մեղմաբարո եմ, չեմ նախանձում, կոպիտ չեմ, պարծենկոտ ու բարկացկոտ չեմ, սակայն հավանություն եմ տալիս սեռական անբարոյությանը, օրինակ՝ համասեռամոլությանը, որն այսօր ավելի ու ավելի է ընդունվում և խրախուսվում,

նույնիսկ տարբեր երկրների կառավարությունների կողմից, նշանակում է՝ ես չեմ վարվում Աստծո սիրով:

Իրականում, ես խաբված եմ և ավելի վտանգավոր վիճակում եմ, քան այն մարդը, ով կոպիտ, չարակամ, պարծենկոտ և բարկացկոտ է, քանի որ նա, հավանաբար, գիտի, որ հեռու է Աստծուց: Ես սխալմամբ կարծում եմ, որ արդար դիրք ունեմ Աստծո առջև, քանի որ ինչ-որ մեկն աղոթել է ինձ հետ «մեղավորի աղոթքը», սակայն ես այդպես էլ չեմ ապաշխարել իմ շարունակական մեղքից: Այլ կերպ ասած՝ ես չեմ պահում Հիսուսի պատվիրանները:

Թույլ տվեք ինձ ընդմիջարկել և մի շատ կարևոր պնդում անել: Ես չեմ պահում Աստծո պատվիրանները՝ փրկվելու համար: Ես վարվում եմ դրանցում, որովհետև փրկված եմ, և որովհետև Նրա սերը բնակվում է ինձանում: Իմ հնազանդությունն ապացուցում է, որ ես ճշմարտապես իմ սիրտը և կյանքը նվիրել եմ Նրան:

Կրկին, ճշմարտությունն այն է, որ սիրո ցանկացած տեսակ, որն ուղղակիորեն հակասում է Աստծո Խոսքին և ճանապարհներին, հավիտենական սերը չէ: Այն ժամանակավոր է: Այդպիսի սերը կդրդի մարդուն զգալ, որ ինքը բարի է, և նույնիսկ՝ անձնազոհ, կհաղորդի նրան պատկանելիություն և կդարձնի ընդունված, սակայն հավիտյան չի մնա: Այն չի առաջնորդում դեպի հավիտենական կյանքը: Մեկ օր այն կընկնի ժայռից դեպի կրակի լճի հավերժական փոսը:

Այդ դեպքում, ի՞նչն է պատճառը, որ այդ սերը, որն այդքան ճիշտ է թվում, ժամանակավոր է: Ադամը և Եվան համարեցին, որ բարու և չարի գիտության ծառի պտուղը բարի էր և իմաստուն էր դարձնելու իրենց.

> «Երբ կինը տեսավ, որ ծառը *բարի* էր... ցանկալի՝ *իմաստուն* դարձնելու համար» (Ծննդոց 3.6, NKJV):

Ամենայն հավանականությամբ, սկզբում Եվան այսպես մտածեց. *«Ինչո՞ւ սիրող Աստված պատվիրեց մեզ չուտել այն, ինչը «բարի» է մեզ համար: Սա տրամաբանական չէ»:* Եվ նա որոշեց ընդունել այն *«բարիքը»* և *«իմաստությունը»,* որոնք Աստծո խորհրդի մեջ չէին: Մենք ուզում ենք ստանալ մեր «ինչու»-ների պատասխանները, բայց եկեք շիտակ խոսենք. երբեմն Աստված կամենում է, որ հնազանդ լինենք, նույնիսկ՝ առանց հասկանալու: Մենք հավատո՞ւմ ենք, որ Նա սիրում է մեզ, երբ պատվիրում է հեռու մնալ այնպիսի բաներից, որոնք մեզ համար բարի են թվում: Մենք վստահո՞ւմ ենք Նրան, թե՞ դառնում ենք դատավորներ, որոնք ասում են Նրան, թե որն է բարին մեզ համար՝

ինչպես առաջին զույգը Եդեմի պարտեզում:

Կարելի է բերել անթիվ օրինակներ Աստծո խորհուրդների մասին, ինչպես նաև՝ Նրա տված պատվերների իրական պատճառների մասին, բայց թույլ տվեք բերել միայն մեկ օրինակ: Քրիստոսի մեջ քառասուն տարի լինելուց հետո ես այդպես էլ չհանդիպեցի որևէ մեկի, ով կարող էր բացատրել ինձ, թե ինչու Աստված պատվիրեց մի մարգարեի հետևյալը. «Որովհետև ինձ այսպես հրամայվեց Տիրոջ խոսքով, թե՝ հաց չուտես և ջուր չխմես և այն ճանապարհով ետ չդառնաս, որով գնացիր» (Գ Թագավորաց 13.9): Այդ մարգարեն չհնազանդվեց *անիմաստ թվացող* պատվերին և զրկվեց կյանքից անհնազանդության պատճառով:

Անկեղծ ասած՝ երբեմն կարող է թվալ, թե ճշմարիտ սերը հակառակ է այն բանին, ինչը մենք սեր ենք համարում: Ինչո՞ւ Պողոսն ասաց Կորնթոսի եկեղեցուն. «Ես ուրախությամբ կվատնեմ ինձ և իմ ամեն ունեցածը ձեզ համար, թեև թվում է, թե որքան շատ եմ ես սիրում ձեզ, այնքան քիչ եք դուք սիրում ինձ» (Բ Կորնթացիների 12.15, NLT): Այն, որ Կորնթոսի եկեղեցին կարծում էր, որ Պողոսը չէր սիրում իրենց, անիմաստ է թվում: Սակայն ես համոզված եմ՝ դրա ակնհայտ պատճառն այն է, որ նրանք Պողոսին համարում էին խիստ, օրինապաշտ առաջնորդ, ով ուզում էր, որ իրենք ապրեին համաձայն մի շարք կանոնների: Միգուցե նրանք արդեն սկսել էին մոլեռանդ համարել նրան, բայց լիովին սխալ էին: Նա սիրում էր նրանց *հավիտենական սիրով*, ոչ թե այս աշխարհի սիրով: Նա հանդիմանում էր նրանց ճշմարտությամբ, զգուշացնում էր նրանց և ապաշխարության էր կանչում, թեև նրա ունկնդիրները կարող էին սեր չհամարել դա: Այնուամենայնիվ, նրա խոսքերը հագեցած էին Աստծո ճշմարիտ սիրով:

Խոսել ճշմարտությունը սիրով

Այս ամենից հետո եկեք խոսեք ճշմարիտ սիրո կարևորության մասին: Վերանայենք սիրո նկարագրությունը.

Սերը համբերատար է:

Սերը բարի է:

Սերը չի նախանձում:

Սերը չի պարծենում:

Սերը չի հպարտանում:

Սերը կոպիտ չէ:

Սերն իրենը չի որոնում:

Սերը չի բարկանում:

Սերը չի հաշվում սխալները:

Սերը չի ուրախանում անարդարության պատճառով:

Սերը երբեք չի հանձնվում:

Սա է սերը, որ պահենք Նրա պատվիրանները:

Եթե մենք խոսում ենք ճշմարտությունը, սակայն բարի չենք, համբերատար չենք, այլ փոխարենը նախանձում ենք, պարծենում ենք, հպարտ ենք, կոպիտ ենք, մերն ենք որոնում, բարկանում ենք, հաշվում ենք մեր հանդեպ գործած սխալները, չենք ներում, ուրախանում ենք անարդարության պատճառով և հանձնվում ենք՝ մտածելով, որ որոշ մարդիկ չեն փոխվի, մենք չենք պահում Նրա պատվիրանները: Մենք կարող ենք քարոզել ապաշխարություն, հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ և այն ամենը, ինչ գրված է Աստվածաշնչում, սակայն չենք վարվում ճշմարիտ սիրով: Մենք օրինապաշտ ենք դարձել և մարդկանց Աստծո մոտ առաջնորդելու փոխարեն՝ վնաս ենք հասցնում նրանց:

Մեկ անգամ մի երիտասարդ մոտեցավ ինձ և ասաց.

Ես կանչված եմ միևնույն ծառայության մեջ, որն ունեք դուք: Ես կանչված եմ շտկում բերելու Քրիստոսի մարմնում:

Երբ նա ասաց ինձ այդ մասին, ես հասկացա իմ սրտում, որ նրա դրդապատճառները սխալ էին: Սուրբ Հոգին տվեց ինձ հետևյալ խոսքերը նրա համար.

Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչպես գործես ճշմարիտ մարգարեական ծառայության մեջ:

Նրա երեսը ողողվեց ժպիտով, և նա ասաց.

Այո՛, շա՛տ եմ ուզում իմանալ:

Ամբողջ ընթացքում, երբ դու հանդիմանում կամ զգուշացնում ես, քո սիրտը պետք է լցված լինի սիրով այն մարդկանց հանդեպ, որոնց քարոզում ես, - ասացի ես:

Նա մի քանի վայրկյան լուռ մնաց:

Կարծում եմ՝ Աստված դեռ պետք է աշխատի ինձ հետ:

Ես հպարտանում եմ քեզնով, - ասացի նրան: - Նման խոսքեր կարող է ասել միայն խոնարհ մարդը: Դու շատ ավելի մոտ ես այդ հոգևոր վիճակին, քան կարծում ես: Քո սիրտը զգայուն է:

Սերն ավելի շատ հոգ է տանում ուրիշների մասին, քան՝ սեփական անձի: Սիրո հոգատարությունը բավական է, որ թույլ չտա մարդկանց

վայր ընկնել ժայռից: Սերն արտահայտում է բոլոր մեղմաբարո հատկանիշները, որոնց մասին գրված է Ա Կորնթացիների 13-րդ գլխում, սակայն, դրա հետ մեկտեղ, այն երբեք չի շեղվում մեր Փրկչի և Աստծո պատվիրաններից:

Սերն այնքա՜ն անհրաժեշտ է, և այնքա՜ն կարևոր. այն կյանքի էությունն է: Աղոթե՛ք, որ Աստված լցնի ձեր սիրտն Իր սիրով՝ Իրենով, որ դուք իրականում ավելի շատ հոգ տանեք այլ մարդկանց մասին, քան՝ ձեր կյանքի: Գրված է, որ Սուրբ Հոգին սփռում է այս սերը մեր սրտերում: Մենք կարող ենք խնդրել Նրա կենսատու սերը՝ իր խորությամբ, երկարությամբ և բարձրությամբ:

Այնպես որ, խնդրե՛ք, կրկի՛ն խնդրեք և շարունակե՛ք խնդրել, որ Նա լցնի ձեր սրտերն աստվածային, հավիտենական սիրով:

գործնական քայլ

Մենք պետք է ձայն բարձրացնենք այն մեղքի դեմ, որը ցանկանում է ներխուժել եկեղեցի, սակայն պետք է անենք դա սիրով: Հակառակ դեպքում, մեր զգուշացումները չեն տա անհրաժեշտ արդյունքը: Աստված շարունակ զգուշացնում է մեզ Իր Խոսքի միջոցով, սակայն Նրա մեծ սերը դրդեց Նրան անել ավելին. Նա ուղարկեց Իր Որդուն՝ վճարելու բոլոր այն մեղքերի համար, որոնց մասին Նա զգուշացնում էր մեզ:

Մենք պետք է ունենանք այս սերը, երբ զգուշացնում ենք մարդկանց մեղքի դեմ: Եվ գոյություն ունի միայն մեկ սիրո աղբյուր՝ Աստված: Աստված սեր է: Եթե ուզում ենք աճել սիրո մեջ, մենք պետք է խորացնենք մեր հարաբերություններն Աստծո հետ:

Այնքա՜ն կարևոր է, որ մշտապես ժամանակ անցկացնենք Աստծո հետ՝ փնտրելով Նրան և խնդրելով, որ Նա է՛լ ավելի լցնի մեզ Իր սիրով: Երբ մենք լցվենք սիրով, այն կքշի մեզնից առերեսման հետ կապված բոլոր վախերը: Այն կստիպի մեզ գործել հանուն մեզ շրջապատող մարդկանց՝ ոչ միայն մարդասիրական քայլեր անելով, այլև զգուշացնելով, երբ դրա կարիքը լինի: Աստծո սերն ազատ կարձակի մեզ, և մենք կկարողանանք տալ այդ ազատությունն այլ մարդկանց: Ժամանա՜կ հատկացրեք այսօր, որպեսզի ջանասիրաբար աղոթեք և խնդրեք Աստծուն լցնել ձեզ Իր սիրով, և արագ մի՛ հանձնվեք այս աղոթքի մեջ:

25

ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Գոյություն ունի երեք դիրքորոշում մեղքի վերաբերյալ, որոնք մեծ վնաս են հասցնում հավատացյալներին:

Առաջինը՝ կան հավատացյալներ, որոնք որոշում են անտեսել մեղքը՝ իրենց խստացած սրտերի պատճառով: Նրանք անզգա են այն իրողության հանդեպ, որ մեղանչելով՝ ցավ են պատճառում Աստծո սրտին: Տերը հառաչում է նրանց համար. «Մի՞թե նրանք ամաչում են այս գարշելի արարքներից: Բոլորովի՛ն. նրանք նույնիսկ կարմրել չգիտեն» (Երեմիա 8.12, NLT): Նրանց խիղճը վնասված է, երբեմն՝ վառված լինելու աստիճան:

Երկրորդը, որը նույնքան վտանգավոր է՝ կան հավատացյալներ, որոնք հավատում են այն ստին, որ բոլորս մեղավոր բնություն ունենք: Նրանք հավատում են, որ Հիսուսի արյան զորությունը բավական է, որ ազատի մեզ մեղքի պատժից, բայց ոչ՝ մեղքի ստրկությունից: Նրանք ընդունում են այն ճշմարտությունը, որ մենք սուրբ ենք դարձել Քրիստոսում, սակայն հավատում են այն ստին, որ սուրբ կյանք վարելն անհրաժեշտ չէ: Թիվատիրի եկեղեցում հենց նման ուսմունք էին քարոզում: Պողոսը հատկապես խոսում է այս մասին՝ գրելով.

> «Այսպիսով, մի՞թե շարունակենք մեղք գործել, որպեսզի Աստված ավելի ու ավելի հայտնի մեզ Իր զարմանալի շնորհքը: Իհարկե՝ ո՛չ: Քանի որ մենք մահացել ենք մեղքի համար, ինչպե՞ս կարող ենք շարունակել ապրել դրանում» (Հռոմեացիների 6.1,2, NLT):

Այս երկու դիրքորոշումները պատկերում են կրիպտոնաքարը՝ գիտակցված, շարունակական մեղքը, որը տկարացնում է թե՛ առանձին հավատացյալների, թե՛ ցանկացած եկեղեցական համայնք: Այս երկու խմբերում եղող մարդիկ *տրվել են մեղքին:* Դատաստանի օրը հենց նրանք կլսեն Հիսուսից. «Ինձնից դե՛ն գնացեք» (տե՛ս Մատթ. 7.20-23):

Երրորդը՝ կան մարդիկ, որոնք պայքարում են մեղքից ազատվելու համար: Նրանք կամենում են ազատ լինել, բայց մեղքն ամուր բռնել է նրանց: Նրանք Աստծո Խոսքում դեռ չեն հայտնաբերել, թե ինչպես հավատքով գործադրեն իրենց ազատությունը: Երբ մեղանչում են, նրանց սիրտը ցավում է, քանի որ սիրում են Աստծուն: Նրանք ճշմարտապես ապաշխարում են, բայց որոշ ժամանակ անց կրկին մեղանչում են: Ցավոք, այն իրողություններից մեկը, որը պահում է նրանց այդ ստրկության մեջ, մեղքի զգացումն է՝ դատապարտության հետ: Այն ամոթը, որը նրանք զգում են իրենց մեղքի պատճառով, պահում է նրանց այդ մեղքի մեջ:

Եթե դուք այս երրորդ խմբում եք, խնդրում եմ, լսե՛ք ինձ: Հիսուսն ասում է մեզ. «Եթե քո եղբայրը մեղանչի քո դեմ, հանդիմանի՛ր նրան, և եթե ապաշխարի, ների՛ր նրան: Եվ եթե օրը յոթ անգամ քեզ դեմ մեղանչի և յոթ անգամ քեզ մոտ դառնա և ասի՝ ապաշխարում եմ, ների՛ր նրան» (Ղուկաս 17.3,4): Մեր Տերը պատվիրում է ներել այն մարդուն, ով մեղանչում է, բայց մեկ օր շարունակ անկեղծորեն ապաշխարում է. մենք պետք է ներենք այնպես, ինչպես որ մեր երկնային Հայրն է ներում մեզ (տե՛ս Եփես. 4.32): Ուզում եմ, որ իմանաք. եթե դուք բազում անգամներ մեղանչել եք, սակայն ամեն անգամ ճշմարտապես մոտեցել եք Աստծուն՝ սրտի ցավով և ճշմարիտ ապաշխարությամբ, դուք ներված եք, և Հիսուսի արյունը մաքրում է ձեզ այնպես, ասես երբեք չեք մեղանչել: Մի՛ պատժեք ձեզ, քանի որ այդ դեպքում դուք փոքրացնում եք Հիսուսի արյան մեծությունը և կրկին փորձում եք արդարանալ ձեր գործերով: Այդպես վարվելով՝ դուք չեք կարող փրկվել և ներում ստանալ: Փրկությունը պարգև է, որն Աստված տվել է Իր շնորհքով:

Այս գլուխն ուղղված է երրորդ դիրքորոշումն ունեցող մարդկանց: Ես ուզում եմ պատմել ձեզ այն մասին, թե ինչպես Աստծո Խոսքն ազատեց ինձ:

Ես չէի կարողանում ազատվել

Երբ տասներկու տարեկան էի, իմ ընկերներից մի քանիսը ծանոթացրին ինձ պոռնոգրաֆիկ ամսագրերի հետ: Մենք փոխանցում

էինք դրանք միմյանց, և կարճ ժամանակ անց ես կախվածություն ձեռք բերեցի:

Ամեն ինչ սկսվեց թեթև պոռնոգրաֆիայից, բայց ես արագորեն անցում կատարեցի ավելի ծանր նյութերի: Ինձ մոտ սկսվեցին սեռական մտքեր, որոնք անվերահսկելի դարձան: Դպրոցի դասերի ժամանակ ես նայում էի աղջիկներին և սեռական հարաբերություններ էի պատկերացնում: Ես կլանված էի սեռական կրքով:

Տասնինը տարեկանում, մեր տղաների ուսանողական հանրակացարանում անցկացվող մի հավաքույթի ժամանակ, կյանքս նվիրեցի Քրիստոսին: Շատ մեղքեր անմիջապես կորցրին իրենց իշխանությունն իմ կյանքում. հարբեցողությունը, հայհոյանքները, անպատշաճ վերաբերմունքն աղջիկների հանդեպ, կոպտությունը և բազմաթիվ այլ մեղսալի վարքագծեր ասես անհետացան: Սակայն պոռնոգրաֆիան և կիրքը չթողեցին ինձ: Ես դեռ կապված էի դրանց և չէի կարողանում ազատվել: Ամեն անգամ, երբ տեղի էի տալիս այդ մեղքին, արագորեն ապաշխարում էի և անկեղծորեն խնդրում Աստծուն ներել ինձ:

Մինչև փրկվելը ես չէի պայքարում իմ մեջ մոլեգնող սեռական կրքի դեմ, այլ պարզապես տեղի էի տալիս դրան ամեն անգամ, երբ ինձանում ցանկություն էր առաջանում: Փրկվելուց հետո ես կատաղի պայքարի մեջ էի. չէի ուզում պոռնոգրաֆիա դիտել, քանի որ գիտեի, որ դա հակասում է աստվածապաշտ կյանքին, բայց թվում էր՝ դա ավելի զորավոր էր, քան իմ դիմակայելու ուժը:

1982 թվականին, երբ 23 տարեկան էի, ամուսնացա Լիզայի հետ: Ես կարծում էի, թե այդ կիրքը կմարեր, քանի որ այժմ ես ամուսնացել էի այն աղջկա հետ, որի մասին երազում էի: Բայց կիրքը չհեռացավ. փոխարենը՝ ամեն ինչ ավելի բարդացավ: Ինձ գրավում էր իմ տեսադաշտում հայտնվող ցանկացած պոռնոգրաֆիկ նյութ, ինչպես որ մագնիսը ձգում է երկաթը: Դա վնասակար ազդեցություն էր թողնում Լիզայի և իմ հարաբերությունների վրա՝ թե՛ անկողնում, թե՛ այլ բնագավառներում:

1983 թվականին ես ծառայության մեջ մտա, սակայն դեռ պայքարում էի պոռնոգրաֆիայի դեմ: Ես ավելի ու ավելի ուժգին հանդիմանություն էի զգում՝ գիտակցելով սխալս: Եկեղեցում իմ պարտականությունների մեջ էր մտնում ծառայել իմ հովվին, նրա ընտանիքին, ինչպես նաև՝ մեր հյուր-ծառայողներին: Մեր եկեղեցին ամենաճանաչված եկեղեցիներից էր Ամերիկայում, և մենք հյուրընկալում էինք բազմաթիվ ակնառու հովիվների և քարոզիչների: Նրանցից մեկը շատ հայտնի էր իր ազատագրման ծառայությամբ: Նա մի քանի տարի ապրել էր Ասիայում: Գոյություն ունեն փաստագրված պատմություններ այն մասին, որ

նրա ծառայության միջոցով մարդիկ ազատվում էին մեղքերից և դևերից: Դրանք բացառիկ են, իսկ երբեմն, նույնիսկ, աներևակայելի: Աստված զարմանալիորեն գործածում էր նրան: Նա Լեսթեր Սամրալն էր:

1984 թվականի աշնանը նա հերթական անգամ եկավ մեր եկեղեցի՝ քառօրյա սեմինար անցկացնելու համար, և ես կրկին նրա հյուրընկալն էի: Ես արդեն լավ ծանոթ էի այդ ծառայողին նրա նախորդ այցելություններից: Այս անգամ, երբ ուղեկցում էի նրան մեքենայով, և մենք մենակ էինք, ես համարեցի, որ դա հարմար պահ էր, որ պատմեի նրան սեռական կրքի հետ ունեցած իմ պայքարի մասին: Ես խոնարհեցրի ինձ և մինչև վերջ անկեղծացա, քանի որ ուզում էի ազատվել դրանից: Լեսթերը խստորեն խոսեց ինձ հետ՝ ճշմարիտ հավատքի հոր պես: Ես ուշադրությամբ լսեցի նրա ասած ամեն մի բառը, իսկ հետո հուսահատորեն խնդրեցի. «Աղոթե՛ք, որ ես ազատություն ստանամ»:

Նա շատ ազդեցիկ մի աղոթք արեց, սակայն, ի զարման ինձ, հաջորդ շաբաթների և ամիսների ընթացքում ինձ մոտ ոչինչ չփոխվեց: Ես շարունակում էի պայքարել կրքի դեմ:

Մոտավորապես ինն ամիս անց ինձ առաջարկեցին մի բնակարան, որտեղ ես կարող էի առանձնանալ՝ ծոմի և աղոթքի համար: Իմ ծոմի չորրորդ օրը՝ 1985 թվականի մայիսի 6-ին (ես երբեք չեմ մոռանա այդ ամսաթիվը), երբ խորը աղոթքի մեջ էի, ես լիովին ազատվեցի կրքի ոգուց: Սուրբ Հոգին առաջնորդեց ինձ, որ իշխանությամբ հրամայեմ կրքին հեռանալ իմ կյանքից: Ես արեցի դա, և այն իշխանությունը, որը եկավ իմ կյանքում, ավելին էր, քան երբևէ վերապրել էի: Գոհությո՛ւն Աստծուն, մինչև օրս ես ազատ եմ դրանից:

Ինչո՞ւ ավելի ուշ

Մի քանի տարի այդ մեղքից ազատ ապրելուց հետո ինձ հուզել մի հարց, որը աղոթքով բերեցի Տիրոջ առջև: «Հա՛յր, - հարցրի, - ես չեմ հասկանում: Ես խոնարհվեցի Լեսթերի՝ այդ մեծ ծառայողի առջև: Քանի որ շատերն էին ազատագրվել նրա ծառայության միջոցով, ինչո՞ւ ես ազատություն չստացա այն օրը, երբ նա աղոթեց ինձ համար: Ինչո՞ւ ես ազատություն ստացա միայն ինն ամիս անց»:

Տերը սկսեց ցույց տալ ինձ իմ կյանքն այդ ընթացքում: 1984 թվականի աշնանը, երբ Լեսթերը եկավ քարոզելու մեր եկեղեցում, ես աղոթում էի ամեն առավոտ գրեթե իննսուն րոպե: Արդեն երկու տարի շարունակ ես անում էի դա: Արթնանում էի առավոտյան ժամը 05:00-ին, մինչև ժամը 05:30-ը տանից դուրս էի գալիս և աղոթում էի մինչև 07:00-ը: Այդ ժա-

մանակ իմ ամենաջերմեռանդ աղոթքները հետևյալն էին. «Աստվա՛ծ, գործածի՛ր ինձ՝ շատերին դեպի Հիսուսն առաջնորդելու համար. գործածի՛ր ինձ՝ հիվանդներին բժշկելու համար. գործածի՛ր ինձ՝ մարդկանց ազատագրելու համար: Հա՛յր, գործածի՛ր ինձ՝ ազգերի վրա ազդեցություն թողնելու և նրանց Հիսուսին առաջնորդելու համար»: Ես աղոթում էի նույնը կրկին ու կրկին, օրըստօրե՝ խնդրելով Աստծուն ծառայություն տալ ինձ և բացել այնպիսի դռներ, որոնք ոչ ոք չէր կարող փակել: Ես աղոթում էի մեծ ջերմեռանդությամբ:

Մի աշնանային օր, իմ սովորական դարձած առավոտյան աղոթքի մեջ էի, և աղաղակում էի նույնը, ինչի մասին խնդրում էի ամիսներ, և նույնիսկ՝ տարիներ շարունակ: Հանկարծ, ինչ-որ պահի, երբ ջերմեռանդ խնդրում էի, Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ. «Որդի՛ս, դու կարող ես շահել բազմություններ Հիսուսի համար, ազատագրում տալ շատերին և բժշկել հիվանդներին, բայց հավիտենությունը անցկացնել դժոխքում»:

Ես ապշած էի. *«Մի՞թե սա հնարավոր է: Մի՞թե ես իրականում լսում եմ Սուրբ Հոգու ձայնը»:* Ես մի փոքր կասկածամտորեն վերաբերվեցի իմ լսածին, մինչև որ Նա կրկին խախտեց լռությունը՝ ասելով. «Որդի՛ս, Հուդան թողեց իր աշխատանքը՝ Ինձ հետևելու համար. նա քարոզում էր Ավետարանը, բժշկում էր հիվանդներին Իմ անունով, ազատագրում էր մարդկանց Իմ անունով, և Հուդան դժոխքում է»:

Ես մեծացել էի կաթոլիկ ընտանիքում և ընդամենը հինգ տարի էր, որ վերստին ծնված հավատացյալ էի. այնպես որ, լիովին անծանոթ էի այն վերապրմանը, որն այժմ նկարագրում եմ: Մարմնավս սարսուռ անցավ. ես սկսեցի դողալ, երբ իմ ներսում լսեցի Նրա խոսքերը: Ես ցնցվում էի և վախենում էի խոսել: Լիովին շփոթված էի, բայց, միևնույն ժամանակ, գիտեի, որ Աստված էր խոսում ինձ հետ, և երկյուղած էի Նրա ներկայությունից:

Ի վերջո, հավաքեցի ուժերս և ակնածալի կերպով հարցրի. «Այդ դեպքում, ինչի՞ն ես պետք է ամենից շատ ձգտեմ: Ո՞րն է ամենակարևորը»:

Ես այնպե՛ս հստակ լսեցի Նրա պատասխանը. «Ինձ մտերմորեն ճանաչելը»:

Այս հանդիպումից հետո, ուսումնասիրելով Աստծո Խոսքը, ես հասկացա, որ հենց սա էին ամենից շատ ցանկանում Դավիթը, Մովսեսը, Պողոսը և նրանք, ովքեր բարեհաջող ավարտ ունեցան կյանքում: Պողոսը պնդում է.

> «Եվ բոլոր բաներն էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն բանից զրկվեցի, և աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ» (Փիլիպեցիների 3.8):

Նրա նպատակը Հիսուսին մտերմորեն ճանաչելն էր, և այդ ճանաչողությունից բխում էր նրա զորավոր ծառայությունը. ես ձգտում էի ծառայության, ոչ թե Հիսուսին մտերմորեն ճանաչելուն: Այդ օրը ամեն ինչ փոխվեց:

Դրանից հետո իմ ամենօրյա աղոթքները մոտավորապես այսպիսին էին. «Տե՛ր, ես ուզում եմ ճանաչել Քեզ այնքան, որքան մարդը կարող է ճանաչել: Ես ուզում եմ հաճեցնել Քեզ այնքան, որքան մարդը կարող է հաճեցնել: Ցո՛ւյց տուր Քո սիրտը, հայտնի՛ր այն, ինչը կարևոր է Քեզ համար, և հայտնի՛ր այն, ինչն այնքան էլ կարևոր չէ Քեզ համար: Սովորեցրո՛ւ ինձ Քո ճանապարհները, և թող որ իմ կյանքն ուրախություն պարգևի Քեզ...»:

Ես շարունակում էի արթնանալ վաղ առավոտյան, բայց իմ ջերմեռանդ խնդրանքներն այդպիսին էին: Ես չէի հասկանում, թե ինչ էր տեղի ունենում, բայց հետագայում Աստված ցույց տվեց դա ինձ:

Իմ հարցն էր. «Ինչո՞ւ ես չազատագրվեցի, երբ Լեսթեր Սամրալն աղոթեց ինձ համար», և ես սկսեցի հասկանալ դրա պատասխանը: Աստված խոսեց ինձ հետ. «Երբ դու բացեցիր քո սիրտն այդ ավետարանչին, դու վախենում էիր, որ այդ մեղքը՝ կիրքը, թույլ չէր տա քեզ մտնել այն ծառայության մեջ, որի համար, ինչպես դու գիտեիր, Ես կանչել էի քեզ: Դու վախենում էիր, որ այն կորակազրկեր քեզ: Քո տրտմությունը կենտրոնացած էր քեզ վրա. դա այս աշխարհի տրտմությունն էր»:

Նա շարունակեց. «Ինն ամիս անց, քանի որ դու աղաղակում էիր Ինձ մտերմորեն ճանաչելու համար, քո սիրտը սկսեց ցավել այն պատճառով, որ քո մեղքով դու ցավ էիր պատճառում Իմ սրտին: Դու գիտեիր, որ Ես մահացել էի՝ քեզ այդ մեղքից ազատելու համար, և քեզ համար ատելի էր մասնակցություն ունենալ մի բանի, ինչի պատճառով Ես խաչն էի բարձրացել: Քո տրտմությունն ուղղված էր Ինձ. դա Աստծո ուզած կերպով տրտմություն էր:

Պողոսը գրում է Կորնթոսի եկեղեցուն.

> «Հիմա ուրախ եմ, ոչ թե նրա համար, որ տրտմեցիք, այլ՝ որ տրտմեցիք ապաշխարության համար, որ դուք Աստծո ուզած կերպով տրտմեցիք, որ մեզնից ոչ մի բանով չվնասվեք: Որովհետև *Աստծո ուզած կերպով* տրտմությունը ապաշխարություն է գործում փրկության համար՝

առանց զղջալու, բայց *աշխարհի տրտմությունը* մահ է գործում» (Բ Կորնթացիների 7.9,10):

Այս խոսքում օգտագործված «փրկություն» բառը հունարենում պարտադիր չէ, որ նշանակի վերստին ծնունդ: «Սոտերիա» բառը սահմանվում է որպես «ապահովություն, ազատություն, պահպանություն վտանգից կամ կործանումից» *(«Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան»):* Առանձնացնենք «ազատություն» բառն այս սահմանումից և տեղավորենք վերևում բերված խոսքում՝ «փրկություն» բառի փոխարեն. «Որովհետև Աստծո ուզած կերպով տրտմությունը ապաշխարություն է գործում *ազատության* համար»: Ես ազատություն ստացա՝ ազատագրվեցի, և Աստծո ուզած կերպով տրտմությունն էր, որ դուռ բացեց դրա համար:

Տրտմության երկու տեսակ

Գոյություն ունի երկու տեսակի տրտմություն՝ աստվածային և աշխարհային: Սավուղ թագավորի և Դավիթ թագավորի օրինակները ցույց են տալիս տարբերությունն այս երկուսի միջև: Ինչպես նշեցինք նախորդ գլուխներից մեկում, Սավուղն անհնազանդություն ցուցաբերեց Աստծո դեմ ամաղեկացիների հետ պատերազմում: Նա չընդունեց իր անհնազանդությունը, երբ Սամուել մարգարեն մատնանշեց այն, սակայն Սամուելը չհանձնվեց: Սավուղը մեղադրեց ժողովրդին, և միայն երբ մարգարեն հաստատակամորեն պնդեց իր ասածը, նա, ի վերջո, խոստովանեց. «Մեղք գործեցի»: Անմիջապես խոստովանելուց հետո նա արագորեն ասաց Սամուելին. «Մեղք գործեցի. աղաչո՛ւմ եմ, հիմա ժողովրդի ծերերի առջև ու Իսրայելի առջև ինձ պատվի՛ր» (Ա Թագավորաց 15.30): Սավուղի տրտմությունն ուղղված էր իր վրա: Սամուելն ամաչեցրել էր նրան՝ հանդիմանելով իշխանների և ժողովրդի առջև: Սավուղն ուզում էր վերականգնել իր պատիվը:

Ի տարբերություն նրան, Դավիթ թագավորը շատ մեծ մեղք գործեց: Նա շնացավ մեկ այլ մարդու կնոջ հետ և պատվիրեց այդ մարդու սպանությունը՝ իր հանցանքը ծածկելու համար: Նաթան մարգարեն հանդիմանեց Դավթին նրա իշխանների և ժողովրդի առջև: Երբ Դավթի մեղքը բացահայտվեց, նա գետին ընկավ և ասաց. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ» (Բ Թագավորաց 12.13):

Սավուղն ասաց. «Մեղք գործեցի»: Դավիթն ասաց. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ»: Ահա տարբերությունն այս պնդումների միջև: Դավթի սիր-

տը ցավում էր, քանի որ նա ցավ էր պատճառել իր Սիրելիին: Նրա տրտմությունը կենտրոնացած չէր իր վրա, ինչպես Սավուղինը: Մենք տեսնում ենք սա, երբ Դավիթը պառկեց Տիրոջ առջև ամբողջ գիշեր և յոթ օր ծոմ պահեց: Նա լիովին զղջում էր Աստծո դեմ գործած արարքների համար: Նա պարզորեն ցույց տվեց դա, երբ բացականչեց.

> «Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առջև գործեցի, որ Դու արդար լինես Քո խոսքերում և մաքուր լինես Քո դատաստանում» (Սաղմոս 51.4):

Այս աշխարհի տրտմությունը կենտրոնանում է մեզ վրա. «Ինչպիսի՞ հետևանքներ սա կունենա», «Ես դատաստանի՞ կենթարկվեմ սրա համար», «Ես կորակազրկվե՞մ», «Ես կկրեմ իմ մեղքի պատի՞ժը», «Ի՞նչ կմտածեն մարդիկ իմ մասին» և այլն: Աստծո ուզած կերպով տրտմությունը կենտրոնանում է Հիսուսի վրա. «Ես ցավ պատճառեցի իմ Սիրելիի սրտին, և ինչ էլ Նա որոշի, *Նրա դատաստանն արդար ու ճշմարիտ է, և ես հանձնվում եմ Նրա ողորմությանը»:*

Լիակատար ազատություն

Այժմ ես ազատ էի, բայց դեռ մտքի նորոգման կարիք ունեի: Ինձնից պահանջվեց երկու-երեք տարի դրա համար: Մինչև 1985 թվականի մայիսը, եթե ես ինչ-որ տեղ պոռնոգրաֆիկ նյութեր էի տեսնում, չէի կարողանում դիմադրել: Այժմ կարող էի տիրապետել ինձ և հեռանալ այդ նյութերից, բայց եթե իմ կողքով կիպ հագուստով սիրունատես կին էր անցնում, ես ստիպված էի լինում այլ կողմ նայել, որպեսզի իմ միտքը չթափառեր: Սա այն ամբողջական ազատությունը չէր, որը Հիսուսը տվել է մեզ: Իմ ազատագրումը դեռ լիարժեք չէր:

Կա տարբերություն *ազատություն ստանալու* և *ազատ լինելու* միջև: Ես ազատություն ստացա մայիսի 6-ին, բայց Հիսուսն ասում է. «Եվ ճշմարտությունը կճանաչեք, և ճշմարտությունը կազատի ձեզ» (Հովհաննես 8.32): Նպատակը՝ ազատ լինելն է, իսկ դրա համար ճշմարտությունը պետք է թափանցի մեր էության մեջ:

Ես շարունակեցի մնալ Նրա Խոսքի և աղոթքի մեջ, և իմ միտքը սկսեց դիտարկել կանանց այնպես, ինչպես Նա է տեսնում նրանց: Առաջին լուրջ փոփոխությունը տեղի ունեցավ, երբ սրտումս հասկացա, որ բոլոր կանայք *դուստրեր* են: Սուրբ Հոգին ցույց տվեց ինձ, որ ամեն կին ինչ-որ մայրիկի և հայրիկի փոքրիկ աղջնակն է: Նրանք մսի

կտոր չեն, ինչպես որ ես էի դիտարկում նրանց՝ մինչև ազատություն ստանալը:

Որոշ ժամանակ անց իմ սիրտն ավելի մեծ հայտնություն ստացավ: Ինձ համար պարզ դարձավ, որ բոլոր կանայք ստեղծված են Աստծո պատկերով, և որ Նա պսակել է նրանց փառքով և պատվով (տե՛ս Ծննդ. 1.26,27 և Սաղմ. 8.5): Կրկին, միգուցե այս հայտնությունը խորը չթվա, բայց այն արմատապես փոխեց իմ կյանքը:

Հիմա, երբ իմ առջև ինչ-որ պոռնոգրաֆիկ պատկեր է երևում, դա վիրավորական է ինձ համար: Այո՛, այն, ինչով մի ժամանակ տարված էի, այժմ վանում է ինձ: Հիմա, երբ իմ կողքով գրավիչ կին է անցնում, ես կարիք չունեմ շրջել գլուխս, ինչպես տարիներ առաջ՝ ազատություն ստանալուց հետո: Այժմ ես կարող եմ նայել այդ կնոջ աչքերին և ողջունել նրան՝ առանց նրա հանդեպ անպարկեշտ ցանկություն ունենալու:

Ես բացահայտեցի Հիսուս Քրիստոսի շնորհքի զորությունը: Ես հասկանում եմ, որ քրիստոնյաների մեծ մասը դիտարկում է շնորհքը որպես փրկություն, մեղքերի ներում և անարժանաբար տրվող պարգև, ուրիշ ոչինչ: Ես հասկացա, որ, այո՛, Աստծո շնորհքն ընդգրկում է այս զարմանալի հատկանիշները, բայց այն նաև զորություն է տալիս մեզ, որ փոխվենք, որ անենք այն, ինչի համար ճշմարտությունը կանչում է մեզ:

Մի՞թե մենք կարող ենք հավատալ, որ Հիսուսի ձրիաբար տրվող պարգևն ազատում է մեզ *մեղքի հավիտենական պատժից*, բայց այնքան զորավոր չէ, որ ազատություն տա մեզ *մեղքի ստրկությունից:* Դուք չե՛ք կարող համոզել ինձ դրանում:

Ես գիտե՛մ: Ես վերապրե՛լ եմ Նրա կյանք փոխող շնորհքը և այժմ ազատ եմ: Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ Նա արեց դա ինձ համար, և այնքա՛ն շնորհակալ եմ, որ Նա կանի նույնը ձեզ համար: Դա պայքար էր, ոչ թե զբոսանք բնության գրկում. ինձնից պահանջվեց հաստատակամություն և ջերմեռանդ աղոթք: Ամենայն հավանականությամբ, նույնը կպահանջվի նաև ձեզնից: Բարի լուրն այն է, որ դուք պարտություն չեք կրի, որովհետև Աստծո շնորհքը և սերը չեն պարտվում: Այնպես որ, մնացե՛ք Նրա շնորհքի հետ և ազա՛տ եղեք:

գործնական քայլ

Աստված է ձեր Փրկիչը, և ուրիշը չկա: Ո՛չ մի հինգ քայլից բաղկացած ծրագիր, ո՛չ մի մարդկային ջանք, և ո՛չ մի կանոնների ցուցակ չեն կարող ազատել ձեզ մեղքի ստրկությունից: Բայց դա չի նշանակում, որ Աստված ազատում է մեզ մեղքից, մինչ մենք անգործության ենք մատնված: Աստված կազատի ձեզ, բայց Նրան փնտրելը ջանքեր է պահանջում: Երբ փնտրենք մեր երկնային Հորը ճիշտ դրդապատճառներով՝ Նրան ճանաչելու, ոչ թե Նրանից ինչ-որ բան ստանալու համար, մենք կքայլենք դեպի մեր ազատությունը:

Հարցը հետևյալն է. որքա՞ն կարևոր է ձեզ համար ազատություն ստանալը: Դուք ժամանակ կհատկացնե՞ք Աստծուն փնտրելու համար: Դուք կառանձնանա՞ք ձեր առօրյա գործերից, եթե դրա կարիքը լինի: Դուք կշարունակե՞ք անդադար աղաղակել, մինչև որ գտնեք Նրա ներկայությունը և ստանաք Նրա խոստումները: Դուք կմոտենա՞ք Նրան՝ թույլ տալով, որ նա որոշի, թե ինչպիսին են լինելու ձեր հարաբերությունները: Դուք կձգտե՞ք ազատվել մեղքից հանուն ձեր հարաբերությունների, ոչ թե այն պատճառով, որ դա թույլ չի տալիս ձեզ ապրել ձեր ուզած կերպով: Դուք կխոնարհվե՞ք՝ թույլ տալով, որ նշանակված և աստվածապաշտ առաջնորդներն աղոթեն ձեզ համար և խոսեն ձեր կյանքում:

Հաշվե՛ք ձեր ստրկության գինը, բայց նույնպես հաշվե՛ք ձեր ազատության գինը: Եվ հետևե՛ք Աստծուն ամբողջ սրտով: Նա սպասում է, որ մտերմորեն ճանաչի ձեզ:

26

ՄԵՂՔ, ՈՐԸ ՄԵՂՔ ՉԷ

Դուք զարմացա՞ք՝ կարդալով այս գլխի վերնագիրը:

Կռապաշտությունն ունի ևս մեկ կողմ, որի մասին դեռ չենք խոսել, և այն կարելի է անվանել *«մեղք, որը մեղք չէ»:* Մենք չենք կարող անտեսել այն, եթե ցանկանում ենք վերջնականորեն կործանել կրիպտոնաքարը, քանի որ այն կարող է ամենից անորսալին լինել: Եկեք սկսենք մի առակով:

Մի օր մի մարդ ասաց Հիսուսին, թե որքան հրաշալի կլիներ խնջույքի գնալ Աստծո թագավորության մեջ: Հիսուսն օգուտ քաղեց նրա դիտողությունից և մի կարևոր ճշմարտություն հայտնեց. «Մի մարդ մեծ ընթրիք արեց և շատերին հրավիրեց: Եվ ընթրիքի ժամանակ իր ծառային ուղարկեց, որ հրավիրվածներին ասի. «Եկե՛ք, որովհետև արդեն ամենը պատրաստ է»: Եվ ամենքը սկսեցին մեկ-մեկ ետ քաշվել (կամ՝ արդարացումներ ներկայացնել)» (Ղուկաս 14.16-18): Այս առակի առանցքային միտքն արդարացումներ ներկայացնելն է:

Ձեզ հետ երբևէ պատահե՞լ է: Դուք որևէ բան եք խնդրում ինչ-որ մեկից՝ օգնել ձեզ, երեկույթի գալ, կատարել կարևոր առաջադրանք, ինչ-որ հանձնարարություն կամ մեկ այլ բան, և ի պատասխան՝ թույլ արդարացումներ եք լսում: Ի՞նչ են դրանք նշանակում: Պարզապես այն, որ նրանց ծրագրերն ավելի կարևոր են, քան ձեր խնդրանքը: Ըստ էության, նրանք ասում են. «Իմ գործերն ավելի առաջնահերթ են ինձ համար, քան քոնը»:

Հիսուսի խոսքերով՝ այդ մարդը խորոված, հոթ-դոգ կամ չիպսեր չէր հյուրասիրում: Դա մեծ խնջույք էր և կարևոր իրադարձություն: Նա կազմակերպել էր դա, որպեսզի օրհներ իր կողմից հրավիրվածներին: Հրավիրատոմսերը տպվել էին, կնքվել էին և ուղարկվել էին նրանց, ովքեր

կուզեին մասնակցել, բայց բոլորը պատասխանեցին արդարացումներով. «Առաջինն ասաց. «Ագարակ առա և պետք է գնամ՝ նրան տեսնեմ. Աղաչո՛ւմ եմ քեզ, ինձ հրաժարվա՛ծ համարիր»» (Ղուկաս 14.18):

Ես մի կարևոր հարց կտամ. մի՞թե ագարակ գնելը մեղք է: Իհարկե՝ ո՛չ: Եթե այդպես է, ես խնդիրներ կունենամ, որովհետև իմ կյանքում եղել է դեպք, երբ հողատարածք եմ գնել: Այնուամենայնիվ, երբ հողատարածք գնելն ավելի կարևոր է, քան Տիրոջ Խոսքը, դա մեղք է՝ «մեղք, որը մեղք չէ»: Ավելի ճիշտ՝ դա կռապաշտություն կամ կրիպտոնաքար է:

Տեսնենք, թե ինչ պատասխանեց մյուսը.

> «Եվ մյուսն ասաց. «Հինգ լուծ եզ առա և գնում եմ, որ նրանց փորձեմ: Աղաչո՛ւմ եմ քեզ, ինձ հրաժարվա՛ծ համարիր»» (Ղուկաս 14.19):

Կրկին, մի՞թե եզներ գնելը կամ, այլ կերպ ասած, գործի համար անհրաժեշտ սարքավորումներ գնելը մեղք է: Իհարկե՝ ո՛չ. իմ կյանքի ընթացքում ես բազմաթիվ գնումներ եմ կատարել գործի համար: Այնուամենայնիվ, երբ ինչ-որ բան գնելն ավելի կարևոր է, քան Տիրոջ Խոսքը, դա մեղք է: Այնպես որ, կրկին, դա «մեղք է, որը մեղք չէ», իսկ ավելի ճիշտ՝ դա կռապաշտություն կամ կրիպտոնաքար է:

Եկեք լսենք մեր վերջին հրավիրվածին.

> «Եվ մյուսն ասաց. «Կին եմ առել և նրա համար չեմ կարող գալ»» (Ղուկաս 14.20):

Թույլ տվեք վերջին անգամ հարց տալ. մի՞թե կին առնելը մեղք է: Եթե այդպես է, շատ տղամարդիկ, ներառյալ ես, խնդիրներ կունենան: Իհարկե, դա մեղք չէ: Այնուամենայնիվ, երբ ամուսնանալն ավելի կարևոր է, քան Տիրոջ Խոսքը, դա մեղք է: Կրկին, դա «մեղք է, որը մեղք չէ», իսկ ավելի ճիշտ՝ դա կռապաշտություն կամ կրիպտոնաքար է:

Կարծում եմ՝ իմաստը հասկանալի է. երբ մենք կարևորում ենք որևէ անձի, որևէ առարկա, երևույթ կամ գործունեություն ավելի, քան Տիրոջ Խոսքը, այն, ինչը մեղք չէ, մեղք է դառնում:

Իմ կրիպտոնաքարը բացահայտվեց

Ինչպես արդեն ասացի, ես սիրահարվեցի Հիսուս Քրիստոսին, երբ երկրորդ կուրսի ուսանող էի «Փուրդյու» համալսարանում: 1981 թվականին, մեր համալսարանի տղաների հանրակացարանում ես ընդունե-

ցի Նրան որպես Տեր: Ես կրակով լցված էի Նրա հանդեպ:

Մի քանի ամիս անց սկսվեց ամերիկյան ֆուտբոլի հերթական խաղաշրջանը: Ես արդեն երրորդ կուրսում էի և որպես ուսանող՝ ունեի մեր տեղական թիմի բոլոր խաղերի տոմսերը: Նախորդ երկու տարիների ընթացքում նույնիսկ մեկ խաղ բաց չէի թողել: Բայց այժմ ես այնքա՜ն ոգևորված էի Հիսուսով, որ օգտագործեցի ֆուտբոլային խաղերի ժամանակը՝ Աստվածաշունչն ուսումնասիրելու համար: Տղաների հանրակացարանում հանգիստ էր, քանի որ բոլորը խաղերի էին գնում: Դա աղոթքի հրաշալի ժամեր անցկացնելու հնարավորություն էր: Ես վայելում էի Աստծո հետ անցկացրած ժամանակն ավելի, քան ամերիկյան ֆուտբոլը:

Ոչ ոք չէր ասել ինձ. «Դու չպետք է ամերիկյան ֆուտբոլի խաղերի գնաս»: Իմ մտքով նույնիսկ չէր անցնում, որ խաղերի գնալը սխալ է: Իրականում, իմ ուսման վերջին տարվա ընթացքում ես գնացել էի շատ խաղերի:

Անմիջապես «Փուրդյու» համալսարանն ավարտելուց հետո տեղափոխվեցի Տեխաս նահանգի Դալլաս քաղաքը և մի քանի ամիս անց աշխատանքի ընդունվեցի իմ եկեղեցում, որի անդամն էի դարձել: Եկեղեցու մեծ և ազդեցիկ լինելու պատճառով մենք ավելի քան չորս հարյուր աշխատող ունեինք:

Այդ ժամանակ Դալլասի Կովբոյները Ֆուտբոլի ազգային լիգայի լավագույն թիմերից մեկն էր: Ես Կովբոյների մեծ երկրպագու չէի, քանի որ մեծացել էի Միչիգանում, բայց ամեն երկուշաբթի լսում էի մեր աշխատողների զրույցները Կովբոյների մասին: Նրանք զգացմունքորեն քննարկում էին կիրակի օրվա խաղը՝ վիճակագրական տվյալները, խաղի ուշագրավ պահերը և, իհարկե, եզրափակիչ խաղերի հնարավոր արդյունքները:

Հետաքրքրասիրությունից ելնելով՝ սկսեցի դիտել Կովբոյների խաղերը: Ես սկսեցի մեկ-երկու խաղակեսից: Ինձ դուր էր գալիս դիտել նրանց, քանի որ նրանց խաղը շատ տպավորիչ էր: Դա ևս մեկ առավելություն էր տալիս ինձ. ես կարող էի լուրջ կեցվածք ընդունել և քննարկել խաղերը մեր գրասենյակի մյուս աշխատողների հետ:

Բայց ժամանակի ընթացքում իմ հետաքրքրությունը Կովբոյների հանդեպ ավելացավ և խաղերը դիտում էի ամբողջությամբ: Ես սկսեցի բարձրաձայն խոսել հեռուստացույցի հետ՝ երբեմն ուրախանալով, իսկ երբեմն բղավելով խաղացողների վրա: Ի վերջո, այն աստիճան տարվեցի դրանով, որ բաց չէի թողնում ոչ մի խաղ, և ոչ էլ որևէ հատված խաղերից: Նույնիսկ խաղաշրջանների միջև ես և մյուս աշխատողները

շարունակում էինք քննարկել թիմի կազմը հաջորդ խաղաշրջանում, և այն, թե ինչպիսին էր լինելու նրանց խաղը: Ես արդեն լիարժեք երկրպագու էի:

Իմ ոգևորությանը չափ չկար, երբ սկսվեց հաջորդ խաղաշրջանը: Ամեն կիրակի՝ ծառայությունից հետո, ես տուն էի շտապում և միացնում հեռուստացույցը՝ նույնիսկ առանց հագուստս փոխելու, իսկ այդ ժամանակ մենք կոստյում և փողկապ էինք կրում: Ես պոկ չէի գալիս հեռուստացույցից, թեև անհարմար հագուստով էի և լոգասենյակ գնալու կարիք ունեի: Ես չէի ուզում բաց թողնել խաղը նույնիսկ մեկ վայրկյանով:

Խաղի կեսին՝ ընդմիջման ժամանակ, ես իմ սենյակ էի գնում և փոխում հագուստս: Եթե Լիզան օգնության կարիք ուներ ինչ-որ բանում, նա կարող էր մոռանալ այդ մասին. «Սիրելի՛ս, Կովբոյնե՛րն են խաղում»: Մենք ճաշում էինք խաղի կեսին, կամ նույնիսկ՝ խաղից հետո, բայց երբեք՝ խաղի ընթացքում:

Այդ պահին ես արդեն գիտեի թիմի բոլոր վիճակագրական տվյալները: Ուշադրությամբ ուսումնասիրում էի դրանք և շարունակ մտածում, թե ինչպես Կովբոյները կարող էին ավելի լավ խաղալ: Աշխատավայրում ես արդեն վարում էի բոլոր խոսակցությունները խաղերի մասին: Եկեղեցում կային մարդիկ, որոնք անվճար տոմսեր ունեին, և ես մեծ պատրաստակամությամբ ընդունում էի մարզադաշտ գնալու և խաղերը դիտելու բոլոր հրավերները: Ես երբեք չունեի *թույլ արդարացումներ*՝ չգնալու համար:

Եկեք անցնենք հաջորդ խաղաշրջանին: Խաղերը սկսվելուց կարճ ժամանակ առաջ ես մի աղոթք արեցի, որն, իմ կարծիքով, շատ հասարակ և անկարևոր էր: Այնուամենայնիվ, ես չէի պատկերացնում, որ այն փոխելու էր իմ կյանքը: Իմ աղոթքն այսպիսին էր. «Տե՛ր, խնդրում եմ, մաքրի՛ր իմ սիրտը: Ես ուզում եմ լինել սուրբ և առանձնացված Քեզ համար. այնպես որ, եթե իմ կյանքում կա այնպիսի բան, ինչը հաճելի չէ Քեզ, կամ ավելի առաջնահերթ է Քեզնից, բացահայտի՛ր և օգնի՛ր հեռացնել դա»:

Խաղաշրջանը մոտենում էր ավարտին: Եզրափակիչ խաղերին շատ քիչ ժամանակ էր մնացել: Ես դիտում էի որոշիչ խաղերից մեկը. Կովբոյները խաղում էին ընդդեմ Ֆիլադելֆիայի Արծիվների: Հաղթողը մասնակցելու էր եզրափակիչ խաղերին, իսկ պարտվողը դուրս էր մնալու: Ես պոկ չէի գալիս հեռուստացույցից. ես նստած չէի բազմոցին, այլ կանգնած էի էկրանի առջև: Վերջին խաղակեսն էր, և խաղի ավարտին ընդամենը ութ րոպե էր մնացել: Կովբոյները պարտվում էին չորս միավորով, երբ թիմը գնաց հարձակման նրանց հանրահայտ հարձակվողի առաջնորդությամբ: Ես ետուառաջ էի քայլում հարձակումների ընթաց-

քում՝ զայրույթից բղավելով վատ խաղի դեպքում, և սրտանց ուրախանալով լավ խաղի դեպքում: Խաղի անորոշ ավարտը կարծես աշխուժություն էր առաջացնում:

Հանկարծ, առանց որևէ նախազգուշացման, Աստծո Հոգին մղեց ինձ աղոթքի: Այդ անսպասելի մղումն ամբողջովին համակեց ինձ. «Աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր»: Դա բեռ էր՝ ուժգին և ծանր զգացում սրտիս խորքում: Ես գիտեի, որ այդպիսի մղում առաջանում է, երբ Աստծո Հոգին ցանկանում է, որ առանձնանամ և աղոթեմ:

Ես բարձրաձայն ասացի. «Տե՛ր, խաղի ավարտին ընդամենը ութ րոպե է մնացել: Ես կաղոթեմ, երբ այն ավարտվի»:

Չնայած դրան՝ մղումը չդադարեց և չթուլացավ:

Անցավ մի քանի րոպե: Դեռևս ցանկանալով թեթևություն ստանալ՝ ես բացականչեցի. «Տե՛ր, ես հինգ ժամ կաղոթեմ, երբ խաղն ավարտվի: Ընդամենը վեց րոպե է մնացել»:

Գնդակը Կովբոյների մոտ էր: Ես համոզված էի, որ նրանք հաղթելու էին այդ կարևոր խաղը: Բայցևայնպես, աղոթքի մղումը չէր թուլանում, այլ ավելի էր ուժգնանում: Ես հուսահատություն ապրեցի: Չէի ուզում թողնել խաղը և բարձրաձայն ասացի. «Տե՛ր, ես կաղոթեմ մինչև օրվա վերջը, նույնիսկ՝ ամբողջ գիշեր, եթե ցանկանում ես»:

Ես մինչև վերջ դիտեցի խաղը: Կովբոյները հաղթեցին, և քանի որ խոստացել էի Աստծուն, ես անմիջապես անջատեցի հեռուստացույցը: Բարձրացա երկրորդ հարկ՝ իմ աշխատասենյակը, փակեցի դուռը և ծնկի եկա գորգի վրա՝ աղոթելու: Բայց աղոթքի մղումն անցել էր: Այլևս աղոթքի բեռ չկար: Նույնիսկ թեթև զգացում չկար. ես ոչինչ չէի զգում:

Փորձեցի բորբոքել այդ զգացումը: Ես փորձեցի աղոթել, բայց իմ խոսքերը չոր ու միապաղաղ էին: Շատ ժամանակ չպահանջվեց՝ հասկանալու համար, թե ինչ տեղի ունեցավ. ես գերադասեցի խաղը Աստծո խնդրանքից:

Ես խոնարհվեցի՝ երեսս գորգին դիպցնելով, և հառաչեցի. «Աստվա՛ծ, եթե ինչ-որ մեկը հարցներ ինձ. «Ո՞վ է ավելի կարևոր քո կյանքում՝ Աստվա՞ծ, թե՞ Դալլասի Կովբոյները», ես անվարան կպատասխանեի. «Իհարկե՝ Աստվա՛ծ»: Բայց հենց նոր ես ցույց տվեցի, թե ո՛վ է ավելի կարևոր: Դու ունեիր իմ կարիքը, իսկ ես գերադասեցի խաղը, ոչ թե Քեզ: Խնդրում եմ, ների՛ր ինձ»:

Ես անմիջապես լսեցի սրտումս. «Որդի՛ս, Ես չեմ ցանկանում հինգ-ժամանոց աղոթքի զոհաբերություն քեզնից: Ես ցանկանում եմ հնազանդություն»:

Կյանքի ցանկացած ոլորտ

Այսպիսի կռապաշտությունը կարող է տեղ գտնել կյանքի ցանկացած բնագավառում: Ես հիշում եմ մի դեպք, որը տեղի ունեցավ գրեթե նույն ժամանակ, ինչ նախորդ պատմությունը: Մի առավոտ ես պատրաստվում էի լցնել իմ չոր շիլան ափսեի մեջ: Ես սիրում եմ շիլա ուտել առավոտյան: Բայց այդ առավոտ լսեցի Աստծո շշնջոցը. «Ես ուզում եմ, որ ծոմ վերցնես նախաճաշից»:

Ես հիշում եմ, որ նայում էի իմ շիլային և այնքա՜ն էի ուզում ուտել: Ես ասացի. «Տե՛ր, հաջորդ շաբաթ եռօրյա ծոմ կվերցնեմ». ևս մեկ *թույլ արդարացում՝* Նրա խնդրանքին չհնազանդվելու համար: Աստված ցույց տվեց ինձ, որ կերակուրը կուռք էր ինձ համար: Ես Աստծո հետ շփման թանկագին հնարավորություններ էի բաց թողել, քանի որ իմ ցանկությունը կերակուրի հանդեպ ավելին էր, քան Նրա ներկայությունը և Խոսքը վերապրելու ձգտումը:

Նույն կերպով, երբ ես չափից շատ տարվեցի գոլֆով, Սուրբ Հոգին դրդեց ինձ, որ իմ գոլֆի մականների ամբողջ հավաքածուն նվիրեմ մի հովվի (նրա կյանքում գոլֆը սխալ տեղում չէր):

Մեկուկես տարի գոլֆ չխաղալուց հետո, մի պրոֆեսիոնալ գոլֆ խաղացողի սրտում Տերը դրեց, որ նվիրի ինձ իր գոլֆի պարագաների հավաքածուն, որը հազարավոր դոլարներ արժեր: Ես չգիտեի՝ ինչ անել: Դրանից մի քանի ամիս անց մի հովիվ ինձ ասաց, որ Աստված դրել է իր սրտում մականների հավաքածու նվիրել ինձ: Ես իսկապես շփոթվեցի:

Երբ նա գնաց, և ես մնացի մենակ, հարցրի Տիրոջը. «Ի՞նչ անեմ ամբողջ այս հավաքածուն»:

«Գո՛լֆ խաղա», - լսեցի իմ սրտում:

«Բայց մեկուկես տարի առաջ Դու պատվիրեցիր, որ նվիրեմ իմ բոլոր մականները»:

Ես լսեցի, թե ինչպես Աստված ասաց. «Գոլֆն այլևս սխալ տեղում չէ քեզ համար: Այն դարձել է հանգստի և հաճելի ժամանցի միջոց»:

Դրանից հետո և մինչև օրս ես գոլֆ եմ խաղում: Աստված հրաշալի կերպով օգտագործեց այս խաղը՝ ինձ հանգիստ և թարմություն տալու համար: Նույնպես, այն դարձավ հարթակ՝ կորսված մարդկանց փրկության առաջնորդելու, նաև իմ որդիների, այլ եկեղեցական առաջնորդների և մեր ծառայության գործընկերների հետ շփվելու համար: Իրականում, «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ն ավելի քան հինգ միլիոն դոլարի հանգանակություններ է ստացել միսիայի և ավետարանչական նա-

խագծերի համար իմ ընկերների և գործընկերների հետ գոլֆ խաղալու շնորհիվ՝ մեր ծառայության «Մեսինջերի գավաթ» կոչվող գոլֆի մրցույթի շրջանակներում: Եթե ես լիովին հրաժարվեի գոլֆից մինչև կյանքիս ավարտը, նման բան տեղի չէր ունենա: Գոլֆն այլևս կրիպտոնաքար չէր ինձ համար:

Ահա թե ինչպես մենք կարող ենք գործել այն մեղքը, որը մեղք չէ: Այն կարող է տեղ գտնել մեր կյանքում աշխատանքի, ծառայության, սպորտի, փոխհարաբերությունների, հաճելի ժամանցի և նույնիսկ կյանքի առաջնահերթությունների մեջ:

Աստված կամենում է, որ մենք վայելենք այս կյանքը: Իրականում, Պողոս առաքյալը մի զարմանալի դիտարկում է անում.

> «Աստված, Ով առատորեն և անդադար ամեն բան մատակարարում է մեզ՝ [մեր] վայելելու համար» (Ա Տիմոթեոս 6.17, AMPC):

Նա կամենում է, որ մենք վերապրենք բոլոր հրաշալի օրհնությունները, որոնք տվել է մեզ: Նա ցանկանում է, որ մենք վայելենք կյանքը: Նա միայն խնդրում է մնալ առաջինը մեր առաջնահերթությունների ցուցակում, ինչը նշանակում է, որ Ինքը և Իր ցանկությունները պետք է նախապատվություն ստանան ամեն անգամ, ամեն վայրում և ամեն իրավիճակում:

Ո՛չ մի թույլ, և նույնիսկ՝ հիմնավոր արդարացում:

Բաց մի՛ թողեք մեծ ընթրիքը

Կարդանք Հիսուսի առակի ավարտը: Մենք կարդացինք այն երեքի մասին, որոնք հրավիրված էին ընթրիքի, սակայն պատասխանեցին՝ արդարացումներ ներկայացնելով:

> «Եվ այն ծառան եկավ, այս բաները պատմեց իր տիրոջը: Այն ժամանակ տան տերը բարկացած ասաց իր ծառային. «Դո՛ւրս գնա շուտով քաղաքի հրապարակները և փողոցները, և աղքատներին և խեղերին և կաղերին և կույրերին մտցրո՛ւ այստեղ»: Եվ ծառան ասաց. «Տե՛ր, եղավ՝ ինչպես հրամայեցիր, և դեռ էլ տեղ կա»: Եվ տերն ասաց ծառային. «Դո՛ւրս գնա ճանապարհները և ցանքերը և ստիպի՛ր, որ մտնեն, որ իմ տունը լցվի: Որովհետև, ասում եմ ձեզ, թե

այն կանչված մարդկանցից ոչ մեկն իմ ընթրիքը չի ճաշակի»» (Ղուկաս 14.21-24):

Անկասկած, այս պատմությունը Գառան հարսանիքի ընթրիքի մասին է՝ այն խնջույքի, որը Հայր Աստված կազմակերպելու է Իր Որդու համար ժամանակների ավարտին, որին բոլորս հրավիրված ենք: Այնուամենայնիվ, այս պատմության մեջ կա մի սկզբունք, որը վերաբերում է մեր ներկային: Երբ Աստված կանչում է մեզ ինչ-որ բանի, ինչն ընդհատում է մեր առօրյա գործերը կամ նախասիրությունները, նշանակում է՝ կա շատ ավելի մեծ բան, որը Նա պատրաստել է մեզ համար: Դա կոչվում է աստվածային հանդիպում, որը կավարտվի մեծ ընթրիքով, և այդ խնջույքի ժամանակ մենք կստանանք Նրա Խոսքը, իմաստությունը, ներկայությունը, մատակարարումը, խորհուրդը, զորությունը և բազմաթիվ այլ օրհնություններ, որոնք միայն Նա կարող է տալ:

Նա ինչ-որ բան էր պատրաստել ինձ համար Դալլասի Կովբոյների խաղի ընթացքում: Մեկ օր ես կիմանամ, թե ինչ էր դա: Համոզված եմ՝ Նա գտավ ինչ-որ մեկին ճանապարհների վրա և դաշտերում, ով ստացավ այն օրհնությունը, որը նախատեսված էր ինձ համար: Ես բաց թողեցի այն:

Ես դատապարտություն չեմ զգում այդ պատճառով, քանի որ ներում եմ խնդրել Նրանից, և Նրա ողորմությունը շա՜տ մեծ է: Այնուամենայնիվ, ես սովորել եմ իմ գործած սխալներից: Այլևս չեմ ցանկանում բաց թողնել որևէ անակնկալ, որը Նա պատրաստել է ինձ համար՝ կրիպտոնաքարից կառչելու պատճառով:

Երբ մենք ստանում ենք Աստծո Խոսքը կամ իմաստությունն ընդունելու այս անսպասելի հրավերները և մի կողմ ենք դնում բոլոր արդարացումները, մենք զորություն ենք ստանում: Հիշեք՝ կրիպտոնաքարը միայն տկարացնում է մեզ:

Ցավոք, ոմանք շարունակում են կրկին ու կրկին արդարացումներ ներկայացնել: Նրանք այդպես էլ չեն տալիս Նրան առաջին տեղը, և հնարավոր է, որ բաց թողնեն մեծ ընթրիքը: Հուսով եմ, որ այդպես չի լինի, քանի որ Նրա տանը տեղ կա, և բոլորս հրավիրված ենք:

Աղոթե՛ք այս պարզ աղոթքը, որը ես արեցի շատ տարիներ առաջ. *«Հա՛յր, ես խնդրում եմ իմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, մաքրի՛ր իմ սիրտը: Ես ուզում եմ լինել սուրբ և առանձնացված Քեզ համար. այնպես որ, եթե իմ կյանքում կա այնպիսի բան, ինչը հաճելի չէ Քեզ, կամ ավելի առաջնահերթ է Քեզնից, բացահայտի՛ր և օգնի՛ր հեռացնել դա: Ես չեմ ուզում բաց թողնել Քո խնջույքներից ոչ մեկը»:*

գործնական քայլ

Հուսով եմ՝ դուք արդեն աղոթեցիք այս գլխի վերջում գտնվող աղոթքը: Եթե արեցիք դա, Աստված կսկսի գործել ձեր կյանքում հաջորդ օրերի, շաբաթների և ամիսների ընթացքում, որպեսզի ավելի մոտեցնի Իրեն, և այդ ընթացքում կբացահայտի այն բաները, որոնք հեռու են պահում ձեզ Իրենից: Գործուն կերպով ներգրավվեք հենց հիմա՝ խնդրելով Աստծուն խոսել ձեզ հետ ցանկացած բանի մասին ձեր կյանքում, որն արդարացում է դարձել՝ Նրա խոսքերին չարձագանքելու համար: Գրի՛ առեք այն բաները, որոնք Նա հայտնում է ձեզ, և մի քանի րոպե հատկացրեք, որ աղոթեք դրանց համար: Խնդրե՛ք Աստծուն հայտնել Իր կարծիքն այդ բաների մասին և գրի՛ առեք այն, ինչ Նա ասում է ձեզ:

Եթե դուք չեք աղոթել այս գլխի վերջում գտնվող աղոթքը, հենց հիմա ժամանակ հատկացրեք և մեկ այլ աղոթք արեք: Խնդրե՛ք Աստծուն տալ ձեզ հոժար և խիզախ սիրտ, որպեսզի կարողանաք անել այդ աղոթքը: Գրի՛ առեք այն, ինչ Աստված ցույց է տալիս ձեր սրտում, մինչ դուք աղոթում եք:

27

ԽՆՁՈՒՅՔԻ ԴՈՒՌԸ

Հիսուսը խիստ ուշագրավ մի բան ասաց Հայտնության գրքում գտնվող մեկ այլ եկեղեցու: Նրա խոսքերը սերտորեն կապակցված են այն թեմային, որը քննարկեցինք նախորդ գլխում:

> «Ահա Ես դռան առջև կանգնած եմ և թակում եմ: Եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, կմտնեմ նրա մոտ և ընթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ» (Հայտնություն 3.20):

Ընթրիք՝ Հիսուսի հետ... Սա շփման խնջույք է. սա ընկերակցություն է Տիրոջ հետ: Ահա թե որտեղ ենք մենք ստանում Նրա Խոսքը, իմաստությունը, խորհուրդը, զորությունը և Նրա ներկայությունից բխող մյուս հրաշալի օրհնությունները: Հուսով եմ՝ այս ընթրիքը մեր մեջ առաջացնում է Նրանից ընդունելու քաղց, սպասում և ոգևորություն: Ահա թե ինչն է զորություն տալու մեզ: Հիսուսի պատրաստած ընթրիքը կրիպտոնաքարի հակաթույնն է: Դա կարելի է համեմատել այն բանի հետ, որ Սուպերհերոսը նոր ուժեր է ստանում արևից: Հիսուսը կենդանի Խոսքն է, ճշմարիտ Հացը Երկնքից, և Նրա ներկայությունը զորացնում է մեզ՝ ցանկացած տեսակի կրիպտոնաքարի հակառակվելու համար:

Հարցը հետևյալն է. ի՞նչ դուռ է Նա թակում: Շատ ծառայողներ օգտագործել են այս խոսքը՝ մարդկանց փրկության կոչ անելու համար, և դա հրաշալի է: Բայց մենք պետք է հիշենք, որ Նա դիմում է եկեղեցուն՝ Իր հետևորդներին, ոչ թե նրանց, որոնք երբեք չեն ճանաչել Իրեն: Այնուամենայնիվ, Հիսուսի կարևորագույն շեշտադրումը դուռը չէ, այլ՝ «Եթե մեկը լսի» խոսքերը:

Եթե ես տնով մեկ բարձր հնչող երաժշտություն միացնեմ, և մի կարևոր հյուր թակի իմ տան դուռը և ձայն տա, ես չեմ լսի: Իմ հյուրը ստիպված կլինի հեռանալ:

Այնպես որ, գոյություն ունի ավելի կարևոր մի հարց. ի՞նչը թույլ չի տալիս մեզ լսել: Եթե չլսենք, մենք բաց կթողնենք խնջույքը Նրա հետ. այնպես որ, եկեք փնտրենք այս անչափ կարևոր հարցի պատասխանը:

Սրբություն

Երբ հիշատակում եք «սրբություն» բառը ժամանակակից եկեղեցում, մարդիկ հաճախ ընկրկում են և արագորեն փոխում են թեման: Այս բառը գրավիչ չէ «առաջադեմ» հավատացյալների համար և կարծես սահմանափակում է նրանց կյանքը: Չափազանց հաճախ սրբությունը դիտարկվում է որպես գործերով փրկությունը վաստակելու հոմանիշ և համարվում է օրինապաշտություն:

Այնուամենայնիվ, սա միակ բառն է Նոր կտակարանում, որը նկարագրում է այն եկեղեցին, որի համար Հիսուսը վերադառնալու է: Գրված չէ, որ Նա վերադառնալու է լավ առաջնորդներ ունեցող, արդիական, հասարակության հետ լավ կապեր ձևավորող կամ ազդեցիկ համայնք ունեցող եկեղեցու համար: Բոլոր այս հատկանիշներն անչափ կարևոր են և նպաստում են եկեղեցու աճին և հաջողությանը, բայց սրանցից ոչ մեկը չի բնութագրում Քրիստոսի հարսնացուին:

Դժբախտաբար, օրինապաշտական քարոզման պատճառով շատերը խուսափում են սրբության մասին խոսելուց: Թվում է, թե այսօր պետք է լիովին անտեսել այս թեման՝ մեծ եկեղեցի կառուցելու համար: Միևնույն ժամանակ, քարոզիչները գիտեն, որ սրբության մասին գրված է ամբողջ Նոր կտակարանում, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է քարոզել այդ մասին: Այնպես որ, նրանք մեղմացրել են սրբությունը՝ սովորեցնելով մոտավորապես հետևյալը. «Մենք չունենք անձնական պատասխանատվություն սրբության համար, քանի որ մեր սրբությունը Հիսուսն է, և այն ապահով է Քրիստոսում»: Այս վարդապետությունը ճիշտ է, սակայն ոչ ամբողջական, քանի որ Նոր կտակարանում գրված է սրբության երկու կողմի մասին: Ժամանակակից ուսուցումների և քարոզների ճնշող մեծամասնությունը միախառնում է այս երկուսը:

Սրբության առաջին կողմի վերաբերյալ գրված է հետևյալը.

> «Աստված սիրեց մեզ և ընտրեց Քրիստոսում, որ լինենք *սուրբ* և *անարատ* Նրա առջև» (Եփեսացիների 1.4, NLT):

Նախքան հավիտենական արժեք ունեցող որևէ բան կանեինք, Աստված որոշում կայացրեց: Նա ընտրեց մեզ և դրանով իսկ հայտարարեց, որ մենք սուրբ ենք: Մենք անարատ ենք Նրա առջև: Խոսքն այն սրբության մասին է, որը պատկանում է մեզ՝ համաձայն մեր դիրքի: Այն օրը, երբ ընդունեցինք Հիսուսին, մենք սուրբ դարձանք Աստծո առջև և երբեք չենք կարող ավելի սուրբ լինել: Այս պահից քսանհինգ միլիոն տարի անց դուք նույնքան սուրբ կլինեք, որքան այն օրը, երբ ընդունեցիք Հիսուսին:

Մի օրինակ կբերեմ սրա վերաբերյալ: Ես հանդիպեցի Լիզա Տոսկանոյին 1981 թվականի հունիսին: Կարճ ժամանակ անց սիրահարվեցի նրան և որոշում կայացրի ամուսնանալ նրա հետ: 1982 թվականի հոկտեմբերի 2-ին նա դարձավ իմ կինը: Այսօր՝ երեսունհինգ տարի անց, նա ավելի շատ իմ կինը չէ, քան այն օրը, երբ ես ամուսնացա նրա հետ: Եվ նա ավելի շատ իմ կինը չի լինի մեր ամուսնության 70-ամյակին: Նա ունի Ջոն Բիվերի կնոջ *դիրքը:* Նա ստիպված չի եղել վաստակել դա, աշխատել դրա համար կամ գնել դա: Նա իմ կինն է, որովհետև ես ընտրեցի նրան:

Որոշ առաջնորդներ սովորեցնում են այս սրբության մասին, ինչը ճիշտ է, սակայն կա ավելին: Թույլ տվեք կրկին օգտագործել իմ ամուսնության օրինակը՝ սրբության մյուս կողմը ցույց տալու համար:

Մինչև ինձ հանդիպելը, Լիզան սիրախաղեր էր անում այն տղաների հետ, որոնք հետաքրքրում էին իրեն, տալիս էր նրանց իր հեռախոսահամարը և ժամադրվում էր նրանց հետ: Մեր ամուսնությունից հետո նա դադարեց սիրախաղեր անել և որոնել այլ տղամարդկանց: Այժմ նա ցուցաբերում է այնպիսի *վարք*, որը համապատասխանում է նրա *դիրքին՝* որպես իմ կին:

Կարդացե՛ք Պետրոս առաքյալի խոսքերը.

> «Այնպես որ, դուք *պետք է* ապրեք որպես Աստծո հնազանդ զավակներ: Ետ մի՛ նահանջեք դեպի ձեր նախկին կյանքի ճանապարհները, որ բավարարեք ձեր ցանկությունները: Այդ ժամանակ դուք չգիտեիք ավելի լավ կյանքի մասին: Բայց հիմա դուք *պետք է* սուրբ լինեք *ձեր* բոլոր *գործերի* մեջ, ինչպես որ Աստված, Ով ընտրեց ձեզ, սուրբ է» (Ա Պետրոս 1.14,15, NLT):

Ես մի քանի բառ եմ ընդգծել այս հատվածում: Առաջինը՝ ուշադրություն դարձրեք «պետք է» բառին: Այն պայմանը մեր վարքի մասին, որը Պետրոսն առաջադրում է, ընտրովի չէ: Երկրորդը՝ Պետրոսը չի

խոսում Քրիստոսի մեջ մեր *դիրքի* մասին, այլ՝ մեր *գործերի:* Աստվածաշնչի Ընդլայնված թարգմանությունը գեղեցիկ կերպով ցույց է տալիս սա. «Դուք ինքներդ էլ սուրբ եղեք ձեր ամբողջ *վարքով* և *ապրելակերպով»:* Այս սրբությունը վերաբերում է մեր *վարքին*, ոչ թե *դիրքին:* Այս իրողությունը նման է Լիզայի վարքի փոփոխությանը մեր ամուսնությունից հետո. մեր վարքը պետք է արտացոլի մեր դիրքը:

Հենց այստեղ է սկսվում մեր պայքարը: Իմ քրիստոնեական կյանքի վաղ շրջանում ես շարունակ փորձում էի սուրբ կյանք վարել և շարունակ ձախողվում էի: Ես խիստ հուսահատվում էի: Սակայն բացահայտեցի Աստծո շնորհքը: Ես հասկացա, որ շնորհքը Աստծո անարժանաբար տրվող զորությունն է, որը կարողություն է տալիս անելու այն, ինչը անկարող ենք մարդկային ուժերով: Ես չէի կարողանում ազատվել պոռնոգրաֆիայից և այլ մեղսալի սովորություններից, բայց երբ բացահայտեցի շնորհքը, ես կարողացա ապրել ազատության մեջ՝ հավատալով դրան և համագործակցելով դրա հետ:

Գոյություն ունի մի ցավալի փաստ: Մի քանի տարի առաջ մեր ծառայությունը մի հարցում անցկացրեց: Մենք այցելեցինք տարբեր հարանվանություններ և վարդապետական ուղղություններ ներկայացնող մի շարք եկեղեցիներ: Մեր հարցումն ընդգրկեց ավելի քան հինգ հազար վերստին ծնված քրիստոնյայի ամբողջ ԱՄՆ-ով: Մենք խնդրեցինք մասնակիցներին տալ Աստծո շնորհքի երեք կամ ավելի սահմանում: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ մասնակիցներից գրեթե յուրաքանչյուրը կապակցում էր Աստծո շնորհքը փրկության, մեղքերի ներման, ձրիաբար և անարժանաբար տրվող պարգևի, ինչպես նաև՝ Աստծո սիրո հետ: Սա շատ լավ է: Ողբերգությունն այն էր, որ միայն երկու տոկոսից պակաս հավատացյալներ գիտեին, որ շնորհքն Աստծո *զորությունն* է: Աստված Ինքն է ասում. «Իմ *շնորհքը* բավական է քեզ համար, *որովհետև Իմ զորությունը* կատարյալ է դառնում տկարության մեջ» (Բ Կորնթացիների 12.9, NET): Աստված զորություն է անվանում Իր շնորհքը:

Պետրոսը գրում է. «Թող Աստված ավելի ու ավելի շնորհք տա ձեզ… Իր աստվածային զորությամբ Աստված տվել է մեզ այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք՝ աստվածապաշտ կյանք վարելու համար» (Բ Պետրոս 1.2,3, NLT): Պետրոսն անվանում է Աստծո շնորհքը Նրա աստվածային զորությունը, որը կարողություն է տալիս ապրելու աստվածապաշտ կամ սուրբ կյանքով:

Իրականում, մենք չենք կարող ոչինչ ստանալ Աստծուց՝ առանց հավատքի: Եվ մենք չենք կարող հավատալ այն բանին, ինչի մասին ոչինչ

չգիտենք: Եթե ամերիկացի քրիստոնյաների միայն երկու տոկոսը գիտի, որ շնորհքը զորություն է տալիս մեզ, նշանակում է՝ ամերիկացի քրիստոնյաների իննսունութ տոկոսը փորձում է սուրբ կյանք վարել սեփական կարողությամբ, ինչն անհնար է: Դրան մշտապես հետևելու են հիասթափությունը, պարտությունը, ընկճվածությունը, դատապարտությունը և մեղքի զգացումը:

Այսպիսով, պարզ է դառնում, թե ինչո՞ւ են քրիստոնյա քարոզիչները միավորում սրբության բոլոր կողմերը Աստծո առջև ունեցած մեր *դիրքի* մեջ: Չափազանց շատ քրիստոնյաներ հուսալքվել են, քանի որ իրենց ուժերով չեն կարողացել աստվածապաշտ կյանք վարել: Շնորհքը միայն Աստծո պատասխանը չէ՝ փրկության և ներման տեսքով, այլև Նրա զորությունը՝ սուրբ կյանք վարելու համար: Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է.

> «Հետևե՛ք... սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի: Զգո՛ւյշ կացեք, որ մեկը ետ մնացող չլինի Աստծո շնորհքից» (Եբրայեցիների 12.14,15):

Այս հատվածն այնքա՛ն շատ բան է ասում: Առաջինը՝ «հետևել» բառը հունարենում «դիոկո» բառն է: Այն սահմանվում է որպես «հետևել կամ եռանդուն կերպով հետամուտ լինել, ձգտել ջանասիրությամբ և աշխատասիրությամբ՝ ստանալու համար» *(«Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան»):* Մեկ այլ բառարանում գրված է. «Ինչ-որ բան անել՝ մեծ ջանք գործադրելով և հստակ մտադրությամբ կամ նպատակով» *(«Լուվ-Նայդայի հունարեն-անգլերեն բառարան»):*

Այս երկու սահմանումները կարդալուց հետո մենք պետք է հարց տանք. այն սրբությունը, որի մասին գրված է այս հատվածում, վերաբերում է մեր *դիրքի՞ն*, թե՞ *վարքին:* Պատասխանը պարզ է. այն պետք է որ վերաբերի մեր *վարքին:* Նայեք այս հարցին հետևյալ կերպով. պատկերացնո՞ւմ եք, որ ինչ-որ մեկն ասեր իմ կնոջը. «Լիզա Բիվե՛ր, դուք պետք է մեծ ջանք գործադրեք, որ ձեռք բերեք Զոն Բիվերի կնոջ դիրքը»:

Նա կծիծաղեր և կասեր. «Ես արդեն նրա կինն եմ»:

Ինչ վերաբերում է մեր *դիրքին*, մենք արդեն սուրբ ենք, և կարիք չկա, որ մեծ ջանք գործադրենք՝ դրան հասնելու համար: Այնպես որ, Եբրայեցիների թղթի հեղինակը պետք է որ նկատի ունենա մեր *վարքը:*

Մենք պետք է ջանասիրաբար ձգտենք սուրբ *վարքին:* Եթե ոչ՝ «ետ

կմնանք Աստծո շնորհքից»: Ինչպե՞ս մենք կարող ենք ետ մնալ այն ծածկոց-շնորհքից, որի մասին քարոզվում է մեր օրերում: Դա անհնար է: Այնուամենայնիվ, երբ մենք հասկանում ենք, որ շնորհքը Աստծո գերբնական զորությունն է՝ սուրբ վարքին ձգտելու համար, մենք կարող ենք հասկանալ, թե ինչպես է հնարավոր ետ մնալ դրանից:

Եբրայեցիների թղթի հեղինակն ավարտում է այս գլուխը հետևյալ խոսքերով. «Եկեք շնորհք ունենանք, որով կարող ենք ընդունելի կերպով ծառայել Աստծուն» (Եբրայեցիների 12.28, NKJV): Շնորհքը զորացնում է մեզ՝ Աստծուն ընդունելի կերպով ծառայելու և սուրբ կյանք վարելու համար:

Այժմ՝ ամենակարևորը: Գրված է. «Հետևե՛ք... սրբության, որ առանց նրա ոչ ոք *Տիրոջը չի տեսնի»* (Եբրայեցիների 12.14): Ինչի՞ մասին է գրում այս գրքի հեղինակը: Մի՞թե բոլորը չեն տեսնելու Հիսուսին: Չէ՞ որ գրված է. «Ահա Նա գալիս է ամպերով, և *ամեն աչք կտեսնի Նրան*, և նրանք, որ խոցեցին Նրան» (Հայտնություն 1.7): Այնպես որ, ինչպե՞ս կարող է այստեղ գրված լինել. «Առանց սրբության մենք չենք տեսնի Տիրոջը»: Ի՞նչ է դա նշանակում:

Տեսնել Հիսուսին

Թույլ տվեք նկարագրել, թե ինչ է նշանակում «Տիրոջը տեսնելը»՝ այն խոստումը, որը մենք կստանանք սրբությանը հետևելու արդյունքում: Ես հիսունհինգ տարի է՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի եմ, և այդ ընթացքում մեր երկրում եղել է տասներկու նախագահ: Ես եղել եմ նրանցից յուրաքանչյուրի իրավասության և ղեկավարության ներքո և կրել եմ նրանց որոշումների ազդեցությունը: Ես հաճախ եմ ամեն մեկին անվանել «իմ նախագահը»: Այնուամենայնիվ, երբեք անձամբ չեմ *տեսել* նրանցից որևէ մեկին: Կան Միացյալ Նահանգների քաղաքացիներ, որոնք մշտապես *տեսնում* են նախագահին, քանի որ նրանք այդ մարդու ընկերներն են կամ աշխատում են նրա հետ: Այդ արտոնյալները մշտապես *տեսնում* են նրան և հաճախ այնտեղ են, որտեղ նա *ներկա* է:

Նույնպես, տարիներ շարունակ ես իմացել եմ բազմաթիվ փաստեր Միացյալ Նահանգների նախագահների մասին՝ նրանց համոզմունքների, որոշումների և անձնական կյանքի մասին, ինչպես նաև՝ այլ տեղեկություններ, որոնք հայտնի են դարձել հանրությանը: Այնուամենայնիվ, ինձ չի հաջողվել անձնական շփում ունենալ այդ առաջնորդների հետ: Այդ իսկ պատճառով, ես անտեղյակ եմ նրանց կյանքի մանրա-

մասներից՝ այն բաներից, որոնք հայտնի չեն հանրությանը: Եվ, իհարկե, ես չեմ վայելել նրանցից ոչ մեկի անձնական ընկերակցությունը: Նմանապես, կան քրիստոնյաներ, որոնք գտնվում են Հիսուսի իշխանության ներքո: Քանի որ Հիսուսը նրանց Առաջնորդն է, Նրա որոշումներն ազդում են նրանց կյանքի վրա: Նրանք «Տեր» են անվանում Հիսուսին, սակայն չեն տեսնում Նրան և չեն վայելում Նրա ներկայությունը: Միգուցե դուք վիճարկեք սա, բայց թույլ տվեք մի մեջբերում անել, որում հենց Հիսուսն է հաստատում այս ճշմարտությունը:

> «Այն մարդը, ով ունի Իմ պատվիրանները և պահում է դրանք, նա է, ով [իրականում] սիրում է Ինձ, և նա, ով [իրականում] սիրում է Ինձ, կսիրվի Իմ Հորից, և Ես [նույնպես] կսիրեմ նրան և ցույց կտամ (կհայտնեմ, կդրսևորեմ) Ինձ նրան: [Ես *պարզորեն տեսանելի կդարձնեմ* Ինձ նրան և իրական կդարձնեմ Ինձ նրա համար]» (Հովհաննես 14.21, AMPC):

Կարդացե՛ք Նրա խոսքերը. «Պարզորեն *տեսանելի* կդարձնեմ Ինձ»: Հիսուսի պատվիրաններն ունենալը և պահելը նշանակում է ամեն կերպով ձգտել սուրբ վարքին: Այն մարդիկ, որոնք այսպես են վարվում, *տեսնում են Տիրոջը*. Նա հայտնում է Իրեն: Նա թույլ է տալիս նրանց մուտք գործել Իր հայտնված *ներկայության* մեջ: Այս փոխհարաբերության շնորհիվ, մենք դադարում ենք ընդամենը լինել Նրա իշխանության ներքո և բարձրանում ենք մեր Թագավորի հետ ընկերության մակարդակին: Կրկին, Նա ասում է.

> «Դուք Իմ ընկերներն եք, եթե մշտապես կատարում եք այն բաները, որոնք Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհաննես 15.14, AMPC):

Ուշադրություն դարձրեք «եթե» բառի վրա Նրա պնդման մեջ: Մենք երգեր ենք երգում, գրքեր ենք գրում և ուղերձներ ենք քարոզում այն մասին, որ Հիսուսը մեր Ընկերն է: Բայց «եթե» բառը նշանակում է, որ Նրա ընկերությունը *պայմանական* է: Ընկերությունը Հիսուսի հետ հիմնված է մեր սրբության վրա, և այն մարդիկ, որոնք դարձնում են սա առաջնահերթություն իրենց համար, բարձրանում են *ծառայի* կարգավիճակից՝ դառնալով *ընկեր:* Հիսուսն ասում է այն մարդկանց, որոնք հավատարիմ մնացին Իրեն. «Այլևս *ծառաներ* չեմ անվանում ձեզ» (Հովհաննես 15.15, NKJV): Այն, որ Նա ասում է «այլևս», նշանակում է,

որ մի ժամանակ նրանք համարվում էին ծառաներ, ոչ թե ընկերներ:

Իրականում, Աստծո ծառա լինելը վատ դիրք չէ, և անկասկած՝ դա ավելի լավ է, քան Նրա հետ բոլորովին հարաբերություն չունենալը: Այնուամենայնիվ, ծառան չգիտի Նրա գործերի դրդապատճառները, իսկ ընկերը հաճախ գիտի:

Միգուցե դուք չհամաձայնեք. «Բայց բոլորս ենք Աստծո որդիներ և դուստրեր»: Այո՛, բայց մենք պետք է հիշենք այն ճշմարտությունը, որն ասում է Պողոսը. «Որքան ժամանակ, որ ժառանգը երեխա է, *ծառայից* ոչ մի տարբերություն չունի» (Գաղատացիների 4.1): Հունարենում օգտագործվում է նույն «ծառա» բառը, որը Հիսուսն օգտագործեց վերևում բերված խոսքում: Քանի դեռ որդին կամ դուստրը երեխա է, նա, որպես կանոն, չգիտի Աստծո դրդապատճառները, այլ պարզապես տեսնում է Նրա գործերը:

Ե՛վ ծնողի, և՛ երեխայի համար հրաշալի է, երբ որդին կամ դուստրը դուրս է գալիս մանկությունից՝ դառնալով ընկեր: Նույնը ճշմարիտ է նաև Աստծո ընտանիքում: Փոխվում է մեր հարաբերությունների բնույթը, քանի որ մեր Հայրն ավելի շատ գաղտնիքներ է վստահում մեզ: Բայց մենք նույնպես փոխվում ենք: Այժմ մենք ջերմեռանդորեն ձգտում ենք ոչ թե պարզապես անհնազանդ չլինել Նրան, այլ հուսախաբ չանել: Անկասկած՝ մենք ձգտում ենք հնազանդվել Նրան և մշտապես այդպես ենք վարվելու, սակայն մեր սրտի դրդապատճառն արդեն պարզապես հնազանդվելը չէ, այլ՝ Նրան հուսախաբ չանելը:

Դուռը

Այսպիսով, սրբությունն ինքնանպատակ չէ, ինչպես որ օրինապաշտ մարդիկ են պատկերում այն: Այն ճանապարհ է դեպի ճշմարիտ մտերմությունը Հիսուսի հետ: Այժմ մենք հասկանում ենք, թե որքան կարևոր է այն դուռը, որի մասին խոսում է Հիսուսը. այն հավատացյալի սիրտն է: Անտեսելով սրբությունը՝ մենք զրկվում ենք լսելու և արձագանքելու կարողությունից: Հետևաբար, մենք զրկվում ենք Նրա հետ ընթրելու արտոնությունից: Սա կարելի է համեմատել այնպիսի իրավիճակի հետ, երբ տանը այնքան մեծ աղմուկ է, որ չենք լսում, երբ մի կարևոր անձնավորություն թակում է մեր դուռը: Շարունակ թակելուց և նույնիսկ մեր անունը կանչելուց հետո այդ ցանկալի հյուրն, ի վերջո, հեռանում է:

Խուսափելով սովորեցնել սրբության մասին՝ մենք, ըստ էության, փակել ենք ճանապարհը դեպի մտերմությունը մեր Թագավորի հետ, որը յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի մեծագույն ցանկությունն

է: Այն դիրքորոշումը, ըստ որի մենք սովորեցրել ենք *ծածկող շնորհքի* մասին և անտեսել ենք *զորացնող շնորհքը*, փաստորեն փակել է այդ դուռը և ներսից քաշել սողնակը: Մենք արժեզրկել ենք շնորհքը, քանի որ իրականում այն և՛ *ծածկում* է, և՛ *զորացնում:* Այնուամենայնիվ, դրա զորացնող կողմն անչափ կարևոր է՝ մեր Տիրոջ շփումը վայելելու համար:

Լիզան և ես ամուսնության վկայական ունենք, որը տրվել է մեզ Ինդիանա նահանգի կողմից. այնպես որ, ըստ օրենքի՝ մենք ամուսնացած ենք: Պատկերացրեք, թե ինչ կկատարվի, եթե ես պահեմ իմ ամուսնության վկայականը նրա առջև և հայտարարեմ. «Սիրելի՛ս, մենք ամուսնացած ենք. մենք օրենքով կապված ենք իրար, բայց ես հարաբերություններ ունեմ այլ կանանց հետ»: Ես կարող եմ փաստացի ամուսնացած լինել Լիզայի հետ, բայց անկասկած՝ նա այլևս չի կիսվի ինձ հետ իր սրտի ցանկություններով և գաղտնիքներով: Մտերմությունը մեր միջև կավարտվի: Մենք այլևս ընկերներ չենք լինի, քանի որ ես կկորցնեմ այդ արտոնությունը: Մի՞թե այդ կերպով մենք հաճելի համատեղ կյանք կունենանք: Մի՞թե դա էր մեր ամուսնության նպատակը: Եթե ես համառորեն շարունակեմ նույն կերպով վարվել, ի վերջո, կկորցնեմ իմ ամուսնությունը:

Հնարավո՞ր է, որ մենք խրախուսել ենք նման վերաբերմունքը մեր եկեղեցական ուսմունքների միջոցով: Արդյո՞ք մենք քարոզում ենք մի քանի սուրբգրային հատված, որոնք Նոր կտակարանի մյուս հատվածներից անջատ, ցույց են տալիս, որ ամեն ինչ լավ է՝ անկախ մեր վարքից: Մի՞թե մենք կարող ենք անկողին մտնել այս աշխարհի հետ և միևնույն ժամանակ հայտարարել Հիսուսին. «Մենք *կրկնել ենք մեղավորի աղոթքը*, մենք *շնորհքով փրկված ենք* և *պատկանում ենք Քեզ»:* Մի՞թե մենք կարող ենք հավատալ, որ Նա թույլ կտա մեզ ճանաչել Իր սրտի ծածուկ բաները:

Ես շնություն չեմ գործում Լիզայի դեմ, քանի որ չեմ ցանկանում կորցնել այն հատուկ, մտերիմ և սքանչելի պահերը, երբ մեր գլուխները բարձերին՝ նայում ենք միմյանց, և նա շշնջում է ինձ այնպիսի բան, ինչը ոչ մի դեպքում չէր ասի ինչ որ մեկին: Ես չեմ ցանկանում կորցնել այդ հաճելի հարաբերություններն այն ակնառու անձնավորության հետ, ով իմ կինն է:

Նույնը վերաբերում է Հիսուսին: Ես շնություն չեմ գործում Նրա դեմ, քանի որ չեմ ցանկանում կորցնել մեր մտերմությունը և վերջ տալ մեր ընկերությանը: Չկա ավելի մեծ բան՝ կարգավիճակ, հարստություն, հաճույք, գործունեություն, համբավ, դիրք կամ մեղք, որոնք գերազանցում

են մտերմությունը Հիսուսի հետ:

Ես չեմ պատկերացնում իմ կյանքն առանց Նրա խոստման. «Ես կպատմեմ քեզ ուշագրավ գաղտնիքներ, որոնք դու չգիտես» (Երեմիա 33.3, NLT): Ես չեմ պատկերացնում իմ կյանքը առանց այն զարմանալի իրողության, որ Նա «հայտնում է խորը և ծածուկ բաներ» (Դանիել 2.22, NKJV): Ես չեմ պատկերացնում իմ կյանքն առանց Հիսուսի խոսքերի. «Այլևս չեմ խոսի... այլաբանորեն, այլ՝ պարզորեն կպատմեմ ձեզ…» (Հովհաննես 16.25, NKJV): Եվ, իհարկե, ես չեմ պատկերացնում իմ կյանքը առանց խոստման այն մասին, որ Նրա Հոգին ցույց կտա մեզ գալիք բաները (տե՛ս Հովհ. 16.13):

Սրբությունը բացասական չէ. ընդհակառակը, այն Նոր կտակարանի ամենադրական ճշմարտություններից է: Երբ իրականում հասկանանք սրբության ներուժը, մենք տանիքներից կազդարարենք այն:

գործնական քայլ

Սրբությունը վատ բառ չէ. այն գաղտնաբառ է: Սրբությունը այն միջոցն է, որով դուք կարողանում եք բացել ձեր սրտի դուռն Աստծո ձայնի համար: Առանց սրբության՝ դուք նույնիսկ չեք լսի, երբ Նա խոսի ձեզ հետ: Սրբությունն այնպիսի բան չէ, ինչն Աստված պարզապես տալիս է ձեզ Հիսուսի զոհի պատճառով, այլ՝ այնպիսի բան, համաձայն որի դուք *պետք է* ապրեք՝ ձեր մտքով, խոսքով և գործերով:

Այնուամենայնիվ, Աստված չի թողնում, որ միայնակ պայքարեք սրբության համար: Ահա թե ինչու է Նա շնորհք տալիս մեզ: Նրա շնորհքն անում է ավելին, քան մեզ փրկելն է, թեև միայն դա արդեն իսկ ապշեցուցիչ է: Աստծո շնորհքը զորացնում է մեզ, որպեսզի սուրբ կյանք վարենք, որը բխում է մեր ներսից և լիովին հաճեցնում է Աստծուն:

Փնտրե՛ք Աստծուն հենց հիմա: Այլևս մի՛ սպասեք. հենց հիմա աղաղակե՛ք Աստծուն՝ խնդրելով Նրա շնորհքը: Անվանե՛ք այն բնագավառը ձեր կյանքում, որտեղ ամենից շատ ունեք Նրա շնորհքի կարիքը, և խնդրե՛ք Նրան լցնել ձեզ Իր շնորհքով, որպեսզի հաղթահարեք այն ամենը, ինչը թույլ չի տալիս ձեզ լսել Նրա ձայնը:

28

ԲԱՐՁՐԱՑԵ՛Ք

Ի՞նչն է պատճառը, որ սուպերհերոսների մասին ֆիլմերը բոլոր ժամանակների ամենահայտնի ֆիլմերն են: Մտածե՛ք այս մասին: Այս հոլիվուդյան պատմություններն ավելի շատ կինոսիրահարների են գրավում, քան ֆիլմերը պատերազմների, կովբոյների և լրտեսների մասին, և նույնիսկ՝ սիրային պատմությունները: Եվ սա չի վերաբերում միայն տղամարդկանց, որովհետև ես մշտապես հանդիպում եմ կանանց, ովքեր, իրենց խոսքերով, սիրում են այս մեծ հաջողություն ունեցող կինոնկարները: Ի՞նչն է պատճառը: Մենք գիտենք, որ ստեղծված ենք ավելիի համար, և սուպերհերոսները պատկերում են մեր չարտահայտված ներքին ձգտումները:

Մտածե՛ք Սուպերհերոսի մասին: Երբ հանգամանքներն անհնարին են, նեղությունն անհաղթահարելի է, և թվում է՝ ամեն ինչ անհույս է, Կլարկ Կենտն անմիջապես դուրս է գնում *«Դեյլի Պլանետ»* թերթի խմբագրությունից, մտնում է մի հեռախոսախցիկի մեջ և մի քանի վայրկյան անց օգնության է սլանում: Մենք սիրում ենք այն աշխուժացնող զգացումը, երբ նա պարտության է մատնում անպարտելի թվացող թշնամիներին: Մենք հիացմունք ենք ապրում, երբ վերջ է դրվում անարդարությանը, տուժածներն ազատ են արձակվում, և հասարակությունը վերադառնում է իր առօրյա կյանքին:

Իմաստը հետևյալն է. մենք ուրախանում ենք, երբ մեր սուպերհերոսները հաղթում են չարը, քանի որ դա բավարարում է մեր ներքին ձգտումները: Մենք գիտենք, որ ամենասկզբից Աստված ստեղծել էր մարդուն «աստվածանման, Աստծո բնությունն արտացոլող» (Ծննդոց 1.27, MSG): Նույնպես, գրված է. «Տերը հզոր պատերազմող է» (Ելից 15.3): Դուք

երբևէ մտածե՞լ եք այս մասին: Սա Աստծո բնության այն կողմերից մեկն է, որը հազվադեպ է հիշատակվում: Այնպիսի տպավորություն է, որ մենք չգիտենք, թե ինչ անենք այս ճշմարտության հետ: Սակայն կրկին, Եսային հայտարարում է.

> «Տերը դուրս է գալու հզորի պես, պատերազմի մարդու պես գրգռելու է Իր նախանձը, աղաղակելու է, նաև բարձրաձայն գոչելու է և հաղթող է հանդիսանալու Իր թշնամիների վրա» (Եսայի 42.13):

Այն պատերազմողները, ովքեր պայքարում են անարդարության դեմ, հերոսներ են: Հիսուսն *իրական* Սուպերհերոս է: Նա Նվաճող և Հաղթող է:

Այս խոսքերը գրելուց շատ ժամանակ առաջ Հեսուն տեսավ Նրան: Մեր Թագավորի ձեռքին ոչ թե գառնուկ էր, այլ՝ սուր, և Նա անվանեց Իրեն «Տիրոջ զորավարը» (Հեսու 5.14):

Այս խոսքերը գրելուց շատ ժամանակ անց Հովհաննես առաքյալը նույնպես տեսավ Տիրոջը և նկարագրեց Նրան նույնիսկ ավելի զարմանալի կերպով. «Նրա աչքերը՝ կրակի բոցի պես», և «Նրա բերանից դուրս է գալիս սրած սուր» (Հայտնություն 19.12-15):

Նա պատերազմո՛ղ է: Շատերս գիտենք, որ պատերազմողը իր բնությամբ մեղմաբարո, հպատակված կամ մելամաղձոտ չէ: Ո՛չ, պատերազմողը կենտրոնացած, նպատակաուղղված և մոլեգին է:

Այժմ խոսենք մեր մասին: Դուք երբևէ մտածե՞լ եք այն մասին, որ Հայտնություն գրքում Հիսուսը բոլոր յոթ եկեղեցիներին մոտավորապես ասում է հետևյալը. «Ով որ հաղթում է...»: Ինչպե՞ս կարող ենք հաղթել, եթե հաղթելու ոչինչ չունենանք: Ինչպե՞ս կարող ենք հաղթել, եթե չլինի ոչ մի պայքար:

Շատերն այսօր անտեսում են այս կոչումը: Նրանք ասում են, որ մեր ինքնությունը Քրիստոսում հաղթող է դարձնում մեզ: Այլ կերպ ասած՝ քանի որ Նա *Հաղթող* է, մենք ինքնաբերաբար հաղթող ենք դառնում Նրանում: Սա ճշմարիտ է, երբ խոսքը Նրա մեջ ունեցած մեր դիրքի մասին է, բայց սա ամբողջական ճշմարտությունը չէ: Ինչո՞ւ Հիսուսն ասաց բոլոր յոթ եկեղեցիների հավատացյալներին. «Ով որ հաղթում է...», եթե հաղթանակն ինքնաբերաբար ավելանում է մեր փրկությանը:

Այս տիեզերքում գոյություն ունի իրական Լեքս Լյուտոր (Սուպերհերոսի հակառակորդը), և նրա անունը սատանա է: Նա ունի բյուրավոր զորքեր, որոնք հիմար չեն, և նրանց գլխավոր նպատակը ձեզ կանգ-

նեցնելը, սահմանափակելը և վերահսկելն է: Սատանան աշխատում է օրը 24 ժամ և շաբաթը 7 օր այս նպատակի համար: Սակայն նա զինաթափվել է: Նա զրկվել է իր իշխանությունից և զորությունից ձեր և իմ կյանքում:

Նմանապես, Լեքս Լյուտորն անզոր էր պողպատե մարդու դեմ: Այնուամենայնիվ, նրա հանճարեղ դիվային միտքը բացահայտեց և գործածեց կրիպտոնաքարը՝ առավելություն ստանալու համար: Դրա միջոցով նա կարողացավ սահմանափակել և վերահսկել Սուպերհերոսին: Նույն կերպով, սատանան օգտագործում է այն, ինչը դարձավ իր կործանման պատճառը՝ հոգևոր կրիպտոնաքարը, որպեսզի հավասարեցնի պայքարող ուժերը: Նա կազմեց այն, երբ օծված քերովբե էր Երկնքում (տե՛ս Եզեկ. 28.14-16): Նա փորձառաբար գիտի, թե ինչպես այն կտկարացնի և կչեզոքացնի Աստծո թագավորության զորությունը մեր կյանքում:

Սատանան (իրական Լեքս Լյուտորը) գիտի, որ եթե մենք տեսնենք հոգևոր կրիպտոնաքարի իրական ազդեցությունը, հնարավորինս հեռու կմնանք դրանից: Այնպես որ, նա հմտորեն քողարկում է այն: Դուք նկատե՞լ եք, թե ինչ է կատարվում ձեր ներսում, երբ տեղի եք տալիս դրան: Միգուցե դուք կարճատև բավականություն կամ հաճույք եք վայելում, բայց ձեզ տկարացնելու հետ մեկտեղ, այն չի տալիս իրական բավականություն: Դուք կտրվում եք ձեր հաղթող բնությունից և նմանվում եք խոտի՝ առանց լույսի և ջրի: Դուք սկսում եք ներքուստ թառամել:

Նշույլներ

Թանկագին Աստծո զավա՛կ, վերադարձե՛ք ձեր ճշմարտ ինքնությանը: Դուք կանչված եք լինելու իրական սուպերհերոս մեր սերնդի մեջ: Ձեր մեջ կա այն ամենը, ինչը անհրաժեշտ է հաղթելու համար: Դա մտացածին չէ: Ես օրհնված եմ եղել աշխարհով մեկ ճանապարհորդելու և Քրիստոսի մարմինն ամբողջական տեսնելու հնարավորությամբ: Ես տեսել եմ այն ամենի նշույլները, ինչը հնարավոր է եկեղեցական համայնքների և առանձին հավատացյալների համար:

Ես կարող էի այնքա՛ն օրինակներ բերել, բայց թույլ տվեք բորբոքել ձեր հետաքրքրությունը ընդամենը մի քանի օրինակով: Ես եղել եմ աշխարհի ամենաստվար մուսուլման բնակչությունն ունեցող երկրում և մի քանի անգամ քարոզել եմ ավելի քան հարյուր քառասուն հազար անդամ ունեցող մի եկեղեցում, որի անդամների կեսից ավելին նախկին մուսուլմաններ են: Այդ եկեղեցու գլխավոր շենքում տեղավորվում

է երեսունհինգ հազար մարդ, բայց նրանք, միևնույն է, ստիպված են մի քանի կիրակնօրյա հավաքույթներ անցկացնել: Եթե ես չլինեի այդտեղ և անձամբ չտեսնեի դա, միգուցե չհավատայի: Այդ եկեղեցին իսկապես որ պտղաբեր է, և այն ծաղկունք է ապրում դժվարին պայմաններում: Այդ եկեղեցու պատերազմող հավատացյալները հերոսներ և հաղթողներ են:

Այդ եկեղեցու հովվի երկրորդ որդին ծնվելու պահին ուղեղի վնասվածք էր ստացել, և բժիշկներն ասել էին, որ նա երբեք չի կարողանալու խոսել և քայլել: Մասնագետներն ասել էին այդ հովվին և նրա կնոջը, որ նրանց որդին պարզապես պառկած է մնալու մինչև իր կարճատև կյանքի ավարտը:

Աստված խոսեց այդ հովվի հետ և ասաց. «Որտե՞ղ եմ Ես»:

«Քո գահի վրա՝ Երկնքում», - պատասխանեց այդ հովիվը:

> «Ո՛չ, Ես ապրում եմ քո մեջ, - ասաց Տերը: - Եվ ուզում եմ, որ դու խոսես քո որդու ուղեղին և նոր ուղեղ ստեղծես, ինչպես որ մեկ անգամ Ես խոսեցի ու ստեղծեցի այն ամենը, ինչ դու տեսնում ես»:

Այդ հովիվը հնազանդվեց և սկսեց ամեն օր խոսել իր որդու ուղեղին Հիսուսի անունով: Ի վերջո, նրա որդին սկսեց խոսել: Դրանից հետո Տերը հանձնարարեց նրան անել նույնը նրա ոտքերի համար: Վեց տարեկանում նա սկսեց քայլել: Ես գոլֆ եմ խաղացել նրա որդու հետ. հիմա նա ամուսնացած է և երեք երեխա ունի:

Այդ հովիվը հաղթող է, որին կրիպտոնաքարը չի կարող կանգնեցնել:

Վերջերս ինձ մի երկիր էին հրավիրել՝ քարոզելու մի եկեղեցական շարժման հովիվների և ավագների: Նրանք առաջնորդեցին ինձ հավաքույթի վայրը, և ես հազիվ զսպեցի զգացմունքներս՝ տեսնելով 12.500 ավագներից բաղկացած լսարանը: Նրանք կրակով լցված էին Տիրոջ համար, և նրանց եռանդը վարակիչ էր:

Հաջորդ օրը ես ճաշում էի այդ եկեղեցական շարժման գլխավոր ծառայողների հետ: Իմացա, որ նրանց ծառայությունն ընդգրկում է ավելի քան երեք հարյուր հազար մարդ: Ես հարցրի, թե երբ էր սկսվել նրանց շարժումը՝ մտածելով, որ, ամենայն հավանականությամբ, դա տեղի էր ունեցել մեկ-երկու սերունդ առաջ: Նրանք ասացին, որ այն սկսվել էր մեկ մարդու կողմից, ընդամենը տասնվեց տարի առաջ:

Ես խիստ զարմացա.

Ինչպե՞ս եք նման արդյունքի հասել առաջին աշխարհին պատկանող երկրում, - հարցրի ես:

Այն ծառայողը, որն ամենից լավ էր անգլերեն խոսում, առանց վարանելու պատասխանեց.

Մենք սովորեցնում ենք մեր ժողովրդին ապրել հավիտենականի համար:

Ես խոսքեր չունեի:

Ես եղել եմ շատ ամերիկյան եկեղեցիներում, - շարունակեց նա, - և նկատել եմ, որ շատ ամերիկացի քրիստոնյաներ ապրում են 70-80 տարվա հեռանկարով: Մեր մարդիկ ապրում են հավիտենության համար:

Այս դիրքորոշման շնորհիվ նրանք շատ ավելի իրազեկ են հոգևոր կրիպտոնաքարի մասին:

Լիզան և ես քարոզում էինք Հայաստանի Երևան մայրաքաղաքում 3.500 հովիվների և առաջնորդների: Շատ առաջնորդներ եկել էին Իրանից: Ընդմիջումներից մեկի ժամանակ, մի երիտասարդ կին պատմեց մեզ, որ երկրից կարճատև բացակայության ընթացքում Իրանի ոստիկանությունն արդեն զանգահարել էր իր բջջային հեռախոսին, որպեսզի իմանար, թե որտեղ է նա:

Ես առանց մտածելու հարցրի.

Ինչո՞ւ եք դուք վերադառնում, եթե ձեր կյանքին նման վտանգ է սպառնում:

Ո՞վ կպատմի իրանցիներին Հիսուսի մասին, եթե ես չվերադառնամ, - արագորեն պատասխանեց նա:

Նրա պատասխանն ամաչեցրեց ինձ: Ակնհայտ է, որ նա հեռու էր մնում կրիպտոնաքարից:

Տարիներ առաջ, մի եկեղեցի, երկու ամիս շարունակ ամենօրյա հավաքույթներ էր անցկացնում, և ամեն երեկո այդ հավաքույթներին չորս հազար մարդ էր մասնակցում: Հազարավոր մարդիկ փրկվում էին, ճշմարտապես բժշկվում և ազատագրվում էին: Մի երեկո Հիսուսը հայտնվեց այնտեղ: Շատերը տեսան Նրան և բացականչեցին: Դա միայն մի պահ էր, բայց երբ անհայտացավ, Նա թողեց Իր ներկայության վկայությունը: Նրա դեմքը դրոշմվել էր այդ շենքի պատին՝ 2.5 մետր բարձրությամբ և 1.8 մետր լայնությամբ: Այդ պատկերը մի փոքր նման էր Թուրինյան պատանքի պատկերին: Այն մնաց պատի վրա հաջորդ տասնութ ամիսների ընթացքում: Այն աստիճանաբար մարեց, մինչև լիովին անհայտացավ:

Մեկ այլ երեկո մի շտապ օգնության մեքենա կանգնեց այդ եկեղեցու

շենքի կողմնային դռներից մեկի մոտ: Շտապ օգնության աշխատակիցները ներս բերեցին պատգարակի վրա պառկած մի մարդու: Նրան քսանչորս ժամից պակաս կյանք էին տվել: Աստծո զորությունն այնքա՛ն ուժգին էր, որ այդ մարդը լիովին բժշկվեց և հավաքույթից հետո ինքնուրույն դուրս գլորեց իր պատգարակը:

Ես անձամբ այդ ամենի ականատեսն եմ եղել. ես ոչ միայն այնտեղ էի ամեն երեկո, այլև այդ եկեղեցու հովվի օգնականն էի:

Ես տեսել եմ, թե ինչպես է հրաշքով մարել անվերահսկելի հրդեհը, որը մոտենում էր մեր ծառայության գրասենյակի շենքին: Ես տեսել եմ, թե ինչպես են փոթորիկները կանգ առել կամ փոխել իրենց ուղղությունը, և ականատես եմ եղել այնպիսի հրաշքների, որոնք անկարելի է բացատրել: Ես տեսել եմ, թե ինչպես են խուլերը լսել, կույրերը՝ տեսել, և կաղերը՝ քայլել: Մի ընկեր ունեմ, ով հարություն է տվել շատերին Մեքսիկայում և Կենտրոնական Ամերիկայում: Ես եղել եմ այնպիսի վայրերում, որոնցում Աստծո զորությունն այնքան ուժգին է դրսևորվել, որ ավելի քան ութ հազար ներկաներից ոչ ոք չի կարողացել ոտքի կանգնել. այդ ընթացքում հրաշքներ էին կատարվում, և մարդկանց կյանքերը հավիտյան փոխվում էին:

Թեև անձամբ չեմ տեսել, բայց գիտեմ մի քանի փաստացի պատմություն, երբ փրկվել են ամբողջ ցեղեր կամ բնակավայրեր, և նրանց մշակույթը լիովին փոխվել է: Նման իրադարձությունները խիստ հազվադեպ են մեր օրերում, բայց ես հավատում եմ, որ մենք արագորեն մոտենում ենք այնպիսի ժամանակի, երբ դրանք հասարակ բան կլինեն, նման այն բանի, ինչը տեղի էր ունենում Առաջին եկեղեցում, սակայն շատ ավելի մեծ ծավալներով:

Հիսուսի հետ

Բոլոր այս մարդկանց և նրանց փորձառությունների միջև կա մեկ ընդհանրություն, որն ուներ Առաջին եկեղեցին: Մենք այն տեսնում ենք Ավետարաններում և Գործք առաքելոց գրքում, և բոլորս կարող ենք ունենալ այն: Այս իրողությունը կարելի է ամփոփել երեք բառով. *իշխանություն*, *զորություն* և *համարձակություն:*

Մենք տեսնում ենք, որ Հիսուսը փոխում էր գյուղեր և քաղաքներ: Պարզապես ինչ-որ տեղ գնալով՝ Նա լիովին փոխում էր այնտեղի մթնոլորտը: Ահա մեկ օրինակ: Նա ժողովարան մտավ, և «մարդիկ զարմանում էին Նրա ուսմունքի պատճառով, որովհետև Նա սովորեցնում էր *իրական իշխանությամբ*՝ ի տարբերություն կրոնական օրենքի ուսուցիչների» (Մարկոս 1.22, NLT):

Իսկ հետո, հանկարծակի, «մի մարդ ժողովարանում, որ բռնված էր չար ոգու կողմից, բացականչեց. «Ինչո՞ւ ես խոչընդոտում մեզ, Նազովրեցի՛ Հիսուս: Դու եկել ես, որ կործանե՞ս մեզ»» (խոսքեր 23,24, NLT): Սակայն Հիսուսը հրամայեց. «Լռի՛ր: Դո՛ւրս եկ այդ մարդուց»: Չար ոգին ճչաց, ցնցեց այդ մարդուն և հեռացավ: Բոլոր ներկաները համակվեցին անկեղծ զարմանքով. բոլորն ակնածանքով լցվեցին Նրա իշխանության, զորության և համարձակության հանդեպ: Այդ իրադարձությունն այնպիսի մեծ ազդեցություն ունեցավ, որ հաջորդ օրը ամբողջ քաղաքը փնտրում էր Հիսուսին (տե՛ս խոսքեր 21-38): Ինչպես գիտեք, Ավետարանից կարելի է նույնպիսի ազդեցության բազմաթիվ օրինակներ բերել:

Գոյություն ունի մի ապշեցուցիչ փաստ. Իր երկրային ծառայության ավարտին Հիսուսն ասաց. «Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհաննես 20.21): Եթե սա այնքան էլ չզարմացրեց ձեզ, Նա պարզորեն ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Ինձ հավատացողը, այն գործերը, որ Ես գործում եմ, նա էլ կգործի, և նրանցից է՛լ ավելի մեծ բաներ կգործի» (Հովհաննես 14.12): Նույն գործերը, և նույնիսկ ավելի՛ մեծ գործեր: Մի՞թե դա հնարավոր է: Եթե Նա այդպես ասաց, անկասկած՝ դա հնարավոր է: Առաջին եկեղեցին մեծապես վերապրեց այս իրողությունը: Նրանք այնպիսի իշխանություն, զորություն և համարձակություն ունեին, որ ընդամենը մի քանի օրում ամբողջ գյուղեր և քաղաքներ Հիսուսին էին ընդունում: Նույնը ճշմարիտ է նաև մեր օրերում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, որոնց ես ականատես եմ եղել կամ որոնց մասին լսել եմ:

Ինչ վերաբերում է Առաջին եկեղեցուն, եթե միայն դիտարկենք Երուսաղեմը, ամբողջ քաղաքում չկար նույնիսկ մեկ մարդ, որը կրած չլիներ նրանց ազդեցությունը: Ընդամենը մի քանի օրում բոլոր քաղաքացիներն արձագանքեցին տեղի ունեցածին. նրանք կա՛մ զարմանում էին գերբնական զորության դրսևորումներից, կա՛մ բարկանում էին այն պատճառով, որ հռչակվում էր Հիսուսի անունը, կա՛մ մուտք էին գործում Աստծո թագավորության մեջ: Եկեղեցին արագորեն աճում էր, գործում էր մեծ զորությամբ և մի շարք ակնառու հրաշքների ականատես էր դառնում: Նման իրադարձություններից մեկն այն էր, որ կաղ ծնված մի մարդ, որին ամեն օր տանում էին հավաքույթների վայրը, բժշկվեց: Նա անմիջապես սկսեց ցատկել և գոչել, և քաղաքացիներից շատերը, որոնք հավաքված էին այդտեղ, զարմացան:

Իշխանությունները ձերբակալեցին Պետրոսին և Հովհաննեսին՝ փորձելով վերջ տալ այդ շարժման շեշտակի աճող ազդեցությանը: Նրանց բերեցին Սինեդրիոնի անդամների առջև, որոնք այսպիսի հետևություն արեցին.

> «Եվ Պետրոսի և Հովհաննեսի *համարձակությունը* տեսնելով և գիտենալով, որ առանց ուսմունքի և տգետ մարդիկ են՝ զարմանում էին: Միայն ճանաչում էին նրանց, որ *Հիսուսի հետ էին»* (Գործք 4.13):

Նրանց համարձակությունը գրավեց Սինեդրիոնի ուշադրությունը: Շատ ավելի հեշտ կլիներ, եթե Պետրոսը և Հովհաննեսը վախենային և փորձեին խաղաղ մարդիկ ձևանալ քաղաքի ամենաազդեցիկ մարդկանց առջև: Միգուցե նրանք խուսափեին բախումից: Այնուամենայնիվ, նրանք հավատարիմ մնացին մեծ վտանգի առջև:

Ի՞նչ համարձակություն և ուժ նրանք ունեին, և որտեղի՞ց: Պատասխանն այն է, որ նրանք «Հիսուսի հետ էին»: Նրանք քայլել էին Տիրոջ ներկայության մեջ և շարունակում էին անել դա: Նրանք անում էին նույն գործերը, որոնք Նա էր անում, ինչի արդյունքում քաղաքներ փոխվեցին: Նրանք սուրբ կյանք վարող մարդիկ էին: Առաջին եկեղեցին հեռու էր մնում կրիպտոնաքարից. նրանք որոշել էին մոտ լինել Որդուն և զորություն ստանալ Նրանից: Այդ իսկ պատճառով, ունեին մեծ համարձակություն, իշխանություն և զորություն:

Դժբախտաբար, պատմությունը ցույց է տալիս, որ Կորնթոսի եկեղեցին ազդեցություն չթողեց իր քաղաքի վրա, ինչպես աշակերտները՝ Երուսաղեմում, և հետագայում՝ Սամարիայում, Հոպպեում, Լիդիայում, Սարոնում, Անտիոքում և այլ վայրերում՝ Հրեաստանով և Ասիայով մեկ: Կորնթոսի եկեղեցին դրա հակապատկերն էր: Նրանք տկար էին և զուրկ այն զորությունից, որն անհրաժեշտ էր՝ իրենց քաղաքը փոխելու համար: Զարմանալին այն էր, որ Կորնթոսի եկեղեցին հավատում էր Սուրբ Հոգու պարգևներին և գործում էր դրանցում: Թեև այդ հավատացյալների միջև որոշ չափով հրաշքներ էին տեղի ունենում, նրանք չունեին այն, ինչ անհրաժեշտ էր՝ իրենց քաղաքի վրա ազդեցություն թողնելու համար:

Ի՞նչ ենք մենք ցանկանում մեր սերնդի համար: Մի՞թե հնարավոր է ևս մեկ անգամ տեսնել, թե ինչպես են ամբողջ քաղաքներ փոխվում և կրում Ավետարանի ազդեցությունը: Ինձ հրավիրում են շատ քաղաքներ՝ քարոզելու և ականատես լինելու բազմաթիվ մեծաքանակ եկեղեցիների, սակայն, միևնույն ժամանակ, ես տրտմում եմ այն միլիոնավոր մարդկանց համար, որոնք չեն կրել Աստծո թագավորության ազդեցությունը: Ինչո՞ւ մենք չունենք ազդեցություն գյուղերի, քաղաքների և տարածաշրջանների վրա: Հնարավո՞ր է, որ կրիպտոնաքարը պարտության է մատնել մեզ:

Աստված ցույց է տվել մեր ներկա ընթացքը Հին կտակարանի դատավորներից մեկի կյանքի միջոցով: Նրա անունը Սամսոն է: Նա սիրախաղ էր անում անհնազանդության հետ, մինչև որ այն սովորական դարձավ իր

համար: Ի վերջո, Սամսոնը սարսափելի գին վճարեց, քանի որ կրիպտոնաքարը խլեց իր ուժը: Նա այլևս չէր կարող գործածել այն գերբնական զորությունը, որը նախկինում ուներ: Այնուամենայնիվ, մեծ տառապանքներից հետո նա ապաշխարեց, և նրա ուժը վերականգնվեց: Եվ վերջում ավելի մեծ սխրանք գործեց, քան այն տարիների ընթացքում, երբ դեռ չէր կորցրել այն:

Դանիել մարգարեն խոսում է մի սերնդի մասին, որը կապրի վերջին օրերում և ետ չի կանգնի ոչ մի դժվարության պատճառով: Նա մարգարեանում է.

> «Այն մարդիկ, որոնք *ճանաչում են իրենց Աստծուն*, կզորանան, հաստատ կկանգնեն և սխրանքներ կգործեն» (Դանիել 11.32, AMPC):

Այս բազմության ուժի և զորության բանալին այն է, որ նրանք մտերմորեն «ճանաչում են իրենց Աստծուն»: Իսկ մտերմության բանալին ճշմարիտ սրբությանը ձգտելն է:

Ամփոփիչ խոսքեր

Ահա և իրականությունը: Դուք կանչված եք Աստծուց, որ լինեք հերոս, չեմպիոն, այնպիսին, ով հաղթում է կյանքում և փոփոխություններ է բերում իր շփման շրջանակում: Ուժե՛ղ եղեք, խիզա՛խ եղեք և մոտեցե՛ք Թագավորին, որովհետև Նա փափագում է ձեզ: Նա ուզում է մոտ լինել ձեզ և զորություն տալ ձեզ: Նա ձեր կողմից է: Նա հավատում է ձեզ: Եվ ամենակարևորը՝ Նա սիրում է ձեզ հավիտենական սիրով:

Դուք այս երկրի իրական հերոսներից եք: Ավելի մեծ է մեր Հաղթողը, որը ձեր ներսում է, քան այն Լեքս Լյուտորը, որն այս աշխարհում է: Զորություն ստացեք Նրանից և փոխեք շատերի կյանքերը: Դուք չեք իմանա ձեր ամբողջական ազդեցության մասին մինչև այն օրը, երբ կանգնեք Թագավորի գահի առջև: Դուք այնքա՜ն ուրախ կլինեք թե՛ այդ օրը, թե՛ հիմա, որ չպարտվեցիք կրիպտոնաքարին:

Այսպիսով, կործանե՛ք կրիպտոնաքարը, ոչնչացրե՛ք այն, ջնջե՛ք դրա ազդեցությունը և բոլորովին տեղ մի՛ տվեք դրան ձեր կյանքում, նույնիսկ՝ մի փոքր: Դուք ստեղծված եք մեծ փառքի և զորության համար: Աստծո զորավո՛ր զավակ, դուք կոչում ունեք, և այս աշխարհը սպասում է, որ կատարեք այն:

գործնական քայլ

Աստված պատերազմող է, և մենք ստեղծվել ենք Նրա պես: Սա է պատճառը, որ ֆիլմերը սուպերհերոսների մասին այդքան խորապես հպվում են մեզ: Մենք գիտենք մեր սրտում, որ ծնվել ենք մեծության համար:

Աստված ստեղծել է ձեզ հենց այս նպատակով: Պատմության ընթացքում մենք տեսնում ենք վկայություններ այն մարդկանց մասին, որոնք զարմանալի գործեր արեցին Աստծո համար, քանի որ բոլորովին տեղ չտվեցին կրիպտոնաքարին՝ գիտակցված մեղքին: Հաշված օրերի ընթացքում փոխվեցին ամբողջ քաղաքներ՝ Աստծո զորությամբ և Նրա ժողովրդի համարձակությամբ: Աստված կանչում է ձեզ, որ քայլ անեք, դառնաք Իր գործի մասնիկը և կրկնեք այդ սխրանքները:

Հարցրե՛ք Աստծուն, թե ինչ պայքարի է Նա կանչում ձեզ: Ո՞ր քաղաքի, տարածաշրջանի և երկրի համար է Նրա կանչը: Գրի՛ առեք այն, ինչ լսեցիք Աստծուց, և աղոթե՛ք, որ Նա տա Իր շնորհքը, որպեսզի կատարեք Նրա նպատակն այդ վայրում: Եվ ուղղե՛ք ձեր հայացքը հավիտենական վարձատրությանը՝ խոստմանը այն ամենի մասին, ինչ դուք կստանաք, եթե հավատարիմ և հաղթական ծառայեք այս կյանքում և շարժվեք առաջ: Աստված կանչել է ձեզ՝ հերոս լինելու համար:

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք կարդում եք այս գիրքը որպես *«Կործանել Կրիպտոնաքարը»* դասընթացի մաս (ինչը հրաշալի գաղափար է), ես առաջարկում եմ ձեզ դիտել այս դասընթացի ամեն մի ուսումնական տեսանյութը գրքին կից DVD սկավառակով կամ CloudLibrary.org կայքում և քննարկել ամեն տեսանյութին վերաբերող հարցերը ձեր փոքր խմբում: Այս ուսումնական տեսանյութերը կրկնում և ընդլայնում են այն գլխավոր թեմաները, որոնց անդրադառնում է գիրքը. այնպես որ, մասնակիցների համար լավագույն տարբերակն է և՛ դիտել ուսումնական տեսանյութերը, և՛ կարդալ գիրքը:

Այս ամենը ձե՛զ համար է:

Դաս 1. Մեր ներուժը

Գլուխներ 1-3-ի հիման վրա

1. Դուք չեք ձգտի օգտագործել այն ներուժը, որին տեղյակ չեք: Նկատե՞լ եք այս սկզբունքը ձեր կյանքում: Ինչպիսի՞ նոր ապրանքներ և սարքավորումներ եք սկսել օգտագործել, և ինչպիսի՞ համոզմունքներ եք ընդունել, երբ իմացել եք, թե ինչ առավելություններ կարող եք ստանալ դրանցից: Որքանո՞վ է այս սկզբունքը նման այն ամենին, ինչ սովորեցիք այս դասի ընթացքում:
2. Մեր ներուժն Աստծո մեջ գրեթե աներևակայելի հնարավորութ-

յուններ է տալիս: Արդյո՞ք այս դասը ոգեշնչեց ձեզ, որ ուսումնասիրեք Քրիստոսի մեջ ձեր ինքնության ներուժը: Անվանե՛ք այնպիսի բնագավառներ, որոնցում ձեր մտածելակերպը շատ սահմանափակ էր:

3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ այսօր եկեղեցիներում չեն սովորեցնում Քրիստոսի մեջ մեր ներուժի մասին: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս եկեղեցին կփոխվեր, եթե մեզ սովորեցնեին հավատալ, որ այս ամենը հնարավոր է: Դուք փոխվո՞ւմ եք, երբ մտորում եք այս հնարավորությունների մասին:

4. Երբ մենք լրջորեն չենք համապատասխանում քրիստոնեության չափանիշներին, այս աշխարհը թյուր կարծիք է ունենում թե՛ քրիստոնեության, թե՛ Աստծո մասին: Ինչպիսի՞ վերաբերմունք կունենար այս աշխարհը քրիստոնյաների հանդեպ, եթե մենք ապրեինք ըստ մեր ներուժի: Ինչպիսի՞ վերաբերմունք կունենար այս աշխարհը Աստծո հանդեպ, եթե մենք ապրեինք ըստ մեր ներուժի:

Դաս 2. Մեկի ուժը

Գլուխներ 4-7-ի հիման վրա

1. Պողոսը գրում է, որ քանի որ կորնթացիները չէին պատվում Քրիստոսի մարմինը, շատերը նրանց մեջ տկար էին, հիվանդ էին և նույնիսկ վաղաժամ մահանում էին: Այս խոսքն այսօր վերաբերում է նաև մեզ, և գրված է, որ այն ազդում էր *շատերի* վրա: Արդյո՞ք ձեզ այլ կերպ էին սովորեցրել եկեղեցու՝ Քրիստոսի մարմնի մասին: Ինչո՞ւ է կարևոր, որ բոլոր հավատացյալները հասկանան այս ճշմարտությունն այսօր:

2. Շատերը Քրիստոսի մարմնում չեն իրագործում իրենց ներուժը, քանի որ իրենց եկեղեցում տեղ ունի գիտակցված մեղքը: Այնուամենայնիվ, սա միակ պատճառը չէ, որով քրիստոնյաները հիվանդանում են, վաղաժամ մահանում են կամ տկար են: Ինչո՞ւ է խիստ կարևոր այս տարբերակումն անելը: Ուրիշ ի՞նչ պատճառներով կարող են նեղություններ լինել եկեղեցում:

3. Արևմուտքի բնակիչները խիստ անհատապաշտական մտածելակերպ ունեն, սակայն մենք տեսնում ենք, որ երբ Աքարը մե-

ղանչեց Աստծո դեմ, տուժեց ամբողջ Իսրայելը, քանի որ ամբողջ ժողովուրդը մեկ մարմին էր: Արդյո՞ք այս ճշմարտությունը փոխում է այն, թե ինչպես եք տեսնում ձեր դերը Քրիստոսի մարմնում:

4. Հոգևոր կրիպտոնաքարը գիտակցված մեղքն է: Աքարը գիտեր, որ իր համար ոչինչ չպետք է վերցներ ավարից, և կորնթացիները գիտեին, որ հարբեցողությունը, շատակերությունը և եսակենտրոնությունը հաղորդության ժամանակ մեղք էին համարվում: Երկու դեպքերն էլ տկարություն և մահ առաջացրին այն մարդկանց կյանքերում, որոնք ներգրավված չէին այդ մեղքերի մեջ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Աստված այդքան լրջորեն վերաբերվում մեղքին Իր մարմնում: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Նա ցանկանում, որ մենք արժևորենք ոչ միայն առանձին հավատացյալներին, այլև հավատացյալների մարմինը՝ որպես ամբողջություն:

Դաս 3. Կրիպտոնաքար

Գլուխներ 8-10-ի հիման վրա

1. Կարո՞ղ եք պատկերացնել, որ Զասթինի և Անջելայի պատմությունն իրականում տեղի ունենար: Իհարկե՝ ո՛չ: Բայց կարո՞ղ եք նմանություններ տեսնել այն բանում, թե ինչպես են որոշ քրիստոնյաներ վերաբերվում իրենց և Աստծո հարաբերություններին: Ի՞նչ կարծիք կունենաք այն մարդու մասին, ով այսպես է վերաբերվում իր կողակցին: Ի՞նչ կարծիք կունենաք այն մարդու մասին, ով այսպես է վերաբերվում Աստծուն:

2. Գիտակցված մեղքը հոգևոր կրիպտոնաքար է, և հոգևոր կրիպտոնաքարը կռապաշտություն է: Ի՞նչ է նշանակում այն փաստը, որ բազմաթիվ մարդիկ, որոնք եկեղեցի են հաճախում, իրականում կուռքերի են պաշտում: Ինչպիսի՞ տեսք ունի կռապաշտությունը մի երկրում, որտեղ չկա արձանների և կուռքերի պաշտամունք:

3. Որպես կանոն, եկեղեցիներում գրեթե չեն սովորեցնում կռապաշտության մասին: Ի՞նչն առավել տպավորեց ձեզ այս դասի մեջ, որը հենց կռապաշտության մասին է: Ի՞նչն է պատճառը, որ հենց դա տպավորեց ձեզ:

4. Ամբողջ Սուրբ գրքում Աստված մշտապես հավասարության նշան է դնում կռապաշտության և շնության միջև: Կարո՞ղ եք բացատրել, թե ինչու է, ձեր կարծիքով, Աստված անում դա: Ի՞նչ է դա հայտնում այն հարաբերության մասին, որը Նա առաջարկում է մեզ:

5. Կռապաշտությունը սկիզբ է առնում, երբ երկրպագություն է ստանում ստեղծվածը, ոչ թե ստեղծողը: Ինչպե՞ս է Աստված արձագանքում այս դիրքորոշմանը: Ինչո՞ւ է Աստված հեռացնում Իրեն այն մարդկանցից, որոնք չեն ընտրում Իրեն: Ձեր կարծիքով, ինչո՞ւ են միասեռական միտումները ճշգրիտ ցուցանիշ այն մասին, որ հասարակությունը կռապաշտության մեջ է:

6. Կռապաշտությունը ճանաչելու համար մենք պետք է հասկանանք, թե ինչ է ճշմարիտ երկրպագությունը: Ճշմարիտ երկրպագությունը նշանակում է հնազանդվել Աստծո պատվիրաններին, ոչ թե դանդաղ երգ երգել: Ինչպե՞ս է այս ճշմարտությունը փոխում ձեր պատկերացումը քրիստոնեական կյանքի մասին: Ձեր կյանքում եղե՞լ է այնպիսի անձնավորություն, ով Աստծուն երկրպագող մարդու լավագույն օրինակն է ձեզ համար:

Դաս 4. ժամանակակից կռապաշտություն

Գլուխներ 11-14-ի հիման վրա

1. Պատմությունն այն մասին, որ Սավուղը չհնազանդվեց Աստծուն՝ չսպանելով որոշ ամաղեկացիների, ցույց է տալիս եկեղեցում առկա կռապաշտության արմատը: Ի՞նչ կերպով է Սավուղի ագահությունը հավասար կռապաշտությանը:

2. Սամուելն ասաց Սավուղին, որ համառությունը նույնն է, ինչ կռապաշտությունը: Համառությունը նշանակում է կառչել մեր ցանկություններից՝ անտեսելով Աստծո կամքը: Եվ ինչպես տեսանք Սավուղի կյանքում, դա դուռ բացեց շատ ավելի մեծ մեղքերի համար: Ի՞նչ կերպով է համառությունը կռապաշտություն համարվում: Ինչո՞ւ է այն տանում ավելի մեծ մեղքերի:

3. Ագահությունը տանում է մեզ կռապաշտության և, իրականում, ինքնին կռապաշտություն է: Իսկ գոհունակությունը տանում է աստվածապաշտության: Երբ նայում եք ձեր նպատակներին,

առաջնահերթություններին և սովորություններին, ի՞նչն է, ձեր կարծիքով, ավելի ուժեղ՝ ագահությո՞ւնը, թե՞ գոհունակությունը: Ի՞նչ կարող եք անել՝ ավելի գոհունակ դառնալու համար:

4. Թեև գոհունակությունն անհրաժեշտ է ամեն քրիստոնյայի կյանքում, մենք չպետք է շփոթենք այն ինքնագոհության հետ: Ձեր բառերով նկարագրե՛ք տարբերությունն այս երկու դիրքորոշումների միջև: Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ մարդը գոհունակ է, ոչ թե ինքնագոհ:

5. Կա ևս մեկ կարևոր պարզաբանում, որը պետք է հիշենք. կռապաշտությունն այն չէ, որ հավատացյալն ընկնում է մեղքի մեջ, այլ՝ որ նա տրվել է մեղքին: Ըստ այն ամենի, ինչ մինչև հիմա սովորեցիք այս դասընթացից, ինչպե՞ս կնկարագրեք տարբերությունն այս երկուսի միջև:

6. Հասկանալով, որ միտումնավոր գործած մեղքը հոգևոր կրիպտոնաքար է, մենք նույնպես պետք է հասկանանք, որ Աստված առաջարկում է մեզ լիովին նոր կյանք նոր բնությամբ՝ Իր բնությամբ: Դուք գիտակցո՞ւմ եք, որ հնարավոր է հակված չլինել մեղքին, այլ, փոխարենը, հակված լինել արդարությանը: Արդյո՞ք այս գիտակցումը վստահություն է ներշնչում ձեզ այն մասին, որ նման վերափոխումը հնարավոր է, և նույնիսկ սպասելի է ձեր կյանքում:

Դաս 5. Կեղծված Հիսուս

Գլուխներ 15-18-ի հիման վրա

1. Աստծո նպատակը ձեզ փրկելու համար՝ ձեզ դեպի Իրեն առաջնորդելն է: Նա կամենում է մտերմորեն շփվել ձեզ հետ: Ձեզնից պահանջվում է մաքրվել այս աշխարհի ազդեցությունից, քանի որ Նա ցանկանում է անկեղծ հարաբերություններ ունենալ ձեզ հետ: Ի՞նչ է սա նշանակում: Ինչպե՞ս իմանալ, որ դուք արել եք դա:

2. Պատկերացրեք, թե ինչպիսի հիասթափություն է ապրում Աստված, երբ այն ժողովուրդը, որին Նա փափագում է առաջնորդել դեպի Իրեն, հրաժարվում է գալ, նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք պնդում են, որ Նա փրկել է իրենց: Ինչպե՞ս կզգայիք ձեզ, եթե ամուսնանայիք, և ձեր կողակիցը հրաժարվեր ձեզ հետ մնալ

միևնույն սենյակում: Կամ՝ եթե նա նույնիսկ չցանկանար խոսել ձեզ հետ հեռախոսով: Կամ՝ եթե նա հաղորդակցվեր ձեզ հետ մեկ այլ մարդու միջոցով: Ինչպիսի՞ն կլինեին ձեր հարաբերությունները:

3. Ահարոնը մնաց ժողովրդի բանակատեղիում. այնպես որ, կարելի է ասել, որ նա ավելի հարմարավետ էր զգում իրեն ժողովրդի հետ, քան Աստծո ներկայության մեջ՝ սարի վրա: Որոշ մարդիկ այսպիսին են. նրանք ավելի հարմարավետ են զգում իրենց եկեղեցում, քան Աստծո ներկայության մեջ: Ինչպե՞ս եք դուք արձագանքում, երբ զգում եք Նրա ներկայությունը:

4. Իսրայելցիներն ունեին քահանայապետ, նրանք հռչակեցին, որ *Յահվեհն* էր ազատել իրենց Եգիպտոսից, և երկրպագեցին *Յահվեհին* ողջակեզներով և զոհերով՝ ամբողջ այդ ընթացքում կենտրոնանալով ոսկե հորթի վրա, քանի որ ժողովրդի նպատակն իրենց ցանկությունները կատարելն էր: Եթե Իսրայելը հռչակեց այս ամենը՝ օգտագործելով ճիշտ անուն, բայց, միևնույն է, ունենալով կեղծ և գարշելի երկրպագություն, հնարավո՞ր է, որ այսօրվա եկեղեցին անում է նույնը: Ինչպե՞ս դա կարող է տեղի ունենալ:

5. Իսրայելը հնազանդվում էր Աստծո պատվիրաններից մի քանիսին, բայց անտեսում էր մյուսները: Ամբողջ աշխարհում գտնվող եկեղեցիներն անում են նույնը. նրանք ընտրում են որոշ սուրբգրային հատվածներ և անտեսում են այլ հատվածներ, որոնք կոչ են անում իրենց սուրբ կյանք վարել և լիովին նվիրվել Աստծուն: Ինչպե՞ս իմանալ, որ մենք երկրպագում ենք ճշմարիտ Հիսուսին, ոչ թե՝ կեղծված Հիսուսի:

Դաս 6. Սկզբնակետը

Գլուխներ 19-21-ի հիման վրա

Ինչպե՞ս Իսրայելում առաջացավ կեղծված *Յահվեհի* մասին գաղափարը, և ինչպե՞ս է կեղծված Հիսուսի մասին գաղափարն առաջանում եկեղեցում: Երկու դեպքում էլ պատճառը հետևյալն է. մարդկանց սրտերը խստանում են, քանի որ չկա ճշմարիտ ապաշխարություն:

1. Այս դասը հանգամանալից կերպով անդրադառնում է ապաշխարությանը՝ դրա անհրաժեշտությանը, դրա դերին Ավետարանում և դրա իրական նշանակությանը: Որքանո՞վ է այս տեսակետը տար-

բերվում այն բանից, ինչ ձեզ նախկինում սովորեցրել են ապաշխարության մասին: Արդյո՞ք այն փոխում է ձեր պատկերացումն Ավետարանի մասին: Եթե այո, ինչպե՞ս:

2. Բոլոր Ավետարանները սկսվում են Հովհաննես Մկրտչի մասին պատմությամբ, ով քարոզում էր ապաշխարություն մեղքերից: Սա նշանակում է, որ Հիսուսի Ավետարանը մշտապես սկսվում է ապաշխարությունից: Ի՞նչ եք մտածում այս պնդման մասին: Ինչո՞ւ է ապաշխարությունն այդքան կարևոր Ավետարանի համար:
3. Գոյություն չունի ճշմարիտ հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ առանց ապաշխարելու գիտակցաբար գործվող մեղքերից: Եթե գիտակցաբար մեղանչում ենք և շարունակում ենք դավանել, որ քրիստոնյա ենք, մենք խաբված ենք: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Աստված այդքան շատ մտահոգվում մեր կենսաձևով:
4. Հիշե՛ք պատմությունը Զասթինի և Անջելայի մասին: Անջելան նույնիսկ գաղափար չուներ, որ ամուսնանալուց հետո պետք է թողներ իր զուգընկերներին: Հիսուսին չճանաչող մարդիկ որտեղի՞ց կիմանան, որ պետք է ապաշխարեն, եթե չասենք նրանց: Ի՞նչ կարող է տեղի ունենալ մեզ հետ, եթե ասենք մարդկանց, որ նրանք պետք է դադարեն մեղանչել: Ինչո՞ւ է կարևոր հաշվել ամբողջ Ավետարանը քարոզելու գինը:
5. Մենք որոշվում ենք մեր վարքով, ոչ թե մտադրություններով: Ապաշխարությունը հայտնում է Ավետարանի զորությունը՝ այն, որ Ավետարանը կարող է լիովին վերափոխել մեզ: Հաշվի առնելով այս փաստը՝ մենք կարո՞ղ ենք ասել, որ ապաշխարությունը դրական և բարի է: Ձեր բառերով բացատրե՛ք այն գաղափարը, որ Աստծո կողմից ապաշխարության պահանջն իրականում Նրա ողորմությունն է մեր հանդեպ:

Դաս 7. Ճշմարտություն, հանդուրժողականություն և սեր

Գլուխներ 22-24-ի հիման վրա

1. Հուդան կամենում էր գրել մեր զարմանալի փրկության կամ հաճելի բաների մասին, բայց հարկադրված էր զգուշացնել այն մարդկանց մասին, որոնք սովորեցնում էին, որ Աստծո շնորհքը թույլ է տալիս մեղանչել: Պատահե՞լ է, որ թույլ տաք ձեզ անտե-

սել Աստծո զգուշացումները և խոսեք միայն Աստծո Խոսքի հաճելի կողմերի մասին: Ինչո՞ւ է կարևոր, որ պահեք Աստծո Խոսքի զգուշացումները ձեր կյանքում և խոսքում:

2. Եկեղեցին հանդուրժողական է դարձել մեղքի հանդեպ, քանի որ մենք թյուր պատկերացում ունենք այն մասին, թե ինչ է ճշմարիտ սերը: Ճշմարիտ սերն իր մեջ պետք է կրի ճշմարտություն, իսկ ճշմարտությունը մշտապես հավիտենական հեռանկար ունի: Ի՞նչ կերպով է հավիտենական հեռանկար ունենալը փոխում ձեր առաջնահերթությունները:

3. Աստծուն սիրելը նշանակում է հնազանդվել Նրա պատվիրաններին: Ահա թե որն է տարբերությունը քրիստոնեական սիրո և այս աշխարհի սիրո միջև: Եթե հաշվի չառնենք Աստծո պատվիրանները, կա՞ն արդյոք տարբերություններ Աստծո սիրո և այս աշխարհի սիրո միջև:

4. Սերը՝ առանց Աստծո ճշմարտության, ճշմարիտ սեր չէ. այն կեղծիք է: Մեր մշակույթը հեռանում է այս սիրուց, և հենց սա է պատճառը, որ եկեղեցին ընտրում է կեղծված Հիսուսի: Արդյո՞ք դուք կարող եք խոսել ճշմարտությունը սիրով: Ձեր կարծիքով, ինչո՞ւ շատերը հարմարավետ չեն զգում իրենց՝ առերեսվելով ճշմարտությանը:

Դաս 8. Կործանել կրիպտոնաքարը

Գլուխներ 25-28-ի հիման վրա

1. Որոշ հավատացյալներ անտեսում են մեղքը, քանի որ չգիտեն, որ իրենց գործած մեղքը ցավ է պատճառում Աստծո սրտին: Մյուսները հավատում են այն ստին, որ մենք բնությամբ մեղավորներ ենք, և որ Հիսուսի արյան զորությունը բավական է, որ ազատի մեզ մեղքի պատժից, բայց ոչ՝ մեղքի ստրկությունից: Այս հավատացյալները կրել են կրիպտոնաքարի՝ գիտակցված և շարունակական մեղքի ազդեցությունը: Արդյո՞ք այս համոզմունքներից որևէ մեկն ազդեցություն է թողել ձեր կյանքում: Դուք տեսե՞լ եք դրանց ազդեցությունն այլ մարդկանց կյանքում, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են:

2. Հավատացյալների երրորդ խումբը ճշմարիտ քրիստոնյաներ են,

որոնք գիտակցաբար մեղանչում են, սակայն նրանց համար դա մշտական պայքար է: Նրանք ուզում են ազատվել այդ վիճակից, սակայն Աստծո Խոսքում դեռ չեն հայտնաբերել, թե ինչպես հավատքով գործադրեն իրենց ազատությունը մեղքից: Այն ամոթը, որը նրանք զգում են մեղքի պատճառով, պահում է նրանց այդ մեղքի մեջ: Այս դասի մեջ քննարկվող ո՞ր ճշմարտություններով դուք կկիսվեք այն հավատացյալի հետ, ով նման վիճակում է:

3. Այս դասի մեջ ես վկայում եմ, թե ինչպես Աստված ազատեց ինձ կրքից և պոռնոգրաֆիայից: Ի՞նչն ամենից շատ ոգեշնչեց ձեզ այս վկայության մեջ և ինչո՞ւ: Ի՞նչը մարտահրավեր նետեց ձեզ և ինչո՞ւ:

4. Ազատությունը մեղքից՝ բխում է Աստծո ուզած կերպով տրտմությունից, ոչ թե՝ այս աշխարհի տրտմությունից: Աստծո ուզած կերպով տրտմությունը գիտակցում է այն ցավը, որը մեր մեղքը պատճառում է Աստծուն, իսկ այս աշխարհի տրտմությունը միայն մտահոգված է այն բանով, թե ինչպես է մեր մեղքն ազդելու մեր կյանքի և ապագայի վրա: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Աստված մեղքից ազատվելու շնորհք տալիս միայն մի տեսակի տրտմության դեպքում, և ոչ՝ մյուսի: Ինչպե՞ս կարող եք տարբերել տրտմության այս երկու տեսակները ձեր կյանքում:

5. Պատմությունները սուպերհերոսների մասին բորբոքում են մեր երևակայությունը, քանի որ դրանք հպվում են այն փափագին, որը կա ամեն մարդու սրտում: Առաջին եկեղեցու հավատացյալներն իրենց օրերի սուպերհերոսներն էին: Ինչպե՞ս մենք կարող ենք դառնալ մեր օրերի սուպերհերոսները: Ի՞նչ կերպով սա կփոխի այս աշխարհի կարծիքն Աստծո մասին:

6. Աստված պատերազմող է, և մենք ստեղծված ենք՝ լինելու Նրա նման: Հայտնություն գրքի բոլոր յոթ եկեղեցիներին Հիսուսը հաղթելու կոչ արեց, ինչը նշանակում է, որ մենք կանչված ենք հաղթելու համար, և որ կա թշնամի, որին պետք է պարտության մատնենք: Աստված կոչ է անում ձեզ հաղթող լինել: Մտորե՛ք այս գրքի ամբողջական ուղերձի մասին: Կարո՞ղ եք ասել, որ այս գիրքը փոխեց ձեր պատկերացումն այն մասին, թե ինչը պետք է հաղթեք այս կյանքում: Ի՞նչ կերպով դա փոխեց ձեր տեսակետը այլ հավատացյալների, ամբողջ եկեղեցու և ձեր վերաբերյալ:

Հավելված

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

«Եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Քանի որ, սրտով հավատում ենք արդարանալու համար և բերանով դավանում ենք փրկվելու համար»:

Հռոմեացիների 10.9,10

Աստված ցանկանում է, որ դուք լիարժեք կյանք ունենաք: Նա ի սրտե մտահոգված է ձեզնով և ցանկանում է, որ կատարեք Իր ծրագիրը ձեր կյանքի համար: Այնուամենայնիվ, կա միայն մեկ ճանապարհ դեպի ձեր նախասահմանությունը. դուք պետք է ընդունեք փրկությունն Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Հիսուսի մահվան և հարության շնորհիվ Աստված ճանապարհ պատրաստեց, որպեսզի դուք մուտք գործեք Իր թագավորությունը՝ որպես Իր սիրելի որդի կամ դուստր: Հիսուսի զոհը խաչի վրա՝ ձրիաբար պարգևել է ձեզ հավիտենական և առատ կյանք: Փրկությունը Աստծո պարգևն է ձեզ. դուք չեք կարող որևէ բան անել, որ վաստակեք փրկությունը կամ արժանանաք դրան:

Այս թանկ պարգևը ստանալու համար, առաջին հերթին պետք է խոստովանեք ձեր Արարչից անկախ ապրելու մեղքը, քանի որ սա ձեր գործած բոլոր մեղքերի արմատն է: Ապաշխարությունը փրկություն ստանալու խիստ կարևոր պայման է: Պետրոսը պարզորեն նշեց սա

Գործք առաքելոց գրքում այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկություն ստացավ. «Ուրեմն, զղջացե՛ք և ե՛տ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19): Աստվածաշունչը հայտնում է, որ մեզնից ամեն մեկը ծնվել է որպես մեղքի ստրուկ: Այս ստրկությունը սկիզբ է առել Ադամի մեղքից, ով առաջինը գիտակցաբար անհնազանդ եղավ Աստծուն: Ապաշխարելով՝ դուք որոշում եք կայացնում այլևս չհնազանդվել ձեր անձին և սատանային, ով ստի հայրն է, այլ հնազանդվել ձեր նոր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Ով տվել է Իր կյանքը ձեզ համար:

Դուք պետք է հանձնեք Հիսուսին ձեր կյանքի իշխանությունը: Հիսուսին որպես Տեր ընդունելը նշանակում է, որ դուք թույլ եք տալիս Նրան ղեկավարել ձեր ամբողջ կյանքը (հոգին, անձը և մարմինը) և այն ամենը, ինչը պատկանում է ձեզ. Նա բացարձակ իշխանություն է ստանում ձեր կյանքում: Այն պահին, երբ անեք սա, Աստված կազատի ձեզ խավարից և կտեղափոխի Իր թագավորության լույսի և փառքի մեջ: Պարզ ասած՝ դուք անցում կկատարեք խավարից դեպի լույսը և կդառնաք Նրա զավակը:

Եթե ուզում եք փրկություն ստանալ Հիսուսի միջոցով, կրկնե՛ք այս աղոթքը.

> *«Երկնային Աստվա՛ծ, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդարության չափանիշից: Ես արժանի եմ հավիտյան դատապարտվելու իմ մեղքերի համար: Շնորհակալություն, որ չես թողնում ինձ այս վիճակում, քանի որ հավատում եմ, որ Դու ուղարկեցիր Հիսուս Քրիստոսին՝ Քո միածին Որդուն, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատավճիռը խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը և այժմ նստած է Քո աջ կողմը՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այսօր ես ապաշխարում եմ Քեզնից անկախ լինելուց և հավիտյան հանձնում եմ իմ կյանքը Հիսուսի իշխանությանը:*

> *Հիսո՛ւս, ես դավանում եմ, որ Դու իմ Տերն ու Փրկիչն ես: Ե՛կ իմ կյանքի մեջ Քո Հոգով և դարձրո՛ւ ինձ Աստծո զավակ: Ես ուրանում եմ խավարի գործերը, որոնց մի ժամանակ հարում էի, և այսօրվանից այլևս չեմ ապրի ինձ համար: Քո շնորհքով ես կապրեմ Քեզ համար, քանի որ Դու տվել ես Քո կյանքն ինձ համար, որպեսզի հավիտյան ապրեմ:*

> *Շնորհակալություն, Տե՛ր: Այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքերում է, և համաձայն Քո Խոսքի՝ ես երբեք չեմ ամաչի, Հիսուսի անունով: Ամե՛ն»:*

Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Ես խրախուսում եմ ձեզ պատմել այս հրաշալի լուրը մեկ այլ հավատացյալի: Նույնպես կարևոր է, որ դուք միանաք որևէ տեղական եկեղեցու, որը հավատում է Աստվածաշնչին, և հաղորդակցվեք այլ մարդկանց հետ, որոնք կխրախուսեն ձեզ հավատքի մեջ:

Դուք հենց նոր ոտք դրեցիք ամենազարմանալի ճանապարհին: Մաղթում եմ ձեզ առատ հայտնություններ, շնորհք և ընկերություն Աստծո հետ ձեր կյանքում:

ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ

Ինչո՞ւ բարին առանց Աստծո բավական չէ

Եթե ինչ-որ բան բարի է, դա պետք է որ Աստծուց լինի, այնպես չէ՞

Մեր օրերում «բարի» և «Աստված» բառերը կարծես հոմանիշներ են դարձել: Մենք հավատում ենք, որ այն, ինչն ընդհանուր առմամբ բարի է համարվում, պետք է որ համապատասխանի Աստծո կամքին: Առատաձեռնությունը, խոնարհությունը և արդարությունը բարի են: Եսասիրությունը, ամբարտավանությունը և դաժանությունը չար են: Թվում է՝ այս տարբերակումը շատ հասարակ է:

Բայց մի՞թե ամեն ինչ այդքան պարզ է: Եթե բարին այդ աստիճան ակնհայտ է, ինչո՞ւ է Աստվածաշունչն ասում, որ մեզ զանազանություն է հարկավոր՝ այն ճանաչելու համար:

«Բարի՞, թե՞ Աստված» գիրքը հերթական ուղերձը չէ՝ խնդիրներն անձամբ լուծելու մասին: Այս գիրքը պարզապես չի առաջարկի փոխել ձեր վարքը, այլ՝ կանի ավելին. այն կտա ձեզ կարողություն՝ հաղորդակցվելու Աստծո հետ այնպիսի մակարդակի վրա, որը կփոխի ձեր կյանքի ամեն մի բնագավառը:

CloudLibrary.org CLOUD LIBRARY

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԻՆՉՊԵՍ ԱԴԱՄԱՆԴԸ

Գտնել ճշմարտությունը կարծիքների աշխարհում

Այսօր, ավելի քան երբևէ, մենք պետք է անկոտրում պահպանենք մեր սերը և ճշմարտությունը: Աստված Սեր է: Աստված Ճշմարտություն է: Ե՛վ սերը, և՛ ճշմարտությունն անժամանակյա են և վեր են մերօրյա միտումներից ու կարծիքներից: Երբեմն մեծագույն սերը, որը կարող ենք ցուցաբերել, ճշմարտությունը խոսելն է, սակայն ճշմարտությունը խոսելը սկսվում է ճշմարտությամբ ապրելուց:

Օգտվելով Սուրբ գրքից և օգտագործելով մի շարք պատմություններ՝ հանրաճանաչ հեղինակ Լիզա Բիվերը սովորեցնում է ոչ միայն բնակվել Աստծո անսասան ճշմարտության և սիրո մեջ, այլև դառնալ անկոտրում մարդ՝ ով հաստատակամ է, աներեր և նպատակաուղղված:

Աստծո ծրագիրն ի հայտ է գալիս, երբ մենք բնակվում ենք Նրանում: Նրանում է, որ կերտվում և ձևավորվում ենք: Բնակվելով Քրիստոսի մեջ, Ով մեր Անկյունաքարն է, մենք դառնում ենք անկոտրում անձնավորություն:

CloudLibrary.org CLOUD LIBRARY

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

Կյանք, որը նշանակություն ունի այսօր և հավիտյան



Մեկ օր դուք կկանգնեք Աստծո առջև և հաշիվ կտաք ձեր կյանքի համար: Ամենակարևոր հարցը, որը կարող եք տալ ձեզ, հետևյալն է՝ դուք պատրա՞ստ եք:

Բոլոր քրիստոնյաները գիտեն, որ իրենց պատասխանը խաչին՝ որոշում է, թե որտեղ են անցկացնելու հավիտենությունը: Բայց գիտե՞ք, որ ձեր գործերն են այս կյանքում որոշում, թե ինչպես եք անցկացնելու հավիտենությունը:

Աստված ցանկանում է, որ բացահայտեք ձեր կոչումը. Նա չի փորձում թաքցնել այն ձեզնից: Իրականում, Նա փափագում է, որ ձեր կյանքը նպատակաուղղված և իմաստալից լինի, իսկ դա տեղի կունենա, երբ դուք իմանաք, թե ինչու եք եկել այս աշխարհ:

Կյանքը՝ մեր վերջին շնչից հետո, սոսկ հանգրվան չէ, այլ՝ շատ ավելին: Մի՛ սպասեք այնքան, որ արդեն ուշ լինի: Բացահայտե՛ք այն ընթացքը, որն Աստված որոշել է ձեզ համար, և թող ձեր կյանքը նշանակություն ունենա այսօր և հավիտյան:

CloudLibrary.org CLOUD LIBRARY

ԱՖԱԲԵԼ

Աուդիո թատրոն



«Աֆաբելը» էպիկական այլաբանություն է՝ գրված Զոն Բիվերի կողմից: Այս պատմությունը բացահայտում է այն, ինչ գոյություն ունի մեր երկրային իրականությունից այն կողմ, և պատկերում է բազմաթիվ ճշմարտություններ Աստծո թագավորության մասին: Անչափ կարևոր է, որ հավատացյալներն ապրեն հավիտենական հեռանկարով, սակայն հավիտենությունը ընկալելը կարող է դժվար լինել:

Միացե՛ք վեհ թագավոր Զեյլոնին, խավարի տիրակալ Դագոնին, Բարեգործին, Անկախին և մյուսներին՝ հետազոտելու Աֆաբել հրաշալի երկիրը և Լոն երկրի սարսափելի արտաքին սահմանները: Այս պատմության հերոսները մարտահրավեր կնետեն ձեզ՝ հայտնելով այն, ինչ կա ձեր սրտում:

«Աֆաբել» աուդիո թատրոնի բոլոր մասերը լսվում են մեկ շնչով: Այս պատմությունը նաև *«Հավիտենությամբ շարժվողները»* ուղերձի դինամիկ և նկարագրական մասերից մեկն է:

CloudLibrary.org CLOUD LIBRARY



«Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության նպատակն է՝ օգնել անհատներին, ընտանիքներին, եկեղեցիներին և ազգերին գիտակցել և վերապրել Աստծո Խոսքի վերափոխող զորությունը:

Շնորհիվ այս գիտակցման՝ կփոխվեն թե՛ մարդիկ, թե՛ ամբողջ բնակավայրեր, և հասարակությունը գործուն կերպով կպայքարի այս աշխարհը կեղեքող անարդարության դեմ:

CloudLibrary.org կայքը առցանց հարթակ է, որը թույլ է տալիս ամբողջ աշխարհի հովիվներին և առաջնորդներին ստանալ անվճար թվայնացված ուսումնական նյութեր՝ իրենց լեզուներով:

Այցելե՛ք CloudLibrary.org կայքը և օգտվե՛ք Զոն և Լիզա Բիվերների մի շարք այլ նյութերից՝ ավելի քան 90 լեզուներով:

էլեկտրոնային գրքեր, աուդիո և վիդեո ուսուցումներ, աուդիո գրքեր, Աստվածաշնչեր...

Ցանկանում եք ավելի՞ն: Տեսածրե՛ք պատկերակը.

CLOUD LIBRARY

ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Այս գիրքը, որը ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի *«Կործանել կրիպտոնաքարը»* ուսումնական դասընթացի մի մասն է: Կարդալով գիրքը և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք կարող եք գտնել գրքին կից DVD սկավառակում կամ ներբեռնել CloudLibrary.org կայքից՝ դուք ամբողջությամբ կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Շնորհիվ այս դասընթացի՝ ձեր քրիստոնեական ընթացքը կզորանա, և դուք կկարողանաք ավելին անել Աստծո համար:

«Կործանել կրիպտոնաքարը» ուսումնական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

- *«Կործանել կրիպտոնաքարը»* գիրք

  Այս դասընթացի միակ տպագրված մասը: Գիրքը նույնպես առկա է հավաքածու սկավառակում՝ PDF ձևաչափով:

- *«Կործանել կրիպտոնաքարը»* DVD սկավառակ

  Կից սկավառակը պարունակում է այս դասընթացի բոլոր նյութերը՛ թվային ձևաչափերով: Դուք չեք կարող նվագարկել այն ձեր տնային DVD նվագարկիչով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետի, համակարգչի և սմարթֆոնի մեջ:

- *«Կործանել կրիպտոնաքարը»* աուդիո գիրք

  «Կործանել կրիպտոնաքարը» գրքի բոլոր բաժինները՝ ընթերցված հայերենով, MP3 ձևաչափով:

- *«Կործանել կրիպտոնաքարը»* վիդեո դասեր

  Բոլոր 6 վիդեո դասերը՛ MP4 ձևաչափով:

- *«Աֆաբել»* Աուդիո թատրոնը՝ MP3 ձևաչափով

  «Աֆաբել» աուդիո թատրոնի բոլոր 4 մասերը:

- Հավելյալ նյութեր

  Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է Ջոն և Լիզա Բիվերների այլ գրքեր և նյութեր, ներառյալ՝ *«Հավիտենությամբ շարժվողները»* և *«Բարի՞, թե՞ Աստված»* էլեկտրոնային գրքերը և այլն:

ԱՅՍ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈԼՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ ՆԿԵՐ ԵՆ ՁԵԶ ՀԱՄԱՐ

Ազատորեն կրկնօրինակե՛ք այս DVD սկավառակը, պատճենե՛ք դրանում առկա նյութերը, ուղարկե՛ք դրանք ձեր ընկերներին էլեկտրոնային փոստով, պատճենե՛ք տեքստը և տեղադրե՛ք «Word» ֆայլերի մեջ, տրամադրե՛ք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնե՛ք դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել: Տարածե՛ք այս նյութերն այնտեղ, որտեղ մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

Հավելյալ տեղեկություն *«Կործանել կրիպտոնաքարը»* հավաքածուի նյութերի մասին.

- Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակի նյութերը սովորական վիդեո նվագարկիչով: Քանի որ DVD սկավառակը պարունակում է տարատեսակ նյութեր, օրինակ՝ վիդեո, աուդիո և տեքստային ֆայլեր, դրանք կարելի է նվագարկել և դիտել միայն համակարգչի կամ այլ թվային սարքի միջոցով:
- Դուք կարող եք բեռնել MP4 ձևաչափի վիդեո ֆայլերը ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ:
- Դուք կարող եք բեռնել MP3 ձևաչափի ֆայլերը ձեր աուդիո նվագարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:
- Դուք կարող եք բեռնել PDF ձևաչափի ֆայլերը ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ՝ կարդալու, տպելու կամ կրկնօրինակելու համար:

CloudLibrary.org CLOUD LIBRARY

ԿՈՐՁԱՆԵԼ
ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Դիտե՛ք տեսանյութեր և
ներբեռնե՛ք ավելին հետևյալ կայքից.

CloudLibrary.org

MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org

Միայն
համակարգչի համար

ՋՈՆ ԲԻՎԵՐ

DVD ROM

Դուք կարող եք դիտել և ներբեռնել այս դասընթացը, ինչպես նաև Ջոն և Լիզա Բիվերների բազմաթիվ այլ ուսմունքներ՝ այցելելով «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության անվճար ինտերնետային կայքը.

CloudLibrary.org

Դուք կարող եք դիտել և ներբեռնել լրացուցիչ նյութեր բազմաթիվ լեզուներով YouTube.com, Youku.com և նյութեր տարածող այլ կայքերից:

ԻՆՉՊԵՍ ՍՈՒՊԵՐՀԵՐՈՍԸ, ով կարող է ցատկել ցանկացած արգելքի վրայով և հաղթել բոլոր թշնամիներին, Քրիստոսի հետևորդները նույնպես կյանքի դժվարությունները հաղթահարելու գերբնական կարողություն ունեն: Այնուամենայնիվ, և՛ Սուպերհերոսը, և՛ մենք մի խնդիր ունենք. գոյություն ունի կրիպտոնաքար, որը խլում է մեր ուժերը:

Իհարկե, Սուպերհերոսը և կրիպտոնաքարը հորինված են: Բայց հոգևոր կրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը պատասխանում է այն հարցին, թե ինչու են մեզնից շատերն անկարող վերապրել այն աստվածային զորությունը, որն ակնհայտորեն դրսևորվում էր առաջին դարի քրիստոնյաների կյանքում:

«Կործանել կրիպտոնաքարը» գրքում Ջոն Բիվերը ցույց է տալիս, թե ինչ է կրիպտոնաքարը, ինչպիսի սպառնալիք է այն ներկայացնում մեր համայնքներին, և ինչպես ազատվել դրա կապանքներից:

ԸՆԴԳՐԿՈՒՄԷ *«ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ»* DVD ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Ջոն Բիվերը և նրա կինը՝ Լիզան, «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրներն են: Ջոնը քարոզիչ է, նաև՝ հանրաճանաչ գրող: Առանց փոխզիջման՝ նա համարձակությամբ և ջերմեռանդորեն քարոզում է ճշմարտությունը: Նա ցանկանում է սատարել տեղական եկեղեցիները և ապահովել առաջնորդներին քրիստոնեական նյութերով՝ անկախ նրանց բնակության վայրից, լեզվից կամ ֆինանսական վիճակից: Մինչև օրս նրա նյութերը թարգմանվել են ավելի քան 100 լեզուներով և միլիոնավոր օրինակներով բաժանվել են ամբողջ աշխարհի հովիվներին և առաջնորդներին:

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը հետևյալ կայքում.
CloudLibrary.org

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ:

Ցանկացած եք տալիս՝ նվիրեցեք Տեղեկատվությունը